891.54
Գ 74

ԳՐԻԳՈՐ ՕՏԱՐՅԱՆ

2

ԳՐԻԳՈՐ ՕՇԱՐԱՓ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

83154
Գ 76

1971 թ.

ԳՐԻԳՈՐ ՕՏՅՐԱՊ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԵՎԱՆ · 1962

Կազմեց և ծանոթագրեց՝
ՄԻՆԱՍ ՀՅՈՒՍՅԱՆ

Նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՑՈՒՐՅԱՆ



1488

ГРИГОР ЗОХРАБ

СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

в 2-х томах

Том II

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат) Ереван, 1962

ՎԵՊԵՐ

ԱՆՀԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

ՊՈԼՍԱԿԱՆ ՎԵՊ

ՄԱՍ Ա.

ՍԵԴՐԱՔ

Երեք ուսանող երիտասարդներ էին ասոնք, երեքն ալ զատ զատ գաղափարներու, զգացումներու և հատկութեանց ներկայացուցիչ. այսօր և ոչ մին մնաց անոնցմէ, մին մահը տարավ, մյուսը պանդխտութիւնը տարագրեց և երրորդին ոչ ոք գիտե ուր ըլլալը։— Հետք ու հիշատակ չի թողուցին. ո՞ւսկից եկան և ո՞ւր գացին ասոնք. ոչ ոք կրցավ երբեք իմանալ. բայց անոնց տարօրինակ կյանքեն քանի մը հատվածներ դեռ բերնե բերան կը զրուցվին։ Պարզ ու սրտահույզ է այս անհետացած երիտասարդաց վրայի ավանդութիւնը։

Երբ ուսանող կըսեմ, կերևակայեք անմիջապես քսակով թեթև, հույսով հարուստ, զվարթ, լքյալ, անտեր ու անհոգ էակ մը. ոչինչ ավելի հետաքրքիր է քան գոյութիւնն այս արարածին որ ուսման խստութիւնն իր անսպառ զվարթութեամբ կը թեթևցնե, ու շատ անգամ անողոք ճակատագրի դառնութեան դեմ կը մաքառի։

Ընկերական արդի դիրքին մեջ ուսանողի կյանքն հատուկ գոյութիւն մ'է խորին ուսումնասիրութեան արժանի. այս տարօրինակ կյանքն ընկերական պայքարին մեջ առաջին պատերազմի դաշտն է այսուհետև։

Ուսանողն՝ ամեն բանի փափագող ու ամեն բանեւ զուրկ՝ հեգնող ու դժգոհ անձնավորություն մ՚է։

Այն երեք պատանիներն՝ որոց պատմությունը կստանձնենք, Փերայի Համալսարանին ազատ ուսանողներեն էին, ատեն մը երբ իրավաբանական ու երկրաչափական ճյուղերը կը դասախոսվին հոն։

Երեքն ալ առանց ընտանիքի ու առանց ստակի երիտասարդներ էին. ի՞նչպես գտեր էին զիրար. պարզապես Համալսարանին մեջ հանդիպելով. միատեղ ճամփորդությունը միշտ բարեկամություն հառաջ կը բերե և ուսանողությունը ճամփորդության լավագույնն է. ուստի շուտով մտերմացեր էին այս երիտասարդներն որք միասին ճամփա ելած էին դեպի անծանոթն։

Քսակնին սովորաբար պարապ, ու պարտավոր գոլով երբեմն ցերեկվան ճաշն առողջապահիկ կանոնաց հակառակ և հետևաբար ավելորդ դատելու, այս պարոններն երբեք չէին մտաբերած բախտին խստությանը դեմ գանգատելու. բարձրագույն գիտությանց հետևելով, քիչ շատ փիլիսոփա, այլ զվարթ փիլիսոփաներ էին ասոնք։

Դասախոսության ժամը լրանալուն պես, այս երիտասարդներն՝ իրրև Փերայի փողոցներուն մշտաշրջիկ ոգիներն՝ վարձու սենյակ որոնելու պատրվակավ տուներու մեջ փակված գեղուհիներն երևան հանելը բան գործ ըրած էին իրենց։

Բայց այս ձրի ու հաճոյալի պարապումը երկար չի տևեց. բաղդատաբար շատ կարճ միջոցի մեջ, վարձու տուն կամ սենյակ ունեցողներուն ամենքն ալ այս երեք թափառիկ այցելուները ճանչցան և իրարու ճանչցուցին, այնպես որ օր մը բոլոր տուները փակ գտան իրենց առջև։

Այս կացությունը ծանր էր ու չէր կրնար շարունակել. երեք բարեկամներուն ամենեն հանճարեղին կիյնար ճար մը մտածել, գյուտ մը ընել, եթե ոչ ուսմանց մեջ անուն ստանալու՝ գոնե ամենօրյա նոր զբոսանք մը հնարելու համար։

Հարկը մարդս հնարամիտ կընե։

Փերայի տանուտյարք առավոտ մը տեսան երկրաչափա-

կան գործիքներով զինված մի քանի երիտասարդներ որք իրենց տանը հատակագիծը շինելու զբաղած էին։

Փողոցներուն նոր ուղղություն մը տալու խոսք կար. ասոնցմե մին տուները երեքական մեթր ներս քաշելու հարկին վրա կը պնդեր... երե՞ք մեթր... տանուտյարք ահաբեկեցան. Քաղաքապետական Վեցերորդ շրջանակը՝ փողոցի համար փլցուցած տուներուն արժեքը հատուցանելու կողմեն հռչակ հանած չէր, ու ասով երրորդը կըլլար որ երկրաշափները դարձյալ իրենց բնակությունը քանդել կորոշեին։ Կալվածատերներեն մին մոտեցավ այն երիտասարդին որ խումբին մեծը կերևեր ու զայն տուն հրամցուց անոր սիրտը շահելու համար։ Երիտասարդը դժվարություն չըրավ և իր ընկերներով այս հրավերին պատասխանեց։

Այս փոքրիկ քաղաքավարությունը բոլոր այն փողոցի տուները փրկեց, վասնզի երկրաշափներն իրենց գործիքները վերցնելով ուրիշ տեղ փոխադրեցին։ Ավելորդ է ըսել որ այս սպառնալից կատակն ուսանողներուն նորահնար մեկ միջոցն էր։

Ահա այս և ասոր նման հազար խաղերով իրենց ցերեկվան ժամերը կանցուներին այս հովկուլ դատարկաշրջիկներն, ինչպես կըսեր բարեհիշատակ Ռուսինյան։

Գիշերները տարբեր խնդիր էր. զբոսանքի նեղություն չի կար. դժվարությունն ընտրության մեջ էր. Փերայի բոլոր Քաֆե շանթաններն հյուրամեծար կը գտնվեին այս տղոց համար, վասնզի ամեն մեկուն մեջ մեկ մեկ երգիչ աղջկան համակրությունը շահած էին։

Երբեմն ազգասիրական զգացում մը մուտք կը գտներ այս զվարճության մեջ. օր մը տեսան որ Տիգրան՝ երեք մտերմաց կրտսերագույնը՝ Արևելյան Ալքազարի մեջ նորեկ ու գեղանի գերմանուհվո մը բարեկամությունը շահեր էր. դիտեցին որ այս կապակցությունը սովորականեն ավելի ջերմ էր. Տիգրան ամեն օր մեկ երկու ժամ այս աղջկան տունը կանցուներ։

Ամիս մը վերջը գիշեր մը Տիգրան Համալսարանին բոլոր աստանդական ուսանողները ժողվեց ու Ալքազար տարավ։ Ես եմ զձեզ հրավիրողը, պարոններ, ըսավ Տիգրան ասոնց առջևն

իյնալով. երիտասարդներն հոժարակամ հետևեցան իրենց դեռահաս ընկերին։

Թրամվեյի նոր գծին շինվելեն առաջ ամենուն ծանոթ էր այս հռչակավոր սրահն, ուր այսօր նոր թատրոնը կը բարձրանա իր շքեղ ճակատով։

Ամեն ոք գիտե կամ չգիտե թե ի՛նչ է Քաֆե շանթան մը.— Հոս՝ տեղը չէ բարոյականի տեսակետով քննել այս զբոսանաց վայրերը. սա չափ հարկ է ըսել միայն որ այս սրահներուն մեջ ամբոխը երկու մասի կը բաժնվի, մին որ սրահին մեջ, պարզամիտ ու ապշած, կունկնդրե կիսամերկ ու հրապուրիչ աղջկան մը երգերուն. ասի հանդիսատեսներուն նորեկ, դեռավարժ ու աղքատ մասն է. մյուսն որ արհամարհելով պարզ ունկնդրո մը համեստ դերն, իր ժամերը կանցունե դերասանուհյաց հատուկ սրահներուն մեջ, այս դիցուհյաց մոտ ու ռուլեթի սեղանին քով, իր կյանքը բաժնելով ցոփության ու խաղամոլության մեջ։

Ալբազարի սրահն այս գիշեր կարծես սովորականեն ավելի փայլ մ'ուներ. երգիչներն իրարու կը հաջորդեին իրենց ճոխ ու շռայլ շրջազգեստներուն երկայն քղանցքովը ծածկելով տեսարանին կեսն. ընդհանուր զվարթություն մը կար սրահին մեջ։

Կարգը գերմանուհվույն եկավ։ Գեղանի երգիչն հառաջացավ տեսարանին առջև. սև ալբակե պարզ ու անզարդ շրջազգեստ մը հագած էր որ իր գեղեցիկ մարմինն ընդգրկելով անոր բոլոր հրապույրը երևան կը հաներ. մազերը ժողված չէր, այլ ցիրուցան թողած ուսին վրա. իր դեմքը խոժոռ ու տրտում արտահայտություն մ'ուներ։ Աղջիկն սկսավ երգել...։

Եվրոպացիներն իզուր ջանացին բառ մը հասկնալ այս անսովոր արտասանութենեն, մինչդեռ ահագնալուր ու որոտաձայն ծափահարություն մը երգին առաջին տունը կողջուներ։ Երգիչ մը չէր նա, այլ ներշնչյալ ու գերագույն ոգի մը որ կիշխեր բոլոր ներկայից վրա. սրահին մեջ գտնվող բոլոր հայերն ոտք ելեր էին միևնույն զսպանակեն մղյալ. դերասանուհին Մայր Ասիոյի առաջին տունը երգեր էր։

Առաջին անգամն էր որ հայերեն երգ մը կը լսվեր այս սրահին մեջ, ու այս հաճոյալից գաղափարը Տիգրանի երևակայության ծնունդն էր։

Տիգրան իրավաբանության ուսանող մ'էր. ճպուռի մը պես շատախոս, թռչնո մը պես երգող ու անոր պես անհաստատ, աղջկան մը պես քնքուշ, սատանայի չափ խելացի պատանյակ մ'էր. առաջինն էր Համալսարանին մեջ ուր ամենքը զինքը կը սիրեին, միշտ օգնող ու ձեռնտու գտնված էր իր դասակիցներուն որոց անբաժանելի ընկերն էր, մասնավորապես Սեդրաքի համար (երկրաչափության ուսանող մը) որու զավկե ավելի սիրելի էր։

Տասնևյոթը տարեկան կար այս պատանին, համեստ իր գիտության մեջ, պարզ, համարձակ, վիճող ու զայրացկոտ տղա մը։ Բարձրագույն գիտությանց հետևելով՝ մայրենի լեզվի գրագիտությունը մեկ կողմ թողած չէր։

Բացե ի բաց կարհամարհեր անոնք որ հազիվ օտար լեզվի մը մեջ դեռավարժ, իրենց ազգությունն ամոթ ու նվաստություն կը համարին ու մայրենի լեզուն կը վճռեն անհամ, կոշտ ու տձև. նույնչափ կարհամարհեր գուցե անոնք որք գիտությանց նախնական ծանոթություններն ստանալով անմիջապես աշխարհաքաղաքացի կը դառնան։

Հետևապես ազգային կյանքի հմուտ ու հետամուտ, քննադատող ու դժգոհ ոգի, ի բնե ընդդիմադիր ամեն վարչության, քիչ շատ մատ ունեցած էր իր բարեկամներուն հետ այն զանազան ժողովրդական ցույցերու մեջ որմե ապիկար վարչություն մը ու նվաստացած երեսփոխանություն մը կը սարսափին։ Քանիցս այս երկու ժողովները պաշարած էր Մատենադարանի սենեկին մեջ որ մեր ազգային փախստական իշխանության սովորական ապաստանն է։

Ղալաթիո եկեղեցվո բակին մեջ շատ անգամ լսված էր անոր ըմբոստ ու գրգռիչ ձայնն որ պանդուխտ մշեցիներն իր շուրջը կը հավաքեր, կը հրահրեր ու կարձակեր. ժողովրդյան պատանի ու սիրելի հռետորն էր ասի՝ զոր ամենքը կը ճանչնային այն ատեններըր։

Այս վատթարացման դարուն մեջ ուր միտքն հոգին կը մոռըննե, ուր մարդկությունն ազգությունը կանհետացնե, թերևս միակ այս երիտասարդն էր նյութապաշտ փիլիսոփա մը՝ առանց զուրկ լինելու այն բանաստեղծական ոգիեն զոր պատա-

նութիւնն ու դժբախտութիւնը կուտան և զոր չափահասութիւնն ու երջանկութիւնը ետ կառնուն։

Տիգրանի ընտանիքը ծանոթ չէր ու ինքը բնավ չէր խոսեր անոր վրա. իր մանկութեանը Պեշիքթաշ կը բնակեր, վերջեն Օրթագիւղ անցավ ու հետո Փերայի մէջ հանդիպեցան անոր։

Իր ընկերներն Համալսարանին մէջ ճանչցան զինքը. շիկնոտ ու մելամաղձոտ, սրտափակ ու գլխահակ տղա մ'էր. ժամանակով սրտի մոտ, հպարտ ու զվարթ պատանի մ'եղավ. քաշված ու առանձնացած էր առաջ. հիմա մոտեցող, թերևս հարձակող մեկն էր։

Այս տղան միջակ ու վայելուչ հասակով, մութ շագանակագոյն մազերով պատանի մ'էր. գեղեցիկ դեմք ու գեղեցկագոյն աչքեր ուներ զորս Համալսարանին շուրջը գտնվող տուներուն աղջիկները շուտով նշմարեցին։

Տիգրան սիրեց առաջին աղջիկն որ իրեն ժպտեցավ ու ինքն իսկ իր սիրո սաստկութենեն վախցավ։ Դիցուհի մը պես գեղանի ու մանկամարդ հելլենուհի մ'էր այս որ Համալսարանին պարգևաբաշխութեան հանդիսին մէջ տեսեր էր պատանին առաջին եկող այնքան տարիքոտ ընկերներու մեջեն. նա մանավանդ զարմացեր ու հավներ էր անոր ձևերուն որոց շնորհը պարզութեանը մէջ կը կայանար։

Կատա՞կ մը, պարզ կատա՞կ մ'ընել կարծեր էր ժպտելով անոր երեսին ու անոր սրտին հաղորդելով յուր աչքերուն ավերիչ կրակը. վերջեն Տիգրանի հափշտակութիւնը տեսնելով զբոսներ էր քիչ մը ու հետո ձանձրացեր էր անկից. այս քմահաճույքը լուրջ բան մը չէր աղջկան համար, այլ մահացու կըրնար լինիլ պատանվույն սրտին։

Հելլենուհին ամուսնացավ. ահավոր ու սարսափելի հարված մը եղավ ասիկա Տիգրանին որ մազ մնաց պիտի մեռներ. մեկու մը չի բացավ իր վիշտն ու մեկու մը չի գանգատեցավ. արժանապատվութեան զգացումն որ ամենեն հզոր կը խոսեր յուր հոգվույն, զինքը փրկեց. չի մտածեց այլևս անոր, բայց չի չնչեց անոր սերն իր սրտեն. ամուսնացող անխոհեմուհին իր սիրած աղջիկը չէր. իր սիրածը մեռած համարեց այլևս և երկյուղած բարեպաշտութեամբ մը իր սրտին մեջ խոր

ու շատ խոր թաղեց առաջին սիրո հիշատակն ու ամրացավ ճակատագրին դեմ։

Ոչ ոք իշխեց իրեն սիրով անկից վերջը. ի փոխարեն ինքը բուռն ու կատաղի եռանդով մը նետվեցավ կանանց մեջ. սիրած էր ու խաբած էին զինքը. կարգն իրեն էր խաբելու. Տիգրան ձախորդության կը հավատար. ուստի ծանր չեկավ իրեն միույն վրեժը մյուսեն լուծել. հատուցման մեջ կիները մեկզմեկու երաշխավոր կը ճանչնար։

Ուստի ամեն կնոջ միևնույն աշխուժով ու միևնույն համոզմամբ կրկնեց իր սերն ու դիմացինը համոզեց. իրեն համար բաղդատություն ու տարբերություն չի կար կանանց մեջ. մանկամարդը կամ տարիքն առնողը, գեղանին կամ տգեղը, տիրուհին կամ սպասուհին, գործավորուհին կամ իշխանուհին, կրոնավորուհին կամ հասարակաց աղջիկը միևնույն բանն էին իրեն համար։

Սեղրաք երեք բարեկամներուն ամենեն ծանրաբարոն էր ու քսաներեք տարեկան լինելով Տիգրանի համար գրեթե մեծ եղբայր մ'էր. ժժգույն, նիհար ու խարտիշահեր երիտասարդ մ'որո սովորաբար դալուկ դեմքին վրա նեղ ու բարակ շրթունքն աչքի կը զարներ իր կարմիր գույնովը։

Գեղեցիկ կապույտ աչքեր, լայն ու ժամանակեն առաջ ակոսյալ ճակատ մը, սիրուն մորուք մը ու սև երիզով կախված ակնոց մը կը տեսնվեր այս երիտասարդին դեմքին վրա որ միշտ լուրջ թերևս խոժոռ երևույթ մ'ուներ. կատարյալ հակապատկեր մը լինելով հանդերձ յուր կրտսերագույն բարեկամին, իր արտաքին ցուրտ ձևերուն ներքև փափուկ ու վեհանձն սիրտ մը կը կրեր։

Անձնվեր մինչ ի մահ առանց բառ մը արտասանելու, գաղտնապահ, խորհրդատու, մեկ բառով եզական ընկեր մ'էր։

Իր սկզբունքներն ու ճաշակը ծանոթ էին, որոց համար մաքրակրոն անգլիացվո մը պես անողոք էր. կառավարության միապետությունը, կանանց մեջ խարտյաշը, գույներուն մեջ սևը կը ճանչնար միայն։

Երաժշտության մեջ Մենտելսոնը կընտրեր իր համր, անտրոշ ու տրտում շեշտերովը. նկարչության մեջ Այվազովսքին

իր անհուն ու անխուսափելի ծովին, իր ծփծփուն ալիքներուն, յուր կապարագույն ու ցիրուցան ամպերուն և այն անբացատրելի խորութեան հետ որ այս մեծ արհեստավորին հատուկ է։

Բանաստեղծութեանց մէջ արևելեան երգերը կը սիրեր։ Երբեմն մելամաղձոտ, հուսակտուր այլ համբերատար ոգի մը կայ այս երգերուն մէջ, երբեմն արհամարհոտ շեշտ մը։

Անոնք որք անգետ են օսմանեան գրագիտութեան, պախարակելէ ուրիշ կերպով չեն հիշատակեր զայն. է՜հ, տեր աստված, ո՞վ է սա մուրացիկ երգիչն որ սրճարանին մութ մեկ խորշին մեջ կը նվագե. հարգալից բազմութեյուն մը խոր լռութեան մեջ կունկնդրե նմա. Արևելքի ժողովրդյան չափ ոչ ոք մեծարած է բանաստեղծներն։

Ու Սեդրաք հոժարափույթ կերթար Պոլսո ամենեն անծանոթ մեկ խորշին մեջ, տաճիկ թաղի մը մեկ աննկյունը բարեմիտ ու ծերունի թուրքաց հետ ունկնդրել այս գնչու բանաստեղծներուն։ Երբեմն հայ մ'է այս համեստ երգիչն՝ որ յուր մայրենի լեզվին անծանոթ՝ օսմանեցի բանաստեղծներուն մեջ ստացած է փառահեղ անուն մը։ Արդարև թուրք երգիչներն՝ որպես նախնի ժամանակի ասպետներ՝ հատուկ անուն մը ունին իրենց ասպարեզին մեջ որով կը հիշատակվին։

Սեդրաք անհագ հետաքրքրութեյամբ կը հավաքեր մոռացյալ հայ բանաստեղծներու վրա այն ամեն ավանդութեյունները՝ զորս ժամանակը դեռ չէր անհետացուցած։ Ու կը պատահեր որ անվանի Նամի մը ելներ ասոնց մեջեն, դեռահասակ ոտվաղամեռիկ երգիչ, գրագետ ու փիլիսոփա մը, պարծանք հայ տաղանդին, բոլորովին մոռացյալ ու անծանոթ եսամոլ հայ գրագիտաց մեջ։

Ո՞ւր տեղացի էր և ո՞ր ընտանիքի կը վերաբերեր Սեդրաք. ահավասիկ հարցում մը զոր երբեք չէին մտաբերած անոր բարեկամներն. հեռվե հեռու լսած էին որ Վոսփորի ասիական եզերքեն լավագույն ընտանիքի մը անդրանիկ զավակն էր. իր անկախ դիրքն ու ազատ դաստիարակութեյունը չէր հարմարած հայրենի տան նահապետական ընթացքին ուր անառակ ու անդարձ որդի մը նկատված էր։

Մայրն, ո՜վ անհավատալի գաղտնիք կանացի սրտին, իր

ժպիտը մյուս զավակացը հատկացուցած էր ու խոժոռ ու անհոդող դեմք մը միայն կար Սեդրաքի դեմքը։ Հայրը խրոխտ հանդիմանությամբ ու սպառնալից կը հյուրընկալեր այս անշահ զավակն՝ որ իր հոր առևտրական տեսրակները բռնել կը մերժեր։ Եղբարքն՝ ամենքն ալ իրմե փոքր՝ իր վրա կը ծիծաղեին. կատարյալ լքում մը տեսավ այս տղան նույնիսկ իր ընտանյաց գրկին մեջ ու ալ առանձին կյանքը անհրաժեշտ դարձավ։

Սեդրաքի բաժանմամբ կարծես բեռ մը վերցավ ընտանյացը վրայեն. ամենքը գոհ ու երջանիկ կարծեցին իրենքզիրենք այս տղուն հեռանալովը, իսկ ինքը չի կրցավ բոլորովին անտարբեր բաժնվիլ մայրենի ծոցեն. ահավասիկ յուր խորհրդածություններեն մաս մը զոր թուղթի մը վրա նշանակած էր.

«1873 տարվո սեպտեմբերի 7-րդ օրը բաժնվեցա ընտանիքես զատ ու ազատ ապրելու համար. բաժանումը միշտ աղեկ ու տխուր բան մ'է. վերջավորություն մ'է. հոն նախորդ կյանքը կը դադրի ու ինչ որ ալ ըլլա նոր սկսելիքը, կարելի չէ անտարբեր սրտով առաջինը թողուլ. հետահայաց նայվածք մ'ունինք ամեն բանի զոր կը թողունք կամ որ զմեզ կը թողու,— իսկ բաժանումներու աղեկությունը հոն է որ ոևէ ուժ անջատմամբ չի չլատվիր այլ կը կրկնապատկվի. աշխարհիս մեջ կյանքը բաժանումով կսկսի. որդին պետք է բաժնել մորն արգանդեն որպեսզի ծնի ու ապրի, ո՛վ դժնդակ ու արդյունավոր ճակատագիր մարդկության»։

Ուրիշ տեղ մը այսպես գրեր էր. «Դիշերները մինակ կը դառնամ ամայի սենյակս որ համեստ կահ կարասիք մը միայն կը պարունակե. ամեն ինչ կանոնավոր շտկված ու իր տեղն է. ճրագս լուցկիին մոտ, փայտը վառարանին քով, զգեստներս իրենց ծածկոցին ներքև. ժամացույցի պես լարված սենյակ մը որու դեմ իզուր գանգատելու պատճառ կը փնտրեմ. ո՛չ, այս երկրաչափական անխոտորութեննեն չեմ ախորժիր. քիչ մը անխնամության երևույթ պետք է ինծի. վարձկան ձեռքի մը ծառայությունը չէ այլ սրտի մտոք անձի մը խնամքն որ կրնա շենցընել այս անարձագանք պատերը»։

Սեդրաքի ընտանեկան բաժանումն ուրիշ պատճառով մ'ալ

ծանր ու դժվարին եղավ. հայրենի տունեն մեկնելով հարկ եղավ նաև թողուլ մանկության ընկերուհի մը։

Քույր ու եղբայր ըսվելու չափ տղա հասակե ի վեր, Սեդրաքի հետ մեծցած գեղանի պարմանուհի մ'էր այս՝ որ բարեկամ ու դրացի ընտանիքի մը մեկ հատիկ զավակն էր։

Յուր տան մեջ լքյալ՝ Սեդրաք անոր քով միայն գտեր էր առաջին գորովը զգացումը։

Պատանին սովորական տղա մը չէր. աղջիկն ամենեն լավ գիտեր զայս. անոր ընտանեկան կացությունը մոտեն ճանչնալով՝ իր մեծարանքն ավելցեր էր այս դառնացյալ հոգվույն նկատմամբ ու ինքնին հանձն առեր էր զայն սփոփել։

Ազգային վարժարանաց ուսումն ավարտելով Սուրբիկ—այս էր Սեդրաքի նորատի բարեկամուհվույն անունն—ինքզինքը խիստ համբակ գտեր էր իր ուսյալ ընկերոջ քով որո հըմտությունը, բարձր դատողությունն ու իմաստալից խոսակցությունը զինք կը հմայեին. երիտասարդին մտերմությունը խիստ նպաստած էր այս համակրելի հոգվույն ու մտքին մշակման, և փրկարար ներգործություն մը ըրեր էր անոր վրա։

Ինչ որ ալ լինին մեր ազգային վարժարանաց վերագրված պակասությունք, նոքա՝ անհատական դպրոցներուն վրա ամենաբարձր առավելություն մ'ունին որ ճշմարիտ ազգային կրթություն մը տալու մեջ կը կայանա։

Ֆրանսայի Գիտության քերց կամ Բողոքական վարժարաններե միույն մեջ ֆրանսերեն և մյուսին մեջ անգլիերենը կրնան լավագույն կերպիվ ավանդվիլ. ազգային վարժարանք օտար լեզուներ ուսուցանելու մեջ հաջողություն ունեցած չեն երբեք և ճիշտ ասոր համար կը գովեմ զանոնք. ամեն աղջիկ ընկերության մեջ, ընտանյաց մեջ դիրք մ'ունենալե առաջ հայուհի մը պարտի լինիլ և Սուրբիկ ազգային կրթություն ստացող աղջկան տիպար մ'էր։

Հայ-հռոմեական բարեկամուհի մ'ունեցեր էր որ Փանկալթիի մեջ ֆրանսական գիշերօթիկ վարժարան մը կը հաճախեր. տեսակցություն մ'ունեցան օր մը և երկու աշակերտուհիներք ֆոխադարձաբար իրենց առած ուսմանց վրա խոսեցան. Փերայի օրիորդն արգահատող կարեկցությամբ մը հարցուց Սուր-

բիկին առած դասերն ու խրոխտ մեծամտությամբ մի առ մի թվեց այն կարևոր գիտելիքները զոր ինքը կուսաներ Ֆրանսայի պատմություն, Ֆրանսայի աշխարհագրություն, Ֆրանսայի գրականություն ու Պապական եկեղեցվույն սրբազան դավանանքն, ահա՛ ինչ որ այս կանուխեն օտարացյալ աղջիկը թվեց իր ապշյալ ընկերուհվույն. նույն իսկ Ֆրանսացի օրիորդ մը պիտի նախանձեր այս արևելքցի Ֆրանսուհվույն վրա։ Ֆրանսայի հետին գետակը, սարն ու ձորն, ամենեն աննշան ավանը ծանոթ էին այս հայուհվույն՝ որ իր հայրենյաց Արարատը չէր գիտեր և չէր ուզեր գիտնալ։

Սուրբիկ ապշեցավ, ամչցավ ու զայրացավ, մինչդեռ ամբարտավան պարմանուհին իր չգիտցած հայերեն բառերը կոպիտ ու սխալ արտասանությամբ մը կրկնելով անոնց տգեղությանը վրա կը ծիծաղեր ու հայերեն չգիտնալուն վրա կուրախանար։ Արդեն ապագայի պատրաստությունները տեսեր էր. պիտի ամուսնանար եվրոպացի երիտասարդի մը հետ որ զինքը պիտի տաներ այն գեղեցիկ ու պաշտեցյալ երկիրն որուն ամեն բան զոհելու պատրաստ էր. հայ երիտասարդաց հետ ամուսնանա՞լ, ազգային պարոններու հետ կենակցի՞լ, ահա այն սարսափելի հավանականությունը՝ զոր բնավ չպիտի ընդուներ։

Բայց ինչ որ անհանդուրժելի թվեցավ Սուրբիկի, այն նախատալից անտարբերությունն էր որով իր հայրենյաց հիշատակությունը լսեց այս խորթ ու անհարազատ զավկին բերնեն և Սուրբիկ այլևս չտեսնվեցավ անոր հետ։

Ինք՝ մոտեն տեղյակ էր հայոց գրական գործունեության, ամեն նոր երկ կամ պարբերական հրատարակություն իր հետաքրքիր նայվածքեն չէր վրիպած և Սեդրաք հմուտ դատավոր մը ու լավագույն առաջնորդն էր անոր գրական պարապմանց մեջ. իրիկուններ ճաշեն վերջը Սեդրաք Սուրբիկի տունը կերթար. օրվան լուրերն աչքի կանցունեին, ու հետո ձմեռը, վառ ու ճարճատուն վառարանին ջերմությանը մոտ, նոր հրատարակություններով ծածկված սեղանին շուրջը, կսկսեր այն ջերմ, լուրջ ու հմտալից խոսակցությունն որ մինչև կես գիշեր կերկարեր։—Ընդհանրապես կը գանգատեին որ բուն ազգային գրա-

1958

կանութենե մ'ավելի օտարամուտ ոգի մ'էր որ հայ հեղինակաց շարադրութեանց մեջ երևան կելներ։

Ըրբեմն գիտութեանց և ուսմանց վրա կը դառնար խոսակցութիւնը. պարմանուհին, իր սեռին հատուկ բարեպաշտութեամբ, ըստ կարի կը դիմադրեր այն կտրուկ վճիռներուն՝ որով գիտութիւնն իր անխուսափելի ճշմարտութիւնները կը ծանուցանե. երկրաբանութենե մինչև աստղաբանութեան վրա կը խոսեին և Սեդրաք իր բարձր կրթութեան շնորհիվ մի առ մի կը բացատրեր այն անողոք ու մշտնջենական օրենքներն՝ որով անհունապես փոքրիկ հյուլեն ու անհունապես մեծ տիեզերքը միևնույն ներդաշնակութեամբ կը կառավարվին։— Ընկերական կենաց մշտահույզ խնդիրներն ի կարգին վիճաբանութեան նյութ կը լինեին. ազգաց ճակատագիրն, անհատներու ազատութիւնը, լեզվի ու կրոնքի տարբերութիւնն հետզհետե կը քննվեին։— Սուրբիկ հուզյալ ձայնիվ կը պաշտպաներ աշխատավորներու տառապյալ դասն ու հարստութեան ի գործ դրած բռնութեան դեմ կորոտար, մինչդեռ երիտասարդն հանդարտ ձայնով կը բացատրեր տնտեսական գիտութեան այն ամենանվիրական սկզբունքն որ ամեն առուտուրի ազատութիւնն հարգելու մեջն է և տրտմութեամբ կը թվեր այն տարբեր տարբեր պատճառներն որոց մեջ փնտրել պետք է թշվառութեանց գաղտնիքը։

Այսպեսով և եվրոպացի հեղինակներու ընթերցանութեամբ ստացավ ծաղկահասակ աղջիկն հիմնավոր ու առողջ կրթութեան մը բոլոր տարերքը։

Սուրբիկ միանգամայն վարպետ գրչի տեր ու մանավանդ տաղանդավոր դաշնակահար մ'էր։ Դաշնակը փոթորկյալ կամ հանդարտ ծովու մը պես կը պատկերացներ անոր մրրկոտ կամ անդորր ոգին. անզգա գործիքի մը ձայնը չէր որ կը բարձրանար, այլ անոր ճարտար ու փափուկ մատներեն դղրդված անբացատրելի ու հմայիչ ներդաշնակութիւն մ'էր հնչուն, պայծառ ու ազատ որ կը սավառներ ունկնդրին զմայլած հոգվույն վրա։ Իր ամենեն սիրած վարպետը Մենտելսոնն էր, վասնզի Սեդրաքի սիրածն էր այն. ճաշեն վերջն երբ խոսակցութեանց նյութն սպառեր ու կամենային հանգիստ առնուլ, այն ատեն

կը զարներ այն սոնաթներեն մին՝ որոց տրտմությունն ու վսեմությունը միշտ գաղտնիք մը պիտի մնա ամենուն համար։

Հազվագյուտ բացառությամբ մը պատանուհին զերծ էր այն ողբալի ազատամտութենեն՝ որով նորատի աղջիկներն ու պառավ կիներն իգական սեռին անհավասարության դեմ կը բողոքեն շարունակ։

Աշխարհիս վրա աղջիկը՝ պահանջող, պառավը՝ գանգատող պիտի մնա հավիտյան։

Ոչ մեկ դար, ոչ մեկ լուսավորություն պիտի կարենա երբեք գոհացնել այս երկու անձնավորությունները զորս բնությունը միևնույն դժգոհության շրջանակին մեջ միացուցած է։

Աղջիկն՝ հույս ունենալուն վրա կը զայրանա, պառավը՝ չունենալուն համար, ու այս երկու հակառակ պահանջումները միևնույն բողոքով երևան կելնեն։

Դիտեցեք որ երբեք մանկամարդ ու ամուսնացյալ կին մը իգական սեռին գերության վրա չի խոսիր. երիտասարդությունն ու ամուսնությունը կնոջ ամենազորության միջոցն է. բայց ամեն իշխանությունն իր անկումն ունի ու զարմանալի չէ որ տարիքնին առնող կիները, զուրկ ամեն թեկնածուհենե, անհամ ու անկարգ գտնեն այն ընկերական կյանքը՝ զոր իրենց երիտասարդության ժամանակ այնչափ հրապուրիչ կը գտնեին։

Սիրող հոգիները միշտ անձնվիրության պատրաստ են ու Սուրբիկ այս անձնվեր էակներեն էր. բնությամբ խրոխտ, այլ վեհանձն հոժարությամբ երիտասարդին գաղափարաց բարձրությունը ճանչցեր ու մեծարեր էր, առանց սնոտի հպարտություն մը ցույց տալու։ Սակայն այս խորին մտերմությունն առանց վտանգի չէր։ Այս փոխադարձ հարգանքն ու համակրանքն, երկու ծավալման կարող հոգիներու ամենօրյա միությունը, տարիքնին, գաղափարաց ու զգացմանց ներդաշնակությունն՝ անբակտելի կապ մը հառաջ բերին։

Պատանուհվույն հրաշալի գեղեցկությունը Սեդրաքի խելքը գլխեն չառավ, բայց անոր գորովալից մտերմությունը զայն շղթայեց ու աշխարհ այս աղջկան վրա միայն հիմնված երևցավ անոր աչքին։

Սեդրաք ու Սուրբիկ գիրար սիրեցին. բայց այս սերը չէր

այն վաղանցիկ ու խաբեբա ավյունն՝ որ հովի պես կուգա ու կանցնի, այլ խորին, սուրբ ու հոգեկան միավորություն մը։

Ահա այս պատճառով Սեդրաքի բաժանումը դժնդակ զըրկում մը դարձավ. ընտանեկան գորովե արդեն զուրկ, կարոտ մնաց նաև այն միակ երեսին որ իրեն կը ժպտեր։ Անցյալ օրերու հիշատակն հեռավոր ու կորուսյալ երջանկության մը պատկերին պես անոր շփոթ մտքին մեջ կը նկարվեր։ Հայտնի եղավ որ չի պիտի կարենար անկե զատված ապրիլ։ Գաղտնի նամակագրություն մը ըստ կարելվույն միզմացուց այս անչատման ցավն։ Երկար և անվերջանալի նամակներ էին ասոնք զորս ամեն գիշեր կը գրեր, իր հոգվույն ամեն տպավորությունները, սրտին դառնություններն, հույսերն, պատրանքն և ցնորքը ցրվելով թոթափելով անզգա թղթին վրա. սիրո բառ մը չի կար այս գրություններ մեջ, ո՛չ. սիրելը շատ չնչին, շատ տկար բառ մ՚էր որ իր անհուն խանդաղատանքը չէր կարող բացատրել. և ոչ մեկ բառի մեջ, և ոչ մեկ նամակի մեջ կարելի էր ամփոփել իր փոթորկյալ հոգին։

Սուրբիկի նամակները միևնույն խռովյալ արձագանքները, միևնույն անհուն անձնվիրությունն ու ապագայի մտահոգությունները կը պարունակեին.

«Սիրելիս, քու սիրովդ ու հմտությամբդ սնուցիր զիս. հիմար եռանդով մը նետվեցա ամեն գաղտնիք իմանալու. դուն քովս էիր ու ամեն ինչ ուսուցիր ինձ. խրոխտ, գիտուն ու սիրեցյալ առաջնորդ մ՚էիր, ահավոր վարդապետություններ ունեիր լեզվիդ ծայրն որք քու բերնիդ մեջ իրենց սոսկումը կը կորսնցունեին. իզուր ուզեցի մաքառիլ անոնց դեմ, քու սերդ հաջողեցավ ընել ինչ որ հմտությունդ նախապաշարմանցս դեմ չէր կարող ընել. համոզվեցա քեզի։ Կապված էի քեզի այն միակ սիրով զոր երիտասարդուհին երկու անգամ չունենար իր բոլոր կյանքին մեջ. մոտ թե հեռու միշտ պաշտեցյալ հիշատակ մ՚ունիս սրտիս մեջ զոր երկյուղած բարեպաշտությամբ կը պահեմ»։

Ուրիշ նամակի մը մեջ այսպես կըսեր. «Ո՞ւր ես, Սեդրաք։ Ձմրան գիշեր է ցրտին, ձյուն ու բուք կը տեղա, ի՞նչ կընես առանձին ու մթին սենեկիդ մեջ. այս տունը բանտ մ՚է նաեմ

քանի որ հոս չես. ծնողացս սերը չի լնուր այն պարապը զոր դուն թողուցիր։ Ըլլա թե հուսահատ քաջութեամբ, չափազանց աշխատութեամբ առողջութիւնդ վտանգես։ Անձիդ տրրված հարվածը միայն քեզի չպիտի զարնե»։

Եվ այլուր. «Լսեցի քննութեանդդ հաջողութիւնը. մաթեմատիքը միշտ կը սիրեիր, ու ճշմարտութեան գիտութիւնն է կը սեիր. կը տեսնես թե ինչպես կը հիշեմ բոլոր խոսքերդ. սակայն չըլլա թե այդ պարապմունքը Սուրբիկդ մոռցնել տա քեզ։ Ես կուզեմ որ քու համբավդ այնչափ մեծ ըլլա որչափ մինչև հիմա տեսած զրկումդ։ Քու անունդ պետք է, կուզեմ որ մեծարանոք հիշվի ու ես անով պարծենամ»։

«Դուն հարուստի աղջիկ ես, կը գրեր օր մը անոր երիտասարդը, ես ալ հարուստի որդի էի, բայց հիմա ոչինչ եմ. ատեն մը չէի և հիմա ալ չեմ տար կարևորութիւն հարստութեան, բայց թե որ միջոց մ'է այդ քեզ մոտենալու, Սուրբի՛կ, հնդիկ իշխանի մը չափ հարուստ պիտի ըլլամ։ Անվան ու փառքի հետամուտ չէի և չեմ, սակայն եթե քու ծնողացդ աչքին այդ է այն պատվանդանն որով մինչև քեզ բարձրանալ ներյալ է, լա՛վ ուրեմն, պիտի մոռնամ, պիտի փակեմ սիրտս, ու միտքս միայն մաշեցնելով պիտի ստանամ այն դիրքը զոր ընկերութիւնը կը պահանջե նորեկներեն»։

Այս հաստատ համոզմամբ ձեռք զարկավ իր երկրաչափական ուսմանց զորս քանի մը տարիեն աննման հաջողութիւնով մը պիտի ավարտեր, և Համալսարանին մեջ ճանչցավ Տիգրանն ու սիրեց զայն եղբոր մը չափ։ Այս երկու պատանիներն այնչափ ավելի զիրար կը սիրեին որքան մինչև ցայն վայր զլացված էր իրենց ամեն գործովանք։ Իրարու համար գաղտնիք չունեցան և ոչ մեկ ժամանակ։

Տարիքի պզտիկ տարբերութիւն մը պատճառ չեղավ իրենց սրտի կապերը միմյանց հաղորդելու. Սեդրաքի նոր բարեկամն անոր սփոփանք ու քաջալերության օրինակ մ'եղավ և անոր զվարթ ու խնդուն երեսը՝ մասամբ թեթևցուց ուսման տարիներու աշխատութիւնն ու տխրութիւնը։

Տիգրանի միջոցավ ծանոթացավ նաև Նաթուին հետ որ նույնպես զվարթ ու զվարճախոս ուսանող մ'էր, և այս ընկե-

րական կյանքով կարծես անզգալի կերպով վերջացուցին տարեշրջաններն ու վերջին քննությունները տվին։

Խոսրով դատավորական ճյուղն ընտրեց. Տիգրան ազատություն կը սիրեր միշտ, ու փաստաբանական ասպարեզը մտավ. պաշտոնեության փառքն, որ Խոսրովին բոլոր ակնկալությունն էր, իրեն համար նշանակություն չուներ։ Այս երեք մարդիկը՝ չորս տարի դասընկերություն ընելե վերջ՝ իրարմե կը բաժնվեին աշխարհի պայքարին մեջ մտնելու համար։

Բայց Խոսրով պարզ ու գոհ սրտով չի զատվեցավ իր ընկերեն. գավառացի՝ այսինքն ի բնե խորամանկ՝ բնավորությամբ խիստ հեռի էր Տիգրանեն։ Սակայն իրավ է որ երբեք միմյանց դեմ մեղադրելի վարմունքի մեջ գտնված չէին ու թե որ Տիգրանին ծանր եկած բան մը միայն կար, այն ալ սա էր թե իր ընկերը չանացած էր ատեն մը իր հույն սիրուհին ձեռքեն կորզել. բայց աղչիկը՝ բացե ի բաց ծաղր ու ծանակ ըրած էր արդեն իր դժբախտ հակառակորդն ու զայն Համալսարանին բոլոր ուսանողաց կատակներուն ու հեգնությանց մատնած էր։

Խոսրով՝ ամեն բանե ավելի ընկերական դիրք մը ձեռք բերելու հետամուտ՝ հոժարակամ իր նպատակի հաջողության զոհած էր ամեն զգացում. կատարյալ տեր իր անձին, վարժված ծածկելու այն ամեն դառնությունը՝ զոր Համալսարանին մեջ Տիգրանին բարձր դիրքն իր նախանձոտ սրտին մեջ կը թափեր, բայց ամեն ատեն կարոտ անոր օգնության, վկայագիր մը ձեռք բերելու համար, վկայագիր՝ որ ամեն ասպարեզ պիտի բանար իր առջև, խոհեմություն համարած էր զգուշանալ ամեն ընդդիմության ու հակառակության փորձերե։ Ընդհակառակն խոնարհ ու հաճելի ձևերով անոր պաշտպանության ապավինիլ կը ցուցուներ, որով հաջողեր էր Տիգրանի կատարյալ վստահությունը շահելու։

Անգամ մը միայն քիչ մնացեր էր վար առնու այս կեղծավորության դիմակը։ Վայրենի ու վավաշոտ սերով մը սիրած էր այն գեղեցիկ հելլենուհին որ Տիգրանին կը ժպտեր շարունակ. ինքն երկու տարիե ի վեր մեկ ժպտին կարոտ, մեկ նայվածքին կապված, մաշեր ու սպառեր էր երբ իր երջանիկ ընկերն, ամեն բանի մեջ ճակատագրեն օգտված, անհուսալի հա-

ջողութիւն մը ձեռք կը բերեր և որ ավելին է, ամեն օր համար կուտար իրեն՝ վայելած բոլոր շնորհներուն։

Ափսո՜ս, վայելչութեան կողմե չէր կարող մրցիլ իր գեղեցիկ ոսոխին հետ. իր կարճ հասակով, ցած ճակտով, գուռզ մազերով ու ծաղկավեր դեմքով, բարեձևութեան պահանջումներ չէր կարող ունենալ. բայց իր առավելութիւններն ալ կը կշռեր անոր փոխարեն. իր հայրենիքեն ոտքով եկած էր Պոլիս, յոթն տարեկան եղած ատենը, և Գալաթիո վարժարանին մեջ տրնտեսին քով ու անոր կերակուրներով ապրած էր մինչև տասներեք տարեկան հասակը երբ հաջողեր էր Շահնազարյան վարժարանը մտնել. ամեն բանի կարոտ, ամեն բան ձեռք բերեր էր աննման հաստատամտութեամբ. մանկութենեն դատապարտված ընկերական ամեն մահացումներու, մարդատյաց մեկը դարձած էր ու կիսկատար փիլիսոփայութեամբ մը զոր իր մոլար սկզբմանցը կը համաձայններ, շուտով համոզված էր թե չարն ու բարին գոյութիւն չունին, թե վատութիւնը տեղին համեմատ ազնվութիւն է, թե մարդուս գերագույն նպատակն իր եսութեան մեջ կը կայանա։

Հետևապես գեշ ոգվով ու սխալ դաստիարակութեամբ զորացած, և ոչ մեկ բանի մեջ լավ կողմը կրցած էր նշմարել։ Հելլենուհվույն սերն անգամ չէր այն բարձր ու ազնիվ զգացումն որ մարդն անասուններեն կը բաժնե, այլ վայրագ ու ահավոր իղձ մը ու տանջանք մ՝էր։

Երբեք չէր ներած իր պատանի ընկերոջը դասի մեջ առաջնութիւնը. սիրո ասպարեզին մեջ անոր նախամեծար համարվիլն իր համբերութեան չափը լեցուց. մութին մեջ սպասող կատարյալ թշնամի դարձավ իր սրտեն, թեև անկարող անոր վնասելու։ Աղջկան մոտ իր խնդիրքն ու հետևանքն հետևյալ օրը Տիգրանին միջոցավ տարածվելով Համալսարանին մեջ, մին իր ծաղրանկարը շիներ էր որուն մեջ իր ծակոտյալ երեսը գեղուհվույն շրթանցը կը մոտեցներ երբ սա զզվանոք գլուխը կը դարձներ. ուրիշ մը փոքրիկ ոտանավոր մ՝էր շիներ անոր վրա որ բոլոր ուսանողներուն բերանն իննկավ։

Այն ատեն անհաշտ ու ոխակալ լուռությամբ մը պաշտպանեց ինքզինքը. երկու տարի կար շրջանն ավարտելու. քիչ մը վերջը

Տիգրանի լքումն ալ տեսնելով անհուն գոհացում մը ունեցեր, կատարյալ վրեժխնդրության համ մ'առեր էր անկից։ Բայց այդ իր նվաստությունը չէր փոխարինած. բախտն հարված մը տված էր Տիգրանին, ինք իր կողմեն բան չէր կրցեր ընել։

Ասոր հետ մեկտեղ մտերմության ու բարեկամության ցույցերը կրկնապատկել հարկ եղավ երբ ավարտման քննությունք մոտեցան։

Արդարև անօգուտ չեղավ այսքան կեղծավորություն. իր վկայագիրը Տիգրանի շնորհիվն ստացավ. ամեն դասի մեջ հետադեմ, իր բարեկամին դասատուաց քով ըրած բարեխոսությամբ ձեռք բերավ այդ պաշտելի թուղթն որու վրա իրավամբ կը հիմներ իր բոլոր ապագան։

Ջատվեցան իրարմե փոխադարձ անձնվիրության խոստումներով. «Դատավո՛ր եղած ատենդ չըլլա որ իմ իրավունքներս անտես ընես», ըսավ Տիգրան, Խոսրովին ձեռքը սեղմելով.— «Ոչ ոք զքեզ պաշտպանելու հավակնությունը կրնա ունենալ երբ դուն կեցած ես», պատասխանեց իր բարեկամը։

Իսկ Սեդրաքի ու Տիգրանի բաժանումն ավելի սրտահույզ եղավ. երկու եղբայր այնչափ չէին սիրած զիրար որչափ այս երկու ուսանողները. իրենց վիշտերն և ուրախությունը միասին բաժնած էին մինչև այն ատենը։

Սեդրաք իր երկրաչափական վկայագիրն ստանալե հետո Ատանայի երկրորդ երկրաչափ անվանվեցավ ու մեկնեցավ Պոլսեն. անտանելի թվեցավ այս բաժանումը Տիգրանին. ամենքն այս գավառին վատ ու մահաբեր օդին վրա կը խոսեին, իսկ Սեդրաք բնավ չի դեղևեցավ. իր բարձր արժանիքը գործով պիտի ապացուցաներ. իր սիրուհվույն ճանչնալը չէր բավեր իրեն, անոր ընտանիքն ալ համոզել կուզեր։ «Սուրբիկ, քեզի համար կը մեկնիմ», ըսավ նորատի աղջկան։ Սուրբիկ այս զորավոր մարդուն միակ տկար կողմն, այս Աքյուլլեսին միակ վիրավորելի կետն էր։

Տարի մը կա որ երիտասարդ երկրաչափն իր պաշտոնին գլուխն է, ուր հաջողած է իր պաշտոնակցաց և մեծերուն հարգանքն ու համակրանքը շահիլ։ Ատանայի դաշտին մահաբեր օդը բարվոքելու համար եղած ջանքերեն և ոչ մին հաջողած էր.

Սեդրաք այս մեծ ու մարդասիրական նպատակին նվիրեց ինքզինքն. իր պատրաստած հատակագիծն ու ծրագիրը բոլորովին պիտի մաքրեին այդ տղմուտ դաշտին վատառողջ ժանտահոտութիւններն, ու երկրագործին պիտի տային ընդարձակ ու բարեբեր հողեր. Սեդրաքի առաջարկութիւնը բոլոր գավառին համար կենսատու խնդիր մ'էր և իր ծրագիրն ամբողջապես ընդունվեցավ. գավառին կառավարիչը Մեճիտիեի չորրորդ աստիճանը խնդրեց այս եռանդուն պաշտոնակալին համար, որ անմիջապես շնորհվեցավ։ Ալ զանգատելու տեղի չի կար. բախտը կսկսեր ժպտիլ։ Իր առանձնութեան մեջ չէր հուսահատած երբեք. սիրուհույն պատկերն հոն էր որ զինքը կը քաջալերեր։ Քայլ մ'ևս և ահա առաջին երկրաշափ պիտի անվանվեր։ Ո՜հ, այն ատեն բաց ճակատով պիտի դառնար Պոլիս ամուսնութեան խնդրելու իր սիրած աղջիկը. ընտանիքը չէր կրնար դժկամակիլ այլևս։ Երազն իրականութեան մեջ անցնելու համար այս քայլը միայն մնացեր էր։ Սեդրաք իր աշխատութիւնը կրկնապատկեց. կառավարութեան պաշտոնեի մը հարմար հանդարտ գործունեութիւն մը չէր, այլ հիվանդոտ տենդե մը վարակյալ անձի մը նման կը վարեր իր անտանելի աշխատութիւնը։ Չորս մարդու գործ էր ստանձներ ու քսան մարդու գործ կը տեսներ. անիմանալի պատերազմ մ'էր զոր ժամանակը փութացնելու համար կը մղեր ամեն օր. պաշտոնի բարձրացում խոստացեր էին իրեն, բայց վեց ամսեն առաջ չէր կրնար կատարվիլ. ապրիլի վերջն էին. վեց ամիս՝ վեց տարվան չափ երկար թվեցավ իր անհամբեր սրտին։ Եթե զաշխարհ բեռցնեին իր ուսին վրա այս պայմանաժամը կարճցնելու համար, հոժարութեամբ պիտի ընդուներ այս նոր Աթլասը։

Մեսաժըրիի Քամպոճ երկկայմ շոգենավն, որ այն ատենը Պոլսո և Աղեքսանդրիո միջև թղթատարութիւն կրներ, իր շաբաթական ուղևորութիւնը կատարելով մայիսի մեջ կիրակի առավոտ մը Վոսփորի ջուրերը կը մտներ նոր հարսի մը պես քծնելով։ Նավուն կամրջին վրա հրիտասարդ ուղևոր մը կը տեսնվի գունաթափ ու դողդոջուն. մակույկներն անմիջապես կը շրջապատեն նորեկ շոգենավն. ասոնց մէյն մեջ Տիգրան

կը գտնվեր որ առանց սպասելու շոգենավին կենալուն, չվաններեն վեր ելնելով դեպի երիտասարդը վազեց ու զայն ողջագուրեց. Տիգրա՜ն, Սեդրա՜ք, այս երկու բառերը միասին լսվեցան ու երկու բարեկամներն արտասվելով իրարու գիրկ նետվեցան. քիչ մ'ատեն հեծկլտանքե ուրիշ բան չի լսվեցավ. արդարև սրտահույզ տեսարան մ'էր դիտել այս երկու երիտասարդները՝ զոր ճակատագիրն եղբայրութենե ավելի սերտ կապով մը միացուցած էր. «Արիացիր, Սեդրա՜ք», ըսավ վերջապես Տիգրան վեր առնելով ու համբուրելով իր բարեկամին դալկահար ճակատը. «Ճշմարի՞տ է ուրեմն», հարցուց տարաբախտն հազիվ լսելի ձայնով մը։

Տիգրան չի պատասխանեց, այլ տոմս մը միայն նետեց ուղևորին ոտքը։

Տիկին և Պ. Ք. պատիվ ունին խնդրել... որ ճաճին ներկա գտնվիլ այս կիրակի առավոտ իրենց Սուրբիկ դստեր Վսեմ. Աբամ էֆենտիի հետ պսակման արարողության որ պիտի կատարվի Քատրգյուղի ս. Թագավոր եկեղեցվույն մեջ։

Ահա ինչ որ ուղևորին շվարած ու նսեմացած ակնարկը կարդաց այս հեշտաբույր ու ոսկետառ տոմսակին վրա։ Ստույգ էր ուրեմն այն անհավատալի գույժն. և ինքն երեսի վրա թողլով իր պաշտոնն, առանց վայրկյան մ'սպասելու վազեր և հասեր էր այն օրն հազիվ հորում Սուրբիկ պիտի պսակվեր։

Քատրգյուղի ս. Թագավոր եկեղեցին քառակուսի, պզտիկ ոճ գեղեցիկ շենք մ'է և հոյակապ մարդու մը առատաձեռնության արդյունք։— Խուռն բազմություն մը եկեղեցվույն ամեն կողմը կանուխեն գրաված է. բակը, բանկալը, խորհրդարանին մեջ անգամ կենալու տեղ չի կա. հետաքրքիր ամբոխն հրավիրելոց մուտք անգամ թողած չէ։

Ժամը վեցն է. հանդիսին տերերն հրավիրյալներուն հետ հասան ու անանցանելի մարդկային պատնեշ մը թափանցելով հաջողեցան եկեղեցին մտնել. պսակի արարողություն կա. հանդիսականներուն մեջ կը նշմարվին Պոլսո առևտրական տանց գլխավոր ներկայացուցիչները, դատական իշխանության անդամներ և հայազգի բարձրաստիճան պաշտոնատարք. փե-

սան քառասնամյա պաշտոնակալ մ'է՝ որ վայելչապես կը կրե մյութեմալիզի ոսկեճամուկ համազգեստը. հարսն հագած է սպիտակ կոռնե երկար շրջազգեստ՝ հարսանեկան թափանցիկ շղարշով ու իր կոհակածուի մազերով ծածկված. դյուրին է նշմարել բարեձև հասակ մը, նեղ, նեղ, ափի մեջ ամփոփվելու ու ճզմվելու չափ նեղ մեջք մը որ թավալուն, հպարտ ու շլացուցիչ կուրծք մը կը կրե, ճակատ մը անամպ արշալույսի պես պայծառ, աչքեր սև ու խոշոր որոց վրա շուք կուտան իր երկար բիբերը, բերան մը գարնան վարդի պես թարմ ու կարմիր. քիթն ուղիղ, ռունգերն ուռած, թափանցիկ, դյուրահույզ ու հրապուրիչ. սպիտակ ձեռնոցներ մինչև թևերը կերկարին ու երևան կը հանեն անոր քնքուշ ու աննմանելի գիծերն, ու նույնպես ճերմակ սնդուսե կիսակոշիկներ կը սեղմեն անոր փոքրիկ ոտները։— Տասնևյոթը տարեկան կա այս աղջիկն, այս մեհյանին մեջ ճշմարիտ դիցուհին՝ որ կիշխե բոլոր հավատացելոց վրաւ

Պսակի արարողությունն սկսավ, մահվան ողբերու նման տխուր երաժշտությամբ մը. միշտ խորին տպավորություն մը հառաջ կը բերեն այս տխրանվագ աղոթքներն. ապստամբ միտքը պահ մը կընդարմանա ու հոգին հմայության մը ներքև կը վերանա ու անմատչելի երկնագավառներու մեջ կը սավառնի. բարեպաշտ լռություն մը կը տիրե. պսակադիր քահանան ձայնը բարձրացուց ու փեսին դառնալով՝ «Տե՛ր ես այս օրիորդին», ըսավ հանդիսավոր հարցումը կրկնելով. «Այո՛», պատասխանեց փեսան գլուխը խոնարհեցնելով. «Եվ դու հնազա՞նդ ես, աղջիկս», ըսավ քահանան օրիորդին ուղղելով խոսքն. աղջիկը վեր առավ գլուխն... երկու սլաքներ, ո՛չ, երկու հրացայտ շանթեր պատահեցան իր մոլորյալ ակնարկին. բողոքող, սպառնացող, որոտացող ձայն մը կարծեց լսել, նենգավո՛ր բառը կարծես ականջին զարկավ, աչքերը մթագնեցան, խուլ բժժանքով ականջը լեցվեցավ ու դեմքը մահատիպ թալկություն մը գրավեց. Սեդրաք իր բարկացայտ նայվածքը աղջրկան վրա սևեռեր էր։

Սեդրա՞ք, անշուշտ իրական բան մը չէր կրնար ըլլալ ասի, այլ արհավրալից տեսիլ մը զոր իր խռովյալ խղճմտանքը միայն արտադրած էր։ Սեդրաքի ներկայությունն անբացա-

տրեալի էր։ Այն վայրկենին իսկ ուր նոր ուխտով մը ավելի հին, ավելի նվիրական ուխտ մը կը դրժեր, ճիշտ այդ վայրկենին երիտասարդին նայվածքը մահատու դաշույնի մը պես շողացեր էր աչքին. քե որ ապտակ մը ուտեր, հոժարակամ պատրաստ էր ներելու. այլ այս անխոս ներկայությունն այնչափ ավելի նախատալից թվեցավ որչափ լռին ու իրավացի էր։

Մարդս ամենեն ավելի անիրավ եղած ատենը կը բարկանա. նույն բանը պատահեցավ Սուրբիկին. կանացի սիրտն անհատակ ու անքննելի վիհ մ'է. ճշտիվ չէ կարելի անոր հոգվույն վիճակն հաստատել։ Եվ սակայն ստույգ է որ ուրիշի մը հետ ամուսնանալ որոշելով հանդերձ՝ Սուրբիկ իր վաղեմի բարեկամը հավիտյան կը սիրեր։ Անոր հեռացումն ու տաժանելի վիճակն իր գթությունը շարժեր էր, և սերը տարօրինակ երևույթ մը կզգենու երբ գթության կը միանա. տեսակ մը շնորհ կը դառնա որ տվողին բարի կամեցողության ձգված է. սերը չի մուրացվիր այլ կը պահանջվի. ողորմություն մը չէ այլ տուրք մը։

Երիտասարդին վիճակն աղջկան մոտ ավելի պաշտպանության զգացում մը հառաջ բերած ու այս կերպով իր սերը պարտականություն մը լինելե դադրած էր առանց անհետանալու. մյուս կողմե իր ընտանյաց ճնշումն որ բռնության մոտեցած էր, իրեն խոստացված ամուսնույն բարձր դիրքն ու պըզտիկ փառասիրության զգացում մը՝ ամենքը միացեր էին հեռավոր անձի մը տված խոստումը մեկդի ընելու։ Բայց այս հանկարծական վերադարձն հաշվի մեջ չէր. ինչպես ըսինք Սուրբիկ իր մանկության տարաբախտ ընկերը միշտ կը սիրեր. զայն տեսնելուն համար փափագ մը ունեցեր էր անոր դիրկը նետվելու արտասվելու. բայց առանց կանխավ իրմե ո՛ևէ բացատրություն խնդրելու՝ անոր այս հանկարծական ներկայությունն, հրապարակավ զինքն ամոթահար ընելու անողոք փորձ մը ու թշնամանք մը նկատեց և իր բոլոր սիրույն հակառակ՝ զինքը նվաստացնելու այս ջանքը խիստ ծանր եկավ իրեն։ Ինքնիրեն երիտասարդին համար մեծ զոհողություններ ըրած ըլլալ կը կարծեր ու դիմացինն ապերախտ համարեց այս թըշնամության ցույցին համար ու այլևս ամեն բարեկամություն

վերջացած։ Հանցանքն իրը չէր եթե գաղեր էր աշխարհիս մեկ ծայրն ու անպաշտպան թողեր էր զինքն անգութ հոր մը բռնութեյանց ներքև ու հիմա եկեր էր իրեև թե համար պահանջելու իրմեն։ Զինքը սիրել խոստանալով հավիտենական գերութեյան դաշն կռած չէր ու Սեդրաք իրավունք չուներ այնչափ ատեն անտարբեր ու լուռ կենալե՛վերջը ճիշտ պսակի արարողութեյան ժամուն սպառնալից ստվերի մը պես երեսին զարնելու իր ընթացքը։— Նահանջիլ կարելի չէր այլևս. բոլոր գյուղին մեջ ծաղր ու ծանակ ու շաղակրատ ամբոխի մ'առջև ամոթահար ըլլալու վախը մեռնելե ավելի սարսափելի էր։

Ու Սեդրաք ճիշտ զինքն այս նվաստութեյան մատնել եկեր էր անշուշտ։ Այս մտածումները մեկ մանրերկրորդի մեջ Սուրբիկի մտքեն անցան, ու հիմարուհին՝ ինքնիրեն եթե ոչ պարկեշտութեյուն գեթ արդարացում մը գտնել կարծեց իր վարմունքին մեջ. նամանավանդ աչքին զարկեր էր երիտասարդին ճամփորդութեյան անճոռնի հագուստներն հրավիրելոց սև ու անքննադատելի զգեստներուն մեջ. անոր արևեն ու հողմեն սևցած երեսը չգիտեմ ի՛նչ վայրենութեյան երևույթ մը տվեր էր անոր սովորաբար տրտում երեսին ու անմիջապես մեծ տարբերութեյուն մը նշմարեր էր երիտասարդին ու իր ամուսնույն մեջ։

Սեդրաք իրեն համաստիճան մեկը չէր. իրմե վար դասի մը պատկանող անձի մը կողմեն, նույնիսկ թե որ պաշտեցյալ մեկը լիներ այդ անձը, Սուրբիկ թշնամանքի մը հանդուրժողներեն չէր ու չի հանդուրժեց. ամբարտավան կերպով մը վեր առնելով իր գլուխն՝ «Այո՛, տեր հայր», ըսավ քահանային, «հնազանդ եմ»։

Այսպիսի հանդիսավոր վայրկյաններու մեջ բնական եղող հուզումե ի զատ ոչ ոք բան մը նշմարեց հարսին դեմքին վրա. այս անդարձ որոշումը կայծակի արագութեյամբ տրվեր էր անոր մտքին մեջ ու մեկ բառով ճակատագիր մը խորտակեր էր։ Ահա այսպիսի խախուտ ու անիրավ պատճառաբանութեյան մը կը հենուր այս անողոք որոշումն, որ մանկութեյան ու պատանութեյան ամենեն նվիրական կապերը դանակի մը պես մեկ հարվածով կը ջնջեր. ափսո՜ս. ու հարկ է ավելցնել որ այս աղջիկը թերևս լավագույն կինն էր աշխարհիս վրա։

Սեդրաք իր պաշտոնատեղին չի վերադարձավ և ոչ իսկ հրաժարական մը կամ լուր մը ղրկեց. ի՛նչ օգուտ այլևս։ Այս անլուր մատնությունն ահարկու հարված մ՚եղավ գլխուն որ զինքն ընդարմացուց ու ապշեցուց. իր սերն, իր անձնվիրությունն, այս ուխտադրուժ աղջիկն, այս հարսանիքն, ուրիշ բան չէին կրնար լինիլ բայց անհաճո երազ մը ուսկից սթափիլ կուզեր։ Ինչ՚ որ հզորագույն հուզումներ չէին կարողացեր ընել այս ուժով մարդուն վրա, մատնված սերը կարողացավ ընել։ Սեդրաք ընկճեցավ. իր սրտեն զարկեր էին զինքն. այս աղետը խորտակեր էր իր հոգվույն միակ զսպանակն, և ուղեղը չէր կրցած դիմադրել այս անակնունելի բաղխման. բժիշկները մոտալուտ խելագարության նշաններ նշմարեցին անոր վրա։

Ծտի-Քուլեեն Վելր-էֆենտի երթալու ճամփուն վրա ամայի և առանձնացյալ դաշտի մը մեջ երկհարկ, փայտաշեն ու քառակուսի շենք մը չի բարձրանար այլ կը տարածվի. հին, գրեթե խարխուլ ու ընդարձակ հարկ մ՚է որուն հավիտենական դեղին գույնն առածի կարգ անցած է. դիմացը կա փոքրիկ պարտեզ մը որուն մեկ մասը բանջարեղինաց հատուկ է ու մյուս մասն հասարակաց զբոսավայր մը լինելու հավակնություն ունի։ Աղրիանուպոլսո շոդեկառքն անոր արևմտյան կողմը քերելով իր երկաթե ճամփուն վրա կը սրանա։

Այս պատմական շենքն Հայոց Ազգային հիվանդանոցն է։ Ես չեմ նայիր ո՛չ անոր փլատակ սպառնացող պատերուն և ո՛չ աղքատիկ անկողիններուն. անոր տխուր ճակատը զարդարող ազգային անունն իմ սիրտս կը գրավե ու անմիջապես կը սիրեմ այս քայքայուն շենքը։

Օրինավորություն, ճշտություն ու հայրական հոգածություն մը կը տիրեն այս ճշմարիտ ազգային հաստատության մեջ։ Անոր հիմնադրին նվիրական ոսկերոտիքն Մայր-Եկեղեցվո մեջ կը հանգչին, այլ անոր ազգանվեր ոգին հավիտյան կը հսկե այս սփոփանաց հարկին վրա։

Հիվանդանոցին մեջ մաս մը կա որ ամուր պատերով բաժնըված է ու երկաթե հաստատ ձողեր անոր պատուհանները կը զարդարեն. 40—50 հոգվո չափ բազմություն մը կապրի հոն

հզոր ու որոտաձայն պահապանի մը ազդած սարսափին տակ հնազանդ։ Գլուխնին պզտիկ գդակ մը, լայն ու հաստ բրդե շապիկ մը, նույնպես լայն ու միևնույն կտավե տափատ մը այս թշվառության զինվորներուն միօրինակ համազգեստն է։ Մեծ մասը նստած է փայտե տախտակամածի մը վրա ու շրջանակ մը կազմած է։ Դեմքերնին լուրջ ու խոժոռ, ակնարկնին շրջուն ու մոլորյալ, ձայներնին ցած ու հանդարտ, այս մարդիկը նոր եկ այցելուին աչքին կարծես ծանր ու դժվարին խնդրո մը համար խորհրդակցության մեջ են. մաս առ մաս իրարու հետ կը խոսին, կը պատասխանեն, կը վիճին ու առանց մոտեն ականջ տալու անոնց խոսակցության անկարելի է դատել այս տարաբախտներուն վիճակը։

Հիմարներն են ասոնք։

Ահավոր ու կարեկցության արժանի տեսարա՞ն։

Այս միազգեստ տարաբախտներուն մեջ երիտասարդ մը կը նշմարվի իր զվարթ ու խնդուն երեսովն ու համակրելի ձևերուվը. արագ, գրեթե տենդային արտասանություն մը ունի. հակառակելու չի գար անոր, անմիջապես կը զայրանա ու կը սպառնա. իր բախտակիցներեն միույն հետ կը խոսի շարունակ որ իրեն մտիկ չըներ. կը խոսի ու կը խոսի, կարծես պատմություն մը կրնե ու վճիռ մը կսպասե անկից.— ի՞նչ կը շաղակրատե այս հիմարն. երբեմն կերգե ու գիշերն անխոս լռության մեջ ամենքը կը ճանչնան անոր սիրած երգերուն ողբալի շեշտը։

Այս հիմարը Սեդրաքն է։

Տարվան մը չափ ամեն բժշկական խնամք անօգուտ դառնալով, ընտանիքը պարտավորեցավ ազգային խնամոց հանձնել զայն։

Տիգրան ուրբաթ և կիրակի օրերն հատկացուցած է իր բարեկամին՝ որ զինքը չի ճանչնար։

Իզուր նոր կայծով մը բորբոքել կուզե այս մարած հրաբուխն, ու արձագանք մը արթնցնել անոր խորահատակ սրտին մեջ. ամեն հույս շատոնց վերջացած է ամենուն համար և Տիգրան միայն կը համառի բախտին ու գիտության դեմ. իր այցելություններն անպակաս են։ Հիվանդանոցի մարդիկներն հի-

մարին եղբայրը կը կարծեն այս նորատի երիտասարդն՝ որ իր հանգստութեան ու զբոսանաց ժամերը նվիրական պարտականութեամբ կը լեցնէ ու ամեն անգամ արտասվելով կը վերադառնա։

Սեդրաքի այս մահացումը երկար չի տևեց։ Երկինք գթաց կարծես այս թշվառին. օգոստոսի սկիզբները ծանր ժանտախտ մը բռնվեցավ ու տասնևութ օրվան մեջ հալեցավ այս առյուծի պես տղան. ուրբաթ երեկո մ'էր, օրհասական ճգնաժամն սկսավ, վերջին պայքարը կինաց ու մահվան մեջ։ Գոգցես բախտին անողոք հեգնութեամբ հիվանդը պահ մը սթափեցավ իր մահատիպ թմրութենեն. տրտում նայվածքը չորս կողմը սևեռեց, Տիգրանը միայն տեսավ քովը, նշան ըրավ անոր մոտենալու և իր սառ կտրած շրթունքով համբուրեց երիտասարդին դալուկ ճակատը. ու քիչ մ'ատեն կամաց, խիստ կամաց ձայնով մը խոսեցավ անոր հետ... կես ժամ վերջը Սեդրաքի աստղը շիջեր էր։

Սեդրաքի կրոնական համոզումները կարի սահմանափակ էին. քրիստոնեութիւնն հարգելով հանդերձ դերագույն էակի մը գոյութեան հավատալեն անդին անցած չէր երբեք։ Մահվան ճգնաժամին մեջ անոր հուշաբերած վայրկենին ուզեր էին իր մոռցած պարտականութիւններն հիշեցնել ու բարեսիրտ պանդուխտ քահանա մը հանձն առեր էր այս դժվարին պաշտոնը. Սեդրաք բացարձակ կերպով մերժեց ամեն աղերս ու խրատ։ «Ես խղճի և սկզբունքի տեր մարդ եմ, ըսավ քրիստոնեութեան այս համեստ ներկայացուցչին, ու կեղծիք չեմ ընդունիր մահվան անկողնույս մեջ»։

Քահանան չի պնդեց, Սեդրաքի անկեղծութիւնը վինքն համոզեց ու չուզեց բռնանալ անոր խղճմտանքին վրա. ասի այն բարի անձերեն մին էր որոնց մոտ պարզմտութիւնն ուղղութեան և առաքինութեան լավագույն առաջնորդն եղած է։ Իրմե ավելի գիտուն կրոնավոր մը ինքզինքը թերացած պիտի նկատեր Սեդրաքի վրա բռնութիւն ու ճնշում չի գործածելուն. այս պանդուխտ երեցն այնպես չի նկատեց և շատ կը վախնամ որ քիչ մ'ավելի խոսքով երեցն ինքն ալ չի համոզվեր Սեդրաքի գաղափարներուն։

Որոշվեցավ ուրեմն որ գաղտնի պիտի մնար հիվանդին հաղորդություն չառնելն։ Քահանան մոլեռանդ ժողովրդյան գայթակղութենեն նախամեծար համարեց այս անհրաժեշտ ստախոսությունը։

Բայց չի գիտցվիր թե ի՞նչ կերպով այս ճգնաժամի գաղտնիքն հիվանդանոցին մեջ տարածվեցավ. քահանային թուլբերանությո՞ւնն էր թե ուրիշ պատճառ մը կար որով իմացվեցավ Անդրաքի լուսավորչական եկեղեցվո պարտականությունները մերժելն։

Հարազատ լուսավորչականներուն աչքին՝ այս երիտասարդ ազատամիտն պոռոտ մը, բողոքական մ'էր և բողոքականե մ'ավելի քամահրելի արարած մը չի կա։ Կրոնական խտրություններն՝ ազգության ոգիեն ավելի ուժով կազդեն մեր վրա։ Ամենքը կը հիշեն այն ահավոր պատմությունն որ բողոքական հրաչակավոր ննջեցյալի մը թաղման հանդեսին հետ կապված էր։ Հայոց պատմության սև ու տխուր մեկ երեսն է այդ մոլեռանդ անողորմությունն որ անկենդան դիակի մը դեմ կը մաքառեցավ իր ազգային պարտականությանց մեջ եղբերուի մը չափ սիրտ չունեցող խուժան մը իր քաջության փորձը գերեզմանատանը ապացուցանել կը ճգներ։

Երեսուն տարվան միջոցե վերջը միևնույն աններող գաղափարները կը տիրեին, և Սեդրաքի թաղումը Սամաթիայեն, ճոտի-Քուլեն ու շրջականերեն ժողված ու հավաքած էր ստորին անկիրթ ամբոխ մը, որ հաստատ կերպով դեմադրել որոշած էր անոր Հայոց գերեզմանատան մեջ ամփոփվելուն։

Հայրենավանդ մոլեռանդություն մ'էր որ անեղծ պահված էր ու առաջին առթիվ երևան կելներ։ Տիգրան միայնակ էր այդ մրրկոտ բազմության դեմ։ Հուղարկավորության հանդեսն սկսավ անշուք ու անձայն. լքյալ ու աղքատիկ հուղարկավորություն մ'էր. քահանա մը, ժամկոչ մը, հինցած ու պատառոտուն ծածկոց մը, ասոնք միայն կրնային առ առավելն ձրի տրվիլ։ Ուրիշ բան էր, երբ թավիշե ծածկույթի, սնտուկի մը (այսպես կանվանի եկեղեցվո լեզվով նոր դագաղն) և բազմաթիվ քահանաներու ծախքը վճարելու դյուրությունն ըլլար. Տիգրան ասոնք և ոչ մին ուզած էր. այդ ստորին խտրությունները զայն չէին

վշտացներ և ավելի բարձր էր անոր ակնարկը։ Հիվանդանոցի մատրան մեջ ննջեցելուն արարողությունն երկար չի տևեց ու դագաղը ճամփա հանեցին դեպի գերեզմանատուն...։

Գայթակղյալ ամբոխը կը հետևեր դագաղին ավելի թշնամվո քան թե հուղարկավորի մը դիրքով, ու խռովյալ տրտունջ մը՝ որ քահանային աղոթքին կիշխեր, որոշ կերպով կրսեր,

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Դագաղը կը տանեին չորս հուժկու երիտասարդներ, Սիդրաքի այն թշվառ վիճակակիցներեն զորս ուժի կարոտ աշխատությանց մեջ, հիվանդանոցի վարչությունն երբեմն կը գործածե զանոնք բոլորովին անզբաղ չի թողլու համար։ Անշուշտ լավագույն է այս անզգա էակներուն հանձնել ննջեցյալ մր ի գերեզման առաջնորդելու տխուր պաշտոնը։

Նեղ ու գալարուն ճամփե մը կը հառաջանային համրաքայլ։ Բնության ամենեն ավելի զմայլելի, պայծառ օրերեն մեկն էր, արևը կարձակեր իր ջերմ ու ոգևորիչ ճառագայթներն, երկինքը խաղաղ էր ու անամպ, ծառերը տերևներով կը ծածկվեին, նոր կյանք, նոր հոգի մը կը ծավայեր ամեն կողմ իբրև դառն հեգնություն մ'այս մահվան տեսարանին դեմ։

Այս թաղման ընդդիմացողներու ուրիշ խումբ մը կես ճամփան կսպասեր որ առաջնույն հետ միանալով կը ջանար անլսելի ընել թաղման արարողությունը։ Ժամկոչն իր ձայնը քահանային աղոթից կը միացներ արագ ու հապճեպ արտասանությամբ, ինչպես որ վայելուչ է աղքատին գերեզմանին, մինչդեռ խուժանը գանգատող ու բողոքող ձայնիվ կը կրկներ շարունակ.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Տիգրան գլխիկոր կը հետևեր դագաղին. այս մրրկահույզ հուղարկավորներուն աղաղակը չէր զոր կր լսեր, քահանային սրտահույզ աղոթքն էր՝ որու առջև կը խոնարհեր։ Ի՞նչ, ա՞յս է եղեր յուր մտերմին վախճանն, այդ գիտությունն ու այդ սիրտն այս տխուր վերջավորությա՞ն վիճակյալ են եղեր. ո՞վ պիտի հավատար մի քանի տարի առաջ երբ անփույթ ու զվարթ ապագային վրա հանդուգն ապահովությամբ կը խորհեին։

Բայց ամբոխին աղաղակն հետզհետե կր բարձրանար

սպասնալից շեշտով մը. գերեզմանատունն հասեր էին. պահ մը լուռիյուն տիրեց. գիտցողները չգիտցողներուն կը պատմեին այն անլուր սրբապղծութիւնը. բողոքական մը ուղղափառ Հայոց գերեզմանին մեջ ընդունվի՞... լուսավորչականներուն գերեզմանատունը մտնելն արքայութիւն մտնելեն ավելի դժվարին էր։

Պայրահեղ միջոցներու դիմելէ առաջ ամբոխը կը խորհրդակցեր, խռովութեան հողմը կը տարուբերեր զայն, մինչդեռ իր խուլ և մոլեգին բողոքն շրջակա արձագանքներեն կրկնվելով ընդարձակ հովտին մեջ կը տարածվեր.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Ո՞վ էր և ի՞նչ կուզեր այս հիմար ու կատաղի բազմութիւնը։ Տիգրան անոնց դարձավ։ Իր պատանութենեն կը ճանչնար զայրացյալ խուժանի մը բոլոր ուժն ու տկարութիւնը. ժամ էր վերջ տալու այս ամրոխալից տեսարանին. դագաղը քարի մը վրա կսպասեր, և քահանան անօգուտ կերպով կը բանակցեր այս անզգամներուն հետ խոսք հասկցնելու անոնց։— Իզուր ըսավ անոնց թե Քրիստոսի և ոչ մեկ վարդապետութեան մեջ կը տեսնվեր այս աններող մոլեռանդութիւնը, թե երիտասարդ ննջեցյալը բողոքական մը չէր, իզուր գերեզմանին սրբութիւնն ու մահվան նվիրականութիւնն հիշեցուց այս չափազանց կրոնասիրութենեն մոլորյալ հոգիներուն։

Երկու հարյուր հոգվո չափ բազմութիւն մը կը շրջապատեր մին փոսն՝ ուր Սեդրաքի մարմինը պիտի ամփոփվեր, և քահանային տկար ձայնը շուտով կը կորսվեր ահավոր ու վայրենի մռնչման տակ որ երկու հարյուր բերնե արձակվելով, փոթորկաշունչ հողմի մը պես կը սավառներ.

— Չենք ընդունիր, չենք ընդունիր, չենք ընդունիր։

Որբեք անկրթութիւնն այս աստիճան վայրենի երևույթ մը չէր ստացած. ափսո՜ս, միևնույն անսասո ու կամակոր խռժանն էր զոր ինքն այնքան անգամ բորբոքած ու արձակած էր ապգային իշխանութեանց դեմ, ինչպես թնդանոթաձիգ սպան կարձակե յուր հրատապ և ավերիչ ռումբը։ Այժմ այդ մարդիկն իրեն դեմ կելնեին այնքան կոշտ ու անգութ որքան այլոց դեմ հանած էր։

Տիգրան ցասկոտ էր բնությամբ. ո՛չ թվույն անհավասարությունն, ո՛չ բարկալից բազմության զայրույթն ու անոր անհաշվելի հետևանքը զինքը չի կասեցուցին։ Իր բարեկամին դիմելն դեմ կուվող այս մարդոց տեղի չի պիտի տար, թե որ մեռնել անգամ հարկ ըլլար. արյունը եռաց. թերևս իր պերճախոս լեզուն հաջողեր մեղմել այն մրրիկը՝ զոր այնքան վարժ էր տարուցանել. բայց բարկությունն ամեն խոհեմություն անոր մտքեն վանեց։

— Ետ քաշվեցեք, ստահակնե՛ր, գոչեց անոնց, ես եմ այս ենչէցելուն տերը, չըլլա որ մոտենաք անոր, ազգինն է այս ջարդարարատունն ու հայոց ազգին մեկ զավակն է այս մեռնելն որ հոս պիտի թաղվի։

Կուվո հրավեր մ'էր։

— Այդ ալ փոքրեսթան մ'է, աղաղակեցին ոմանք, տփեցե՛ք այդ անհավատը։

Թուրանը՝ կատղած՝ ամեհի ու բարբարոս մռնչմամբ կը շպատեր երիտասարդն, որպես փոքրկահույզ կոհակներ կը շրջապատեն ընկղմելու մոտ նավն. ամենեն քաջերն հառաչ ձեռվեցան. պահ մը վտանգն անխուսափելի և ահավոր դարձավ, մինչդեռ հեռու մնացողները զայրագին արձագանքի մը պես կը կրկնեին.— փոքրեսթան մ'է, փոքրեսթան մ'է, զարկե՛ք։

Անզգամ մը աչերն արյունով լեցված ձեռքը վերցուց...։

Սարսափելի հայհոյություններով խառն որոտման պես ձայն մը լսվեցավ հանկարծ. երկու մարդ, ոչ նվազ չարաշուք ու ստորին երևույթով քան մյուսներն, անհավատալի ուժով մը այդ մարդկային պատնեշը ճեղքելով երիտասարդին քով սրացան ու պոռացին.

— Մի՛ դպիք մեր էֆենտիին։

Պահ մը վարանում տիրեց։

Կերևեր թե այս երկու մարդիկն անծանոթ չէին. բաց գլուխնին՝ թեթև յազմայով մը պատած, կուրծքերնին մերկ՝ զոր չի ֆոճկված պզտիկ բաճկոնակ մը բաց կը թողուր շարունակ, ոտքերնին բոպիկ այն ծանոթ կոշիկներու մեջեն որք իրենց հատուկ անվամբ եմենի կը կոչվին, այս մարդիկը կը վերաբե-

բեին այն ատորին դասուն որ պարագային համեմատ ձկնորս, նավարար ու չրհանկիր կըլլա և որ սովորաբար քիչ կամ չատ ոճրագործ է։

Պարտեին այս երկու անձինքը մեծ համբավի մը և իշխանութեան տեր լինիլ (համբավ՝ որ գովելի տեղ մը չէր կրնար ունենալ), քանի որում ամբոխն իր հարձակման մեջ կանգ առավ։ Հետո այս մարդիկն հետզհետե հեռացուցին երիտասարդը մոտեն շրջապատողներն ու կամաց ձայնով, տարօրինակ հիզութեամբ մը՝ որո ներքև դաշույնի հարվածի մ'սպառնալիքը դյուրութեամբ կը նշմարվեր, մի առ մի վանեցին այս սպառնալից քազմութենն։

Ի դեպ էր անշուշտ այս անհուսալի օգնութենն՝ որ համար երիտասարդը կը փրկեր։

Տիդրան գեշ երազ մը սթափիլ կարծեց երբ յուր շուրջն այս երկու ազատիչները միայն տեսավ՝ զորս չէր ճանչեր և որոց իր շնորհակալութենն հայտնեց։

— Դուք կրկին բարեգործութեան մ'ըրիք, ըսավ անոնց, նախ արգիլեցիք որ ննջեցյալ մը անգերեզման քողուն և զիս սպանեն, երկրորդ՝ քող չի տվիք որ այդքան մարդիկ սրբապիղծ ու ոճրագործ լինին։

— Ես ձկնորս Կարապետին եղբայրն եմ, ըսավ անոնցմե մին, դուն իմ եղբայրս մահվանե ու բանտարկութենե փրկեցիր առանց ստակ և վարձք պահանջելու։ Դուն զիս չես ճանչնար, բայց մենք քեզ լավ կը հիշենք, երբ դատաստանին մեջ իմ եղբայրս կը պաշտպաններ ու փրկեցիր. մենք աղքատ մարդիկ ենք, ապերախտ չենք, ըսավ խոնարհութեամբ ու հեռացավ իր ընկերոջ հետ մինակ քողվով սգավոր երիտասարդն իր մոտերմին գերեզմանին քովս։

Պալըքլըյի գերեզմանատունը Պոլսո Հայոց գերեզմանատանց երեցն ու հինավուրցն է. չի կա մեկն որ ազգական մը հանձնած չլինի այդ սև հողին. այս գերեզմանատունը սովորական բան մը չէ, այլ չարագուշակ քաղաք մը՝ որ իրեն տնակները, պալատներն, արվարձաններն, իր հարգի ու անհարգ քաղերն, իր սովորութիւններն, ավանդութիւններն ու նախապա-

շարումներն ունի. երևակայեցեք ընդարձակ դաշտ մը երբեմն կոտրած, սևցած ու տձև քարերով, երբեմն հոյակապ շիրիմներով ծածկված, ոչ իսկ մատ մը տեղ ուր ոսկերոտիք գրված չլինին. նսեմաստվեր ու անխնամ վայրենի ծառեր որք աստանդ կը տարածեն ոչ թե շուք, այլ կարծես անթափանց մառախուղ մը. ոչ ճամփա և ոչ ուղի առաջնորդվելու այս մեռելոց լաբյուրինթոսին մեջ ուր գերեզման մը գտնել շատ անգամ դրժվարին ու երբեմն անհնարին է. ու հարկ է, եթե պետք ունիս համբույր մը տալու սիրեցյալ հողակույտի մը, հարկ է դիմել գերեզմանաց պահապանին, միակ իշխանն ու միակ հպատակն այս ոսկերոտյաց աշխարհին մեջ։

Մյուս թաղերու գերեզմանատուններն ո՛չ այնքան սգաշխուր երևույթ մ՚ունին. այդ նոր շիրմաստաններն հետզհետե փոխվելու ու շտկվելու վրա են. անհարազատ զավակնե՞ր, ուր լուսավորության անվան տակ ամեն ինչ կը նորոգի, մինչդեռ անոնց ծերունի հավը, Պալըքլըյի գերեզմանոցն, անսասան կը կենա ու ավանդապահ անգղի մը պես անշարժ կը հսկե իր մեռելոց վրա։

Սեդրաքի մարմինն այս գերեզմանոցին մեջ թաղեցին. այնպես փափագեր էր օրհասական երիտասարդը. քույր մը ուներ եղեր իրմե առաջ մեռած, անոր քով ամփոփեցին զինքը։ Տիգրան քար մը դնել տվեր էր անոր վրա ու փոքրիկ երկաթե վանդակ մը այս կրկին գերեզմաններուն շուրջն։

Սեդրաքը ծածկող քարին վրա ո՛չ անուն կա և ո՛չ թվական, այլ երեք բառ միայն կը կարդացվի որ մինչև այսօր բոլոր այցելուներուն հետաքրքրությունը կը շարժե։ «Հանգիստ թողուցեք զինքը» գրված է այս մարմարին վրա. որո՞ւ կուղղվի այս տարօրինակ պատվերն, ո՞վ ննջեցելուն հանգիստը կրնա խռովել արդյոք։

Անոնք որ փափագած են իմանալ այս անանուն ննջեցելուն գաղտնիքն, իզուր պահապանին դիմած են տեղեկություն ուզելու համար. պահապանն իր հսկողության հանձնված մեռելոց նման լուռ էր այս մասին։ Միայն դիտեր էին ոմանք որ սևեր հագած մանկամարդ կին մը ամեն տարի Մայիսի առաջին կիրակի օրը պսակ մը կը բերեր այս լքյալ գերեզմանին։ Պսակը

մը Պալըքլըյի մեջ հազվագյուտ դեպք մ'է. հետաքրքիրները հուսո նշույլ մ'առին. կինը միշտ ճշտապահ կը գտնվեր. հետեվեցան անոր ու երբ օր մը սևերով կինը գերեզմանեն կը վերադառնար, ետևեն գացին անոր ո՛վ ըլլալն հասկնալու համար, բայց տեսան որ տան երկճի կառք մը իր վարագույրներն իջեցուցած սրարշավ կը տաներ սգավոր այցելուհին. այն ատեն դարձան գերեզմանին քով գոնե պսակին ձևեն, ծաղիկներուն կապվելուն ճաշակեն ո՛ւսկից գալը գուշակելու համար։ Պսակը ճերմակ քամելիաներով շինված էր, որուն վրա կապույտ մանիշակներով կազմված «Ձղջում» բառը կը կարդացվեր։

ՄԱՍՆ Բ.

ՄՈՌԱՑՈՒՄ

Հունիս ամսո մեջ պայծառ ու անդորր գիշեր մը, Քանլըճայի ծովեզրյա ապարանքներեն մին շքեղ կերպիվ լուսավորված էր. Պետական Խորհրդո հայազգի անդամներեն և Մատրիտի օսմանյան դեսպանատան նախկին առաջին քարտուղար վսեմ. Գևորգ էֆենտի երեկույթ մը կրնծայեր իր ընտրյալ հրավիրելոց. դեսպանական մարմինը գրեթե ամբողջովին, Պետական Խորհրդո նախագահը, բարձրադիր իսլամ ու հայազգի պաշտոնատարք և սեղանավորք իրենց ընտանյաց հետ պատասխանած են հայ քաղաքագետին ընդունելության։

Սրահներեն մին՝ միայն լուրջ ու քաղաքական խոսակցոջյանց հատկացած էր։ Ռուսո-Թուրք պատերազմին նախընթաց եղող Պալքանյան ադգաց խռովություն մտատանջություն կր առարածեն դիվանագիտաց մեջ, խլրտում մը կա, հով մը՝ որ հոհակածուփ կր հուզե սլավյան ազգություններն ու սրատես անձինք դյուրավ կր ճանչնան հյուսիսի քամին որ փոթորիկ միայն կր ծնանի։

Ուրիշ ակումբ մը երիտասարդաց, որոց մեջ կր նշմարվին դեսպանական փայլուն քարտուղարք, զինվորական կցորդներ, գատական պաշտոնատարներ, տիկնանց շուրջն հավաքված էր։ Անդին խաղի սրահը թափուր չէ ու պաճարան իր անխուսափելի տագնապովը կր վարակե իր բոլոր սիրահարները. մեճիտեներով սկսեր էին, շուտով գրավներն ոսկվո կր վերածին ու մեծ գումարներ կր շահվին ու կր կորսվին։

Տիկնանց քով ընդհանուր խոսակցության նյութը՝ մեծ ընտանիքի վերաբերող հույն տիկնոջ մը իր ամուսինը թունավորելու ոճրով ամբաստանությունն էր, որ նույն օրն իսկ անմեղության վճռով մը վերջացեր էր։

Ամենքն ընդհանրապես կը քննադատեին երիտասարդ փաստաբան մը որ ներկա էր հոն ու բառ մը չէր արտասաներ այս հարձակմանց դեմ. իր տաղանդո չարաշար գործածելուն մասին եղած դիտողությանց դեմ ժպիտով մը կը բավականանար, ու լուռ, ժպտուն ու տխուր կը կանգներ անշարժ վառարանին մարմարին կոթնած։

Այս երիտասարդ լռակյացն, որո պերճախոսությունը կամփաստանեին, Տիգրանն էր։ Չորս տարի անցեր էր հորմե հետե սիրով, գրեթե մոլությամբ ընդգրկելով փաստաբանական ասպարեզն, հոն գտեր էր միայն այն մշտատև պայքարն որ իր ֆյուրահույզ ու մշտագրգիռ հոգույն անհրաժեշտ էր։ Իր խոքին ու լուրջ հմտությունը, խիստ ու անաչառ դատողությունն, հզոր ու հպարտ շեշտը, պերճ ու զարդարուն լեզուն շուտով մեծ անուն ու մեծ համբավ տվեր էին անոր։ Բաղդատաբար քիչ միջոցի մեջ հաջողեր էր ձեռք բերել բարձր դիրք մը որ այս դժնդակ ասպարեզին մեջ հազվագյուտ է։

Շատեր հուսահատ ետ քաշված են և այս մշտատև կռվո կյանքն ամեն արարածի ուժին չի համապատասխաներ։ Տիգրան ընգհակառակն իր մինոլորտը գտեր էր հոն, այս էր այն ասպարեզն զոր երևակայեր էր միայն հարմար իր անհանդարտ ու դժգոհ ոգույն ու հոն իշխող ու հզոր ձայն մը վաստակեր էր մինչև իսկ այն բազմաթիվ թշնամյաց քով զորս ընկճելով ու հաղթելով ստացեր էր։

Հարկ էր գոհանալ այս հաջողութենեն որ կույր բախտի մը ջնորհը չէր և որ դատական հաղթանակներով ձեռք բերված էր։

Տիգրան՝ մասնավորապես պատժական դատերու մեջ անվիճելի իշխանություն մը ստացած էր. յուր հրաշքներր մեկե ավելի էին. կենտրոնական բանտին հյուրերեն ո՛ր մեկն իրենց կյանքն, ո՛ր մեկն իրենց ազատությունը կը պարտեին անոր։ Իր անունը վերջին ապավենն էր որում ամբաստանյալն անհավատալի վստահությամբ կապաստաներ և այդ անունն բան-

տին մեջ նվիրական էր, անոր մասին ամենափոքրիկ չարախոսություն ամենամեծ ոճիր մ'էր. երախտագիտությունն այն միակ մնացորդն էր զոր չարվո ու բարվո զգացում կորսնցնող այս մեծ ոճրագործները դեռ կը պահեին իրենց սրտին մեջ։

Օր մը նորատի կին մը բերին հոն որ իր էրիկը թունավորած լինելու ամբաստանության ներքև կը գտնվեր։

Կանանց հատուկ բանտը փոխադրվելե առաջ առժամյա կերպիվ առաջնորդեցին գինքն ընդարձակ, խոնավ ու մթին սրահի մը մեջ, տխուր ու մահազդեցիկ օթևան, ուր տարաբախտ կինը մազ մնաց վախեն պիտի մեռներ։ Իրեն բանտարկության ընկեր ուներ ամբաստանյալներ ու դատապարտյալներ. ահավոր տեսարան մ'էր այս երկաթներով ծանրաբեռնյալ ավազակներու խումբն որոց ամեն մեկ շարժումը շղթայից շառաչմամբ կր կրկնվեր, որ մեկն անփույթ, զվարթ ու կայտառ, որ մեկը տժգույն, նիհար ու դողդոջուն այս մահվան կապանքներուն տակ։ Հոս պատանի ու գեղանի մարդասպան մը որ ութսունամյա ծերունի մը սպաննած էր ու անոր ցույց տված տարօրինակ դիմադրությունը զարմանոք կր հիշեր. հոն՝ երկար մորուքով, վարդապետի դեմքով դրամանենգ մը, որ իրեն տրված պատժույն ծանրությանը դեմ կր բողոքեր. անդին՝ աներկյուղ հրձիգ մը որ ապահովագրության ընկերութենեն երկու հարյուր ոսկի կորզելու համար ամբողջ թաղ մը կրակի տալու չէր վարանած, քիչ մը անդին երեք չորս անձինք՝ ծանոթներ ու մտերիմներ, որք միատեղ ապրելով բարեկամացած են և որք ապագայի պատրաստություններով ու արդարության ձեռքը չի մատնվելու համար նորանոր միջոցներ մտածելով կզբաղին. ասոնց մոտ ծերունի մը՝ որ պատժական դատարաններե ստացած բազմաթիվ դատապարտությանց շնորհիվ անփորձ իրավագետե մ'ավելի պատժական օրենսդրությունը կր ճանչնա. զորօրինակ նա կր բացատրե նորեկներուն թե դատարանին կողմե ձրի փաստաբան մը պիտի ունենան, թե ուրանալե լավագույն պաշտպանության միջոց չունին, թե քննիչ դատավորին բռնութենեն դանգատիլ հարկ է դատարանին առջև։

Նորեկ կինը սոսկմամբ զատվիլ ուզեց այս մեղապարտ բնկերութենեն, բայց ամենուն ծաղրն և հարձակումն իր վրա հրա-

վիրից. ամենքը նախ և առաջ տեղեկանալ ուզեցին անոր ոճրին ի՛նչ ըլլալը։

— Թունավորո՞ւմ մը, այդ բան մ՚ըսել չէ, կըսեր անդիեն հռչակավոր ատահակ մը, ցկյանս շղթայակապ աշխատութեամբ մը կազատիս։

— 174րդ հոդվածին վերջին պարբերությունը գիտե՞ս, գոչեց անդիեն ծերունի խորհրդատուն, կարծես քու վրայիդ ձևված է։

— Մեղք այդչափ գեղեցկությանը, ավելցուց պատանի մարդասպանը,— մինչդեռ կինն ահաբեկ ու շվարած հիմարի մը պես իր շուրջը կը նայեր շարունակ, առանց բառ մը հասկրնալու եղած խոսակցութենեն։

Նույն միջոցին իմացվեցավ այն անհավատալի արագությամբ որ բանտերուն միայն հատուկ է և որով ամեն հազորդակցության միջոցե զուրկ ամբոխի մը մեջ արտաքին բոլոր լուրերն անմիջապես կը տարածվին, թե նորեկ ամբաստանյալը Տիգրանի պաշտպանության հանձնված էր դատարանին կողմե։

Տիգրանի պաշտպանյալ լինելը կիսով մը փրկվիլ և բանտարկելոց երաշխավորության ներքև գտնվիլ կը նշանակեր։

Այն վայրկենեն ամենքը բարկամ դարձան նորատի կնոջ ու գինքն հուսադրեցին։

Ամենքը կը հիշեն այն տարօրինակ թունավորման դեպքն որով նոր ամուսնացած հույն վաճառական մը զոհ եղավ Առնավուտ գյուղի մեջ։ Կասկածները կը ծանրանային անոր երիտասարդ կնոջ վրա, որո թեթև վարքն ու առանց մի քանի ամիս սպասելու կրկին ամուսնության փորձը նոր ապացույց բերել կը թվեին այս ոճրույն։ Կալանավորման հրամանագիրը չուշացավ զգացնելու այս անպատշաճ փութաջանության բոլոր անխտեմությունը։

Պոլսո ամեն ազգի ու կարգի մարդիկ, նամանավանդ կանայք հետաքրքրեցան. օրվան սովորական խոսակցության նյութ դարձավ այս ձերբակալումն։ Ամբաստանելուն սեռը, տարիքը, գեղեցկությունը, բարձր դիրքը բացառիկ հանգամանք մը կուտային այս եղերական արկածին։ Լրագիրներն, որ այսպեսակ ոճրագործությանց երկտողե մ՚ավելի չէին զոհեր,

հարկ դատեցին բոլոր դատաստանական քննության վրա օգ
ավուր տեղեկություն հաղորդել իրենց ընթերցողներուն։

Տիգրան, հետամուտ ամեն հռչակ հանող դատաստաններ
մեջ պաշտպանության դերն ստանձնելու, ամբաստանելության
փոխանորդությունը խնդրեր ու ստացեր էր. և ի՞նչ չեղավ իր
գարմանքին աստիճանն երբ ձերբակալյալ կինը ճանչցավ. այն
մանկամարդ հույն աղջիկն էր զոր 4—5 տարի առաջ այնքան
հիմարությամբ սիրած էր։ Ամուսնանալով իր հրապույրը կոր
սընցուցած չէր. միշտ միևնույն հրդեհող նայվածքը, միևնույն
քնքուշ, նուրբ ու մատաղ հասակը, միևնույն ոսկեգույն խո
պոպիքն ու վարդաշուրթն բերանն էր զոր ուսանողն այնքան,
ո՜հ, այնքան եռանդյամբ պաշտեր էր։ Տիգրան զղջաց այս փո
խանորդությունն ստանձնելուն. ոճրին ապացույցները բազ
մաթիվ և հազվագյուտ խնամոք իրարու կապված էին։ Ընդհա
նուր դատախազն արտասովոր խստությամբ մը հառաջ կը վա
րեր այս դատը. մի գուցե անլսելի ըլլար իր ձայնն և իր ձեռք
բուն իր ձեռք կախաղանի մատներ այդ պաշտեցյալ գլուխը
նախկին սիրո մը մնացորդ մոխիրը կարթննար ու կը բռնկեր
Բերևս լավագույն էր ուրիշ պաշտոնակցի մը հանձնել այս դժ
վարին պաշտպանությունը. բայց որի՞ հավատալ և որի՞ վըս
տահիլ։

Հուսկ ուրեմն որոշեց խույս չի տալ վտանգի պահուն. այս
դասալքությունն իրեն չէր վայլեր. պահ մը մոռցված սերն
արթննալ կարծեր էր. բայց ո՜չ, անձնասիրության ու եսության
զգացում մ՚էր որ գինքը դղրդեր էր միայն։

Անշուշտ ամեն մարդկային ու գերմարդկային ջանք ի գործ
պիտի դներ փրկելու համար նորատի կինը, բայց ո՜չ զայն
պաշտելուն համար, այլ միայն, ո՜վ մարդկային ունայնու
թյուն, ճանչցնելու համար այդ կնոջ որ իր արհամարհած երի
տասարդին կը պարտեր իր կյանքը։

Տիգրան քաջությամբ գործի ձեռք զարկավ։

Դատաստանի օրը մոտ էր. Ոճրադատ ատենի սրահն հոծ
էր ուր կը գտնվի այժմ։— Դատավարության օրն հասավ. խուռն
բազմություն մը անոր ամեն մուտքն ու ելքը գրաված էր, երբ
Ոճրադատ ատյանն իր հրապարակային նիստն սկսավ։

Այն ատենվան լրագիրները գրեցին բոլոր այս դատին ճանրամասնություններն։ Ամբաստանելուն հարցաքննութենեն ու վկայից տեղեկություններեն վերջն ոճրուն ապացուցման ճղանակը կը քննվեր։ Տարօրինակ զուգադիպությամբ ընդհ. դատախազի օգնականի պաշտոնը կը վարեր Խոսրով։

Պարզ դիպվածի մը բերմո՞ւնք էր թե կանխորոշ վրեժխընդրության մը փափագն որ Տիգրանի դասընկերն այդ աթոռին վրա կը բազմեցներ. ոչ ոք կրնար ստույգը գտնել։

Միայն թե դատավարությունն երկար ու մանրախույզ և ամբաստանության ու պաշտպանության կողմե հավասար համառությամբ նշանավոր եղավ։

Խավարային ու անծանոթ պայքար մ'էր որ տեղի կունենար այս երկու մարդոց մեջ. ուսանողության կյանքի սիրային լընչին դիպված մ'էր որ այս երկու բարեկամներն անհաշտ թշնամի դարձուցեր էր իրարու։

Մեկն իր սերը պիտի պաշտպաներ, մյուսն իր լքման ու մերժման հատուցումը պիտի պահանջեր։

Ընդհանուր դատախազի օգնականն համառոտիվ թվելով ոճրին ապացույցներն ու սպանելուչն երիտասարդ ու բարի ամուսին մը լինելն հիշեցնելով, մեծագույն խստության մը հարկը կզգացներ. ամենքն անհամբեր կսպասեին գիտնալ թե ի՛նչ էր պահանջած պատիժն. և այս անհամբերությունն երկար չի տևեց. Խոսրով իր խոսքը շուտով ամփոփեց. մեկ բառով Տահվան պատիժ կը պահանջեր մեղապարտ կնոջ դեմ։ Ամբաստանելուչն ո՛չ գեղն, ո՛չ երիտասարդությունը չէին ազդեր այս մարմարե սրտին։

Արհավրալից լռությամբ մը ընդունվեցավ այս անլուր խոսքերը։

Խոսքը պաշտպանությանն էր։

Իրիկվան ժամը 11ն էր, սրահը մթնցեր ու գերեզմանի լռություն ու ամփոփում կը տիրեր չորս կողմը։

Տիգրան իր շուրջը նայեցավ անգամ մը. թշնամի բազմություն մ'էր որ զինքը կը շրջապատեր. ամբաստանելուչն հանցավորության կանխապես համոզյալ ատյան մ'էր որ իրեն պիտի ունկնդրեր։ Ջըլլա՞ թե անկարող լիներ փրկելու այս թշվա-

ռուհին. այս վախն անոր միտքը խանգարեց։ Մահու ու կենաց վայրկյանն էր. ոտք ելավ դողդոջուն ու ամբաստանյալեն ավելի տժգունած։

Ամեն ոք իր շնչառությունը պահ մը կտրեց ավելի աղեկ լսելու համար. ճանճի բզզյունը պիտի լսվեր հինգ հարյուր հոգիե ավելի խռնված սրահի մը մեջ, երբ ծանր ու հաստատ ձայնով փաստաբանն իր պաշտպանության ճառն սկսավ։

Անոնք որ լսեցին, հավիտյան չպիտի մոռնան այդ ձայնն, ի՞նչ ըսավ, ո՞ւսկից սկսավ և ի՞նչպես վերջացուց, ի՞նչ կերպով հաջողեցավ պատռել, թոթափել այն ծանր կասկածներու մրթնոլորտն որու ներքև ամբաստանյալը կրնկճվեր, ի՞նչ ձևով վանեց այն ատելության ամպն որ բոլոր ունկնդիրները կը գրավեր. ոչ ոք պիտի կարենար ճշտիվ զրուցել։

Նախ իրողություններն ու հետո օրինական ապացույցները քննելով, աննման հաջողությամբ և ջախջախիչ կերպով հերքեց այն փաստերն, որոնք ճարտար կապակցությամբ մը ընդհ. դատախազին ատենաբանության մեջ՝ ոճրագործությունն ապացուցանելու կը հանգեին։

Բառերը, դաշույնի հարվածի պես սուր ու կտրուկ, մի առ մի կը զարնեին այն կասկածներուն որոց կշիռեն կախումն ուներ դատին ելքն։

Ու երբ իր հետախույզ ակնարկը կրցավ համոզումը որոշել պահ մ՝առաջ խոժոռած դեմքերուն վրա, երբ ամեն ստվեր փարատած տեսավ դատավորներուն ճակատեն, այն ատեն հիշելով այն անհանդուրժելի տառապանքն ու մահացումն որոնց փափուկ ու սրտաբեկ արարած մը հուսահատ քաջությամբ մը դիմացեր էր, արթնցնելով բանտի ու կապանաց այն անջնջելի օրերու հիշատակը, փաստաբանին հպարտ շեշտը պաշտպանութենեն ամբաստանության դարձավ։ Երբեք սրտահույզ ոճն այդքան խորին ու ուժգին չէր դղրդած մարդկային սրտերն։ Ամենքը, քիչ մը առաջ ամբաստանելուն հանցավորության համոզված, հիմա պատրաստ էին անոր անմեղությունը վկայելու։

Կես ժամ միայն տևեց այս զարմանալի պաշտպանությունն և կես ժամ, դատավոր ու ունկնդիր, փաստաբանին ձայնին անրացատրելի հմայության տակ մնացին։

Դատավարությունը վերջացավ, երկբայելի չէր տրվելիք վճիռն, և քառորդ մը վերջն ամենքն ակներև ուրախությամբ ստացան անմեղության վճիռ մը որ միաձայնությամբ տրվեր էր և որ ամբաստանելուն արձակումը կը հրամայեր, մինչդեռ տարաբախտ կինը վախեն ու հուզումեն դողդոջուն սրահին մեջ կը նվաղեր։

Տիգրան չսպասեց շնորհակալության ցույցերու. ամենեն մաքուր ու ամենեն բարձր համբավն ունեցավ այս անլուր հաջողությամբն. ուրիշ բան մը չէր պահանջեր. ինչպես չորս տարի առաջ, հիմա ալ նույնչափ հաստատ էր այս գեղանի կինը չի տեսնելու որոշման վրա. իր մոռացման վրեժը լուծեր էր. ուստի մեկնեցավ առանց ետին դառնալու։ Եվ ահա այս կերպով վերջացեր էր այն եղերական արկածն որ ողջույն Պոլիսն հուզած էր և որ Գևորգ էֆենտիի սրահներուն մեջ, ինչպես այլուր, տիրող խոսակցության նյութն էր։

Սրահներն հետզհետե կոգևորեին, երեկույթն իր ամենեն մեծ փայլն ու զվարթությունն ստացեր էր. պարերն իրարու կը հաջորդեին, ու չի պարողները քարափին վրա կամ ծովահայաց սրահներուն մեջ կր շրջեին։

Տիգրան շուտով խույս տվեր էր զինքն հալածող հետաքրքիրներեն. ամենքն անոր բերնեն լսել կուզեին այս սրտահույզ տոամին մանրամասնությունները. Տիգրան սիրտ չուներ անոնց հաղարումեկ հարցմանց պատասխանելու. առանձին ու կիսաստվեր սենեկի մր բաց պատուհանին մոտ երերուն թիկնաթոռի մր մեջ տարածվեր էր ու ծովը կը դիտեր։

Հիրավի զմայլիչ տեսարան մ'էր որ իր տրտում ակնարկին առջև կը պարզվեր։

Կես գիշերը ժամ մր կանցներ, ու լուսինն իր լրման մեջ պայծառ ու կապույտ երկնից կամարին վրա կը շողար. ծովն հանդարտ էր, ուր կանդրադառնար երկինքն իր կապույտովն ու անհամար աստղերով. ամառվան այն անբացատրելի գիշերներեն մին էր որով Վոսփորն այնչափ դյութիչ է։ Բնության այս անդորրությունն ու պարզությունր զինքն հափշտակեց, մոռցավ երեկույթր, սրահր, բազմությունն ու երաժշտության

վրդովյալ ձայներն. առանձնություն ու լռություն կը տիրեր իր չուրջն. ամենքն աշխարհիս մեջ կզբոսնուն ու զվարթ էին. ինքը միայն մենիկ ու ապերջանիկ մնացեր էր։

Իր մանկությունն ու պատանեկությունն որբության, աղքատության ու աշխատության մեջ անցուցեր էր. հազիվ երիտասարդ, ամենեն կանուխ թևակոխած հրապարակային կյանքին մեջ ուր վաղաժամ այլ արդարացի համբավ մ'իրեն կը հետևեր, ափսո՜ս, մեկը չէր ունեցած հաղորդելու ու բաժնելու անոր հետ իր մշտահույզ հոգվույն վրդովմունքն։ Իր հայրն ու մայրը գերեզմանեն միայն կրնային նայիլ իրենց միակ որդվույն փառալից կենացն և չի կար իր քով սիրեցյալ մեկն որու բանար իր հազար զգացումներով, հույսերով, խանդաղատանոք լեցված սիրտը։ Սեդրաքի մահվրնե ի վեր մենակյաց, ծեր, դաժան ու վայրենի մեկը դարձեր էր. Սեդրա՜ք... շատոնց սև հողը կը ծածկեր զայն... ու ինքը մինակ, բոլորովին մինակ մնացեր էր աշխարհիս վրա...։

Այս տխուր մտածումներուն մեջ էր երբ մերձակա սրահեն դաշնակի մը վրա քաղցր ու տրտում եղանակ մը կը բարձրանար, իբրև թե ծովուն ալյաց վրայեն ու գիշերվան խորին լռության մեջ, համր ու դանդաղ շեշտերով։

Զարմա՛նք, այս եղանակն անծանոթ չէր Տիգրանին. անոք տրտմահնչուն նվագեն ճանչցավ թե Սեդրաքի սիրած մեկ կտորն էր։ Հուզյալ և անձկանոք ոտք ելավ, հասկնալու համար թե ո՞վ էր այն անձն՝ որ պարահանդեսին թնդյունեն ու աղմուկեն խուսափած, առանձին սրահի մը մեջ կը դաշնակեր այս տխուր եղանակն՝ որ այնքան մոտեն իր գաղափարաց տրտմության կը պատշաճեր։

Երիտասարդ ու վայելչագեղ կին մ'էր որ, առանց նոթայի, միայն իր հիշողության զորությամբ, այս դժվարին կտորը դաշնակին վրա այնչափ կատարելությամբ ու հոգվով կը զարներ։ Ամուսինը, Տիգրանի ծանոթ պաշտոնատար մը, անոր մոտն էր, որ զինքր տեսնելով ըսավ. «Մոտեցե՛ք, սիրելի փաստաբանս, կերևի թե դուք ալ ինձ պես ժխորե չեք ախորժիր, բայց իրավունք չունիք դուք, որովհետև դեռ երիտասարդ եք և զբոսնելու պետք ունիք։ Տիկին, ավելցուց, իր մանկամարդ կնոջ դառնա-

լով, ահավասիկ ձեզ կը ներկայացնեմ իմ ամենեն ավելի հարգած բարեկամներես մին, այն երիտասարդ փաստաբանն՝ որուն անունը ամենուն բերանն է. տիկին Արամ էֆենտի, ավելցուց երիտասարդին դառնալով»։ Տիգրան դեղնեցավ, դեմքը խիստ խոժոռ երևույթ մը առավ ու կատարյալ բարեկրթությամբ խոնարհություն մը ըրավ իր բարեկամին կնոջ, բայց չի պատասխանեց։ Աննախատեսելի դիպվածով դեմ առ դեմ կը գտնվեր այն միակ կնոջ՝ զոր հավիտյան չի տեսնել ուխտած էր և Սուրբիկ կարդաց անոր խոժոռած դեմքին վրա իր դժկամությունը։

Երիտասարդ փաստաբանին համակիր մտերմաց մեջ շատոնց ի վեր առաջին տեղը կը բռներ Սուրբիկի ամուսինն։ Անկեղծ այն աղետավոր պատմության որո իր կինն անողոք դյուցազնուհին ու Տիգրանի բարեկամն անմեղ զոհն եղեր էին, և որ անշուք ու մոռացյալ հողակույտին մեջ ծածկված էր, Արամ էֆենտի առաջին տեսությենեն ի վեր անսահման համակրություն ունեցեր էր Տիգրանի համար։ Գիտուն, ծանրաբարո, ինքնօգնությամբ ձեռք բերած իր բարձր պաշտոնն, որու համար պահանջված արժանիքեն ավելին ուներ, ծերունի պաշտոնատարը մեծապես կը հարգեր անոնք որ իրեն պես միայնակ ու անօգնական հառաջացած էին ընկերության դժվարամատչելի դասերուն մեջ։

Անկողմնակալ ու ճեռնհաս դատավոր գոլով ամեն արժանյաց ու կարողության, մեկ նայվածքով գուշակեր, ճանչըգեր ու գնահատեր էր երիտասարդին մեծ տաղանդն ու մեծագույն ապագան։ Անոր ազատ ու հմտալից խոսվածքը սիրերկծու ու հեգնող բառախաղություններեն ախորժեր ու վճռական ոճ ծայրահեղ դիտողություններն համաձայն գտեր էր իրենները։

Այսպեսով կազմվեր էր այն հաստատ բարեկամությունը զոր ամեն առթիվ ցույց տված էր երիտասարդին և որ քիչ քիչ հայրական գորովանաց փոխակերպեր էր։ Արդարև Սուրբիկի ամուսինն հիմա հիսունի մոտ պետք էր լինիլ։

Միայն կարծես երիտասարդը չէր ճանչցած լիովին անոր մտերմությունը. միշտ հարգալից այլ միշտ քաշված՝ չէր պատասխանած անոր համարձակ անկեղծությամբը։ Զորօրինակ

իր անթիվ թախանձանաց վրա բնավ չէր գացած անոր տունը և չէր ճանչցեր անոր ընտանիքը։

Տիգրան այն գիշերն առաջին անգամ լինելով կը պատահեր այս կնոջ։ Ինքնիրեն երևակայեր էր երբեմն զայն գեղեցիկ, շատ գեղեցիկ ու նույնքան վատ ու անմիտ։ Այս տեսության մեջ Տիգրան իր դատողությունը մասամբ միայն կրցավ հաստատել. հիրավի գեղանի կին մ'էր երիտասարդության ու վայելչության բոլոր հրապույրներովը, բայց չի կրցավ անոր խոսակցությունը սեթևեթ ու սնոտի վճռել. ընդհակառակն պարտավորեցավ ինքնիրեն խոստովանիլ թե լավագույն ընկերական դասուն մեջ հազիվ անոր մի քանի նմանյաց հանդիպեր էր։ Սակայն Տիգրան անձնատուր չեղավ այս նպաստավոր դատողության՝ զոր առանց կամենալու կազմեր էր. նրբամիտ, հրապուրիչ և խելացի կին մ'էր թերևս, բայց երբեք Տիգրան չէր կրնար մոռնալ այն տարաբախտ վերջավորությունն՝ որ իր թշվառ բարեկամին վիճակեր էր։ Ուստի կծու ու խրոխտ կերպով պատասխանեց անոր, և իր խոսքերով դաշույնի հարվածե ավելի խոր արյունեց անոր սիրտն, առանց սակայն բառ մ'արտասանելու անցելույն վրա։

Մանկամարդ կինը խռովեցավ, այլ չընկճեցավ. Տիգրան արցունքի կաթիլ մը նշմարել կարծեց անոր գեղեցիկ աչքերուն մեջ երբ անհաստատ ու ուխտադրուժ աղջկանց ակնարկություն մ'րրավ։

— Որչափ ալ խիստ ըլլա ձեր վճիռն, բսավ Սուրբիկ տրրտմությամբ, ես զայն անիրավ համարողներեն չեմ։ Որչափ ալ անփորձառու աղջիկ մը լինի ուխտադրուժ անձն, անոր հանցանքն ո՛չ ոք ինձմե ավելի անքավելի կը դատե. ուրիշ մը իմ տեղս կրնար ձեզ պատասխանելով ըսել թե դեպքերը կամեցողութենե զորավոր են, թե նորատի աղջիկ մը, ենթակա ամեն տեսակ ճնշմանց, գուցե ամենեն տկար էակն է պատահմանց դիմագրավելու համար ու պետք չէ մեկ հանցանքով մ'ուրանալ անոր ազնիվ զգացումներն. ո՛չ, ես ասոնց և ոչ մին կրսեմ. ամեն հանցանք իր պատուհասն իր ծոցին մեջ կը կրե. ի՞նչ հարկ անգութ ու անողորմ լինել հանցավորին դեմ երբ ճակատագիրն ամենեն ավելի անողորմ է անոր։ Պետք է մոռնալ,

այո՛, հավիտյան պետք է մոռնալ զայն, քան թե խոր քննեց անոր ողորմելի կացութիյունը։ Թերևս անգութ մնալու սիրտը չունենաք և կարեկցութիյան արժանի դատեք թշվառուհին։

Տիգրան այս լեզվին չէր սպասեր. կարծեր էր թե Սուրբիկ ինքզինքը պիտի պաշտպաներ իր հարձակմանց դեմ. սխալեր էր. նա այնպիսի բարձր ու վսեմ մտածութիյուններով պատասխանեց որ Տիգրան բառ մը չի գտավ ավելցնելու։

Հիրավի նշանավոր մեկն էր այս կինը, նորա զգացմանց բարձրութիյունը չի ճանչնալ կարելի չէր։ Խոսք մը չի գտավ պատասխանելու. թերևս ուներ շատ ըսելիքներ, բայց ամուսնույն ներկայութիյունը կարգիլեր ավելի հառաչ երթալե. ուստի խոսակցութիյան նյութը փոխեց։

Տիգրան իր պաշտոնին ու ասպարեզին բերմամբ մարդուս հոգեբանական զգացումը, զորութիյունը, տկարութիյունն և բարեշրջումը ճանչցող և ուսումնասիրող մեկն էր։

Զարմանոք դիտեց այս դեռատի ու գեղանի կինն՝ որո արտաքին վայելչութիյանը վրա կավելնար բարձր դաստիարակութիյուն մը։ Տարօրինակ գաղտնիք մ'էր անշուշտ, որ այսքան կատարելութիյամբ օժտյալ կին մը թերանար ամենանվիրական խոստմունքի մը մեջ ու սովորական խաբեբա մը լիներ։ Բազական սեռին հատուկ տկարութիյո՞ւն մ'էր այս թե հրեշտակի կերպարանքին ու ձևերուն ներքև ծածկված վատթարագույն էակ մ'էր իր դեմին։

Երեկույթը վերջանալուն Տիգրան աճապարեց ամենեն առաջ խույս տալու, բայց այցելութիյան խոստում մը չի տված՝ իր ծերունի բարեկամին ձեռքեն չազատեցավ։

Հուզյալ ու խռովյալ գատվեցավ. իր համոզումը ծանր հարված մը կրեր էր այն գիշեր։ Մինչև այն օր անարժան արարած մը նկատած անձը լավագույն և ազնվագույն զգացումներուն տեր մեկն երևցավ իր աչքին. իզուր ջանաց մաքառիլ այս տպավորութիյան դեմ, իզուր ջախջախիչ ապացույցներ որոնեց ու գտնել կարծեց անոր դեմ, իզուր իր տարաբախտ բարեկամին սրտակտուր վախճանը հիշեց. սիրտն ու համոզումն ապրստամբ մնացին մինչև վերջը։

Թերևս Սուրբիկ բռնութիյան մը զոհն էր. թերևս հնազանդո-

թյունը բարձրագույն ու գերագույն հարկ մ'էր անոր ամուսնութեան միջոցին։ Ո՞վ գիտե, ամեն ենթադրություն ներելի էր. խոստովանեցավ ինքնիրեն թե առանց անգամ մը խոսեցուցած լինելու այս կինն, արդարացի չէր վերջնական կերպիվ դատապարտել զայն։ Այցելություն մը խոստացած էր. կրկին տեսության պետքն ու հույսն զգաց. սակայն չի կրցավ քնանալ այն գիշեր, խառն ի խուռն երազներ իր նիրհը վրդովեցին. իր ցնորքներուն մեջ պահ մը կը տեսներ Սեդրաք ցուրտ ու խոնավ վարձու սենեկի մեջ առկայծ կանթեղի մը լուսով աշխատող, պահ մը կը հիշեր զայն երբ իր պաշտոնատեղիեն կը վերադառնար առանց կարննալ հավատալու դեռ իր դժբախտութեան մեծութեանը, կը տեսներ զայն դժգույն ու դողդոջուն երբ անոր սիրուհին իր նորապսակ ամուսնույն թևին հենած խրոխտ հպարտ անոր առջևեն կանցներ։

Շաբաթ մը տևեց իր այս անհանգիստ կացությունն. ի վերջ որոշեց այլևս չի մտածել այս մասին. ի՞նչ փույթ իրեն թե այս կինը բարի կամ չար արարած մ'էր. իր բարեկամը մեռած և այս կինն ամուսնացած էր. լավագույն էր մոռնալ այս աղեկտուր պատմությունն որ իր երիտասարդության տարիներուն հետ այնքան սերտ կապակցություն մ'ունեցեր էր։ Իրեն չէր իյնար ֆատաստան ընել ու վճիռ տալ։

Բայց այս առաջադրությունը չի կրցավ գործադրվիլ. հա՞րկ էր արդյոք իր բարեկամին կենացը մեջ խաղացած տխուր դերին վերագրել այս կնոջ հիշատակը մոռնալու անկարելիությունը, չէր գիտեր. բայց սա ճշմարիտ էր որ անոր հետ ունեցած տեսակցությունն անջնջելի կերպով արմատացած մնաց իր մտքին մեջ. անոր շարժմունքը, ձևը, խոսվածքը, ձայնն աչքին առջևն էին շարունակ. «Թերևս դուք ալ անգութ լինելու սիրտ չունենաք ու կարեկցության արժանի դատեք Քշվառուհին», ըսած էր Սուրբիկ իր անձին ակնարկություն մ'ընելով։

Հիրավի Քշվա՞ռ էր արդյոք. և ինչո՞ւ համար։ Բայց ինչ ի՞նչ կը հետազոտեր անոր ընտանեկան կյանքն, ի՞նչ կը վերաբերեր իրեն. Քշվառ կամ երջանիկ, անոր գիտնալիք բանն էր. ո՛չ սակայն, պետք էր իմանալ թե այդ հանցավոր կինը գոնե խղճի խայթ մը չուներ. այս հարցումները բոլորն ինքն-

իրենն ըրավ և իր անհանգիստ հետաքրքրութիւնը մեղադրեց, բայց չի կրցավ մեկդի ընել։ Կրկին տեսակցութեան մը ակնկալութիւնը գամ զգամ զորացավ իր սրտին մեջ. ամեն օր կորոշեր այցելութիւն մ'ընել և ամեն օր կը հապաղեր. օր մը մինչեւ Պուրրիկին տան մոտերը գնաց ու չի համարձակեցավ դուռը զարնել, և ետ դարձավ։

Այն ատեն երկչոտ անձկութեամբ մը իր սիրտը քննեց ու ճակին խորին և հայտնի կարեկցութիւն մը, համակրութեան մը նշմարեց այս կնոջ մասին. կարեկցութի՞ւն... անշո՛ւշտ, ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ... ու վախցավ, ամչցավ թերևս ինքն իրեն իր հմար սերը խոստովանելու...։

Ի՞նչ, սիրե՞լ այն կինն՝ որ իր միակ մտերմին ատեն մը սիրուհին էր ու հիմա իր ամենեն ավելի հարգած անձին ամուսինն էր։ Տիգրան իր հանցանքին մեծութենեն սարսափեցավ. խրղճմտանքն ու պարտականութիւնն իրենց խիստ և որոշ ձայնը լսեցուցին։ Տիգրան ինքզինքեն խույս տալ ուզեց իբրև մեծագույն չարագործ մը, ինքզինքը հանդիմանեց, պարսավեց. ո՛չ, ինքն այնչափ վատ մը չէր և չէր կրնար լինիլ, անտարակույս խաբված էր իր ճանաչողութեան մեջ. սիրե՞լ, ո՞ւսկից գտեր էր այս հոռի գաղափարը։

Ահավոր ու երկարատև պայքար մը տրվեցավ իր հոգվույն մեջ, քարսիրտ և օտարական բժիշկի մը պես ինք անձամբ քննել ուզեց իր վերքին ծանրութիւնն և պարզապես մահացու և անբժշկելի գտավ զայն։ Ու երբ համոզվեցավ որ այս կինն իր ճակատագրին կիշխեր, երբ ճանչցավ թե իր սերն ուրանալն անօգուտ էր այլևս, այն ատեն իր ցնորած մտքին մեջ իր պարտականութիւնը փնտրեց ու չի գտավ։

Անշուշտ հանցավոր մ'էր, ոևէ գթութեան անարժան հանցավոր մը այս կինը սիրելուն՝ որ պետք էր իրեն համար կրկնակի նվիրական ըլլար։

Այս անակնկալ ու դժբախտ սիրո հետևանքը բոլոր իր արհավրաւից ու կսկծալից պարագաներովն երևցավ իր աչքին։

Ինքն՝ որ այնքան հայրդակ էր ուրիշները պաշտպանելու արվեստին մեջ, զարմացավ որ ինքզինքն արդարացնելու բան մը չէր գտներ. հանկարծ սպառնալից ստվեր մը տեսնել կար-

ֆեց... Սեդրաքն էր որ իր բարեկամության համարը կր պահանջեր իրմե։ Ո՛չ, փրկության ճամփա մր չի կար, և անգութ դատավորի մր պես ինքն ամենեն ծանր պատիժը տնօրինեց քր անձին։

Անձնասպանության գաղափարը պահ մր անխուսափելի համառությամբ մր իր միտքը պաշարեր էր։ Տիգրան Ժան-Ժաք Ռուսոյի աշակերտ մ'էր և ապրելու քաջությունն ունեցավ. մեռնիլը վաղ կամ անագան միտքը դրած էր, հարկ չէր զայն փութացնել, որոշեց միայն այլևս չի հանդիպել այս կնոջ ու թե որ անկարելի էր անոր պատկերն իր հիշատակեն ջնջել, թե որ անհնար էր մոռնալ անոր ներդաշնակ ձայնը, լավ ուրեմն, ինքնիրեն միայն պիտի քաշեր անծանոթ ու մեկ սրտի մր մեջ միայն ամփոփված սիրո մր բոլոր դառնությունն և այլևս չպիտի տեսնար Սուրբիկը։

Անտարակույս տխուր ու գովելի քաջություն մ'էր այս հաստատ որոշումն որ միայն կրնար համաձայնիլ խստապահանջ պարտականության մր ձայնին։

Տիգրան Սուրբիկի բնակած գյուղին մեջ բայց հեռավոր արվարձանի մր մեջ կը բնակեր։ Այս հեռավորությունը բավական չհամարեց. փողոցին մեջ, շրջագայության մեջ, այցելությանց մեջ կրնային իրարու հանդիպիլ ու Տիգրան փախստական ոճրագործի մր շտապավ հեռացավ այդ տեղերեն ու Պյոյուք-Տերե գնաց բնակելու։

Բայց տարաբախտը չէր հաշված այն դժնդակ փորձին բոլոր ծանրությունն՝ որու դատապարտած էր իր կյանքը։ Սուրբիկը տեսնելու բոլոր հույս ու ակնկալություն վերջանալուն հետ ճանչցավ իր սիրույն ու տառապանքին մեծությունը։

Ամեն ինչ ի գործ դրավ մոռնալու համար եթե ոչ իր սերը, գոնե իր անձը. նոր եռանդով մ'ընդգրկեց իր մրրկալից ասպարեզը, բայց զզվանք ու տաղտկություն գտավ հոն՝ ուր ատեն մր ամենեն մաքուր գոհունակությունը կր գտներ. աննպատակ երևցավ կյանքն ու մաքառելե ձանձրացավ։ Մի քանի տարվան մեջ բավական հարստություն մր ձեռք բերեր էր, որոշեց գործե քաշվիլ և ա՛լ զայն խիստ քիչ անգամ տեսան դատավարությանց մեջ։

Ատեն մը ամեն մտային աշխատություն դադրեցուց, իր աշխատության սենյակը ոտք չի կոխեց, գրական ամեն պարապում վերջացուց. և ուզեց ձեռքի աշխատություններով իր անձը հոգնեցնել ու զբաղեցնել. իր ծովեզերյա տան պարտեզին մեջ օրն ի բուն կը տեսնեին զինքը՝ որ տոկուն գործավորի մը պես կաշխատեր. ի՞նչ կը մտածեր արդյոք երբ խոնջած ու քրտնաթոր հանգիստ կառնուր ծառի մը տակ, ակնարկը սևեռած ծովուն երերածուփ կոհակաց վերա։ Իրիկվան դեմ շրջագայություն կրներ հետիոտն կամ ձիով, կերթար որչափ ոք կարելի էր հեռուն երթալ, բայց նախամեծար կը համարեր ամայի ու խոպան վայրերը. բազմություններ զինքը կը զայրացներ ու ամեն մարդկային ձայնե իբր վնասակար ու չարագուշակ հնչյունե մը կը խուսափեր։

Անցան քսան ամիսներ այս տրտում և անսփոփ կյանքով. գարունը կը հաջորդեր ձմեռվան ցուրտ ու խոնավ օրերուն, օդերը պայծառացան, Վոսփորի ափունքը գալարեցան ու գեղեցկացան, և ամառվան սովորական հյուրերը Պյոյուք-Տերե վերադառնալով նոր ոգևորություն մը բերին այս պահ մը ամայացած եզերքներուն։

Տիգրանի Պյոյուք-Տերեի մեջ բնակած տան կռնակը, քիչ մը ավելի վեր, ամառվան համար ուրիշ կոկիկ ու փոքրիկ քյոշկ մը կար պարտեզներու մեջ առանձնացած։ Այս քյոշկը բավական ժամանակե ի վեր պարապ՝ հինցած ու տխուր երևույթ մը ստացեր էր. անոր տերերը կենդանության նշան ցույց տված չէին և ոչ իսկ անգամ մ՝այցելելու եկած այս սիրուն բնակությունն որ ճաշակի տեր մարդու մը ստացվածքն էր անշուշտ։ Տիգրանի տան ետին, ավելի բարձր ու բոլորովին ծովահայաց գիրքով, ընդարձակ ու զառիվեր պարտեզի մը մեջ, վայրի շագանակի ծառերե կազմված նեղ ու խորհրդաստվեր ուղիներով, առջևն հարթ ու ուղիղ, ուր 6—7 հատի չափ տերևախիտ ու հովասուն ծառեր շուք կուտային և որ կարծես ծովուն մեջեն էր, այս մենակյաց բնակությունը մարդատյաց՝ բայց բնության գեղեցկություն ճանչցող մարդու կը վայլեր։ Անոր զմայլելի տեսարանը նույնիսկ Վոսփորի մեջ չէր գտնվեր. մեկ կողմեն մինչև

Եվ ծովու փոթորկյալ ալիքն, մյուս կողմեն Ասիական եզերքն իր գալարյալ բուրաստաններով, Պեյքոզեն մինչև Քանտիլլի, ահա անոր հազվագյուտ ու աննման տեսարանը։

Ամառվան սկիզբները շարժում մը տեսնվեցավ այս լուին ու լքյալ բնակության մեջ։ Նորոգություն մը կը կատարվեր հապճեպ ու փութաջան գործավորներով։ Մեկ երկու շաբթվան մեջ, պարտեզը խնամով շտկվեցավ, քյոշկը նորոգվեցավ, ներկվեցավ ու կահավորվեցավ։ Տիգրան՝ դրացի մը ունենալու հավանականությունը գրեթե ուրախությամբ տեսավ։ Երկու տարվան առանձնությունը զայն կերպարանափոխ ըրեր էր։ Մշտատև տխրությունն ու անոթությունը կրնային ծանր հետևություններ ունենալ և Տիգրան առանց աղմկալից ընկերության մը մեջ նետվելու, իրեն պես առանձնասեր ծանոթի մը հետ տեսության պետքը կզգար։

Քանի մ՚օր վերջը քյոշկին նոր տերերը փոխադրվեցան։ Տիգրան դեռ չէր տեսած զանոնք և գիշեր մը ճաշեն վերջը՝ ծովուն վրա նայող սրահին մեջ բուսաբանության գիրք մը կը թղթատեր որ Հարավային Ամերիկայի ճոխ ու հարուստ բուսոց ու ծառոց վրա կը խոսեր, երբ իր ծեր սպասավորը նոր դրացիներուն այցելության եկած լինելն իմացուց. Տիգրան դիմավորեց զանոնք։

Արամ էֆենտին, իր տիկինը, երկու փոքրիկ հրեշտակներ, ասոնք եղան Տիգրանի դիմավորած անձինքն։

Ո՞ւակից, ի՞նչ կերպով և ի՞նչ դիպվածով Պյոյուք-Տերե ու իրեն այնքան մոտ եկեր էին։ Ամենամեծ հուզմանց մեջ անգամ երիտասարդն ինքնիրեն տերն էր. իր վրդովումն երկար չի տեվեց ու կատարյալ ազնվությամբ իր հյուրերը մեծարեց։

Արամ էֆենտի միշտ միևնույն գորովալից ու մտերմասեր անձն էր. հոր մը խանդաղատանոք Տիգրանը տեսնելուն ու այնքան մոտ դրացի ունենալուն ուրախությունն հայտնեց։ Այլ ի՞նչ փոփոխություն իրեն վրա. երկու տարվան մեջ բոլորովին ծերացեր ու ինկեր էր. մազերը ճերմկցեր, ճակատը խորշոմեր ու տեսությունն և լսողությունը տկարացեր էին, միայն անոր հզոր միտքը մնացեր թերևս առաջվընե ավելի զորավոր։ Պաշտոնե հաներ էին զինքը. նախանձաբեկ հայ

պաշտոնյաներ՝ իրեն մեծ դիրքին հետամուտ՝ չէին վարաներ մուր քսելու անոր մաքուր ու անբիծ պաշտոնավարության վրա ու անխորհուրդ որոշում մը՝ առանց քննության՝ վտարեր էր զայն քաղաքական ասպարեզեն։

Արամ էֆենտի պաշտոնի համար հոգի տվող մարդ չէր բնավ. առանց բողոքելու, առանց գանգատելու, սակայն իր անմեղությունն անվիճելի կերպիվ հաստատելե վիրջը, գրեթե գոհությամբ ձգեր էր իր պաշտոնն որո համար իր տկարությունն ու հիվանդոտ վիճակն արգելք էին։ Նախարարաց խորհուրդը չուտով համոզվեր էր անոր անմեղությանն և հարմար հանգրստյան թոշակով մը վարձատրեր էր այս խելացի պաշտոնեին քսան տարվան ծառայությունը, մինչդեռ Փարիզի մեջ գտնվող մեծանուն հայազգի հարուստ մը, վաղեմի բարեկամ մը՝ որուն կը վերաբերեր այս քյոշկն, անոր տրամադրության ներքև դրած էր զայն։

Արամ էֆենտի անկեղծ հոդածությամբ Տիգրանի վիճակն հարցուց ու իր երկու փոքրիկ զավակները ներկայացուց որոնց մեծը գրեթե յոթը տարեկան կայտառ ու զվարթ մանչ մը և մյուսը չորս տարեկան փափուկ ու գեղանի մանկուհի մ'էր։ Սուրբիկ միայն անփոփոխ մնացած էր. ոչ սակայն. ծանրության հով մը կար անոր վրա. բայց իր հրաշալի գեղեցկությունն ավրված չէր. այն երևակայական կինն էր միշտ զոր երիտասարդն իր ցնորքներուն և երազներուն մեջ կը տեսներ ու կը պաշտեր. բուրում մը կար անոր վրա կարծես հրապույրի, հեշտության ու երջանկության որ իր շուրջը կը ծավալվեր։ Սուրբիկի գտնված տեղն հմայիչ ու անբացատրելի մթնոլորտ մ'էր և անոր մոտն, այնքան մոտն ապրելու ստուգությունը Տիգրանն հիմարեցնելու չափ անհավատալի երջանկություն մ'էր։

Սակայն Տիգրանի այս տպավորությունն՝ այն վրդովյալ հուզումը չէր որ զինքն ալեկոծեր էր այս կինն առաջին անգամ տեսնելուն։ Այս անգամ գոհունակության, անդորրության ոգի մ'էր որ իր մտածության մեջ կարթնար։ Վտանգալից ապագա մը չի տեսավ որ զինքը վախցներ, այլ հեզ ու հանդարտ գեսության մը վայելքն որ իրեն պիտի բավեր։ Այս գիտուն,

ծերունի ու բարի ամուսինն, այս նորատի ու գեղանի կինն, այս երկու պաշտելի հրեշտակներն, այս ամեն ինչ ընտանեկան կենաց դրախտն էր անշուշտ և ինքն, այո՛, ինչո՞ւ չըլլար, մտածիմ, անձնվեր ու առաքինի բարեկամ մը պիտի լիներ հոն. որդվո մը պես կը սիրեր ու կը հարգեր այս ընտանյաց տերն ու եղբոր մը պես, միայն եղբոր մը պես, պիտի սիրեր անոր կինն։ Այն ատեն երևակայեց իր կյանքը՝ ցայնժամ դառնությամբ լցված՝ որ հանկարծ երանության հորիզոններով կը վերաբացվեր։

Վստահություն և ապահովություն զգաց իր անձին վրա ու այս տրամադրությամբ իր մտերմությունն ու գորովը կրցավ ցույց տալ այն ընտանյաց ուրկե մինչև այն օր խուսափած էր. անոր զավակներն անհուն համակրությամբ ընդունեց և փոքրիկ մանուկներն իրենց նոր բարեկամին կապվեցան այն անսխալ համոզմամբ որով տղայք անմիջապես կորոշեն զիրենք սիրողն ու չսիրողն։

Այսպեսով Տիգրանին կյանքը պատող մառախուղը փարատեցավ և զվարթության արևը նորեն փայլեցավ անոր խնդուն երեսին վրա։ Երիտասարդն ի բնե ուրախությունը սիրող էր. երջանկության հեռանկարն իր սիրտն անսահման բերկրությամբ լեցուց. բանի մը փափագող չէր այլևս ու գուցե աշխարհիս վրա միակ գոհ ու երջանիկ անձն էր։ Հավատքն ու համոզումն՝ աշխատության կարոտ չեն գոյանալու համար։ Տիգրան զգաց քան թե որոշեց այս բոլոր խորհուրդներն. ապագային տեսարանը մանրերկրորդի մը մեջ պարզեցավ իր աչքին առջև իր բոլոր պայծառ գույներովն ու իր ամբողջությամբ և Տիգրան աներկմիտ ու անկասկած հավատաց անոր։

Ի՞նչ է արդյոք մարդկային սրտին գաղտնիքը. ժամերով, շաբաթներով, ամիսներով քննած ու անթափանց համարած ստվերները մեկ վայրկենի մեջ անհետացան ու Տիգրան զարմացավ որ այս գեղանկար երկինքը չէր նշմարած մինչև այն ժամը։

Առջի տեսութենեն՝ մտերմությունը կատարյալ եղավ ու խոսակցությունը՝ զոր Տիգրան այնքան քաջ գիտեր ախորժելի

պարձնել, մինչև գիշերվան վեց երկարեցավ. բաժնվեցան ամեն օր տեսնվելու խոստմամբ։

Տիգրան մինակ մնաց. ի՜նչ զարմանալի ու անակնկալ դիպված.—ո՜ւակից ո՜ւր ճակատագիրն առաջնորդեր էր այս կինը՝ զոր չի տեսնելու համար ամեն ինչ ի գործ դրեր էր. բայց նախախնամության կամքն իր կամքեն վեր էր հարկավ։ Երկու տարվան մոտ ժամանակ մ'անցունելը մեծապես օգտած էր իր տենդահույզ տագնապաց ամոքվելուն։

Տիգրան ինքզինքը քննեց ու առանց վարանման հայտարարեց թե բժշկված էր անդարմանելի կարծած հիվանդութենեն մը։ Սուրբիկի տեսքը նոր կյանք ու կենդանություն տվեր էր անոր. նոր մարդ մ'էր որ աշխարհ կուգար առողջ ու ազատ, առանց նախորդին տկարության։

Ուստի անվախ ու անքույթ պիտի ապրեր այն կնոջ մոտ և հիմարական տենդեր չի պիտի կրնային գալ վրդովելու իր անզորր էությունը։

Այս երաշխավորությամբ հաստատվեցավ այն սերտ բարեկամությունն որ երկու դրացիները գրեթե միացուց։

Այս ընտանությունն սկսավ բարեբաստիկ գույներով. Արամ էֆենտի, քիչ մը հիվանդոտ ու տկար, մեծ բարվոքում մը գտած էր այս օդափոխությամբ. իր կինը միշտ ամուսնույն մոտ, անոր բոլոր հանգստության և իր որդվոց կրթության նվիրված, ու Տիգրան որ զվարթ ու խնդումերես այս առանձնասեր բնտանյաց ոգևորություն կուտար ու անոնց միօրինակ կենցաղավարության տրտմությունն ու ձանձրույթը կր փարատեր։

Օրական զբաղումնին գրեթե միևնույնն էր. առավոտուն կաֆեուխ, գրեթե արշալույսին հետ կելնեին. երբեմն Տիգրան էր որ այգուն այգուն քյոշկին դուռը ձեռք կառնուր ու երբեմն իր գրացիներն՝ որ երիտասարդը կուգային արթնցնել ու անոր ծուլությունը մեղադրել. նախաճաշի ու ճաշի տեղերն որոշված էին անպատճառ առջի իրիկվընե. մերթ անտառուտ ու ստվերամած մեկ կողմն էր իրենց պարտիզին մեջ ուսկից կը դիտեին արևուն ծագումն հանդարտ Վոսփորի ջրերուն վրա, մերթ Պեյքոզի մեկ եզերքն ամայի ու անխռով ծառի թփի մը տակ. ցեքեկը՝ ճաշեն վերջն ընթերցանություն մը կրնեին նոր հեղի-

ծակի մը ու հետո ջուրերը կերթային, մասնավորապես Քեսրա-ճե-Սույին որ խորհրդավոր ու նսեմաստվեր անտառի մը մեջ պաչծառ ու անուշ ջրի աղբյուր մ'է ու Ծնի-Մահալլեցի բնակչաց մի զբոսավայրը. գիշերն երբեմն Պյոյուք-Տերեի գեղեցիկ քաթափին վրա շրջագայություն մը կամ ծովուն վրա կոնտոլով պզտիկ պտույտ մը և երբեմն ծովեզերյա տան սրահին մեջ խոսակցություն մը պատուհանին քով լուսնի լուսով. ահա այս անձանց հաճույքն ու անցուցած կյանքն:

Ո՛չ իսկ բառ մը, խոսք մը կամ ակնարկություն մ'անցնելուն այս ներդաշնակ երանության մեջ. Տիգրան ամեն բան մոռցած էր. Սուրբիկի հետ իր գորովն՝ եղբայրական անկեղծությամբ ու համարձակությամբ մը կը հայանվեր և նորատի կինը միևնույն անկեղծությամբ ու համակրությամբ կը տեսնվեր իրեն հետ:

Մտերմությունն այնչափ հառաջ գնաց որ օր մը Սուրբիկ Տիգրանի անցյալ օրերը քննել ուզեց:

— Ոչ ոք չե՞ս սիրած մինչև այս տարիքը, Տիգրան, հարցուց անոր. քեզի պես անհանդարտ մեկը չեմ կրնար ենթադրել որ անտարբեր կամ անփույթ մնացած լինի մինչև հիմա, ավելցուց խնդալով. նեղանաս կամ չի նեղանաս հոգս չէ, տեսնենք պատմե՛ մեզի քու հաջողություններդ ու սիրային արկածներդ:

— Ի՞նչ կը հասկնաս սիրային արկած ըսելով. քե որ այն խաբեբա զրախոսությունները կըմբռնես զորս երիտասարդ մը ու երիտասարդուհի մը առանց զիրար սիրելու անամոթ հանդգնությամբ մը իրարու կը կրկնեն. քե որ այդ տեսակ պատմություններ կուզես, տիկին, ի՞նչ մեղքս պահեմ, շատ ունեցեր եմ մինչև ցարդ. իսկ քե որ ճշմարիտ, խորին ու սրտի կապ մը ըսել կուզես, ատիկա ունեցեր եմ ու չեմ ունեցեր միանգամայն, պատասխանեց երիտասարդը ցած ձայնով՝ որուն մեջ Սուրբիկ իր կանացի փափկությամբ տրտմության ու դառնության շեշտ մը նշմարել կարծեց ու խոսակցությունն հառաջ չի տարավ:

Տիգրան փոխադարձաբար կրնար հարցնել քե Սուրբիկ այդ տեսակ սրտի կապ մը ունեցած չէ՞ր. բայց և ոչ մտաբերեց զայն: Այս անքուլթ երչանկության մեջ մոլորած երիտասարդին ակնարկն ու հիշողությունը ներկայեն անդին չէին անցներ:

Հիրավի երջանիկ էր Տիգրան։

Հորմեհետե ինքդինքը տեր կարծեր էր իր սրտին, պատճառ մը չէր գտած իր անձը մշտնջենական զրկման դատապարտելու. բավ էր որ անպատիվ խորհուրդ մը չանցներ իր մտքեն և ուրիշ արգելք չի կար զուրկ մնալու այս կնոջ երեսեն որ իրեն համար արեգակն էր փայլուն ու կենսատու։ Անոր շնչած օդը ջնչել, անոր պտրտած վայրերը տեսնել, անոր ձայնը լսել հեշտալուր, կարենալ առանց ոևէ անպատվության ամեն ժամ տեսնել զայն, խոսիլ անոր հետ, մեկ բառով պաշտել զայն ֆրապես երբ վերացական աշխարհի մը մեջ անգամ այսչափ ծրանության չէր հավատար, Տիգրանի՝ ուրիշ պահանջելու բան մը չէր մնար։ Ի՞նչպես սակայն իր խանդավառ սերն եղբայրական գորովանաց փոխակերպեր էր, ի՞նչպես կրցած էր գոհանալ պարզ մտերմության մը վայելքով. այս կնոջ անքննադատելի ծանրությո՞ւնն էր արդյոք, անոր լուրջ ու խոհուն վա՞ըքն էր որ զինքն հնազափոխեր էր, թե ոչ այս տեսությունն իսկ մեծագույն շնորհն էր զոր՝ իր սիրույն չափազանցության մեջ՝ երիտասարդը շատ և շատ իսկ դատած էր իրեն համար։ Ինչ որ ալ ըլլար չի չանաց ծածկել իր համակրությունն որ արտեն իր ամեն խոսվածքին ու վարմունքին մեջ երևան կելներ։ Տարօրինակ ազդեցություն մ'էր այս կնոջ իշխանությունն երիտասարդին վրա. երբ որ խոսեր իրեն, ներդաշնակ նվագ մ'էր օրուն դադրելեն վերջն սնգամ երիտասարդը դեռ կուննդրեր երբ որ նայեր իրեն. փայփայիչ ու գգվալից ակնարկ մ'էր որ իրեն կը հետևեր ու զինքը կը շրջապատեր էլեկտրական հոսանքով մը։

Նոստովանեցավ օր մը Սուրբիկին իր բոլոր տկարությունը.—«Չեմ գիտեր, լսավ անոր, ի՞նչ համայություն ունիս վրադ, կզգամ որ քույրս քեզ չափ չպիտի սիրեի. անբացատրելի զգացում մ'է զոր իզուր կը չանամ հասկնալ. հոր մը չափ կը սիրեմ քու ամուսինդ. հավատա որ ուրախ եմ այնպիսի բարի ու սիրեցյալ անձի մը կենակիցն լինելուդ. թերևս իրարու չի հանդիպեինք բնավ թե որ Արամ էֆենտիի բարեկամը չլինեի ես»։

Այս անդորրության օրերու մեջ էր որ Արամ էֆենտի գլխի ծանր հիվանդությենե մը պառկեցավ. Սուրբիկ անձնվեր հոգա-

ծությամբ մը խնամեց իր ամուսինը, քսան օր հարկ եղավ անքուն անցունել անոր անկողնույն մոտ. դեղերը տալ, գայլ սփոփել ու խնամել վարձկան ձեռքի գործ չէր և Սուրբիկ անձամբ իր պարտքը կատարեց. վտանգներն անցան բայց նախկին առողջությունը չի վերադարձավ. հիվանդությունն հաղթվեցավ մշտնջենական հետք մը թողլով սակայն հիվանդին վրա զոր անկարելի եղավ բուժել։ Արամ էֆենտի ականջի ծանրություն մ'ուներ, այս հիվանդությունն անոր լսողությունը խանգարեց. հիվանդն ոտքի վրա եյավ բոլորովին խուլցած, ծանր հարված մ'եղավ ասի ծերունի մարդուն, հավիտենական գրկում մ'էր ամեն հարաբերութենե։ Անփարատելի տրտմություն մ'եկավ իր վրա և իզուր ջանացին զինքն սփոփել. ամեն մարդ պարտավորեցավ գրով խոսիլ իրեն հետ։ Ամեն ձայնե գուրկ ու կարոտ մնացող այս մարդը չի կրցավ անտարբեր քաջությամբ մը դիմադրել այս աղետին. յուր անզգաղ օրերուն բոլոր հաճույքը խոսակցությունն էր զոր հարկ էր մեկ կողմ թողուլ. իր խլության պատճառավ պարտավոր էր մեկուսի մնալ այլևս իբրև խելագար հիմար մը. այլևս ընկերության մեջ չպիտի կարենար մտնել ծիծաղելի չըլլալու համար. երաժշտությունն և իր կնոջ դաշնակին ձայնը՝ զոր այնչափ կը սիրեր, ա՛լ իրեն համար չէին։ Նամանավանդ իր որդվոջ ձայնը չի լսեր զինքը խիստ վշտացուց։

«Ձավակներուս ձայնեն կարոտ մնացի», պատասխանեց անոնց՝ որք զինքը մխիթարելու համար ամեն ջանք կրնեին։

Իսկ Սուրբիկ ի՞նչ կը մտածեր այս անակնկալ պատահարին առջև։ Իր ամուսնույն դժբախտ կացության վրա կատարյալ ու խորին ցավակցությամբ մը հանդերձ չի կրցավ ակնարկ մը չի դարձնել նույնիսկ իր գոյության վրա. հազիվ 25 տարեկան էր դեռ, երբ իր ծերունի ամուսնույն հիվանդ վիճակը՝ նոր տկարությամբ ծանրանալով, ընտանեկան կյանքը բոլորովին կը վերջացներ։ Ապաքեն քանի տարիներե ի վեր հիվանդոտ էրիկը դարմանելով անցուցած էր կենաց ու երիտասարդության լավագույն օրերն. այսուհետև այրի ու ծերացած կնոջ մը տըխուր ու մռայլ ապագան վերապահված էր իրեն։

Հանկարծ անցյալ օրերը պատկերացան իր աչքին առջև

անողոք ճշտությամբ մը. ո՞ւր էր այն ցնորական երջանկությունը զոր Սեդրաքին սիրույն մեջ կը վայելեր երբեմն, ո՞ւր էր այն հեշտության դրախտը զոր երիտասարդին ականջին կը խոստանար ու կը փսփսար։ Ուխտադրուժ ու խաբեբա՝ քարուքանդ կործաններ ու փշրներ էր այն երանության հույսերն զոր իր ձեռքն էր իրականության վերածել. չարագուշակ հրեշտակի մը պես մահ և ավերում սփռեր էր իր չորսդին, և սև հոդերն հափշտակեր տարեր էին այն մեկ հատիկ սիրեցյալն որուն միայն խոստացած էր պատկանիլ։

Սուրբիկ չար հոգի մեկը չէր. ոչ ոք իր հանցանքին մեծությունը թերևս իրեն չափ կը ճանչնար. ոչ ոք ապաշխարելու ու ներողության արժանանալու հարկն իրեն չափ կը խոստովաներ։ Ամուսնական կյանքին մեջ իր պարտականության անթերի գործադրությամբն սփոփանք մը գտնել որոշեր էր, հավետ իր սրտին մեջ պաշտելով իր միակ սիրելվույն հիշատակը։

Տարիքի ահագին տարբերությունն, որ ի սկզբանե իր և ամուսնույն մեջ կը գտնվեր, զինքը զուրկ թողած էր երջանկության այն ամեն հույսերեն զոր երիտասարդուհին իրավունք ունի պահանջելու։ Հայրական խնամք ու հոգածություն գտեր էր շատ անգամ հոն՝ ուր հրդեհող և սպառող հեշտություն մը գտնել կը հուսար։ Քնքուշ ու հազվագյուտ ծաղկի մը պես ջերմոցի մը մեջ միայն պահվեր էր, մինչդեռ այնքան պետք ուներ ազատ օդին ու արևին ճառագայթներուն. չէր կրնար գանգատիլ սակայն իր ամուսնույն դեմ՝ որո բարի, առաքինի ու նեղրոդամիտ բնությունն ամեն մեծարանաց արժանի կը կացուցաներ զինքը։

Անշուշտ գիտեր թե որքան անդարմանելի սխալ մը գործած էր ամուսին ընտրելով իրեն այնպիսի մեկն՝ որ հոր մը տարիքն ուներ իրեն քով և իր աչքը սևեռելով կը տեսներ իրեն տարեկից մանկության ընկերուհիներն որոնց ամեն մեկը հիմա իրեն պես երիտասարդ, առոյգ ու զվարթ ամուսինով մը երջանիկ եղեր էր. անշուշտ իր ձեռքն էր օգուտ քաղել այն բոլոր թույլտվություններեն՝ զոր իր ամուսինը կատարյալ վստահությամբ մը տվեր էր իրեն, շեղելու ու մոլորելու համար պատվո ու պարտակա-

նության ճամփեն. երիտասարդներ չէին պակսած ականջն ի վար զմայլիլ ու ապահով նկարագրելու այն ուղին որ լի էր անհատակ անդունդներով։ Սուրբիկ մերժած էր ցայն վայր և գոհ էր խոտորած չլինելուն ուղղության ճամփեն. բայց ահա անոք ու միայնակ՝ դատապարտյալ ծերունվո մը հետ ինքն ա, դատապարտված էր. անզգա մը չէր սակայն երբ երիտասարդական արյունն այնչափ ուժգին կը շարժեր իր սրտին մեջ ծաղկահասակ ու գեղեցիկ՝ ինքն ալ միթե չէ՞ր գիտեր սիրել։ Երիտասարդ կինն, առանց ոևէ փորձառության տեր լինելու, խորին գիտակցություն մ'ուներ յուր տեսնված անձանց տրամադրության վրա ու իր կնային բնազդմամբ առաջին տեսութենեն ճանչցեր ու հասկցեր էր Տիգրանի համակրությունն, իսկ հիմա բոլորովին կը կարդար անոր սրտին խորն ուր խռովության հովեր կը փչեին։

Անփույթ ու շաղակրատ զվարթությամբ մը՝ սիրային լուրջ կապակցության մ'առաջքն առնել ջանացեր և հաջողեր էր ցայնվայր. Տիգրան անոր ընդունելության ձևերուն տակ չէր կրցած նշմարել երկյուղալի անձկություն մը. և հիմա որ առանուն խուլնալովը գրեթե միայնակ ու առանձին կը մնար այս երիտասարդին հետ, վտանգը մեծ և ահավոր էր. ո՞վ պիտի պաշտպաներ զինքը տկարության, անխոհեմության վայրկենի մը մեջ. ճակատագիրը կարծես չար սատանայի մը պես ամեն ջանք ի գործ կը դներ զինքը փորձելու. բայց գուցե իրեն չափ մեղքցվելու արժանի էր Տիգրանն ալ. Սուրբիկ երևակայեց զայն երբ լռիկ ու անձայն խույս կուտար իրմե և երախտագետ սրտով կը մտածեր այն անձնվեր զոհողության՝ որով երիտասարդն ինքը միայն տանել ուզեր էր դժբախտ սիրո մը բոլոր տառապանքն. այնպես թվեցավ հանկարծ իրեն որ Տիգրան իրեն մոտը կը ծնրադրեր ու ձեռքերը միացուցած սիրո ու տառապանաց խոստովանություն մը կրներ իրեն, անոր հեշտալի շունչը կարծես թե կը գգվեր իր դեմքը... Սուրբիկ սթափեցավ, դուրս ելավ դողդոջուն և պարտիզին զով ու ցրտին հողմն ամոքեց անոր հրատապ ճակատը...։

Այսպես նոր նոր շփոթություններ կը պատրաստվեին մոտավոր ապագայի մը մեջ, ընտանեկան հորիզոնին վրա սև կե-

տեր կը տեսնվեին, նախակարապետ մեծ ու խռովահույզ մըրրիկներու։

Արամ էֆենտիի ապաքինութենեն վերջն ապրելու եղանակնին փոփոխություն կրեց։ Այս բարեսիրտ մարդն՝ այնքան ծանր հարվածի մը ներքև ընկճված՝ գրական պարապմանց տված ինքզինքն ու առանձնացավ. բայց անխիղճ ու եսասեր մեկը չէր որ իր ճակատագրին բոլոր դառնությունն իր ամուսնուն վրա ալ բեռնավորեր. ազատամիտ փիլիսոփա՝ որ իր ընկերական կենաց բոլոր անպատեհ կողմերը կը ճանչնար, գիտցեր էր գեթ իր անուշ բնավորությամբ լնուլ տարիքի հեռավորությունն՝ որ զինքն իր կնոջմեն կը բաժներ և հիմա թնավ չէր ուզեր երիտասարդ ու անփորձ կնոջ մը քավել տալ անհեռատես որոշման մը հետևանքը զոր ինքն իր բոլոր փորձառությամբը չէր գուշակած ատենով։

Ուստի կնոջը գրեթե բռնությամբ հրամայեց իրեն հետ չառանձնանալ։

«Ինձ համար որդի մը ու քեզ համար եղբայր մ'է Տիգրան, ըսավ Սուրբիկին, կուզեմ որ առաջվան պես ուրախ ու ազատ ապրիք. հարկ չէ որ ես ալ ընկերանամ ամեն ատեն ձեզի, ես այսուհետև չեմ կրնար շարունակ դուրս ելնել և դուն ինձ հետ բանտարկյալ մի՛ մնար»։

Հիրավի, եղբայր մ'էր Տիգրան Սուրբիկին։ Այս հեռադետ մարդն անկեղծությա՞մբ կրսեր այս խոսքերն ու այս անխորհուրդ առաջարկին վրա չէ՞ր խորհած երբեք։

Ո՛չ. այնքան պարզմիտ մեկը չէր որ առանց կշռելու հետևանքն այս աստիճանի թուլլտվություն ու ազատություն չընորհեր իր երիտասարդ կնոջը։

Մերունի պաշտոնատարը շատ և շատ անգամ խորհած իր ընտանեկան կացության վրա և քանիցս զղջացած էր անտես ըրած լինելուն այն առաջին պայմանն՝ առանց որո ամուսնություն անհամ կատակերգություն մը կը լինի երթ ողբերգության չի դառնա։

Զղջում մը կար այս մարդուն սրտին մեջ. ճշմարիտը խոսելով չէր կարող իրեն հետ հավասարապես պատասխանատու համարել իր կինն ալ այս անպատշաճ միացման մեջ և

հանցանքն անդարմանելի ու մշտատև կը ծանրանար իր վրա միայն։

Մարդկային արդարությունը չէր կրնար դատապարտել պինքն և իր տագնապյալ խղճին ձայնն էր միայն զոր կը լսեր որոշ ու բացարձակ։

Այն վայրկենին, այս տարօրինակ մարդն որոշեր էր իր կնոջ վերադարձնել անոր ազատությունն և կերպով մը փոխհատուցնել եթե ոչ դարմանել իր գործած սխալը։

Արհամարհելով ընկերության բոլոր չարախոսություններն ու նախապաշարումներն, սփոփանք մը պիտի ունենար, եթե իր կինն առանց խոտորելու պատվո ճամփեն կարենար իրեն տարեկից ու առաքինի երիտասարդի մը բարեկամական գորովով մոռնալ և իր երեսին չի զարնել զինքն հավիտենական թշվառության մը մատնած լինելու հանցանքը։

Անշուշտ Սուրբիկ և ոչ մեկ ժամանակ առիթ տված էր իր ամուսնույն դժգոհություն կամ հանդիմանություն մը կարդալու իր դեմքին վրա. բայց այս լուին համակերպությունը գանգատող ձայնե մ'ավելի ծանր եկած էր միշտ անոր սրտին։

Թե որ ամուսնաթողությունն ընդունելի լիներ մեր կրոնական օրենսդրության մեջ, Արամ էֆենտի բռնությամբ պիտի բաժնվեր իր կնոջմեն. ու քանի որ օրենքը կաշկանդող ու բռնադատող էր, իրեն կիյնար կարելիության ու պատշաճության սահմանին մեջ անտանելի չի դարձնել ամուսնական լուծը։

— Որի՞ կսպասես ամուսնանալու համար, կըսեր օր մը Տիգրանին. չըլլա որ երիտասարդությունդ անցունելե վերջն ինձ նման հիվանդ ու կարոտ օրերուդ օգնական մը փնտրելու համար միայն ամուսնանալու ելնես։ Տարիքն առնելեն վերջն երիտասարդուհվո մը հետ ամուսնացող մարդը կը նմանի ծովն ինկող անձի մը՝ ոտքեն կապված ծանր գնտակին որ իր երիտասարդ կինը միասին կը տանի թշվառության անդունդը։

Մինչև այն ատեն իր կնոջ և ոչ մեկ փափագին հակառակեր էր. Սուրբիկին ամենեն չնչին հաճույքն իբրև պարտականություն մը ի գործ դրած էր միշտ և ասկից վերջը միևնույն բարեսրտությունն ու թույլտվությունը տալու հարկը ճանչցավ։

Այս ձևով Տիգրան ավելի մեծ ազատություն մը վայելեց

Սուրբիկին քով. իր բոլոր բարեկամության հակառակ, այս էր մարդկային սրտի տկարությունն, գրեթե գոհությամբ տեսավ Արամ էֆենտիի մենավոր մնալը. բայց զայն առանձին չի թողուց. երբոր Արամ էֆենտի իր աշխատության սենեկեն դուրս ելներ, Տիգրան անոր քով կը կենար միշտ ու մերթ գրավոր խոսակցությամբ և մերթ պեզիկի խաղով կանցուներին միասին քանի մը ժամեր։

Խոսրով շուտով հառաջացեր էր իր կանխորոշ ճամփուն մեջ, դատավորական ասպարեզն, օրինական ճշտությամբ սահմանափակ գտնվելով, առաջուց ի վեր անհարմար թված էր իրենուստի շուտով թողուց իր ընդհանուր դատախազի օգնականի պաշտոնը վարչային բարձրագույն պաշտոնի մը փոխարեն։

Այս երիտասարդը՝ դյուրին ու արագ հառաջադիմության մը անհրաժեշտ եղող բոլոր պայմաններն իր անձին վրա կը բովանդակեր։

Նա ուներ մեծերու դեմ հյու ու ստրուկ հնազանդություն, ազդեցիկ անձանց մերձավորություն և անոնց քով այն ողջիչ ու շողոքորթ զվարճախոսությունն՝ որ երբեմն խեղկատակություն կը կոչվի ու շատ անգամ ճշմարիտ արժանյաց տեղ կը բռնե։ Այս միջոցավ ստացել էր նա զորավոր պաշտպաններ։

Միանգամայն հաջող ամուսնությամբ մը իր դրամական կացությունն ապահովեր էր, առանց վարանելու ամուսնանալով հարուստ ու գեղանի աղջկան մը հետ որո բոլոր պակասությունն՝ ատենով հայրենի տունեն փախուստ տված լինիլն էր երիտասարդ դասատուին հետ։ Հազար ոսկի օժիտ պիտի տար անոր հայրը՝ մեծահամբավ դրամատեր մը որ կառավարությունն ու հասարակությունը կողոպտելով ձեռք բերած էր իր հարստությունն և զոր քրտինքով ու պատվով ձեռք բերված կանվաներ։ Սակայն հակառակ իր մեծ դիրքին ոչ ոք իր աղջիկն ամուսնության ուզած էր և անոր աղմկալից անցյալն ատեն անցնելով մոռցված չէր։

Խոսրովի պես դրամի կարոտ ու պատվո մասին ներողամիտ անձ մը միայն անոր ամուսին կրնար լինիլ։ Բարձրանալու մշտատև տենչեն բռնվող այս մարդուն աչքին ամեն ինչ՝ բարե-

կամուրյուն կամ ամուսնուրյուն՝ միայն իր մեծուրյան գաղափարներուն նպաստելուն համար գոյուրյուն ունեցող բաներ էին։

Նորա կինը պետք էր նախ և առաջ դրամի տեր լինիլ, երկրորդ՝ սրահի մը մեջ խոսակցելու չափ կրթյալ մհկն ըլլալ. և Խոսրով այս միուրյան մեջ անկե անդին չի նայեցավ։

Շիտակն ըսելով իր կինր կատարելապես հարմարեր էր այս տարօրինակ մարդուն. Ովգինե վատ ու խոովյալ երևակայուրյան տեր, համառ ու արտակարգ աղջիկ մ'էր։

Ճարտար դաշնակահար, լավ գծագրիչ, ինչպես որ կր տեսնրվեր իր ներքնասենյակի պատերեն զորս իր մատիտին արտադրուրյամբր միայն զարդարեր էր, այս կինն ամեն բանե առաջ իր անկախուրյան սիրահար մեկն էր։ Շարունակ ֆրանսական վեպեր կարդալով՝ անոր ըմբոստ բնավորուրյունր բոլորովին անզուսպ ու հիմարական բան մր դարձեր էր. թաքուն, անձայն ու անշշուկ սիրահարուրյուն մր՝ անոր զգվանք պիտի ազդեր. ընդհակառակն առևանգուրյան, բռնուրյան, սպանուրյան կամ թունավորման վախերով լեցուն ու գայթակղալի հռչակ ունենալիք ամեն տրիփ անոր պիտի հաղթեր։

Անոր ազատուրյան ու անկախուրյան փափագր՝ բռնավոր տարփավորի մր գերին լինելու տենչանքն էր միայն և ոչ ուրիշ բան։ Այս կնոջ հետ հաշտ կենցաղի հույսն անկարելի էր. անոք կամ տերը կամ ստրուկը պետք էր լինիլ։

Իր արկածալից երիտասարդուրյունը միշտ չափազանց նեբոդուրյան մր արժանացած էր հորը կողմեն որ անհավատալի տկարուրյամբ կր սիրեր այս աղջիկն։

Ովգինեի ամուսին լինելիք մարդը պարտ էր առաջուց աչքն առնել անոր լուծին տակալը, գոնե անոր բացարձակ անկախուրյունը ճանչնալը. Խոսրով այս վիճակն անընդունելի չի նկատեց. չենք շնորհք Ովգինեի երեսն անգամ նայած չէր. կապո՞ւյտ աչվի էր թե սև աչվի. անոր մազերը խարտյա՞շ էին թե շագանակագույն. բերանր փո՞քր էր թե մեծ, շիտակր շատ աղեկ չէր գիտեր. խիստ լավ գիտեր սակայն որ իրեն տրվելիք օժիտը նշանտվուրյան օրեն իր տրամադրուրյան ներքև պիտի գտնվեր ու այս բավ էր անոր։

Ամուսնության առաջին ամիսները փոխադարձ ու գերազանց անտարբերությամբ հետևապես և անդորրությամբ անցավ, մինչև որ Խոսրով անգամ մը իր ամուսնական իշխանությունն ի փորձ դնել ուզեց։

Տիկնոջ երիտասարդ մեկ ազգականը՝ Խոսրովի տան սովորական և ամենօրյա այցելուներեն մեկը դարձեր էր. այս տղան՝ վաճառականի մը քով գրագիր, որ իր շաբաթականն իր զգեստներուն միայն կը հատկացներ, բավական վայելչադեմ ու խարտիշահեր մեկն էր զոր շար լեզուները կը պնդեին թե Եվգինեի վազեմի ու արդի մեկ մտերիմը լիներ։ Այս լուրը շուտ հասեր էր Խոսրովի ականջը, բայց չէր ուզած անորոշ ու տարտամ կասկածի մը վրա իր դուռը փակել անոր դեմ, նամանավանդ ամուսնության առջի օրերը։ Տանը մեջ բնավ կարևորություն տված չէր անոր. առջի տեսությենեն մեկ երկու բառով հասկըցեր էր որ, զգեստներու գլխեն ի զատ, այս անձն ոչխարի մը պես անմիտ ու վայրենիի մը չափ տգետ արարած մ'էր։ Այս տիպար էակն Եվգինեի պես կնոջ մը տարփավորը չէր կրնար ըլլալ։

Սակայն ի սկզբանե անվնաս նկատված այս արարածը՝ քիչ քիչ Խոսրովի անտանելի թվեցավ. իր հակակրությունն այնչափ ավելցավ որչափ իր կինն այս աստիճանի ապուշի մը վրա տարօրինակ գորով ու սքանչացում կը հայտներ։

Խոսքի պզտի մենամարտով մը սկսավ այր ու կնոջ մեջ այս երիտասարդին վեճը։

Եվգինե անոր ճաշակն ու վայելչությունը կը գովեր։

— Կը զարմանամ, ըսավ անոր ամուսինն, այդ անհամ պարոնեն ախորժելուդ։

— Ինչո՞ւ ըլլա անհամ, միթե համով ըլլալու համար պետք է անպատճառ քաղաքական կամ ուսումնական նյութերու վրա՞ ճառել ձեզի պես. մենք՝ կանայքս՝ այդ տեսակ բաներեն չենք հասկնար, ամեն մարդ իր ճաշակն ունի։

— Այդ խոսքը քու հմտությանդ հարմար չէ. դու ուսյալ կին մ'ես և շարունակ քուրջի վրա խոսիլը դատարկ գլուխ կանանց հատուկ է։

Քանի մ՛օր վերջը խոսքը նորեն բացվեցավ բայց այս անգամ ավելի կծու կերպով։

— Ձեմ կարծեր որ հատկապես ինձ հակառակելու համար այդ անպիտան անձն հոս հաճախել կուտաս. անցյալ օրվան դիտողութենես ի վեր այդ պարոնն օրը երեք անգամ գալ սկսավ։

— Ամենևին. միայն կը խնդրեմ որ այդքան չնչին բանի մը համար խնդիր չի հանեք. որովհետև շատ կանուխ է դեռ, ավելցուց հեգնությամբ. վեց ամիս չեղավ ամուսնանալնիս և նախանձոտ Օթելլոյի դերը ծիծաղելի կըլլա։

Խոսքով բարկացավ բայց ինքզինքը զսպեց։

— Համբերությամբ մտիկ ընել պարտավոր եմ որովհետև քեզմե մեծ եմ. քեզ նկատմամբ մինչև հիմա ունեցած անտարբերությունս աննախանձ ըլլալս կը հաստատե, կը պահանջեմ միայն որ պատշաճությունը ճանչնաս, ըսավ ցուրտ կերպով ու դուրս ելավ սենյակեն։

Ի՞նչ տեսակ էին Եվգինեի հարաբերություններն այս երիտասարդին հետ որ Արմենակ կը կռվեր. արդարությունն հարգելու համար պարտավոր ենք հայտնել որ անպատշաճ կապակցության ամեն զրույց բոլորովին անհիմն էր։

Եվգինե չէր սիրեր ու չէր կրնար սիրել այս տխմարը բայց տխմարությունն ալ իր հաճելի կողմն ուներ։

Արմենակ Եվգինեն կարենալ սիրելու մեծամտությունը չուներ բայց անոր հետ տեսնվին, հասարակաց տեղ մը անոր հետ միասին ժուռ գալն իրեն շատ էր ու քիչ չէր։

Մինչև իր էրկանը դիտողության պահուն, Եվգինե այս տղուն հետ կզրոսնուր, անոր վրա կը ծիծաղեր, կը խնդար, բայց գեշ աչքով մը նայած չէր անոր. սակայն իր էրկանը ընդդիմությունն անոր ի բնե պատերազմասեր ոգին արթնցուց, համանավանդ անոր խոսքին վերջին պարբերությունը խիստ վիրավորիչ դատեց. «Քեզ նկատմամբ ունեցած անտարբերությունս աննախանձ ըլլալս կը հաստատե» ըսեր էր. անտարբերությո՞ւն... Եվգինե իր ամուսնույն համար ուրիշ զգացում ունեցած չէր. բայց ամուսինն իր մասին անտարբեր ըլլալու իրավունք չուներ և որոշեց այդ անտարբերությունը խորտակել։

Ի շնորհս Եվգինեի բերած օժիտին և իր ամսականին Խոսրով Պոլսո առաջնակարգ էֆենտիներեն մեկն էր հիմա. իր կնոջ բերած գումարը քոնսոլիտեի խաղով ստացված մեկ երկու հազողությամբ կրկնապատկված ու եռապատկված էր և Խոսրով՝ շահադիտության մեջ հանդուգն ու անվախ՝ վերջին բախտով մը մեծ հարստություն մը շինել ու այնպես քաշվիլ կուզեր այդ վտանգավոր խաղեն։

Մեկ օրվան մեջ հարյուր ոսկի շահիլ կամ կորսնցնելու վարժվող մարդ մը խնայողության տեր չէր կրնար լինիլ ու Խոսրովի քոնսոլիտեի ելևէջին պատճառած շահերուն մեջ իր տանը համար ըրած մեծ ծախքը չնչին բան մ'էր։

Կարոտության մեջ նվաստ ու ստրուկ եղողն հարստության մեջ ամբարտավան կըլլա. Խոսրով հազարավոր ոսկիներուն հաշվոց հետ շուտով հինավուրց ազնվականի մը բոլոր ձևերը սորված էր։

Այս էֆենտին մոռցած էր անշուշտ հայրենիքեն հետիոտն Պոլիս գալը կամ տնտես ախպոր ավելցուկ հացի կտորներն, երբ իր հյուրերուն գանգատող ձայնով մը Հեռալին և Պյուկիին կոշիկներեն կամ լըպտնին կերակուրներեն կը դժգոհեր։

Իր ազգային գաղափարաց գալով, իբրև նորահաս հարուստ մը՝ վարչության, Ժողովոց և երեսփոխանաց վրա ծիծաղելու իրավունք ուներ. բայց Խոսրով խորամանկ փառասեր մ'էր որ այդ ժողովոց մեջ ձայն ու իշխանություն ունենալը չարհամարհեց։

Առաջին պաշտոնատարը չէր նա (և անտարակույս վերջինն ալ չի պիտի ըլլար) որ ազգին մեջ ազդեցություն ունենալն՝ իր դիրքին օգտակար կերպով ծառայեցնելու գաղափարն հղացեր էր։ Այս օրինավոր ակնկալությունն՝ ի վաղուց անտի շատ քիչ անգամ ի դերև ելած է որպեսզի նորեկներ ադոր ճշմարտոթյունը չըմբռնեն։

Մեկ նամակով Խոսրով իր հայրենիքեն երեսփոխան ընտրել տվավ ինքզինքն Ազգային ժողովին, իսկ հոն խոհեմությունը ձեռքե չի թողուց ու խորագետ ճարտարությամբ ձեռք բերավ ազատամիտ ու ժողովրդական երեսփոխանի անունը զոր պաշտոնատար երեսփոխանները խիստ քիչ անգամ ստացած են։

Ժողովին ամեն նիստերուն ներկա, ներկա նախապատրաստական գումարումներու, ամեն վիճաբանության մասնակից, իր դիվանին մէջ տեղեկարեր, հանգանակության մէջ կարգադիր մասնախմբի անդամ, Յոսրով էֆենտին Ազգային ժողովը մեծն գործունյա ու ազդեցիկ անդամներեն մեկը դարձավ։

Ամենքը միաբերան կը գովեին այս մարդն որ ազգին վնասելու կարողությամբն հանդերձ այնքան անձնվեր կը ծառայեր անոր։

Այս համբավը՝ զոր անաղարտ կը կարծեր, ստանալե հետո սկսավ յուր շահատակություններն։ Իր ձայնն հետզհետե խրրոխտ և հպարտ՝ հակառակ կարծյաց տեր երեսփոխաններն արհամարհանոք ու սպառնալյոք կը սաստեր։ Ո՞վ էին այն անպիտան մարդիկն որ կը համարձակեին իրեն դեմ խոսիլ. գիտե՞ն որ կարող էր զիրենք մինչև հաքսոր մատնել։

Յոսրովի ծրագիրներն ի գործ դրվելու մոտ էին. միայն իր ընտանեկան կենաց խռովություններն աճեր ու բազմապատկեր էին երթալով։

Ինչպես ըսինք Եվգինե իր էրկանն անտարբերությանը հաղթելու համար անոր նախանձը շարժել որոշեր էր։ Ոչինչ այնքան անխախտելի է որքան կանացի որոշումն։ Այն վայրկենեն սկսելով Եվգինե չէր թերացեր, իր ամուսինը կատղեցնելու համար, ի գործ դնելու այն ամեն փոքրիկ կամ մեծ, անվնաս կամ վնասակար միջոցներն որ կանանց պատերազմի համբավը կը կազմեն։

Այն երիտասարդն ամեն օր հրավիրել, իր ոտքին քով նըստեցնել, գլխի վայր փսփսալ անոր ականջն ի վայր, թևը մտնել շրջագայության համար ու կոթնիլ անոր թևին ամենուն ուշադրությունը հրավիրելու չափ. ու երբ ատոնք անբավական դատվեցան, նամակագրություն մ'սկսիլ անվերջանալի, օրն իրիկուն տոմսակներու տարուբերին զբաղեցնել ծառաները, ծաղկանց փունջեր պատրաստել տալ, ղրկել և ընդունիլ ու վերջապես կոգին կամ Պյոյուք-Տերե կամ ուրիշ հեռու տեղեր ժամադրություններ կարգադրել, ահա Եվգինեի ռազմագիտական միջոցներն։

Յոսրովի՝ քիչ քիչ անհանդուրժելի երևցավ իր կնոջ ըն-

Քացքը։ Կռիվներն անպակաս դառնալ սկսեր էին. բայց Եվգինե պատերազմե փախուստ տվող չէր, ընդհակառակն. արդեն քոնսոլիտեի մեջ մի քանի մեծ կորուստներ Խոսրովի բնավորությունը բոլորովին դառնացուցեր ու համբերության չափը լեցուցեր էին։ Տանն անկարգությունն ու անխնամությունն որ շռայլության ծայրագույն աստիճանի հասեր էր, իր կնոջ մասին ամեն մանրամասնություններով հեղհեղված ամօթալի պատմություններ, ընտանեկան հարկին կործանման ապահով նշաններն էին։ Խոսրով թեև երբեք չէր սիրած, չէր ախորժած իր կնոջմեն, բայց քիչ մ'ալ սպասել որոշեց։

Դրամական կորուստներն ու ձախորդությունն որ քանի մ'ամսե ի վեր գինքը կը հալածեին, պաշտոնի հառաջդիմությամբ փոխարինել որոշեց. իր ամսականը ներկա վիճակին մեջ անբավական դարձեր էր նույնիսկ իր կնոջ զարդարանացն ու պարտքը դիզվեր էր չորս դին. ամսականի ու պաշտոնի բարձրացումը փրկության միակ ճամփան էր. դեռ ոչ ոք գիտեր անոր նեղության մեջ գտնվիլն. ամենքը գինքը հարուստ ու ազդեցիկ գիտեին. ժամ էր աղեկ ու արտաքո կարգի վարպետությամբ մը վերստին հաստատել իր կորսվելու մոտ եղող դիրքը. Խոսրով ազգային գործոց դարձուց իր հետաքնին ակնարկնե

Որ մեկին խոստմամբ, որ մեկին սպառնալյոք, որ մեկին համոզմամբ Խոսրով հաջողած էր արդեն կուսակցություն մը կազմել ժողովույն մեջ, որ իր գաղափարներն ի գլուխ պիտի հաներ։

Սահմանադրության վերաքննության վիճաբանությունը տեղի կունենար։ Խոսրով՝ պարզապես զայն չնչելու համոզումը հայտնեց. իր կարծյոք, Քաղաքական ժողովը կը բավեր ամեն ինչ տնօրինելու. ի՞նչ պետք է այս վայրախոս երեսփոխանաց որոցմե օգուտ չի կար. տասնևվեց տարվան փորձը մեջ տեղն էր իր համոզումն հաստատելու։ Մյուս կողմե ազգային վարժարաններու պետք չի կար որք ավելորդ ծախք մը ու հոգ մ'էին ազգին գլխուն։

Այն ատենվան մարդիկն հիմակվաններուն չափ անսիրտ ու անհոգի չէին։

Նախ ապշությամբ մտիկ ըրին այս նոր վարդապետության ու հետո որոտալից ընդմիջում մը ատենաբանին խոսքը կտրեց.

— Մի՛ մեղանչեք Սահմանադրության դեմ, կը պոռային ունկնդիրներն հազիվ զսպելով իրենց զայրույթը։

— Ի կարգ, ի կարգ, կը գոչեին երեսփոխաններն հետին կանգնած։

— Շարունակեցե՛ք, էֆե՛նտի, կը պատասխանեին մյուս կողմե Խոսրովի կուսակիցները։

Խոսրով այս ընդհանուր խռովության մեջ չի տկարացավ. այլ թևերը խաչաձև միացնելով իր կուրծքին վրա.

— Պիտի սպասեմ հոս որ Դիվանը գոնե խոսքի ազատությունն հարգել տա, ըսավ նա. չեմ կարծեր, ավելցուց սպառնալից ակնարկությամբ ունկնդիր ամբոխին, որ խուժանին հարձակմանց դեմ մեր անձերը պաշտպանելու համար կառավարության միջամտության դիմելու հարկադրենք զմեզ, ատենապետ էֆենտի։

Ատենապետին զանգակին ձայնն աղմուկին հետ կը շարունակվեր ու անլսելի կը դառնար։

Ամենեն կոշտ ածականներն, ամենեն ծանր խոսքերն իրարու դեմ կը փոխանակվեին։ Դիվանը շվարած իզուր լռություն կը պահանջեր։

Երեսփոխանները կզգային որ պատրաստված դավ մը կար, ամեն մարդ կացության ծանրությունը կըմբռներ, բայց ոչ ոք բացորոշ կերպով Խոսրովն ամբաստանելու կը համարձակեր, այնքան ծանոթ էր անոր վտանգավոր անձ մը լինելը։

Սահմանադրության հիմնադիրներեն ծերունի երեսփոխան մը խոսք պահանջեց ու պահ մը հայցողեցավ ստանալ. ալեհեր բայց դեռ առույգ ու կայտառ բժիշկ մ'էր տոքթոր Բ. պեյ, որո այնքան հուզյալ ձայնը լսված չէր դեռ. նա այն անձերեն էր որոց միշտ պատկառանքով ունկնդրություն կը լիներ։ Իր երիտասարդության ատեն Սահմանադրությունը տվեր էր ազգին իրեն պես մի քանի երիտասարդաց հետ խորհելով ազգին ապագային. բեղմնավոր ու ազատական խորհուրդ մ'էր զոր հրդացեր ու գործադրեր էին. իր երկն էր ազգային օրենքն և զավ-

կի մը չափ կը սիրեր զայն։ Այդ օրենքը չնչելու պահանջումն իր աչքին ոճիր մ'էր։

Ամենքը պահ մը լռեցին այդ մեծարելի ծերունվույն ձայնին առջև։

— Կը հիշեցնեմ Դիվանին, աղաղակեց նա, որ Սահմանադրության դեմ խոսելու ազատություն չի կա այս ժողովին մեջ, խոսելու ազատությունն հոդ կանգ կառնու. Դիվանին պարտքն է ժողովին կամքն հարցնել իմանալու համար թե կը հաճի՞ատենաբանին մտիկ ընել։ Ներեցեք որ ըսեմ նաև թե Դիվանին վեհերոտ ընթացքը ժողովին անարգանք մ'է։

Որոտընդոստ ծափահարություն մը մեկ կողմեն, գոռ ու գոչումը մյուսեն, վերսկսան մեծագույն սաստկությամբ։

Նախատինք չի բավեցին. Խոսրովի հակառակորդք քաջալերվեր էին ու ամենեն ծանր ամբաստանություններն ապտակի պես անոր երեսին կը զարնեին։

Վերջապես Դիվանին և քանի մ'ազդեցիկ երեսփոխանաց օգնությամբ վայրկյան մը կարգը վերահաստատվեցավ ու քվեարկության արդյունքն, ատենաբանն ունկնդրելու մասին, բացարձակ առավելությամբ «ոչ» մը երևան հանելով, Խոսրովի բոլոր հատակագիծներն հիմնահատակ կործանեց։

Վար իջավ բեմեն, կաս կապուտ կտրած ամոթեն ու բարկութենեն, բայց դեռ խրոխտ ու սպառնալից մեկնեցավ ժողովեն, մեկտեղ տանելով իր կործանյալ հույսերուն հետ վրեժխնդրական պատրաստություններ։

Խոսրովի մեկնելովը բեռ մը կարծես վերցավ ժողովին սրտին վրայեն. այն մարդուն վախեն ոչ ոք իր համոզումը կըրնար ազատությամբ հայտնել, այդ մարդն օտարական մ'էր, անոր հեռանալեն վերջն ամենքն իրենց լեզվին տվին. մին պարսավանաց քվե մը առաջարկելու չափ հառաջ գնաց. ժողովն ազգասիրական եռանդով մը հուզված էր. երեսփոխանները գիրար կը շնորհավորեին. ու այսպես վերջացավ այդ նշանավոր ու պատմական նիստը։

Խոսրով ետևե դարձավ։ Եվգինե դուրս ելած ու վերադարձած չէր դեռ, թեև ժամը 12ի մոտ էր. Խոսրով՝ արդեն քաջամամբ լեցված, իր կնոջ ընթացքն աննկարելի դատից. ընտանե-

կան հորիզոնին վրա մեծ փոթորիկ մը պատրաստված էր ու տիկնոջ վերադարձին կսպասեր պայթելու համար. ժամը կեսն էր ու ոչ ոք երևան ելած էր. ո՞ւր գացեր, ո՞ւր մնացեր էր. Խոսրով իր կատաղությունն սպասավորներուն դեմ դարձուցեր էր, չգիտնալով որի՛ դեմ հագուրդ տալ իր բարկությանը։

Մեկին քառորդ մնալով, Սվգինե տուն դարձավ բաց կառքով մը. հայտնի էր թե զվարճութենե մը կը վերադառնար, կերևեր թե քիչ մը ոգելից ըմպելիք ալ խմած էր, որովհետև այտերը վարդագույն, աչերը կարմրած, զվարթ ու բարձրաձայն խոսելով խնդալով վար ցատկեց կառքեն։

Սև կրնատինե ճոխ ու գեղեցիկ շրջազգեստ մը հագած էր որ անոր գիրուկ ու բարեձև հասակն ու ուռուցիկ կուրծքը կը ծեղմեր. մազերը սև, փայլուն ու երկայն, անգլիական ձևով ու վայելչությամբ հարդարված, հազիվհազ կամփոփվեին ատլասե ծոպերով զարդարված հարդե գլխարկի մը տակ՝ որո ձևն իտալացի ավազակներեն առնվելուն համար, պոիկան կը կոչվի։

Երեսը ներկած, դեմքը ճերմակ ու կարմիր, արտևանունքն ու հոնքերը սև, շրթունքը լայն ու հեշտավետ, ունգերը դողդոջուն, աչքերը փայլուն, կուրծքն՝ աննման ու խոստմնալից՝ թափանցիկ տանթելներով ծածկված, որ իր գահավեժ ելևէջովը կր մատնվեր, ձեռնոցները մինչև ուսն երկարած ու ձեռքն հովանոցի տեղ մեծագին խարազան մը, ահա այս ձևով Սվգինե իր ամուսնույն դեմն ելավ։

Խոսրով՝ առաջին անգամ ըլլալով՝ զարմացավ ու սքանչացավ այսքան վայելչության ու լրբության վրա։

Ի՞ր կինն էր այս գեղանի էակն որ զաշխարհ մոլորեցնելու կարող կր թվեր. Խոսրով ապշեցավ ու միանգամայն ներքին հպարտություն մը զգաց։

Ինչպե՞ս մինչև հիմա աչքին չէր զարկած այդ հրապուրիչ մարմինն, այդ պաշտելի կինն որ վեհերոտության օրենքներն անգիտանալուն համար թերևս այնքան գեղապանծ կերևեր։

Խոսրով հանկարծ վայրենի իղձ մը զգաց իր սրտին մեջ, հրաշնկ երկաթի մը այրվածքին նման. մոռցավ իր կացությունը, քայքայումն, այն օրվան պարտությունը, բարկությունը,

վրեժն ու ամեն ինչ։ Զարմանալի երևույթ մ՚էր ասի մարդկային տկարության, երբ մինչև այն վայրկյանը միայն մեծության, փառաց ու հարստության խորհուրդներով համակված այս մարդն՝ ո՛չ թե օտարուհվո մը հանդեպ, ո՛չ, այլ իր կնոջ համար, իր երկու տարվան կնոջ դեմը վավաշոտ ու հիմարական սերով մը կը տագնապեր։

Սպառնական շեշտ մը պատրաստեր էր, սակայն փայփայող ու ողոքիչ ձայն մը միայն ելավ բերնեն։

— Ո՞ւր մնացիր մինչև հիմա։

— Ես ալ ան՛ոկ մը չգիտեմ. ո՞ւր չմնացի որ. ցորեկվան ճաշեն վերջը ժամ մը միայն կորսնցուցի հարդարանացս համար. հետո տիկին Ա՞ին հետ Մասլաք գացինք. անցյալ օրվրնե որոշեր էինք. ո՞վ գտնանք հոն կը հավնիս. նախ և առաջ մեծ մարդերեն, էֆենտիներեն սկսինք, քանի որ այնպես հաճելի է ձեզի։ Կարապետ և Երվանդ էֆենտիներն իրենց տիկիններով միասին, անկից վերջն, այն երիտասարդ պատկերահանն որ մեզի մեկ երկու անգամ եկավ. գիտես որ շատ պաշտելի տղա մ՚է այդ տղան. հետո մեր Արմենակն իր եղբորորդվուն հետ որ Փարիզեն նոր եկած է հոս արձակուրդի ամիսներն անցուցնելու համար. շատ զվարճախոս անձ մը. երգեցինք, պարեցինք ու զբոսնեցանք, նամանավանդ բավական գարեջուր խմեցինք և շիտակն ըսելով ինձմե զատ ամենքը գինովցան։

Ովգինե ինքզինքը դուրս ձգելու իրավունք չուներ. գլորեց քան թե պատմեց այս ամենը մեկ շունչով։

Խոսրով պարզապես հմայվեր մնացեր էր։

Կարելի՞ բան էր որ մինչև հիմա մենկուացման մեջ թողած լիներ իր կինն ու ուրիշներ միայն ճանչցած ու պաշտած լինեին զայն. Խոսրով զգաց նախանձու որդն որ իր սիրտը կը կրծեր։

Այսչափ ատեն անփույթ ու անտարբեր, գրեթե թշնամացած մնալե հետո, հաշտության ու համակրության ճամփան խիստ գժվարին երևցավ. ի՞նչ ձևով պիտի սկսեր հայտնել անոր իր հանկարծական փոփոխություններ։

Ճաշի ատեն էր. Ովգինե զարմացավ որ այն իրիկունը նախատեսյալ կռիվը տեղի չունեցավ Խոսրովի կողմե, ընդհակա-

ռակն գրեթե համակրական ձև մը նշմարեց անոր վարմունքին մեջ. Խոսրով ճաշին վրա սովորականեն ավելի գինի խմեց ու իր կնոջ կատակներ ըրավ։ Եվգինե ասոր չէր սպասեր. հասկըցավ որ գաղտնիք մը կար ու իր կանացի բնազդմամբ չուշացավ իր ամուսնույն հաշտության փափագը գուշակելու։

Ինչպես ամեն անձնապաշտ կին, Եվգինե խիստ մեծ գաղափար ուներ իր անձին վրա. վաղ կամ անագան կսպասեր իր ամուսինն իր ոտից տակ տեսնել, ուստի Խոսրովի ընթացքը մեծ հաճույթյուն պատճառեց, բայց անոր փաղաքուշ խոսքերը գերազանց կերպով անհամ թվեցան իրենն։ Խոսրովի ո՛չ գգվանքին և ո՛չ անուշ լեզվին կարևորություն ընծայած էր երբեք, հետևապես անոր անձնատուր լինելը տեսնելով իր ցուրտ ու հակառակորդ բնավորությունը մեկդի չի ձգեց։

Խոսրով, գինվո շոգիներեն մոլորած, իր կինն համբուրել ուզեց. Եվգինե խորին ու անդիմադրելի զզվանք մը զգաց այս մարդուն փայփայանքեն։

— Թո՛ղ գիս, կը խնդրեմ, ըսավ սառն կերպով, այդչափ մոտութենեն չեմ սիրեր։

Ու իր սենյակն առանձնացավ ու դուռը փակեց։

Ցնորքներով, իղձերով ու խրատներով լեցուն գիշեր մ'եղավ այն առաջին գիշերն Հորում Խոսրով իր կնոջմեն հեռու մնալուն բոլոր կարոտն ու բոլոր դառնությունն զգաց։

Մտածեց որ ամուսնական կյանքը կարի ծանրակշիռ հանգամանք մը կզգենուր իր հիմարական տենչանքին պատճառավ։

Ինչպես ըսինք, առանց Եվգինեի համակրող կամ համակրելի լինելն ստուգելու ամուսնացած էր հետն անոր ազատությունն հարգելու պայմանավ. առևտրական գործ մ'էր զոր կատարեր էր թիվերու ու շահու վրա հիմնելով իր ամուսնությունն առանց սերն ի հաշիվ առնելու, ու հիմա որ անզուսպ ու անբացատրելի կիրք մը զինքն իր կնոջ ոտքը կը ձգեր, կը խորհեր, մեծ մտատանջությամբ, թե ի՞նչ տեսակ ընդունելություն մը պիտի գտներ հոն։

Եվգինեի բնավորության նայելով, այդ ընդունելությունք քաջալերիչ լինելե խիստ հեռի կը թվեր։

Անցան մի քանի օրեր, հաղթական կինն իր զբոսալից ընթացքը փոխելու կողմը չէր բնավ. Խոսրովի բոլոր ներողամտությունն ու բոլոր մտերմության փորձերն ի դերև ելան։

Եվգինե կարծես զինքը ծայրահեղ միջոցներու դիմել տալու առիթ կորոներ։

Խոսրովի քաղցրության ու համակրության վերջին ջանքերը կատարելեն կես ժամ վերջն էր որ նորա կինը տիկնոջ մը հետ ժամադրություն մը պատճառ բռնելով դարձյալ մեկնելու կը պատրաստվեր։

Ամուսինն զգաց բարկության կրակն որ իր գլուխն ու միտքը կը հեղաշրջեր։

— Դուրս չպիտի՛ ելնես, գոչեց նա կիրքեն ու զայրույթեն կուրցած, երբ որ տեսավ որ Եվգինե դուրս ելնելու վրա էր։

— Ձեր կալանավորը չեմ կարծեմ ու դուք բանտապահ մը չեք։

— Ամուսինդ եմ ու ի՛նձ պիտի հնազանդիս։

Երիտասարդ կինն այս ձևերուն վարժված չէր. ինքն ալ զայրանալ սկսավ։

— Հնազանդությո՛ւն, բսավ նա, հա՛, հա՛, չիտակը զիս խնդացնել սկսար, ես ո՛չ քու աղախինդ և ո՛չ ալ սպասավորդ եմ, քու ծառաներուդ հետ վարվե այդպես։

— Չպիտի՛ ելնես դուրս, կը հասկնա՞ս, գոչեց էրիկն ինքնիրմեն բոլորովին դուրս ելած ու բռնությամբ քաշելով կնոջը թևեն։

Եվգինե դեղնեցավ։

— Դուն ա՛լ չափն անցուցիր, այստեղ Խարբերդի լեռը չէ, ինծի նայե՛, բսավ անոր, քու հայրենակիցներեդ շատերը մեր տունն իբրև սպասավոր պահած ենք, դուն ալ կրթությամբ առնոնցմե տարբերություն չունիս եղեր. վրաս ձե՛ռք վերցնել, ալ ամեն ինչ վերջացավ, հիմա հորս տունը պիտի երթամ. շո՛ւտ, ջուտ կառք մը բեր, Հակո՛բ, պոռաց սպասավորին՝ որ էրիկ կնոջ մեջ տեղի ունեցած կռիվն հասկնալու համար դրան մոտ եկեր էր։

Կռիվը ծանր կերպարանք մ'ստացավ. Խոսրով իր կիրքեն չփոթած իր կնոջ վրա իշխանություն ունենալ կարծեր էր. անոր

պատասխանն իր դիրքին ինչ լինելն հասկցուց. Ովգինեի պատասխանը պաղ ջուրի տուշի մը պես անոր խելքը գլուխը բերավ. արդարև անկե հնազանդություն չէր կրնար պահանջել, իրենց ամուսնության առաջին պայմանն էր այդ. հորը տունը վերադառնալու սպառնալիքը մանավանդ զինքն ահաբեկեց, անկից զատվիլն ուրիշներու, բացարձակապես ուրիշներու հանձնել էր զայն։

Խոսրով կացությունն ըմբռնեց. ինքն ամուսնական իրավունք ու իշխանություն չէր ունեցած բնավ ու հիմա որ իր կնոջ ոժիտն սպառեր լմնցուցեր էր, հիմա որ նեղությունն հասնելու մոտ էր, կնոջմեն բաժանումն աշխարհ իր վրա ծիծաղեցնելու միայն պիտի ծառայեր։

Այս գործնական ու դրական մարդն ամենեւ մեծ վրդովմանց մեջ անգամ իր հաշիվը չէր մոռնար։

Հետևապես սպառնալյաց ճամփան թողուց աղաչանաց թելը ձեռք առնելու համար. ո՛չ ոք Խոսրովին չափ հայողակ էր նվաստանալու արվեստին մեջ։ Պահ մ՛առաջ խրոխտ ու բիրտ լեզու գործածող այս մարդը չի վարանեցավ իր դեմքը փոխելու, աղաչելու, ու հեծկլտյալ ձայնով, աչերն արտասվալից, իր կնոջ ոտքն ինկած, ներումն ուզելու անկից։

— Գիտեմ, կր մրմնչեր նա հեկեկանոք, խառնվելու իրավունք չունիմ քեզի, Ովգինե, դուն քու տերդ ես. մի՛ մեղադրեր զիս. միշտ կր լքանես էրիկդ ու ուրիշներու հետ կր զվարճանաս, անպատիվ բան մր չես ըներ բնավ, ադոր տարակույս չունիմ, բայց ես ալ ամուսինդ եմ ու քեզ կր սիրեմ...։

Ով արդարև կր սիրեր հիմա կատաղի ու մոլեգին սիրով...։ Ու այս աղերսարկու եղանակին վրա շարունակեց։ Իր հեշտամոլ ու վայրենի իղձերը՝ կնոջը մոտ ըրած թախանձանոք ավելցան ու զայրացան, և այս հուզմունքով իր պերճախոսությունը կարծես թե համոզիչ դարձավ. Ովգինեի քով ծնրադրեր, անոր ձեռքերը կր բռներ ու կր համբուրեր, կր հոտոտեր, կր գգվեր. մանկամարդ կինր չէր պատասխաներ. այս աստիճանի անզուսպ կիրք մ՛ազդած լինելն անոր անձնասիրությունը կր գգվեր։

Ովգինե գոռոզացավ ու սարսափեցավ միանգամայն։ Այս

բուն սիրո արտահայտությունն այն մարդու կողմե որ իր էրիկն էր, վերջապես զինք վախով լեցուց։

— Տղա մի՛ ըլլար, ըսավ վերջապես իր էրիկն ոտքի վրա հանելով, անդին նստե, ծառաներն ի՞նչ կրսեն հիմա։

Եվգինեի ձայնն հանդարտ, գրեթե քաղցր էր. Խոսրով ուրախութենե արբշիռ եղավ։

— Ես քու գերիդ, քու շունգ եմ, Եվգինե, ըսավ այս հիմար մարդը բոլորովին խելացնոր։ Ինչպես կուզես այնպես վարվե հետս, բայց մի՛ սրդողիր ինծի հետ. գնա՛ զվարճացիր, դուն զվարճությունը կը սիրես, ես ալ քիչ մ'աշխատություն ունիմ։ քեն մի՛ պահեր ինծի դեմ. սիրուս չափազանցությունը զիս հուզեց. գիտես որ միշտ քու հաճոյիդ համակերպած եմ։

Ու այն օրեն Խոսրով իր կնոջ ճշմարիտ գերին ու շունը դարձավ. մեծ պահանջումներ չուներ. իր կնոջ մեկ ժպիտը կամ հողմահարով երեսին զարկած մի փոքրիկ ապտակն իբրև գրգվանք կը բավեր. այն օրվան կռիվն վերջն, ա՛լ Խոսրով բնավ չհամարձակեցավ կնոջն ո՛ւր երթալն, որի՞ երթալն հարցնել կամ փնտրել. կնոջը բարի կամեցողությանը ձգված էր այս կետն որ քիչ կարևոր չէր, քանի որ Խոսրովի ձեռքն հասած անստորագիր նամակներ իր կնոջ այցելությանց վրա տարօրինակ մանրամասնություններ կը հաղորդեին։

Հանկարծ իր կինը տունեն ունեցած բացակայությունը վերջացուց. Խոսրովի անհավատալի թվեցավ աոչի բերան ասիկա։ իրեն հաճելի՞ ըլլալու համար արդյոք Եվգինե տունը կը կենար։

Ամուսնույն այս քաղցր տարակույսը շուտով փարատեցավ։ Դյուրությամբ նշմարեց որ իր պրիչի ընկերներեն հարուստ վաճառական մը, որու հետ գիշերներն, ուրբաթ ու կիրակի օրերը կը միանային թուղթ խաղալու համար, իր կնոջ համակրությունը շահած կերևեր. հասկցվեցավ որ Եվգինե հատկապես անոր թուղթի համար իրենց տունը գալիք օրերն այցելության չէր երթար։

Խոսրովի այս խաղի ընկերը՝ պարոն Մարեմյան՝ ամենեն դյուրավ հաղթվող ու ամենեն առատաձեռն թուղթ խաղացողներեն մին էր. նամանավանդ Խոսրով քանիցս փոխառություն-

ներ ըրեր էր անկից և չէր կրցած դեռ վճարել։ Մարեմյան առանց նախկին հաշիվները պահանջելու ի հարկին անոր ծառայություն ընելու պատրաստ մեկն էր. այսպիսի մարդե մը անկարելի էր հարաբերությունը կտրել։ Այր ու կնոջ սիրալիր ընդունելությանը վրա հետզհետե այս վաճառականը տանը մեջ անպակաս հյուր մը կամ լավ ևս է ըսել տանուտեր մը եղավ։ Խոսրով ցորեկվան ու իրիկվան ճաշի թող չէր տար զայն, վասնզի երկու հարյուր ոսկվո նոր փոխառություն մ'ընելու վրա էր. նեղությունը շատցեր ու պահանջատերները տան դուռը ձեռք առեր էին։

Բայց Եվգինե ի՞նչպես զատվեր էր իր բազմաթիվ մտերիմներեն։

Եվգինե քծնող ու հեգնող բնավորություն մ'ուներ. հարուստ վաճառականը մինչև ցայն վայր ծանոթ էր իրեն այս կամ այն դերասանուհվույն համար ըրած շռայլ ու խելառ ծախքերովը։

Եվգինե իր ամուսնույն բերնեն անգամ քանիցս լսած էր անոր արտակարգ նվերներու։

Կանանց համար ամեն զոհողություն ընելու պատրաստ երևցող այս մարդն իր հետաքրքրությունը շարժեց. մոտեն ճանչնալ կուզեր թե ի՛նչ տեսակ անձ մ'էր այս Մարեմյանը. ուստի իր սովորության հակառակ ուրբաթ օր մը դուրս չելավ ու էրկանը պրիչի խաղին ներկա գտնվեցավ. անխելք մեկը կարծեր էր զայն, բայց տեսավ որ խոսակցության մեջ բավական հանճարեղ էր. իր համբավավոր ու մեծածախ արկածնեբուն վրայոք եղած կատակներու մասին՝ իշխանի մը վայելուչ համեստությամբ ու փորձառու սիրահարի մը պատիվ բերելիք զգուշավորությամբ պատասխանեց նա։

Այս համեստությունն ու զգուշավորությունը խիստ հաճելի երևցավ Եվգինեի. անոր վայելուչ շարժմունքն ու ձևերը, հագուստն ու խոսակցությունը լավագույն տպավորություն հառաջ բերին։

Մարեմյան ամուրի հետևապես ազատ էր. երեսունևհինգ տարեկան կար ու հետևապես պատանի սիրահարի մը նման փուփոխամիտ չէր. իր էրկանը մտերիմն էր և հետևապես անոր հետ տեսնվելու մեջ դժվարություն չկար. հարուստ էր և հետե-

վապես քիչ մը բան կրնար վրա առնուլ անկից։ Հարկ է խոստովանիլ որ Եվգինեի այս տրամաբանությունը կատարելապես ուղիղ էր։

Մյուս կողմե Մարեմյան այն վարպետորդիներեն էր որք խառնագնաց ու անառակությամբ բեղմնավոր անցյալի մը պարգևած փորձառության շնորհիվ, մեկ նայվածքով պաշտելի կին մը՝ պարկեշտ կնոջմե մը կը զանազանեն։ Եվգինե՝ անտարակույս՝ նետվելու որս մը չէր։

Երկու կողմն՝ այսպես պատրաստված՝ շուտով զիրար հասկըցեր էին։ Մարեմյան չէր ուշացեր Եվգինեի մյուս տարփավորներն ի բաց վանելու, ու ինչպես ամեն հազթանակի իրավունքն է՝ պատերազմի դաշտն իրեն մնացեր էր միայն։

Ահա այս եղանակավ Եվգինե իր բացակայությունները վերջացուցած էր. սակայն կամաց կամաց հիմար ու անբացատրելի տկարությամբ մը կապված էր իր նոր տարփավորին. այս խրոխտ ու ամբարտավան կինն՝ որ իր հոմանյաց հետ իր էրիկեն լավագույն կերպով չէր վարվեր մինչև այն ատեն՝ Մարեմյանի քովը կատվի մը պես գգվալից ու համբերող դարձած էր։

Այս նոր կապակցությունն երկար չտևեց ամեն կողմ իմացվելու համար. Խոսրով լոելյայն ընդունած էր այս ծանր կացությունը. Մարեմյանի, Եվգինեի ու իր մեջ որոշված ու ճանչըցված տեսակ մը ամոթալի դաշնադրություն մ'էր որ երեք կողմերն հավասարապես գոհ պիտի ըներ։

Քիչ մ'ատեն վերջն էր որ ի լրումն դժբախտության Խոսրովի պաշտոնը խնայողության համար կը չնչվեր, և նոր պաշտոնի մը կոչվելու հույսեն ի զատ բան մը չէր մնար նմա։

Սակայն իր տան դրությունը փոփոխություն չի կրեց. հասարակությունը զարմացավ ու ցավեցավ որ այս պաշտոնանկ մարդն իր առջի ճոխ ու բազմածախ ընթացքը կը պահեր։ Փայլուն դիրքի հասնող մարդը միշտ ամենուն նախանձը կը շարժե իր շուրջն, ու ամեն անկում գոհացում մ'է զոր բախտն այդ չար հոգիներուն կը նետե։

Իր տան մեջ միայն Խոսրովի կացությունն ստորնացեր էր. նա՝ ծախուց տնօրեն մ'էր ավելի քան թե այն տան մեծը։

Չի կա վիճակ մը որո մարդ չի կարենա սովորիլ ու հան-

գուրժել։ Մարեմյանի չնորհիվ ու ստակով պահվող այդ տան մեջ Խոսրովի վիճակն անտանելի էր անտարակույս արժանապատվության զգացումն ունեցող մարդու մը համար։

Շաբաթին այն գիշերներն հորում Մարեմյան սովոր էր Խոսրովի տունն անցունել, այս տանտեր-այցելուին ամեն հաճույքներեն և ոչ մին կրնար մոռցվիլ. սպասավորներն ամենեն լավ կը ճանչնային այս ազնվական հյուրին մեծ նշանակությունը։

Մարեմյան՝ իր քաղաքավար ձևերուն տակ՝ բիրտ ու լիրբ բնավորություն մը կը ծածկեր. Եվգինեեն ամեն գոհացում ստանալե հետո երևան ելավ անոր անհանդուրժելի վարմունքն որում չէր սպասվեր բնավ։ Բարկության մր միջոցին, Մարեմյան՝ «Կորսվե, ա՛նպիտան» պոռացեր էր անոր երեսին։

Խեղճ կինը գիշերը մինչև լույս արտասվեց. առավոտուն Մարեմյան տեսավ անոր կարմրած աչքերը, բայց բառ մ՛անգամ չզիջավ արտասանել իր առջի իրիկվան կոպտությունն արդարացնելու համար և հետևյալ իրիկունն ալ իր սովորության հակառակ տուն չեկավ։

Խոսրով այս անհամաձայնության վրայօք պզտիկ հով մը առեր էր քովի սենյակեն լսելով անոնց բարձրաձայն վեճն ու կռիվը։

Մարեմյանի չի գալն իր կասկածը հաստատեց. այս մարդուն հետ ավրվելու ատենը չէր բնավ ու անուղղակի կերպով Եվգինեն ստիպեց նամակ գրելու ու հաշտվելու անոր հետ։

Երիտասարդ կնոջ խրոխտ բնավորությունը քիչ մ՛ատեն դիմադրեց այս նվաստության փորձին. ո՛չ ոք մինչև ցայն վայրկեան կամ տարփավոր, անտես ըրած էր իրեն դեմ այդ աստիճան կրթության պայմանները. բայց վախցավ որ Մարեմյան անձնասիրություններ վիրավորած նկատե եթե հաշտության առաջին խոսքն ինք չի բանա. ինքնիրեն ըսավ թե իրեն կին՝ իրեն կիյնար ինչ որ ալ ըլլար իրավունքն, առաջին դիմումը կատարելու և ինքնիրեն արդարացում մ՛ալ գտնել աշխատեցավ անոր կոպիտ վարմունքին համար. թերևս անոր բարկացած, խիստ բարկացած մեկ վայրկենին հանդիպած էր. ինչո՞ւ մինչև այն օրն այս կերպ ընթացք մը չէր ունեցած. էրիկ

մարդիկ շատ անգամ իրենց գործի մեջ ունեցած գայրույթը տան մեջ երևան կը հանեն. ու ասոնց պես հազար ու մեկ պատճառ որոնեց կամ գտավ Մարեմյանի նամակ գրելու համար Մարեմյան հաշտվեցավ. բայց նոր կռիվներ չուշացան ու այս անգամ ավելի հեռու գացին. Եվգինե նշմարեր էր որ Մարեմյան՝ իր հույն սպասուհվույն պետք եղածեն ավելի ուշադրություն դարձուցած էր. ճամփա տալ ուզեր էր ու Մարեմյան բացեիբաց դեմ էր կեցեր։

Օր մը կռիվն այն աստիճան հասավ որ Մարեմյան ձեռք վերցուց Եվգինեին վրա և այս հիմար կինը չի կրցավ ինքզինքը պաշտպանել։ Ուրիշներու դեմ խրոխտ ու հանդուգն եղող այս կինն իր նոր տարփավորին դեմ արտասվելե ու աղաչելե ուրիշ բան չուներ և իր սերը՝ տեսած կոպտություններեն նվազելու փոխարեն կավելնար։ Մարեմյանն իր ձեռքեն հափշտակել կուզեին ուրիշ կիներ։ Ո՛չ, թույլ չպիտի տար։ Իր տարփավորն՝ հագեցած ու ձանձրացած՝ ցրտություն կր ցուցներ, ուստի չէր կարող իր սիրույն հենլով բան մր պահանջել անկից և անոր գթությանը միայն կրնար ապաստանիլ։ Ինչո՞ւ չէր կրնար Եվգինե զատվիլ այս մարդեն։ Դրամի խնդիրն իր աչքին կարևոր չէր բնավ, բայց իրեն ամոթ պիտի համարեր թե որ իր տարփավորն՝ որով այնքան պարծենցեր էր, զինքը լքանելով ուրիշներու հետ ապրեր բացե ի բաց։ Հետևաբար ստիպված էր անոր կամքին համակերպիլ սպասելով որ հարմար առթիվ ձեռք բերե վերստին իր կորուսյալ ազդեցությունը։

Իր հույն սպասուհին սակայն տեսած քաջալերությամբը տանը մեջ ոսոխուհի մր դարձեր էր. Եվգինե չէր կարող բան մր հրամայել անոր. քանիցս նա բացարձակ կերպիվ դեմ դրեր ու պոռացեր էր իր տիրուհվույն երեսին սպառնալով անմիջապես մեկնիլ. Եվգինեի ուզածն էր այս բայց կը վախնար որ հետևյալ օրը Մարեմյան զինք պատասխանատու պիտի բռներ այդ աղախնույն հեռացմանը համար. հետևապես հարկ էր լռել ու չի լսելու զարնել անոր հոխորտանքը։ Նա քիչ քիչ ամեն ծառայություն վերջացուցած էր ու միայն Մարեմյան եկած ատեն կերևար ու անոր կը սպասավորեր. իսկ անոր հոն չեզած ատենը իր զարդարանքը միայն կուտար տան տիրուհվո պես

Եվգինե դեռ բացորոշ կերպիվ անոր հարաբերությունը չէր տեսած իր տարփավորին հետ բայց մեծապես կը կասկածեր որ համբույրի ու գրկապնդման գլուխները շատոնց ի վեր կը կարդային նոքա առտուները Մարեմյանի սենյակին մեջ ուր սպասուհին հագուստները մաքրելու ու նախաճաշ տանելու համար կերթար, մինչդեռ ինքը՝ շնչհատ, գունաթափ ու դողդոջուն, ոտքին ծայրերուն վրա կոխելով, փակ դրան ետևեն անոնց խոսակցությունն ըմբռնել կը ջանար։

Այո՛, պարտավոր էր դեռ քիչ մ՛ալ համբերել. քե որ նոր կոիվ մ՛ըլլար Եվգինե իր սպասուհույն քով պզտիկ պիտի մընար. ուստի օգուտ չի կար անտարբեր դարձող տարփավորի մը գլխու ցավ տալե. իր արցունքն՝ որ անպակաս դարձեր էր, մեկու մը չպիտի ցույց տար. գաղտնի, ամենեն գաղտնի պիտի պահեր իր ցավն ու վիրավորյալ անձնասիրությունն և գոհ ու զվարթ դեմք մը պիտի զգենուր առաջվան պես ամենուն դեմը։

Գարունն եկեր էր և Մարեմյան՝ Խոսրովի նոր պաշտոնի մը համար աշխատելով հանդերձ ծախուց մասին դժվարություն հարուցած չէր։ Վերին Վոսփորի մեջ տուն բռնել որոշեր էին այն տարի և Եվգինե՝ որ Ենի-Մահալլեն կը սիրեր՝ առաջարկեց հոն անցունել ամառն։

Ենի-Մահալլե՝ ամառը մեծ մասամբ հայաբնակ՝ հայաբնակ վայրերու ամեն թերություններն կամ առավելություններն ուեներ. հեռավորագույն գյուղերու մեջ ամեն ընտանյաց մեջ անցած դարձածը հոն կը պատմվեր ու կը քննվեր։ Հոն՝ Մարեմյան՝ քիչ ատենեն վերջը տեղեկացավ ի մեջ այլոց, թե Տիգբան՝ որո մի քանի անգամ ջուրերը հանդիպեր էր նորատի կնոջ մ՛ընկերացած, հարուստ փաստաբան մ՛էր որ Պյոյուք-Տերե կը բնակեր և ըստ երևույթին այդ ընկերացած կնոջ տարփավորն էր։

Մարեմյան՝ մեկ տեսնելովը Սուրբիկի հավներ էր. անոր վրա գտեր էր միայն այն պարզության շնորհն որ պարկեշտության հատուկ է, և որ անառակ մարդոց աչքին ամենեն մեծ հրապույրն է։ Իր մեծ ճանաչողությամբ, հասարակաց տեղեկությանց հակառակ, անմիջապես հասկցեր էր որ անոր երիտասարդ ընկերը տարփավորի մը ձևը չուներ բնավ։

Ավելին գիտնալու հարկ չի կար այս մարդուն. Տիգրանին բարեկամուհվուչն ետևեն իյնալու համար անմիջապես անոր հետ տեսնվելու միջոցները փնտրեց բայց չի հաջողեցավ. իր ծանոթ ընտանիքներեն հազիվ մի քանիին հետ Սուրբիկ գլխի բարև մը կը փոխանակեր. իսկ անոր այցելությունները չի կայի պես բան մ'էին։ Մարեմյան այս կողմեն հուսակտուր՝ Սուրբիկի ամեն տեղ հետևելու ճամփան ձեռք առած էր, այնչափ որ իր պահանջող ու ամբարտավան նայվածքը նորատի կնոջ ուշադրությունը գրավել ու զինքն անհանգիստ ընել սկսավ։

Մարեմյան սխալած չէր Տիգրանի վրայոք ունեցած կարծյացը մեջ։ Տիգրան՝ անշուշտ կը սիրեր, խանդակաթ համակրությամբ կը պաշտեր Սուրբիկը, բայց դեռ սիրո բառ մը արտասանած չէր անոր երեսին։

Անցյալ օրերը, անոր ամուսնույն վիճակը, Սուրբիկի անպաշտպան կացությունն և այս տեսակ հազար նկատումներ՝ որք Մարեմյանի պես մարդոց համար կին մը նվաճելու նույնչափ պատճառներ են, Տիգրանի աչքին այնքան բացարձակ արգելքներ էին. իր սրտին խորը պատկեր մը կար զոր կը պաշտեր, ու այդ պատկերը թերևս Սուրբիկինն էր. բայց իր վարմունքն եղբայրական գորովո սահմանը չպիտի անցներ։

Սուրբիկ իր պաշտպանության հանձնված էր և Տիգրան որ քաջ գիտեր թե որքան մեծ է կանացի տկարությունը, նախանձոտ եղբոր մը պես կը հսկեր անոր վրա։

Գյուղ տեղվանքը իրարու ծանոթ եղողները շուտով կը տեսնվին։ Խոսրով Արամ էֆենտին ու Տիգրանը կը ճանչնար և կյուրակե առավոտ մը, եկեղեցիեն վերադարձին այցելություն մը տվավ քյոշկը։

Տիգրան հոն էր։

Երկու տարիեն ավելի էր որ այս երկու հին դասընկերները զիրար տեսած չէին։ Պաշտոնի մեջ Խոսրովի հպարտությունը Տիգրանը բոլորովին իրմե հեռացուցած էր. բայց անոր անկումը, նեղությունը զորս երիտասարդ փաստաբանը քանիցս ատիթ ունեցած էր իմանալու, իր բարկությունը մոռցնել տված էին։ Դպրոցական այս միակ ընկերը մնացեր էր պատանության տարիներեն. և Տիգրան զայն տեսնելուն չի կրցավ իր հուզ-

մունքն ու ուրախությունը զսպել։ Խոսրով ալ անտարբեր չի կրցավ մնալ. այո՛. միշտ այն անկեղծ բարեկամն էր այս երիտասարդն որո այնքան բարիքը վայելած էր։

Չիրար հարցուցին, իբրև թե ճամփորդութենե վերադարձած լինեին.

— Ենի-Մահալլե եկանք ձեզի մոտ ըլլալու համար, ըսավ Խոսրով, հուսամ որ գոնե ասկե վերջը չես մոռնար զիս։

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Տիգրան, բայց դուն ալ մեզ մինակ մի թողուր. երեք հոգի եղանք հիմա, Արամ էֆենտին շատ դուրս չելներ, բայց դուն կրնաս գալ, գոնե պուտ մը կըրնանք դարձնել և ժամանակը կանցնի։

Պրիչի փառքի՞ մը. ասիկա Խոսրովի համար հաճելագույն առաջարկ մ'էր։

Այսպեսով հաստատվեցավ նորեն տեսությունն այս երկու վաղեմի ընկերաց մեջ. Խոսրով քանիցս եկավ Տիգրանի տունն և մի քանի անգամ Եվգինեին հետ միասին պատահեցան անոր Գյոյուք-Տերեյի մեջ. Տիգրան պարտավորեցավ փոխադարձ այցելություն մը տալ, բարեբախտաբար Մարեմյան հոն չէր ու երիտասարդը չէր գիտեր իր բարեկամին ընտանեկան կացությունը։

Տիգրան՝ Խոսրովի հետ կրկին տեսնվելովն իր առջի անձնավիրության փորձը տվավ։ Բարեկամներ ուներ ազդեցիկ։

— Դատական պաշտոն մը կուզե՞ս, ըսավ օր մը Խոսրովին, քեռիս կրնամ առնուլ, բայց դուրս երթալ հարկ պիտի ըլլաս։

— Ինչ ալ ըլլա կընդունիմ, պատասխանեց նա, պաշտոնանկ մնալը զիս կը հուսահատեցնե։

Ու շաբաթ մը անցնելե վերջը Սեբաստիո մեջ երեք հազար ղրուշով պաշտոնի ավետիսը ստացավ։

Խոսրով հիրավի հուսահատ վիճակի մը մեջ մնացեր էր։ աչվրներն լեցվեցավ երբ իր բարեկամն եղբայրության այս վերջին ապացույցը տվավ։ Անոր ձեռքը համբուրել ուզեց...։ Եվգինե ալ իր շնորհակալությունը հայտնեց։ Եվ այս միջոցավ իրենց կապակցությունն ավելցավ։

Մարեմյանի փափագած բանն էր այս մտերմության հաստատությունն. միայն այս հինավուրց անառակը կը վախնար

թե խիստ գեշ տպավորություն մ'ըրած կրնար ըլլալ Տիգրանին վրա ամեն կողմ Սուրբիկի հետևած ըլլալովը ու երբ հասկցեր էր թե Արամ էֆենտիի կինն՝ անոր բացառիկ պաշտպանության ներքև էր, որոշեր էր Տիգրանի թե ոչ բարեկամությունը, գոնե չեզոքությունն ստանալ։

Մյուս կողմե Եվգինե խորամանկ ու բարկացոտ էր. ուստի իր այս նոր տարփանաց վրա ո՛ևէ կասկած գտնվելու չէր, վասնզի Եվգինե կարող էր ի դերև հանել իր բոլոր խորհուրդներն և գիտեր թե նա իր սերը պաշտպանելու համար ամեն միջոց ի գործ դնելու մասին վարանող կին մը չէր։

Ուստի ուշադրություն ըրավ Տիգրանի այցելության եկած ժամանակ Եվգինեի տունը չի գտնվելու, միանգամայն դադրեցուց այն ուշագրավ հետազոտությունը զոր Սուրբիկը դուրսը պատահած ժամանակ սկսեր էր։ Կատարյալ, խաբվելու չափ կատարյալ անտարբերություն ցույց տվավ անկից վերջն ամեն ատեն որ հանդիպեցավ անոր։

Արարատյան Ընկերության դաշտային պարահանդեսն ամենուն միտքն է դեռ. պոլսեցվոց այս տեսակ շքեղ երեկույթ մը բիչ անգամ պատրաստված է։

Շաբաթ մ'առաջ ամեն ոք պատրաստության մեջ էր։ Հայերը շռայլության մեջ միշտ հառաջադիմությամբ փայլած են։ Հաշիվ եղավ որ այն շաբթուն Փերայի խանութներուն տարվույն մեջ ամենեն շատ առևտուրն ըրած միջոցն էր։

Ամեն կողմ խոսակցության նյութն այս պարահանդեսն էր։

Արամ էֆենտիի տունն ալ՝ ուր պրիչի փառքի մը կը խաղցըվեր, նույն երեկույթին վրա էր խոսքը։

Սուրբիկ՝ իր բոլոր փափագին հակառակ երթալու կամք չէր հայտներ. Տիգրան բան մը չէր ըսեր ու խոսրով միայն կը պընդեր երիտասարդ կնոջ որ ներկա գտնվի.

— Իմ կինս ալ հոն պիտի ըլլա, կըսեր, տեսակցության առիթ մը կունենաք։

Իսկ Արամ էֆենտի բռնադատեց որ Սուրբիկ անպատճառ երթա պարահպնդես. հարկ եղավ ուրեմն համակերպիլ. բայց կես գիշերեն ժամ մը վերջը պիտի դառնար։

Պարահանդեսի գիշերն է։

Արտակարգ ոգևորություն կա Պյոյուք-Տերեի ափունքը։ Պարտեզն անհամար չահերով ու լույսերով կը փայլի ընդարձակ ամփիթատրոնի մը նման. բազմությունն ամեն կողմե հետզհետե կը հասնի ու երաժշտությունն իր եռանդուն ձայնը կը լսեցնե։ Մեկ նայվածքով կրնաս հոն նշմարել ամենեն բարձրադիր հայերն իրենց ընտանյաց հետ միասին. պարի վայրն ամեն կողմ լեցուն է։

Ծառի մը տակ երիտասարդ մը ու մանկամարդ կին մը կը խոսակցին։

— Տիկին, կրսե երիտասարդը ձեռքերն աղաչավոր դիրքով մը միացուցած, գիտեք որ շատոնց ի վեր կարոտ ու զուրկ քողուցիք զիս ձեր տեսութենեն. ափսո՜ս, առջի օրվընե գուշակեցի իմ բախտս, բայց չի կրցա մեկդի ընել զայն. տարիե մը ի վեր հոս, հոս միայն հանդիպեցա ձեզի։

— Թողեք զիս, կաղաչեմ, կը պատասխաներ կինն, այս տեղ առանձին մնալնիս վայելուչ չէ, ամուսինս կրնա գալ...։

— Ատեն մը այդպես չէիր խոսեր ինձ հետ, Եվգինե՛, կը կրկներ երիտասարդն, ամուսի՞նդ չէ քե ուրիշ մը։

— Արմենա՛կ, գոչեց կինը բարկությամբ։

— Թող չեմ տար զքեզ այս գիշեր, կուզե Վառեմյան գա, կուզե Մարեմյան։ Իմ իրավունքս ավելի հին է։

— Ամուսնույս քովը տար զիս, ապա քե ոչ քաշվե։

— Ես այդ տեսակ բան չեմ գիտեր. ու այս ըսելով երիտասարդը նորատի կինը գրկելու ու համբուրելու կաշխատեր։

Եվգինեի համբերությունն սպառեցավ։

— Անդին գնա, հիմա պիտի պոռամ։

— Համբույրով մը բերանդ կը գոցեմ։

Կինը ճիչ մ՝արձակեց։

Երիտասարդ մը, որ այն կողմեն կանցներ, մոտեցավ. Արմենակ մեկդի քաշվեցավ, մինչդեռ կինը շվարած ու զայրացած գոչեց.

— Աղատեցե՛ք զիս սա անպիտանին ձեռքեն։

Տիգրանն էր մոտեցողը. տեսավ ու ըմբռնեց տեղի ունեցած տեսարանն։

— Ուրիշ տեղ մը տարբեր կերպով պիտի վարվեի ձեզ հետ, հոս ղձեզ վռնտել տալով պիտի բավականանամ։

Եվ այն միջոցին անցնող հյուրամեծարի մը միջոցավ դուրս ընել տվավ և Եվգինեն թևն առնելով պարի դաշտը դարձավ։

Մազուրքա մը կը զարնվեր. աչքով Սուրբիկը փնտրեց, տեսավ որ Խոսրովի հետ էր։ Ինքն ալ Եվգինեի հետ քիչ մը պարել ուզեց։

Ոչ ոք Եվգինեի չափ քաջ պարող էր. Տիգրանի թևին վրա բան մը չի կար ծանրացող, այլ իր երեսին հեշտավետ բուրում մը ու իր քովն զմայլիչ հյուր մը որ պարողներու հորձանքին մեջեն իրեն հետ կը սրանար։

Տիգրան բնավ այնքան հաճույք զգացած չէր. շրջան մը միայն ընել ուզեր էր ու այն ատեն միայն կեցավ երբ երաժշտությունը դադրեցավ. անկից վերջը բատրիլ ու հետո վալս մը պիտի լիներ ու այս վալսին համար խոսք տվին իրարու և պյուֆեն ուղևորեցան։

Սուրբիկ հոն էր Խոսրովի թևը մոտած։

Տիգրան անշուշտ իրավամբ խորհեր էր թե չարախոս բազմության մը մեջ, ուր արդեն տեսակ տեսակ տարաձայնություններ կը դառնային իր մասին, որքան ալ մաքուր ու անկեղծ լիներ իր սիրտը, պատշաճագույն էր որ Արամ էֆենտիի կինը մինչև վերջն իրեն հետ ի միասին չի տեսնվեր ու տեղի չի տար նորանոր բամբասանաց։

Ինչե՞ր չէին ըսեր մինչև այն ժամանակ. Տիգրան Սուրբիկի սիրահարն էր. ո՞վ կը տարակուսեր ադոր. և ահա նորատի կինն, որ իր հիվանդ ու ծերունի ամուսինը լքանելով վարձկան ձեռքերու, ինք կուգար զբոսանաց վայրերն իր տարփավորին հետ զվարճանալու։ Այս զրպարտություններըր պիտի լինեին հետևյալ օրն ամեն կողմ տարածվելիք արձագանքն ու Տիգրան մեծապես իրավունք ուներ իր զգուշավոր ընթացքին մեջ։

Սուրբիկ միայն Տիգրանի իր մոտը չի գալուն այս բացատրությունը չի տվավ. լավագույն բացատրությունն անոր թևի գեղանի ու շնորհալի կինն էր և ուրիշ պատճառ փնտրելու հարկ չի տեսավ։

Պարոցեն փախչող տղու մը պես այն իրիկուն Սուրբիկ ան-

պատում բերկրություն ու խնդում զգացեր էր պարահանդես գալուն։ Ո՜րքան ատենե ի վեր զուրկ էր մնացեր այս տեսակ հաճույքներեն, ու ասպետական դղյակի մը տիրուհվույն պես առանձին ու մարդե հեռու ապրեր էր իր քյոշկին մեջ։

Պահ մը մոռցավ իր կենաց մառախլապատ հորիզոնն ու ընտանեկան հարկին հոգն ու մտմտուքը պարահանդեսին շողշողուն փայլին առջև։

Քաշված ապրելով, իր ծանոթները գրեթե մոռցեր էր. բայց Տիգրանի ընկերությունը կը բավեր անոր. Սուրբիկ պարելը կը սիրեր, նամանավանդ վալսն որ տեսակ մը թաքուն ու անբացատրելի ախորժ ուներ իրեն համար։

Ո՜րչափ մեծ եղավ իր զարմանքն, երբ պարահանդես մտած չի մտած, Տիգրան իրմե բաժնվեցավ մեկ մ'ալ իր քովը չի գալու համար։ Ո՞վ էր այդ Եվգինեն ուսկից երիտասարդը չէր կրնար զատվիլ. մազուրքայի ատեն նշմարել կարծեց թե Տիգրան խիստ մոտեն կը գրկեր իր վայելչագեղ ընկերուհին։

Սուրբիկ նեղացավ. ինքն ալ աղեկ մը չէր գիտեր ինչ պատճառավ, մինչև այն ժամ երիտասարդն ո՛ևէ սիրային խոստովանություն մ'ըրած չէր իրեն. թերևս ինքը նշմարել կարծեր էր անոր ներքին համակրությունն ու կերևեր թե բոլորովին սխալած էր այս ենթադրության մեջ։

Սուրբիկ միշտ նույն դյուրագրգիռ կինն էր։ Այն գիշեր խմած մեկ երկու քոնյաքն անոր գլխին զարնելու մոտ էր, երբ Տիգրան մոտեցավ և Եվգինեն Խոսրովին հանձնեց անոր վալսի խոստումն հիշեցնելով։

Սուրբիկ փոթորիկ մը զգաց իր սրտին մեջ այս խոստումը լսելով. ի՞նչ, այդքան չի կարենալ բաժնվելու չափ ախորժելի մե՞կն էր այդ մանկամարդ կինն և մեկ նայվածքով ճանչցավ անոր վրա երիտասարդ մը գլխե հանելու բոլոր առավելությունները։

Իր ներքին խռովությունն այնքան ավելի սաստիկ և ուժգին եղավ որքան Տիգրանի չէր կրնար հաղորդվիլ։ Կը մտածեր որ իր բարեկամին անկախության դպչելու իրավունք չուներ. նա ազատ էր իր ուզածին հետ պարելու կամ խոսելու. զինքը պա-

բահանդես բերել խոստացեր ու բերեր էր և ադկե ավելի բան մը չէր կրնար պահանջել անկից։

Ափսո՜ս, մինչև այն վայրկյանը Տիգրանը գոնե իրեն անձնվեր մեկն համարած էր. և առաջին առիթով կը տեսներ թե ո՜րքան խաբված էր իր համոզման մեջ։ Իր վիրավորյալ հպարտությունն արգիլեց զինքն ո՛ևէ բան մը զգացնելե Տիգրանին. ի՜նչ օգուտ եթե իր ստիպման վրա երիտասարդն այդ կնոջ հետ չպիտի պարեր։

Սուբրիկ՝ այս երկրորդ անգամն ըլլալով՝ կը սխալեր իր դատաստանին մեջ։

Տիգրան հիմարի մը պես կը սիրեր զինքը։

Արամ էֆենտիի կինը պարահանդեսին մեջ գտնվող տիկնանց մեջ թերևս ամենեն գեղանին էր։ Մեծագին չէր անոր հագուստը. պարզ քոեմ կազե շրջազգեստ մը հագած էր նա վալանսիեններով շտկված, որո թափանցիկ ու անգաղտնապահ հյուսվածքը՝ մարմարի պես սպիտակ մարմնո մը բոլոր հեշտալի հրապույրը կր մատներ. իր սիրուն գլուխը, դալուկ դեմքը, դյուրաբեկ հասակն, երազի մեջ երևցող ու խուսափող տեսիլ մը կր հիշեցներ զոր կորանցնելու վախով մարդս կը վախնա ձեռք դպցնելու։

Ջմայլման ու հափշտակության շշունջ մը կր բարձրանար երիտասարդաց ու պատանյաց մեջ անոր անցած ատեն. ամենքն անոր ընկերացող անձին շուրջը կր դառնային անոք ներկայացվելու, հետը շրջան մը ընելու կամ բառ մը փոխանակելու հույսով, իբրև նորատեսակ արբանյակներ՝ որոց այս շողշողուն ու հրավառ աստղը ձգողության ընդհանուր կեդրոնն էր։

Լուռ ու անխոս, Տիգրանի հետ հառաջացավ նա ծառուղվը մը մեջ. երիտասարդն իր քևին վրա կզգար անոր փափուկ ու քնքուշ քևին ջերմությունն որ էլեկտրական հոսանքի մը պես իր երակներուն կր հազորդվեր. կանգ առին ծառի մը մթին ու խորհրդալի ստվերին տակ. քիչ մը հեռու ուրիշ զույգեր կը պտըտեին կամ կր խոսակցեին։

Սուբրիկ տրտում ու խոհուն կերևեր։

պտույտ մ'ըրին պարտեզին մեջ ու պյուֆեեն մեկ մեկ ըմպելիք առին. Սուրբիկ ամեռ մը ուզեց. բայց ներկայացված հեղուկն՝ ախալմամբ անշուշտ՝ ապսենթ ըլլալու էր, որ անմիջապես ա-ռեր գլխուն զարկավ. մեկ վայրկյանի մեջ պարտեղն, երկինքն ու ծովն իր մոլորյալ ակնարկին առջև իրարու խառնվեցան, ոտքին ներքևեն հողը խույս տվավ կարծես, ու խեղճ կինը Մարեմյանի թևեն ի զատ հենակետ մը չտեսավ իր շուրջը։

— Այս ի՞նչ տեսակ ամեռ էր, թոթովեց Սուրբիկ։

— Ինձ տվեք գավաթնիդ, ըսավ Մարեմյան զարմանք ու վրդովում կեղծելով. բայց այս ամեռ չէ, ավելցուց նա կաթիլ մը բերանն առնելե վերջը. ապսենթ է. սակայն անհոգ եղեք, տիկին, ամեն պարագայի մեջ կատարելապես անվնաս ըմպելի մ'է, կապահովեմ զձեզ այս մասին. ու այս ըսելով խստիվ հանդիմանեց սպասավորը։

Սուրբիկ քան մը չլսեց. այն աստիճան սաստիկ էր հուզմունքն. հեղձուցիչ մթնոլորտ մը կար որ իր շնչառությունը կարգիլեր. ծաղիկներուն բուրումը մեկ կողմեն, թաշկինակներու վրայի անուշահոտությունները մյուս կողմեն ու այս սաստիկ ըմպելիքն առաջուց առած քոնյաքներուն վրա ավելնալով՝ պզտիկ գինովություն մը հառաջ բերին։

Մարեմյան շփոթեցավ ու ուրախացավ, իր հուսացածեն ավելին հաջողեր էր. իր թևերուն մեջ առնել ուզեց այս թանկագին բեռն ու առանձին ու ամայի տեղ մը փնտրեց մտքովը զայն հուշաբերելու համար. բայց երիտասարդ կինն անմիջապես ավելորդ դատեց զանոնք. իր շփոթությամբն հանդերձ զգաց որ այս մարդը խիստ վտանգավոր ու խիստ խորամանկ մեկն էր. Ծիգրանի դեմ սրդոդած ու նեղացած պահուն վայրիկ մը շնորհքով մեկը երևցեր էր նա իր աչքին, բայց չուշացավ ինքնիրեն խոստովանելու թե զինքը շարունակ հալածող այդ մարդուն դիտավորությունն անպարկեշտ և իրեն անոր հետ տեսությունն անվայել էր։

Բավ է որ կին մ'ուզե իր պատիվը պաշտպանել որպեսզի հաջողի անոր դեմ պատրաստված ամեն փորձ ի դերև հանել։

Սուրբիկ այս մարդուն մոտ ինքզինքն առանձին գտնելով վախցավ ու այս վախը բոլորովին իր խելքը գլուխը բերավ։

Այո՛, հանցավոր էր,— այսպես խորհեցավ երիտասարդ կինը ներքնապես,— այսպիսի կասկածելի անձնավորության մը ընկերանալուն, և Տիգրանի առաջ ինքզինք արդարացնելու միջոց մը չի կրցավ գտնել իր մտքին մեջ։ Ի՞նչ պիտի ըսեր, ի՞նչ բացատրություն պիտի տար անոր հետ ընկերանալուն։

Ո՛րքան մեծ տարբերություն այս երկու մարդոց մեջ. երկուքն ալ զինքը կը սիրեին. այսպես գոնե կը կարծեր ինքը. բայց մինչդեռ Տիգրան ամեն ազատություն ու դյուրություն վայելելովն հանդերձ երկու տարվան մեջ զինքը նվիրական էակի մը պես հարգելե ու պաշտելե անդին անցած չէր, անդին նորեկ մը, գործունյա, փութաջան ու ձեռնարկող, համառոտ ձևերով զինքն իր գրկին մեջ սեղմելու չափ հառաջացեր էր կես ժամվան մեջ։ Հանկարծ անոր մտքեն կասկած մը անցավ ու Սուրբիկ զզվանք ու սոսկում զգաց այս մարդեն. ի՞նչպես կըրցեր էր անոր թևն ընդունիլ. ինքն իսկ զարմացավ ասոր։

Վտանգն ամենեն աղեկ ուղղեց նորա դատողությունն. և մարդկային սրտին բնական եղող հակազդեցությամբ մը Տիգրանի բոլոր փափկությունն ու անձնվիրությունը ճանչցավ ու գնահատեց։

— Կը խնդրեմ որ զիս Խոսրով էֆենտիին մոտ տանիք, ըսավ վախով ու ցասմամբ հուզյալ ձայնով մը։

Մարեմյան Սուրբիկի բոլոր մտածումները մի առ մի կարդաց անոր դեմքին վրա, ու հակառակելու անկարելիությունն հասկցավ։ Ուստի շուտով առաջնակարգ դերասանի մը պես իր առջի հարգալից ձևն զգեցավ։

— Հոժարությամբ, տիկին, պատասխանեց նա. միայն կը խնդրեմ որ ներողամիտ լինիք թե որ ո՛ևէ կերպիվ առիթ եղա ձեր անհանգստության. հավատացեք որ ամոթով եմ այս մասին։

— Բնա՛վ, էֆենտի, հանցանքը ձերը չէ. և ես շնորհակալ եմ ձեր խնամոցը. չղային տկարություն մ'էր որո երբեմն ենթակա կըլլամ, պատասխանեց Սուրբիկ չոր ու ցամաք կերպով։

Վալսը լմնցավ ու պարողներու քրտնաթոր զույգերը՝ գիշերվան զով օդն առնելու համար պարտեզին մեջ ցրվեցան։

Տիգրան նվգինեն իր ամուսնուն դարձուցած միջոցին տեսավ Սուրբիկն որ անծանոթի մը թևը մտած դեպ իրենց կուգար։

— Որո՞ւ ես հանձներ տիկին Արամ էֆենտին, հարցուց երիտասարդն առանց ծածկելու իր դժգոհությունը։

— Ո՜հ, անհոգ եղիք, պատասխանեց Խոսրով, թևին մը կարմրելով սակայն, իմ ծանոթներես է ու խիստ ազնիվ անձ մ'է։

Տիգրան այս բացատրությունը չընդունեց. բայց ինքնիրեն ավելի Սուրբիկի նեղացավ քան թե իր բարկամին. մինչդեռ ոտարականը Սուրբիկը ձգելե ու խոնարհություն մ'ընելե վերջը կը հեռանար։

— Ո՞վ էր այդ պարոնը, Սո՛ւրբիկ, հարցուց երիտասարդն երբոր մինակ մնացին։

— Ես ալ ազնկ մը չեմ գիտեր ո՛վ ըլլալն. իրավ է որ բարեկիրթ անձ մը լինելով հանդերձ անհամակրելի քվեցավ ինծի։

— Թևը մտած ատենդ պետք էիր ատիկա մտածել և ո՛չ հիմա։

Սուրբիկ՝ Տիգրանի վշտացած ըլլալն անոր խոժոռած դեմքեն ու ցամաք պատասխանեն հասկցավ։

Անծանոթի մը թևն ընդունիլը պակասություն մ'էր ու նորատի կինր ներքնապես իրավունք տվավ երիտասարդին ոչ ակոր սիրտն առնել մտածեց։

— Այս տեղի բազմությունը ձանձրացուցիչ է, ըսավ Տիգրանին մեղմ, գրեթե ազերսարկու ձայնով մը որ կարծես նեղումն կը խնդրեր և որ տարօրինակ կերպով երիտասարդին սրտին դպավ, տուն դառնանք թե որ կը հաճիս։

— Դառնանք, կրկնեց Տիգրան մեքենաբար։

Ու թև թևի վար իջան պարտեզեն համր ու դանդաղ քայլերով. Սուրբիկ հոգնած էր ու թույլ կերպով իր ընկերոջ թևին կը հենուր։ Քարափեն անցան ուր հոգնախուռն ամբոխ մը կը շրջեր, կերգեր, կզբոսնուր գիշերվան ցողին տակ անփույթ ու անխնջ։

Բազմության մեջեն անցան անտարբեր՝ չի լսելով իրենց

չուրչի աղմուկն՝ և առանց զգալու մինչև իրենց ծովեզերյա տունը հասան։

Գիշերը բնև խոնավ՝ բայց իր բոլոր պայծառության մեջ էր. հեռուն՝ պարահանդեսին լույսերն ու երաժշտության ձայները կը նվաղեին ու կանհետանային։

— Ես անոթի եմ, Սո՛ւրբիկ, ըսավ Տիգրան, քյոշկն ելլելե առաջ քիչ մը բան ուտենք. դուն ալ կարծեմ քե անոթի ես. այս ալ զբոսանք մ'է, մանավանդ քե պարահանդեսի հաշվույն մեջ չէ։

— Ուշ չէ՞ այս ատեն։

— Բնավ. ժամը յոթն է. կես ժամեն վեր կը տանիմ քեզ. հոս սպասավոր արթնցնելու պետք չունինք, ու այս գիշեր քեզի ծառայելու պատիվն իմ անձիս կը վերապահեմ, տիկին, ավելցուց խնդալով։

— Այդպես թող ըլլա ուրեմն, պատասխանեց Սուրբիկ։

Այս առաջադրությունն անտարակույս հաճելի էր. կես գիշերին, ծովեզրի սենյակը, լուսնի լուսով, գլուխ գլխի ճաշ մը ընելն՝ հրապուրիչ ծրագիր մ'էր։ Սակայն Սուրբիկ վայրկյան մը խորհեցավ որ գիշերատեն թերևս վայելուչ չէր ամուրի երիտասարդի մը տունը գտնվիլ երբ ամեն մարդ կը քնանար։ Բայց Տիգրանի առաջարկը մերժելն անոր վրա կասկածիլ ու զայն վիրավորել պիտի ըլլար. Սուրբիկ դեռ ասոր նման հազար պատճառանք մտածեց ու գտավ այս հաճոյալի հրավերն ընդունելու համար. մարդս որքան դյուրավ կը համոզվի թե որ կամենա։

Ներս մտան առանց մեկու մը ձայն տալու. ծովեզրի սենյակը Տիգրանի աշխատության սենյակն էր. Սուրբիկ բնավ հոն մտած չէր դեռ. ակնարկ մը ձգեց իր չորս դին հետաքրքրությամբ ու սիրով լեցուն. ճրագի պետք չի կար. լուսինն իր արծաթյա ճառագայթներովը սենյակը կողողեր ու ցերեկվան պես կը լուսավորեր։

Ի՜նչ զարմանալի բան է եղեր երիտասարդի մը սենյակն. այս եղավ Սուրբիկի հետազոտության արդյունքն. ամեն ինչ անկարգ ու անկանոն. արևելյան ու եվրոպական կարասիք միասին. հոս քրքական փոքրիկ բազմոց մը Պուխարայի գոր-

Տիգրան եվգինեն իր ամուսնուն դարձուցած միջոցին տեսավ Սուրբիկն որ անծանոթի մը քով մտած դեպ իրենց կուգար։

— Որո՞ւ ես հանձներ տիկին Արամ էֆենտին, հարցուց երիտասարդն առանց ծածկելու իր զժգոհությունը։

— Ո՜հ, անհոգ եղիք, պատասխանեց Խոսրով, քնքև մը կարմրելով սակայն, իմ ծանոթներես է ու խիստ ազնիվ անձ մ'է։

Տիգրան այս բացատրությունը չընդունեց. բայց ինքնիրեն ավելի Սուրբիկի նեղացավ քան քե իր բարեկամին. մինչդեռ օտարականը Սուրբիկը ձգելե ու խոնարհություն մ'ընելե վերջը կը հեռանար։

— Ո՞վ էր այդ պարոնը, Սո՛ւրբիկ, հարցուց երիտասարդն երբոր միևնակ մնացին։

— Ես ալ ազնկ մը չեմ գիտեր ո՛վ ըլլալն. իրավ է որ բարեկիրթ անձ մը լինելով հանդերձ անհամակրելի քվեցավ ինծի։

— Քնը մտած ատենդ պետք էիր ատիկա մտածել և ո՞չ հիմա։

Սուրբիկ՝ Տիգրանի վշտացած ըլլալն անոր խոժոռած դեմքեն ու ցամաք պատասխաններն հասկցավ։

Անծանոթի մը քնն ընդունիլը պակասություն մ'էր ու նորատի կինը ներքնապես իրավունք տվավ երիտասարդին ու ակոր սիրտն առնել մտածեց։

— Այս տեղի բազմությունը ձանձրացուցիչ է, ըսավ Տիգրանին մեղմ, գրեթե ազերսարկու ձայնով մը որ կարծես նեղումն կը խնդրեր և որ տարօրինակ կերպով երիտասարդին սրտին դպավ, տուն դառնանք քե որ կը հաճիս։

— Դառնանք, կրկնեց Տիգրան մեքենաբար։

Ու քե քևի վար իջան պարտեզեն համր ու դանդաղ քայլերով. Սուրբիկ հոգնած էր ու քույլ կերպով իր ընկերոջ քևին կը հենուր։ Քարափեն անցան ուր հոգնախառն ամբոխ մը կը շրջեր, կերգեր, կզբոսնուր գիշերվան ցողին տակ անփույթ ու անխոնջ։

Բազմության մեջեն անցան անտարբեր՝ չի լսելով իրենց

չուրջի աղմուկն՝ և առանց վգալու մինչև իրենց ծովեզերյա տունը հասան։

Գիշերը բնև խոնավ՝ բայց իր բոլոր պայծառության մեջ էր. հեռուն՝ պարահանդեսին լույսերն ու երաժշտության ձայները կը նվագեին ու կանհետանային։

— Ես անոթի եմ, Սո՛ւրբիկ, ըսավ Տիգրան, քյոշկն ելլելե առաջ քիչ մը բան ուտենք. դուն ալ կարծեմ քե անոթի ես. այս ալ զբոսանք մ'է, մանավանդ քե պարահանդեսի հաշվույն մեջ չէ։

— Ուշ չէ՞ այս ատեն։

— Բնավ. ժամը յոթն է. կես ժամեն վեր կը տանիմ քեզ. հոս սպասավոր արթնցնելու պետք չունինք, ու այս գիշեր քեզի ծառայելու պատիվն իմ անձիս կը վերապահեմ, տիկին, ավելցուց խնդալով։

— Այդպես թող ըլլա ուրեմն, պատասխանեց Սուրբիկ։

Այս առաջադրությունն անտարակույս հաճելի էր. կես գիշերին, ծովեզրի սենյակը, լուսնի լուսով, գլուխ գլխի ճաշ մը ընելն՝ հրապուրիչ ծրագիր մ'էր։ Սակայն Սուրբիկ վայրկյան մը խորհեցավ որ գիշեր ատեն թերևս վայելուչ չէր ամուրի երիտասարդի մը տունը գտնվիլ երբ ամեն մարդ կը քնանար։ Բայց Տիգրանի առաջարկը մերժելն անոր վրա կասկածիլ ու զայն վիրավորել պիտի ըլլար. Սուրբիկ դեռ ասոր նման հազար պատճառանք մտածեց ու գտավ այս հաճոյալի հրավերն ընդունելու համար. մարդս որքան դյուրավ կը համոզվի թե որ կամենա։

Ներս մտան առանց մեկու մը ձայն տալու. ծովեզրի սենյակը Տիգրանի աշխատության սենյակն էր. Սուրբիկ բնավ հոն մտած չէր դեռ. ակնարկ մը ձգեց իր շուրջ դին հետաքրքրությամբ ու սիրով լեցուն. ճրագի պետք չի կար. լուսինն իր արծաթյա ճառագայթներովը սենյակը կողողեր ու ցնորեկվան պես կը լուսավորեր։

Ի՜նչ զարմանալի բան է եղեր երիտասարդի մը սենյակն. այս եղավ Սուրբիկի հետազոտության արդյունքն. ամեն ինչ անկարգ ու անկանոն. արևելյան ու եվրոպական կարասիք միասին. հոս թրքական փոքրիկ բազմոց մը Պուխարայի գոր-

գերով ծածկված, հոն հին ֆրանսական քիկնաթոռներ, չինական կերպասե վարագույրներ, խել մը անօգուտ ու թանկագին նյութեր, հնություններ, հին և նոր դրամներ, զենքեր փայլուն կամ ժանգոտած, գորգեր, պատկերներ, հախճապակե ամաններ, պզտիկ ու մեծ լուսանկարներ նշանավոր անձերու, դերասանուհյաց, արվեստավորներու, հրապարակախոսներու, ասդին անդին, պատերուն վրա, գրեթե ամեն կողմ ցրված խառն ի խուռն բայց ոչ առանց ճաշակի. փոքրիկ արձաններ իրենց մերկ ու շլացուցիչ գեղով, ոսկեզօծ ու լայն շրջանակներու մեջ Վոսփորի զանազան տեսարաններն ու Անվո ավերակներն. Հայաստանի զանազան քաղաքներե հավաքված տեսակ տեսակ կերպասներ, բանվածներ, աթոռի մը թողված Միռապո մը, սեղանին վրա Պեշիքթաշլյան մը. հոս իրավագիտական թերթեր. վերջապես փոքրիկ սենյակի մեջ հավաքված արվեստի, գեղարվեստի, դիտության ու գրագիտության վերաբերյալ ճոխություններ՝ մեկ բառով ամեն ինչ կամ ոչինչ։

Սուրբիկ շատ մը հարցումներ պիտի ըներ իր տեսածներուն վրա, բայց այս սենյակին մեջ անբացատրելի անհանգստություն մ'զգաց. վրդովիչ ու հրապուրիչ մթնոլորտ մը կար. իր շուրջը տեսած անթիվ նյութերն ու պատկերները կարծես նույնքան խոսուն ու համակրելի հոգիներ էին. ազոնք էին երիտասարդին ամենօրյա ընկերներն, անոր ամեն մեկ հուզման, տխրության և ուրախության մասնակից։ Եվ Սուրբիկ անմիջապես սիրեց ու պաշտեց այս ամենն իրենց անխնամ անկարգության մեջ։

Անդին Տիգրան հինօրյա ու քաջավարժ սպասավորի մը պես սեղանը շտկեց պատուհանին մոտ. քիչ մը պաղ հավ, տապկած ձուկ, Պոռտոյի հին գինի ճարելն վայրկյանի մը գործ եղավ. ու երբ խոսելով խնդալով սկսան ճաշն, երկուքն ալ բերկրացան հանպատրաստից ու առանց երկմտելու այս խորհուրդն ի գործ դրած ըլլալնուն։

Իրենք անոթի, կերակուրներն համով, գինին ընտիր, ու բնականաբար խոսակցությունը վերսկսավ եռանդով ու աշխուժիվ։

— Պարահանդեսին մեջ կարծեմ նեղացար ինծի։

— Այո՛, թեև այդ ազատությունն ու իշխանությունը չունիմ։

— Որքա՞ն նախանձոտ ես եղեր, մինչդեռ շարունակ ադոր հակառակը կը պնդես։

— Կը հավատա՞ս, թե որ ըսեմ որ քեզմե ի զատ և ո՛չ մեկի համար այդքան դյուրազգաց եղած եմ։

— Ո՞չ իսկ հույն բարեկամուհվույդ մասին, հարցուց Սուրբիկ խնդալով։

Եվ մտերմությունն հետզհետե ավելցավ. այն գիշերվան պարահանդեսեն՝ ուրիշ տարիներու պարահանդեսներու ու երեկույթներու վրա դարձավ խոսքն. երիտասարդին հիշատակներն արթնցան, անցյալ օրերու պատմություններ, գրեթե խոստովանություններ ըրին իրարու, մինչդեռ զորավոր ու անխաոն գինվո վերջին գավաթները կը պարպվեին ու գլուխները կսկըսեին տաքնալ ու դառնալ։ Այդ ժամուն ա՛լ բնավ չէին մտածեր իրենց տարօրինակ ու անպատշաճ կացության ու գիշեր ատեն մեկ սենյակ ի միասին ու առանձին գտնվելնուն վրա։

Քիչ մ՚առաջ նախանձու վրա խոսեր էին ու ագկից խոսակցությունը սիրո վրա բերելու չափ դյուրին բան չի կա աշխարհիս մեջ։

Սուրբիկ հոգներ էր. նա ավելի կունկնդրեր քան թե կը խոսեր, թիկնաթոռի մը մեջ տարածված, աչքերը կիսափակ՝ու երեսը կարմրած. մինչդեռ երիտասարդն անոր քով ու դեպի անոր ծռած, փոքրիկ ու քնքուշ ձեռքն իր ձեռացը մեջ ամփոփած, կը շաղակրատեր։

Սուրբիկ ուրիշ բան չէր լսեր անոր խոսքերեն բայց եթե հեշտալուր մրմունջ մը որ իր լսողությունը կը հմայեր. կզգար որ կարող էր տարիներով առանց նեղանալու մտիկ ընել այդ քաղցրաձայն նվագին որ ոչ երբեք այդքան ախորժելի ու ողոքիչ թված էր։

Երջանկություն ըսվածն ա՞յս էր արդյոք երկրիս վրա։ Սուրբիկ գրեթե այնպես կարծեց վայրկյան մը։

Գիշերը կը հառաջանար զվարթ ու աստեղազարդ. լուսինն հետզհետե կը խոնարհեր դանդաղ և վարանյալ, ծովուն վրա ձևացնելով անթիվ ու աննմանելի լուսեղեն ուրվագիծեր որք

շարունակ կը կազմվեին ու կը փոփոխեին անոր սնդիկի պես անշարժ ու փայլուն երեսին վրա. ամեն ոք հանգչած էր ու ամեն կողմ տարածվող խոր լռության մեջ միայն էր այս մանկամարդ կինն իր սիրած մտերմին քով, բյուր իղձերով տոգորյալ։

Տիգրան հիմա ա՛լ գրեթե բոլորովին իրեն մոտ ծնրադրած էր ու Սուրբիկ անոր հեշտահամբույր շունչը կզգար իր մազերուն մեջեն, իր երեսին մոտ, իր դյուրագրգիռ մորթին վրա, և կը խռովեր. հանկարծ զգաց երկու սիրատոչոր շրթունքներ որ իր ձեռքին կը դպչին հիմարական տենչանոք պատելով իր բոլոր զգայարանքը. Սուրբիկ ձեռքն ետ քաշել ուզեց, բայց այս նահանջումն ավելի պարտյալ մարդու մը անօգուտ մեկ ջանքն էր քան թե լուրջ դիմադրություն մը. Տիգրան բռնացավ ու մանկամարդ կինն անոր դեմ զորություն չուներ. աչվքներեն կրակ կիլներ, ակնարկը կը նվաղեր ու ամեն ձայնն ավելի ուժով՝ բառ մը, բառ մը միայն անոր ականջին կը զարներ անդիմադրելի, իր պատճառած հրապույրին համար։

— Կր պաշտեմ զքեզ, կը մրմնջեր հրիտասարդն անոր ականջն ի վար։

Սենյակին մեջ լուսնին լույսը վարագույրներուն բազխփիկ գույներուն հետ կը խաղար. պղտիկ արձանները թվեր թե կոգևորեին իրենց մարմարե փոքրիկ կայաններուն վրա. պատկերները կր ժպտեին ոսկեզօծ շրջանակներուն մեջ ու սնդիկեն հեզաշարժ ծովուն ձայնն՝ որ մեղմիվ տանը քարափը կը փայփայեր, կը հասներ միօրինակ այլ ներդաշնակ երգի մը պես։

Ուրիշ ատեն Սուրբիկ պիտի բողոքեր այս վարմունքին դեմ. հիմա երջանիկ էր սիրո այս խոստովանությունը լսելով. անշուշտ հիմա չէր որ կիմանար Տիգրանի զինքը սիրելն. ինքն ալ ինչե՞ր չէր քաշեր իր փոխադարձ սերը ծածկելու համար ու անտարբեր դեմք մը ցուցնելու իր պաշտեցյալ մտերմին. վայրկյան մ'ևս ու մոտ էր անձնատուր լինելու. հեշտության երազներ անոր շփոթած միտքը գրավեցին ու վայրիկ մը Տիգրանի բազուկներն անքակտելի շղթա մը կազմեցին անոր մարմնույն շուրջը։

Հանկարծ պատկեր մը անցավ Սուրբիկի աչաց առջևեն, խո-

ժառ ու տրտում դեմք մը՝ որո տարօրինակ նայվածքը մինչև իր սրտին խորը թափանցնող «Չիս խաբեիր ու հիմա ամուսինդ պիտի խաբես», կրսեր այս նայվածքը բացորոշ խստությամբ։

Սուրբիկ սարսափահար ուժով մը մեկդի հրեց զինքը շրջապատող թևերն ու ոտքի վրա ելավ մնկեն։

— Տի՛գրան, ըսավ խելակորույս երիտասարդին, ա՛յդքան շա՞տ մոռցար Սեդրաքի հիշատակը։

Սեդրաքի՞...

Ո՞ւսկից գտավ այս սպառնալից անունն որ փայլակի մը գոլացման պես իր միտքը պատող մառախուղը փարատեց. Տիգրան կանգ առավ իր անվայել աղերսանաց մեջ ու մանրիթորդ մը բավեց խելքը գլուխը բերելու. ինչ որ ալ ըլլար իր անսահման սերն ու մարդուս տկարությունը, պարկեշտությունն՝ որ իր սրտին մեջ էր միշտ՝ զինքն արիացուց ու պատվո ճամփեն չի խոտորեցավ։ Բայց իր քաջության փորձը տալն վերչն իր հուզմունքը չի կրցավ ծածկել ու Սուրբիկեն հեռու աթոռի մը վրա ինկավ ուժաթափ ու ամոթահար։

Ա՛լ չի խոսեցան ասոր վրա ու քիչ մը ետքը պարտեզին դրռնեն անցնելով, Տիգրան, լուռ ու քար կտրած, ծաղկահասակ կինը քյոշկը տարավ ձգեց ու տուն դարձավ. բայց մինչև առտու իր խռովյալ երևակայությունը թույլ չի տվավ քնանալ։ Արշալուսուն դեմ միայն, խորտակված ու վաստակաբեկ, բազմոցի մը վրա քունը տարավ։

Այն գիշերեն վերչը քիչ մ'ատեն Տիգրան խիստ զգուշավոր ընթացք մ'ունեցավ քյոշկը գտնված ժամանակ. հանցանք մը գործած ատեն վարժապետեն բռնվող տղու մը կը նմաներ։

— Ա՛լ պատանի մը չեմ ես, կրսեր երբեմն ինքնիրեն, ու ինչպե՞ս հիմարություն մը գործելու չափ հառաջ գացի. իրավ է ուրեմն որ մարդս իր անձին չի կրնար իշխել եղեր. իմ բոլոր հաստատամտությունս այս կնոջ մեկ ժպտին առջև անհետացավ ու առանց անոր...

Իրիկուն մը Սուրբիկ Տիգրանի առաջարկեց միասին շրջան մ'քնել պարտեզին մեջ. վերջալույսն իր բոլոր շքեղության մեջ և պարտեզն ամայի ու խորհրդավոր էր։

— Վշտացար ինծի դեմ, այնպես չէ՞, հարցուց հանկարծ Արամ էֆենտիի կինը։

— Բնավ, տիկին, ընդհակառակն շնորհապարտ եմ ձեզ։

— Նախ և առաջ, տիկին, ձեզ և ասոր պես պաշտոնական բառերը վերցուր ու պարզապես Սուրբիկ ըսե ինծի առաջվան պես, որպեսզի չի սրդոդած լինիլդ հաստկնամ։

Երիտասարդը քիչ մը վարանեցավ։

— Միթե չափազանց մտերմության հետևանք չէ՞ր իմ սըխալմունքս, ըսավ նա. դուք պետք է ուզեք որ այս ձևակերպությունները մնան ու պատնեշ մ'ըլլան իմ տկարությանցս դեմ։

— Ո՛չ, Տիգրան, առաքինությունն արժեք չունի թե որ ճնշման մը արդյունք է. ես քեզմե ազեկ գաղափար ունիմ քու սրտիդ ազնվությանը վրա ու քու մտերմությանդ կորուստովը չեմ ուզեր իմ հանգստությունս փոխարինել. մոռցիր ալ այն ժամն ինչպես որ ես ալ չեմ հիշեր բնավ։

Տիգրան չի պատասխանեց։

— Մի՛ կարծեր որ չի մաքառեցա սիրույս դեմ, Սո՛ւրբիկ, ավելցուց նա քիչ մը վերջը. երեկվընե չէ որ անբացատրելի իշխանություն մ'ունեցար իմ վրաս դուն, որո հետ հավիտյան անհաշտ ու ոխերիմ թշնամի մնալ պարտեի. ես անոնցմե չեմ որք իրենց հաճույքին, թեկուս երջանկության համար ուրիշի երջանկությունը կը գողնան ու տունը կը կործանեն. ինքզինքս չեմ ուզեր արդարացնել վայրկյան մը սխալելուս. դուն ինծի շուտով ճանչցուցիր պարտականությունս որուն համար ալ ավելի կը... հարգեմ զքեզ. իսկ դուն,— և Տիգրան հառաչեց այս ըսելով,— բնա՛վ, ո՛հ, բնավ լսած մի՛ ըլլար իմ դժբախտ սիրույս խոստովանությունը։

— Հաշտվեցանք ուրեմն ու տուն դառնանք։

Այսպես վերջացավ այս խռովության սկզբնավորությունը. սակայն ուրիշ դժբախտություն մը չուշացավ այս ընտանյաց գլխուն։

Արամ էֆենտիի գլխի հիվանդությունը բոլորովին անհետացած չէր ու հանկարծ նոր ձևով մը երևան ելնելով խիստ ծանր կերպարանք մ'առավ քիչ օրվան մեջ։

Խնամքները չպակսեցան. խոսրով հիվանդտես եկավ ու Բնի-Մահալլե դառնալուն ծանոթները զինքը շրջապատեցին իբրև թե տեղեկություն մ'առնելու համար հիվանդին վրայոք կեղծավոր կարեկցություն որով քողարկված էր հիվանդին կնոջ վրա տարածված հետաքրքրությունն. անշուշտ երեսի վրա թողած էր իր ծերունի ամուսինն, երիտասարդ տարփավորին հետ զբոսնելու համար։

Կիներն ու հատկապես պառավները՝ նշանավոր էին իրենց հավաքած տեղեկություններով։

Հիսունոց գիրուկ կին մը որո երեսին խորշոմներն անհետացնելու համար կատարված չանքերն ապարդյուն մնացած էին, լրագրաց մեջ կարդացած խաբեբա դեղերեն գանգատելի վերջը կը պնդեր որ Արամ էֆենտիի տունեն ելած սպասուհի մը թանկագին մանրամասնություններ բերած էր իրեն, մանրամասնություն որք պարկեշտ ականջներե չէին կրնար լսվիլ։

Բամբասող հետաքրքիրներուն սիրտն անհամբերութենե բաբախեց։

— Հոգի՛ս, կը գոչեր նա, կարգված կիներն աղջիկներե ավելի կատղեր են հիմա. լավ՞ բան է ասիկա որ գիշերն ի լույս ձգես հիվանդ էրիկդ մինակը չարչարվի ու դուն պարտեզին դռնեն դրացի երիտասարդին տունն երթաս։

Ունկնդիրներն իբրև թե չի հավտալու շարժում մ'ըրին՝ չարլեզու պառավը զայրացնելու ու ա'լ ավելի խոսեցնելու համար։

— Չե՞ք հավատար, կրկնեց գիրուկ կինն աշխուժիվ, չե՞ք հավատար, կուզե՞ք որ Մարիամը կանչեմ ու ձեր դիմացը խոսեցնեմ։

— Վրայեն շնորհքով կին մը կերևա, մեղա՛, ալ մարդ իր տեսածին ալ խաբվելու չէ, վրա բերավ անդիեն սիկառի թուղթի պես նիհար ու թափանցիկ կին մը որ բուրդի ու բամպակի անհրաժեշտ պաշարով մը բեռնավորած էր ամեն ատեն։

— Ատանկները շնորհքով կերևան վրանուն։

— Ո՞վ կը սիրե եղեր, հարցուց քառասունն անցուկ աղջիկ մը որ ամուսնանալե հուսակտուր, ա'լ պառավներու կարգը բազմելու իրավունք ուներ։

— Փաստաբան է, ի՛նչ է, գիշեր ցերեկ իրարու տունն են եղեր։

— Այս տեսակ կիները բոլոր իգական սեռին ալ պատվույն կը դպչին, ավելցուց արդար զայրույթիվ երիտասարդ ու գեղանի կին մը որո սիրահարական արկածներն երեսին վրա ներկված գույներուն չափ բաղմաթիվ էին։

Ուրիշներ կը պնդեին թե իր կնոջ մեղապարտությունն հաստատվելուն վրա Արամ էֆենտի հիվանդացեր էր. թե խեղճ մարդն ամեն տեսութենեն զրկված, գրեթե բանտարկված էր. շատախոս երիտասարդ մը՝ ականջն ի վար փսփսալով խորհրդավոր ձևերով կը պատմեր թե իր բարեկամներեն մեկն Արամ էֆենտիի քյոշկին մոտեն անցած ժամանակ գիշերային ժամադրությանց հանդիպեր էր։

Այս կերպ էին ահա խոսակցություններն հասարակության մեջ. այս բամբասողներեն գոնե մին՝ բան մը գիտե՞ր կամ թե ինք կը հավատա՞ր իր ըսածներուն. բնավ։ Նախանձը մեկ կողմեն, հետաքրքրությունը մյուսեն միացեր էին զրպարտությունն ու քսությունը ծավալելու այնպիսի անձնու դեմ զորս թերևս շիտակե շիտակ չէին ճանչնար։

Երիտասարդ կինը մեծագույն հանցավորը, թերևս ոճրագործ մ՚էր. ամենքը ծերունի ամուսնույն կը գթային ու կը կաթկցեին միայն։ Գուցե հարկ էր ջանք մ՚ընել զայն իր անհավատարիմ կնոջ ձեռքեն փրկելու համար։

Այս տեսակ են ահա այն սարսափելի տարաձայնություններն որք փոխանցիկ ու քստմնելի հիվանդության պես բերնե բերան տարածվելով մարդուս պատվույն կը դպչին, կը հալածեն ու շատ անգամ կը խորտակեն թաքուն, համառ ու անողոք ամբաստանություններ որո դեմ ամբաստանյալն ինքզինքը արդարացնելու միջոց չունի։ Մարդոց ներքին կենաց մասին հասարակաց կարծիք ըսված բանն՝ ի բացակայության տրված վճիռ մ՚է որ առանց դատապարտելուն հաղորդվելու կը գործադրվի։ Բավ է որ զրպարտիչ բերան մը բացվի մեկուն դեմ ու դատապարտությունը ժամանակի խնդիր մ՚է միայն և որո դեմ զրպարտյալը բողոքելու իրավունք չունի։

Այս կերպ էին ահա հասարակաց կարծիքը Սուրբիկի մա-

ին, Պարկեշտության, մաքրության նշույլ չունեցող անառակ կուհիներ չէին կրնար անտարակույս անոր առաքինության հավատալ. սևը ճերմակին գոյության չի կրնար հավատ ընծայել։ այս եղած է միշտ աշխարհիս օրենքը։

Անդին՝ հիվանդը կը տառապեր ու կը դարմանվեր. խեղճ մարդուն հիվանդությունը մահատու ու սարսափելի կերպիվ փոխանցիկ ախտ մ'էր. խոհեմությունը կը պահանջեր զգուշություններ ձեռք առնուլ անոր քովը մոտեցված ատեն. բժշկաց պատվերը խիստ ու բացորոշ էր. Սուրբիկ միայն չի ճանչցավ այդ արգելքն զոր իր պարտականության հակառակ դատեց, իր մանկութենեն ի վեր դժբախտ ու ճակատագրեն հալածյալ՝ քաջությամբ, գրեթե ուրախությամբ նետվեցավ այն վտանգին մեջ որ այնչափ դյուրավ կրնար զինքն ալ ի միասին գերեզման տանիլ։ Ո՛չ ոք գիտցավ երբեք այս մանկամարդ կինն առաջնորդող գաղափարը. փոխանցման վտանգը տարաբախտուհին հրապուրեց. ազգական, բարեկամ իզուր խրատեցին կամ սպառնացան. Սուրբիկ անդրդվելի մնաց. Տիգրան միայն բան մը չըսավ, մինչդեռ բժիշկներն ապշած ու սքանչացած կը մեկնեին ամեն անգամ։

Միայն իր զավակներն հեռացուց ու ինքը գիշեր ու ցորեկ սպասուհվո մը օգնությամբ հիվանդին քովեն չբաժնվեցավ։

Հիվանդության չորրորդ-հինգերորդ օրերն Արամ էֆենտին անճանաչելի էր. անհամար ուռուց ու պալարներ, սև ու կապույտ, անոր դեմքն ու ճակատը պատեցին. աչերը փոսն իջած ու երեսին ուռուցիկ կույտերուն մեջ թաղվելով երկու փայլուն կետերու փոխվեցան. շրթունքն իրարմե հեռու ու բոլոր գլուխն ահավոր ու քստմնելի երևույթ մ'ստացավ։

Սարսափելի ախտը մեկ քանի ավուր մեջ այս աստիճանի կերպարանափոխ ըրած էր հիվանդը. սպասուհին վախցավ ու առավ քալեց ու Սուրբիկ մինակ մնաց հիվանդը դարմանելու ու սփոփելու համար։

Մինա՜կ. ոչ սակայն. քանի որ Տիգրան առտու ու իրիկուն հոն էր. բժիշկները կը հրավիրեր, դեղերը կը պատրաստեր ու տունեն դուրս հիվանդին վերաբերյալ բոլոր հոգերը կը մտածեր։ Նա մանավանդ Արամ էֆենտիի նեղությունը զուշակելով,

առանց Սուրբիկի զգացնելու, Արամ էֆենտիի մեկ պահանջքը գանձած լինելու պատրվակավ դրամական օգնություն մը կըներ ու վերջապես այդ մահու ու սարսափի օրերուն մեջ պահապան հրեշտակի մը պես կը հսկեր այդ անօգնական ընտանյաց վրա։

Բժիշկներն հետզհետե ձեռք քաշեցին. հիվանդին վիճակը բոլորովին հուսահատական ու անոր ավերյալ դիմաց տեսիլն արհավրալից դարձավ։

Անտարակույս նախախնամության անքննելի մեկ գաղտնիքն էր որ այս դժնդակ ու զարհուրելի ախտն այսքան բարի ու պարկեշտ մարդու մը վիճակած էր. հիվանդին խելքը գլուխն էր միշտ. վերջին օրերուն, երբ որ ինքն ալ վերահասու եղավ իր վտանգավոր կացության, վարանում մը տեսնվեցավ այս մարդուն վրա. ըսելիք մը ուներ ու չէր կրնար կարծես մեկու մը հայտնել. Սուրբիկը միայն տեսնելով միշտ իր քովն, իր արգին անհանգիստ խղճմտանքը բոլորովին վրդովեցավ. ամենքըն, եղբայր, քույր, կամ աղգական, քոլերայե փախելու պես, առանց ետևին դառնալու, մի առ մի խույս տվեր էին ու միայն այս երիտասարդ կինը մնացեր էր մինչև վերջն հաստատ իր սիրույն ու հավատարմության մեջ. այն ատեն մտածեց թե որքան ծանր պարտքեր ստանձնած էր այս մատղաշ ու փափուկ արարածին դեմ զոր դեռ տղա հասակեն աննեղելի անխոհեմությամբ մը իր կենաց բոլոր ծերության ու տառապանացը մասնակից ըրած էր. մտածեց նաև թե ո՞ւսկից կը ճարեր բժիշկներու ամենօրյա տրված գումարները, վասնզի իր չնչին խնայողություններն հիվանդության առջի մեկ երկու ավուր մեջ սպառած էին անշուշտ։

— Սուրբիկ, լավ մանկամարդ կնոջն որ աթոռի մը վրա ու անկողնուն մոտը նստեր էր, քնահատությենե թալկահար ու գժգունած, ստակ մնացած չէ քովդ. իմ սեղանավորս կա Պոլիս, պետք է մեկ երկու ամսական կոտրել տալ այս օրերու համար։

— Բայց ստակի նեղություն չունինք, պատասխանեց նա, ատեն չեղավ քեզի իմացնելու որ հույն վաճառականին վրայի առնելիքներդ Տիգրան էֆենտին գանձեց։

— Ո՞ր հույն վաճառականն, հարցուց հիվանդը մտախոհ։

— Դուն գիտես անշուշտ. որո՞ւն վրա հարյուր քսան ոսկի պահանջ ունիս։

Արամ էֆենտի մեկու մը վրա այս տեսակ պահանջ մը չ'ըներ ու անմիջապես գուշակեց այն չափազանց փափկության զգացումն՝ որով Տիգրան դրամական օգնություն մ'ընդունել տալու համար այս ստախոսության դիմեր էր. բան մը չ'ըսավ, բայց աչվընները լեցվեցան։

— Եղբորմե՛մը ավելի է մեզի Տիգրանը, Սո՛ւրբիկ, գիտցած ըլլաս, մրմնջեց միայն։

Իրիկունը երիտասարդն եկավ տրտում ու տխուր. հետևյալ օրվան համար բժիշկները նոր խորհրդակցության մը հրավիրեր էր. շատերը մերժեր էին գալու. և ոչ մին ծածկեր էր հիվանդին մոտալուտ վախճանն. ասով հանդերձ Տիգրան համառեր էր զանոնք կանչելու համար։

Հետևյալ օր հիվանդը բոլորովին ծանրացավ. իրիկվան դեմ Տիգրանը տեսնել ուզեց. հինգ րոպե վերջ երիտասարդն անոր անկողնույն մոտն էր։ Սև վարագույրներ կարգիլեին պատուհանեն եկող լույսն որուն չէին կրնար այլևս դիմադրել հիվանդին տկարացած աչքերը. գերեզմանի պես մթին ու սգավոր սենյակ մ'էր. հիվանդը գլխով նշան մ'ըրավ կնոջը զինքը մինակ թողլու համար ու Տիգրանին դառնալով.

— Իմ վերջս մոտ է ալ, Տի՛գրան, ըսավ հազիվ լսելի ձայնիվ, ու տեսնելով որ երիտասարդն ընդմիջելու շարժում մը կրնե. ո՛չ, ո՛չ, ավելցուց նա, խաբվելու պետք ունեցողներեն չեմ ես... շնորհակալ եմ քեզմե, ճշմարիտ որդի մ'եղար ինծի իմ կարոտության օրերուս մեջ... քեզիպեսներ շատ չեն գըտնըվիր...

Հոս հիվանդին ձայնը մարելու մոտ երևցավ.

— Ջավակներուս ապագան չապահոված կը թողում ու կը մեկնիմ ու այս ցավը շատ մեծ է հոր մը համար... կուզեմ որ զավակներուս հսկես, Տիգրան... կը հասկնա՞ս, զավակներս որբություն չի տեսնան...

Տիգրան իր արցունքը չի կրցավ բռնել ու հեծկլտալով աթոռասվել սկսավ։

— Վերջին ու գերագույն խնդիրք մ'ալ, մրմնջեց հիվանդը շնչահատ. կինս երեսես չի խնդաց մինչև այսօր, իմ մահվամբս այն ալ կարոտ ու... աղքատ կը մնա... քսանհինգ տարեկան այրի կը թողում ահա զինքը... դուն պաշտպանե անիկա... այս քաղաքը մի' նստիք...

Ոգևարին խոսքերն անհասկանալի դարձան, բայց հանկարծ վերջին ճիգ մը ընելով.

— Մի' մոռնար, Տի'գրան, իմ զավակներս քու զավակներդ թող ըլլան ու դուն երջանիկ ըրե Սուրբիկը...

Օրհասականին ձայնը կտրեցավ ու աննկից վերջը խղդուկ հռնդյուն մը միայն լսվեցավ. քիչ մ'ատենեն ամեն ինչ վերջացած էր։

Ութ օր վերջը բոլոր Վոսփորի ու Պյոյուք-Տերեի մեջ խոսակցությունն երկու դեպքի վրա կը կենտրոնանար. այն է Արամ էֆենտիի մահվան ու Խոսրովի կնոջ փախուստին վրա։

Նվգինեն՝ ի վերջո Մարեմյանեն ձանձրացած, խուվաթ սպասավորի մը հետ սիրահարած ու ամբոստնական հարկեն չված էր պարզապես։

Խոսրովի հաջողության աստղը շատոնց ի վեր խավարեր էր, Նվգինեի փախուստը վերջին հարվածն եղավ անոր. իր ընտանեկան արկածները բերնե բերան զրուցվելով իր դիրքին այլ վնաս տվին, ու անոր խոստացված պաշտոնը չի տրվեցավ։ Պաշտոնեն ու ապրուստե զուրկ, տունը կործանած, ամենուն ծաղրին նշավակ դարձած, Խոսրով օր մը մեկնեցավ Պոլսեն առանց մեկու մը ձայն տալու ճիշտ ինչպես որ Նվգինեն ալ իր տունեն մեկնած էր։ Ո՛չ ոք կրցավ անոր ո՛ւր երթալն իմանալ. ամանք կը պնդեին թե Ամերիկա կը գտնվի նա այժմ ու բողոքական միսիոներ եղած է, անտանելի աղքատության ու տառապանաց մատնվելե հետո. ուրիշներ կը հարեին թե նա իր հայրենիքը խարբերդ դարձած է։

Այսպես հեռացավ այս մայրաքաղաքեն այն երիտասարդն որ պարտեր գուշե բնավ ոտք չի կոխել հոս. բախտը՝ վայրկյան մը ժպտեցավ անոր իր դառնությունը վերջեն ավելի սաստկությամբ զգացնելու համար։

Իսկ Տիգրան Արամ էֆենտիի մահվանեն մի քանի օր վերջն

իր գույքն ու կարասիքը վաճառելե հետո, Սուրբիկի ու անոր զավակացը հետ Ադրիանուպոլիս երթալու համար ճամփա ելավ. վայրահաչ բերաններն այս ուղևորությունն իրենց առջի ամբաստանությանց ապացույց համարեցին։

— Չէի՞ ըսեր ձեզի, կըսեր այս առթիվ հիսունոց գիրուկ կինը, խելճ մարդուն մահվան պատճառ եղան ու քառսունքին չեն սպասեր անգամ. այս տեսակ սեր տեսնված չէ դեռ. ամեն մարդ շատ բան ըրած է, բայց ամորը մեկդի թողած չէ աշխարհի առջև։

— Առաջուց ի վեր մարդ չէին սեպեր անոնք, ավելցուց դրացի խոսակից մը։

Երիտասարդ փաստաբանն երբեք կարևորություն տված չէր այս թունավոր լեզուներուն. նա՝ Ադրիանուպոլսո մեջ երկաթուղվո կայարանին քով, Քարաղաճի դաշտին մեջ առանձին տան մը մեջ կը բնակի. ընդարձակ պարտեզ մը ունի զոր կը մշակե և ուր կզբոսնու. երբեմն աղքատ ու կարոտ մարդոց դռները կը վարե ձրիաբար. այդ կողմերն ամենքը կը ճանչնան հարուստ փաստաբանն, ինչպես կանվանեն զինքը բարեմիտ գյուղացիք։

Բայց առջի անփույթ ու զվարթ երիտասարդը մնացած չէ. հիմա մտախոհ ու տրտում մարդ մ'է. մորուք թողած է ու սպիտակ թելեր կանուխեն անոր մազերուն մեջ կը տեսնվին։ Խիստ քիչ անգամ անցելույն վրա խոսք կընե։ Արամ էֆենտիի վերջին կամքն հարգած է. անոր զավակներն իր զավակներն եղած են, վասնզի Սուրբիկ իրեն կինն է։

«1886»

ՎԵՐՋ

Ն Ա Ր Դ Ի Կ
ՎԵՊ

Այն առտուն ժամը չորսին, սովորականեն ուշ եկավ խըմբագիրը. Օրթագյուղեն քալելով եկած էր համրելով ճամփուն ծառերը, անցնող թրամվայներ. տունը՝ Նոյեմի իր աղչիկը հիվանդ անկողինն էր ու չէր կրցած բժիշկ կանչել. տպարանին մեջ որ գրասենյակ էր միանգամայն, իր երեք գրաշարները տեսավ մելամաղձիկ գլուխնին կախած քառակուսի խորշերու վրա, ջուրե զրկված արևահար բույսերու պես. իր օգնականը բացակա էր։

— Ի՞նչ ունիք առջին երեսին համար, պարոն Ատոմ, հարցուց անոնցմե մեկուն։

— Ոչինչ, պատասխանեց գրաշարը առանց գլուխը վեր տանելու։

— Ոչինչը՞ կը հրատարակվի՞։

— Մեր ըրածը ի՞նչ է արդեն։

Խմբագիրը նեղացավ.

— Պարոն Ատոմ, անհամ խոսքերդ մտիկ ընելու ատեն չեմնիմ։

Ղալաթիո նեղ, ցեխոտ մեկ փողոցին մեջ, ավերակ շենքի մը ոչ քե մեկ հարկը, այլ ճիշտ տանիքին տակ, խավար և բն-

գարձակ տեղ մ'էր այս տեղը ուր Եփրատ լույս կը տեսներ չորեքշաբթի և շաբաթ օրերը։ Հիմա այդ լույսը երկու փոքրիկ պատուհաններեն, անթափանց դառնալու չափ աղոտ ապակիներեն անցնելով, փոշիներով ծանրացյալ երկու ծուռ ու լուսավոր սյուներ կը կազմեր որ դուրսեն ու բարձրեն կուգար, գետինը տախտակամածին վրա փակչելու համար։

Անդին տարածվող հարատև մշուշին մեջ շալեյի ձևով երկու գրասեղաններ որոց երկկողմանի զառիվայր տանիքը քառակուսի բազմաթիվ խորշերով ծակծկված Եփրատին գիրերը կը պարունակեն, խմբագրին բոլոր գույքը և բոլոր հարստությունը 10, 12, 14 բունբոնոց գիրեր, մաշած, տաշված, իրենց տիրոջ պես կակուղցած կապարի հատիկներ որոնք շողոքորթություն կը բուրեն։

Պատերը իրենց վոհմ ու սևաթույր մերկության մեջ տեղ տեղ միայն սքողված են Եփրատի, Տիգրիսի, Առավոտի չի ծախված թիվերով, տարօրինակ լրագրական սանդուխ մը որ Գասպար Քաքմաճյանի բոլոր պատմությունը, անկումը, իրագիտության դասի մը ձևով կը բացատրե։

Տպագրելու նյութեն ստակի դարձավ խնդիրը.

— Այսօր ստակ կուզենք, սկսավ գրաշարը։

— Այսօ՞ր, անկարելի է. գալ շաբթու։

— Դիմանալու կարողությունը չունինք, գոչեցին երեքը մեկեն, հասկցա՞ք, Գասպար էֆենտի, դիմանալու կարողություն չունինք։

Սեղաննին թողուցին խմբագիրը պաշարելով չորս կողմե։

Ո՛րքան ատեն ի վեր կը խաբեր, կը խաբխբեր զանոնք, միշտ բաժանորդներե, ծանուցումներե գալիք ստակը անոնց տալու խոստումով ու ինք առնելով չարունակ այդ դրամները։

Այս աղքատության արձաններեն շրջապատված խմբագիրը չի մտածեց այն վայրկյանին իր հավասար կերպով ողորմելի եղող կացությանը, իր հիվանդ զավկին որ անխնամ կը մնար երեսի վրա, ու այս մարդիկը մխիթարել չանաց զորս իր դրժբախտությանը, ձախորդությանը կապած էր։

— Տեսնենք, ասված մեծ է. Շամլյանի, Տեմիրճյանի ընկալագրերը ձեզ տամ, գացեք գանձեցեք։

Համոզելով, քաղցրությամբ, ցավակից բարեկամի մը պես խոսեցավ այս մարդոց, ու ամենքը խմբագրական գործերը թողած մեջտեղ դրին գլիրենք հալածող ձախորդությունին, և ի գերև ելլող հույսերնուն բոլոր դառնությունը. խմբագիր ու գրաշար չի կար ալ. չքավորությունը ամենքը կը միացներ, կը հավասարեցներ այս պահուս։

Ատոմ մտերմացած՝ խմբագրին տան վիճակը հարցուց և Դասպար էֆենտի չի կրցավ իր զավկին հիվանդությունը պահել անոնցմե։ Հիվանդության վրա ամենքը ցավեցան, դարմանող բժիշկը հարցուցին և խմբագիրը դեռ բժիշկ չի կրնալ կանչելք խոստովանեցավ։ Հետո իր խոստումը ի գործ դնելով այս անգամ գողդոջուն ձեռքով մը գործավորներուն երկնցուց գրպանին խորեն հանելով ծալլած ընկալագրերը։ Հիմա գրաշարները կը զղջային այսքան նեղելնուն իրենց խմբագիրը ու իրենց երկընցող քառածալ փոքրիկ թղթերը վիրենք կամչցներ։

— Չենք ուզեր, Դասպար էֆենտի, դուք առեք։

— Չէ, չէ՛, դուք ալ շատ նեղն եք։

Եվ այս մթին ու անծանոթ խորշին, այս թշվառության անկյունին մեջ պայքար մը տեղի ունեցավ. մին՝ բռնանալով տալու համար և մյուսները համառելով իրենց մերժմանը վրա. այն ատեն այս խմբագիրը՝ սովորաբար պոռոտախոս ու ցույցի համար ապրող մարդը, այս անհոգ ու անզգա մուրացիկը, այս գերազանցապես անտարբեր մարդը փղձկեցավ և արցունքի կաթիլ մը թրջեց ձեռքը մնացող ընկալագրերը։

Ջուր բերին, քաջալերեցին զինքը.

— Առջի երեսին համար անցյալ օր շրջանավարտ դպրոցական մը ուր ալունակ հոդված մը բերած էր հրատարակության, այն հոդվածը կը շարենք, ներքինները Օրագիրեն կառնենք, թերթոնը տպված է արդեն, հազիվ հիսուն տող կը պակսի, ան ալ Արամյան օրացույցեն օգտակար խրատներ կառնենք, կամրողջացնենք։

Կը գյուրացնեին գրաշարները թերթին աշխատությունը, տեսնելով իրենց տնօրենին անձկությունը. անոր աղեկ օրերը վայելած էին ու նեղության պիտի համբերեին անշուշտ. վատություն չէին կրնար ընել. և խմբագրեն գաղտնի, իրենց մեջ,

ճար մը մտածեցին առջի շաբթվան գուրս երթալիք Եփրատները խրկելու համար որոնք փոսթայի ծախք չըլլալուն, հոն մնացեր էին անկյուն մը նետված, փոշիներու տակ։

Քաքմաճյան՝ իրեն ցույց տրված օգնութենեն քաջալերվեցավ, ի բնե լավատես ու հուսալից մարդ էր. միթե Եփրատի առջի օրերը ինքը չէ՞ր նորեն այս թերթը հրատարակողը. թե որ քննադատությանց դարը անցած էր, ուրիշ միջոց պիտի որոներ, ապահովապես պիտի գտներ, ընդարմացած ընթերցողները ոգևորելու համար։

Այս Քաքմաճյանը, առաջ պարզապես մյուսյու Գասպար, նախ տուներու, հետո ազգ. վարժարաններու մեջ հայերենի, ազգ. պատմության ուսուցիչ, թողած էր այս ապերախտ ասպարեզը թաղյականներու և ճոգի բարձուներու հալածանքեն հուսահատ, ինչպես կըսեր ինքը ամեն դեմը ելլողին, քահ քահ խնդալով այս բառախաղին վրա որ իրը չէր սակայն։

Պատրիարքարանի գրագիր, վաճառականի տոմարակալ եղած էր ատեն մը. հետո ուրիշ միջոց մը չի գտնելով ապրուստի, հարմար միանգամայն յուր չարամիտ ու բամբասանքի տրամադիր ոգվույն, Առավոտի արտոնությունը խնդրեր և առեր էր. լրագրությունը միայն գտնելով դյուրին և անաշխատ արվեստ որ անցյալ նվաստությանց վրեժը կը լուծեր ամենեն։

«Չի պիտի վարանինք երբեք մատնանիշ ընելու ամեն զեղծում, ուր որ ալ հանդպինք»։ Այսպես կսկսեր նորեկ խմբագիրը և այս խոստումը սպառնալից բան մը ուներ իր մեջ։

Ասպատակելու, քանդելու հայտնի որոշումով այս թերթը կսկսեր հրատարակվիլ։

Առջի թերթին շփոթեցավ. ո՞ւսկեց սկսելու էր. այնքան ըսելիք ուներ և Առավոտը անբավական կերևեր իր պահանջումներուն. հետո ինքզինքը ժողվեց և վեց խմբագրականով Քաքմաճյան ամենուն ալ ըսավ իր ըսելիքը, զորս այնքան երկար ատեն զսպեր և պահեր էր իր փոքրիկ սրտին խորը, շղթելից կաթսայի մը պես, ուր շունչ մը առավ երկար, հաղթություն տանող մարդու գոհունակ ու ազատ շունչը։ Թերթը աղմուկ հանեց. Գասպար Քաքմաճյանի անունը ամենուն բերանն էր. չատեր՝ հետաքրքիր տեսնել կուզեին զինքը։

Ծուր ազգային տեսութիւնները ամփոփ պարբերութիւններով, չղուտ ոճով գրված, դանակի պես հատու, քացախի պես գառնահամ էին. ուրը տողի մէջ ամբողջ հայոց ազգը դատապարտելու հնարքը կը գտներ. հակասութիւն մը միայն կար որ բնաւ չէր հասկցված. այս շատախոս մարդը լակոնական ոճը կը սիրեր. սովորաբար երկայրաբանութեամբ և խրոխտ բնաբանով մը կսկսեր անհեթեթ եզրակացութեամբ մը վերջացնելու համար։

Օր մը Առավոտի մէջ, այժմյան Եփրատին նախահայրը եւ լավ գրեց.

«Սկզբունքը՝ կյանք ու գոյութիւն կը նշանակէ. և Խասգիւղի թաղականները սկզբունք չունին, վասնզի ամեն օր իրարու հակառակ որոշումներ կուտան, ուրեմն Խասգիւղի Թաղ. խորհուրդը գոյութիւն չունի». և կը հրավիրեր թաղեցին նոր ընտրութիւն կատարելու համար։

Եվ հետևյալ օրը Օրթագիւղ փողոցին մէջ ծանոթ մը նշմարելով հեռուեն ձեռքով-ոտքով նշան կըներ, կը կանչեր կը կեցներ մարդը որուն հետ հազիվ բարև մը փոխանակած էր մինչև այդ պահուն, ու խնդալով ուսին զարնելով, վաղեմի բարեկամի մը պես իր բերկրութեան մասնակից ընել կուզեր զայն։

— Կարդացի՞ր Առավոտը, չախչախեցի թաղյականները։

Այնպես որ ամենքը չախչախելով, փշրելով, ամբողջ հայոց ազգը ալյուրի վերածած ըլլալու էր։

Ընթերցողները տրամաբանական նրբութիւնները չէին հասկնար, բայց Առավոտը կառնեին սիրելով անոր վիճաբանող ու կռվարար հոդվածները և իրիկունները շուկայեն վերադարձին էսնաֆները կը գնեին զայն անհամբեր, գիտնալու համար թե որի՞ դեմ գրված էր այն օր. մյուս լրագիրները կը հարձակեին այս նորեկին վրա ի հարկին խմբագրին անձը, ընտանեկան կյանքը նետելով մեջտեղ ու Քաքմաճյանը ծաղրելի ընելու միջոցներուն մեջ ընտրութիւն չընելով երբեք։

Ընթերցողները կը զվարճանային և Առավոտը կը շարունակեր երևիլ. տանը դրացիները նախ զգուշութեամբ դիտեցին այս կազեթաճին, որ իրիկունները թուղթերով, լրագիրներու ծրար-

ներով ծանրաբեռնյալ կը դառնար տուն ուր անպաշտոն քարոզիչ մը, վռնտված վարժապետ մը սովորաբար հյուր եկած կը գտնվեր։

Կինը՝ Ֆուլիկ հանըմ, ատենով վարժուհի մ'էր Քում-Քափուի վարժարանին մեջ ուր մյուսյու Գասպար կը դասախոսեր, և տասնևութ տարիի ամուսնութենե մը վերջը մեկ հատիկ աղջիկ զավակ մը միայն եկած էր իրենց առանձնությունը ոգևորելու։

Ֆուլիկ հանըմ նիհար, դյուրաթեք արարած մ'էր, հիմա քառսունի մոտիկ որ գյուղին մեջ կը վայելեր էրկանը հարուցած աղմուկին արձագանքը և Առավոտին համբավին կը մասնակցեր իբրև կազեթաճիին կինը։ Կզգուշանային անոր քովխոսելե, վախնալով որ հաջորդ օրը լրագիրը չի հրատարակե իրենց բամբասանքն ու սովորական չարախոսությունները։

Խմբագիրը բավական կը շահեր ընտանիքը ապրեցնելու չափ, ամառվան ու ձմեռվան գլխարկն ու շրջազգեստը շինելու չափ իր կնոջը ու աղջկան, որ գիշերները իր հոդվածներուն մաքուրը առնելու կաշխատցներ։

Երկու տարի միայն տևեց այս երջանիկ գոյությունը։ Պատրիարքական փոփոխության մը մեջ, Քաքմաճյան իր հարվածած եպիսկոպոսին ընտրությունը չի կրցավ արգիլել և նորընտիր Պատրիարքը թերթը խափանել տալով պատասխանեց խմբագրին առջի ազգ. տեսությանը, հորում մեծաբան հրապարակագիրը առջի օրեն իրեն դեմ կը զինվեր։

Այս առջի հարվածին տակ չընկճեցավ սակայն, այլ իր ամեն բան չափազանցելու տրամադիր մտքովը ինքզինքը լրագրական «նվիրական դատին» զոհը նկատեց, այնպիսի զոհ մը որ ապրելու պետք ունի, վասնզի ընտանյաց տեր է. բարեկամներ օգնության ձեռք կարկառեցին, Մանզումե իր մեծագույն հակառակորդը, այն ատեն հաջողության զենիթը հասած, գովելի վեհանձնություն մը ցույց տվավ հանգանակություն մը բանալով. աղետն ամենեն շատ գրաշարներուն զգալի եղավ. պարապ ու անգործ մնացած խեղճերը՝ գերեզմաններե վտարյալ ուրվականներու պես նիհար ու դժգույն շրջեցան փակ մրնացող տպարանին շուրջը։ Յոթն ամիս վերջը Քաքմաճյան

Տիգրիսի արտոնութեամբ նորեն հրապարակ եւավ, այս անգամ խոհեմ ուշրջահայեաց, տեսած պատիժեն խրատեալ։

Օր մը սխալեցաւ նորեն։

«Պատ. Քաղաքական ժողովո մեկ սխալը» վերնագրով հոդուած մը հրատարակեց ու Տիգրիսի հորդումներն ալ արգիլուեցան. հիմա Եփրատը կը հրատարակեր, հայտնելով ամենուն որ սարերը միայն կայծակը կը հրավիրեն ու այս անպատեհ փոխաբերութեամբ սփոփուած՝ որ իր անապարծութեան կը պատշաճեր, հետզհետե կը վարժվեր իր ակամա գործադուլին, գրեթե կը սիրեր անոր պատճառած անդորր ծուլութիւնը։

Այս գադարման օրերուն մեջ, ստակի անձկութիւնը ավելցած օրն ի բուն կը շրջեր Պոլիս, Ղալաթիա, եկեղեցիները ու խաները, ի տես հանելով իր անձը կենդանի պատկերի մը պես որ հայ լրագրութիւնը կը ներկայացներ։

Հոս հոն պարզամիտ գավառացիներ կը փնտրեր, կը գրտներ իր թիրթին հավաքածոն առաջարկելու համար իբրև քե հազվագյուտ գրական գանձ մը ծախու հաներ և ձեռքը օդին մեջ երերցնելով ապշած դրսեցիին աչքը խոթելու ձևով, հանդիմանելով զայն, այսպիսի թանկագին բանի մը կարևորութիւնը չըմբռնելուն համար, կը գոչեր.

— Ժամանակակից պատմութեան էջերն են, զորս տեղ մը չեք կրնար գտնել. ասկից քանի մը տարի ետքը տասը ոսկիի պիտի վաճառեք քե որ ուզեք, բայց ձեզի համար երկու ոսկվո կը ձգեմ։

Մարդը կը վարաներ, ու Քաքմաճյան իր վերջին միջոցը ի գործ կը դներ։

— Քրտինքովս, արյունովս գրված են ասոնք, ազգին երեսուն տարվան վաստակավորն եմ, հասկցա՞ր, բարեկամ. գավառացին կամչնար, կը վճարեր։

Այս կերպ հնարքներով կապրեցներ տունը, պահելով խրոխտութիւնը մուրացկանութեան մեջ. անդադար ծխելով (իր միակ մոլութիւնը) ու մութեն ամպ մը միջեն երերցնելով մեծախոսիկ լեզուն, ֆեսը վեր նետած, ճակատը լայն, ամայի. ու մանր աչքերը խոժոռ խոժոռ անթարթ ուղղելով խոսակիցին (եթե հարգելու մարդ մը չէր), կարծես թե ըսել ուզեր.

— Դուն ես այս վիճակիս պատճառը։

Ֆուլիկ հանըմ իր խեղճ կինը ընտանի կենդանիի մը պես հնազանդ և համակերպող, վերահաս աղքատության կը դիմադրեր, կոկելով, նորոգելով հինները, ու պարտկելով չքավորության ղրկումները։ Իր մեկ հատիկ աղջիկը՝ Նոյեմին կուգար կը հասներ ճիշտ հորը այս գահավեժ անկման միջոցին իր պատանուհվո ամեն հույսերուն, փափագներուն ոչնչացումը տեսնելու համար։

Վարձով նստած փոքրիկ տուներնին եկեղեցվո ճիշտ դեմն էր. այս դրացիությունը աղջիկին աղոթասեր ու լռակյաց ոգվույն հարմար էր։

Հայրը իր դժգոհություններով, աղմուկովը կահաբեկեր գինը և ավելի ևս կը պարտավորեր մեկուսի և անշշուկ կենալու։

Միակ հաճույքն էր այս աղջկան, իր փոքրիկ սենեկեն որուն բոլոր հորիզոնը եկեղեցվո բարձր պատերովը կը սահմանվեր, եկեղեցի եկողները դիտել, չանալով գուշակել անոնց ժամասիրության պատճառը ու գաղտնիքը. գիտնալով որ տիկին Շամլյան իր տղուն նշանտուքին համար կուգար, Սուրբիկ տուտուն՝ գյուղին պառավը, տրտնջալու, ամենքը իրենց խնդիրքին համեմատ մոմերու, արծաթ խաչերու, ոսկեթել վարագույրներու խոստումով կաշառելու նախախնամությունը։ Այսպիսով Նոյեմի մոռնալ, չի տեսնել կուզեր իր հորը վրա ծանրացող թշվառությունը, մինչդեռ խմբագիրը հաճույք կզգար կարծես ամեն իրիկուն այս տասնևվեց տարու աղջկան հասկցնելով պատմելով իր բոլոր օրվան տառապանքը։

Վերջերը նոր միջոց մը հնարեր էր ստակ շորթելու ամուսնացող երիտասարդներեն։ Առջի Պսակին կամ սուրբ Սարգսին Պատրիարքարան կը վազեր, կարգվելիք անձանց ցուցակը առնելով ընտրություն մը կրներ. հարուստը կը զատեր մեջեն և թերթին ճակտին համար հարսանյաց հանդեսին նկարագիրը կուտար Ատոմին որ հետևյալ բանաձևով կը վերջանար «երջանիկ ու բարեբաստիկ կյանք մը կը մաղթենք նորապսակ ամուսնացողներուն» և կոկիկ ծալքով, կապույտ սիրուն ժապավենով մը դոր Նոյեմի կը պարտավորեր հատկապես պատրաս-

տել, Եփրատի այն թիվը տարեկան ընկալագրին կցված հատուկ ցրվիչով կերթար մատուցվելու փեսին գրասենյակը, հարսնիքին երեքշաբթի առտուն։

Թե որ բաժանորդագինը չի գար ինքը կը ներկայանար գրասենյակ ժպտուն, քաղաքավար, գունաթափ փալթոն կոճկած, բոլորովին պաշտոնական ձևով.

— Արգելք չըլլամ Ձեր զբաղմանց. կաղաչեմ Ձեր գործը նայեցեք։

Մեղրածորան գգվալից բառերովը, զգույշ և բարեկիրթ վարմունքովը ամչցնելով դիմացինը։

Եվ սեղանին վրա բացված սիկառի տուփ մը նշմարելուն, մտերմանալով տիրոջը հետ.

— Սիկառ մը առնելու թույլ կուտա՞ք։

Մուխին մեջ Քաքմաճյան կը խոսեր, չի հուսահատելով ոևէ մերժումե, այլ ավելի ևս քաղցրացնելով լեզուն կը հիշեցներ Առավոտի, Տիգրիսի, Եփրատի անցյալը, միշտ անցյալը, իբրև թե բացակա մարդու մը իրավունքը պաշտպաններ։ Հետո իրավախոհության կուգար, երկու մեճիտիեով կը բավականանար և կը մեկներ։

Այսպես կը շրջեր փողոցե փողոց, ծխնելույզի մը պես բերնեն արձակելով մուխի թանձր ոլորքներ և շարժելով անհամեմատ կերպով երկայն թևերը որոնք կարծես վերջեն փակցված էին իր ոսկրուտ ուսերուն. ձեռքերը հաստ, կոպիտ, ավելի գործավորի մի վայելուչ քան թե գրական մարդու, և միշտ կարկառելու ուզելու պատրաստական. երկայն հասակին վրա փոքրիկ գլուխը հսկա գնդասեղի մը երևույթը կուտար իրեն. քիթը մանավանդ իրմե առաջ կը նշմարվեր, ցից ու հառաչապահ, միջամտող ու հետաքրքիր քիթ՝ տիրոջը բոլոր փառասիրությունները, տկարությունները ի ցույց ածելով։

Քաքմաճյան չէր տեսներ այլ կը հոտվըտար ու կը հավաքեր հաջորդ օրվան լուրերը երբ թերթը դադարման մեջ չէր, մանավանդ ամեն գայթակղությունները զորս ժողվելե վերջը կերթար հեղինակները գտնելու, քիչ մ՚ ատակի փոխարեն լռություն խոստանալով և դրամ առնելե վերջը գոհ, երջանիկ, վեր

կը բարձրացներ պարծենկոտ քիթը և խղճմտանքին վստահ մարդու մը պես կըսեր.

— Ես շանթած ընողներեն չեմ։

Կոտրած, ծռած գրասեղանին վրա կորաքամակ, իր մոլորյալ մտքին անհրաժեշտ եղող սիկառը բերանը, փորձերու սըրբագրությունը սկսավ. մերթ ընդ մերթ կընդմիջեր սրբագրությունը լուրերուն շարադրության վրա դիտողություն ընելու համար, չի հավնելով Օրագիրին հայագիտությանը, անոր սրխալները ուղղելով։

— Պատվանշան չեն պարգևեր, կը շնորհեն. այս մարդիկը հայերեն չպիտի սովրին. տեսե՛ք, տասը տարվան խմբագիր մ՛է այս աններելի սխալը գործողը։

Հետո աշխատությենեն ձանձրանալով իր օգնականը հարցուց.

— Գևորգ ո՞ւր մնաց այս ատեն։

Նոր սիկառ մը շինեց ու սերթ ծխելը արդարացուց.

— Մեղմ ծխախոտը վնասակար է։

Կը քրտներ այս տանիքին տակ ուր արևուն ջերմությունը շնչառությունը կարգիլեր. հինգ վայրկյան վերջը մեկ կողմ նետեց փորձերը. խոսելու, շաղակրատելու մարմաջեն բռնված՝ Քաքմաճյան Եփրատին համար նոր ծրագիրներ, նոր խորհուրդներ շինեց. թերթը տասը փարայի իջեցնել պղտիկ ծավալով բայց օգտակար պարունակությամբ. թերթոնը վերցնել. ի՞նչ է այս թերթոնը. ֆրանսական վեպը ի՞նչ կը հարմարեր մեր բարքերուն. կոմսուհիներու, դքսուհիներու պատմություններ որ մեր երիտասարդաց սրտերը կապականեին. հետո թերթոն բառին չի հավնեցավ, հայերենի կանոնաց համաձայն չի գտավ։

Ինքը՝ ահավասիկ ինչպես իր թերթը պիտի հրատարակեր. նախ, խմբագրական մը. ի՞նչ նյութի վրա. Քաքմաճյան խորհեցավ, փնտրեց. ազգային խնդիրներու վրա չէր կրնար գրել. ժողովականներուն ծուռ ընթացքը քննադատել մտքեն անգամ չանցուց. կամա ակամա տնտեսական պիտի ըլլար իր հոդվածը, ամենեն առաջ նյութականը. տնտեսական գարգացում մը պետք էր մեզի. խմբագրականեն ետքը օրվան լուրերը,

դեպքերը, նշանավոր անձանց երթևեկը, Հավասի հեռագրերը. բարձրաձայն կը համրեր նյութերը մատներուն վրա, տողերուն հաշիվը ընելով։

Այս միջոցին իր օգնականը տեսավ Գալուստյան Գևորգը որ սանդուխեն վեր կելլեր Աբրահամ աղային հետ, Տևեճյան Մարտիրոս էֆենտիի մեծանուն հայ սեղանավորին, ոչ նվազ մեծանուն սպասավորն որ խմբագիրը էֆենտիին սենյակը տանելու եկած էր։

— Կուգամ, ըսավ անոր, և օգնականին դառնալով՝

— Ո՞ւր մնացիր, ի՞նչ լուր։

— Ռուսահայ վաճառական մը եկեր է. շարաթ գիշեր ի նպաստ Նարդիկի ներկայացում կա, ծանուցում պիտի ընենք. երկու ամսեն Տեմիրճյան էլպիսին ամուսնություն։

— Որի՞ հետ։

— Տեմիրճյանին գրագրին հետ։

— Ջրսես որ Շամլյանները պիտի կատղին. Մանչեսթրին հոս տղանին բերել տալ և չի կրնալ հավնեցնել, սա Տեմիրճյանն ալ գրագրին հանե աղյի՛կը տա. աշխարհք փոխվելու վրա է. եփրատն ալ պիտի փոխենք, Իր խորհուրդները, ծրագիրը նորեն պարզեց։

Գևորգ համաձայն էր բոլորովին. ան ալ իր գաղափարները ավելցուց։

— Հայ թատրոնի բարձրացման դատը ձեռք առնենք. աս ալ ազգ. իշխանության դեմ քննադատություն չէ որ արդիլվի, ուզածնուս չափ կը գրենք. թատրոն և ոչ պարահանդես. բուռն հոդված մ'ալ գրաբարի դեմ. կը տեսնենք, Գասպար էֆենտի, որ խափանման կամ դադարման ամեն պատահականութենե բոլորովին հեռու եմ. այո՛, կա՛մ գրաբար, կա՛մ աշխարհաբար, խառնուրդ և հրեշային գրականություն չըլլար. մին կամ մյուսը։

Քաջմաճյան իրմե ավելի ծայրահեղ մը տեսնելով դեմը վարանեցավ, երիտասարդին երեսը նայեցավ.

— Մի՞ն կամ մյուսը, հարցուց անոր, գլուխը բերելով, գրաբարի լավ մասերը առնելո՞ւ ալ հակառակ ես։

— Բոլորովին։

Երիտասարդը իր կլոր կարճ հասակովը հակապատկեր մը կը ձևացներ խմբագրին երկայն հասակին քով. թարգմանչաց վարժարանեն շրջանավարտ՝ տարի մը պարապ պտտելեն ետքը, ոչ ոք գնած էր իր ազգային դրականության մեջ ունեցած՝ հմտությունը։

Առջի վաճառականը որուն նիրկայացավ գործ ուզելու համար, անոր ոտանավոր գրելը իմանալուն պես առանց ուրիշ հարց ու փորձի ճամփու դրավ զինքը։

Հայկ դյուցազնը, Հոմերոսը, Միլթոնը չար ոգիներու պես ամեն դուռ գոցելու ծառայեցին։

Կնսարաձի վաճառական մ'ալ Անատոլու գրվելիք առևտրական նամակի մը նմուշը գրել տվավ իրեն փորձի համար. նորընծա դրագիրը շատ պարզ, շատ հստակ դրած էր ամեն ինչ, բայց առևտուրի մեջ որոշ ու հայտնի բան մը գրելը պակասություն մ'էր. վաճառականին կարծյորը, մութ, տարտամ, ստվերամած դույն մը պետք էր ի հարկին փախուստի ճամփա մը ի պահեստի ունենալու համար. կնսարացին գոհ չի մնաց ու Գևորգ ամեն կողմե հուսակտուր՝ լրագրո մեջ հոդված գրելու ստիպվելով խմբագիր եղավ։

Երկրորդը՝ կնսարացի մը առևտրական նամակի մը նմուշով փորձեց պատանի Գալուստյանին վաճառականական հարմարություն ու գոհ չի մնաց, նորընծա գրագիրը պարզ ու հստակ գրած էր ամեն ինչ. և կնսարացին կը հավատար, իբրև փորձ ռազմագետ, որ ուշիմ գրագիր մը իր նամակին մեջ ամեն գրվելիքը գրելով հանդերձ տարտամ, անորոշ դույն մը ձգելու էր հոն, հարկ եղած ատեն փախուստի, նահանջի ճամփա մը ունենալու համար. ո՛չ, այս տղան շատ կտրուկ, շատ որոշ կը գրեր. վաճառականը իր գտած պակասությունը չի ծածկեց բնավ։

— Աղեկ գրված է այս նամակդ, բայց ամեն բան տիփլոմաթեա ըսելու է. թե որ գիները իչնան, պետք է որ ազատ ըլլանք ապասլրված ապրանքնիս չառնելու. վնասվելու, կործանվելու համար վաճառական եղած չենք, կը հասկնա՞ս

Տղան շարադրության այս եղանակին չի կրցավ համոզվիլ.

վերջապես առևտրական ասպարեզը չի ժպտեցավ իրեն. շարունակվող անգործությանը մեջ սիրտը նեղացավ, հոդված գրեց, ու խմբագիր եղավ։ Լրագրին որոշ, կանոնավոր ամսական մը չուներ բայց իր գտած բաժանորդներուն դրամը ինքը կստանար. անշուշտ հարստանալու համար եկած չէր Եփրատին. բայց հրապարակագրությունը սրտի գոհացում կուտար իրեն և այս փոշիով, սարդի ոստայններով լեցուն հարկեն կարձակեր դպրոցեն մնացած ծայրահեղ գաղափարներ զորս իրական կյանքի դառնություններ։

Հիմա իր բարեփոխման ծրագիրը վախ կազդեր Քաքմաճյանին։

— Տակը կամ վրան, կրսեր երիտասարդը, լույս կամ խավար. մենք բոլորովին աշխարհաբար կը հրատարակենք մեր թերթը, իրենց բառերն անգամ պիտի մերժենք, թող իրենք ալ գրաբար թերթ հրատարակեն և ընթերցող գտնեն։

Այս ծանրակշիռ որոշումը տալե առաջ Քաքմաճյան խորհեցավ. սիկառ մը շինեց, վառեց։

Գալուստյան անգամ մը սկսած էր ու չէր կրնար կենալ։

— Ես անցյալ օրվան ներկայացման առթիվ սկզբնավորություն մը ըրած էի, հավնեցա՞ք, Գասպար էֆենտի. դերասանական արվեստը ծաղրելի միմոսություն մը չէ. բարձրագույն բարոյականի և տաղանդի արվեստն է։

Խմբագիրը շատ անգամ ծայրե ծայր չէր կարդար իր թերթը։

— Կը խորհինք դեռ, ըսավ երիտասարդին անոր եռանդը չափավորելով, դուն սա մնացած փորձերը նայե. ես քանի մը տեղ հանդպելու պարտավորած եմ, տունն ալ հիվանդ ունիմ. աղջի՜կս։

Վերջին բառին վրա հառաչեց, հառաչելու պարտավոր զգալով ինքզինքը։

— Տոքթոր Սիմոնյանը կանչեցնեք, շատ ճարտար բժիշկ է, անշուշտ կարևոր բան մը չէ, կանցնի, հոգ մի՛ ընեք, Գասպար էֆենտի։

Խմբագիրը չի կեցավ ալ. սանդուխներեն իջավ ոչ թե ոտքերը տեսնելով մի առ մի, այլ երկար ժամանակով ստացված

վարժութեամբ մը, արագ քայլերով շիտակ ճամփեն դեպի կամուրջ կերթար։ Ֆ.Նսոլիտ խանին մեջ քանսոլիտի գինն հասկընալ ուզեց, բայց խլացուցիչ ժխոր մը կասեցուց զինքը։

Ամենքը կը պոռային, միաւոր, հարյուրաւոր, հազարաւոր թվանշաններ նետելով օդին մեջ. դուռնեն մինչև երկրորդ հարկը գացող երկաթե սանդուխներուն վրա ամեն ազգե ամեն տարիքե կազմված ամբոխին պայքարը մրրկոտ ծովու մը պես կուգեր կը մռնչեր գետնահարկեն մինչև ձեղունը բարձրանալով։ Դուրսեն անոր պարկեշտ երևույթեն ոչ ոք պիտի գուշակեր որ դրամական աշխարհին բոլոր տագնապները, անկումները, մեծութիւնները այս խանը կերկներ կը պահեր իր անզգա որմերուն մեջ։

Ամեն ոք կաճապարեր, ձայներնին խեղդուկ երկու ժամե ի վեր, մասնակցելնուն համար այս դրամական նվագահանդեսին, վերջին ճիգ մը ընելով չի կորսվելու հետզհետե բարձրացող այս ահագնալուր եղանակին մեջ ուր թիվերը ձայնանիշերու տեղը բռնած կը թվեին։

— Հազար կա։

— Հինգ հազար կա։

— Հինգ հազար ալ կա։

Ձեռքերնին շարժելով գլուխնուն վրայեն տեսանելի ըլլալու համար բազմութեան մեջ, մեծցնելով թիվերը, առաջարկութիւնները ավելի հրապուրիչ դարձնելու համար. Քաքմաճյան ինքզինքը մոռցավ այս աղմուկին ու անմարմին առուտուրին մեջ. մտածեց որ քաղաքական կարևոր լուր մը եկած ըլլալու էր այս աստիճան տակն ու վրա ընելու համար խանին հաճախորդները։ Այդ լուրին ի՞նչ ըլլալը ստուգել ուզեց. փիացան հարցուց. տիրող տագնապեն հաստատ ու որոշ գին չիկար, տարբերութիւնները այնքան մեծ և հանկարծական եղած էին որ ոմանք իրենց դրամատուները գոցեր էին վճարման եղանակներուն մեջ այս միջոցը գտնելով ամենեն համառոտը՝ ամբագիրը գոհ մնաց հոս հանդիպելուն և աղետին ամենեն ծանր վայրկյանին հասնելուն համար։

Այս վայրկյանին բոլորովին մոռցած էր հիվանդ զավակը, գանձելիք բաժանորդագիները և Մարտիրոս Էֆենտիի հրավե-

րը, հոս մեկ խոսքով հարստացող, աղքատացող մարդոց վիճակը դիտելու զբաղած։

Հանկարծ երկրորդ հարկը տանող երկաթե սանդուխին վրա կանգնած ծանոթ դեմք մը նշմարեց և ամենուն մեջեն սպրդելով անոր քով հասավ։

— Բարև, Ստեփանիկ աղա։

— Բարև։

— Ի՞նչպես, աղե՞կ եք։

Ստեփանիկ աղա կարմրած, ֆեսը վեր, թաշկինակովը սրբելով ճակտին քրտինքները, փոխանակ պատասխանելու իրեն, վարը կեցող մեկու մը կը պոռար հինգ մատերը բանալով, կարծես մուր տալու համար։

— Հինգ հազար կա։

— Առի, պատասխանեցին վարեն։

Հինգ հազար, հինգ հազար ալ, ու վարը կը շարունակեր պատասխանել «առի» «առի» խրոխտ շեշտով մը, կարծես թե զայրացնելու համար վերը, ուր վիրջին վանկը միայն կր հասներ «ռի, ռի» սպառնալից refrainի մը պես։

Խմբագիրը կը դիտեր զմայլած, աչքերը խոշոր բացած. երբոր հիսուն հազարի հասավ ծախածը, Ստեփանիկ աղա կեցավ. հանդարտեցավ, ահագին բեռ մը գացած ըլլալու էր սրտին վրայեն. ֆեսը շտկեց. խոժոռ, բարկացած դեմքը թողուց խմբագրին երեսը նայելու համար. Քաքմաճյան այս բերանացի առուտուրին կը հետևեր ուշադիր, շունչը զսպած, արդյունքը հասկնալու համար. երբոր տեսավ իր բարեկամը հանդարտած տեսարանը իր կարևորությունը կորսնցուց, մնաս բարով ըսավ սանդուխներեն վար իջավ. կամուրջին վրա անցագին ուզեցին տա՞ր փարա. ինչ չնչին գումար քոնսոլիտ խանի միլիոններուն քով. գրպանները խառնեց, փանթալոնին երկու խորշերը բացատական պատասխան տվին. բաճկոնին գրպանները նայեցավ. ոչի՞նչ. վերջին հույսը փալթոյին վրա կհնտրոնացավ. իզուր անոր ալ գրպանները նայեցավ, հատակները քննեց և սակայն շատ լավ կը հիշեր որ քառորդ մեճիտիե մը և հարյուր փարանոց պիտի ունենար. և անցագինը պահանջող մարդուն քով պզտիկ չի մնալու ջանքով նորեն սկսավ իր անօգուտ խու-

զարկուիլյունը. անցնողները զինքը կը դիտեին. ծանօթներ բարեւելով կանցնեին. այո՛, ամենքը կանցնեին. ինքը միայն անշարժ ու գամված կը մնար և չէր համարձակեր ետ դառնալ. բայց ո՞ւր էր իր քառորդ մեճիտիեն. հանկարծ խորհեցաւ թե կարելի էր առտուն Ֆուլիկ հանըմ վերցուցած ըլլար գրպանեն առանց իրեն իմաց տալու. այս շատ հավանական էր. վայրկյանին իր կինը արձակելու անհուն փափագ մը ունեցաւ. հետո հիշեց որ քառորդը առջի իրիկուն պարտքի տված էր, իսկ հարյուրնոցին հաշիվը չի գտաւ։

Անցագին ուզողը կը շարունակեր զինքը դիտել ոտքին մինչև գլուխը, հին կոշիկին մինչև յուղոտած ֆեսը, ու այս ապարդյուն փնտռտուքը նկատելով սովորական հնարք մը ձրիաբար անցնելու համար կամուրջը։

Ետ դարձաւ վերջապես հեռանալով այս ամոթի վայրեն Ղալաթիո բազմութեան մէջ անհետանալու համար. իր ճանչվորները կը շարունակեին կամուրջեն անցնիլ ազատ հատարձակ, իր բերնին ջուրերը վազցնելով, որոնց և ոչ մեկեն չի համարձակեցաւ տասը փարա ուզել, սպասելով որ բարեկամի մը ընկերացած ինքը ևս իր կարգին այս անանցանելի գիծը անցնի. ոչ ոք տեսաւ որուն հետ այս փորձին ձեռնարկեք ու պարապ գրպաններուն մէջ դեռ թափառող ձեռքերը ընկալագրերուն կը հանդիպեին միայն. այն ատեն զայրացաւ, տասը փարայի տուրքը անհիմն ու անիրաւ գտաւ և որոշեց որ առանց զայն վճարելու անցնի կամուրջեն. ի՞նչ կերպով. Ղալաթիո եզերքեն մինչև անցագին ուզելու տեղը տասը կանգունի չափ կրնար հառաջանալ. ատկե պետք էր սահիլ ստվերի մը պես առանց ուշադրություն հրավիրելու. վերջուրին, հրապուրիչ երեւցաւ այս ծրագիրը և ճերմակ շապիկով հոն կեցող սպառնալից ուրվականին դեմ արժանի վրեժխնդրություն մը։

Ոսկեղջյուրի նավակները դիտելու ձև մը առած խմբագիրը անտարբեր, համրաքայլ հառաջացաւ աչքին պոչովը դիտելով սպիտակ ուրվականը որ իրեն չէր նայեր այս միջոցին. երկու մուրացիկ տղաք ողորմություն ուզեցին իրմե. հանկարծ կամուրջին քովի երկաթին հենուած մարդ մը իրեն պես տասը փարա չի վճարող մը անցագիծեն խույս տավ բայց ոչ այնքան

հաջողությամբ որ պահնորդները չի տեսնեին. երկու ծովային զինվոր ետևեն հասան ու ետ դարձուցին մարդը։

Քաքմաճյան այս տեսարանեն խրատվեցավ ու ետ դառնալու վրա էր երբ փրկավետ ձայն մը զինքը կանչեց։

— Ի՞նչ կը դիտես հոդ։

Խմբագիրը նոր կյանք ստացավ տեսնելով Պասմաճյան Հակորիկը։

— Ոչինչ. ո՞ր կողմ, Հակորիկ էֆենտի։

— Պոլիս։

— Ես ալ. միասին երթանք։

Հակորիկ վճարեց ստակը. ուշ մնացած էր. կամուրջին կեսեն պատճառ մը առարկեց ու երիտասարդեն զատվելով շուտաքայլ հեռացավ իր բաժանորդները գտնելու համար։

Նախ Ջաքմաքճըլար Շամլյաններու վաճառատունը հանդիպեցավ ուր պասմայի ծրարներու ետին պատերը անտես կը մնային։ Բեռնակիրներ դրան առջև ձգված վաճառքի հակերը քակելու կզբաղեին. ներսը պարսիկ վաճառական մը մաս մը ապրանք կը սակարկեր հրեայե մը ավելի բծախնդրությամբ. նեղ խանութին մեջ անցնելու տեղ չէր մնացեր. խմբագիրը զգաց որ պատեհ ժամ չէր ստակ ուզելու. ետ դարձավ անկեց Սիրքեճի Տեմիրճյաններուն. հոն հաջողեցավ. գանձապետը դեղնի վրա, ակնոցավոր սիրուն տղա մը, առանց ընդդիմության վճարեց տարեկան բաժանորդագինը. Քաքմաճյան շնորհակալ եղավ ու տեղի անձկության պատճառավ գետնի վրա դիզված երկաթե փողերու վրայեն քալելով, ճշմարիտ լարախաղացի մը ճարտարությամբ հեռացավ։

Ամենեն հուսավետը, Մարտիրոս էֆենտին, վերջի թողած էր, այն մանուկներուն պես որ սիրած կերակուրնին ետքի կը պահեն։ Տասը քայլով ինքզինքը Թաշխանի դուռը գտավ, վեր ելավ էֆենտին հարցուց. բազմություն կար։

— Էֆենտին զիս է ուզեր, ըսավ խմբագիրը, իմացուցեք. դրան մոտ նորեկ ծառա մը կընդդիմանար այս մուրացիկի զգեստով մարդուն։

Մարտիրոս էֆենտի անկյունը բազմոցին վրա նստած, սովորական անմատչելի անձը չէր. Քաքմաճյան կը զարմանար.

«Ո՞ւր էր այն մարդը որ դրամ բաւին դ գիրեն կսկսեր երեսը խախել, հազար առարկութիւն հաւուցանել ստակ չի տալու համար. թերթը կանոնաւոր կերպով չէր խրկվեր, լուրերը երկու չաբաթ առաջվան լուրերն էին։

Այսօր ընդհակառակն իր դեմքը չի մթագնեցաւ, լուր հարցուց խմբագրեն, գովեստ խոսեցաւ Եփրատի վրա. Քաքմաճեան իր առջի սիկառը ուզեց։

— Դուք հոտավետ ծխախոտ ունիք, սիկառ մը կաղաչեմ էֆենտին ծխախոտը ներկայացուց և հառաջիկա շաբաթ օրվան ներկայացման առթիվ Եփրատի մեջ գեղեցիկ հոդված մը ուզեց խմբագրեն։

— Անոր համար կանչեցի Զեզ։

— Գլխուս վրա։

Հիմա այս ազնիվ ընդունելության պատճառը հասկցած էր Օսմանիեի թատրոնին առաջին դերասանուհվուին նպաստի ներկայացումն էր։

— Տաղանդավոր աղջիկ մ'է այս դերասանուհին։

Մարտիրոս էֆենտին ազգին արվեստավորները քաջալերելու կողմն էր։

— Ի՞նչ է օտար թատրոններու տրված ստակը. մեր ազգային թատրոնը, մեր դերասանները հազար անգամ օտարեն բարձր են։

Քաքմաճյան գիտեր այս ազգային թատրոնի համար ցույց տրված խանդաղատանքին գաղտնիքը, ու էֆենտիին տկարությանցը տեղյակ՝ հիմա կը թողուր իր պաշտոնական նստվածքը, սիկառին մուխը ռունգերեն կարձակեր, քրտնած ձիու մը պես, սենեկին կես լույսը անթափանց մառախուղի մը վերածելով. և բարև բռնող ձեռքը քակած, ոտքը ոտքին վրա հանելով, խմբագիրը տեսակցությունը շարունակեց։

Շաբաթ գիշեր Օսմանիեի թատրոնը արտասովոր բազմությամբ կը լեցվեր. ահագին gazomètre մը կարծես այս շենքը կամ մեծածավալ փեթակ մը որուն փոքրիկ դռնեն մտնողնե-

րուն վերջը չի գար։ Շաբաթե մը ի վեր թատրոնին մուտքին, փողոցի պատերուն, տախտակներուն վրա փակցված դեղին, կարմիր, կանաչ ծանուցումները, լրագրաց հրատարակությունները մեծ գիրերով ՆԱՐԴԻԿի անունը ամեն կողմ աչքի առջև կը դնեն և բազմությունը հրապուրված՝ անընդհատ կուգա գյուղեն, քաղաքեն, հետաքրքիր, տեսնելու համար դերասանուհին որ իր կատարելիք դերով նույնիսկ իր գոյությունը ի հանդես պիտի բերե։

Քամելիազարդ տիկին պիտի ներկայացվի. պարտիզին մեջ՝ նոր եկող կառքերու քավալումը, խոսակցությունները, տոմսակ ուզողներու ձայները, անթիվ, թվավոր նստարան, պենեուարի, երրորդ հարկի օթյակ, աղեկ տեղ մը ընտրելու, շուտ ներս մտնելու ջանքերը՝ բոլորը իրարու կը խառնվին։

Ներսը՝ լուսափողփող ու բոլորակ սրահ մը որուն շուրջը օթյակներու չորս հարկերն կը բարձրանան իրարու վրա, դուրս գացող հսկա շոգենավի մը խցիկներուն պես. նոր հասնողները տակավ առ տակավ կը տեղավորվին. օթյակներու դուռները անընդհատ կը բացվին կը գոցվին սաստիկ շառաչմամբ. վերնահարկը, սրահը անհամար գլուխներով կը ծածկվին. և ամենուն տեղերը որոշող պաշտոնյաներուն ձայները կը լսվին շարունակ, տոմսակներուն համաձայն։

— Թիկնաթոռ թիվ 24։

— Նստարան թիվ 37։

Սխալներ տեղի կունենան. իրարու տեղ գրաված ըլլալու բողոքներ կը լսվին, և բազմությունը հետզհետե կը զետեղվի թատերաբեմին փակ վարագույրին դիմացը. ծանոթներ գիրար կը բարևեն գլխով, ձեռքով. մեկը՝ վարագույրին վրայի պատկերին նշանակությունը կը հարցունե քովի նստող մարդուն. նվագածուները իրենց գործիքները կը ներդաշնակեն խժալուր աղմուկով մը ծածկելով բոլոր ձայները և հանդիսատեսներուն անհամբեր մասը ոտից կամ գավազաններու միօրինակ տրոփյունով ներկայացման սկզբնավորությունը կը պահանջե. ներկայացվելիք խաղին, անձերուն, դերասաններուն անունները պարունակող փոքրիկ ծանուցումներ ձեռքե ձեռք կը շրջին հարցումներու, քննադատությանց տեղի տալով. օթյակներուն

մեջ տիկիններըը վրանոցնին կը մերկանան, ձյունաթույր ուսե-
րու, լանջերու, դաստակներու փողփողումը խառնելով եզերքի
կարմիր թավիշին։

Տենդոտ, հիվանդագին բան մը կար բոլոր այս բազմության
մեջ։

Ամեն ոք, այս ներկայացման գալով, հասարակաց կինը
տեսնելու կուգար թատերաբեմին վրա, իր բոլոր հրապույրին
ու բոլոր թշվառությանը մեջ։

Այս էր ահա այդ երեկույթին բոլոր ձգողությունը։

Հասարակաց կինը միշտ սովորական ու միշտ հետաքրքրա-
շարժ բան մըն է։

Անտարբերները կը վայելեն, անողորմները կը պարսավեն
և ողջամիտ անձերը զայն կը մեղքնան։

Ծպիտն ու արցունքը դրե՛ք քովե քով, հառաչանքը խառնե-
ցնք զվարթ քահրահներու հետ, այդ է ահա հասարակաց կինը։
Երիկ մարդիկ երբեք չպիտի հասկնան այս բաղադրությունը,
բայց երբեք ալ ազատ ու զերծ չպիտի մնան անոր հեշտալի ազ-
դեցութենեն։

Ի՞նչ տեսակ էակ է այն որուն կյանքը՝ ասոր անոր կես
կամ քառորդ ժամերովը կը կազմվի։ Ուրույն գոյություն մը
ունի՞ արդյոք։ Արբ, հետաքրքիր, հավիտյան պիտի դեգերին
այս հարցումներուն շուրջը։

Մարդկային անվերջանալի բարեկենդանին մեջ, հասարա-
կաց կինը մյուս դիմակավորներեն սա տարբերությունն ունի
որ, ինքը միայն անպատրվակ, հետամուտ չէ ինքզինքը չճան-
չցնելու։ Սիրո վաճառականուհին է. իր զգեստը, ձևերը, շարժ-
մունքը, ամեն բան կը մատնեն զինքը։ Դիմակ չունի բոլոր դի-
մակավորներուն մեջ. իր արհեստն ընթեռնելի կերպով գրված
է ճակտին վրա. ոչ ոք խաբվելու և գանգատելու իրավունք
ունի։

Ավանսենի մը մեջեն Մարտիրոս էֆենտին կը բարևեր շուր-
ջը, Գայուսյան Գևորգը որ իր թիկնաթոռեն ոտքի վրա ելլե-
լով էֆենտիին, Եփրատի պաշտպանին, բարևը կառներ. ան-
գին միևնույն կարգին վրա Պասմաճյան Հակոբիկը, Տեմիրճ-

յաններուն գանձապետը՝ Լևոնը, պելեթաժեն Շամլյան Հովակիմ աղան իր կնոջ ու տղուն Արմենակին հետ. ուրիշ օթյակի մը մեջ Ստեփանիկ աղան, քոնսոլիտ խաչագողն։

Բազմությունը՝ իր ոտից տրոփյուններ կավելցներ. վերջապես զանգակը հնչեց. երաժշտություն խոսակցությունները դադրեցուց և վարագույրը բացվեցավ։ Առաջին արարվածը խորին տպավորություն մը թողուց. ոմանք՝ խաղին հետևեցան. ոմանք՝ դերասանուհվույն դաշնակավոր ձայնին. բոլորը՝ անոր մարմնական հրապույրին. կանայք անոր կապույտ թավշե մեծագին շրջազգեստին հավնեցան։

Նարդիկ՝ սիրո զգացումը իր անհուն, անծայրածիր տեսլականին մեջ արտահայտեց. ամենքը կը մաղթեին որ իրենց ուղղվեր անոր հրավառ շեշտերը և դերասանուհին կարծես այս մաղթանքը արդարացնելու համար բոլոր սրահին վրա կը պտտցներ իր բորբոքիչ նայվածքը։

Ծափահարություններ, փունչեր, bis, կեցցեի աղաղակ և առաջին արարվածը վերջացավ։

Թատրոնի նորեկներ հասկնալ կուզեին այս գեղեցիկ կնոջ ո՞վ ըլլալը, մանավանդ ո՞ւր բնակիլը։

Մեծ մաս մը թողուց իր աթոռները, պարտեզին զովությունը վայելելու համար. օթյակներուն մեջ այցելություններ սկսան։

Վարը, Հակոբիկ՝ իր ընկերը դերասանուհվույն քով տանիլ ևառաջարկեր։

— Երթանք Նարդիկը տեսնել, քիչ մ'առաջ «մեկտեղ բեր բարեկամդ» ըսավ ինծի. չուզած բանդ, այնպես չէ՞։

Փոքրահասակ, դուրս ցցված աչքերով երիտասարդ մը որուն ճաշակավոր հագուստը անձին տգեղությունը կը մոռցներ։ ԵՒառնուրդ մը այս տղան, բոլոր գիշերօթիկ վարժարաններու՝ Շահնազարյանի, Ռոպերթ քոլլեճի, Լիսեի, ուսկից ստացած ուսման հետքերը միայն մնացած էին քովը։ Գործի մեջ՝ ճարտար ու հնարամիտ, մաքսատունեն հանելիք վաճառքները ջուրի մը պես աննշմարելի կերպով անցընելու գաղտնիքը գիտող. կը վաստկեր շատ և շատ կը մսխեր. քանի մը հոգի էին ասոնք, քանի մը երիտասարդներ, Պահչե քափուի մեջ, որ

մաքսատան պաշտոնյաները կը հուսահատեցնեին. տարօրինակ պայքար՝ ուր ընդհանուր կանոնին հակառակ՝ փախողը տարած կըլլար հաղթությունը։

Եվ Պասմաճյան Հակոբիկ կը փախեր ու կը փախցներ. ամառ՝ Պյոյուք-Տերեն խոսեցնելով իր մեծածախ զբոսանքները և կարճ հասակին վրա, ձմեռը՝ Փերան։

Գեր կիները հատուկ ձգողություն մը ունեին իր փոքրիկ անձին համար և անոնց մեջ կը թավալեր, վերջ ի վերջո կանառնելու համար այս դերասանական խումբեն միույն քովտիկին Մազլումյանի ստվար թևերուն տակ։

Մյուսը՝ Տեմիրճյաններու գանձապետը՝ վաճառատան գործերու առթիվ ծանոթացած, մտերմացած էր Հակոբին հետինքը՝ կարգի կանոնի տղա, բոլորովին հեռու էր անոր հարաբերությանց հաճույքեն. բայց այս վայրկյանին իր բարեկամին առաջարկությունը երջանկության հրավերի մը պես հնչեց իր ականջին. այսպես շուտով մոտենա՞լ այս բոլոր բազմության պաշտած դիցուհվուն։

— Երթանք, ըսավ, բայց ես դերասանուհյաց վարժություն չունիմ։

Թողուցին աթոռնին։

— Թե որ մեկը զմեզ տեսնա, կրսեր Պասմաճյան, ինծի համար փույթ չէ, բայց դո՞ւն նշանած երիտասարդ։

Եվ կառաջնորդեր նեղ նրբանցքներու ոլորապտույտ ճամփաներու մեջեն ուր հեռու հեռու դրված կանթեղներուն լույսը օգուտ չուներ։ Այդ տեղերու ծակը ծուկը գիտեր։

Դերասանաց հատկացյալ սրահը խառնաշփոթ տեղ մ'էր. Պիթբազարի և Փերայի վաճառատան զուգավորություն մը. հոս հոն բազմոցի կամ աթոռակի մը վրա զգեստներ, ձեռնոցներ, գլխարկներ, էքսթռեի շիշեր ու երեսի ներկեր։ Ամանք իրենց դեմքին ավրված գույները կը նորոգեին. մին կը ծերանար, մյուսը իր տարիքը կը ծածկեր, ուրիշ մը իր մոռցած դերը հիշելու կը ջանար՝ ինքնիրեն քթին տակ կրկնելով պարբերությունը,

— Եվ Արմանին ընկերացա հոնկե մինչև հոս... ու չի հաջողելով շարունակությունը հիշել։

Մեկ քանիներ կը խոսեին, կը խնդային։

— Ինծի նայե, Միշե՛լ, կըսեր անոնցմե մին պոռալով, իրավ որ դուն ապուշի բնական հարմարություն ունիս։

— Կորսվե՛ դուն ալ, հանդիսականներուն պահե անճոռնի կատակներդ, կը պատասխաներ Միշելը։

Տիկին Մազլումյան կընդմիջեր.

— Սուս եղեք քիչ մը։

Քորսեին կապերը կը քաշեր շարունակ չի կրնալով իր պարարտ մարմինը սեղմել այնքան որ իր մեջքին լայնության անպատեհությունները վերցնե. նույն միջոցին Հակոբիկը տեսավ, օգնության կանչեց։

— Եկո՛ւ, եկո՛ւ, սա կապերը քաշե։

Անդին՝ Ճամպազյան՝ Արմանի դերը կատարողը՝ մանկամարդ աղջկան մը հետ կը խոսեր։

— Սուտ մըսեր, Սաթենիկ։

— Ես սուտ մուտ չգիտեմ. ամեն բան բացե բաց. կը սիրեմ՝ կը սիրեմ, չեմ սիրեր՝ չեմ սիրեր։

— Կեցցես, կապուտ-հազ, ըսավ անոր Հակոբիկ, միշտ այդպես անկեղծ եղիր և ոչ ասոնց պես խաբեբա։

Երիտասարդը տիկին Մազլումյանը ցույց կուտար. ամենուն խոսքին, գործին կը խառնվեր. դերասանները իր անկարգ ու զվարճասեր կյանքին սովորական ընկերներն էին. դերասանուհիք քիչ շատ իր սիրուհիները. հոս՝ իր տանը, ընտանյաց մեջն էր կարծես. ամենուն ներքին կյանքը, կապակցությունները գիտեր.

— Ստակներդ առի՞ր, Միշե՛լ, կը հարցներ։

— Ոչ դեռ։

Հետո ապշեր էր այս անծանոթ մարդոց ու աշխարհին մեջ։

— Ո՞չ դեռ։

Եվ տիկին Մազլումյանին մոտենալով՝

— Դուն ի՞նչպես ես, հանը՛մրս։

Տիկին Մազլումյան իր վրեժը լուծեց.

— Խաբեբաներուն մեծը դուն ես, ո՞ւր է խոստացած փառքիդ։

— Բոլորովին մոռցա, արդեն շատ ալ զբաղյալ էի. գալ

ուրբաթ անպատճառ. Նարդիկ, մեկտեղ ես, Լևոնին համար կը մտածենք, կաշխատինք։

Զանգակը հնչեց. երաժշտությունը երկրորդ արարվածին նշանը տվավ. հուշարարը՝ տետրակը ձեռքը իր փայտե տուփին մեջ մտնելու վազեց։

Երկու երիտասարդները բաժնվեցան մինչդեռ Նարդիկ ետևնուն կը պոռար.

— Անթրաքթին եկեք նորեն։

Ո՛չ. հիմա ուշադրություն չէր ըներ խաղին. ամբողջ սրահը, օթյակները, բազմությունը կը ցնդեր կանհետանար, մինակ հո՞ն, բեմին վրա ձգելով դերասանուհին որուն ժպիտները հատկապես իրեն կուղղվեին, արևեն անջատված ճառագայթներու պես համակ լուսով ողողելով զինքը. կը խորհեր իր նշանածի դիրքին, կարգադրված ապագային՝ որոնք պարտավորություններ կը հիշեցնեին. իր խոսեցյալին դեմքը աչքին առջև կը բերեր, անոր ալ հրապույրն ու գեղեցկությունը հիշելու չանք կրնար առանց հաջողելու. քովեն բարեկամը հանդիստ չէր թողուր զինքը.

— Չի՞ խոսիս։

Ի՞նչ խոսեր, երկրորդ դադարին առնեն առաջ ինք թողուց իր աթոռը, չի կրնալով հանդուրժել սրահին հեղձուցիչ մթնոլորտին։ Պարտեզին մեջ Ստեփանիկ աղան եկավ դեմը։

— Ի՞նչ կըսես սա քոնսուրտին իյնալուն։

Շահադեպը կարծիք կը ժողվեր խոսակցությամբ, գաղափար կը հասկնար վերջնն ընտրություն մը ընելու համար առնոնց մեջեն։

Լևոն պատասխանելու տրամադիր չէր։

— Չեմ գիտեր, չի լսեցի։

Ստեփանիկ աղան կը պնդեր.

— Ի՞նչ ըսել է «չի լսեցի». չորս զեւրուշի անկում և դուն տեղեկություն չունի՞ս. ո՞ւր կապրիս կոր, վաճառական չե՞ս դուն։

Խաղացողը կը պարսավեր երիտասարդը հայտնելով որ վաճառական մը դրամի և արժեթուղթի հրապարակին անտար-

քեր չի կրնար ըլլալ. ամեն փոխանակություն դրամի, արժեթուղթի կամ վաճառքի, միություն մը կր կազմեր և այդ երեք մասերը սերտիվ կապված էին իրարու։

Գալուստյանը տեսավ, անոր ալ կարծիքը հարցուց.

— Պատճառը հայտնի է, ըսավ օգնական խմբագիրը։

Քաղաքական կացությունը ծանր է. վերջին հեռագիր մը Անգլիո և Ռուսիո մեջ հարաբերությանց խզում մր կր հայտներ։

Ստեփանիկ աղան ամենեն առաջ պոռսային մեջ այդ լուրը առած էր. հուսացածին պես նոր բան մր չի կրցավ իմանալ։

Լևոն հայտնապես կր ձանձրանար. նարդիկի մոտ երթալ կուզեր և այս հաճույքը կր տանջեր զինքը, կր ծանրանար սրտին վրա. որոշեց վերջին անթրաքթին երթալ. ներկայացման վերջանալուն մոտ, տարտամ ակնկալություն մր ուներ այս հետաձգումովը։

Պարտեզին քազինոյին մեջ հանդիսականները լեցված էին տեսակ տեսակ ըմպելիքի գավաթներով ծածկված սեղաններու շուրջը. ամեն ոք իր տպավորությունը, կարծիքը կուտար. սպասավորները ապսպրված ըմպելիքներու անուններ կր պոռային պյուֆեի մարդուն հունարեն թիվերով։

— Միայն քոնյա՜ք, տիո շա՜րբրյոզ։

Ծվ ձեռքերնին ափսեներ կր շրջեն բազմության մեջ սեղաններու մեջեն անցնելով դառնալով անընդհատ։

Լևոն երկու քոնյաք խմեց, զինքը ճնշող անհանգստությունը թոթափելու համար։

Սպասավորները կր շարունակեին բարձրաձայն պոռալ, հունարենին խառնելով տաճկերենն ու հայերենը.

— Երկու լիմոնադա, Մարտիրոս էֆենտիի լոճային։

Մարտիրոս էֆենտին ծանոթ էր այս տեղ իբրև ամեն ներկայացման անպակաս. ավանտեն օթյակը իրեն հատկացյալ էր ուրկե առանց դիտակի օգնության կրնար խաղին հետևիլ։

Երաժշտության ձայնը երկրորդ արարվածին սկսիլը՝ իմացուց. քազինոն հինգ վայրկյանի մեջ պարպվեցավ. ամեն մարդ իր տեղը բռնելու վազեց. Լևոն վարագույրը բացվելեն ետքը իր տեղը եկավ. Մարկրիթ Գոթիեն խնչույքի տեսարան մր կը

պարզեր որ խեղդուկ հազով մը, բերնեն եկող արյունալի փրփուրով մը կընդհատվեր. և ակամա բաղդատություն մը եկավ միտքը զվարճության և տառապանքի, երջանկության և մահվան այսքան քով քովի գտնվելուն վրա. Մարկրիթ իր հազի տագնապին նվաղումեն սթափեցավ, թաշկինակով սրբեց բերանը ուր արյունը շրթունքը բոսորագեղ ներկած էր. Լևոն այդ մահագուշակ ու արյունոտ թուքը սիրահոժար պիտի ծծեր, առներ անոր շրթունքներեն. դերասանուհվույն թաշկինակը իր նախանձը շարժեց։

Սրահին մեջ շնչառությունը դադրած, խոր ու անձկալից լռություն մը կը տիրեր. Մարկրիթ ինքզինքը գտավ։

— Մի՛ վախնաք, կըսեր Արմանին. շատ հեղ կը պատահի այս, իրավ որ մեռնելե չեմ վախնար, քեզմե բաժնվելուս համար միայն կը սարսափիմ։

Ով սրահին մեջ Նարդիկի նայվածքը կուգար երիտասարդը փնտրելու, կարծես հասկցնելու համար որ, միայն անոր կուղղվեր այս հայտարարությունը։

Այս վայրկյանին ոչ ոք անոր մարմնուն հրապույրը կը տեսներ և ուրիշ բան չէր բայց եթե աննման տաղանդի մը և ահավոր կերպով սրտաճմլիկ տեսարանի մը զորությունը որ կիշխեր քար կտրած հանդիսականներուն վրա։

Հետո ծափահարություններ պնդնդհատ, որոտալից գոռ ու գոչում մը, վերնահարկեն մինչև գետնահարկը, ոտքի տրոփյուններ՝ թատրոնին հին շենքը դողացնելով իր բոլոր փայտե կապերուն և ատաղձներուն մեջ։

Վերջի դադարին ա՛լ չի համբերեց. Հակորին հետ միասին նորեն անցավ մանվածապատ ու մթին ճամփաներե, ներսը վարագույրին ետին հավաքվեր էին։

Նարդիկ այն պաշտելի հյուծախտավորը չէր, այլ զվարթ վառվռուն աղջիկ մը.

— Ո՞ւր մնացիք։

Լևոն հիվանդագին վիճակին մեջ կուզեր գտնել զայն. ծունկի գալ անոր մոտ համբույրներով ծածկելու համար անոր թալկահար ու տամուկ ճակատը։

Այս միջոցին թեթև ձեռք մը ուսին դպավ.

— Բարի եկաք։

Լևոն մինչև իր հոգվույն խորը զգաց այս քաղցրահնչյուն ձայնը. դարձավ. Նարդիկն էր. հիմա մութ կարմիր գյուղական շրջազգեստ մը հագած էր երկրորդ արարվածին պահանջման համեմատ. բաց կուրծքին վրա նետված դանթելի կոհակները՝ հեշտավետ հովի մը ճերմակ փրփուրներուն պես դուրս կը թափեին կարծես ներսի խռովության արտահայտությունը. պալայոզներու վրա բռնված փեշը թատերաբեմին կեսը կը ծածկեր և Նարդիկ՝ ամեն շարժումին ոտքի փոքրիկ հարվածով կը պարտավորեր զայն շտկել, և այսպեսով ցույց կուտար յուր սիրուն փոքրիկ կոշիկները, երբեմն բուռն շարժման մը մեջ նույն գույնով մետաքսյա գուլպայի մը սկզբնավորությունը որ յուր սրունքներուն կը փարեր, կը գրկեր զանոնք, ծառի մը փաթթվող պատատուկ թավիշե մարմանդներու մեղկ ու քաղցր հպումովը։

Երիտասարդը անոր ձեռքը բռնեց, ջերմ, տենդոտ ձեռք մը. աղջիկին մազերուն, մարմնույն բուրումը եկավ իր ռունգերուն, այդ մարմնույն հեշտությանց ու թաքուն շնորհներուն վրա գաղափար մը, զմայլելի գաղափար մը տալով հիմակուց.

— Մաղիկներու թագուհին եք այս գիշեր։

Հակոբիկ եկավ հասավ.

— Ահավասիկ պատվերիդ համեմատ այս պարոնը բերի քովդ, կուզե՞ս որ ներկայացնեմ։

Մյուսները Նարդիկին շուրջը բոլորվեցան. պիտա բերեք. Հակոբիկ ամենուն կը հրամցներ, մերժողներուն կսպառնար։

— Չէ նե վրադ կը թափեմ։

Հետո Արմանին կը դառնար.

— Դուն նա՞ս ես կապուտ-հազիդ հետ. բժշկվեցա՞ր. մյուսը գլխովը բացասական պատասխան կուտար։

Այս քաջառողջ երևույթը իր պատրանքը փարատեց։

Տիկին Մազլումյան իր փառքին հաստատել կը ջանար։

— Ուրեմն որոշված է ուրբաթ օրվան համար Թաշտելեն երթալնիս։

— Այո՛, հոգիս, որոշված է։

Հակոբիկ՝ համբույրով մը կերաշխավորեր այս խոստումը։

— Թե որ կուզես այս գիշեր ալ ճաշ մը Փերայի մեջ։

Տիկին Մազլումյան Նարդիկը անպատճառ մեկտեղ կուզեր և դերասանուհին չէր կրնար գալ։

— Ինչո՞ւ. և առաջարկությունը ավելի ազդեցիկ դարձնելու համար կավելցներ. Լևոն ալ կաղաչե քեզ որ մեղի հետ գաս։

— Կաղաչեմ, կըսեր Լևոն։

— Ո՛չ, ո՛չ, չեմ կարող։

Հակոբիկ կը վիճեր.

— Ի՞նչ, նորեն սա տեվեն է, տեվեճին է. ո՞վ է քեզ հափըշտակողը։

— Խենդ խոսքեր մի՛ ըներ, անհանգիստ եմ այս գիշեր, ուրիշ արգելք չունիմ, գլուխս մի՛ ցավցներ։

— Դուն գիտես, երթանք, Լևոն, ուրբաթ օրվան գոնե ապահովապես խոսք տվիր։

Հակոբիկի վերջին խոսքերուն վրա կը մտածեր Լևոն նեղ ճամփաներուն մեջեն վերադառնալով. ու հիմա իր թիկնաթոռեն ավանսենի օթյակը կը դիտեր շարունակ փոխանակ թատերաբեմին վրայի ներկայացումը դիտելու. հոն Մարտիրոս էֆենտի կը խրոխտար ծավալելով իր խոշոր մարմնույն գոհունակությունը և անտանելի ատելություն մը արծարծելով երիտասարդին սրտին մեջ։

Դերասանուհվո մը կյանքը չդիտնալու չափ միամիտ չըլլալով հանդերձ, միշտ բացառություն մը ենթադրեր էր այս աղջկան համար, որ առաջին օրեն խորին ու անդիմադրելի զմայլանք մը ազդեր էր իրեն. հեռեն նայելով, մաքրության ու անմեղության մթնոլորտի մը մեջ երևակայեր էր զայն միշտ, և ահա քսաներդ ժամի մը խոսակցության մեջ հարկ կըլլար համոզվիլ և ճանչնալ թե բացառիկ ու գերագույն էակ մը նկատված այս կինն և ոչ մեկ կերպով կը տարբերեր իր նմաններեն։ Միանգամայն կը մտածեր թե Նարդիկ ինչո՞ւ չընդունեց իրենց հրավերն. իրոք ուրի՞շ մը, մշտակա ու նախանձոտ սիրո՞ղ մը կար այս կնոջ վրա հսկող, թե ոչ անհանգստությունը միայն արգիլեր էր զինքն իրենց հրավերն ընդունելու։ Ինքնիրեն չա-

փեց ու բաղդատեց այս երկու հավանականություններն, և տեսնելորդ է ըսել որ իր տկար սիրտն ավելի Նարդիկի հառաջ բերած բարուրանքը իրավացի համարելու կողմն հակեցավ։

Այս մտածմանց մեջ ընկղմած՝ ա՛լ ուշադրություն չդրավ երրորդ արարվածին որ թատերաբեմին վրա կը ներկայացվեր։ Այն ատեն միայն սթափեցավ երբ տեսավ վարագույրն իջած ու հանդիսականները գրեթե մեկնած. իր նայվածքը թափուր և ստվերամած սրահ մը տեսավ, որ հետզհետե կը մթնար. լուսերը կը մարեին, թատրոնը ահագին գերեզմանի լռության դատապարտելով. հիմա հիշատակ մը չի կար բոլոր երեկույթեն և իր հոգին դղրդող աղմուկներեն։

Դուրս ելավ. ժամը վեցն էր, պարտեզին մեջ հապաղողներ միայն մնացեր էին. դրան մոտ քուփե մը կսպասեր որուն վառ լապտերները արյունացայտ աչքերու պես կը շողային մթության մեջ։

Քովեն կին մը անցավ, Նարդիկն էր որ կառքը կը մտներ, անիվները դարձան, քուփեն մեկնեցավ, հեռուեն ցույց տալով իր կարմիր լույսերը, և երիտասարդը անհուն պարապության մը մեջ ձգելով։

Դանդաղ ու վարանոտ քայլերով, ձեռքի փոքրիկ լապտերը լուսավորելով շուրջը, Լևոն կը վերադառնար տուն կեսգիշերայի լայն և ամայի զառիվայրը իջնալով. երկու կողմեն փլած փլփլկած պատեր. տարի մը առաջվան ավերիլ հրդեհեն մնացորդ. և տեղ տեղ վտիտ, բարձր ու երկայն ծխնելույզներ, ոմանք կանգուն, ոմանք կիսակործան. և այս անշեն ու մոխրով ծածկած փողոցեն քալելով կը հիշեր հրդեհին գիշերը բոլոր այս թաղը, տուները, բոցերու մեջ վիթխարի veilleuseի մը պես լուսավորելով բոլոր շրջակայքը, կամ մազերը բռնկած հսկա կին մը որ այդ բարձունքեն կը վազեր կիջնար վար ծովուն մեջ մարելու համար կարծես զինքը սպառող կրակը. այդ գիշերը աչքին առջեն էր. ինքն ալ եկած էր հոն բարեկամներու օգնության, և հրդեհին լույսերեն, այրողներուն թոհ ու բոհեն, ձայներեն, աղաղակներեն՝ այդ սևցած, խանձած ծխնելույզներեն զատ ահավասիկ ոչինչ կար հիմա. և վերադարձ մը ընե-

լով իր անձին, իր սիրտը այրող կրակին հետևանքը՝ շուրջի ավերակներուն ողորմելի երևույթովը կերևար աչքին։

Պոլսո առաջնակարգ վաճառատան մը մեջ գանձապետի կարևոր պաշտոնը կը վարեր քսան ոսկի ամսականով. և իր վարպետին աղջկան խոսեցյալն էր. պաշտոնական նշանտուք չի կար բայց ամուսնությունը որոշված էր, և ասով մեծագույն ասպարեզ մը և նախանձելի վիճակ մը պիտի ստանար. ահա ճիշտ այդ միջոցին էր, երեսունը անցնելէ վերջը, հեռու ամեն սիրային արկածե, չի հավատալով որ սերը կրնա երբեք անդիմադրելի, անակնկալ և ճակատագրային բան մը ըլլալ, ծաղրելով իր բարեկամներեն շատերը որ իրենց սրտի տկարությունները, դժբախտությունները կը բացատրեին, ճիշտ այդ միջոցին ինքն ալ պարզ դիպվածի մը բերմունքով դեմ հանդիման կուգար այնպիսի էակի մը զոր տեսնելուդ չես կրնար չի կենալ, չի դիտել, ետիդ չի դառնալ անոր հեռանալը տեսնելու համար։ էակ մը որ անձ մը չէ՛, այլ բոլոր կյանքի անուրջներու անկարելի մարմնացումը, գաղտնիք մը՝ որուն համար անկարելի է չի հետաքրքրվիլ, ետևեն չի վազել, ժամերով չի շրջիլ փողոցե փողոց, թաղե թաղ, թերևս հետը խոսելու հույսը չունենալով, բայց էակ մը զոր սիրտդ անմիջապես կը ճանչնա, կը զատե բազմության մեջ, իբրև թե վաղուց անտի ծանոթ մը, մտերիմ մը ըլլար քեզի, որուն հաճելի եղած բաները գիտես, ճաշակը սիրած ես, և որուն անհաճո երևալու վախը կը դողացնե քեզ։

Ահա ինչ որ զգացեր էր երիտասարդը նարդիկը տեսնելուն, և կը խորհեր որ անհնարին անկարելի դժնդակ բան մը պիտի ըլլար իր հեռացումը այս աղջիկեն, և ասոր համար վտանգի դնե՞լ իր բոլոր ապագան, հույսերը, այո՝ ինչո՞ւ չէ՛. թողուլ նախանձելի վիճակ մը, չքավորության ու նեղության օրեր տեսնել. հոժարությամբ, եթե նարդիկի մոտ պիտի անցնեին այդ օրերը։

Պահ մը իր միտքը կամփոփեր, հիմարություն այն բոլորը, ո՞վ էր այս կինը որ հանկարծ կուգար իր ճամփուն վրա պատվարի մը պես. ի՞նչ իրավունքով. կարժե՞ր որ դերասանուհիի մը համար բաժնվեր իր որոշյալ ամուսնությենեն, պատվավոր

աղջիկ մը զոհել անպատիվ կնոջ մը՝ ինչ որ ալ ըլլար իր հրապույրները. միթե այդ վայելքը չէ՞ր կրնար գնվիլ, ստացվիլ առանց վտանգելու իր կացութիւնը. այս գաղափարին Լևոն դիմադրեց. այդ վաճառիկ ցանկութիւնն չէր որ կախտավորեր զինքը. մանկական, գրեթե եղբայրական դորովի կարոտը, պակասը զգացեր էր այս կինը տեսնելով և այդ պակասը ան միայն կարող էր լեցնել։

Քում-քափու հասած էր ան Նշանճիի փողոցին մեջ ուր կը բնակեր դերասանուհին. իր տանը ճամփուն վրա էր անոր տունը. դրան քով կանգ առավ, պատուհանները դիտեց։ Ոչ ձայն, ոչ լույս. մարդ չիկար, դերասանուհին հոն չէր անշուշտ. և մտքովը ո՞ւր ըլլալը փնտրեց, այդ ատեն հիմար գաղափարներ անցան ուղեղին մեջ. կեցած էր հոն, ձեռքի լապտերին լույսը կը հատներ սպասելով այդ դրան առջև. հեռուեն դիշերապահին հարվածները լսեց. համրեց՝ յոթն էր ժամը, նարդիկ պառկած էր այս ժամուն, փողոցին մեջ ոտքի ձայներ ականջին եկան. ամչցավ հոն գտնվելուն և ճամփան շարունակեց։

Տեմիրճյան առանց իր գանձապետին հարցնելու գործ չէր ըներ. դիպվածով հարստացեր էր նախ ինքը զարմանալով այս հաջողութեան վրա. բայց անկե ի վեր ժամանակները փոխված էին և Տեմիրճյան ոչ թե ստակ շահելու կը ջանար, այլ ունեցածը ձեռքե չի հանելու. խոհեմ և զգույշ վաճառականի համբավ ուներ զոր իր անբանի վեհերոտութեամբը ձեռք բերած էր, Անգլիո հետ գործ մը կըներ և ուրիշ երկրի անուն լսել չէր ուզեր բնավ. իզուր միևնույն վաճառքը Ֆրանսա կամ Պելճիքա ավելի աժան ծախելու պիտի ելլեր իրեն, ինքը գիտցածեն չէր բաժնվեր, լողալ չի գիտցող նավաբեկյալի մը պես որ ծովուն մեջ առջի ձեռքին դիպած փայտից կը կապվի և չի համարձակիր զայն թողուլ՝ միշտ խեղդվելու վտանգեն սարսափահար։

Գանձապետը իր խորհրդատուն էր որուն կը վստահեր, խոսքին կը հավատար հակառակ իր կասկածոտ բնութեանը. Լևոն իր վարպետին տկար կողմերը գիտեր և երբեք անոր ծանոթ համոզման հակառակ կարծիք չէր տար. առաջին փոփոխութեյունը որ մտած էր մաղազային մեջ, տետրակներուն կրկնա-

տումարի վերածումն էր։ Ինքը այս դրության ինչ ըլլալը չէր գիտեր, բայց եկող գացողին կը պարծենար.

— Մեր տետրակները տոպիո են։

Ժամանակ անցնելով գանձապետին կարողության և հավատարմության վրա համոզում գոյացուցած էր և ամեն ինչ անոր տնօրենության տակ ի գործ կը դրվեր։ Երիտասարդը մեղմիվ, քիչիկ քիչիկ կը ջանար իր վարպետին փերեզակի հոռի գաղափարները ուղղել, և զանի գործի մը մեջ մտցնել. երիտասարդ, եռանդուն տղա՝ ասպարեզ կուզեր նետվիլ արդյունավորելով այդ վաճառատան հին ու պատվավոր անունը և անխախտ վարկը։

Մեկ երկու գործերով անակնկալ շահեր ցուցուց և վարպետը ա՛լ բոլորովին կույր վստահություն մը ունեցավ իր վրա. ամենքը Տեմիրճյանին շահադիտական գործողության մեջ մտնելուն կը զարմանային, անոր ճարտարությունը դրվատելով և հեգ մարդը, ևնոնեն սորված քանի մը պարբերություններով զինված ամեն տեղ կը խոսեր մեծ մեծ, նոր թեորիներ պարզելով։

— Պետք է, կըսեր, որ վաճառական մը միշտ հետամուտ ըլլա, պետքեր փնտրե որպեսզի գոհացում տա անոնց։

— Պետքերը գոհացնե. բայց ո՞ւրկից պիտի փնտրե, հասկընա, կը հարցնեին մյուս վաճառականները շփոթած։

Այն ատեն Տեմիրճյան իր կարևոր և բացառիկ կերպով «ժտյալ մարդու ձևերը կառներ։

— Ատիկա վաճառականին կարողությանը կապված է, արգարև չի սորվվիր, բնականեն տրված ըլլալու է։

Շամլյան Հովակիմ աղա չէր հասկնար բայց կը համոզվեր տեսնելով Տեմիրճյանին հաջող գործերը, մինչդեռ իրենները անդարմանելի ձախորդություններու կենթարկվեին շարունակ։

Երբ էլպիս եկավ հասավ, ամուսնանալու առաջարկությունները ամեն կողմե տեղացին. հորը մեկ հատիկ աղջիկը գլխավոր, եթե ոչ միակ ժառանգորդն էր. և շուտ մը հաշիվը կընեին, Տեմիրճյանին մահվան ձգելիք հաշիվը. կնոջը մեկ ութերորդը, եղբորը արու ժառանգորդին բաժինն ալ կը հանեին մեջեն, թեև

ակամա, բայց ասով հանդերձ նորեն քսան հազար ոսկվո հա-
րըստություն մը կը մնար։

Եվ հիմակուց կը հետաքրքրվեին, Տեմիրճյանին առևտրա-
կան գործողություններեն դող կելլեին երբ վաճառականը նոր
շահադիտության մը կը ձեռնարկեր վախնալով որ չի փճացնե
իր աղչկան օժիտը. և միջնորդ դնելով ամուսնության առաջար-
կությունները կը ներկայացնեին առանց պայմանի ամեն ին
հորը կամքին թողլով. իսկ վաճառականը կը հապաղեր իր պա-
տասխանը, չուզելով իր կենդանության ատենեն ժառանգու-
թյան պահանջումներու դուռ բանալ և տեսակ մը գերեզմանի
փախող ոգիի մը պես իր կորսվելուն՝ ժամ առաջ անհետանա-
լուն փափագողներ ավելցնել։

Վերջեն լուսավոր գաղափար մը հղացեր էր, աղչիկը վևոնին
տալու գաղափարը. այս կերպով վաճառատան շահերը ավելի
ևս հոգածության և խնամքի առարկա պիտի ըլլային, և փեսան
իբրև իր պաշտոնյան չի պիտի կրնար՝ ստակի վեճ ու խնդիր
հարուցանել. տիկին Տեմիրճյան այս ծրագրին քիչ մը դեմ կե-
ցավ, իր մայրենի փառատենչիկ սրտին համար մեծ տեղե առ-
նելու էին աղչիկը. բայց հայրը իր որոշումը հարգել տվավ և
այսպես որոշվեցավ էլպիսի ամուսնությունը։

Աղչկան համար փույթ չէր ամուսին ըլլալիք անձին ով ըլ-
լալը. իր սիրտը անհանգիստ թռչուններուն կը նմաներ որ կը
սիրեն թռչիլ հոսկե հոն, անդադար նորության մեջ գտնելով
հաճույքը. ուստի չուներ. իր պատանուհվո ատենի սիրահա-
րության նամակները գրած ատեն մեծագույն տառապանքը կը
քաշեր. թուղթը ոսկեզօծ, զարդարուն, գեղեցիկ, բայց սկսելու
բառեն կը շփոթեր ուղղագրության համար և իր բազմաթիվ
սիրահարներուն կը գրեր.

— Յոգիս, խուշս։

Նամակին անուշահոտ, խորհրդավոր ու արթիսթիկ ծալքե-
րը, երևույթը, ուղղագրության սխալները, ոճին ոամկությունը
կը մոռցնեին նամակագրին սիրուն աչքերը, գեղեցիկ մազերը՝
նորատի հարուստ աղչիկի առավելությունը հիշեցնելու համար։

Գիշեր ատեն իրենց Թաշ Վերտիվենի տան պարտեզին դը-
րան քով ժամադրությունները կը պատմեին գյուղին մեջ այս

անվախ աղջիկին որ մարդե չէր քաշվեր ու դպրոցին էն գե-
ղեցիկ տղաքներուն հոժարափույթ կը նվիրեր իր սերը և համ-
բույրները։

Վևոն ոչինչ գիտեր այս ամենեն և այն կապույտ ժապավե-
նով կապված նամակներու ծրարեն որ էլպիս Տեմիրճյանի նըն-
ջասենյակին մեջ, անկողնին տակ պահած էր խնամով։

Երբ իր ամուսնության խոսքը հաստատվեցավ, էլպիս բա-
ցավ այս ծրարը որ հիմա դեղնած էջեր, գունատ մելանով բա-
ռեր կը պարունակեր և տարբեր տարբեր ստորագրություններ,
երբեմն անունին առաջին գիրը միայն, երբեմն անունն ու մա-
կանունը միասին, ամբողջությամբ. երբեմն ստորագրության
տեղ վերջին հայտարարություն մը սիրո, անվերջանալի սիրո,
գաղվածք մը կրներ այս ամենեն, չորս տարվան կյանքեն,
գաղտնիքներով, համբույրներով, անպեխ սիրահարներով լե-
ցուն, մի առ մի զատվեր էր որոնցմե, ձանձրանալով բոլորեն
ալ, միևնույն խոսքերը, հայտարարությունները լսելով, և հաս-
կընալով որ այս դպրոցականները ամուսնանալու մարդիկ չեն։

Նորեն ժողվեց ծրարը, նամակները, իրենց սովորական
ծալքովը ամփոփեց, մեյ մը այրել ոչնչացնել ուզեց այս ամե-
նը, թե որ մեկու մը ձե՞ռք իյնար, բայց սիրտը չի թողուց որ
այս խորհուրդը գործադրե։

Իր խոսեցյալին հետ միայն սիրահարությամբ չէր սկսած
և լավ մը չէր գիտեր անոր հետ ինչպես վարվելու եղանակը։
Վևոն կյուրակե օրերը կուգար միայն, ճշտապահ, որոշյալ ժա-
մին. ցորեկվան ճաշը միասին կրնեին ու գիշերը հոն կանցը-
ներ. երբեմն պտույտ մը ընելու կելլեին թե թևի և խոսակցու-
թյունը կսպառեր իրենց շրթունքին վրա. ոչ սիրո խոսքեր, ոչ
ապագայի խորհուրդներ. օտարական այցելու մը՝ ասկե զգույշ
չի պիտի ըլլար. երկուքն ալ իրարու լեզվե անտեղյակ՝ իրենց
գաղափարներուն մեջ կառանձնանային։

Կյուրակե առտու իր սովորության համեմատ Օրթագյուղ
կերթար Վևոն. Կամուրջեն շոգենավ նստավ և քովի խցիկներեն
միուն մեջ դեռ աղջի իրիկվան ներկայացման կը խորհեր,
միտքով կը հիշեր կը վերլուծեր նարդիկի դեմքը և զմայլելի

կը գտներ և անոր քով իր նշանածը աննշան, անհրապույր էակ մը կը մնար. Թաշ-Վերտիվեն Տեմիրճյաններուն տան մեջ միևնույն բաղդատությունը կը շարունակվեր միտքին մեջ, և էլպիս ամփոփված մազերովը՝ գլխուն վրա գալարված օձ մը ունեցող աղջկան մը կը նմաներ. քալած ատեն հատուկ ջանքով մը կը ցուցներ կարծես իր ճերմակ գուլպաները, որոնցմե երիտասարդը կը գարշեր և ականջեն կախած ադամանդե օղերը պարտիզակի հարսի մը երևույթը կուտային անոր։

Լևոն սովորաբար քիչ խոսող մեկն էր. այն օրը արձանի մը լռությունը պահեց։

Յորեկվան ճաշեն ետքը բազմություն հավաքվեցավ Տեմիրճյաններուն բնակարանը. նախ վաճառականին փոեֆի ընկերները. Ստեփանիկ աղան, և Շամլյան Հովակիմ էֆենտին, Հովակիմ էֆենտիին տղան Արմենակ, գյուղին բաղականներեն մին՝ Մելքոն էֆենտի իր կնոջ հետ, նիհար կին մը՝ մարած աչքերով որոնց մեջ վերադարձի իղձերը հայտնի կը կարդացվեին։

Ընդունելության սովորական սենյակին մեկ անկյունը, փոեֆաճիները՝ սկսան խաղերնին, և ընդհանուր խոսակցության մեջ ձայներնին կուգար կը հասներ ընդմիջելով ամենքը.

— Փիք սեքիզ։

— Սպաթի սեքիզ։

Տեմիրճյանի միակ տկար կողմն էր այս խաղը որ իր աճուրդի, մրցումի ոգևորությամբը զինքը կը հափշտակեր. կավելցնեին և ինքն ալ կավելցներ, մոռնալով հաշիվը ու վնասը։

— Միզեռ, կը գոչեր վերջապես համբերությունը հատած, այնպիսի թուղթով մը որ ապահով վեց ձեռք կը կոտրեր։ Եվ եթե հաջողեր, հազվագյուտ բացառություն, անվնաս ելլել միզեռեն, այն ատեն իր բերկրության չափ ու սահման չի կար։

Հիմա նորեն կորսված էր իր փոեֆին նրբությանցը մեջ, մինչդեռ անդին տիկին Մելքոն իր էրիկը կը պաշտպաներ անիրավ հարձակումներու դեմ։

— Իմ էրիկս բանկալ գացած օրը հարյուր ղրուշ ավելի հաւոյթ կըլլա. հասկցա՞ք, մյուսյու Արմենակ։

Թուղթի սեղանեն Ստեփանիկ աղա խոսքի կը խառնվեր.

— Իմ քովս ալ եկած ատեն միշտ կը կորանցնեմ. տեսնք ճիշտ այս վայրկենին...։

Թաղականը կը հեռանար նախապաշարյալ քոնսոլիտճիեն որ ուղուրի, խատեմի չափազանց կարևորություն կուտար։

Իսկ Արմենակը կը խոսեր էլպիսին մորը հետ, իբրև բարեկիրթ տղա որ ծերերը կը հարգե, գիտե անոնց հաճելի ըլլալ. Անգլիո կյանքեն հատվածներ, հետաքրքրական նյութեր կը պատմեր, երբեմն խոսքը ուղղելով էլպիսին, անոր ալ կարծիքն առնելու համար։

Դուռը զարնվեցավ, նոր հյուրեր եկան, նախ Սուրբիկ տուտուն՝ գյուղին պառավը, շատախոս ու չարախոս կին ուրկե ամեն ոք և մասնավորապես Ստեփանիկ աղա կը սարսափեր իբրև փորձյալ ուղուրսուզ մը, օրիորդ Վասիլիկ Քալեմճյան իր եղբոր Տիգրանին հետ էլպիսը դիմավորեց։

— Ի՞նչպես ես, աղե՞կ ես, Սուրբիկ տուտու։

— Գեշին գեշը. զաթը ո՞վ աղեկ է քի ես աղեկ ըլլամ։

Հետո օր. Տեմիրճյան Վասիլիկին քովը եկավ. համբուրեցին զիրար, մինչդեռ Տիգրան իր քրոջ քովիկը կեցած՝ այս շրթանց հպումը տեսնելով կը խռովեր։

Սուրբիկ տուտուն օրվան լուրերը կը բերեր, սովորաբար չարագուշակ և ձախորդ լուրեր։

Հոգնություն առնելե, խահվեն խմելե վերջը իր առջի խոսքը այս եղավ.

— Ֆուլիկ հանրմին աղջիկը ճիշ աղեկ չէ՛։ Ամենքը հարցուցին հիվանդը, հիվանդությունը։

— Ո՞ր աղջիկը։

— Մեկ հատ մը ունի, Նոյեմին։

Վասիլիկ ճանչցավ։

— Մեկտեղ դպրոց գացած ենք։

Էլպիս ալ գիտեր, ամեն եկեղեցի երթալուն պատուհանը կը տեսներ։

— Հույս չի կա, կըսեր պառավը, երերցնելով գլուխը, վերեմ է ըսեր են տոքթորները։

Արմենակ հիվանդին վրա ըսված խոսքերը մտիկ կըներ։

Փոեֆին սեղանեն՝ ձայները կը բարձրանային կատաղի. գրգռիչ, ասպարեզ կարդալով իրարու։

— Քառո՛ օն։

Որուն դիմացինը տեղի կուտար վերջապես մեղմ ու խոնարհ ձայնով.

— Փասսո։

Կորսնցնողը կը գանգատեր թղթին ձախորդութենեն, ընկերոջը ապիկարութենեն, այս տրտունջներուն պատասխանատու մեկը փնտրելով։

Լևոն հազիվ երկու խոսք արտասաներ էր բոլոր օրը, կը նեղանար այս անմիտ խոսքերուն և մարդերուն մեջ, իրիկվան դեմ բարուրանք մը հնարեց, մորը անհանգստությունը, գիշերը Պոլիս դառնալու համար։

Վաճառականը դիմադրեց, էլպիս նույնպես աղաչեց Լևոնին որ չերթա, բայց երիտասարդը համառեցավ ու թողուցին որ մեկնի։

Սուրբիկ տուտուն աղեկ գաղափար մը չէր կրնար ունենալ այս սակավախոս ու մարդատյաց տղուն վրա։

— Նշանածդ շատ ֆիպիր կերևա կոր, ըսավ էլպիսին։

Հետո մյուս հյուրերը գացին, իսկ Արմենակ ամենեն վերջը, սպասելով հորը որ փոեֆը վերջացունե։

Տեմիրճյան շահեցավ և այդ վաղանցիկ հաջողությամբն ընկճելով դիմացիններր կը պոռար հիմա.

— Մազեթաներ։

Հովակիմ աղա ոսկի ու կես կորսնցուց, Ստեփանիկ աղա չորս մեճիտիե, բայց Տեմիրճյան դեռ իր փափագը առած չէր թողթեն։

— Ճաշեն ետքը միանանք։

Արմենակ էլպիսին շուրջը կը դառնար, մեծարանքներով, փաղաքուշ խոսքերով։

Լևոն՝ Պոլիս դառնալուն Նարդիկի տան առջևեն անցավ, անորոշ հույսեր ուներ, դերասանուհին թերևս դրանր առջև կամ պատուհանը նստած պիտի տեսներ. ո՛չ ոք, անցավ, բարկանալով որ այսպիսի անակնկալ հաճույք մը չէր կրցած վա-

լելել. տունը՝ չի կրցավ մորը երկար բարակ հարցումներուն պատասխանել։

— Նշանածդ ի՞նչպես էր, տիկին Տեմիրճյան ի՞նչպես է, ո՞վ կար, ինչո՞ւ գիշերը չի կեցար նշանածիդ։

— Չեմ գիտեր, կըսեր երիտասարդը։

— Չէ նե մի նոր բան կա։

— Ի՜նչ նոր բան, խե՞նթ ես, մայրիկ։

Մորը երկյուղը փարատելեն ետքը, ճաշեցին, ժամը մեկ ու կեսին դուրս ելավ։ Ամառվան տաքը՝ փողոցին օդը տաք, անշնչելի կրներ. ամենքը դրան առջև նստած գիշերվան զովություն կր փնտրեին։

Նարդիկի տան առջև երկու հոգի կար. դուռը բաց էր, Լևոնին սիրտը ուժգին բաբախեց. մոտեցավ, դերասանուհին էր, հիսուննոց կնկան մը հետ նստած։

— Հրամմեցեք, աթոռ մը տուր, Թե՛յզե։

— Ո՛չ, ներեցեք։

Լևոն կր մերժեր առանց ուզելու, նստելու անհուն փափագին հակառակ։

— Այցելություններ ունիք անշուշտ, կըսեր Նարդիկ, զորս չեք կրնար թողուլ։

Լևոն շփոթեցավ։

— Բան մր չունիմ։

— Ինչո՞ւ չեք նստիր ուրեմն։

Երիտասարդը առավ աթոռը, մինչդեռ Թեյզեն կը դիտեր զինքը մանրակրկիտ քննությամբ։

Մինչև ժամը հինգ խոսեցան առջի օրվան ներկայացումին, ուրբաթ օրվան Ալեմտաղի երթալու ծրագիրին վրա. հետո Լևոն մեկնեցավ. իսկ դերասանուհին հաջորդ գիշեր նորեն գալու խոստում առավ անկեց։

Հետևյալ առավոտ ուշ գնաց վաճառատուն. ճամփան՝ պատուհանը նստած տեսավ Նարդիկը. մազերը թափած, առավոտի շնորհալի անկարգության մեջ. բարևեց անցավ. քայլերը հառաջ չի տարին զինքը. ետին դարձավ. Նարդիկ ալ իրեն կը նայեր դեռ և կը ժպտեր։

Վաճառատան մեջ ամեն ինչ անկարգ անիմաստ թվեցավ իրեն. գրագիրներուն սրդողեցավ. բեռնակիրները չախեց, գործերը կը կարգադրեր հապճեպով, վայրկյան մ'առաջ լմնցնելու, դուրս նետվելու փափագով տանջված։ Ներսը երկաթ կը կրեին շարունակ, իրարու վրա կը դիզեին փութրելները որոնց քախման ձայներովը վաճառատունը կը թնդար։

Լևոն այն օրվան գանձվելիք փոխանակագիրները աչքե անցուց որոց համար մինչև իրիկուն սպասելու պարտավոր էր, այս սպասելը տաժանելի գերության մը պես եկավ իրեն սրտին. և ոչ իսկ օր մը ազատություն. այս վայրկյանիս բոլոր գանձապետի, տնօրենի դիրքը ազատ մուրացիկի վիճակին հետ պիտի փոխեր։ Այսպես շրջկյավ վաճառատան մեջ, առանց կարենալ աշխատելու, միայն ժամերը մոռնալու ջանքով. իրիկվան դպրոցե արձակվող տղու մը պես դուրս ելավ գրասենյակեն դերասանուհվույն տան առջևեն անցնելու համար միայն. հոն չի պատահեցավ Նարդիկին, դուռը, փողոցը մարդ չիկար, գիշերը ճաշեն վերջը վերադարձավ, առանց հանդպելու Նարդիկին։ Հետևյալ առտու նույնպես Լևոն Տեվեճյանը հիշեց։

Այդ օրը Տեմիրճյաններու գանձապետը կատարյալ հիմարի մը ձևը ուներ. այն սովորաբար քիչ խոսող երիտասարդին, հանդարտ ու պաղարյուն մարդուն տեղ, առանց պատճառի զայրացած կատղած մեկն էր, որ այցելուի, հաճախորդի հետ անգամ հայտնի անհամբերությամբ կը խոսեր։

Ժամը 8ին Շամլյան Արմենակ եկավ հորը կողմե խնդիրք մը ընելու Տեմիրճյանին. վաճառականն իր գանձապետը կանչեց. երկու հազար ոսկվո ապրանքի վրա Շամլյանները երաշխավոր ըլլալ կառաջարկեին իրեն, կարևոր շահու բաժին մը խոստանալով։

Արմենակ առաջարկության շահավոր կողմերը կը պարզեր. ոտքի վրա կեցած, գլխարկը ձեռքը. Լևոն ժամանակ ուզեց մըտածելու. Շամլյան գործին ստիպողական ըլլալը կը հայտներ. պայմաններուն վրա վիճեցան քիչ մ'ալ. հարյուրին հինգ շահ կուտար Շամլյան և Լևոն հարյուրին քսան կը պահանջեր. միջոց մը խոսակցությունը դառնացավ։

— Ապուշի տե՞ղ դնել կուզեք վիս, կըսեր Արմենակ։

— Ամենևին. բայց երկու հազար ոսկվո հանձնառությյան մը տակ դյուրավ չի մտնվիր։

— Ի՞նչ վնաս, քանի որ մեզի երաշխավոր պիտի ըլլաք. կը կասկածի՞ք մեր վրա։

— Ամենուն վրա կը կասկածիմ։

Տեմիրճյան միջամտեց. Լևոն աչք ըրավ անոր մերժելու համար և վաճառականը՝ չի կրնալը հասկցուց. Արմենակ տեսավ որ օգուտ չունին իր փաստերը, վերջին հուսահատական փորձ մը փորձեց. ստույգը այն էր որ բուն իսկ իրենց վաճառքն էր որ օտարի մը նոր գնվելիք ապրանքի մը պես ցույց կուտային Տեմիրճյանին, անոր երաշխավորությամբը հրապարակեն երկու հազար ոսկվո փոխառություն մը ընելու հույսով։

— Դուք դիտեք, ես Մարտիրոս էֆենտիեն առաջ ձեզի գալ ուզեցի. անոր հետ հարյուրին հինգով կրնայի լմնցնել։

Մեկնեցավ, Տեմիրճյան Շամլյաններուն վիճակին վրա տարակույսներ կը հայտներ Լևոնին։

— Ի՞նչ է սա երկու հազար ոսկի ֆելեվիր ապրանքը, խելքս չի հասավ։

— Ոչ ալ իմս։

— Դուն այսօր անհանգստություն մը ունիս վրադ, հիվա՞նդ ես։

Գանձապետը չի պատասխաննեց այդ հարցման և Մարտիրոս էֆենտիի վրա դարձուց խոսքը. ո՞վ էր այս մարդը, ուսկի՞ց էր իր հարստությունը. Տեմիրճյան կը հիշեր որ տասը տարի առաջ աննշան վաշխառու մ'էր։

Այն իրիկվան վերադարձին Նարդիկի տան չի մոտեցած, միտքեն՝ պիտի տեսնեմ, չի պիտի տեսնեմի գուշակություններ ըրավ. փորձեր կատարեց. ճամփուն վրա իր գտնված տեղեն մինչև սա շենքը քե որ հարյուր քայլե ավելի չըլլար, Նարդիկ պատուհանն պիտի գտնվեր. քե որ հարյուր քայլե ավելի ըլլար հեռավորությունը՝ Նարդիկը պիտի չի տեսներ. և քայլերը կառներ մեծ-մեծ, ամեն ճիգ թափելով որ հարյուր քայլը չանցնի և կարենա այն իրիկուն դերասանուհվուհն երեսը տեսնել. այսպես ճամփան շարունակ իր սիրած նյութին խորհելով գրաղեցավ մինչև երանավետ տան մոտ։

Նարդիկ՝ պատուհանն էր. գուշակությունը ճիշտ ելավ. պատուհանը բացվեցավ. խոսեցան։ Ճաշեն ետքը նորեն վերադարձավ և ձեռքը բռնելով անոր իր դողդոջուն ձեռքերուն մեջ, վեռն երկու օրվան տառապանքը, մահացումը պատմեց։

— Ջե՛մ կրնար զքեզ չի տեսնել. օդը, լույսը ինչպես պետք է ինծի, այնպես քեզ տեսնելու պետք ունիմ։

Դերասանուհին այս խելահեղ սիրույն ունկնդրելով կարբենար։

— Տեսի՛ր ուրեմն զիս ամեն օր։

Գիշերվան զովությունը կուգար առանց մեղմելու իրենց տագնապներուն սաստկությունը. փողոցին լռությունը, առանձնությունը, մութին հետ կը շրջապատեին երիտասարդն ու երիտասարդուհին անոնց գաղտնիքը պահել խոստանալով։

Անկե վերջը ամեն գիշեր վեռն Նարդիկի տունեն անպակաս եղավ։

Իսկյուտարեն Ալեմտաղի տանող ճամփուն վրա, երկու կառքեր կը վազեին անիվներեն բարձրացող փոշիին մեջեն, հազիվ արշալույս էր. Ջամլըճայի սարեն տարածվող լեռնադաշտին մեջ շոսեին բիլ գույնը կը ճշտվեր, օձապտույտ գալարումներով հողին մեղրագույն մակերևույթին վրա։

Մարդ չի կար այսքան կանուխ այս միայնության մեջ, բացի ածուխ բեռնավորված կովի կառքի մը քովեն, հետիոտն, բոպիկ քալող, մուրեն ու արևեն սևցած մարդեն՝ որ կես գիշեբեն ի վեր քնաշրջիկի մը պես հուշիկ, այս ծույլ կենդանիներուն ետևեն կուգար շարունակ. պահ մը ածխավաճառը կենդանության նշան կուտար, կարթիներ և այս երկար և անծայո ճամփուն վրա, արևին ջերմության տակ չի մնալու ջանքով, իր համբրնթաց կովերը կը մշտեր ձեռքի երկար խթանովը, կովերը կը ցատկեին, խույս տալով խթանին սուր ցավեն, մեկոեղ քաշելով իրենց անտանելի բեռը. հետո քիչ քիչ կը մեղմացնեին ընթացքնին, իրենց առջի դանդաղ քալվածքին վերադառնալու համար, մինչդեռ մարդը երբեմն հայհոյելով, երբեմն շողոքորթ գգվանքով իզուր փութացնել կուզեր զանոնք, հետո ինքն ալ իր միօրինակ քալվածքին, կես մրափին մեջ

կիյնար նորեն. վերջապես կը հեռանային կակուղ հողին վրա թացված վարուն արահետեն զոր ամառը սայլավարը կը նախընտրե պաշտոնական կարծր քարուղիեն։

Առաջին ֆոփեին մեջ նարդիկի համբերությունը սպառելու մոտ էր, Իսկյուտարի նավամատույցեն ճամփու ելլելուն ի վեր տեղմված մնալեն։

— Չեկա՞նք դեռ։

— Կես ճամփան անգամ չեկանք, ըսավ Պասմաճյան Հակոբիկ. տիկին Մազլումյան փոքրիկ կառքին մեջ ճնշված կը կենար։

— Ոսկորներս կոտրտեցան, ըսավ ան ալ։

— Դուն ոսկոր չունիս, բոլոր միս ես։

Խնդացին։

Լևոն Նարդիկի դեմը նստած ծունկ ծունկի գանգատելու մտադիր չէր ճամփուն երկայնութենեն. միայն դերասանուհվույն անհանգստությունը տեսնելով բառ մը ըսելու պետքը զգաց.

— Նեղեցի Չեզ։

— Ո՛չ, ո՛չ։

Լևոն դռնակեն կը դիտեր կառքին ընթացքին հետ, կտոր կտոր աչքին առջև պարզվող սարահարթին թեթև ելևէջները. ձախ կողմեն՝ հեռուն, լեռներուն շարքը և անոնց կողերը պատրատող ձորերուն խոնավ ստվերները. ու աջեն՝ ուսկից ցամաքը հետզհետե, մեղմիվ կը խոնարհեր ծովին կը հասներ, Սելիմիեյի դեղին զորանոցը քաոյակ աշտարակներով. անդին Քատրգյուղն իր շեն ու փայտաշեն տուներով. հետո Ֆեներ-Պահչեի լեզվակը որուն ծայրի սհակը՝ սպիտակ ու մաքուր որ հեռուեն՝ ծովեն ելած ու պուռնուզի մը մեջ փաթթված մարդու կը նմաներ. և ավելի անդին Մարմարայի կապույտ ջուրերուն մեջ կղզիներն, Քնալըն՝ շիկորակ բլուր մը. Պուրկազ՝ փոքրիկ ձագուկ մը առջին ձգած. Հալբիի բլուրները իրենց շոճիներու վեղարով և Մեծ կղզին գույնզգույն շքեղ ապարանքներով հպարտացած։

Ճամփան շարունակվեցավ անիվներուն միօրինակ թավալման դղրդյունովը և Հակոբիկի կատակներով խառնված. մինչ-

դեռ Լևոն իր գործը, գրասենյակը կենացը մեջ առաջին անգամ բողած ըլլալու խղճահարությամբ կը մտածեր և նարդիկի մոռցած երանությամբը մոռնալու կաշխատեր։

— Ես Մարմարան կը սիրեմ, կըսեր դերասանուհին։

— Ես ալ, ըսավ Հակոբիկ։

Տիկին Մազլումյան Մարմարան կատեր։

— Վոսփորը Մարմարային չեմ փոխեր։

— Վոսփորդ ալ կը սիրենք, տիկին, պատասխանեց երիտասարդը։

Խնդալով մարեցան։

— Ուրկից ալ կը գտնես, կրսեր տիկին Մազլումյան, ջանալով քոռսին կապերը թուլցնել։

Վերջապես ծառերու խումբ մը տեսնվեցավ. Տուտուրլը հասան, ճամփուն աջ կողմը պուրակ մը, ձախը՝ հերկված հողեր, քառակուսիներ նոր կամ հինեն հերկվելուն համեմատ տարբերելով իրենց գույներուն մեջ, գույնզգույն պասմայի կտորներե շինված ընդարձակ սալանի մը պես որ գյուղին շրջակայքը կը ծածկեր բոլոր, պարտեզներ, որոնք ծառի ոստերով ձևացած ցածուկ պատերով կը զատվին, բանջարեղեններու ածուներ իրենց նեղ ակոսներովը, սրճարան մը դեռ գիշերը գոց. անդին տնակները՝ փայտաշեն ու գեղջուկ բնակարաններ և մըղկլթը իր պարզ մինարեովը։

Այս էր Տուտուրլուն, տաճիկ գյուղ ուր կանգ կառնև Ալեմտաղի գացող ամեն կառը, արևակեզ ճամփուն երկարութենեն հոգնած։

Հագիվ առավոտ էր հիմա, արևուն ամփոփ ճառագայթները կելլեին կը ցրվեին չորս կողմ, լեռներուն և ծառերուն կատարները շողացնելով. ու քիչ քիչ շոգիացնելով գիշերվան ցողը որ վճիտ բյուրեղներու պես տերևներու ու ծաղիկներուն վրա տարածված կը փալփլեր։

Գյուղը դեռ քունի հանդարտության, ամայության մեջ էր. մեկ երկու հոգի ախոռներուն դրան մոտ կը տեսնվեին ձեռքերնին պղինձե ամաններով. ուրիշ մը աղբյուրեն ջրեսը կը լվար։

Կառքերեն իջան հոն, ծառոյ շուքին տակ խոտերուն վրա մոռցված աթոռակները գտան. երկրորդ կառքը անակնկալ կոչ-

նականներ կը բերեր, դուրս կը հաներ, զոր Հակոբիկ իր փառքի կարգադրելու պաշտոնին մեջ չէր կրնար մոռնալ, Պոլսո էն ճարտար համբավաւոր նվագածուները, երգիչները. Նարդիկ ծափ զարկավ. մինչև հոն երիտասարդը գազտնի պահած էր ասոնց գալը, կառք մը կուգար կը հետևեր իրենց կառքին, բայց հոն գտնվողները չէին կրցած տեսնել։

Դերասանուհին կը ճանչնար ասոնք՝ Ակոնին, Ճիվանը, Սատրին, չորրորդը չի գիտցավ. մարդիկը բարևեցին, խումբ մը կազմեցին, տիկին Մազլումյան կառքի անձուկ անկյունեն ազատած, կսկսեր համարձակ շունչ առնել։

— Էֆ, քիչ մ՚ալ անցներ նե պիտի խղդվեի։

Նախաճաշի պատրաստություններ տեսան, ծառերուն զովությունը կը պատսպարեր զիրենք եյող արևին տաքութենեն. գյուղը կարթնար, կը շարժեր, եզերը արածելու կը տանեին, սրճարանը կը բացվեր։

Իրենց պաշարեն մաս մը հանեցին դուրս, գյուղեն մածուն ծախու առին, գետինը ձգված ճերմակ սփռոցի մը վրա նախաճաշիկնին ըրին, կշտացան. հետո խավեն եկավ, տիկին Մազլումյան հիմա բոլորովին հանած էր ռոսսեն, իր ամենօրյա թըշնամին ուրկե չէր կրնար զատվիլ, վառն կը ծխեր խոտին վրա պառկած. Հակոբիկ՝ նարկիլե կը քաշեր, աչքերը կիսափակ։

— Թաֆսիմ մը, ըսավ Ակոնիին դառնալով։

Ակոնին բեմենշեն հանեց իր սև լաթե ծածկույթեն, փույթերը դարձուց, թելերը համաձայնեցնելով, հետո սկսավ, մյուսները կունկնդրեին լուիկ, լավ կերակուրե մը հառաչ եկած քմրության մեջ թաղված։

Նվագարանին մեղմ ու դաշն ձայնը՝ տերևոց խարշափյունին մեջ բարձրացավ, աղեղը կերթևեկեր աղյաց վրա, Ակոնիին դեմքը կը գունավորեր, կը կենդանանար իր մատներեն թռչտող ձայնին զորությամբ։

Աղաչավոր շեշտերով կսկսեր. կարծես քաղցրությամբ համոզել ուզեր մեկը, ու գործիքին ձայնը կը մեղմանար, կը մեղմանար, անլսելի ըլլալու չափ, իբրև թե շունչը սպառեր այս պաղատանաց մեջ։

Նորեն կը բարձրանար ձայնը հնչուն, հզոր, հանդիմանա-

կան ձևով. սպառնալիքը աղաչանաց կը հաջորդեր, հետո նորից կը թուլնար կը խոնարհեր, հեզիկ, գլխիկոր իբրև քե ներողություն խնդրեր առջի հպարտության համար։

Ով ունկնդիրները բառ մը չէին արտասաներ չընդհատելու համար ներդաշնակությունը որ խաբվելու չափ կը նմաներ վեր, ծառին ոստին վրա պահվըտած թռչունի մը ձայնին։

Թախիմն էր այս, ետքը չորսը միացած, մին՝ իր ուտով, մյուսն՝ լավութայով, չորրորդն իր դափով փեշրեվր սկսան։

Նարդիկ սթափեցավ. եղանակը հարցուց, ուշքամ կր զարնեին, ևսոն բան մը չէր գիտեր, չէր հարցներ, վերջեն երգերու կարգը եկավ, կիները հրամաններ կուտային, այս երգը կուզեին, իրենք ալ կընկերանային երգիչներուն, հնչեցնելով ծառերուն անխոսիկ արձագանքը, մինչդեռ նվագածուները կը մէզմացնեին իրենց ձայները կանանց թարմ ու քաղցր ձայները լսելի ընել տալու համար։

Գյուղեն իրենց արտը գացողներ կանգ կառնեին ճամփուն վրա, ասոնց շուրջը, մտիկ ընելով այս եղանակներուն որոնք իրենց արևելքցիի մելամաղձոտ ու դանդաղ գոյության կր համապատասխանեին, մինչդեռ Եմենչեն իր սուր, ազդու ձայնը կը նետեր օդին մեջ և ուտը իր բամբով անոր ստվար շեշտը կուտար։

Ալեմտաղիի մեջ իրենց գալուստը շփոթություն չի հարուցեր, շատ տեսեր էին ասոնց պես զվարճանալու եկողներ. ճամփուն վրա հանդիպողներ կը կենային վայրկյան մը առջի կառքին մեջի կիներուն նայելու համար և այնչափ միայն, և անտառին մեջ կերթային, ծույլ, դանդաղ, փայտ բերելու։

Հակոբիկ ամենքը կը ճանչնար այս գյուղացիներուն, հավասիկ Փարթամ չորպաճին. օտարական մը՝ այս անունը լսելով դառն հեգնություն մը լսել պիտի կարծեր չորպաճիին պատառուն ու ողորմելի հագուստը, երևույթը տեսնելով. փարթամութենե զատ ամեն բան կար հոն. սա թուխ, սև աչվի երիտասարդը՝ Օղիկենց փեսան՝ սայլավար մը անցյալ տարի ամուսնացած. Հակոբիկ կը բացատրեր այս ամենը. ևսոն՝ հիմա իր վաճառատան կը խորհեր, դողալով որ ծանոթ չի գտնվեր այս կողմերը. բոլոր կյանքին մեջ առաջին անգամ ըլլալով մաս-

նակից կըլլար ասանկ զբոսանքի մը, թողլով բանը գործը. և իր սակավապետ ու աշխատասեր երիտասարդի սովորությունները, իր նշանած անձի վիճակը կը բողոքեին կարծես այս գաղտնի և փախստական սիրահարության դեմ։

Հոս չի կեցան շատ, Հակոբիկ ցորեկվան և իրիկվան ճաշին պատրաստություններով զբաղած է, կերակուրները, աղանդերը կորոշե, կովի սայլեր պատրաստել կուտա ճերմակ սավանե ծածկույթով, գահավորակի մը պես որով Դաշտելեն պիտի երթան, և կը մեկնին կիները՝ ընկողմանած այս երկար, վրան բաց, տոմիճոյի տուփի ձևով կառքերուն մեջ, Հակոբիկ՝ փորձ սայլավարի մը պես անուշ խոսքերով գգվելով հանդարտաքայլ գոմեշներուն ընթացքը, ամեն մեկուն իր անունը տալով,

— Տի՜հ, Պենեկլի։

Կամ թե՝

— Կյոզլունի սևտիկիմ Քարամանը։

Գյուղացի սայլավարը կը խնդար իր բարբառը Հակոբիկի բերնեն լսելով, մինչդեռ գոմեշները զիրենք վարող անծանոթ ձայնեն զարմացած կսկսին վազել անտառին նեղ ու մութ արահետին մեջ միվելով և իրենց ոստոստումին մեջ սպառնալով կործանել, շրջել ետևնուն ձգված երկար ու ծանր տուփը։ Եվ այս ցնցումներուն, սասանումներուն մեջ Լևոն Նարդիկի մոտը նստած կը տատաներ ինքն ալ ուրիշ աշխարհի մը երազներուն մեջ։ Ճիշտ քովեն գաղտուկ՝ կը դիտեր դերասանուհույն մաքուր դիմագիծը, այտին վրա մորթին վարդագույն ներկվող կաթնաթույր փափկությունը. կռնակեն առատ, ոսկեփայլ մազերը վեր ժողված, ծոծրակը կը տեսնվեր նուրբ, թեթև աղվամազի մը ստվերին մեջ և ավելի վար չիփակին օձիքեն՝ պարանոցը՝ դողդոջուն, կարծես երջանիկ ձեռքի մը փայփայանաց կարոտ, կերթար կը միանար վայելչապանծ, ինքնամատույց կուրծքերուն։

Երիտասարդը իր զմայլման մեջ ինքնիրեն բաղդատություն մը կըներ հոս այս երկու կիներուն մեջ. տիկին Մազլումյան գեր, մսալի, պարպատան լանջով, լայն շրջազգեստին ծալքերով, սոնք և փարթամ հրապույրներով լեցնելով բոլոր կառքը ու այս պահուս թիկնահեց երկնցած մեկ կողմեն ցույց կուտար

ճերմակ վզին ծրունքը և առույգաբարձ երանաց վայելչությունը։

Մին՝ իր միսի հարուստ և վաճառիկ գեղովը կը պանծար, մյուսը իր ձևին, շնորհին վայելչությամբը կիշխեր սիրտերու։

Դաշտելենի աղբյուրին քով, գետինը ծածկող չորցած տերևներուն վրա, անտառին զով ստվերին տակ նստեր էին, օղիի սրվակներու, փոքրիկ բաժակներու և բազմատեսակ աղանդերի չուրջը բոլորվելով։

Առաջ նվագածուներուն տվին օղիով լեցուն գավաթներ, հետո իրենք ալ առին, պզտիկ բաժակները բախելով։

Ջուր բերին աղբյուրեն, երկրորդ օղին Դաշտելենի կենաց առաջարկեց Հակոբիկ. հիմա հիշատակներ կը պատմեր անցյալ զվարճություններե քաղված ճիշտ այտեղ, Դաշտելենի աղբյուրին քով. հետո տիկին Մազլումյանի կյանքին խմեց,

— Կենա՛ցդ, Սուրբիկ, պոռալով։

— Կենա՛ցդ, Սուրբի՛կ. կրկնեց անտառը խորունկեն։

Արձագանքը ղիրենք զվարճացուց, Նարդիկ ծառոց բունին փաթթվող մամուռներ ժողվելու ելավ, մյուսներն ալ ցրված հոս հոն բարձրաձայն կը պոռային օ՜հ, օ՜հ և անտառը իր լռության մեջ վրդոված, այս զվարճասերներուն հետ ինքն ալ ուրախացած վայրկյան մը կը պատասխաներ օ՜հ, օ՜հ, ետ չէր մնար անոնցմե, մոռնալով իր ծերությունը։

Օղիին բաժակները նորեն ու նորեն բարձրացան, զարնվեցան իրարու, սիրտերը, գլուխները տաքցնելով, բարեմաղթություններով, կատակներով ընդմիշված։ Նվագածուները՝ գործիքնին ձեռք կառնեին, նախ զարնելով այս ու այն թելին, բաղդատելով հնչումները իրարու հետ։

Ցածեն, մեղմիվ ռւտը՝ իր թավ ձայնը մեջտեղ կը նետեր, պզտիկ եղանակի կտորով մը ու կանգ կառներ. հետո կսկսեր նորեն, ու նորեն կը դադրեր, վերջը կը շարունակեր եղանակը և հարիչին՝ աղյաց վրա զարնվածքը ունկնդիրներուն սրտին մեջ արձագանք կուտար. ամեն բան կրսեր ու բան մը չէր ըսեր այս երաժշտությունը, իր հրապույրը սևեր հագնող գեղանի կնոջ մը պես, տխրություն էր։

Անտառը իր լռության մեջ կը թաղվեր, ծառերը անշարժ կը

մնային իրենց երկարաձիգ արմատներուն վրա, և ուտին ձայնը կը բարձրանար, կը խռնարհեր, կը վարաներ, կամ ազատ համարձակ դուրս կը սլանար արաբ նվագարանին գոգ և ուռուցիկ կուրծքեն զոր նվագածուն՝ հառաչանքով լեցուն սիրուհվո մը կուրծքին պես կը սեղմեր իր սրտին վրա։

— Սուզինամ կուզեմ, պոռաց Նարդիկ։

Սուզինաք նվագեց ուտը և մյուսները ընկերացան, ձայներնին միացուցին։

Նարդիկ ինքը կսպասավորեր, գեղատեսիլ մատուռակ, մեկ ձեռքով վեր ժողվելով շրջազգեստը, գիզեցիկ սրունքները ի տես հանելով, մյուսով օդին բաժակներ հրամցնելով։

Լևոն ամենեն առաջ գինովցավ. բայց իր միտքը պատող քանձր մշուշին մեջեն անհանգիստ խղճմտանքը կսթափեր վայրկյան մը երազի մը պես հիշեցնելով հեռավոր Պոլիսը, իր վաճառատունը, Օրթագյուղ իր նշանածին տունը. վերջը այս բոլորը կանհետանար երբ Նարդիկ իր քովը կուգար ըսելով.

— Իմ կենացս ալ գավաթ մը պիտի խմես. կը պահանջեր, կը հրամայեր այս աղջիկը։

Անտառին մեջ առտու երեկո չի կար, այլ միօրինակ կես լույս մը որ վերեն ծառոց սաղարթներուն պատռտված կապույտեն կուգար։

Երաժիշտները կը շարունակեին երգերնին, Հակոբիկ ստակ կը նետեր ամենուն, նոր երգեր, եղանակներ ուզելով միշտ,

— Կազել մը, Մա՛դրի։

Հոն ճաշեցին այսպես առանց գիտնալու կերածնին ու խըմածնին. հետո իրենց սայլերով դարձան ետ գառիվայր ուղիեն. մութը կը քանձրանար. ճամփուն բոլոր երկայնությամբը Պենկալի գույնզգույն կրակներ, ծառերը կը լուսավորվեին. և աջեն ձախեն արձակված հրթիռներուն պայթյունը, լուսավոր շավիղները կառքերուն հետ կը մոտենային գյուղին։ Ճամփուն տատանումներուն մեջ իրարու վրա կը թավալեին կառքին մեջ, հետո կը շտկվեին, կելլեին կը նստեին, համբույրներու ձայներ՝ երգի ձայներու կը խառնվեին երբեմն։

Այսպես ահա կուգային Դաշտելենեն իրենց աղմուկովը, լույսովը արթնցնելով գյուղացին որ պատուհանը կելլեր հրա-

խազուբյունը դիտելու համար, հետո կերթար պառկելու, տես-նելով որ այս երիտասարդները քնանալու միտք չունին և մեծ ծառին տակ այս ամառ գիշերը լուսցնելու կը պատ-րաստվին։

Տվեճյան Մարտիրոս էֆենտիի խանութը Պահչե-Քափա-Քաշ խանի մեջ էր. կենտրոն տեղ ուր փոխադրված էր հիմա-Գործերուն ընդարձակության համեմատ չէր իր կես խա-վար սենյակը որ երկու փոքրիկ պատուհանե միայն լույս կառներ։

Բոլոր դրամի պետք ունեցողներու ծանոթ խանութը՝ այս քարաշեն ու ամրափակ սենյակը խոշոր սնտուկի կը նմաներ. սալահատակին վրա խսիր մը, լայն ու կոպիտ հյուսկենով խսիր մը փռված էր. մեկ կողմը երկար բազմոց մը Անատո-լուի հաստ ու բրդոտ գորգով մը ծածկված, անկյունը պատին մեջ հյուսված էր քացան որուն երկաթյա ծանր դուռը երեք բանալիով կը բացվեր։ Հրապարակին ու ազգին մեջ ծանոթ ու հարուստ դրամատերներեն մին էր այս մութ որջին մեջ ամրա-ցած մարդը, կարճ ու գեր իր սնտուկին պես։

Անշնորհ ու անխնամ զգեստներեն, ուռած փորեն, փայլուն աչքեն դատելով, չի ճանչցող մը՝ այս ազգին նշանավոր մարդը հարուստ մեծատան մը մատակարարը պիտի կարծեր։

Ամառը զով էր այս քարանձավին մեջ ու ձմեռը խոնավ. դրան ուղղության վրա գտնվող անկյունը սեղանի քով նստած էր իր երիտասարդ գրագիրը պատին մեջ շինված տոլապ մը անհամար տետրակներ հանելու, դնելու զբաղած. դուրսը ուրիշ ծառա մը, ակնցի եղբորորդի մը սենյակները մաքրելու ու իրի-կուններըը գոցելու պաշտոնին մեջ իր փորձյալ հավատարմու-թյամբը. ողորմություն ուզողները ներս թող չի տալու համար սպասելով մինչև իրիկուն։ Երբեք Մարտիրոս էֆենտի մինակ չէր մտներ այս սեմեն ներս. ու իր սպասկուլտը ուներ. փոք-րիկ փերեզակներ որք իր շնորհիվ վաճառականի տիտղոսը առած էին, դրսեցի փոլիցաճիներ միշտ իր աջակցությանը կա-

րոտ, որոնք առտուները կը շրջապատեին զինքը, մինչև սենեակ տանելու համար. խանը հասնելնուն, օտապաշին ոտքի կելլեր բարև բռնած փիշը փիշին. իր գալուստը կիմացվեր անմիջապես։

— Եկավ, եկավ, կըսեին իրարու։

Մարտիրոս էֆենտի անտարբեր իր գալուն համար ցույց տրված մեծարանքներուն, հարուցած աղմուկին, համրաքայլ կը հառաջանար, իր ճարպալից մարմնույն բեռան տակ ընկճյալ, տոտիկ տոտիկ կելլեր քարե սանդուխը որ իր սենյակը կը տաներ։

Դրան մոտ եղբորորդին կանգուն, ձեռքերը միացուցած, կը վազեր աղային գալը ներսը իմացնելու։

— Բարի լույս, Աբրահամ։

Ու Աբրահամ այս բարի լույսեն շողոքորթված, պատասխանելու անկարող, քնմեննահ մը կըներ գետնեն։

Վերջապես կը մտներ ներս ուր զինքը սպասողները ոտքի վրա ելած կընդունեին զինքը, բազմոցին վրա իրեն համար որոշյալ անկյունը կանցներ ու իրեն դիմողները մոտիկ կըներ։

Տասնութը տարու էր երբոր Ակնեն Պոլիս եկավ «սարֆութին» ընելու համար. այս դրամի առուտուրը՝ իրենց ընտանեկան մոլուբյունն էր. ամեն ոք սարաֆ կը ծներ այս ընտանյաց մեջ. կարգավ, տարիքի ու փորձառուբյան կարգավ, մի առ մի կուգային մայրաքաղաքը. նորեկները՝ վարժվելու, ծերերը՝ նորեկներուն սորվեցնելու համար արհեստին գաղտնիքը, անընդհատ երթևեկ մը Ակնեն Պոլիս տանող ճամփուն վրա, հաստատամիտ մրջյուններու ուղևորուբյան մը պես։

Աստվածապաշտ կը թվեին այս մարդիկ։ Սաղմոսեն տուներ, Ավետարանեն հատվածներ բերնուց դիտեին, օգտակար փաստեր, զորս շահավոր առուտուր մը ի գլուխ հանելու կը գործածեին։

Սակավապետ, կծծի, խանի մը սենյակին մեջ պարտկված Տավեճյանները միշտ հարուստ-աղքատներ մնացած էին, մինչդեռ ուրիշ հայրենակիցներ հաջողուբյան մեջ մոռնալով իրենց առջի խնայող սովորուբյունները, պոլսեցիի մը պես շռայլ ու մսխող դարձած էին։

Հոս կամ երկիրը, թոնիրին քով կամ տանիքին վրա, առտու կամ իրիկուն, դրամն էր իրենց խոսակցությունն, հաճույքն ու ցավը, սփոփանքն ու հուսահատությունը։

Առնելիքի, գանձման, դատի, տոկոսի, մուրհակի անվերջանալի վեճ մը որ տունն ու խանութը հավասար կատաղությամբ հառաջ կը տարվեր, մին՝ մյուսին գործողությունները քննադատելով, դժգոհ, գանգատող, չի կրնալով երբեք բավականանալ հաճախորդներուն կողոպուտներեն, առնված շահեն, ապահովութենեն կամ գրավեն։

Այս շահամոլ մթնոլորտին մեջ ծնավ ու մեծցավ Մարտիրոս. ուղիղ ընթերցանութենե ավելի չի սորվեցավ երբեք. բայց մանուկ հասակեն սարաֆության բոլոր ծակ ու ծուկը, վարպետությունները սորված հասավ Պոլիս, հորեղբորը Սարգիս աղային քով տեսականը գործնականով կատարելագործելու համար։

Մեծ Նոր խանի մեկ սենյակին մեջ որ իրենց տունն ու խանութն էր միանգամայն, սպասավորի համեստ դիրքով սկսավ իր աշխատությունը. անկողին շտկեց ու ժողվեց, սենյակը ավլեց ու խրիկունները դրան առջև փոքրիկ երկաթե վառարանին վրա կերակուր եփել սորվեցավ։

Ջախ ու ծեծ կերավ հորեղբորմեն, երբոր աղը շատ նետեց կամ պտուկը կրակին վրա մոռնալով այրած ու սևցած սեղան բերավ։

Արյունը՝ մահամերձ ծերուկի մը հանդարտությամբ կը սողար իր երակներուն մեջ. հնազանդությունն ստրուկության կը հասներ այս տղուն քով. իր պապը՝ ծեծի ու հանդիմանության շնորհիվ հառաջացած ըլլալը կը պատմեր. հայրը նույն կերպով մարդ եղած էր. ինքը բացառություն մ'ըլլալ մտքեն չանցուց. իր հայրը, հորեղբայրը ու պապը դարուս նշանավոր մարդիկն էին իր աչքին ու ըստ այնմ իր հարգանքը ու ակնածությունը անսահման էր։

Խոհարարութենե սկսավ հառաջադիմել մինչև սենեկի մանչ՝ «օտա ուշաղի» ըլլալու աստիճան. խահվե ու չուպուխ կը հրամցներ հյուրերուն, ջուր կը բերեր ու սիկարի կրակ կուտար,

ու դրան մոտ կսպասեր ձեռքը ձեռքին վրա բարև բռնած մինչև որ հորեղբայրը կանչեր զինքը.

— Ո՛տղա, ֆեռս եկու։

Գիրուկ, գեղեցկադեմ տղա էր զոր սենեկին հաճախորդներն շուտով նշմարեցին, ինքն ալ զգաց այն հատուկ ուշադրությունն որուն առարկա կըլլար. ոմանք պախշիշներ տվին իրեն զորս ընդունեց. առաջարկություններ լսեց որոնցմե իզուր ուկեց խույս տալ։ Հորեղբայրը որուն թերասքող բառերով իր վարանումները բացատրեց, չի հասկնալ ձևացուց իր խոսած լեզուն։ Մերուկ կալվածատեր մը՝ հինուց ի վեր խանութին հաճախորդներեն մին, Մարտիրոսին ամենեն ավելի հետամուտ գտնվեցավ. մինչև իրիկուն խանութեն չէր ելլեր. առանց բնավ պետք ունենալու շարունակ փոխ ստակ կառներ, մեծամեծ շահերով վերադարձնելով քիչ օրվան մեջ, խանութը կը շահեր այս հաշվեն ու Սարգիս աղա՝ ծերունի կալվածատերին տկարությանցը ուշադրություն չի դարձուց։

Քիչ ատենվան մեջ Մարտիրոս ինքն ալ փոքրիկ գումար մը ժողվեց իր տեսած առատաձեռնություններեն ու իր հաշվույն պզտիկ գործ մը սկսավ հորեղբորմեն գաղտնի. տոկոսով փոխ ստակ կուտար, ուր օրվան մեջ կրկինը սպասելու պայմանավ. այս անհուսալի շահը կրցավ իրականացնել. փարան փարային ու ստակը ստակին վրա դրավ. երբեք զբոսանքի ու հաճույքի փող մը չի տվավ ու երկու տարի վերջը բավական ստակ դիզած էր։

Այս հաջողությունը իր շահու ծարավը սաստկացուց, այնպես որ, հորեղբորը խանութին մեջ գրեթե խանութ մ'ալ ինք հաստատեց. ճարպիկ ու համոզիչ էր. հաճախորդները մի առ մի կորզեց. ամենքը հարեցան իրեն երիտասարդի մը քով ավելի վեհանձնություն գտնելու հուսով քան քն անոր կարծրասիրտ աղային մոտ որ զիրենք անողորմաբար կը կողոպտեր։

Այսպես անձայն ու անշշուկ իր հաշիվը հորեղբոր հաշիվեն գատեց ու անոր շուքին տակ մեծցավ ի վնաս հայրենի տուլապին։

Սարգիս աղան զգաց որ իր տակավ առ տակավ պակասող շահերուն ու այս վտանգավոր վիճակին գաղտնիքը եղբորորդ-

վույն քովն էր. իր սենեակները մեռյալ տառ մնալու կը դատապարտվեին. ոչ ոք ստակ մը կը վճարեր առջի պարտքերուն համար. խանութին առնելիքները որ սարաֆի մը աչքին պատրաստ դրամե ավելի նվիրական են, փճանալ կսպառնային. թշնամին ներսեն էր, այս փոքրիկ վստահության զեղծումը՝ տարապայման կերպիվ մեծցավ և աններելի ոճրի մը հանգամանքը ունեցավ իր աչքին. իր ուրիշները կողոպտելու միջոցներով լեցուն միտքը չկրցավ ըմբռնել այս խաբեությունը երբ իրեն դեմ ի գործ կը դրվեր։

Խաբելն՝ միայն իբրև ներգործական ճանչցած էր. կրավորական ձևը տեսնելով կատղեցավ. նախ վռնտել մտածեց Մարտիրոսը. հետո խորհեցավ որ հայտնի թշնամությամբ համարձակ հակառակորդ մը պիտի ըլլար իր դեմը. մեղմացավ, իրավախոհություն մը նախամեծար դատեց. Մարտիրոս իր կանխահաս ճարպիկությամբ հայրենի արյունը կը հաստատեր. շահու բաժին մը տվավ խանութեն ու դաշնակցությունը պատերազմին առաջքն առավ։

Բայց երբեք անառակությունը դրամ ծախսելու պատճառ մը չեղավ իրեն։

Փերայեն միշտ երկյուղ մը ուներ այս դլսեցին որ իր քսակին համար փրկավետ եղավ, երբեք չի հաճախեց այն հասարակաց տուներն ուր կյանքը ու դրամը հավասար շռայլությամբ կը վատնվին։

Ահա այսպես անցավ իր կենաց մեծագույն մասը. հարստացավ. այն աստեն ամենքը մոռցան իր աղտոտ գործողությունները, ամոթալի անցյալը, միայն սնտուկին լեցունությունը հիշելու համար. ոսկվույն փայլը իր խայտառակությանց աղտը աննշմարելի դարձուց։ Տարի մը հինգ ոսկի տվավ Հիվանդանոցին ու Պատրիարքարանը օրհնության կոնդակ մը խրկեց իրեն. լրագիրներն այս բարերարին անունը ամեն կողմ տարածեցին. Ակնեն ընտանիքը կարդաց ու պարծենցավ։

Հայրենիքեն դեռ իր եկեղեցասիրությունը ու բարեպաշտ սովորությունները պահած էր. ամեն կյուրակե եկեղեցին կը տեսնեին զինքը սև չուխա սեթրիովը գավթին մեջ կանգնած, հերազուրկ գլուխը բաց փղոսկրե գունտի մը պես փայլուն, ձեռքը

համրիչը, քիին տակեն մոմոալով՝ սեղանին կամ դասին մեջ ըսված աղոթքները։

Հիմա կատարելապես մեծ մարդ մ'էր, այսինքն ինչ որ կը հասկցվի մեծ մարդ ըսելով հայոց մեջ, ու Մարտիրոս էֆենտի, վասնզի էֆենտի էր հիմա, իր դերը կը կատարեր։

Գործի վրա խորհուրդ կուգային իրմե, վեճերու մեջ իրավարար կը կարգային զինքը իբրև անկաշառ մեկը Ազգին մեջ, ոչ վարչության անդամ էր և ոչ երեսփոխան։

— Ես առանկ ցույցերի չեմ ախորժիր, ձեռքես եկածին չափ կաշխատիմ, առանց անդամ ըլլալու։ Ու մեկուսի, հպարտ, ազգային գործերու վրա հանդիմանական ձևով իր կարծիքը կուտար այն գործիչներուն որ կուգային ստակ ուզելու իրմե։

— Առանկ ժողով չըլլար, ազգը պոշպողազներու ձեռքը մնացեր է։

Այսպես առանձին, անկախ, ու հզոր իշխանություն մը կըլլար, զոր ամեն ոք կը ճանչնար ու կը հարգեր և թուրքերն ալ կը մեծարեին զինքը, անոր գեհհիկ մականունը կազնվացնեին, Տեվեճիզատե Մարտիրոս էֆ. կոչելով զինքը։

Մեծ գործերու ձեռնարկած էր հիմա. կարևոր հաստատության մը հացը կը հայթայթեր և կը հարստանար գողնալով տեսակեն, քանակութենեն, իբրև ճշմարիտ պոլսեցի վաճառական մը, ու հետզհետե լինելով ճշմարիտ իշխան մը, ծախքը մեծցնելով, բազմաթիվ ծառաներով շրջապատյալ ու ձգելով իր Քում-Քափուի տունը ուր իր արդի մեծությունը չէր սղմեր, Օրթագյուղ փոխադրվելու համար։

Շատոնց լրագիրները վսեմափայլ կը կոչեին զինքը. ինքն իր երկաթյա քացային կրծնած իբրև անառիկ ամրոցի մը, ալ առաջվան պես սարաֆություն չէր ըներ գրեթե, բայց անհաշվելի առնելիքները անգանձելի մնացած էին և իր հինավուրց վաշխառուի միշտ դյուրազգաց մնացող սիրտը կարյուններին։

Բայց ոչ մեկ թվաբան բաղադրյալ տոկոսի հաշիվ մը իրեն չափ հաջողությամբ պիտի կրնար ընել։

Ստակին շահը, շահը դրամագլխեն ավելի նվիրական բան մը ուներ այս մարդուն համար. դրամագլուխը կորսնցնելու հոժար էր բայց տոկոսին դպչիլը մահացու մեղք էր։

Ասկից անկից տեսած փոքրիկ վնասներեն զայրացած՝ ապահովություն ապահովության վրա, գրավ գրավի վրա կը պահանջեր փոխ ստակ տալու համար։

Եվ հանձնառու կըլլային ամենքը վստահելով այս հարուստ մարդուն որ իրենց ավանդն ու գրավը չուրացնելու պետք չուներ, հանձնառու կըլլային այս մարդուն բոլոր անիրավ ու անտեղի պայմաններուն։

Իր գործողությունները, ամեն ավանդյալ գրավները ծախու առնելու ձևով տեղի կունենային, հաճախորդները միշտ պարտավոր էին հավատալ իր խոսքին թե գրավները պիտի վերադարձներ եթե իրեն պարտքը հատուցանեին։

Այս խստությունը, այս անվերջանալի պահանջումները, պայմանները, սեներատները, ա՛լ ավելի վստահություն կը ներշնչեին հաճախորդներուն. իրենց ստացվածքին աչք տնկող մարդ մը այնքան դժվարություն չպիտի հարուցաներ քիչ մը ստակ տալու համար, այս համոզմամբ ադամանդները կը լցնեին իր երկաթե սնտուկին մեջ։ կալվածները յուր հորը անվան կը դարձնեին իբրև վերջնականապես ծախված, առանց փոխարեն թուղթ մը, գիր մը առնելու։

— Իմ տետրակիս մեջ գրված է, կըսեր սարաֆը վեհապանծ, ցույց տալով իր կաշեպատ տումարները, իբրև թե Ավետարանը ցույց տար այս միամիտներուն։

Բայց իր բոլոր հարստությամբը հանդերձ իր վաշխառուի հնավանդ տկարությունը կը պահեր միշտ ու երբ դիպվածով մեկը գար իր պարտքը հատուցանելու, այս պարտքը անհավատալի արագությամբ աճած ու բազմապատկած կը գտնվեր. հաշիվ ընելու հատուկ եղանակ մը ուներ այս մարդը՝ տոկոսը կը հաշվեր նստած տեղեն, մատերուն վրա համրելով անցած ժամանակը։

— Չիլհիճճե, գիլֆատե, շևվալ։

Եվ այս արաբական ամիսներուն անուններովը ու հասած եղրակացությամբը ապշեցնելով դիմացինը, իբրև թե արաբական տարին 14 ամիսե կազմվեր։

Վերջապես գումարը կորոշվեր, շահը շահին բարդված պարարտ գումար մը, զոր ամբողջապես իր ափին մեջը տեսնելե

վերջը միայն կը բանար իր սնտուկը. անել հորի մը պես ժամերով փնտրելով, հետո ակամա կարծես տիրոջը վերադարձնելով ձգված ավանդը։ Իսկ թուրք հաճախորդացը հետ միշտ համեստ ու երախտապարտ, կրկնելով մարդուն մեկնած միջոցին իր շնորհակալության ավանդական բանաձևը, ճիշտ այնպես երբ Մեծ Նոր-խանի միջ հինգնոց մը պարգև կուտային իրեն։

— Պերեքեթ վերսին, էֆենտիմ։

Իբրև կրոնասեր և աստվածավախ մարդ չէր կրնար ամեն զվարճության մասնակցիլ. թատրոն կերթար միայն հինդերորդ արարվածին՝ չարագործներուն պատուհասը, առաքինիներուն երջանկությունը տեսնելու և հրճվելու համար. հոն՝ սիրո տեսարանները դինքը կը գայթակղեցնեին, հիշեցնելով իրեն ամեն տարիանքե զուրկ մնացող պատանեկությունն, և գրդռելով իր նախանձաբեկ հոգին. վերջերը ակամա կը շարունակեր երթալ ո՛չ ալ բարոյականի հաղթանակը տեսնելու համար թատերաբեմին վրա, այլ կանանց սիրաբորբոք տկարությունները, պարտությունները լսելու, դիտելու, վայելելու համար, տեսակ մը անցյալի պատկեր որով կը վերադառնար իր երիտասարդ տարիներուն։

Այսպես կիներուն նայելու համար միայն հիմա կուգար ներկայացմանց, հետզհետե ավելի ջերմ կուսակից դառնալով թատրոնի, և իր օթյակեն՝ բերանը բաց, զմայլելով Նարդիկի հրապույրներուն վրա, և ապաժաման ցանկության մը բոլոր դառնությունը զսպելով սրտին մեջ։

Վերջեն չէր կրցած համբերել այս հանդիսատեսի դերին. իր ծանոթներեն մին միջնորդած էր Նարդիկի քով և Մարտիրոս էֆենտի հոժարությամբ բացած էր իր ամրակուռ քացան, լիաբուռն վատնելու համար հազար կեղեքումներով հավաքված ոսկին։

Գործի մեջ միևնույն հաստատ և հաշվող մարդն էր։ Շաբաթ իրիկունները իր գանձման իրիկունն էր. Մարտիրոս էֆենտի իր պարտատերերուն ցուցակը ձեռքը՝ աչքե կանցըներ, անուններին կուտար, ոմանք իրենց պարտքը վճարած էին և ոմանք չէին երևցած դեռ իրիկվան ժամ 9ին. Շամլյաններեն՝ որոնցմե հա-

զար ոսկվո չափ առնելիք մը ուներ, ոչ ոք նկած էր. Մարտիրոս էֆենտին կատածոտ կատվի մը պես կը մռլտար.

— Ո՞ւր մնացին այս Շամլյանները. ալ համը հոտը փախավ։

Քառորդ ժամ մ՚ալ սպասեց. հետո Աբրահամը խրկեց.

— Կես ժամեն Հովակիմ աղան պիտի գա, պատասխան ենկավ։

Մարտիրոս էֆենտի թաց տեղը պառկող մարդ չէր. իր առնելիքին փոխարեն Շամլյաններուն Օրթագյուղի մեջ բնակած տունը իր հոր անվան գրավի առած էր. կարող էր ի հարկին Դամասկոս վերադարձնել բոլոր Շամլյանները և տունը գրավել։

Ծռահարկ գեղեցիկ տուն մը, ուր պիտի կրնար ինքը փոխադրվիլ, տան վարձք վճարելե ազատիլ. այո, ըլլալիքը այս էր, ապագան տեսնելու, գուշակելու մեջ մեկ հատիկ էր սարաֆը. այս Շամլյաններուն գործը ձախորդ կերթար, դրամական անձկութիւններին կավելնար։ Անկե անկե փոխ ստակ կառնեին միշտ իրենց վճարումները անխափան շարունակելու համար։ Ծանր տոկոսներ կուտային։ Սարաֆը ամեն ինչ կիմանար։ Հովակիմ աղա ներս մտավ տրտում, մտախոհ, բարեվեց, հետո դրամի խոսքը բացավ։

— Այս շաբթու մեջ գիս պիտի սեղմես, սկսավ վաճառականը։

Մարտիրոս էֆենտի՝ իր անկյունին մեջ բոլորած, ամփոփված կը կենար նետվելու պատրաստ պոայի մը նման, առանց մտիկ ընելու ըսած խոսքին։

— Ո՞րչափ ստակ բերիք։

Շամլյան իր դժվար վիճակը կրկին կը հայտներ։

— Այս շաբթու...

Սարաֆին դեմքին վրա բիթը երկնցավ մինչև թուշը հասնելու չափ, աչերը ավելի մանրցած,

— Այդ բանը չընես հա՛, կը նեղանամ։

Կը նեղանար, այո՛. սարաֆը նեղացնելու չէր գար. ահարկու սպառնական բան մը կար այս պարզ խոսքին մեջ «կը նեղանամ», որ կը գիշատեմ կը նշանակեր հոս։

Շամլյան կաղաչեր, պատճառներ կը համրեր, հույսեր կու-

տար. մյուսը՝ անդրդվելի, հետզհետե կը խոժոռցներ դեմքը, խոսքը դառնացնելով. առաջի օրեն երբ ստակ ուզած էին իրմե միթե չէ՞ր բսած որ ժամանակին չի պիտի կրնային վճարել. այն ատեն խոսքով երդումով խաբեր էին զինքը և ահա հիմա ասով երկու շաբաթ կըլլար որ փախուստի դուռները կը բացվեին. գուշակությունը, կանսկածները կիրականանային. ո՛չ, չէր կրնար սպասել։

Մյուսը՝ կը կարմրեր, կը քրտներ խստապահանջ դրամատերին դեմը, խոնարհելով անոր գանգատներուն առջև որոնք ավելի նախատինքի կը նմանեին։ Գալ շաբթու, գալ շաբթու անպատճառ պիտի վճարեր։

— Ո՞ւսկից, կը հարցներ Մարտիրոս բրտությամբ։

Վաճառականը կը պարտավորեր իր բոլոր գործերուն համարը տալ, գալիք ապրանքներուն, դրամներուն հաշիվը բացատրել. կը հիշեցներ նաև իրենց Օրթագյուղի տունը գրավի դրված պարտքերնուն փոխարեն. վերջապես տոկոսի նոր հավելում մը նշավ. հաշտվեցան. նախատինքներե վերջը բարեկամությունը սկսավ։ Մարտիրոս էֆենտիի շրթունքեն հիմա մեղր կը հոսեր, քաղցրությամբ, մտերմությամբ խրատ կուտար Շամլյանին, Արմենակին հարուստ աղջիկ մը գտնելու էր, և Տեմիրճյանին աղջկան վրա դարձավ խոսքը։

Հովակիմ աղա իր սիրտը բացավ.

— Իմ բոլոր հույսս ան էր. բայց ետ մնաց։

Մարտիրոս էֆենտի աշխատելու, չի հուսահատելու խորհուրդ կուտար։

Հովակիմ աղա մեկնեցավ. խորհելով իր տեսած նախադռանաց և մոտավոր ապագային վրա որ ավելի ևս դժնդակ ու ահավոր կերևար։

Շոգենավին մեջ մարդու հետ չի խոսեցավ. տունը՝ ճաշին տակ լուռ ու մունչ էր. կը մտածեր որ ոչ իսկ այս բնակարանը իրենցն էր այլևս. իրենց առևտուրին մեջ հազիվ երեք հազար ոսկվո չափ գումար մնացած էր նախորդ հարստութենեն. ստակի նեղությունը, վաշխառուներու հարկը կուտեր կը հատցներ իր բոլոր աշխատության շահը և վնաս կը մնար միշտ. Արմենակին Մանչեսթրի մեջ պարտքերուն վճարումն ալ դրամա-

գլխին մեկ մասը տարած էր. և մեծ փոխառութեամբ մը միայն իր պատիվն ու անունը մոտալուտ աղետե պիտի կարենար ազատել։

Իր հույսը նորեն դարձավ Տեմիրճյանին հետ խնամութեան մը վրա. բան մը չըսավ իր կնոջ ու զավկին. բայց ճաշեն ետքը նյավ փոեֆի երթալու, և Արմենակին ըսավ որ մեկտեղ գա. ինքնիրեն կը մտածեր որ ինչո՞ւ իր տղան չի կրնար այն աղջիկին սիրտը շահիլ։

Փոեֆին մեջ կորսնցուց. կորուստ ամեն կողմեն. չար ոգի մը կը հալածեր զինքը. բայց այն իրիկուն Արմենակ բավական երկար խոսեցավ էլպիսին հետ, գգվելով ողոքելով հարուստ աղջիկը իր ճենթլմենի ձևերով։

— Անշուշտ, օրիորդ, իրավունք ունիք, օ՛րիորդ։

Էլպիս Եվրոպան չէր սիրեր, Պոլսեն չէր զատվեր. երիտասարդը չէր կրնար հակառակ խոսիլ։

— Ճշմարիտ է, օ՛րիորդ. բայց Մենչեսթրը. առաջին վանկը՝ մենը կը շեշտեր սովորապես Մանչեսթր ըսողներուն սխալը հասկցնելու համար։ Ա՜հ, քե որ Անգլիան տեսներ, ապահովապես պիտի հավներ։ Եվ կը համոզեր իբրև քե այս վայրկենին օրիորդ Տեմիրճյանը առնելով Անգլիա տանել առաջարկեր։

Ոչ ոք սակայն Արմենակի չափ ստույգ և իրական սարսափ կզգար Մանչեսթրեն. իր Քուին-սթրիթի բնակարանին մեջ ի՜նչ տագնապներու հիշատակները թողած չէր. ո՞վ ըսավ որ զվարճանալու համար գացեր էր Անգլիա. այո՛, Շամլյան վաճառատան Ընդհանուր ծախքի հաշվեգլխուն մեջ անցուցած էր անգլուհիներու համար վատնած դրամը, հորը թևարկութենեն նոր ազատող երիտասարդի շռայլութիւնները, հետո քայքայված ուռոզութիւնը դարմանելու համար Փարիզի, Վիեննայի բժիշկներուն վճարած անհատնում ստակները. այո՛, ստույգ էր այս ամենը, բայց քե որ տիկնային զինքը, ինչպես ամեն չորեքշաբթի և ուրբաթ Պոլսեն թղթատար շոգենավին հասնելուն կը վազեր նամակատուն, գործարանին տիրոջ տրվելիք ստակը Պոլսեն մոռցած ըլլալնուն վախովը սրտատրոփ, և նամակը կշռելով գգվելով ձեռքին մեջ, դուրսեն, վայրկյան մը առաջ

գուշակելու համար ակնկալած փոխանակագիրը կը պարունակեր թե ոչ, վասնզի կատակ չէին ախորժեր այս անգլիացիները, բնավ չէին ախորժեր։ Մինչդեռ Պոլսեն իր հայրը Հովակիմ աղա՝ ծույլ և անփույթ, աճապարելու պետք չէր տեսներ, Ջաքմաքճըլարի խանութին մեջ նստած կը բարկանար Արմենակին և այս խոսք չի հասկցող անգլիացիներուն դեմ, պոռալով.

— Փաթլամիշ չեղան ա՛, գալ փոսթայով թող ըլլա։

Ով երիտասարդը Անգլիո անթուլլատու և աննեղող սովորությանց ենթակա, չի կրնալով իրենց համեստ դրամագլխով ձեռնարկած առուտուրին բավել, Պոլսեն ցույց տրված անփութությանց տոկալ, օրն ի բուն իր գրասենեկին մեջ կծկտած տետրակներու վրա կորաքամակ, երեսը կը պահեր առնելիքվորներեն որ շաբաթ օրերը կուգային գրասենեկին դրան վրա կապույտ գիրերով նշանակյալ հրավերին համեմատ, «Վճարումնք՝ շաբաթ օրը ցորեկեն վերջը ժամը 2են մինչև 4։»

Կը պատահեր որ ընթատարը չի բերեր Պոլսեն կրկին և կրկին պահանջված դրամները, և այն ատեն գեռագույն ճիգ մը ընելու կը հարկադրվեր. ամենեն անձուկ վայրկյանը իր կյանքին. դուրս կելլեր իր դրամատունեն վարկի հավելում ուզելու համար, Ճոյընդ-Սթոք պենքեն Քինկ-սթրիթի մեջ. հոն կը հրնչեցներ զանգակը. Մենեյճըրը կրնդուներ զինքը, բարեմտությամբ ունկնդրելով իր պատմությանց. Պոլսեն այս անգամ դարձյալ որմիզա չէին հաւցուցած բայց ութ օրեն անպատճառ պիտի խրկվեր. ի՞նչպես կարտասաներ, ի՞նչ անկեղծությամբ, սրտին հոգիին խորեն այս «անպատճառ» բառը և տեսնելով որ Մենեյճըրը կը չարունակե ունկնդրել, իրենց վաճառատան պատիվը կը հիշեցներ, Շամլյան անունը միշտ անաղարտ և անբիծ մնացած էր և պիտի մնար։ Մենեյճըրը իրենց հաշվընթացը աչքե անցընելու կերթար և ինքը կսպասեր ընդարձակ և թափուր սենյակի մը մեջ ուր վառարանին լույսը կը ցոլար, իր տասնապատիկ մեծցած ստվերը պատե պատ, գետնե գետին կը տաներ կը բերեր. կը քրտներ երիտասարդը այս խոնավ ու ցուրտ սենյակին մեջ, ամեն հոս եկող կը քրտներ, սպասելով գալիք պատասխանին, «այո»ին կամ «ոչ»ին։

Այս կերպ նեղուբյուններով Մանչեսթրի մեջ ավարտած էր իր կայանքը, որպես պարտ է ընել ամեն պատմաճի վաճառականի տղա, չորս տարվա մեջ Եվրոպիո աղտն ու մուրը, հիվանդությունները հավաքելե վերջը իր ապիկար անձին վրա։

Հաջող ամուսնության մը ակնկալությամբ կը դառնար Պոլիս, երկայն, սև, փայլուն գլխարկով որուն տակեն կարծես իր էսնաֆի փյուսկյուլը դեռ կը ծածաներ, երկկողմանի ու տափակ մորուքին մեջեն ցույց տալով կզակը՝ ածիլված, մաքուր, կորովի, ճշմարիտ մսակերի կզակ. ալ թողած էր անգլիական ոստանն և փրկված անոր հատուցման անողոք պայմանաժամներեն։

Անտեղի սնապարծության մը համար ուրեմն կը գովեր էլպիսին բրիտանական մատախլապատ երկինքն։ Հոժարակամ տեղեկություն կուտար Եվրոպիո ամեն մասերուն վրա. գրական, արվեստական նորությունները կը հիշատակեր. Վակնեռի նոր օփեռային և զվիցերական դաստիարակության վրա՝ հավասար դյուրությամբ կը ճառեր. Տեմիրճյանին Անգլիո երկաթագործական արվեստները կը թվեր, կը բաղդատեր Պելճիո հետ. Ստեփանիկ աղային արժեքղթոց վրա շահադիտական նոր ծրագիրներ կը պարզեր. առիթ, վայրկյան չի փախցնելով իր հմտության ապացույցները տալու ամենուն։

Փռեֆ չեղած իրիկունները նորեն Տեմիրճյաններուն կերթար՝ տիկնոջ հետ, օրիորդին հետ խոսակցելու, քաղաքավար ձևերը, բարեկեցիկ վարմունքը ավելի ևս նրբացնելով, մեծատանքի, փայփայանաց շրջանակի մը մեջ պաշարելով մայրն ու աղջիկը, և շարունակ լռելյայն բաղդատության մը հրավիրելով զանոնք իր անձին և իրենց փեսացուին մեջ։

Ստեփանիկ աղա՝ տիկին Տեմիրճյանի հայանի կուսակցութենեն քաջալերված, Արմենակ Շամլյանի պաշտպան կը կանգներ, գովեստը շռայլելով։

— Էլմասի պես տղա է։

Այնչափ որ կյուրակե օրերը Լևոնի այցելությունը տանը մեջ անուշադիր կանցներ, անկարևոր կը դառնար. էլպիս՝ Արմե-

նակը մտիկ կըներ, մայրը անով կզբաղեր և չէին բռնադատեր, ատիպեր զինքը կենալու առաջվան պես երբ գանձապետը գիշերը Պոլիս դառնալու կելլեր։

Օրթագյուղ՝ Պոլսո հայոց Ծոպուռ Սեն-Ժերմենն է. այն երկու բլուրներեն որք հսկա թռչնո մը պարզված երկու թևերուն պես կը բարձրանան ծովեզերքեն, և որոց մեջ բացվող խոնավ ու մթին ձորը մինչև նավամատույցը կը հասնի, աջ կողմինն է ազնվական թաղը!— խողովակներու պես նեղ, կիրճերու պես երկարաձիգ ու խորտուբորտ փողոցներով, գրեթե քարահատակ սանդուխներով ձևացած թաղ՝ ուրկե իր անունը՝ Թաշ-Վերտիվեն։

Հպարտ ու մահաբույր հով մը կա այս թաղին մեջ, անշարժության հովը։

Անջատ պարտեզներու մեջ բարձրաբերձ պատերով զատված փայտաշեն, մեծաստվարած տուներ որոնք իրարու վրա կը նային, իրարմե կզգուշանան, կը քաշվին։

Ամայի փողոցներուն մեջ անցուդարձ չիկա ու այս միայնությունը տաճիկ թաղերուն լռությունը ու մելամաղձտությունը կը հիշեցնե հեռուեն։

Բայց տուներուն մեջ կյանքը հուզյալ ու արկածալից է միշտ. ներսի եռանդը՝ դուրսի անտարբերության պակասը կը լեցնե ու կավելնա. բայց օտարական մը այս հին շենքերը, ամայի թաղը տեսնելով պիտի կարծե թե անոր բնակիչները շատոնց մեկնած են այս տեղերեն։

Բնակիչները իրենց շենքերուն հանդարտ ու հպարտ երեվույթը ունին. վազող, աճապարող մարդ չի կա հոն. հանդարտաքայլ, ծանրախոհ ու մտազբաղ են ամենքը, եթե ոչ նոր, կեթ մաքուր ու կոկիկ հագված, քիչ խոսող, ցած ձայնով, դրացինը անհանգիստ չընելու երկյուղով, այս մարդիկը՝ քաղաքավարությունը ամեն առավելության կը նախադասեն։

Ջեն կովիր, չեն հայհոյեր. պարոնը կըսեն մեկու մը խոսած ատեննին, էֆենտին կըսեն դիմացինին. Օրթագյուղի խանութ-

պաններն անգամ ուրիշ տեղերու մարդոց չեն նմանիր. սըրճարանը ուր կիրակի օրերը միայն ոմանք կերթան, ձայն ու ձուն չիկա, խելոք կեցած տղոց վարժարանի մը պես. սպասավորները չեն պոռար բարձրաձայն ապսպրված ըմպելիքը, լրագիր ընթերցողները կամ խոսակցությունները չի շփոթելու համար. այլ հուշիկ ու զգույշ կը մոտենան քովդ, դավադիր մեկ անցախոս բառը հաղորդելու ձևով, ցած ձայնով կամքդ կիմանան ու կամացուկ մը կը գործադրեն։

Օրթագյուղցին՝ իր թաղեն դուրս զբոսանք և հաճույք չունի, կը սիրե իր գեղին օդը, դիրքը, ձևը ու բնակիչները. մանգալու համար իր Փանկալթիի պարտեզը ունի, ներկայացմանց համար իր թատրոնը. եկեղեցին ու գպրոցը փոսի մը, գրեթե անդունդի մը մեջ շինված են. հոս՝ անդունդը կը լուսավորե բարձունքը. և կռնակը բարձրացող սեպացյալ լերան կուշտին վրա հայոց տուները դեպի իրենց եկեղեցին կը ծռին, կը նային շարունակ։

Օրթագյուղ՝ խոսակցությանց գյուղն է. օրվան դեպքերը, լուրերը կիմացվին կը քննադատվին հոն, հասարակաց կարծիք մը կը գոյանա իսկույն։

Քաքմաճյան բնակության լավագույն կենտրոնը ընտրած է. իրիկունները տուն դառնալուն իր կնոջմեն կիմանա անցած դարձածը. և հիվանդ զավկին մահճին քով նստած մտիկ կընե օրվան համարատվությանն. ինքն ալ իր կողմե պատմելու համար իր շան տանջանքը, ամեն ավուր կյանքը։

Սենյակին երկու պատուհաններուն վարագույրները բացված են, դյուրացնելու համար անշուշտ լույսին մուտքը, զոր եկեղեցվույն պատերը կարգիլեն իրենց ներկին դեղին ցոլացումը խրկելով անոր տեղ։

Գզտիկ բարվոքում մը կա այսօր Նոեմիի վիճակին մեջ. մայրը հազար պաղատանոք համոզած է զինքը անկողինեն էլլել. և նորատի աղջիկը հիմա իր սովորական անկյունի բազմոցին վրա է, գլուխը ձգելով բարձերու կույտի մը վրա զոր մայրը հիվանդին նիհար մարմնույն, ոսկորներուն խնայելու համար դիզած է հատկապես։

Անկողինը անդին կը պահե անեղծ հիվանդին թողած գոգաձև կաղապարը և բարձը անոր հեք գլխուն դրոշմը. մահճակալին քովի սեղանին վրա գրված են դեղերու շիշեր, տուփեր իրենց կուրծքին վրա փոքրիկ նարնջագույն ծանուցումով, նարմիր վերքի մը պես, դեղարանին անունը ու դեղին առնվելուն եղանակը բացատրող, ասոնց հոտերը, քրտինքի, բուրում մը առկախ կը կենան փակ պատուհաններով բանտարկված օդին մեջ։

Ֆուլիկ հանըմ իր զավկին մոտ կը կենա, հետևելով անոր ամեն մեկ շարժումին, շունչին, գուշակելով ամեն կամքը, ու կեղծ զվարթության մը տակ պահելով իր կսկիծը. ձեռքը՝ նոեմիին ճակտին վրա կերթա միշտ տեսնելու համար ջերմին գալը որ այսօր կուշանա, կուշանա. հույսը կուգա իր մայրական ուղորմելի սիրտը բերկրությամբ լեցնելու. չի պիտի գա ջերմը այսօր և չի պիտի գա վաղը, մյուս օր. պիտի փրկվի զավակը. այս ամենը կուգան իր մտքին առջև իրականացած, զավակը կը տեսնե ոտքի ելած, հագված, շքված գեղեցիկ նազելաճեմ հասակովը գյուղին աղջիկներուն նախանձը շարժելով։

Դուռը կը զարնեն. Գալուստյան Գևորգն է որ իր խմբագրապետին աղջկան հիվանդտես կուգա և զվարթ բնավորության ուրախությամբը այս ցավերով լեցուն սենյակին սգոտությունը պահ մը կը փարատե։

— Տեսա՞ր մի, այսպես քաջ եղիր քիչ մը, ել նստե։

Հիվանդը կը ժպտի և այս ժպիտը իր այտերուն ոսկերոտիքը դուրս կը հանե։

Ֆուլիկ հանըմ լուր կը հարցնե։

— Ի՞նչ լուր. ազգային գործերե զզված ես անշուշտ. նվաստություն ու վատություն ամեն կողմ, ահա բոլոր մեր կյանքը. ուրախանալու խնդալու բան չի կա այն կողմը. ուրիշ տեղ նայինք։

Ով կը նայեր հիվանդին անոր նշաձև սիրուն աչքերը դիտելով որոնք հորը ինկած էին, բայց պահելով միշտ միամիտ նայվածքի մը քաղցրությունը, մութ փոսե մը բխող վճիտ ջուրի մը պայծառությանը պես դաստակներուն վրա երակները՝ բաց կապույտով նուրբ մորթին վրա կը գծագրեին իրենց առուները

զորա ճերմակ ֆամիզոլին թեզանիքեն կը նշմարեր. շրջագեստը կը փակչեր ծունկերուն տեղ տեղ մատնելով սրունքներուն նիհարությունը, և այս արգահատելի տեսարանը խանդաղատանքով կը լեցներ երիտասարդին սիրտը. ո՛վ էր ինքը. աղքատիկ տղա մը որուն մտծ տիկիններ ու օրիորդներ չէին հաճիր աչք դարձնել. և այս հիվանդագին աղջիկը իր հյուծումով, իր սպառող երիտասարդությամբը կը հուզեր իր բանաստեղծի հոդին. գութը՝ սիրո դուռը կը բանար. և պաշտել կուզեր այս ոսկերոտին որ աղջիկ մ'էր, այս տամուկ ճակատը որուն վրա թափող սև մազերը, նոճիներուն սաղարթներուն պես տրտում ու ոգավոր ստվեր մը կը ձգեին։ Խոսեցավ դուրսեն ներսեն. Մեծ կղզիի զվարճություններեն, Պյոյուք-Տերեի երաժշտություններեն, ամեն մարդ գյուղերը դացեր էին օդափոխության։

— Ի՜նչ երջանիկ են գյուղ գացողներն, մրմնջեց աղջիկը։

Դառնություն չի կար իր խոսքերուն մեջ, այլ պարզ համակերպություն մը ճակատագրին, անմեղ փափագ մը որուն անկարելի ըլլալուն կատարյալ գիտակցությունը ուներ. գյո՜ւղ երթալ ամառը, լուսինը երթալ բնակելու պես բան մը իրենց համար։

Գալուստյան կախորժեր հոս, այս հիվանդ հոտող սենյակին մեջ. տրտմությունը իր հրապոյրը ունի, ինչպես անդունդը իր ձգողությունը. ու չէր ուզեր մեկնիլ. ուրիշ ատեն ալ եկած էր անուշադիր այս աղջկան ուրկե աչքը չէր զատվեր և որ փոխադարձաբար զինքը կը դիտեր շարունակ։

Հետո մտածեց որ նեղություն չի պատճառե երկարելով այցելությունը. ոտքի ելավ. Ֆուլիկ հանըմ աղաչեց որ նստի. հիվանդին դարձավ անոր կամքը հարցնելու համար.

— Ձանձրություն չիտամ։

— Դուք չի ձանձրանաք, մեզի ուրախություն մ'է ձեր գալը. մարդ մարդասանք չունինք. հիվանդին երեսը պաղ է։

Մեղմ ձայնով մը կը խոսեր աղջիկը։

— Տեմիրճյաններու հարսնիքը ե՞րբ է, հարցուց հանկարծ։

— Ջեմ գիտեր. կարծեմ թե նոր բաներ կանցնին. Արմենակ գիշեր ցորեկ իրենց տունն է. կարելի է մտքերնին փոխեն ու Արմենակին տան աղջիկնին։

— Իրավունքն է խեղճին, Անգլիայեն մինչև հոս եկավ հատկապես։

Ֆուլիկ հանըմ այս ամուսնության խոսքը կը գոցեր.

— Ճա՜նըմ, ուրիշ խոսք չունի՞ք։

— Շատ ուսյալ է կըսեն այս երիտասարդին համար, մյուսյու Գալուստյան, հարցուց Նոեմի, իրա՞վ է։

— Հորը գործերը գրեթե փճացուցած է, այդ գիտեմ. բայց ուսմանը աստիճանեն տեղեկություն չունիմ. վարժարանին մեջ աննշան աշակերտ մ'էր։

— Ուրեմն ավելի իրավունք ունի էլպիսին հետ ամուսնանալու. աղքատության վախը կա, հետո քիչ մը կենալե ետքը,

— Ո՞ղ երջանիկ ըլլա։

Աննկե վերջը ուրիշ նյութերու վրա խոսեցան. իրիկվան դեմ Գասպար էֆենտին եկավ, դուռնեն իր զվարթ ձայնին արձագանքը մինչև վեր եկավ։

— Հայրս այս իրիկուն ուրախ է. տեսնենք ի՞նչ ունի. դուք մեզի այսօր առուվրնե ի վեր զվարթություն բերիք, անանկ չէ՞, մա՛յր։

— Անանկ է, աղջիկս. մյուսյու Գալուստյանը բարի սիրտ ունի, իր այցելությամբը երջանիկ եղանք այսօր։

Գասպար էֆենտի սենյակեն ներս կը մտներ խնդալով։

— Բարև, Գեորգ, ի՞նչպես ես, Նոեմի. Մարտիրոս էֆենտին կատզեր է. թատրոնի համար այդչափ ստակ վատնելեն վե՞րջը. կարծեմ թե երեք հարյուր ոսկվո չափ փոխ տված է տնօրենին, առ նվազն այդչափ մ'ալ ուրիշի մը տված։

<1891>

[Վեպը այստեղ ընդհատվում է]

ՆԱԽԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԵՐ

Ոգի՛ մ'ես դու, պատրանք, ցընորք կամ երազ,
Որ վրդովես հոգվույս հանգիստն հանապազ,
Որպես շիրմացն ի ծառաստան մի թռչուն,
Ննջեցելոց ընդմիջեմ միշտ Մահու քուն։—

Թե չեմ խնդրեր զրկանքներուս հատուցում,
Ակնարկս ալ զուր տեղը խնդրեմ մոռացում,
Ամեն եղերք՝ ինչպես նավուն թափառիկ,
Հիշեցընեմ միշտ կորուսյալն հայրենիք։

Որպես ոգի մ'նավորդին աչք կը փակե,
Ջամեն տեսած ափունս կարծե Իթակե,
Նույնպես և ես աչացս փայլող համեն լույս,
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհույս։—

Իրիկվան դեմ, ես ինքնիրմես խույս տալով
Վազեմ երբեմն հոն ուր յուր վերջն առնու ծով,
Անդ զարևմուտ դիտեմ հնոց մը հանգույն.
Որպես հարգանք թռչնոց դառնան յուրյանց բոյն։

Այնպես և շողք վերջալուսին անդ դառնան,
Երբ ըզմայլիմ անձայն ես հայս տեսարան,
Դու երևիս, և ես հարփվույն հետին լույս
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհույս։—

Փ գիշերին երբ մութն հաշխարհ թևածեն,
Երբ շունչ հովին, երբ երգ հովվին լռած է,
Ու երբ կուսին աղոթքներուն հեշտալուր
Ունկընն կախեն զմայլած ոգիք ծովուն լուռ,
Աչքըս տրտում արկեալ երկնից անշեջ ջահ՝
Դիտեմ զընթաց նորին հեթեր հեզասահ.
Դու գաս, ու ես ի լուսնեկին թալուկ լույս
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհույսս—

Կամ իմ երբեմն սենեկիս մեջ միայնակ
Մոռնալ ջանալ սև օրերու հիշատակ,
Ու զսպելով հիմար սրտիս բաբախյուն,
Աչքերըս գոց, թաղված ի խոր լռություն,
Լսեմ, հոգվույս որպես ողբույն արձագանք
Վառարանին խոնավ փայտից հեծեծանք.
Դու գաս կրկին, ու ի կարմիր բոցույն լույս՝
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհույսս—

Արշալույսին երբ փարատին թանձր ըստվերք,
Հառավոտյան զեփյուռ ցրվեն կուսին հերք,
Ու մյուեզզինն ի սրտառուչ երգին ձայն
Հաղոթս կոչե հավատացյալս ամենայն.
Ես ի տագնապ ցավոց գիշերը ողջույն
Այնքան հսկած, կանգնիմ հոտունս դողդոջուն՝
Դու գաս նորեն և ես հայգուն առջի լույս,
Հանկարծ կարծեմ տեսնել պատկեր սիրուհույսս—

Այսպես սահին պատանության խենդ ավուրք
Ու ցուրտ քարին ներքև մարին սիրո հուրք,
Իսկ դու ոհ չե՞ս գար հոն ուր մարդը անհագ
Կը տանի հետն հավատ հույս սեր և փափագ.
Ու երեք ոտք հող կը բավե այն փառաց
Ույց տիեզերքն անգամ երբեք չէ բաված.
Եկուր, եկուր ու այս աշացս հետին լույս,
Վերջին անգամ ցույց տուր պատկեր սիրուհույսս

<1883>

Ի ՍՐՏԱԿՏՈՒՐ ՄԱՀ ՄՏԵՐՄԻՍ

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Ընկերացանք իրեն ողբով, արցունքով,
Անոր ալ մինչ ընկերացանք շիրմին քով,
Ու մենք դարձանք միայնակ։
Իզուր կարծեմք ալ գեթ յուր սուգ պահել սև,
Ոչ արտասուք, ոչ ժըպիտ կա մշտատև,
Շա՜տ, թե պահեմք հիշատակ։

Մատյա՛ն սրգո, զոր մարդ կոչե Ապագա,
Որուն ամեն էջերն կարդալ կը բաղձա,
Ես քեզ վախեմ թղթատել.
Ինձ տրված չէր բարեգուշակ լինել բնավ
Եվ ոչ իսկ այժմ, ի սրտակցիս մահուն ցավ
Ուզղել գըլուխս անընտել։

«Ո՞վ կը կարծեր, ո՞վ Տեր». հարցո՞ւմ մը ահեղ,
Զոր շարունակ կարծեմք կրկնել վերջին հեղ,
Բայց ափսոս այս է բախտ մեր.
Որ Վաղն՝ անդեն աղետներով բեղմնավոր
Դարձյալ գոչել տա մեր սրտին սրգավոր,
«Ո՛վ Տեր, և զայս ո՞վ կարծեր»։

Ո՜հ, ո՞վ կարծեր, երբ մեք ըղշուրջ նույն հաստակ,
Նույն խանդն ավյուն ունեինք, նույն ըզփափագ

Ու նույն իղձեր սրտաբուխ,
Թ'էր Միսաքին արև այսքան կարճատև,
Թե հողն հանգչեր պիտի հասակ բարեձև,
Ու զիս թողուր չոր գըլուխ։

Ջըմեռն ամբողջ մահճին մեջն էր անցուցեր,
Բայց գարնան հետ դարձան կենաց նոր հույսեր
Յուր խուլ ցավին դեմ անբույժ,
Եվ երբ խաբված մեք սրտաթունդ ամենքնիս
Բըժըշկությյան հարցըներինք ավետիս,
Մեզ յուր մահվան տըվին գույժ։

Է՜հ, թող ծաղկունք ամեն գարնան դեռափթիթ
Որք զարդ դարձան չեռ նոր գոյված դամբանիդ
Թոռմին վաղիվ, ո՛ Միսաք,
Ու ետ դառնա, դառնա անդարձ ու անհետ
Այդ կարոտյալ գարունն քեզի մահավետ,
Որ դագաղիդ ետ պըսակ։

Ո՞վ չէր լըսած լեզուն աչքատ ու արի
Եվ ո՞վ ճանչցած չէր սիրտն ազնիվ ու բարի
Հայրենասեր Միսաքին,
Նա կը մեռնի ու բարեկամք կարոտավեն,
Ու մտերմաց արտոսր, գիտեք թե իրեն
Մարգարիտներ են անգին։

Դու գացեր ես արդեն ցրտին հողուն տակ.
Ես հոս չանամ առնուլ քեզմե օրինակ,
Քեզմե, ո՛ իմս հարազատ.
Եվ այն աղոթն զոր շիրմիդ վրա կընեմ ես,
Խնդրե հերկնից որ Հայ մայրերն, Քո մոր պես
Շատ Միսաքներ ծընին, շատ։

<1888>

Ողջամբ երթ նա՛վ որ ճեղքելով բուռն ալիս,
Սիրտըս կուրծքես հափշտակած կը տանիս,
Ու ծովուն վրա իբրև շարժուն մի հրաբուխ
Լանջեդ՝ փրփուր, կուրծքեդ ժայթքած հուր ու մուխ
Ահա ետին կոհակներուն լեռնադնիզ
Շատոնց ի վեր անհետացար աչքերես,
Մինչդեռ ակնարկս համառ կապուտն հայդ հեղուկ
Դեռ կուղեկցի քեզ ի ճամփադ հեղհեղուկ։

Իզուր կանգնած ժայռին վրրա բարձրադետ
Աղաչավոր կերկարեմ ձեռք ետևեդ,
Ես կամ իզուր դեռ կորոնեմ ուշադիր
Գեթ այն ակոսն զոր ծովուն վրա ձրգեցիր.
Կամ թե ըստվերն հրպարտ կայմիդ երկնասլաց
Ուր արծվո պես պարզես թևեր մեծաբաց,
Ու ես շունչըս զսպած իզուր ականջ տամ
Անվույդ լըսել ձայնը վերջին մի անդամ։

Դո՛ւն ալ ողջամբ գընա՛, անսիրտ մըտերիմ,
Մոռցի՛ր երդումդ, մոռցիր հավետ ըզսերն իմ,
Սեր... ի՞նչ քան զայս պարմանուհվույն է ոճիր,
Մոռցի՛ր, գոչեն, այս սերն հիմար շուտ մոռցիր,
Մոռնա ուրեմն թող սիրտդ անզոր ու փափուկ.

Մինչդեռ՝ սիրույդ հիշատակ սիրտն հիմ ծածուկ,
Սրբանըվեր է միշտ, իբրև խաղաղիկ
Դամբանի մ'վրա ծրլած դժբախտ մի ծաղիկ։
Ե՛րթ, ու անչինչ պահե Էակատդ, սիրտըդ սառ,
Այն սիրո թույնն պահե շրթանցդ անըպառ,
Եվ անըպառ հուրն աչերուդ խաբեբա
Հորում մոգիչ աստված մ'անշուշտ թաքուն կա,
Բայց... է՞ր տրտմիս... երբոր ցնծաս մեկնելուդ,
Իբր անձրևոտ եթերն ամռան այն կապույտ,
Երբ ծիրանի գոտին կապես մեկ կողմեն,
Ջըլլա մյուսեն նենգոտ աչերդ արտասվին։

Գընա՛, զի դու գետակն ես միշտ խուսափող,
Ես ամայի ափունք, անշարժ քար ու հող,
Քեզ սըլանալ պարտ է ու ինձ մընալ հոս,
Երթ, գեղուհիդ իմ, երթ ուրեմն ի Կիպրոս.
Այլ սիրուհվույս կարե՞մ մաղթել ես ինչ չար—
Է՜հ, թող հավետ շողա քու աստղըդ պայծառ,
Իմըս խավար պատեն ամպեր թող նըսեմ,
Դու երջանիկ լեր, թող որ ես արտասվեմ։

<1884>

Սրահ ընդարձակ, պատուհաններ փակ ու գոց,
Գետինը գորգ ու բազմոց մը ցած ու լայն,
Մերկ պատին վրա շրջանակով ոսկեզօծ՝
Արաբերեն խոսքերու շարք մը միայն։

Անկյունը՝ մարդ մը, աշխարհին պահող քեն,
Վայելելով իր նարկիլեն, և ախորժ
Ջգալով այս հեծկլտուքի նվագեն,
Եվ օդին մեջ ցընդող մուխեն թուլլ ու գորշ։

Եվ իսկույն քե՛զ կը հիշեմ, երբ անխըռով
Կունկընդրես միշտ հառաչանքիս և կարծես
Հաճույք կզգաս, այդ մարդուն պես, դիտելով
Մուխը սըրտիս կրակին զոր դուն կարծարծես։

<1899>

Լուանալու դեմ գիշեր մըն է լուռ ու տխուր.
Մութ մը վճիտ, լեցուն լույսե բիծերով,
Գիշեր հստակ, համեստ իղձի մը պես, ուր
Կը գծագրվի աշխարհ՝ տարտամ գիծերով։

Այս մութը չէ այրիին քողն, այլ աղվոր
Երևնալու համար հնարված թելը նուրբ։
Ընդհշմարել միայն տրվող շղարշը՝ որ
Կը ցուցընե դեմքերն ամեն գողտր ու սուրբ։

Ես ավելի կը սիրեմ մութն այս պայծառ
Անգազտնապահ ցորեկներու լույսերեն.
Ինչպես կընոջ համակրությունն անբարբառ
Բացե ի բաց խոստովանած իր սերեն։

<1899>

Փողոցին մեջ կերթար, կարծես կը սահեր,
Հուշիկ քայլով, դանդաղ, գրեթե շփացող,
Դեմքը կապե լաչակի մեջ կը պահեր,
Պատմուճան մը ուներ հովեն ծրփացող։

Աղվո՞ր, տգե՞ղ, ի՜նչ փույթ. բավեց որ մտքես
Մարմին մը տամ ես ուզածիս պես իրեն,
Վրդովիչ հով, պչրանք մը լուռ, վերջապե՜ս
Ամեն բաներն որոնց համար կը սիրեն։

Ու տարինե՞ր սրտիս խորը չանացի
Պահել զինքը մասունքի պես, և մե՛կուն
Չըսի անոր հրապոյրները կանացի
Որ գիշերներս ըրին խռոված և անքուն։

Ի՞նչպես եղավ, ո՛վ երազի ծնունդ կին,
Որ ըստուգիվ մարմին առած, խրոխտ ու վես,
Դեռ անցյալ օր թատրոնի մը հոծ մուտքին՝
Չը ճանչցողի մը պես անցար իմ քովես։

<1900>

Ակնախրտիղ անբծութիւն մը վերեն,
Երկնից վըճիտ բարձրութենեն կիջնար վար,
Վարանելով, օրորվելով, ծուլորեն,
Քալվածքին պես կնոջ մը մարմնեղ և ըստվար։

Ու փողոցին մայթին վրա կը փրռեր
Ճերմակութիւնն իրեն քընքուշ՝ ցնխին քով.
Ոտքերու տակ կը կոխկըռտվեր, կը լուեր,
Անտրտունջ միշտ ու քիչ մըն ալ հաճույքով։

Վերեն հիմա ձյունը առատ կը մաղվեր,
Հոժարակամ թողլով եթերը կապույտ.
Անձնամատույց կինն էր ան որ կը թաղվեր
Փոսի մը մեջ ցեխի, անհոգ ու անփույթ։

<1900>

Կը վառեր ան գիշեր ցորեկ, ամեն օր
Սենյակիդ մեջ։ Գետնին ջորգին վրբա գուն
Ընկողմանած էիր կես քուն, կէս արթուն,
Սրփոած շուրջդ մարմնիդ հրապուլրը բոլոր։

Ու դրռնակեն՝ լույսը կրակին կը փայլեր
Տաքցընելով մորթդ կատվի պես մըսկոտ
Եվ մութին հետ շինելով քստվերն այն ազոտ
Որ քու մըռայլ գեղեցկությանդ կը վայլեր։

Եվ տեսնելով մարմինդ լեցուն խոստումով,
Քեզ նայող բոցը այդ լուռ կըրակին
Թելքը գլխեն գացածի պես, ազվոր կին,
Կը ցատկրտեր հոս հոն հիմար ոստումով։

<1901>

Խոստովանե՛, Տիկին, հիմա որ անցան
Մեր մըրրկուտ սիրուն վըրդով օրերը,
Հիմա որ ա՛լ անոնց հուշքը ցիրուցան
Անհետացան տարիներուն խորերը։

Հիմա որ քեզ փոխանակ «կյա՛նքս» ըսելու,
«Տիկի՛ն», կըսեմ, որ կը խոսիմ հետդ ու առանց
Դողի կարող եմ ձայնդ անուշ լըսելու,
Հիմա որ վրադ ո՛չ կիրք կզգամ, ո՛չ նախանձ։

Հիմա որ ճիշտ երեսունդ անցուկ՝ կը կենաս,
Շըքեղ արձա՛ն, միշտ ըզմայլիչ դիծերով,
Պաշտողներու խումբ մը շուրջդ կունենաս,
Ամբարտավան կո՛ւռք, մարմարե ծիծերով։

Ըսե՛ ինծի, կարոտը հին սերերնուս
Կանցնի՞ երբեմն ներսեդ, արագ ու թեթև,
Գինովցընող պաշտումներեդ կը զարթնո՞ւս
Անցյալին մեջ զարթումով մը կարճատև։

Անցյալն անոնք են որ մենե կը փախչին,
Էջեր դրքին որ ինքնիրեն կը գոցվին,
Էջեր միշտ գողտրը, բաներ անուշ ու չնչին,
Ուրկե սիրտն ալ չարյունիր, բայց... կը խոցվի։

<1901>

Դուն լայն ճամփեդ գընա, ա՛ղվոր,
Ես կերթամ մութ արահետես,
Երջանիկ՝ այն համոզմամբ որ
Սրտով գոնե ինծի հետ ես։

Ու անխոով կայքես նըսեմ
Աչքըս հառած շավղիդ, ո՛վ իմ
Դալուկ լույսըս, պիտի սպասեմ
Քեզի որչափ որ ես ապրիմ։

Մեկ խնդիրք մը միայն. վերչին
Ժամուս կուզեմ որ մոտս ըլլաս,
Եվ երբ ամենքն ինև փախչին,
Դու գեթ անուշ դեմքըդ ցույց տաս։

Եվ ամեն փառքի փոխարեն,
Միայն պատկերըդ հստակ ու ջինջ
Հետըս տանիմ այս աշխարհեն
Ջը հիշելով ուրիշ ոչինչ։

<1901>

Դաշնակ մըն է հոգիս լեցուն
Նվագներով շատոնց լռած՝
Որ մատիդ ծայրը դպչելուն
Կը սարսռա, կերգե հանկարծ։

Երգեր մոռցուկ, երգերս իմ հին,
Խոր քուներնին թողածի պես,
Որ շրփելով գոց աչվրնին
Կանցնին կարգուկահա դեմես։

Նախ երգերը օրորոցիս
Որոնցմով մայրըս զիս մեծցուց,
Ու խոլ երգերն իմ փողոցիս
Ջոր տակավին գիտեմ բերնուդ։

Վերջը, սիրո երգերը որ
Կես մը իրավ, կես մը կատակ,
Նետեցի չորս դին ամեն օր,
Ծաղկանց նըման ոտքերուս տակ։

Վերջը... վե՞րջը բոլոր զվարթ
Այդ երգերուն,— դադարը մեծ,
Լրտուիյունը, զոր մինչև ցարդ
Քենե զատ ո՛չ ոք չէ վերդովեր։

<1901>

Անկյուն մ'ունիմ սրտիս մեջ ուր՝
Կառանձնանամ ատեն ատեն,
Վերհիշումներ երբոր տրխուր
Երկրեն զիս պահ մը կանջատեն։

Հոն՝ կը կենամ ես ծնրադիր
Ինչպես առաջքը խորանին,
Եվ ուր միայն կը ծագկի խ.
Կես սուգին մեջ՝ եղրևանին։

Հոդ շարված են իրարու մոտ
Մութ փոսերը իմ իղձերուս,
Հիշատակներ՝ հիմա աղոտ,
Անուններ՝ զոր չըսեր լեզուս։

Խոլ տենչանքներ, թռիչք անհուն
Ջոր ձեռքովըս տվի հողին,
Մեռելներ՝ որ ուրիշներուն
Պես հարության հույսը չունին։

<1903>

ՀՍԿՈՒՄ

Քակե՛ մազիդ խուրձը ոսկի օձերուդ
Որ պլլվին պարանոցիդ ձյունեղեն,
Ուսիդ, մեջքիդ փաթթվելով քեզ նեղեն
Միախդ վրա իբրև քողք մը բոցերուս

Մերկ, խրոխտ շքե՛ղ օթոցիդ վրա պառկի՛ դուն
Սև մետաքսե գուլպաներդդ պահելով,
Երազներ հյուսե՛ քնացիր դեմս անվրդով
Ես ըսպասեմ այսահարի պես արթուն։

Կեցի՛ր այդպես որ իմ հոգվույս մեջ տրպեմ
Ցայտքը, էջքը, թավալումը գիծերուդ,
Հիշեմ տեղվանքն հոս հոն ցրված բիծերուդ,
Ինքզինքըս անով խաբեմ խաբխըբեմ։

1908

Ժամանակը թևես բռնած կը տանի,
Եվ կուրորեն կը հետևիմ ես անոր,
Փրճացող հեք իղձերուս տեղ մեկ քանի,
Մեկ քանի հույս լույս դրնելով ամեն օր։

Մերթ կը քալեմ գնացքով համր ու տարտամ,
Հորձանքին հետ մերթ կը վազեմ շուտափույթ,
Կրնկրղմիմ և իսկույն նորեն կը ծրփամ,
Կը ծրփամ, վերն է միշտ երկինքը կապույտ։

Փախչի՞լդ ինե, իրավունքդ է, ո՛վ սերդ իմ,
Ինչպես բոլոր երազներուս ծերունի,
Թռչուններու խուճապ՝ որուն կը ժպտիմ,
Ժպիտով մը որ լացի շատ կը նմանի։

Եվ կամքով մը հզոր սիրուս հավասար,
Ես անտրտունջ կերթամ ճամփես զարտուղի,
Հիմա գոցված գիշերով թանձր ու բստվար,
Թանձր ու բստվար՝ վաղորդայնով մը հղիե

<1908>

Տանթելներուդ փրփուրովը կը մրտնիս
Երերալով՝ նավու մը պես ալեհերձ,
Աչքերուս մէջ ցանկութիւններ կը գրտնիս,
Ու կը հրճվիս կնկան մը պես այլամերձ։

Մատուցումի մը պես կարծես կը ծրփան
Կոհակավետ մարմնիդ բոլոր գիծերը,
Ծրփանքով մը օձագալար խոլական,
Ով կը զմայլին ապշած տղան ու ծերը։

Ամեն այրերն հորձանքիդ մէջ կը դառնան,
Ու կը փոխվին խելոքներն ալ խենթերուս,
Սուրբերն անգամ իսկույն վրադ աչք կը բառնան,
Հոսանքն ես դուն սարսուռներուս, տենդերուս։

Չսե՛ շիտակ, քե որ սիրեցիր քիչ մը զիս,
Ո՛վ հասուն կին, որ խոնչենքը մարմնիդ մէջ
Տարիներուն դեմը կելլես, կընդվզիս,
Զյունածաղի՞կ արդյոք կամ հո՞ւր ես անշէջ։

<1908>

ԵԿՈՒՐ

Երբոր օր մը ըզգաս պետքը
Ջըզված՝ շուրջիդ կյանքեն շինծոց
Երջանկության փախչող հետքը
Անցյալին մեջ փընտրելուդ

Որովհետև, ո՛վ դառնություն,
Ասկից վերչը աչքիդ՝ ծարիր
Պետք է դընես և անարյուն
Շրթունքներուդ՝ քիչ մը կարմիր։

Քալած ատենդ երբոր ճամփան,
Նայվածքդ ամենքը չը թովե,
Եվ զարմացած՝ չը փըսփըսան,
«Այս աղվոր կինն արդյոք ո՛վ է»։

Երբոր ներկան՝ ցուրտ ու ցամաք
Դառնա քեզի կամաց կամաց,
Կսկիծներով լեցվի համակ
Ապագադ ալ՝ մըռայլամած,

Եվ ուրանա իսկ քեզ, ո՛վ իմ
Կյա՛նքըս, աշխարհը համորեն,
Ես անցյալն եմ հավատարիմ,
Իմ գիրկիս մեջ եկո՛ւր նորեն։

<1908>

Արշակ Էֆեր
և տրամախոսություններ

ՋԻՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Անտարակույս ընթերցողներս պիտի զարմացնեմ, երբ ըսեմ՝ թե Չինաստանի մեջ հայկական գաղթականություն մը կա։ Հայ գաղթականություններ ի Հնդկաստան ծանոթ են, բայց չինաց մեջ առաջին անգամն է որ կը լսվի։

Այս զարմացումը ապշության պիտի փոխվի, եթե ավելցնեմ՝ թե Չինաստանի գաղթականությունը Թուրքիո հայոց չափ բազմաթիվ է, ու Պոլսո հայոց չափ բազմաթիվ մաս մըն ալ կը բնակի ի Փեքին՝ նույն իսկ Չինաստանի մայրաքաղաքին մեջ։

Ու երբ ըսեմ՝ թե այս հայ գաղթականության ներքին ու ազգային գործերը ճիշտ մեզի պես կամ՝ քիչ փոփոխությամբ՝ սահմանադրությամբ մը կը տնօրինեն, թե հոն ևս Պատրիարք մը և Ազգ. Վարչություն մը, Երեսփ. Ժողով մը ունինք, թե հայոց լեզուն կը խոսվի ու կը գրվի՝ թեև հայերը չինական անուններ կը կրեն, թե տեղական մամուլ ու մատենադրություն մը կա, թե այդ հայոց մեջ խելացի մարդիկ կը գտնվին ճիշտ այս տեղի նման, իրավ է որ բոլոր ըսելիքներս ավարտած պիտի ըլլամ, բայց ոչ ոք պիտի հավատա ինծի ու ամենքը պիտի ծիծաղին։ Հիմակվընե կերևակայեմ թերահավատ ընթերցող-

ներուս հուզմունքը.— Կարելի՞ բան է որ Չինաստանի մեջ հայեր ու բազմաթիվ հայեր, հայ գաղթականություն մը կը գտնվի ու տեղեկություն չունենանք, պիտի գոչեն ամեն կողմեն։—Ոչ, կատակ մըն է այս, պիտի պատասխանեն ուրիշ մը, բայց անախորժ կատակ մը, քանի որ հայկական գաղթականություն մը ծաղրի նյութ կընտրես։— Ինչ որ ալ ըլլա՝ ծիծաղելի է, պիտի ավելցնեն երրորդ մը։ Միծաղելի կամ ոչ։ Չինաստանի մեջ բազմաթիվ հայոց գաղթականությունը իրողություն մըն է. եթե կանոնավոր հարաբերությանց պակասությունը չէր ծանոթացուցած զանոնք մեզի, պատճառ մը չկա որ ասկե վերջն ալ հարաբերություն չունենանք անոնց հետ. Փեքինի մեջ ալ ազգային կյանքը Պոլսո կամ Թիֆլիսի հայոց կյանքեն ավելի վառ ու փայլուն է։

Այս նոր հայոց աշխարհը գտնելու համար պետք չեղավ ինձ Քոլոմպոսի նման հանճանոթն դիմել։

Իմ հայ չինացի բարեկամներես Մեծապատիվ Ջիու-չի, որ Փեքինի դիտուններու ժողովին անդամ է և տեղական ազգային գործերուն լիովին հմուտ, և որուն հետ թղթակցության մեջ եմ, իր նամակներով պետք եղած ծանոթությունները տվավ ինծի Չինաստանի հայոց կյանքին նկատմամբ, որով՝ անոնց անգոյության կասկածները բոլորովին կը ջրվին։

Ուստի որոշեցի հետզհետե հրատարակության հանձնել Մեծ Ջիու-չիի նամակները, որոնք կատարյալ լույս կը սփրեն և հետաքրքրական մանրամասնություններ կուտան այս անծանոթ գաղթականության վրա։

«Ի՞նչ կուզեք որ գրեմ ձեզի մեր հայոց վրա, միթե դուք ևս հայ չե՞ք. հայը՝ հոս ալ նույնն է ինչ որ է ամենուրեք, ձանձրացուցիչ հյուր մը, որ կը կարծե թե բոլոր աշխարհ ղինքը ասպրնչականելու համար ստեղծված է, քանի որ իրեն հատուկ տեղ մը չունի. որ նախադաս կը համարի ուրիշի հոգերով զբաղիլ, քանի որ իրեն մտածելու այլևս բան մը մնացած չէ. որ աշխարհի գործերը կը տնօրինե, քանի որ իրենները կարգա-

դրելու բախտը չունի. որ և ոչ մեկ տեղացի է ու ամեն տեղ կը գտնվի. որ ամեն լեզու կը խոսի, քանի որ իրենը հասկցող չկա. որ ուրիշներու հետ կը վաստկի, կը ժպտի, կը ցավակցի ու կարտասվէ, անշուշտ թողլով ուրիշներուն, որ անոնք ալ իր վրա արտասվեն. որ ազատութիւնը, հավասարութիւնը, եղբայրութիւնը կը սիրե, քանի որ աշխարհ կը պնդե թե անոնք լավ բաներ են. տկարին՝ բարեկամ, քանի որ չոր մաղթանքե զատ ուրիշ կերպով անոր օգնութեան չի կրնար հասնիլ. բռնավորին՝ թշնամի—զոր պառավ կնկան մը պես անիծելե ուրիշ բան չըներ. որ իր ապրած մթնոլորտին գիտե հարմարիլ, քանի որ մթնոլորտը իրեն չի հարմարիր. որ ամեն տպավորութիւն կընդունի և կանդրադարձնե. կատարյալ մեղրամոմե մարդ, որու վրա իրեն հետ կենակցող ամեն ազգ՝ իր կնիքը կը թողու մոլութեանց և առաքինութեանցը հետ, վերջապես մարդկային ազգին լքյալ, աներես ու անառակ մեկ զավակը, որ կը մաքառի բախտին և մարդոց դեմ որ զինքը ավելորդ արարած մը կը դավանին, որ իզուր կաշխատի անհետանալու երկրիս երեսեն կամ հանգստյան վայր մը գտնելու հոն, միշտ շփոթած, միշտ անհանգիստ, միշտ զվարթ ու կատարելապես անտարբեր ու փիլիսոփա էակ մը՝ վարդապետին քարոզին դեմը, ինչպես կանանց անհավատարմութեանը առջև։

Փեքինի գրական կյանքը կը բաժնվի երեք դաստիարակներու մեջ, որոնք ճառ խոսելով կիշխեն անհանդարտ ժողովուրդ մը վրա՝ որ անոնց կունկնդրե ինչպես ապշած եվրոպացի մը թորմոն քարոզիչի մը խրատներուն։

Դիվանագիտական օրենքներու համաձայն խմբագրված դաշնագրութիւն մը՝ հարակից ու փոխադարձ շահերու վրա հիմնված, ինչպես կըսեն քաղաքագետները, այս երեք մտայինքնակալներու կայսրութիւնները կը սահմանե. հաստատելով modus vivendi *մը, որ հարուցվելիք վեճ չի թողուր մեջտեղ և այս կերպով կը ջրե այն սխալ համոզումը՝ որով պատերազմը ընկերական կյանքի անհրաժեշտ պայմաններեն մին կը համարվի։*

Մեր վարժապետներեն անմիջապես վերջ և պարզ մահկանացուներե անմիջապես առաջ, կիները կուգան տիրապետա-

կան մրցումներու մեջ, նույնիսկ գրական ասպարեզին մեջ։

Մեր կիները՝ փոքրիկ ունին ոտք ու մեծ ունին գլուխ, նեղ ու բարակ աչք ու շատ խոստացող ակնարկ, անուշ բերան ու կծու լեզու, հեշտալուր ձայն ու խաբեբա խոսքեր, սահմանափակ միտք ու անսահման պահանջումներ։

Կանացի հրապուրանքներու անդիմադրելի զորությունը և այն քաղաքավարությունը, որ ի բնե ամեն չինահայու հատուկ է, բարեբախտաբար անտանելի չի դարձներ մեր գեղուհիներուն լուծը և հոժարակամ կը ճանչնանք գերիշխանություն մը, զոր մեր մեծազոր կայսրությունն իզուր կը պահանջե Թոնքենի համար։

Աղդեցությանց կարգով խոսելով՝ կիներեն վերջը կուգան մեր լրագիրները. հասարակաց կարծիքի այս ինքնակոչ ներկայացուցիչները՝ սովորական մահկանացուներեն սա տարբերությունն ունին որ նախ կը մկրտվին և հետո կը ծնին, կը մեծնան, կամուսնանան, հասարակաց շահերը պաշտպանելու կը ձեռնարկեն ու իրենցը պաշտպանելու հազիվ կը հաջողին ու բազմարդյուն այլ կարճատև կյանքե մը վերջը կը վախճանին՝ իրենց ծաղիկ հասակին մեջ անբուժելի հիվանդութենե մը (զոր բժիշկները լրագիրներու համար համաճարակ կը վճռեն) խոր սուգով և անմխիթար կսկիծով համակելով բոլոր ցրվիչները, գրաշարները, տպագրիչները, թղթավաճառները, այլ մանավանդ բաժանորդները, որոնք այս առթիվ կանխավճարի անպատեհություններն անգամ մը ևս կը հաստատեն։

Բայց ինչ որ ալ ըլլա սա ճշմարիտ է որ լրագրությունը հառաջդիմելու վրա է մեր մեջ. մասնավոր թղթակից ուղարկելու նախաձեռնությունը հզոր ապացույց մըն է այս մասին։

Ընդվայր պիտի առարկեն թե թղթակից-խմբագրի պաշտոնը կրկնապես նվիրական է, ըստ որում՝ հեռավորությունը աճկարելի դարձնելով լուրին ճշտությունն ստուգել, ընթերցողը՝ թղթակցին պարկեշտությունն ու ճշմարտախոսությունը ունի միայն գրավական, թե այդ ճանապարհորդ թղթակցին դժգույն երեսը ամոթի զգացումին դեմ քանիցս անթափանց մնացած է, որպես մեր Փեքինի նավարանին մեջ խարսխյալ զրահավորը հուսանք որ պիտի մնա ֆրանսական գնդակներու դեմ, թե ծան-

բաբեռնյալ՝ ոչ Պուալոյի փայտահատին պես փայտերով ու տարիներով միայն, այլ այնպիսի անցյալով որ պատժական դատարանին ուղին կը դյուրացնե, այդ թղթակցին երեսին սևը բնական թե վերջեն հավաքված մուրերեն ներկված լինելը խնդրո նյութ է, թե փորձառությանց տեր ըլլալե վերջը՝ պարագային հարմար սուտեր միևնույն հաջողությամբ կրնա գըրվիլ Փեքինեն կամ Վաղարշապատեն։

Այս ամենը պարապ գանգատներ են միայն. սուտը ճշմարտին աղն է՝ ըսած է մեծանուն փիլիսոփա մը, որուն անունը կորսնցուցած եմ. և հիրավի շարունակ ճշմարտախոս անձ մը անտանելի խոսակից մըն է. թղթակցին պարտականությանց առաջինն է իր ընթերցողները գոհ ընել և ես նախամեծար կը համարիմ ուրախառիթ սուտ մը ողբալի ճշմարտությենե մը։

Թե լրագիրներու թղթակիցները սուտեր կը շինեն, պատճառն այն է որ դառն փորձառությենե մը վերջը, որ քիչ մնաց խեղճերը առանց ընթերցողի պիտի թողուր, թղթակիցներն ալ պարտավորվեցան Բրուտոսի նման գոչել՝ «Ո՜վ ճշմարտություն, դու բառ մըն ես միայն»։

Մեր ազգային գործերը չեն տնօրինվիր կրոնական գլուխ համարվող բարձրաշնորհ մանուարենե մը և երկու ժողովներե, որոնց մին՝ ազգին կամքը հայտնելու և մյուսն ալ գործադրելու կոչված է։

Այս հոգևոր գլուխով, երեսփոխանական մարմինով ու վարչական ոտքով արարածը, որ չինահայերուս ապագան կը ճակատագրե, այն հանելուկին լուծումն է որ «Կայի չկամ—չկայի կամ» նախադասությամբ սկսելով, տասը տարի շարունակ բարևհիշատակ տպարանապետի մը տարեցույցին ամենեն հրապուրիչ մասը կը կազմեր։

Տարաբախտ տպագրիչը շատոնց զղջացած էր այս աստիճան հայտնի բան մը հանելուկի վերածելուն. իսկույր հանելուկը խիստ բացահայտ ակնարկությամբ կսկսեր «Կայի չկամ—չկայի կամ» պարբերությամբ։ Ամեն կողմեն կը հարցնեին իրեն թե հանելուկը կուտվե՞ր թե չէր ուտվեր, խանութի՞ մեջ թե ձեռքե կը ծախվեր, ու ասոր նման հազար մանրախուզությենե վերջը, «գտա՛, գտա՛, կաղա՛մբ է, կաղա՛մբ» կը գոչեր մին,

որ տարվան մեկ եղանակը կա, մյուսը չկա։ Ո՛չ, «Պատրիարքարանի պաշտոնյաներու բարեկրթությունն է որ կա ու չկա բան մըն է», կավելցներ ուրիշ մը։ «Չէ՛, չէ՛, կիներու հավատարմությունն է որ բնավ չկա» կը պոռար երրորդ մը, որ իր անձնական փորձառության վրա կը հիմներ իր պնդասխանը։ Իսկ ոչ ոք կը մտածեր ազգային վարչության վրա, որ ստվեր մըն էր. մինչդեռ համառ տպարանապետը, այս լուծումին գտնվելուն հուսահատ՝ իր գրավը շարունակ կավելցներ խաղամոլ անգլիացիի մը պես։

Առեղծված մեքենային գլխավոր մասը մեր Ներկայացուցիչներու ժողովն է, որուն վրա իրավամբ կը պարծինք. վասն զի մեր Ներկայացուցիչներու ժողովը՝ Քրիստոսեն ավելի բարեբախտ՝ իր աջակողմը և ձախակողմը ունի, ոչ սակայն դատապարտված ավազակներե կազմված։

Իսկ մեքենային ամբողջացուցիչ մասն է գործադիր իշխանությունը, որուն ատենապետը Վսեմաշուք Փի-Փի-Լյունկ, իր դիրքը զինու զորությամբ գրավելուն վրա կարծես պարծենալով ֆրանսացի զորապետին պես կը գոչե՝ «j'y suis, j'y reste!»։ Եվ արհամարհական ակնարկով նախ կը պատասխանե Ներկայացուցիչներու ժողովին ապստամբական շարժումներուն, որոնք անլուր աշխարհակալության մը պտուղը մեկ վայրկյանի մեջ իր ձեռքեն հափշտակելու կը հանգին։

Վասնզի ցավ է խոստովանիլ, որ պաշտոնեության դեմ հակառակությունն իբրև սահմանադրական հիվանդություն մեր ժողովներուն մեջ ալ մարտի կը մղե երեսփոխանները. բայց վարչությունը անհողդողդ իր աթոռին ետին՝ թշնամիին կրսպասե ու կը ծիծաղի այն հարցական ու հարցապնդական ռումբերուն վրա, զորս պարզամիտ ժողովականներ կարձակեն իբրև խորհրդարանական կռիվի մեջ նորագույն ու մահատու զենք մը։

Միայն թե նեղ պարագաներու մեջ անպայման զինադուլ մը, որուն փոքրագույնը վեց ամիսեն պակաս չէ, կը լռեցնե հարցանոթներու որոտումը, և հաշտության ծիածանը, թեև վազանցիկ, ժողովականներու ու պաշտոնյաներու գլուխը կը միացնե։

«Սիրով կը պատասխանեմ ձեր հարցումին, միայն թե տարի ու կես կը պահանջեմ»—խոսք մըն է, որ այս կիրքերը մեղմելով հանդերձ համբերությունը կյանք լինելը կուսուցանե թերահավատ երեսփոխաններու, որոնք հայտնի դժգոհությամբ կը լսեն Հիսուսի այս դառնահամ պատգամը։

Այս առթիվ կը հիշատակեմ Ներկայացուցիչներու Ժողովին մեջ անցյալները տեղի ունեցած միջադեպ մը, որ մեր խորհրդարանական սովորությանց վրա փոքրիկ գաղափար մը կրնա տալ ձեզի։ Փեքինի Ֆոնկ-Թու թաղին ներկայացուցիչը վարչության ատենապետին հաճելի ըլլալու անկեղծ դիտավորությամբ, ուզեց գովեստ մը ընել անոր վարչական տաղանդին վրա, դաստիարակության օրենքներու վիճաբանութենեն օգուտ քաղելով՝

— Կը հիանամ, տյա՛րք, ըսավ, թե ի՛նչպես վայելչաձև է Գործադիր իշխանության վսեմ ատենապետին գլխարկը և ի՛նչպես բարեձև է իր պեխերուն ոլորքը. այսպիսի շնորհալի գլխարկ մը և ոլորուն պեխ մը իր վարչական կարողություններուն անհերքելի ապացույցները չե՞ն միթե։

— Վեց ամիս կը պահանջեմ այս հարցումին պատասխանելու համար, գոչեց անզուսպ ատենապետը։

— Բայց, ներեցե՛ք, հարցում մը չէ որ...։

— Ինչ կուզե թող ըլլա, երեք ամիս կը պահանջեմ առնըվազն՝ բացատրություն մը տալու համար, կրկնեց Վարչության գլուխը անվրդով»։

<1884>

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՀԻՇԱՏԱԿՆԵՐՈՒՄ ՄԵՋ

Ֆալաքան.—Տիրացու Արթին ու ձայնավոր Գասպար.—Պեշիքթաշի Մաֆրումյան Վարժարանը.—Դերասաններ.

Ֆալաքան իմ էն հին դպրոցական հիշատակս է։

Հիմա մշուշի մեջ կերևա ինծի այս փայտն ու չվանե կազմըված գործիքը, որ տանզլուխ ու վիթխարի D մը կը հիշեցնե ֆրանսական այբուբենեն։

Այս D-ին այունակը փայտե է, տոկուն ու դիմացկուն փայտ, և պարույրը ռուսական կուպրով ծեփված բարակ չվանե մը կը բաղկանա։ Կուզեք տեսնել հիմա այդ անվնաս դարձած գործիքը։

Գավազանը՝ հունի ծառե ոստ մը դյուրաթեք ու անրեկանելի, ֆալաքային հետ contre-basse *ջութակի մը տպավորությունը թողած է հիս։ Առաջ այդ երաժշտությունը չէի սիրեր։*

Ջութակահարին դեմքը միտքս է, բռնավորի դալուկ ու մոդիգացած դեմք մը, կարճ հասակի մը ծայրը անցած խոշոր գանկ մը, ֆեսը ետին ծռած ու ցույց տալով ճերմակ գոտակը իր քըրտնածոր ու լայնածավալ ճակատին. ձյունապատ գագաթ մը չեռուցյալ սպահարանի մը ծայրը։

Ի՞նչպես կըլլար որ այս նիհար մարդը շարունակ կը քրտներ. ամառ ձմեռ կը գանգատեր եղանակեն, հեղձյալ, հազիվ

կարենալով շունչ առնել, հետզհետե մերկանալով վերարկուն, սեթրին ու բաճկոնն ու երևան հանելով շապիկին վրայեն տափատը բռնելու համար կուրծքին վրա խաչաձև բերված ասկրն, որ իր ուսերը կը կքեր ու խաչված մարդու մը կերպարանքը կուտար իրեն։

Այսպես կը շրջեր տիրացու Արթին ծաղկոցին մեջ, հոտավետ ծաղկոց մը, ուր հարյուր տղոց քաղվածքի մոլուռքը՝ մեղվաց երամի մը բզզյունին պես երթալով կը բարձրանար ու խլացուցիչ կը դառնար. մերթ ընդ մերթ կանգ առնելով, գավազանը ձեռքն ու պոռալով իր ճչող և սուր ձայնովը.

— Լռությո՜ւն...

Մյուսյու կուզեր որ կոչեինք զինքը. վարժապետ և պատվելի բառերը հետագեմ ու նախատական կը թվեին իրեն։ Ուսումնարանը ուր կառավարելու համար ունեցած բաղձանքը երբեք իրականացած չէր, Ձայնավոր Գասպար կառավարչի ու ձայնավոր դասատուի կրկին պաշտոններուն մեջ ամրացած կը մնար և այս փառասիրական պահանջումը դառնությամբ կը լեցներ իր փոքրիկ սիրտը։

Անվերջ բաղդատություն մ'էր իր նախակրթարանին և ուսումնասրահին մեջ որ միշտ մեզի նպաստավոր եզրակացություն մը կը վերջանար։

— Վերի աղմո՛ւկը նայեցեք, թող չեն տար որ աշխատիք, կըսեր մեզի։

Կամ թե,

— Թող մեյ մը իմ սրահս նային, մեյ մըն ալ սա վերի խռովուչը։

Եվ մենք կեղծավոր ու շողոքորթ, կը բոլորվեինք իր շուրջը, կարեկից իր ցավին ու անաչառ վկա իր գանգատին արդարության ըլլալուն։

— Այո՛, Մյուսյու։

Եվ սակայն վերի սրահը կորոտար, կը թնդար իր ցնծալից ու աղմկալից կյանքովը, կռիվներով, ծեծկվուքներով զորս կըզգայինք մեր գլխուն վրա ու ներքնապես կողբայինք մեզ ծաղկոցին գրասեղաններուն կապող տարիքներնուս վրա։

Կարծեմ թե կաթվածե մեռավ վերջ ի վերջո. իր մշտածոր

քրտինքին գաղտնիքը՝ սրտին մեջն էր. խեղճ ջութակահարը երբեք զուլ եղանակ մը չգտավ իր կազմվածքին հարմար, ու մեռավ։

•

Ուսումնասրահի կառավարիչը Զայնավոր Գասպար կունտ ու կլոր, ծիրանի այտերով, ձայնը մարած, պոռալե ու օղիեն, զվարթ ու կատակախոս մարդ մ'էր։

Հռչակավոր Արիստակեսի աշակերտներեն էր. աստիճան առած էր. քահանա պիտի ձեռնադրվեր եթե իր ամուրի ըլլալը արգելք չըլլար։

Կը հիշեմ որ այս սուրբ ակնկալությամբ զինված՝ տարիներով թափառեցավ աղջիկ փնտրելու համար։

Կիները կը հավնեին զինքը երբ դասին մեջ կայնած, Մնունդի ու Զատկի առավոտները ոսկեվառ շապիկովը կը դառնար եւտին վերնատունին, իբրև թե հիշեցնելու որ ինքն էր օրվան անհրաժեշտ մարդը։

Գասպար աղան քահանայության ու ամուսնության թնկնածու մնաց մինչև վերջը. վասնզի ոչ ոք երեցկին ըլլալ հանձն կառներ։

Երբ Խորեն սրբազան Մաքրուհյան վարժարանի տնօրենությունը թողուց, Գասպար աղան այլևս շատ չկրցավ կենալ։

Նորիկ հոգաբարձուները իր խեղդուկ ձայնին չէին հավնիր. մին, հովարտա ոսկերիչ մը, որ ինքն ալ ձայնավորության ընդունակություն ուներ, կիրակի առավոտ մը եկավ տնկվեցավ դասին մեջ, Գասպար աղային քովիկը, եթե ոչ բոլորովին կապտելու՝ գեթ մաս մը առնելու անոր իշխանությենեն։

Գասպար աղան չէր կրնար առանց ձայնավոր դասատուի մը ավանդական իրավունքները զոհելու՝ այս կացությունն ընդունիլ. հրաժարեցավ. բարով եկար ըսին իրեն ու կիսավարտ քահանան բոլորովին բացը մնաց։

Հետզհետե ուրիշ վարժարաններ մտավ եկեղեցական երաժշտության դասատուի պաշտոնով. բայց առջի զվարթ մարդը չէր ալ. չքավորությունը, իր ի դերև ելած կոչումը, Մաքրուհյան վարժարանի հիշատակը, ուր տարիներով սովորած ու արմատացած էր, վարժարան մը որ իր տունն էր գրեթե, մանա-

վանդ այն ոսկերչին ստվերը, այս ամենը միացան հեք ձայնավորին կյանքը դառնացնելու համար։ Ամեն կողմ ոսկերիչ մը կերազեր. իր քթին տակ, իր քովը, ստվերի մը պես անբաժան ուր որ ալ երթար, ազատ ու հզոր ձայնով ոսկերիչ մը՝ որուն քով իր մաշած ու հատած շունչն անլսելի կը մնար։

Անկից վերջը շրջուն տիրացու մը եղավ. տոն օրերը, գյուղի աղքատ եկեղեցիները կերթար, փոքրիկ վարձքի մը, մեճիտիեի մը փոխարեն, անեղծ պահելով իր ձայնավորի արժանապատվությունը։ Քալելով կերթար ամեն տեղ, լեռնե լեռ, շարժելով գունտ գլուխը, կարծես թոթափելու համար-զայն պաշարող մտմտուքները։

Վերջին անգամ մը Ալեմտաղի պատահեցա իրեն. հետիոտն եկած էր Իսկյուտարեն չորս ժամ շարունակ քալելով։ Հեռվեն՝ միշտ կարմիր մնացող այտերեն ճանչցա այդ ոգելից ըմպելիքներով ուռած ու թմրոկած դեմքը. ինքը չճանչցավ զիս. հետո իմ բարևելուս վրա, խորհեցավ, հիշեց. Մաքրուհյան վարժարանի աշակերտ մ'էի ու սիրելի մնացած հիշատակներ կարթընցնեի մտքին մեջ. իր փայլուն, իր հաջող ատենները գիտեի։

— Ո՞ւր է հիմա այն օրերդ, Գասպար աղա, ըսի իրեն։

Երաժիշտը սթափում ունեցավ իր հոգվույն մեջ։

Ի՞նչ, միթե ինքը չէ՞ր առջի ձայնավոր Գասպարը։

— «Արի» մը ըսեմ տե մտիկ ըրե։

Ափսո՜ս, իզիվ թե չըսեր. դասեն՝ ուր գացեր էինք ուննդրելու իրեն, ձայն մը չէր որոշ ու հասկնալի, այլ հնդամղձուկ հառաչանք մը, որ կելլեր ավերյալ խոռոչե մը ու փոքրիկ եկեղեցվույն բարեպաշտները կը զարմացներ։

— Ա՞յս է Պոլսեն եկող ձայնավորը։

Խեղճ մարդն ինքն ալ զգաց որ իր անկումն անհույս ու վերջնական էր։

Գոնե այն եկեղեցիներեն միույն մեջ տեղի ունենար այս պարտությունը, ուր այնքան ատեն լսված էր իր երդերուն ներդաշնակությունը. այն կամարներուն ներքև, զորս իր որոտացող ձայնովը թնդացուցած էր ատեն մը· ո՛չ, այլ այս լերան գլուխը, այս փոքրիկ ու մթին մատուռին մեջ, բանե չհասկցող

այս գյուղացիներուն առջև, որոնք կը ծիծաղեին իր վրա. ի՞նչ վերջավորություն։

Այս մեծ զորապետը, հռչակավոր ճակատամարտի մը մեջ զարնվելու տեղ անծանոթ ավանի մը, աննշան կռվո մը մեջ կանհետանար։

Եվ ես որ զինքն ամենուն գոված էի, իրմե առաջ խույս կուտայի իր պարտության մասնակից չըլլալու զգուշությամբ։ Հուսկ ուրեմն փոքրիկ օգնությունով մը ջանացի սփոփել զինքը, հիշեցնելով այն մանկության օրերս, հորում ամեն տարի գիրք կարդալու, Դանիելի կամ Եզեկիելի մեկ գիրքը, իր շնորհիվ եկեղեցվույն մեջ ձեռք բերած համբավես երախտապարտ, հաջորդ օրը կանուխ կը փութայի հորմես պահանջած նվերս գաղտնի իր ձեռքը դնելու։

Մեկ մ՛ալ չտեսա զինքը. բայց իմացա որ Ազգը իր Հիվանդանոցին մեջ կը պատսպարե հիմա այս դժբախտը։

***

Վերջին հիշատակ մը ունիմ Պեշիքթաշի վարժարանեն, թատերական ներկայացմանց ի պատվի եղած միջոցն էր. Պոլիս՝ իր Կետիկ Փաշան ուներ, Օրթագյուղ՝ Բարեսիրաց թատրոնը. ուրիշ գյուղեր՝ մասնավոր սրահներու մեջ կուտային թատերական ներկայացումներ։ Պեշիքթաշ՝ Մաքրուհյան վարժարանի սրահին մեջ առաջին ներկայացումը տվավ։

Ի՞նչ ուրախություն մեզի համար. ութ օր առաջ դասերը ստիպյալ դադրեցան. մեր նախակրթարանը՝ ուր թատերաբեմը պիտի շինվեր, հարկ եղավ թողուլ, լուսյություն պատվիրող չըմնաց. ամենքը՝ տնօրենեն սկսյալ մինչև դասատուները, ամենքը ճարտարապետ ու բանվոր դարձած էին. տնտեսը կը մնար միայն ուսուցչական մարմնույն իբրև վերջին հիշատակ մը. մենք՝ գամերը, գործիքները ու տախտակները կը փոխադրեինք, եռանդուն ու աշխատասեր, գրքերը մեկդի նետած ու ազատ շունչ առնելով։

Տասներհինգ օր առաջ սկսած էին փորձերը չորրորդ կարգի

դասարանին մէջ ուր արգիլեալ էր մեզ մտնել և որուն դրան քովէն ամէն անցնիլ դառնալնուս, կը լսեինք բարձրագոյն կարգի աշակերտաց ձայները իրենց դերը արտասանելով։

Օր մը Արշակ Բ.ն էր որ կը գոչեր բանտին մէջ խելահեղ ու սարսափած ուրվականներու տեսքեն.

— Ահա... Պապ, բայց այս Պապ չէ...

— Կարտինալ է, կը պատասխաներ անդիէն պատրաստախոս տղա մը ու խնդալով կը մարեին։

Երբեմն Դրաստամատն էր հաղթական զորավարի ցնծութեամբ լցված, երբեմն Ալանոզան՝ նույնպես բարձրագոյն կարգի աշակերտներեն մին սև ու կանաչ դեմքով տղա մը, որուն համար այս հակառակորդի մասը հանձնված էր իրեն, գոչելով շղթայակապ Արշակի երեսին ու դասարանին խարխուլ պատերը ցույց տալով անոր.

— Է՛հ, քաղ առյուծն Արշակ կոտրե գյուր շղթայս,
Ջորդիդ նայե, այդ քանձր պատերը կը տեսնե՞ս։

Ներկայացումը տեղի ունեցավ շքեղ ու հանդիսավոր. աշակերտաց ծնողք, ազգականք թատերասրահի փոխված նախակրթարանը լեցուցին. մեր նորատունկ ծաղկոցին մեջ հինավուրց բույսերեն ու ծառերեն կոխելու տեղ չմնաց։ Թաղական խորհրդո ատենապետը, հոդաբարձուները, մեկ կարգի վրա շարված, ճիշտ իմ գրասեղանիս տեղը, ու անոնց կոնակը շարշրի էսնաֆները ու ավելի բարձր, օթյակի ձևով շամի տախտակե շինված փոքրիկ տուփերու մեջ, Պեշլիքթաշի գեղուհիները. այս բոլորը մեր նախակրթարանին մեջ զետեղված, սեղմված, լուռ ու խելոք, տարիքնին առած աշակերտներու կը նմանեին, և որոնց վրա կարծես մեր մյուսյուին ոգին՝ իր ճերմակ ու մաքուր թևեն դրած՝ աներևույթ կը շրջեր։

Մեր մանկական սրահը մեկ գիշերվան մեջ քառասուն տարի ծերացած էր։

Մեծ հաջողություն մը եղավ այս ներկայացումը. կանայք լացին ու էրիկ մարդիկ ապշեցան։ Երբոր Արշակ Բ. գետին փռվեցավ իր ցնորքին մեջ, հանդիսականներեն շատեր կարծեցին որ օգնության փութալու էր. այնքան պարզամիտ էին այն

ատենվան պեշիքթաշցիները։ Օրթագյուղեն եկած հանդիսական մը միայն անոնց փեշեն քաշեց ու արգիլեց։

Դերասանները այդ գիշերուն վերջը մեյ մըն ալ իրենց իշխանական կյանքին երեսը չտեսան։ Շապուհ՝ ոսկերչի մը քով մտավ ուր այդ ներկայացման հիշատակներովը վարպետը կը նեղացներ մինչև իրիկուն, քուրային քով քթին տակեն մորթտալով.

— Գոհություն տամք աստվածոց, իշխա՛նք իմ քաջ,
Մնծ է օրվանս այս հաղթություն և առատ
Հունձք զոր այսօր մեր սուսերներ հնձեցին։

Ու հալոցը խառնելու համար բռնած ունելին մեջքը կը տաներ իբրև թե սուր մ'ըլլար այդ երկաթի կտորը. վարպետը մեխախոսությունը կընդմիջեր.

— Ծո՛, գործդ նայե, էշե՛կ, կրակը մարեր է։

Արյաց արքան հիմա պարկեշտ fույումնի մ'է շարշրին կամարներուն տակ բացված ծակերեն միույն մեջ պաղտաշ նստած, խեցիի մը մեջ պահվտած թուլամորթի մը նման, ադամանդյա զարդերը ցույց տալով, խանութին առջևի ապակյա տուփեն, ու հին դերասանի ձայնովն ու շարժվածքովն անցորդները կանչելով։

Ով երբ լեցուն շահով, աղեկ հունձքով մը կանցնի օրը, այս դրամական հաղթությունը՝ իրական պատերազմե մը ոչ նվազ դժնդակ և արդյունավոր, կուրախացնե զինքը, միտքը կը բերե իր դպրոցական հիշատակները. անզգալապես իր անձնն մեջքին կերթա ձեռքն անգո սուրի մը դաստակը փնտրելու համար ու ցած ձայնով, կամացուկ մը, հին դպրոցականի մը ու խույումնիի մը խառնուրդով շինված փոխաբերություն մը ընելով կը կրկնե դեռ.

— Ով առատ հունձք զոր այսօր մեր սուսերներ հնձեցին։

Մյուսները Շապուհեն ավելի բախտավոր չեղան. Ալանոզան ու Դրաստամատ՝ այս երկու անհաշտ թշնամիներն իրենց գրկած ասպարեզովը միացան. պաստայի վաճառականներու քով մտան երկուքն ալ։ Առաջինը իր դժգույն կանանչ դեմքովը կրկնատոմարի հաստ ու ահագին տետրակներու վրա հակյալ

մնաց ու ալ ավելի կանանչեցավ։ Մյուսը հրապուրիչ երիտասարդ, Քալփաճիններու գլուխը խանութպան դարձավ. դեռ անցյալ օր այդտեղ պատահեցա իրենս։ Այո՛, նույն Դրաստամատն էր զոր տղա հասակես անջինջ կերպով պատկերացուցած էի մտքիս մեջ Արշակ Բ.ի ներկայացումեն ի վեր։

Այս անգամ, խանութին լայնքին ղրված նեղ ու երկայն սեղանին վրա կերպասներու ծրարները բանալով մեկիկ մեկիկ շուկային կես ստվերին մեջ ցույց տալով անոնց գեղեցիկ ու փայլուն գույները, Դրաստամատ կը պոռար.

— Նե զարիֆ պասմալարըմըզ վար...

<1889>

***

Օրթագյուղի վարժարանը.—Թարգմանիչներ.—Սեթյան.—Պերպերյան Ավետիս Պատվելի.—Իմ դասընկերներս.—Գաբրիել Ներշապուհ։

Այս վարժարանը կը կաղար, իր հին ու երերուն շենքովը, դրամական կացութիյամբն և ընդհանուր կառավարչին ձախ ոտքովը։

Հեք մարդուն այս ձախորդութիյունը պատերազմի մեջ ստացված չէր, թեև այն անվերջանալի կռվույն մեջ, զոր քառորդ դարն ի վեր կը մղեր ազգին անզուսպ ու անուղղա տղոց դեմ, հաղթյալը միշտ ինքն ըլլար։ Անոտի պարծենկոտութիյամբ չէր ուզեր իր պարտութիյունը ծածկել. գիտեր որ անկարող էր հաջողութիյամբ մաքառելու իր հսկողութիյան հանձնված մանուկներուն դեմ և բացե ի բաց կը խոստովաներ զայն, հետզհետե զինադադար և հաշտութիյուն առաջարկելով։

Իր պայմանները՝ ամեն հաղթյալ մարդու պայմաններու պես մեղմ ու չափավոր էին։

Ընդարձակ սրահին երկու եզերքին երկայնութիյամբ շարված գրասեղաններուն մեջ պաշարված, կենտրոնացած, անհավասար կարկինի մը պես դառնալով իր ուղիղ ոտքին վրա, այս

հավիտենական զինվորը իրավախոհություն կառաջարկեր ողորմ ձայնով մը որ ամենուս սիրտը կը շարժեր։

— Հատե՛ սուս...

Հատե՛ սուս. կընդունինք քառորդ ժամվան մը համար լռեն կենալու պայմանավ ամեն ինչ ընելու այս արտոնությունը, բայց քիչ քիչ մեր անհանգիստ շարժումներն այս դաշինքը կը խզեն. առանց շարժման կյանք չըլլար վարժարանի մեջ, և մենք այս ֆիզիքական օրենքներուն ենթարկված, մեր անկենդան չըլլալը հաստատելու ստիպյալ, համբերությունիս սպառած ու մոռնալով ամեն ուխտ և դաշինք, ձայներնիս կը հանեինք անտանելի ժխորով մը լեցնելու համար Թարգմանչաց վարժարանը։

Դպրոցին քով Բարեսիրաց թատրոնը կսպասեր հանդարտ ու կեղծավոր երևույթով ու այս մերձավորությենեն գրգռյալ ամեն ոք թատերգություն կը պատրաստեր հոս. Հայր Արսեն՝[1] Ռասինի ողբերգությունը կը թարգմաներ, Թերզյան՝[2] Հայր Արսենի Իփիգենին, Ղլյան՝[3] Թերզյանի Սանդուխտը, ու մենք ամենքս՝ Միշել Լուիի հռչակավոր Théâtres contemporainsի հավաքածոները։ Ճշմարիտ թարգմանչաց վարժարան։

Թատրոն ու թարգմանիչ զիրար գտած էին։

Այս վարժարանին մեջ ճանչցա սև ու մութ երիտասարդ մը, Հովհաննես Սեթյան[4], որ վերջեն բանաստեղծ մը պիտի ըլլար, բոլորովին անակնկալ բանաստեղծ մը, որ այս ընդհանուր արշավին մեջ իր երկրորդական դասատուի դիրքը պահելու պարտավոր, հաստ ու ծանրաշարժ հատորներով բեռնավորված, որոնց բառարաններ ըլլալը գիտեինք, կը վազեր ծակե ծակ մտնել, մեզմե գաղտնի, բոլորովին գաղտնի, բառ գոց ընելու համար մինչև վերջը, և իր նպատակը ծածուկ պահելու չանքին մեջ շփոթած, չկարենալով պարտկել փեշին տակ ահագին ու մեծածավալ գիրքերը, հապճեպ ու փութկան՝ կանցներ մեր առջևեն, ու մենք այս խույս տվող դասատուին սև զգեստներուն, նիհար սրունքներուն ու գորշ գույնին նայելով ետևեն, երկու ոտքերուն վրա կանգնած վիթխարի ու փախստական մուկի մը կը նմանցնեինք զինքը։

❋❋❋

Այն առեն կրոնագիտության դասը կը սիրեինք. դալուկ ու դողդոջուն ծերունի մը, գիտուն ու հոյակապ մարդ մը կավանգեր մեր կրոնքի դասերը։

Իր նիհար ու ծառի կեղևի մը նման ճմրթկած դեմքը՝ դեղին ու ճերմակ էր գրեթե երակաց անարյունութենեն, ու քիթը խոշոր, համառ ու հաստատամիտ մարդու քիթ մը, մշտնջենական հարբուխի մը դատապարտված ըլլալու էր զոր մեծածավալ կարմիր թաշկինակով մինչև վերջը կը սրբեր։

Այս ալևոր կրոնագետը, Պերպերյան Ավետիս[6] պատվելին, կը սիրեինք. կը սիրեինք իր տարիքին հակառակ անհոգ եռանդին ու իր ճշմարիտ կրոնասիրությանը համար, որ ամեն բանե առաջ ազգասիրության վրա կը հենուր միշտ։

Կենդանի, աշխույժ ու պատերազմիկ դասախոսություն մըն էր, ուր մեր կրոնքին նրբություններեն առաջ, հոովմեականաց ու բողոքականաց դեմ հաչողությամբ վիճաբանելու հղանակները կուսանեինք։

Ո՛ ամեն անգամ սորված դասերնուս, մեր վարժապետին գիտությանը կռինած, վիճաբանելու անհամբեր, փողոցի փողոց, լեռնե լեռ կը շրջեինք բողոքական մը գտնելու և Տիրոջ խոսքին մեր դավանությանը համաձայն ըլլալը հաստատելու համար. ոչ մեկ ճշմարիտ բողոքական կելլեր մեր դեմ. իզուր աջ ու ձախ հանդիպած բոլոր կեղծավոր բարեպաշտները, «ասիրելիս, բարեկամ» բառերով սկսող շրջուն գրավաճառները վար կը գնեինք ճամփուն վրա՝ բռնի Աստվածաշունչ գնելու պատրվակավ, կեցնելով զինքը, ու սրբոց բարեխոսության վրա իր կարծիքը հարցնելով, մեր պատրաստ ապացույցներն ու փաստերը գլխուն նետելու և զինքն ամոթահար ընելու համար։ Սովորաբար կա՛մ անանկացած վաճառական մը կըլլար, կա՛մ անգործ դասատու մը որ հոժարությամբ կընդուներ մեր տեսությունը և մեր սիրեցյալ եկեղեցվույն ուղղությունը, զոր չքավորությանն համար միայն մոռցած էր։

Այսպես լուրջ հակառակորդ մը պակսեցավ մեզի ամեն առեն, ու այն բազմաթիվ վկայությունները որով մեր բոլոր

արարողությունները, ծեսերը կը հաստատեինք, հետզհետե մոռցանք։ Բայց չեմ մոռնար երբեք իմ ծերունի դասատուիս պատկառելի դեմքը. իր մահվընեն դեռ շաբաթ մը առաջ եկավ ժամանակին, ճշտապահ իր դասախոսությանը մեջ, սովորականեն քիչ մը ավելի տկար, պարզելով ահագի՛ն կարմիր թաշկինակն ու վերջին օծման մասին մեր եկեղեցվո սկզբունքները. զինքն անբաժան կը տեսնեմ միշտ այդ թաշկինակեն. վառ ու հավատարիմ գույնովը իր դրոշակն էր գրեթե ու կրնանք ըսել որ այդ դրոշակին մեջ փաթթված մեռավ Ավետիս Պերպերյան։

***

Թարգմանչաց վարժարանի դասընկերներս ծանոթ անձեր են բոլորը. Տիգրան Արփիարյան[6] հրապարակագիր մըն է. Շիտանյան, Բապուճյան՝ ուսուցիչ են. Ատրունի[7] իր դպրոցին հավատարիմ թարգմանիչ մըն է միշտ, բայց ոչ սուրբ գրոց. Սալովմիթ փաստաբան մ'է։

Սալովմիթ փաստաբա՞ն։

Ինչո՞ւ Սալովմիթ կը կոչեինք զինքը. ի՞նչ ըրած էր այս անունին արժանանալու համար. շատ կը սիրե՞ր արդյոք Ռասինի Գոթողիան. չեմ գիտեր, անտարբեր, լուրջ, պարզ, ուսյալ երիտասարդ մը որուն երկար և ուղիղ մատները բոլորն ալ բացված տարօրինակ հողմահարի մը պես խոսակցության ջերմությանը մեջ հետզհետե դիմացինին աչքը կը մտնեին. իզուր ետ կեցնել ուզած էին զինքը այս վատ սովորութենեն. վերջապես որոշեց ինք գրպաններուն մեջ պահել այդ անզուսպ թևվերը։

Սալովմիթ իր դասը կարտասաներ ուղիղ և անշարժ կանգնած ուսուցչին դեմը, ոտքը ոտքին քով, թևերը թաղված անհատակ գրպաններու մեջ, անհանգիստ, քրտնելով, տասնապետին դեմ կանգնած կարգապահ զինվորի մը ձևով, ու քիչ մը ետքը դասին ոգևորության մեջ մոռնալով բոլորովին իր կոկիկ ու քաղաքավար կեցվածքը, քայլ մը կառներ հառաջ ու ձեռ-

քերն արձակած ակամա հանդիմանությամբ մը կերկնցներ դասատուին երեսն ի վեր։

Սալովմիթ գեղեցիկ սեռը կը սիրեր. տարիներով դարձավ, շրջեցավ, հատնելով մաշելով գեղեցիկ ուսերու և սպիտակ մարմիններու շուրջը, իգական ընկերուբյուններու, կանացի ժողովներու ծառայելով, հոտվըտալով փոքրիկ կոշիկներ, հեշտաբույր ձեռնոցներ ու գեղեցիկ հովանոցներ. բայց անհամաձայնություն մը կար իր անձնվեր ու համոզելու հետամուտ ոգվույն ու անհանդարտ ձեռքերուն մեջ, և այս ապարդյուն սպառումներով՝ որ իր նախապաշարումները փարատեց, այս ամուլ մնացող համոզման ջանքերով, Սալովմիթեն փաստաբան մը միայն մնաց։

Եղեռնադատ Ատենին առջև, խոժոռադեմ դատավորներուն հանդեպ կեցած, մարդ մը՝ անչափահասի մը առևանգության առթիվ կը պատասխանե նախագահին, կը խոսի անշարժ ու անտարբեր, կրավորական ու անզգա գործիքի դիրքով, անսեթևեթ տրամաբանությամբ։

Իր մեղմ ձայնը լսողները, իր ամփոփ կեցվածքը դիտողները ամբաստանյալը կը կարծեն զինքը. ես հետուեն, ճարտար հանցավոր մը կենթադրեմ իր տված պատասխաններեն. հետաքրքրություն կը շարժի։

— Աղջիկը չափահաս էր ու իր կամքովը եկավ, կըսեր մարդը նախագահին։

— Տեսնեմ սա առևանգիչին դեմքը, կըսեի մտքովս։

Վայրկյան մը մարդը ընդհանուր դատախազին ընդմիջումեն զայրացավ, թևերը զոր մինչև այն ատեն թույլ կերպով քովերեն թողած էր, երկու թիերու պես վեր բարձրացուց իր բողոքը շեշտելու համար, և իր այդ բացված ու սպառնացող մատներեն անմիջապես Սալովմիթը ճանչցա։

Սալովմիթ առևանգի՞չ. ի՞նչ պիտի ըսեր արդյոք Դպրոցասեր Տիկնանց Ընկերուբյունը։ Բարեբախտաբար իմ ապշուբյունս երկար չտևեց։

Սալովմիթ ձեռքերը վեր առած էր ու կերերցներ ազատ, համարձակ, ուզածին պես, իր ճառին բոլոր պահանջումներուն

համեմատ. այս անգամ իր ահագին թաթը մոտեցնելով քովիկը նստած գեղանի ու մսոտ կնկան մը զոր ոչ ոք տեսած էր մինչև այն ատեն, ցույց տալով զայն դատավորներուն, սև մանթլեթ մը ու կարմիր զարդերով շոկված fաբոդ գլխարկի մը տակ հուզված ու կարմրած, գրեթե պարծենալով այսքան բազմության ի տես ելլելուն, փաստաբանն այս հանգույցը կը լուծեր մեկ բառով.

— Ահավասիկ Բերուզ հանըմին անմեղությունը հաստատեցի:

Էհ՛ֆ...

***

Գաբրիել Ներշապուհ[8] միչին եզրը կը ներկայացներ ազգին երեք չափագետներուն մեջ:

Թվաբանությունը՝ վտիտ ու թափանցիկ Մյուսյու Փասքալով մարմնացած, հետզհետե կստվարանար, վայելուր ձև մը կառներ Ներշապուհի մոտեցած ատեն, բոլորովին գունտ ու կլոր բան մը դառնալով Սիմոն Միքայելյանի[9] քով ուր կը վերջանար:

Փասքալ իր նիհար մարդու զվարճախոսություններն ուներ. Սիմոն Միքայելյան ծանրաշարժ ու գիրուկ լրջություն մը և Ներշապուհ չեզոք երկիր մը կըլլար երկու հակառակորդներուն մեջտեղ, երբամիտ ու պատկառելի դասախոս մը ըլլալով:

Թուխ ու գեղեցիկ դեմքեն, ձախ հոնքին վրա ցցված ուռ մը աչքի կը զարներ, աշակերտներուն դիտողությունը կը հրավիրեր, առանց նվազեցնելու իր ազդած համակրելի տպավորությունը. ընդհակառակն ուսուցիչի հատուկ դրոշմը կուտար այս ցից ու կլոր մսակույտը, որ դասախոսին ճակտեն կը մեկներ իբրև անոր խելքին մեկ մասն անհամբեր դուրս նետվելու, դիմացինին հասնելու և հաղորդվելու համար:

Հոնքին այս առանցության (relief) տակ աչքը կը թաղվեր, կը խորասուզվեր, բայց ցույց տալով այդ մութեն իր զորեղ շառավիղները:

Ես իր պեխերը կը սիրեի ու իր պապա ձևերը. պեխերը թավ,

լայն, ոլորուն, զորապետի մը վայելուչ, որ իր դեմքին դասախոսներու սովորական կեղծավոր դեմքեն բոլորովին տարբեր, համարձակ երևույթ մը կընծայեին։

Թվաբանական անվերջանալի խնդրոց մեջեն որով կոզղեր զմեզ, դեռ կը դիտեմ իր հեզ ու համբերող դեմքը, մարտիրոսի դեմք մը։

Հռովմեականաց վարժարանին մեջ ուր կը դասախոսեր առաջին լուսավորչականն ըլլալով, տնօրենին՝ տոքթոր Շիշմանյանի ազատասեր ոգվույն ու Անդիներուն[10] ակամա հայասիրությանը կը պարտեր այս պաշտոնը։

Իր աշակերտները որոնք կը սիրեին իր շուրջը բոլորվիլ, ցիրուցան են հիմա. ոմանք, թերևս լավագույնները, մեկնեցան ժամանակեն առաջ. ու մենք անոնց թողած պարապը չկրնալով լնուլ, իզուր ջանալով սեղմել մեր բաց մնացող դիծերը, մենք ալ կը հառաջանանք մեր կարգին սպասելով։

<1889>

***

Ինչո՞ւ կը սիրեմ Հռովմեական Հայոց եկեղեցին. ի՞նչ հափաշարում է աս որ չեմ կրնար վրայես թողվել։

Ձիս հրապուրողը՝ օտարության թևեթև հո՞վն է որ կը թռչտի անոր կամարներուն տակ. բարեպաշտներուն ամփոփ ու քաղաքավար կեցվա՞ծքն է որ զիս կը գրավե։

Այս մարդիկ ու այս կանայք որ հատուկ ձևեր, խոնարհելու, ծնրադրելու մասնավոր կանոններ, պայմանադրական ամբողջ կարգ ու սարք մը ունենալ կը թվին, ո՞րքան կը տարբերին մերիններեն։

Մեր բուռն ու հանդուրժ աղոթասիրությունը չի կա հոն. առջի վայրկյանեն կզգաս անմիջապես որ մեր եկեղեցին չէ ան, պանդուխտին գետնամած դեմքը, աղային անշնորհ մոլտուքը, ողբի, կոծի, տրտունջի այնքան նմանող ձայները, որ մեր եկեղեցվո պատերուն կը զարնվին հաճախ, չեն լսվիր հոն։

Գոհ ու երջանիկ մարդոց տեղն է, Ավետյաց երկիր ուր Վիշ-

տը վայելչութեամբ կը մտնէ ներս և ուր Սուգը անգամ շնորհալի կրնծայէ ինքզինքը։

Այս էր գեթ հանկուցիչ երևոյթը որով, հստակ ու պայծառ, կը պատկերանա այս պահուս մտքիս առջև Օրթագեղի Հռովմեական Հայոց եկեղեցին իր լուսազեղ գավիթովը, իր բարձր գմբեթին լայնալիճ աղեղովը որ օդին մեջ կը խրոխտա, իր տաճարին մեջ աղոթելու եկող ընտրված, զատված բարեպաշտներու ու բարեպաշտուհիներու ժողովքովը. բաց գիրկ՝ լեցուն խոստումներով և քանի տարիներէ ի վեր հորմեհետե առաջին հիշատակը պահած եմ, այդ գիրկը՝ ուր նետվելու անբացատրելի փափագ մը կունենայ մարդ առջի տեսնալուն, կը մեծնա աչքիս, կը մեծնա, կը լայննա, կը խորունկնա ահա ու բաց... անդունդի մը տպավորութիւն կը թողու վրաս։

***

Անոր պես ալ քովի վարժարանը շնորհալի բան մը ուներ։ Ո՛չ. մերիններուն չէր նմաներ այս դպրոցը որ 1874ին՝ իր նոր ճերմակի ներկված երեսովը, մաքուր կանանչ փեղկերովը երկաթե, պզտիկ չափին ու շնորհալի ձևին մեջ, շալեյի մը կը նմաներ։

Ակամա կը բաղդատեի այս նորաշեն հարկին վայելուչ ճարտարապետութիւնը ու զվարթ երեսը մեր ազգային վարժարանին խարխուլ երևոյթին, տարապայման տարածութեանը հետ։

Այս խորհրդածութիւնները չըրինք այն ատեն երբ Թարգմանչաց վարժարանին խանգարյալ վիճակին հուսաբեկ՝ մենք, բազմաթիվ հայ տղաքներ, հարկադրվեցանք Հռովմեականաց դպրոցը դիմել։

Կը սիրեինք այն կիսափուլ շենքը որուն հրաժեշտ կուտայինք, ծռած, կոտրած գրասեղանները որոնց վրա արմուկնիս մաշեցուցած էինք. սեղանատունը՝ ո՛չ շատ մաքուր, կերակուրի հոտերով ծանրացած մթնոլորտով։ Մեր վարժուքյունները, մեր ծանոթները կը ձգեինք հոս, տնտեսին մինչև կառավարիչը ու վերջին պահուն կը մոռնայինք մեր բոլոր գանգատի պատճառ-

ները, ի դեպս ու հանդեպս տրված պատիժներուն դառնությունը, երբ կը պատրաստվեինք ահա ոտվընիս դնել օտար վարժարանին սեմին վրա։

Ո՞վ պիտի գտնեինք այս շենքին մեջ. ի՞նչ կերպ մարդիկ էին ասոնք որոնց կես եվրոպացիի ձևերուն առջև՝ մեր ասիական կերպերը ու շարժումները ծիծաղելի պիտի թվեին։

Ու ծուղակի մը մեջ բռնվածի պես, հոժարությամբ ներս մտնելե վերջը, առջի քայլեն՝ կը զղջայինք եկած ըլլալնուս համար, և կամաց մը, անձայն, անշշուկ, նահանջելու փորձությունը կզգայինք։

***

Տնօրենը միջահասակ մեկն էր. հաստաբուն ու կայծակնահար ծառի մը կոճղին տպավորությունը կը թողուր գինքը տեսնողին վրա. արևակեզ ու թիւթռւյր դեմքին խստությանը տակ անուշությունը կը պահվըտեր, հիշեցնելով այն ամպամած երկինքը որ ծիրանի գոտի մը կը պարդե աչքիդ, չսպասված վայրկյանի մը մեջ։

Իր ալևորած մազերը կերկարեին, կը ծփային ուսին վրա բանաստեղծի մը, արվեստագետի մը հողմածածան մազերուն պես ու ճերմկած մորուքն, կուրծքին վրա փռված, վեհության չուքը կավելցներ իր պատկառելի երեսին վրա։

Զայնը խորունկին եկող արձագանքի մը պես թավ ու տըրտում շեշտ մը ուներ։

Այն տնօրենը՝ տոքթոր Շիշմանյանն էր։

Մենք, նորեկները իր դպրոցին մեջ, ամենեն էվել իր հոգածությանը առարկա եղանք. հայերեն լեզուն կը սիրեր ու իր բոլոր ջանքին հակառակ՝ անոր արժանավոր տեղը չէր կրցած տալ վարժարանին մեջ և ահա իրենց լեզուն սիրող ու գիտցող պատանիներու ամբողջ խումբ մը մեկեն կուգար իր քովը, իր ճեռքին տակ։

Կը հիշեմ որ օր մը Եղիշեի մեկ հատվածը կարդացնելով հոովմեական աշակերտի մը, հարցուց անոր թե աշխարհիս ո՞ր

մասին մեջ կը գտնվեր «ի հեռաստանեն» կոչված երկիրը որ այդ հատվածին մեջ կը հիշվեր։

Հեռաստա՞ն. աշակերտը մտածեց. մեր կարգին մեջ՝ հառաջադեմներեն մին էր ամեն դասերու մեջ բացի իր մայրենի լեզվի դասեն։ Շփոթած՝ կը մտածեր իր քաղաքական աշխարհագրության բոլոր հիշատակները ամփոփելով. Պելուճիստան, Աֆղանստան, Հնդկաստան, Պարսկաստան... Հեռաստան։

Ապահովապես Ասիո մեջ ըլլալու էր այս երկիրը. «ստան» վերջավորած անունները ուրիշ ոևէ տեղ չէին կրնար գտնվիլ ու համարձակությամբ դարձավ Տնօրենին.

— Ասիո մեջ։

Ահագին քրքիջով մը ողջունեցինք այս ապուշ պատասխանը. սրահը ամբողջ թնդաց մեր քահքահեն. Թարգմանչաց վարժարանը կը ծիծաղեր, իր կորուսած աշակերտներուն վրեժը լուծելով։

***

Վերջեն թողուց գնաց զմեզ, ամենուս հոգվույն մեջ դնելով իր մեծ հոգիեն մաս մը։ Տոքթոր Շիշմանյանեն Սերենց մը ծագեցավ և մեր հուվմեական դասընկերներեն ամբողջ խումբ մը, գպրոցական հարկը ձգելե ետքը, եկավ մեր Պատրիարքին մոտ, հիշելով հայրենի տունը ու ան եկեղեցին որ իրենցն էր միշտ, որ իրենց առժամյա հեռացումին համար չէր դադրած իրենց համար ալ աղոթելե և ուր, երբ ալ դառնան, վստահ էին որ իրենց տեղը պահված կը մնար ամեն ատեն։

<1893>

ՔՈՔԻՆԱՔԻ

(Իզմիրի կյանքեն)

Առ տիկին...

Ա.

Քոքինաքին կերգեր. նուրբ ու ներդաշնակ ձայն մը որ գիշերն ի բուն կը համառեր Հայնոցին գոց ու կանանչ փեղկերուն դեմ. երբեմն ներսեն փսփսուք մը կը լսվեր, դուրս կը թափանցեր. Քոքինաքին էր. կը ճանչնային այս ձայնը որ հունարեն երգերու հատվածներով կուգար արթնցնել զիրենք կես գիշերին լռության մեջ։

Քոքինաքին՝ վտիտ ու դժդուն երիտասարդ մ'էր նուրբ՝ իր ձայնին, գունաթափ՝ հյուծախտավորի մը նման, տասը գիշեր անքուն հսկելու կարող իր դրուպատուրի անտանելի խռնչանքին տոկալով. և այսպես բոլոր քաղքին անհրաժեշտ եղող մարդ մը ըլլալուն գիտակցությունը ցույց տալով սովորաբար քնատութենեն փակվող աչքերուն մեջ։

Իր ձայնը բոլոր քաղքին ձայնն էր, անոր վիշտերուն թարգման, ուրախությանց մասնակից, գանգատող և լալագին ձայն մը բոլոր արևելքի ձայներուն պես— Առանց այս տղուն Իզմիր չի պիտի կրնար կարծես դուրս թափել միշտ արտահայտվելու տրամադիր եղող իր ոգին. գիտեին և ասոր համար կը պաշտեին Քոքինաքին. հայ, հույն, տաճիկ, եվրոպացի ձեռք ձեռք կը քաշեին գինքը, շոյելով անոր ուսը, մեղմիվ, դրամ դնելով կամացուկ մը անոր ափին մեջ, և առաջարկելով երգ մը երգել

իրենց իբրև թե խնդիրք մը կը ներկայացնեին ու երբ երգը վերջանար, միշտ զմայլանոք, անկեղծ երախտագիտությամբ մը դրվատելով երգիչը։

— Պռավո, Քոքինաքի։

Բ.

Քոքինաքին կերգեր. փողոցին մեջ մեկ գիծին վրա երկու կողմե շարունակվող լուսավոր կետերը, որ կազերուն դեղին ցոլքերն էին, հեռուն երթալով իրարու կը մոտենային, զիրար կը կտրեին և այդ դժգունած լուսով փողոցը կերկարեր ամայի, թափուր, իր տուներուն հուսահատական միօրինակությամբը որ լռին, ուղղագիծ պատնեշներու տպավորություն կրներ վրաս և որոց ետին ամբողջ բանակ մը կերևակայեի քունի մեջ թաղված։—

Մեր աղմուկեն, վասն զի մենք էինք Քոքինաքին երգել սվոդը Հայնոցին մեջ, գիշեր ատեն իրենց անդորրությունը խռովող անձերը տեսնելու տակար փորձեր կըլլային, փեղկերը բացվելու դղրդյուն մը կը լսվեր և ես պահվըտելու կը պատրաստվեի. աննշմարելի դառնալու չափազանց փափագով մը, պզտիկնալով բաց կառքին անկյունին մեջ, մինչդեռ Քոքինաքին իսկույն. հանպատրաստից, երգի նոր տուն մը կսկսեր Հոմերոսի լեզվով զոր ամեն ոք, ինձմե զատ, կը հասկնար այս Հայնոցին մեջ. իր բանաստեղծական տաղանդը ի հայտ կածեր, ճշմարիտ աշուղի մը պես որ վայրկյանեն, պարագայեն կը ներշնչվի։

Ես՝ այս ցուրտ գիշերեն, այս անմարդի թաղեն ու գոց պատուհաններեն ոչինչ պիտի գտնեի ներշնչվելու և ողորմագին բան մը պիտի ըլլար իմ տաղս եթե երբեք այս տեսակ հարկի մը տակ գտնվեի։

Բայց Քոքինաքին իր արվեստին քաջավարժ, այս ամեն ներշնչում մարող տեսարանին առջև չէր թերանար. կզգայի որ իր ոտանավորը կը կաղար, հանգերը իրարու չէին պատշաճեր և ամրափակ պատշգամներուն ուղղված հրավառ ջերմերը չարունակ նույն դիմառնությամբ կսկսեին՝

Ֆիլիմու Պեարոսաքի։

Երգին մեջ Սարգիս կամ Պետրոս աղան հունական մասնիկով մը կը հարստանար, կը քաղցրանար, տեսակ մը կրկնամկրտություն, կես գիշերին ու փողոցի մեջ, որով երգիչը՝ հավատարիմ իր օրթոդոքս եկեղեցվուն խստապահանջություններուն, արվեստը կրոնքին հետ կը հաշտեցներ։

Զմեզ շրջապատող տավերներուն մեջ, վրանիս իջնող գիշերվան շաղին տակ, մեր մայրենի եկեղեցվո ուղղափառությունը պաշտպանելու մտադիր չէի. վրաս ծանրացող թմրության մեջ, այս քաղցրալուր ձայնը՝ տեսակ մը նեննիի, օրորի թույլ ու հեշտ տպավորությամբը կը ներգործեր, մինչդեռ ընկերներս ընդհակառակն հետզհետե կոգևորվեին, հափշտակված անոր շեշտերեն, կը մոռնային ժամը, ցուրտը, խոնավությունը, զմեզ շրջապատող առանձնությունը՝ անոր դառնալով կրսեին աղաչավոր ու փայփայիչ.

— Քոքինաքիմու...

Գ.

Հայնոցը հարթ ու տափարակ գետնի վրա շինված թաղ մ'է, որուն քարահատակ փողոցները ուղիղ անկյուններով զիրար կը կտրեն, կը կտրտեն հաչ և հահյակ պտրտցնելով խարվելու չափ նմանող երկհարկ տուներու շարքն ու երեսները զորս պարտեզ մը, ծառ մը, բույս մը չի գար կենդանացնել։ Իզուր կառքերնիս կը շարժի, կը հառաչանա, ամեն կողմ տանիլ կուզե մեր աղմուկը, աննպատակ պահանջումները. անիվները կը թավալին շարունակ։

— Սարգիսյաններուն տանն առջևն ենք, կրսեն ինձ։

— Ասի Պաթմազյանն ելած տունն է, կրսե, մյուսը Հակոբոս աղայինն։

Ասոնցմե և ոչ մին կը տարբերի մյուսներեն, այնպես որ կես գիշերեն ի վեր հորմե հետե թափառական կը շրջինը, երազի մեջ քալող մարդու իրական անշարժության մեջ և միևնույն տանը առջև կը կարծեմ ինքզինքս։—

Ընկերներս կերգեն, կը զվարճանան, քննադատելով իմ ապշած պոլսեցիի լրջությունս զոր պարզապես ծաղրելի կը գտնեն

գիշերվան այս պահուն. օղի կառաջարկե մին. երգե կըսե մյուսը. դուք Պոլսո մեջ չե՞ք զբոսնուր, կը հարցնե երրորդը։

Պոլսո մեջ կզբոսնունք թե ոչ լավ մը չեմ գիտեր, բայց հոս՝ կզգամ անդիմադրելի փափագ մը մեկեն թռթափելու այն հիմար ծանրությունը զոր, չեմ գիտեր ի՞նչու, զգեցած եմ այս գիշեր և իրենցմե բարձրաձայն պոռալու անհուն տենչ մը կը գրավե զիս։

Օղիին ազդեցության տակ՝ փողոցի տուները կսկսին տեղերնուն երերալ, շարժիլ, պարել, տիտանյան պար զոր կը դիտեմ հիմա առանց ահաբեկելու, ալ գլխիվայր կը տեսնեմ ինքզինքս առանց զարմանքի, իմ ձայնս՝ ընկերներուս ձայնին կը խառնվի անհանդուրժելի ժխորի մը վերածելով անոնց երգը։

Հետո, ցույց տալով քիչ մ'ալ իմ մայրաքաղաքացիի պարծենկոտ գերազանցությունս, Պոլսեն երգեր կերգեմ իրենց զորս կունկնդրեն, ու Քոքինաքին մեծ մեծ կը բանա իր փակվող աչքերը վախնալով որ չելլեմ ոսոխ և ախոյան հանդիսանամ իրեն։

Գիշերվան ցողը կը շարունակե տեղալ անձրևի պես թրջելով զմեզ և հոդացավի սպառնալիքներով խանգարելով մեր բերկրանքը։

Գ.

Առավան մոտ Հայնոցը կը գթա վրանիս. բարեկենդանի սովորության համեմատ ծանոթներու բարեկամներու տուներ վերջապես կը հաճին հյուրընկալել զմեզ, մեր Քոքինաքիին հետ։

Տան տյարք ու տիրուհիք փութով կը հագվին, կուգան աչքերնին շփելով, ժպտուն սակայն, կազերը վառելու, նախ դիտելու համար եկողներուն դեմքը և այս տարօրինակ հյուրերը։

Գինի, քոնյաք, շամբանյը կը հրամցնեն իրենք ալ մասնակցելով մեր անիմաստ խնդումին և մեկնելու ժամուն արք մեզի ընկերանալով կստվարացնեն մեր շրջուն խումբը։

— Հոս բարեկենդանը այսպես է, կըսեն ինձ ամենքը միաբերան, արդարացնելով մեր գիշերային ուղևորությունը։—

Հետզհետե ասպատակող փոքրիկ բանակ մը կը դառնանք Հայնոցին մեջ, մինչդեռ աքաղաղը կը խոսի և Քոքինաքին կը վերսկսի նորելուկ հունական երգը, իր դաշն ձայնովը որ պատե պատ, դուռե դուռ կը կրկնվի կերկարաձգվի։

— Մա՜ր կա՜ա՜ռո...

Աստղերը տակավ առ տակավ բացվող երկնից կապույտին վրա կը դժգունին, անտեսանելի կըլլան. մութը՝ իր խստությունը կը կորսնցնե, կը մեղմանա. տուներուն գույները կը ճշտվին, փողոցներուն մեջ մարդիկ երևան կելլեն որք զմեզ կը դիտեն հիացած. կառքեր՝ քաղքին ուտելիքը կը կրեն ու տեղ տեղ կազերուն լույսը կը մարի։

Ե.

Վերջին տունն ուր գացինք, դեմս ելլողը դո՞ւն էիր որու կը նվիրեմ Իզմիրի բարեկենդանի այս փոքրիկ հատվածը. գեթ մեկն էր որ քեզ կը նմաներ, ա՜յնքան կը նմաներ։

Քեզմե քիչ մը պակաս խոժոռություն դեմքին վրա երբ երեսս նայեր. ժպիտ մը ավելի... բայց ո՛չ, քու ժպիտեդ ավելի քաղցր ժպիտ չի կա. հասակը նուրբ, դյուրաթեք, հարուստ ու խիզախ կուրծքի մը բեռան տակ, քունկինիդ պես. միայն քեզի պես տրտում չէր անի։

Տեսնելուս պես մոտը գացի մտերմությամբ. գիս ներկայացնելու հարկ չիկա ըսի բարեկամիս. տեղը, ժամանակը, մարդիկը կը շփոթեի մտքիս մեջ. աղջիկը՝ երեսս կը նայիր խնդալով, զվարճանալով արբած պոլսեցիի համարձակությանս վրա։

Եվ խոսակցությունը կսկսի և անունդ տալով.

— Ի՜նչպես, հո՞ս դո՞ւք ալ։

Չէր պատասխաներ. ես կը համառեի.

— Տեսնենք ե՞րբեն ի վեր։

Աղջիկը բարձրաձայն խնդալե կը մարեր։

— Հոս, կը շարունակեի, Պոլիս չենք, բայց դուք միևնույն ծաղրող և անոգորմ էակն եք։

Այնքան կը խնդար որ ալ պիտի ճաթեր։

Սենյակին մեջ եղանակները, ձայները, քահքահները, բաժակաց բախումը իրար կը խառնվեին։

— Ձե՞ք պատասխաներ։

Այդ պահուն պատանության վերադարձ մը կըներ միտքս. կը հիշեի բոլոր բոլոր այն անձնահույզ խանդաղատանքս որով քանի տարիներ հետևեցա քեզի, քեզի անծանոթ, ստվերի մը պես անշշուկ և վախկոտ. հետո սպասելե, քաջալերող ակնարկ մը սպասելե ու միշտ խոժոռած դեմքի մը հանդիպելե ձանձրանալս, անպատեհ սիրո մը համար ինծի արժանի վերջավորությունս։

Եվ տեսնելով որ կը շարունակեր ծիծաղիլ վրաս, ձեռքը ուզեցի բռնել. այն ատեն խնդալը դադրեցուց և ուղղելով գեղեցիկ բարձր հասակը, սպանյոլի մը արտասանությամբ հետացուց զիս։

— Ո՞վ կարծեցիր զիս, ծե՛ե՛ե՛։

Չ.

Դուրսը լուսցած էր. փողոցե փողոց մեր խումբը երթալով կը պակսեր՝ ընկերներս իրենց տան առջև հասնելնուն դռնեն ներս կը սպրդեին մեկիկ մեկիկ, խորհրդավոր էակներու պես կանհետանային թողլով որ մնացողները շարունակեն Բարեկենդանը։

Ես կը շարունակեի քալել անգետ և անփույթ որ կողմ երթալուս ցորչափ Քոքինաքին իր ձայնովը կառաջնորդեր ինձ անծանոթ աշխարհի մը մեջ զոր գիտովութենե գրգռյալ ուղեղս իզուր կը ջանար պարունակել. և տասը վայրկյանի մեջ ամեն ինչ կը հատներ կանհետանար չորս դիս, այս բարեկենդանի գիշերը, բարեկամներս, Հայնոցը, և այս բոլորին խառնվող պատանության հիշատակը, հոս մինակ գլուխ գլխի ձգելով զիս Քոքինաքիին հետ առավոտյան պայծառ լույսին տակ փողոցին մեջտեղը. բայց երգիչին բոլոր գլուխները կը հնչեին միշտ ականջիս, քնարի մը թելերուն պես որ նվագածուին դադրելեն վերջը դեռ կը թրթռան ամբողջ ելևկույթի մարող սպառող արձագանքին պես։

<1891>

ՓՈՔԵՐ

Կիները ամենեն շատ սիրեցին այս խաղը, նենգությամբ, անակնկալով, սիրտհատնումով լեցուն, որ ամեն կողմ կը ճաթակի հիմա, Փերա, Փրինքիփո, Պոյուք Տերե, Քատըքյոյ։

Պոիճը՝ հաշիվ ու նրբություն կը պահանջեր միայն. մտքի չանադիր աշխատությունն էր որ հոն կը գործեր, հաջող թուղթեն մեծագույն օգուտը քաղելով և ձախորդեն՝ նվազագույն վնասը քաշելու համար ոգորելով, տաժանելով խելքի խուզ պայքարի մը մեջ։

Փոքերը ոչինչ կուզե ասոնցմե. խաբեության ու կեղծիքի իսկատիպ խաղն է, ուր ուժդ ու տկարությունդ հավասարապես պարտավոր ես ծածկել դիմացինդ, նրբեմն համեստությամբ, շփոթած, վարանքով, ամենափոքրիկ գրավ մը բռնելու համար, իբրև թե չվստահելիր թուղթիդ զորությանը, ու երբեմն խոյանալով հակառակորդիդ ամբողջ դրամին վրա, պլըֆի մը հանդգնության մեջ պարտկելով իրական տկարությունդ ու հակառակորդդ վախեն փախցնելով։

***

Ըսի ու կը հավատամ որ կիները ամենեն ճարտարները ըլլան այս խաղին մեջ, իրենց բուն մթնոլորտին մեջ ըլլալնուն համար անշուշտ։

Ուժն ալ սուտ, անուժութիւնն ալ սուտ, խոյանալն ալ սուտ, վարանիլն ալ սուտ, ընդունիլն ալ, մերժելն ալ, ամենքն ալ սուտ. ամբողջ կնոջական աշխարհ մը։

Հոս պչրանքը, ժպիտը, խոժոռումը, անուշ խոսքը, ամեն շարժումները և ամեն ակնարկները պետք է դիտել, վերլուծել, կանգ առնել, չխաբվելու համար, և, ավելի գեշ, ծիծաղելի չըլլալու համար երբոր վարդագույն շուրթեր պոռան երեսդ ի վեր.

— Քառե կամ ֆլո՜շ...

Ու ափ ի բերան թողլով զքեզ հափշտակեն տանին ունեցածդ չունեցածդ, խնդալով քթիդ, ուրիշ անգամվան համար թուղթ խաղալու եղանակիդ վրա մտերմական խրատներ տալով քեզի, ուսդ ծեծելով մեղմիվ։

— Բարե՛կամս, թուղթ չուզողին որլանսը չեն բռներ։

Եվ կամ թե՝

— Պլըֆը հայտնի էր. պետք էր տեսնել։

Իրա՞վ։

Կը մտածեմ որ Փոքեր մըն է կյանքը զոր ամբողջ աշխարհ կը խաղա արդեն։ Պլըֆյոռներ մեկ կողմեն, չունեցածը ունեցած ձևացնողներ ու հաջողողներ, անթիվ, անհամար. պայքար մը մահացու, որերիմ, որուն ամբողջ կյանքդ կը դնես, չարունակ ըսելով Մոն թո՛։

Եվ դեմդ մեկը կելլե, անծանոթ մը, չար ոգի մը, Դիպվածը թերևս զոր չես ճանչնար, և որ գրավդ կը բռնե ու կը կործանե զքեզ չորս թուղթ նետելով առիդ։ Կամ թե մարդիկ կը տեսնես մեծ ուժի ու դրամի տեր, ամեն օր ամեն վայրկյան ձեռվրնին Ֆուլ ա լ'աս ունեցող մարդիկ, որոնք կանցնին Փասսոյի անընդհատ մրմունջի մը մեջեն, անկարող օգուտ քաղելու բախտեն՝ որուն երես առած, շփացած զավակներն են. մինչդեռ անդին ուրիշ մարդիկ, ձեռներեց, ճարպիկ ու հանդուգն, որ աշխարհներ կրնային վաստկիլ, տարիներով զույգ մը չունին ռվերբյոռտ մը ընելու համար։

ՄԱՐԳԱՐ ԱԽՊՈՐ ՏԵՐՏԸ

Դրսեցի մըն է, պանդխտութեան տաժանքովը ծերացած. իր բիրտ ու հաստ մարմինը՝ կքած, ծռած, քայքայած է հոս. ողորմելի մնացորդն է հիմա առջի կայտառ երիտասարդին, որ քանի տարիներ առաջ վազած եկած էր Պոլիս, բախտ փնտրելու համար զոր երբեք գտած չէր։

Այս քաղքին մեջ, ամեն ինչ կը զարմացներ գինքը, մարդերը, ձայները, փողոցները ու տուները։ Միայն եկեղեցին, իր եկեղեցին կը ճանչնար, միևնույնը հոս ալ ինչ որ էր իր երկրին մեջ, դասը, բանկալը, գավիթը, խորանը։

Հոն վերադարձած մարդու պատրանքը կուննար. ձայներն ու եղանակները ծանոթ էին իրեն. իրեն պես շատեր կը տեսներ շուրջը, լալագին ու հառաչալից սրտեր, երեսանկյալ ու գետնամած մարդիկ, ժամուն պատերուն ու քարերուն քսվող դեմքեր, օգնություն ու սփոփանք հայցող հոգիներ բոլոր։

Իսկ պատարագի ատեն ա՛լ տարակույս չուներ բնավ. հոս հոն չկար. իր վերացմանը մեջ, քահանան, դպիրներն ու բռեպաշտներու բազմությունը կը միանային, հիշեցնելով իր բնավայրը, աղոթքի ժամերը գյուղին, ամբողջ ու անխառն վայելք մը ձևացնելով զոր խոնասեր, փափկաճաշակ մարդու մը պես Մարգար ախպար կըմբոշխներ մեղմիվ, կծծի, ագահ մարդու խնայողությունով։

❁❁❁

Ասիկա իր երջանկությունն էր, դյուրագնի ու ստույգ երջանկությունը զոր ոչ ոք կրնար իրմե կապտել և որուն ոչ ոք դրպչելու իրավունք ուներ։

Բոլոր հայրենակիցներուն մեջ իր ժամասիրությունը առածի կարգ անցած էր. առավոտուն ու երեկոյին, մանավանդ կիրակի օրերը պատարագի ժամուն, անխախտ իր համեստ տեղը կը բռներ, մինչև վերջը կը կենար հոն, մինչև «Օրհնյալ եղերուքը, ու դանդաղ ու դժկամակ մարդու քալվածքով դուրս կելլեր, գրեթե ակամա։

Փորձանք մը պատահած էր սակայն իր այս սակավապետ երանությանը գլխուն. տարիներ անցնելով արարողություններն ալ կը բռնվեին կարծես այն շուտափույթ ու շտապող ոգիեն որ ամեն բանի մեջ կը մտներ։

Ու եկեղեցիին մեջ աղոթքները, այն ծանր ու համրաստաց եղանակները, տակավ տակավ տարօրինակ հորդորի մը աճապարանքը կառնեին. առջի երկու ժամ տևող արարողությունը հիմա կես ժամվան մեջ կավարտեր. փճացումը, մսխումն էր այս Մարգար ախպոր բոլոր ու միակ վայելքին. ինքը՝ միշտ էն վերջինն էր մեկնողներուն, իբրև թե դեռ հույս մը ունենար աղոթքին վերսկսելուն, և հուսաբեկ կելլեր դուրս, լուսարարին հետ, տրտռալով, գանգատելով այս անտեղի փութացումներեն։

❁❁❁

Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցիին մեջ ծնրադրած պահուն Մարգար ախպար այդ օրերը փնտրելու կսկսեր. առաջ շուտ կարտասաներին աղոթքները, բայց վերջապես կարտասաներին. հիմա ամբողջ հատվածներ կը կորսվեին ահա փութո պնդությամբ հառաջ տարված արարողությանց մեջ։

«Առաքելոց»ի պահուն երբ սարկավագները կսկսին սեղանեն երգել,

«Առաքելոց, սրբոց, մարգարեից, վարդապետաց...» ահա

վարեն գպիրները վրա կը հասնին, չթողլով որ շարունակեն ու հառաջ քշելով իրենցը,

«Հիշյա Տեր և ողորմյա»։

Ալ այսպես անընդհատ ու վերահաս «Հիշյա»ով ժամանակ չեն թողուր սրբոց անուններու հիշատակությանը։ «Հիշյա» մը ար այնքան կը նմաներ «չՀիշյա»ին։

Մարգար ախպար կը խռովի ալ. ո՛չ, աս երկրին մեջ չկար. և վերջին հույսով մը կը շարունակե ամեն կիրակի այդ եկեղեցին երթալ, օր մը, անգամ մը գոնե, կատարյալ ու չխռովված արտասանությունը լսելու «Առաքելոց»ին, իր արդար ակընկալությունը ի դերև կելլե միշտ. նախանձախնդիր դրսեցին կը գանգատի, կը բողոքե ու կը շարունակե եկեղեցի երթալ, ուր իր խնդրանաց ականջ չեն կախեր բնավ, ու կը խլեն իրմե վերջին պատրանքը իր բնավայրին ու իրեններուն աղոթքի ժամը հիշելու, հոգվով անոնց հետ միանալու պատրանքը որ այս քաղքին մեջ Մարգար ախպոր միակ ինչքն էր, իր միակ երջանկությունը։

<1892>

ԷՏԼՎԱՅՍ

Սեղանիս վրա է, մոխրասպիտակ թերթերով ծաղիկը։ Գոց սնտուկներու մեջ՝ ծովով, երկաթուղիով ճամփորդած է և ամիսներով աշխարհ պտտած է իմ ձեռքս հասնելե առաջ։

Խոնջ ու վաստակաբեկ բան մը չկա վրան. իր ձյունադալար անկողնին մեջ ծլածի պես՝ գողտր ու դողդոջուն կեցեր է դեմս, երկու ձեռքով փարած իր դեռաբողբոջ ծաղիկի փափկությանը։

Ցողուն չունի, հյութ ու կյանք չառներ տեղե մը այս եղական ծաղիկը՝ ուրկե Ռիկիի կամ Յոնկֆրոյի վերելքը փորձող ամեն ալպասեր՝ հատ մը չքաղած վար չիջներ։

Ուշադրությամբ կը դիտեմ այս անբացատրելի հմայքը, այս անթառամ երիտասարդությունը, և մատիս դպչելուն՝ կզգամ որ իր տերևներուն նուրբ թավիշը՝ փայփայանքը սիրող պզտիկ կատուի մը նման պես կակուղ է դեռ։

Իր ստվերոտ ճերմակությունը ատեն անցնելով չէ եղծված, ու անայլայլ կեցած է որբևայրիի մը կես սուգին պես, որ վայելելուն համար՝ բնավ չի հաներ վրայեն։

Իր գալուստեն ի վեր իմ քովս, ո՜րքան ծաղիկներ ծնան, բողբոջեցան ու մեռան պարտեզիս մեջ. ամենքը, անկե ի զատ,

անցան գացին, իրենց վաղամեռիկ հրապույրներուն սուգը ձգելով սրտիս մեջ. էտլվայսը միայն իր անանց մանկության մեջ է ու պիտի մնա այսպես։

Ու բաղդատությունը ինքնին կուգա մտքիս առջև. որոշում մը տալու, երկուքին մեջ ընտրություն մը ընելու պետքը կը զգամ. չէ՛. չեմ սիրեր այս լերան ծաղիկը, չեմ սիրեր որ ինքը մնա հավիտենական երիտասարդուհին, երբ իր նմանները այնքան շուտ կանցնին կերթան. անիրավ, կոշտ ու հետադեմ կը տեսնեմ անվերջ տևողությունը բանի մը որ իր շուտանցիկ ու խուսափուկ հանգամանքին համար գողտր ու քնքուշ է աչքերնուս։

Ես կը գայրանամ, մանավանդ անոր համար որ վերջապես պետք է ամեն բան ժամանակի մը ենթակա ըլլա, իր վերջին օրը, ժամն ու վայրկյանը ունենա, և անոր սպասկոտ անձկությամբը տառապի, վախնա, կամ ուրախանա. վերջին էակը չըլլա ինք, և մեկը գտնվի որ իրմե ետքը գա և կարենա վճիռ մը տալ անոր դեմ։ Իմ կարծիքովս անմահությունը մահացումներուն էն ահավորն է։

Ջափազանց տևողությունն իսկ բանի մը, անտանելի է սրտիս։ Կիներ կը ճանչնամ որ իմ տղայությանս միջոցին մանկամտի աղջիկներ էին, ու հիմա ալ դեռ առջի աղջիկները մնալու կը ջանան, հին ատենի ծեքծեքումները կը պահեն։ Կանանց էտլվայսներն են անոնք։

Դպրոցական տարիքես կը հիշեմ կարգ մը մարդիկ որ հայ հասարակության մեջ երևցեր էին, հանրային կյանքի մեջ, աղեկ կամ գեշ, գործ մը ընելու երևույթով, և ահա քառորդ դար մը վերջը, միևնույն մարդիկը կը տեսնեմ շուրջս, կանգուն ու երիտասարդ, միշտ գործի վրա։ Ազգին էտլվայսներն են անոնք։

Ու իմ ծաղիկներուս դառնալով ես անոնք միայն կուզեմ, որոնց Սյուլլի Բրյուտոմ վաղաթառամ կյանքը երեսնուն կը զարներ։ Ես իմ մեռնող ծաղիկներս կը սիրեմ, և էտլվայսիս պես տարիներով սեղանիս վրա կեցող բույսե մը՝ հազար անգամ կը նախընտրեմ այդ նուրբ ու թարմ բաները որոնք գույնի մը ու բույրի մը հիշատակը ձգելով կանցնին։

***

Փողոցին վրա նայող տան մը պատշգամբին մեջ, լայն ապակիին ետև տեղավորված, աղվոր կնիկներ կը տեսնես երբեմն. հոն են միշտ անոնք միևնույն ժամուն։ Ձեռքովդ դրածի պես, ապահով ես հոն գտնելուդ այնքան՝ որ անշարժ կարծելու իրավունքը կուտան քեզի։ Ուզածիդ չափ կրնաս դիտել զանոնք ու զմայլիլ վրանին։

Անդին, փողոցին թոհ ու բոհին մեջ, անուշադիր ու մտաբաղ մեկ վայրկյանիդ՝ ժպտուն, արագաքայլ, մանրիկ ոտքերով մեկը կը սահի կանցնի քովեդ հանկարծ, իր անցքը ավելի կզգաս քան քե ատեն կունենաս տեսնելու։ Ու աճապարանքով կը դառնաս, կը վազես ետևեն ու հազիվ կը հաջողիս հետուն, շատ հետուն, բազմության մեջ բոլորովին անհետանալեն առաջ, ծոծրակին վրա ոսկեձույլ թումբի մը պես բարձրացող մազերուն ցոլքը նշմարելու։

Ո՞վ է, ո՞ւր է, ի՞նչ է, չես գիտեր. գեղեցի՞կ է գոնե, չես կրնար տեսնել։

Ընդհմարվող, խուսափող բանն է ան, երջանկությունն է։ Անդին՝ անբաժան, մշտակա, շարունակ քովդ ի վեր է մյուսը, վիշտը՝ սա դեմի ծաղկիս պես։

<1898>

ԲԱՐԵՐԱՐԸ

Երբոր մինչև վերջին վայրկյանը լավ մը կշտացավ եւ հղփացավ այս հարստութեամբը ու ինքնիրենը ստուգեց թե ոևէ վայելք չէր մոռցած իր ծեր անառակի կյանքին մեջ, այս անթիվ ոսկիները ինչ ընելիքին վրա խորհեցավ։

Անհավատարիմ կնոջ մը պես, որ իր չսիրած էրկանը մահամերձին՝ տոնի, ցնծութեյան պատրաստութեյուններ կը տեսնե, կզգար որ իր դեղին ոսկիներն ալ կը խլրտեին, կը շարժեին, անսովոր ձայներ կը հանեին սնտուկին մեջեն։ Իր մահվան անկողնեն որոշ կերպով կը լսեր անոնց ըմբոստ մետաղի խշրտուքը։

Ու ճիգ մը ըրավ, հնազանդութեյան գերագույն փորձ մը ուզելու համար անոնցմե, և իր պլպլացող մտքին տարտամ լույսովը՝ փնտրեց հաճելի բանը, վերջինը, զոր կրնար ակնկալել դեռ այս հարստութեյան օգնութենեն, հրաժեշտի անուշ խոսքը զոր պաշտեցյալ կնոջ մը շրթունքեն կը պահանջես։

Այն ատեն տարօրինակը, անհավատալին պատահեցավ. աս հնարամիտ ու կենցաղասեր մարդը, որ ամեն բանե օգուտ մը հանելու մեջ իր նմանը չէր ունեցած այսքան տարի, շվարած մնաց, ապիկար ու անկարող գտավ ինքզինքը հաճույք մը ձեռք ձգելու՝ իր ձեռքին տակ եղած ահագին դրամներեն։

Իր հինցած, փճացած ստամոքսը ոևէ համադամ չէր կրնար մարսել. իր ջրոտած, թունավորված արյունը ոևէ բորբոքումի անընդունակ էր ա՛լ. իր պարտասուն և թուլցած ջիղերը հիմա ըրհասական ժամին պրկումովը կը գալարվեին. նվագարանի մը մաշած թելին պես, որուն կոտրիլը՝ բութակին անգամ մըն ալ դառնալուն կը նայի։

Այս անկարողության խոստովանությունը խելքը գլխեն տարավ. քովի սենյակին պատեն նախ փսփսուք մը, հետո աղմուկ մը կը թափանցեր, կուգար ներս և վերահաս մահվան էրկյուղեն սթափած լսողությունը՝ այդ աղմուկին մեջ իր ժառանգորդներուն ձայնը ճանչցավ։

Ու հանկարծ լույս մը ծագեցավ մահվան արհավիրքով գրավված այս մտքին խորը. իր չար մարդու բնազդը մեկեն արթնցավ. վերջին ավազակության, կողոպուտի մը խորհուրդը իր նեխած ու ողորմելի մարմինը դղրդեց ոտքեն մինչև գլուխը. ուրախության սարսուռ մը վազեց իր մորթին վրա, խորշակին պես որ գարշ ու անշարժ լիճի մը մակերևույթին վրա կը թռչտի։

Եպիսկոպոս, քահանա ու թաղական ուզեց իր քովը, որոնք փութացին եկան. ան ատեն հանդիսավոր ու սրտառուչ ձայնով մը, զոր Սրբազանը վերջեն իր դամբանականին մեջ հիշեցուց, կտակ մը ըրավ ու բոլոր հարստությունը, որ ա՛լ իրը չէր, եկեղեցիին ձգեց։

<1898>

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Կանուխ, ան ժամուն ուր ամեն մարդ գործի կերթա, անակընկալ երաժշտություն մը, լաթեռնայի վրա եղանակված ճչուն ու հատկտոր երգեր, որոնք բոժոժներու սուր ու թավալուն ձայնը կը հիշեցնեն քիչ մը։

Գիշերեն ի վեր արբեցութենե չի կշտացող խաղամուժ ցրնծուհիներու խումբ մը ձիերու վրա, իրենց բեհեզյա ծպտումներուն պոռացող գույներովը, ու պատրվակյալ երեսնուն արթընցուցած հետաքրքրությամբը։

Ու պահ մը փողոցին անցուդարձը կը դադրի, ճամփա բանալով կանխազարթույց այս արշավին առջև և կարծես ըսել ուզելով,

— Թող տվեք որ ճակատագրին արդարությունն ալ անցնի։

Վասնզի ճակատագիրը որ կույր է, տեսնողե մը ավելի արդար դատաստան կը կտրե երբեմն։

Ավելի վար, ուրիշ խումբ մը կը դիմավորե զմեզ. ասիկա հետիոտն է. աղմուկի, երգի, շպարի, տարազի միևնույն զեղծումը ու շռայլությունը. փողոցին պատշաճությանցը դեմ միևնույն անսաստությունը. միևնույն ցույցը մարմնական հորինվածներու ու միևնույն հոդվածներու խաղերը։

Եվ ասիկա այսպես բոլոր ճամփուն երկայնքը, Փերայի Մեծ

փողոցեն մինչև Ղալաթիո ստորոտը, մինչև քովերը մեր խըմբագրատունին ուր կապաստանիմ։

Ոչ ոք մտքեն կանցընե կշտամբել այս կամավոր-երջանիկները, այս դիմածածուկ-անպատկառները, որոնք, Տրեյֆյուսի դատավորներուն պես, դռնփակի կուսակից չեն։ Ջքմեղանքի, ներողամտության ու թուլլտվության ընդհանուր հով մը կը փչե։ Քաղաքը, վայրկյան մը, իր լուրջ մարդու երեսը պարզելու պետքը ունի. պզտիկ կատակի մը կը նայի որպեսզի բարձրաձայն խնդա ու մասնակից ըլլա մեջտեղի ցնծության, ինչ որ սովորաբար շաբթուս վերջերը կը պատահի։

Ու երկարող փողոցին դեմ դեմի քարակոփ շենքերը, որոնք մարդոց և դեպքերու փոփոխականութենեն բան մը չեն հասկըներ, իրենց նյութի պարզմտությանը մեջ, կը զարմանան, կապշին Քաղքին ինքնամոռացումին և այս ուրախության ցույցերուն առջև։

<1898>

ՎԵՐՋԻՆ ԱՐԵՎԱԳԱԼԸ

Այս ժամուն ընդարձակ տաճարը գրեթե պարապ է լայնապարուր գմբեթին տակը. հոս ու հոն անկյուններու մեջ ապավինած սքլած քանի մը մարդիկ, մուրացկաններ, որոնք եկեղեցիին սովորական բարեպաշտներեն, սա մյուս մուրացկաններեն առաջ ներս սպրդած են. հեռուն, սեղանին մոտերը, ապնիվ փայտե քանդակներով շինված բաժանումին ետին ստվերներու մեջ սև վեղարներ, և աջ ու ձախ կողմը երկուքի բաժնըված դպիրներ դասին մեջ։

Եկեղեցին սուգի մեջ պլլված է. այս համատարած մթության մեջ՝ խորանին փակչող մեծ ու ճերմակ խաչը իր քառաթև ու կեղակարծ սպիտակության ցոլքովը զինքը շրջապատող արհավիրքը կավելցնե։ Հավատացյալները կուգան մեկ, երկու հատ, վայրահակ գլուխներ բոլոր։

Այս անբարբառ տրտմությունը անխոս ցավերու պատկառանքը ու մեծությունը ունի ու ես, լավ մը դիտելես վերչը որ զիս տեսնող մը չկա ու ապաժաման բարեպաշտությունս ծաղրանքի նյութ պիտի չդառնա, կամացուկ մը կը ծնրադրեմ ահա քարին վրա։

Հանկարծ ձայն մը կը բարձրանա դասեն. Արևագալը կսկսի.

— Հարևելից...

Վտիտ ու մանկան ձայն մըն է անուշ, բեկբեկված քիչ մը, որ իր ընդհատումներուն մեջ կերկերանքի մը ձևը կառնե, ու կը պատշաճի այս սուգի տաճարին. սարսուռ մը կը վազե վրաս, դեմեն թավ ու խժուկ ձայն մը կելլե վեր տրտում ու վարանոտ ու ողբը կը սավառնի ամբողջ տաճարին մեջ վիրավոր ու փախըստական թռչունի մը պես.

— Նահատակի ճշմարիտ...

Աղոթքին ելևէջներուն հետ՝ հոգիները հավատացյալներուն, որոնց թիվը ավելցած է հիմա, կը տատանին, կը շվարին։

Ո՞վ հնարեր է աղոթքը. ո՞վ մտածեր է առաջին անգամ արցունքե ու հառաչանքե զորութիւն մը ձևացնել. ի՞նչպես այս բոլոր բարեպաշտները իրենց ամեն կսկիծներուն համար աննըրևույթ ապավենի մը փարելու հաստատ ապահովությունը ունին։ Եվ մինչդեռ դպիրներու դասերը իրենց երգեցողությամբ եկեղեցին կը թնդացնեն, ես մտքովս կը փոխադրվիմ մեր եկեղեցիներուն մեջ, ուր ամենքը այս վայրկյանիս միևնույն հավատքով վերջին արևագալը կերգեն։

<1898>

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐ

Նահանջ ուղևորություն մըն էր մեր ըրածը ձմեռ ատեն, այս անձուկ կիրճերուն և այս տղմուտ դաշտերուն մեջեն, զոր ձմեռնամուտի անձրևները ճախճախուտներու կը վերածեին շարունակ։ Եվ, զգուշյավ, կը ճամփորդեինք ողողված, թրջած մինչև ոսկորնիս, շարունակ մեր ձիերուն քայլափոխները ճըշտելու և հավանական անկումները արգիլելու ջանադրությամբ։

Այսպես անընդհատ ջուրի հեղեղներու մեջեն կերթայինք, լացող և խոնավ երկինքի մը տակ, և կը մտածեինք ճամփուն երկայնքին, մեր ուղևորությանց մնացած մասին, որ ճշմարիտ տաժանքի կերպարանքը կառներ։

Իրիկվան դեմ գիշերեցինք մոտի գյուղին մեջ խոնջաբեկ ու ցրտահար ամենքնիս ալ։ Հիմա ցուրտը կավելնար ու ձյունի հատիկները կսկսեին գալ վաղահաս ու փութկոտ ձմեռին հետ։

Արշալույսին երբոր ճամփա ինկանք, նորեն առատ կուգար ձյունը։

Սպիտակ, անհամար թիթեռնիկներ էին ասոնք որ ժանտ ու չոր երկինքի մը կապարե ցանցեն կը մաղվեին. լուռ ու մունջ տեղացում մըն էր ասիկա. անթիվ առաքելություն մը

կարծես որ երկիրը գրավել ուզեր իր դյուրահալ ու անբիծ խուժիկներովը։

Ու մենք գոհ, ազատելնուս համար վերջապես անձրևի մըտրակումներեն, մեր շուրջը կը դիտեինք անմեղ զմայլումով մը։

Ոմանք դանդաղ կիջնեին վար. հազար նազանքով, կարծես թախանձանքներու սպասումով. ոմանք խուճապի մեջ, ոլորապտույտ ծայրաններ գծելով օդին մեջ. ուրիշներ արծիվի մը չքեղ ճախրանքովը. և այս խոլ արշավին մեջ ամենքը անվնաս կը հասնեին վար, իրենց գզված բուրդե հոլանի թևերը անկապահ գործիքի մը պես ծառայեցնելով վայրէջքին։

Ժամերով եկան այսպես, մեր քովը, մեր շուրջը, մեր վրան տեղալով անընդհատ, ու հեռուն, դաշտը, ճամփան և հորիզոնը բոլոր։

Խորհրդավոր ուղևորներու կը նմանեին ասոնք, որոնք պաշտոն ունեին կարծես շտկելու, կոկելու, հարթելու աշխարհին վրա մակերևույթը ամեն բաներուն, և հատկապես, դյուրացնելու մեր ուղին. և իրոք, սարերն ու հովիտները կը հաշտվեին իրարու հետ և այս միօրինակ ճերմակ փայփայանքներուն տակ քարերն ու լեռները կը կակուղնային։ Եվ սակայն, ցորեկին երբոր արևը ծագեցավ հանկարծ սնդիկե երկինքի մը շղարշին տակեն, մեր շուրջը տարածվող այս մաքուր հարթության ու շքեղության վրա ուղևորությունը վտանգավոր և անստույգ կը դառնար։ Անդունդներն ու գահավեժները պահված էին մեներ ու հոդին հերկոտիքը ծածկված բոլոր, ճամփուն մատնություննները իր անբծությամբը վարագուրված էին։

Ո՛րքան նախընտրելի էին պարզ հողն ու քարը իրենց աղտոտ տիղմերովը, իրենց մերկապարանոց ելևէջներովը ու ակներև խորտուբորտությամբը, քան թե սա պայծառ ու ցոլացիկ մակերևույթը որ կը պարզվիր աչքերնուս առջև իր անսահման տափարակի խաբեությամբը։

*

Վարանոտ ու համր գնացքով մը շարունակեցինք ճամփանիս ու իրիկնամուտին դեռ ոևէ օթևանի նշանը չէինք տեսած։

Ձյունը դադրեր էր ա՛լ. բայց դեմը, հեռուն, մարը մտնող արևին քով ճերմակ ոսկի թիթեռնիկներու տեղատարափ մը կար, ատրուշեկ հալոցք մը թափված հյուլեներ, որոնք բաց դեղինեն մինչև մութ կարմիր գացող ծիրանի գոտիի մը հազար երանգներով բոլոր եզերքը կը կիտվածեին։ Տուզեռում մըն էր գույնզգույն թիթեռնիկներու որոնց փոքրիկ թևերը կը դժգունեին, կը շիկնեին, կը վառեին, կը մարևին շալունակ հսկա բարայրի մը մեջեն։ Ո՛րքան մոտը դաղինք իրենց, նույնքան հեռացան անոնք մենե, միշտ միևնույն անջրպետը պահելով մեջերնիս։

Այս թիթեռնիկները այլափոխիկ խոստումնե՞րն էին կյանքին. անոնք զորս ձեռք երկնցնելուդ՝ ափիդ մեջ կը թվիս բռնել չարունակ. անոնք որ մոռցնել կուտան խոնջենքը ճամփուն, միշտ մերձակա և միշտ խաբուսիկ հանգրվանը, երազված ըղձացված բևեռը, որուն, ահա՛ քայլ մը ևս, և պիտի եզերիս։

Եվ այսպես, երբ ճերմակ թիթեռնիկները կը հարթեին ճամփանիս, ու պատիր ապահովություն մը կը ներշնչեին մեզի, այս մյուս կարմիր թիթեռնիկներն ալ մոտավոր հանգրվանի մը խոստումովն ու ձգողությամբը կը պատրեին զմեզ, որպեսզի մեր վերջին ուժերը դեպի իրենց հասնելու ջանքերովը սպառենք։

***

Ու հանկարծ, գիշերը իջավ վրանիս, երիթամած մթությամբ մը որ կարծես անհամար սև թիթեռնիկներու խուժումովը ձևացած էր։

Մանր ու բյուրավոր չղջիկներ ամենքն ալ, իրենց սև կազե թևերը սարդի ոստայնի մը նման տարածելով մեր շուրջը և մեր վրան։ Ելևէջ չուներին ասոնք, ո՛չ ճախրանք, ո՛չ անկանոն պարույրներ օդին մեջ. այլ լուռ ու խոժոռ էջք մը, դանդաղ բայց միօրինակ, անխափան ու անմաքառելի բան մը. հետզհետե ավելի հոծ և ավելի խիտ կը դառնար բանակը սև թիթեռնիկներուն որոնք, աննշմարելի ու տիտանյան ձուե մը վի-

ժածի նման՝ անընդհատ կը լեցվեին ու կը դիզվեին, արհավիրքի թանձր սրսկապան մը հորինելով մեզի։

Այս սև թիթեռնիկները կարգապահ շարքով կուգային կը կենային քով քովի, ետևե ետև, անխախտ ու անկորուստ ամենքըն ալ. իրենց գրաված տեղը ձեռքե չհանելու հաստատ մտադրությամբ։ Հոգևրն ու մտմտուքները, ցավերն ու կսկիծներն էին ասոնք, որոնք կը շրջապատեին զմեզ ամեն կողմե զարհուրելի հավատարմությամբ մը։ Եվ իզուր թոթափել ուզեցինք զանոնք վրանես. սև թիթեռնիկները ա՛լ ավելի ճնշեցին զմեզ, ավելի շատցան և ստվար քողը ձևացուցին հիմա, ահավոր վերարկուն, որուն մեջ օթևանեցանք։

❁❁❁

Ճերմակ թիթեռնիկները կյանքի առավոտն էին հարկավ, պահելով մենե, ցույց չտալով մեզի անոր թաքուն վտանգները։ Ոսկի թիթեռնիկները ցորեկն էին կյանքին՝ հույսով ու առաջադրությամբ լեցնելով զմեզ։ Սև թիթեռնիկները գիշերն էին կյանքին, աղչամուղջի բովը որուն մեջ ամեն բան կաներևութանա։

<1898>

ՇԻՇԼԻԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ ՄԵՌԵԼՈՑԻ ԿԻՐԱԿԻՆ

Վերեն վար խաչաձևված է մաքուր ու աղվոր ճամփաներով։ Տեղ տեղ մարմարե կառուցումներ աչքի կը զարնեն ձյունեն դեզերու նման զորս գարունը անտեսած է գուցե։

Պզտիկ քառակուսիներուն մեջ գետինը դահանակի շլացուցիչ փողփողումովը կը խայտա, այնքան տարօրինակ կերպով հզոր է դալար բողբոջումը, որուն մեջ երբեմն ծաղիկ մըն ալ, երիցուկը ընդհանրապես, իր խայտուցը կը դնե։

Դրախտի մը մեջ եմ որ, Վիքթոր Հյուկոյի բսածին պես, դժոխք մը կը ծածկե։

Մինակս կը հառաջանամ ուղիներուն մեջ, տեղ տեղ ուռեցվորած հողերը, այս հետադարձ ծոցվորումները դիտելով. ամեն քայլափոխիս տեսարանն ալ կը փոխվի. փողոցները կը տարբերին, մարդիկն ալ հարկավ։

Կյանքի պայքարը, անիրավ կարգն ու սարքը, կացն ու նիստը, ընկերային ամեն վիճերը մեկ բառով, զարմա՜նք, հոս են ամբո՛ղջ, կատարյա՛լ այս մահվան միայնության մեջ։

Հարգի թաղերը գատ են և պռլվառներու հողերը թանկագին. անդին նեղ ճամփան կամ վարուն արահետը և ավելի անդին՝ այն տեղը որ ամենունն է և ոչ ոքինը։ Վերինը, Միջակը և

Ստորինը ուրեմն, զարհուրելի երրորդությունը հոս է նորեն, իր պառակտումներով ու չսպիացող վերքերովը։

Հարուստին և աղքատին մշտնջենական կռիվը այս լուռ-թյան մեջ ալ կը լսվի, մունջ բայց որոշ ու հստակ բողոքով մը։

Կալվածական դրուքյունը, «իմս»ի, «քուկդ»ի տարբերու-թյունը հոս է. անջատումները՝ ավելի կտրուկ, վիհերը՝ ավելի լայն բացված, միությունները՝ անկարելի։

Տեղ մը միայն, ուր ես իմ մասիս պիտի ուզեի հանգչիլ, եղ-բայրակցությունը կատարյալ է և գիրկընդխառնումը ճշմարիտ. հոն ուր լացերը ու սուգերը շեղջակույտերով կը լեցվին, հասա-րակաց փոսին մեջ։

***

Հոս, հոն տերտերներու կը հանդիպիմ, քանի մը այցելու-ներու հետ, որոնք կերթան այս կամ այն գերեզմանին վրա աղոթք մը ըսելու... դրամի փոխարեն. շահավետ օրն է այդ կակիծի օրը։

Ով անոնք որ իրենց սիրելիներուն վրա աղոթք մը ըսել տա-լու դրամ չունին...

Փարիզի մեջ, ամենեն ցնծահույզ և խնդամոլ ոստանը աշ-խարհիս, բոլոր քաղաքն է որ, Մեռելոցի կիրակին, գերեզմա-նատունները կը լեցնեն, ծաղկի դեզերու տակ ծածկելով շիրիմ-ները. այդ օրը Ֆրանսա իր մեռելները միայն մեծարելու նվի-րած է։

Մեր պարապ ու ամայի գերեզմաննոցին ցանցառ այցելու-ներուն կը հետևիմ։ Ցավերու վերհիշումներով սփոփանք փընտ-րող այս մարդիկը կը նմանցնեմ անոնց որոնք խարանի մը կի-զումեն վերքի մը դարմանումը կականկալեն։

Հանկարծ, աչիս մարմարե կիսարձան մը, իր թմբուկած ու անհաճո ծերունիի երեսովը, մանր ու խոնջ աչքերուն մեջ սա-ռած նայվածքովը որ իմինիս վրա կը սևեռի, կը պահանջե որ իրեն նայիմ։ Կը մոտենամ. ազգային վաստակավորի մը, ուէչ բարերարի մը անունը կը փնտրեմ և ծռած, ոսկի վերտառու-

Ձյունը կարդալու համար, կը շտկվիմ սրտմտած ու կռնակս կը դարձնեմ իրեն։ Շուրջիս բոլոր ձյունասպիտակ մարմարնեբուն ու նրբակերտ շիրիմներուն վրա՝ մոռացության միայն արժանի կյանքեր, որոնք, տարօրինա՞կ բան, անուննին անկորուստ պահելու, հոս, վերջին վայրկյանին, չանք չեն խնայած։

Ջախիս՝ մատուռի ձևով շիրիմ մը, որ այր ու կնոջ մը դեմ դեմի դրված պատկերները կը պահպանե. իբրև թե չբավեր այս հեք ամոլին անունը իմանալ, պետք էր երեսնին ալ տեսնել, էրկանր պատվանշանի խաչը ու կնոջ բեհեզե շրջազգեստը զանազանել. միամիտ ու ծիծաղելի համոզում աս էրիկ կնկան համոզումը, զոր սա քարե սրսկապանը կը մարմնացնե։

Եվ այս լիրբ ու անպատկառ անձնազոհություննները ու անձնապահպանումները այնքան կը հաճախեն չորս դիս ահա, որ սիրտս լեցնող զղվանքը շրթունքս կելլե մինչև, և ճշմարիտ ամոթ մը կը համարեմ, կատարյալ անվանարկություն մը, դասակցություն մը հոս՝ այս փառապանծ կոթողներուն քով։

❁❁❁

Եկեղեցին, որ կը պնդե թե գերեզմանատունը իր մասը կը կազմե, պետք չէր թող տալ այս անպատկառ ցուցահանդեսը և զլանալու էր, հանրային սրբավայրի մը մեջ ամենեն անարժանին ըստ կամս հավերժանալու արտոնություն։ Մենք որ ոչինչ ունինք մեր հանրային մարդոց նվիրելիք, շա՞տ է արդյոք եթե գերեզմանի մը պատիվը վերապահեինք իրենց։

Ու բնությունը, մեծագույն եկեղեցին, ինքը կուգա վրեժը լուծել այս վրդովիչ խնդիրներուն ու լրբենի շքեղության, որ վարձով կնկան մը փերևետումին պես կը պարզվի այս գերեզմանատան մեջ։

Հոն, ուր քարե ու մարմարե մահարձանները կը խրոխտան, գարունը բույս մը կը շինե այն ոսկերոտիքին վրա որ անոնց տակ կը ծածկվին, մինչդեռ հասարակաց փոսին ու հողին վրա

լիարուռն կը սփռե կը շռայլե իր ցնծալից ու երփներանգ երիտասարդութիւնը։

Մեկ դին՝ հավերժացումն է կըսեն ոմանք, անէացումն է կըսեմ ես, քարի մը անշարժութեանը մեջ։

Մյուս դին՝ կյանքը իր հարափոփոխ դրվագներովը. Յմեռվան ձյունին ու բուքին տակ փոս մը, այո՛, որ հիմա գարունին հետ կը ծաղկի, կը զարթնու, աչքիս ու սրտիս կը խոսի։

<1898>

ԲԵՌԻՆ ՏԱԿ

Հիմակվան պես միտքս է, ամառվան տաք ցորեկ մըն էր, հալած կապարի պես հրատապ մթնոլորտով մը որ շնչառությունը անկարելի կը դարձներ։

Երեք հոգի, երեք բեռնակիրներ քամակնին ծռած կը հառաջանային քով քովի, համր բայց տոկուն քայլափոխներնուն տակ դղրդեցնելով Ղալաթիո կամուրջին երկաթե լուծքը։

Իրենց կորովի մեջքը կքող, զիրենք կես-մարդերու վերածող բեռերնին չնչին ու աննշան կը թվեին, և զարմացա հեռուեն այս առույգ մարդիկը ընկճված տեսնելով մեյ մեկ փոքրիկ տոպրակի ծանրության տակ։

Մոտեցա. պաշտոնյա մը կընկերանար իրենց և ձախքնուն վրա փակցված ճերմակ մետաղի սկզբնատառեր՝ այս մարդոց՝ Օսմանյան Պանքային բեռնակիրները ըլլալը կը հայտնեին։

Հիմա կը բացատրվեր գաղտնիքը. ոսկվո պարկեր կը փոխադրեին այս բեռնակիրները իրենց ուսերուն վրա, և իսկույն կըմբռնեի տարապայման ծանրությունը այն պզտիկ բեռերուն։

Եվ կամուրջին բոլոր երկայնքին վրա համառ ու աշխատասեր մրջյուններու պես երթևեկողներուն բազմությունը փողոցներուն, հրապարակներուն վրա լեցված բոլոր մարդիկը

հրեակայութեանս առջև եկան՝ մեջքերնին կքած քիչ շատ ամեն քըն ալ, այս երեք բեռնակիրներուն պես, ավելի կամ նվազ ծանր ոսկվո անտեսանելի բեռի մը տակ։

***

Քովես, ուղիղ, կորովի դեռ իր վաթսուն տարիներուն հա կառակ, քրտնաթոր ու շնչասպառ մարդ մը, որ Պոլսո մեծագույն սարաֆն էր թերևս, անցավ, ճերմակ թաշկինակովը սըրբելով իր կնճռոտած ճակատը. հակառակ իր շիտակ ու ամբարտավան քալվածքին, իրոք, զինքը ավելի ընկճված, ավելի նկուն տեսա այն ոսկիներուն բեռին տակ որոնց տերն էր այս ծերունին։

Իր պատանության օրեն երևակայեցի զինքը ծռած, ուսին վրա շալկելով ոսկին, տանելով շարունակ իր կյանքին բոլոր երկայնքը, չհամարձակելով դպիլ երբեք անոր, իբրև թե՝ սա երեք բեռնակիրներուն քովը կեցողին պես՝ ոսկիին վրա հսկող պաշտոնյա մը իր ամեն քայլերուն հետևեր. այսպես, տարիներու հոլովումներով անտրտունջ, թերևս ալ երջանիկ, հասած, եզերած էր գերագույն եզերքը որ ծերության կը կոչվի։

Ագահությունը միշտ ավելի վար, միշտ ավելի ցած իջնցուցած էր այս մարդուն խորխոտ ու բարձրավիզ երևցող գլուխը, և սա գացող երեք համալներեն ավելի գետնամած ու գետնաքարշ՝ անցած դարձած էր միշտ կյանքին ամեն ճամփաներեն։

***

Ու շատ մը անցորդներ ոչ նվազ կորաքամակ էին հարկավ. ոսկվո բեռը, անձկությամբ լեցուն բեռ մը, ամենուն ալ մտքին և հոգվույն մեջ կար, եթե ոչ ուսերնուն վրա։ Եվ անոր ծանրության տակ, այդ սիրտերը ու հոգիները կքեր, ծռեր, բաժնվեր էին իրենց նախնական շիտակությենեն. ոսկին՝ որ մարդիկը բարձրացնելու պետք էր ծառայեր, ընդհակառակը զանոնք կընկճեր, կը խոնարհեցներ և ո՞վ գիտե Ղալաթիո կամուրջին վրայեն անցնող սա երեք բեռնակիրները թերևս խորհրդանշաններն էին նյութապաշտ մարդկության։

<1898>

ԿՈՐՍՎԱԾ ԽՈՍՔԵՐ

Աշտարակիկներով, պարիսպներով շրջապատված անհե-
թեթ ու ամայի ժայռի մը կողին վրա խիզախող եվրոպական
գղյակ մը չէ, որուն լռութիւնը ու միայնութիւնը արհավիրքով
լեցուն կրլլա շարունակ, և որուն շուրջը բնութիւնն ալ ըմբոստ
և անհրապուրը բան մը կունենա, պատված կույսի մը դաժա-
նութիւնը։

Ո՛չ, անանկ չէ շենքը. լայն ու լուսավոր պատուհաններով
վիլլա մը, հինկեկ քիչ մը՝ բայց հանգստավետ կառուցումի մը
բոլոր պայմաններուն մեջ. իր շուրջի ընդարձակ պարտեզը՝
գարավոր ծառերուն ստվերովը, մամուռներուն կանանչ թավի-
շովը, որ կարծես փայփայանքի կոչում կընձ, տունտեղ եղած
թռչուններուն երամովը՝ տարիներ տևող լռումի մը շնորհն ու
ազնվականութիւնը ստացած էր։

Նորութիւն ու պաճուճանք չկա հոն. ամեն բան տարիքը
առած, վրդովումի հեռացածի հով մը ունի։

Իրիկնամուտի ատեն է. հոյակապ անդորրութիւն մը որուն
մեջ կը թաղվի տունը. վերջալույսը չի թափանցեր հոն. այլ գե-
ղեցիկ մազերու վրա ցոլացածի պես, տեղ տեղ, մարող արևին
ճառագայթները կուգան լուսե ադամանդներ գնել հինավուրց
ծառերու սաղարթներուն վրա։

Իրան առջև, ուրկե լայնանիստ մարմարե քիչ մը ներկոտած աստիճաններ պարտեզ կը տանին, փայտե բանափեի մը վրա՝ գեղչկական արդուզարդով, պաթիսթե չփակով ու պատմուճանով, երիտասարդուհի մը, որուն ժպտուն դեմքին վրա երես առած, չարաճճի, գրեթե անառակ աղչկան մը երեվույթը կաւ

Նայվածքը ուշացրիվ և աննպատակ կը սևեռի իր շուրջի ստվերներուն մեջ, աննշմարելի իտեալի մը հետապնդումովը։

Եվ ճիշտ այդ վայրկյանին կոնակը կեցող այր մը, որ տարիքոտ նշանածի մը կը նմանի ինծի, անոր ականջն ի վար բաներ մը կը փսփսա. սիրո, անձնվիրության խոսքեր թերևս։

Աղջիկը գլուխը չի դարձներ ետին նայելու համար թե ո՞վ է այս վրդովիչ բառերը նետողը. սկեպտիկ, դարավերջիկ գեղուհին է ինքը և ոչ այն անփորձ կույսը, որուն հոգին մեկ նայվածքով կը խռովի. ու բոլոր այնքան խնամով մտածված, քաղցր ձայնով մը արտասանված խոսքերը կերթան կը կորսվին, անդարձ ու անօգուտ, իրիկվան մթնշաղին մեջ։

Այս է պատկերը, անգլիացի վարպետե մը ստնված գեղեցիկ վիմագրություն, որ իր ոսկեզօծ շրջանակին մեջ սենյակիս պատին վրա կը տեսնեմ ամեն օր։

Եվ ամեն օր, գրեթե ամեն անգամ, նոր տեսածի պես կը կենամ անոր առջև, կը մտածեմ. այս վերջալույսին շքեղությանը, ու այս երանության միջավայրին վրա կը հիանամ, այս ոչ երիտասարդ սիրահարին թափած լեզվին վրա կը ցավիմ, և աղչկան անփույթ ու անզգա կեցվածքին ծափահարելս կուգա։

Կը լսեմ, ականջովս կը լսեմ գրեթե, սա անխոս պատկերին վրայեն, անուշ խոսքերը որ այս մարմարի պես անխռով աղջկան կուրծքին առանց հաչողելու հասնիլ մինչև անոր միտքը ու հոգին։

Եվ կը հասկնամ վերնագիրը. այս աղվոր ու խորհրդածություններով լեցուն պատկերին վերնագիրը, զոր նկարիչը, իմաստասեր մը կյանքի, այնքան խորին գիտակցությամբ մը դրած է

Կորված խոսքեր

Կորսվա՞ծ խոսքեր. և ատկե զատ բա՞ն մըն է կյանքը միթե. կորսված բոլորն ալ, աղեկն ու գեշը, անուշն ու դառնը, օգտակարը և անօգուտը. միշտ դեմդ՝ սա պատկերին մեջի գեղեցիկ կինը՝ գլուխը քեզի դարձնելու չհոժարող իր վես ամբարտավանության մեջ։

Ակամա կը նմանցնեմ ինքզինքս, հրապարակագիրը, սա տարիքոտ նշանածին որ իր միտքը ու սիրտը ճնշելով, լուծելով՝ է՛ն գեղեցիկ խոսքը, է՛ն աղժոր խորհուրդը, է՛ն շնորհալի ձևը կը մատուցանե ան երես առած աղչկան որ հասարակություն կը կոչվի. մտազբաղ ու անտարբեր հասարակություն որուն ուշադրությունը չեմ գիտեր ո՛ւր կը մոլորի ու կը սևեռի միշտ։

Բայց այս անփույթ կեցվածքը, այդ ուսերը թոթվելն երբոր ամենեն լուրջ ու կարևոր խնդրովը կուզես զինքը զբաղեցնել, իր շահուն, իր բարօրության վրա խոսիլ հետը, չարգիլեր զքեզ՝ իր օգուտին հավիտենական մտածողը, չարգիլեր որ գիշերն ի բուն տքնիս հետևյալ օրը նոր բառ մը բերելու իրեն, ականջն ի վար քաղցրությամբ, նոր խոսք մը, կորսված առջիննեռուն պես։

Իրոք կորսվա՞ծ՝ այն ըսված բոլոր խոսքերը որոնք, եթե չուտով ու դյուրությամբ կարտասանվին, գիտցած ըլլաք որ նույնքան դյուրությամբ չեն պատրաստվիր և ամենեն դժնդակ աշխատությունն են հրապարակագրին համար։

Կորսված, այս ժամուն համար թերևս, բայց ո՛չ բոլորովին։ Երբեմն, անոնք որ ինձի պես երաժշտության համար օտարականներ են, օր մը անհաճ ու անդեպ վայրկյանի մը մեջ, առտուն անկողնեն ելած պահերնուն, օրինակի համար, երգի պզտիկ հատկտուր եղանակ մը կը հիշեն. տղա հասակի մեջ դպրոցը լսված, կամ մեծնալե վերջը, փողոցե մը անցված ատեն, ականջի դպած երգի մը վերհիշումն է. երգ որուն կարծեր էինք չունկնդրել։ Եվ այս վայրկյանիս, հիշողության զարմանալի կարողությամբ մը, ո՛վ գիտե որքան տարի վերջը, առտուվանց կանուխ այդ կտոր բրդուճ եղանակը կը տիրե մտքիդ, հզուր կը փորձես փախչիլ անկե. իր անցյալ բոլոր մոռացու-

մին, լքումին, ատենով իրեն համար ցուցց տրված արհամարհանքին վրեժը կը լուծե և կը պարտավորե զքեզ՝ քիչ տակեն ճշմարիտ հաճույքով մը մրմնչել զինքը։

Հանրության համար հրապարակագրին խոսքերը այս երգի փշրանքին կը նմանին։ Մոռցված խոսքեր։ Քերևս կորսված խոսքեր, երբե՛ք։

«ԱՊՐԻՄ-ՄԵՌՆԻՄ»

Դեղին կոճակ մը մեջտեղը,— աղտոտ դեղին մը որ ինծի համար գույներուն ամենեն վհատեցուցիչն է,— ճերմակ պըզտիկ շեղփերով-պարուրված։ Այս է բոլորը։ Ջոր, կտրուկ ծաղիկ մը որ սովորական ծաղիկներու փափկությունը ու խոնավությունը, գույներու պնապիսությունները, երանգները ու մարելիքները չունի. չունի, մեկ բառով, անոնց բանաստեղծությունը։

Ամեն ծաղիկ, բացի անկե, իր երգիչը ունի, իր հարգված ու մեծարված պարտեզը, ու երբեմն ալ սիրտ մը որուն տրոփումներուն կունկնդրե։ Օրիցուկը՝ զուրկ է ասոնց ամենեն, լերան վրա, դաշտին մեջ, միս մինակը կը բուսնի ան, կոխկրտուքներու մեջեն, ձյունին ու փուքին դեմ, որբի մը մեծնալուն պես չարքաշ փթթումով։

Ոչ մեկ փունջի մեջ կերևա իր դեղին կոճակը, իր շքեղաբեհեն անմահ թերթիկները, որոնք ճերմակ ու կակուղ փուշերու կը նմանին, ամեն խնդությե ու կոչունքե վտարված է ան, ծաղիկներու Վահան վարդապետը, որ անտրտունջ փիլիսոփայությամբ մը կը համակերպի իր լքումին։

Այս տոկունությունը ու այս համակերպությունը վերջ ի վերջո իր սեռը մոռցնել կուտան քեզի. զայն փրցնելու համար ա՛լ նույն զգուշությունը չես ունենար, ինչ որ կունենաս

երբ մեխակ մը, կամ հասմիկ մը քաղես, Բիրտ ձեռքով կը զատես զայն իր ցողունեն, ո՛չ իր տեսքին համար կրնաս ժաքեթիդ լամբակին անցընել, ո՛չ իր հոտին համար քովդ պահել զայն։ Իր ծաղիկի կոչումը ոչինչ է։

Բայց ավանդական հարցուկն է ան զոր տղա տարիրեղ ճանչցած ես, փետրտելով հեք պզտիկ թերթիկները «Ապրիմ-Մեռնիմ»ին, հաճոյակատար քուրմը՝ որ դեմդ կեցած շարունակ «Պիտի ապրիս» պատասխանած է քեզի։

Երիտասարդ, սիրտդ բացած ես իրեն, իրմե հասկնալու համար ճշմարիտը ու ստույգը այն սիրո խոսքերուն զոր պաշտված էակ մը փսփսացած է ականջդ ի վար։

Անկյուն մը քաշված, տենդոտ ձեռքով սկսած ես փետրտուքը, «Կը սիրե զիս, Շատ կը սիրե, Բնավ չի սիրեր»ի անվերջ ու դարձդարձիկ հոլովումը։

Ու չափահաս մարդ, հիմա՛ ալ կակնկալես, գրական ու շոշափելի օգուտը կը փնտրես իրմե, այն միայն զոր կրնա տալ, հաջողության կամ ձախորդության հաշիվներուդ պատասխանը, իբր թե նորօրինակ աղյուսակ մը ըլլար այս պզտի ծաղիկը, ու ակնդետ կը հետևիս «այո»ի «ոչ»ի փոխն ի փոխը անվերջ հակասություններուն, որով իր ողորմուկ պորտին շրջանը կրնես հետզհետե մերկացնելով զայն իր ճերմակ փշփըշանքեն։

***

Աղջիկներ կը ճանչնամ, շնորհազուրկ արարածներ որոնք, սիրո ու ըղձանքի առարկաներ չըլլալնուն համար կարծես, կին համարվելու իրավունքը կորսնցուցած են. այրեր են անոնք որոնց հետ էրիկ մարդ մը ինքզինքը հարկադրված չգգար հետևելու լեզվի կամ վարքի պատշաճություններուն, որոնք պարտավորիչ են կնոջ մը հանդեպ։ Անոր հետ կը խոսի ամեն նյութի վրա բացահայտ կերպով, առանց վերապահումի, առանց կիսավարտ բառերու կամ թերասքող պարբերություններու։

Ամեն վիշտ կրնա պատմվիլ իրենց, անոր համար գուցե որ անոնք վիշտ ունենալու իրավունքը չունին. տեսակ մը բժիշկ են որոնց ամեն հիվանդությունները կը զրուցվին առանց ամո-

թի և առանց դարձվածքի։ Կամ թե քողընկեցիկ կիներ են որոնց կարգ մը մարդիկ կերթան, իրենց սիրո ցավերը բացատրելով, խորհուրդ ու դարման հարցնելու համար։

Ու այդ աղչիկները հոժարակամ կընդունին այս խորհրդատուի, տեսակ մը մխիթարիչի ապերախտ ու վիրավորիչ պաշտոնը, քեզի հետ մեկ կըլլան քու սիրած կնոջդ վրա հիանալու համար, երբոր դուն անոնց զմայլանքին կը ներկայացնես քու կուռքդ, համբելով անոր բոլոր հրապույրները։ Սև սաթե մաղեր, պայծառ ու միանգամայն վրդովիչ նայվածք, հասակ մը արքենի որ շուք կը ձգե իր շուրջը, իր պատմուճանին շքեղությունը, իր ոտքին նուրբ պճեղները որոնք շրջագեստին հանգրիճումեն կը տեսնվին, գուշակել տալով ամենեն շնորհալի պարույրը մարմնական գիծերու։

Եվ անոնք, անխռով, մտիկ կընեն քեզի, իրենց ներսեն ընելով ահավոր բաղդատությունը իրենց ողորմուկ անձին հետ։ Իրենց նկուն մարմինը, ավերակ դեմքը, փոքրիկ ու անլույս աչքերնին, վար թափվող շրջագեստին վրանուն, ասոնք բոլորը կը բաղդատեն քու ցույց տված լուսաշող պատկերիդ հետ, ու արիությունը կուննան, փոխանակ անեծքով մը վռնտելու զքեզ քովերնուն, կարեկցելու քեզի։

***

Մ՛րքան շատ օրինակներ կը հիշեմ այն բիրտ խրոխտության որով մարդ մը՝ ուրիշե մը, սովորաբար ինկած ու ողորմելի էակե մը, չի քաշվիր օգտվելե, շարունակելով հանդերձ զայն արհամարհել։ Իրավունքի մը պես կը պահանջե, կառնե անկե էն չնչին օգուտը զոր անիկա կրնա տալ, ընկճվելով դեմինեն բրտությանը տակ. երևակայեցեք գինի շինող մարդիկ որոնք խաղողը իրենց ոտքին տակ ճզմելով՝ անոր հոգին կը քաշեն կառնեն։

Ու գանգատի գաղափարը իսկ չի գար այդ քամահրված էակին միտքը. իր պարտքը վճարելու պես հեզությամբ կը խոնարհի իր ճակատագրին առջև որ «Ապրիմ-Մեռնիմ»ին ճակատագիրն է։

Ամեն տարիք ու ամեն հասակ պիտի ծոր փրցնելու ու խաղալու փետրտելու համար գայն։ Հետո անոր դեղին ազտոտ ու մերկ կոճակը պիտի մնա միայն, մեջտեղը, գետինը, ոտքի տակ, ասոր կամ անոր գարշապարին տակ ճզմվելու համար, հերատուկ կիներու պես։

Շատ կը հանդիպիմ անոնց, փետրտածներուն, իրենց ճերմակ փշփշանքը կորսնցնողներուն։

Երբեմն էրիկ մարդիկ են անոնք, պատանիներ՝ երազնին թողած, երիտասարդներ՝ իրենց հույսերը լքած, աշխարհ մըտած առջի օրերնուն։

Երբեմն ալ կիներ, կույսեր, որոնք այրերը չի ճանչնալնուն համար կը տառապին, իրենց շնորհները կը թողուն, և արամբիներ որոնք այրերը ճանչցած ըլլալնուն համար իրենց հրապույրներեն կը մերկանան,— բոլորն ալ փետրտած «Ապրիմ-Մեռնիմ»ներ։

***

Ես սիրած եմ միշտ այս «Ապրիմ-Մեռնիմ» անունը։ Կյանքի ու մահվան այս քովքովիութիւնը, այս եզրայրութիւնը սիրած եմ։ Քով քովի, ու թե որ կուզեք, իրարու մեջ անցած, ազնիվ թաշկինակներու անկյունները բանված սկզբնատառերու պես։ Այդ գիրկընդխառնումը, մեկ բառի մեջ ամփոփված, բոլոր աշխարհը չի՞ ձևացներ միթե։ Ըլլալ ու չըլլալու հարցը չէ՞ անոամիկ ու աղետավոր հարցը որ ամեն առարկայի վրա դրոշմված է։

Ամեն անգամ որ կը քաղեմ քեզի, ո՛վ պզտիկ դեղին ծաղիկ, կը հիշեցնես ինծի այն ահավոր մերձավորութիւնը զոր ու անունդ կը կազմե. «Ապրիմ-Մեռնիմ». երբոր ամեն տեղ Կյանքը կը ջանա ըստ կարի խուսափիլ, հեռու կենալ Մահեն, ու վրադ միայն երկուքն ալ իրենց ճշմարիտ ու պատշաճ տեղը կը գտնեն։ Այն քաղաքին պես որ իր գերեզմաններուը իր ծոցին մեջ զետեղած է՝ փոխանակ հեռուն, շատ հեռուն, անտեսանելի անկյուն մը տանել գնելու, գուն ալ Ապրելուդ մեջ Մեռնիլդ պարփակած ես։

<1900>

ԿՈՏՐԵԼԵՆ ԵՏՔԸ

Հարկավ ազնիվ հախճապակի էր այս սուրճի սկահակը իր պզտիկ պնակին մեջ, երբոր նվեր բերին ինծի օր մը։

Տվողը, բարեկամներս մեկը, որուն պզտիկ ծառայություն մը մատուցեր էի, ըսավ թե չնչին բան մըն էր տվածը։

Բայց իր երթալեն վերջը, անուշադիր և հարևանցի աչք մը պտտցուցի վրան։

Ասիկա զատեր էր՝ որպեսզի սուրճս անոր մեջեն խմեմ և միշտ հիշեմ զինքը այդ առիթով։

Թափանցիկ խմորը, իրոք, տեսակին ազնվությունը երևան կը հաներ, և Սեվրի հռչակավոր արվեստարանին նշանը վրան էր, կարմիր պզտիկ բոլորակով մը, որուն մեջ 1844 թվականը կը կարդացվեր։

Բավական ատեն գրասենյակիս փոշիներուն մեջ սպասեց, անկյուն մը դրված· ես, որ արվեստական բաներու կարևորություն կընծայեմ, ասիկա իմ գրասենյակիս մեջ ունենալու փաստասիրությամբ բավականացեր էի սկիզբը· հետո բոլորովին մոռցեր էի զայն։ օր մըն ալ այս սուրճի բմպանակը ծիծաղելի ծվեցավ ինծի իր անօգուտ սպասումին մեջ. խորհեցա որ այս

լքումեն աղեկ էր եթե երբեմն անով սուրճ մը խմվեր. ատի տուն տարի զայն։

Հոն՝ ավելի բախտավոր չեղավ. նյութերն ալ մարդոց կը նմանին քիչ մը. իրենց ճակատագիրն ունին. ոչ ոք երեսը նայեցավ աս խեղճ սկահակին. մեկ հատ մըն էր ու նմանը և օրինակը չկար, որպեսզի օրական գործածության մեջ ընդունվեր։

Պարզ զարդի համար տեղ մը դրինք. քանի մը օր վերջը հոս ու հոն նետվեր էր. անգամ մը պզտիկ զավկիս ձեռքը տեսա. հետը կը խաղար, ու ժամանակ կանցըներ. օրին մեկն ալ ձեռքեն վար ինկավ, կտոր կտոր եղավ։

***

Անցած օր անոր պզտիկ պնակը ձեռքս անցավ. սրտի նեղության մեկ վայրկյանիս, անոր նուրբ գծագրություններն ու գունագեղ կիտվածները կը զննեի. ստուգի՛վ գեղեցիկ արվեստի մը հրաշակերտն էր. գիծերուն շնորհալի ընդելուզումները, նկարին երանգներուն գիրկընդխառնումները ուշագրություն գրավեր էին. հանկարծ իրար փաթթված երկու տառեր նշմարեցի, վրան արքայական զինանշանով. ճիշտ դիմացի կողմը շրջանակին, միևնույն՝ զինանշանը ու միևնույն սկզբնատառերը։

Այս տառերը ֆրանսերեն L և P գիրերն էին, և ահա լույսը իսկույն ծագեցավ մտքիս մեջ. Լուի-Ֆիլիպի կը վերաբերեր այս սուրճի սկահակը իր պնակով. Սեվրի արվեստարանին նշանին քով Ֆոնթենեբլոյի դղյակին անունն ալ կար գրված, զոր հիմա կը նշմարեի։

Ա՛լ տարակույս չկար։ Ֆրանսայի թագավորինն էր ասիկա իր զարդարուն ու նրբակերտ հորինվածքը բավելու էր արդեն, ճանչցողի մը համար, մեկ նայվածքով ճշտելու թե ասիկա սովորական մահկանացուի հատուկ բան մը չէր կրնար ըլլալ։

Եվ հիմա որ կոտրած փշրված էր այդ խեղճ սկահակը, որուն արժեքը չէի կրցած ըմբռնել, երկար տարիներ մնացեր էր քովս, ձեռքիս տակ. հիմա ո՞րքան կը զղջայի ըրածիս վրա.

ո՛րչափ կը կշտամբեի ինքզինքս՝ քիչ մը հոգ և ուշադրություն չդարձնելուս համար արվեստական ու պատմական այսքան թանկագին բան մը հասկնալու և պահպանելուս

***

Այս պզտիկ դեպքը կը թելադրե ինծի կարգ մը խորհրդածություններ, որոնք այս տողերը կարդացողներուն միտքն ալ պիտի գան հարկավ։

Ընդհանուր կանոն մըն է որ մարդիկ իրենց կենդանության մեջ չճանչցվին ու չգնահատվին անոնցմե, որոնց քովն ու մոտը ապրած են շարունակ. մահը, անդարձ կորուստը պետք է գա՝ որպեսզի անաչառ դատաստան մը ու արդար վճիռ մը ընել կարելի ըլլա. գերեզմանին անջրպետը պետք է՝ որպեսզի մեր ակնարկը կարենա ճշտիվ տեսնել գիծերը այն դեմքերուն որոնք անոր մյուս եզերքն անցած են հիմա. անոնց վերադարձին անկարելիության համոզումը պետք է մեզի, որպեսզի կուրցած աչվընիս բացվին ճշմարտության, ու զիջանինք խոստովանելու և հրապարակելու անոնց առավելությունները՝ որոնց վրա անգիտակցաբար գուցե չզչարեինք, ցորչափ կենդանի էին անոնք։

Կը խորհիմ որ բարեկամությունները, անձնվիրություններն ալ ասանկ են շատ անգամ. ոչ ոք ամենադույզն արժեք մը կուտա այն սրտերուն, որոնք հոժարափույթ ու լուռ հավատարմությամբ իրեն կսպասեն. ու հարկ է որ այդ սիրտերը խորտակվին, որպեսզի կորուստին մեծությունը կարելի ըլլա զգալ և չափել։

Այսպես պատահեցավ իմ սուրճի սկահակիս համար ալ. ես զայն ճանչցա... կոտրելեն ետքը։

ԳԻՐԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԵՆ

Պոլիս բնակող ֆրանսացի մեկ բարեկամս, որ այս պատերազմի դաշտին վրա կը գտնվի, ատեն ատեն քանի մը տող գիր կը ղրկե ինծի։ Բան մը չըսեր պատերազմական գործողութեանց մասին՝ որոնց վրա ոևէ տեղեկութիւն տալը արգիլված է. իր խորհրդածութիւնները կը հաղորդե ինծի ներկա պատերազմին առթիվ. անոր սկզբնապատճառներուն. վերջնական հաղթութեան որ կողմին մնալուն և հառաջ գալիք հետևութիւններուն մասին կարծիքներ կը հայտնե, գուշակութիւններ ալ կընե, որոնք շատ անգամ շահեկան են։

Այս նամակներուն մեջ կանոնավորութիւն և կապակցութիւն պետք չէ փնտրել։ Մինչև անգամ տեղ տեղ հակասութիւններ ալ կրնան տեսնվիլ, որոնց աչք գոցելու է։ Այս վերապահութեամբ այդ գիրերը Ազատամարտի ընթերցողներուն պիտի ներկայացնեմ հետզհետե։

Ա. ՆԱՄԱԿ

Ջորեքշաբթի օր մը մեկնեցանք Կոստանդնուպոլսեն ուր Պիզանոն ու Սթամպուլը գիրկընդխառն կապրին հինգ դարե ի վեր։ Արևելքն է ան. միշտ պայծառափայլ, երբեմն արյունաներկ,

Ոս դեպի Արևմուտք կերթամ. կարմրցող, զարհուրելի կերպով կարմրցող Արևմուտք մը։

Ճամփորդության բոլոր տևողության միջոցին՝ լավ մը դիտեցի սա Միջերկրականը, որուն վրա գերմանական ակնկալությունները կը թռվռան. խորհեցա որ այս ծովին տիրապետումն է այսօրվան պատերազմին սկզբնապատճառներեն մին։ Միտքս չելլեր Վիլհելմ Բ-ի խրոխտ dictonը,

Իմ կայսրությունս ծովերու վրա է։

Ան՝ որ առարկան է այս ըղձանքներուն՝ անգիտակից կը թվի իր ճակատագրին համար ծրագրված խորհուրդներուն, իր նվաճումին համար թափվելու պատրաստ արյունին։ Ան կը շարունակե իր կապույտ բեհեզի գգվանքովը և շոգենավնուս կուրծքն ու պարանոցը զարդարող սպիտակ փրփուրե ժանյակովը մեր աչքերն հմայել։

Բ. ՆԱՄԱԿ

Կազմ և պատրաստ կեցեր եմ. համազգեստս հագած, հրացանը ձեռքս, պայուսակը ուսիս։ Թե որ զիս տեսնես՝ չպիտի ճանչնաս։ Եվ ի՞նչ է պատերազմը՝ եթե ոչ անճանաչելի դառնալը մարդուս։

Ասանկ ժամու մեջ է՞որ հանկարծ մարմին կառնե, շոշափելի կըլլա խորհրդավոր և անտեսանելի թելը որ մարդս դաբերու հոլովումին երկայնությամբը իր ցեղին իր հոգին կը կապե։ Այս պահուս ես դադրած եմ առանձին գոյություն ունենալե. իմ ազգիս հոգին է որ կապրի իմ ներսս. որչափ որ տևե պատերազմը՝ ես անով պիտի ապրիմ, պիտի տառապիմ կամ պիտի հրճվիմ։

Ասանկ վայրկյաններու մեջ է նաև որ մարդուս տեսությունը ամեն արգելքները կը թափանցե, տեսակ մը ոեոնթկենյան ճառագայթ՝ որ բոլոր թանձրություններեն կանցնի, հեռուն, շատ հեռուն կը տեսնե... Ստուգություններ։

Առաջինը՝ որ պայծառապես կը ցոլա աչքիս առջև, այն՝ որ մղվելիք երկար ճակատամարտներու վրայեն կը գծագրվի գեմս, հորիզոնին վրա՝ Միլիթարիզմի բնաջնջումն է Եվրոպա-

յեն։ Միլիթարիզմի անհետացումը տեսնել, ընդհանրութեան ծո-
խին և մուխին մեջ՝ ի՞նչ հակասություն։

Գ. ՆԱՄԱԿ

Այսօր առաջին անգամ լսեցի որոտալիր և դաշն երաժշտու-
թյունը թնդանոթներուն. թեթև սարսուռ մը վազանցուկ ու տա-
կավ վարժությունը որ Անզգայության դրացի է։ Թե որ այս ե-
քաջությունը՝ ես ունիմ զայն։

Թշնամին անտես է մեր աչքերեն։ Դիմացի սարերուն վրա
մուխի գիծ մը և՝ իսկույն գնդակներու սուլումը մեր չորս դին։
Հոն են գերմանները. ի՞նչ ընելու եկեր են այս մարդիկը մեր
երկրին վրա. այն վայրկյանին որ հրացանս կուզեմ անոնց
կողմը, այս մտածումը միտքս կը լլկե. տարօրինակ կը գտնեմ
փափագս սպաննելու մարդիկ զոր չեմ ճանչնար։ Ով սակայն
այս է իմ պարտքս այս ժամուս։ Սպաննել՝ չսպաննվելու հա-
մար։ Բոլոր ազգությունները ասոր մեջ կը փնտռեն արդարա-
ցումին։ Ինքնապաշտպանություն. ահավասի՛կ մեծ բառ
բնազդական բառը. վա՜յ անոր որ կանգիտե զայն։

Թշնամին իր հրետանիին և այրուձիին գերազանցության
կը վստահի։ Գերազանցությո՞ւն, ահավասիկ ուրիշ բառ ու
հակատագրական արշավի մը հրավերն է, մշտնջենական կո-
մը դեպի ուժը։

Ով գերմաններուն հանճնապաստանությանը վրա կը ժրպ-
տիմ, ի՞նչ է անոնց ուժը մերինին քով. մեր ուժը մեր իրավուն-
քին մեջն է։

Դ. ՆԱՄԱԿ

Առտուն կանուխ մեր գումարտակը ոտքի վրա է, գիշերը ես
մղեցինք թշնամին որ մութեն օգտվելով մեր գիծերուն վրա
հարձակեր էր։ խավարը՝ ահավասիկ մեծ զինակիցը պատե-
րազմի մեջ։

Հիմա պիտի հառաջանանք. բայց նախ մեռելները պիտի
թաղենք։ Ամեն օր նոր գերեզմաններ մը ունինք. այսօրվանր

թեթև զառիվայր՝ առջևիս կը տարածվի, տեղ տեղ ուղղագիծ բարտիներով վարագուրված. այստեղ կովեցանք գիշերը. պըզտիկ վայրի մանիշակներ իրենց ցողաթուրմ լանջքը բացեր են։ Այստեղ կը քնանան անոնք որոնք մեյ մըն ալ չպիտի արթննան. բարտիներու մեղմ սոսափյունը անոնց հավերժական քունը պիտի օրորե։

Երիտասարդներ բոլորն ալ. անոնց դեմքին վրա աներևութացեր է ատելությունը որով իրարու դեմ խոյացեր էին։ Քով քովի, եղբայրական քունով մը կը քնանան թշնամիները և երկուստեք թափված արյունի առուներեն մեկ վտակ մը միայն կաացեր է որ անշշուկ կը հոսի ահավասիկ։

Համլեթի մեռելաթաղին պես ամեն դիակի առջև իմ մտատումներս ունիմ. ի՞նչ պատկեր. ուշլան մը իր պրկված ձեռքին մեջ սեղմեր է լուսանկար մը որ իր մորը ըլլալ կը թվի. ուրիշ մը՝ թևը գլխուն բարձ ըրած՝ երկնցեր է, անփույթ կարծես ուրջը անցած դարձածին. սա զինվորը երկինքը կը դիտե իր մեծաբաց անլուս աչքովը։

Մերինները մեկ կողմ, թշնամին մյուս կողմ հավաքեցինք «ե երկու մեծ փոսերուն մեջ լնցուցինք զիրենք։ Կյանքի մեյ ռեմ առ դեմ՝ մահվան մեջ ալ անանկ մնացին։

Ե. ՆԱՄԱԿ

Որքան ճշմարիտ է Պահանջի և Մատուցումի օրենքը. ուրիշ Հատեն հազվագյուտ են անձնազոհողությունները կամ վտանգի արհամարհանքը. կը հիանանք անոնց վրա. մեծ վարձատրությունները արժանի կը դատենք գանոնք։ Հիմա ամենօրյա ու սովորական բաներ են որոնց վրա նայող չկա, այն չքնաղ ու ծանկագին ծաղիկներուն նման որոնք չերմոցներուն մեջ անհուն հոգածությամբ կը պահպանվին և իրենց տեղույն վրա, այրեցյալ գոտիի տենդոտ բուսականության մեջ՝ արժեքնին կը կորսնցնեն։ Զարմանալի չե՞ս գտներ որ բոլոր բարբարոս անազդները արթնցնող Պատերազմը միևնույն ատեն բոլոր վեհանձն զգացումներու ասանկ ճոխ հունձք մը պարգևե մեզի. ի՞նչ ընդդիմամարտ հավաքածո մըն է ասիկա։ Այսպիսի խոր-

հրդեհածութիւններ կը պաշարեն միտքս. կամքս ալ էր հեռացնել զանոնք ինձ. ամեն քայլափոխիս կը հետևին ինծի իրրև ավելի հավատարիմ ընկեր քան այն հրացանը որ ուսիս վրա կը կրեմ։

Լիբժեն լուր չունինք. իր դյուցազնական դիմադրութիւնը ընկճեցա՞վ արդյոք Շնամի ուժերու գերազանցութեան տակ։ Ասպետական վահանը զոր Պելճիքան բարձրացուց մեր Շնամիին դեմ։ Լիբժ, հրեղեն ու բոցավառ անուն որ մշտնջենապես պիտի լուսավորե աղջամուղջը որուն մեջ խորասուզված կը թվի մարդկային խղճմտանքն ու Գիտակցութիւնը։

Ջ. ՆԱՄԱԿ

Հաճախ ճամփորդած եմ Գերմանիա, անոր լեզուն կը խոսիմ, անոր մեծ մատենագիրները ծանոթ են ինծի, անոր գիտական բարձրութեանը և ճարտարարվեստի հրաշագործութեանցը վրա սքանչացող մըն եմ անվերապահ։

Այլամերժ և կույր հայրենասիրութեան պես ծիծաղելի ոչինչ կա նույնիսկ պատերազմի պահուն։ Այս նախաբանը ըրի քեզի հասկցնելու համար որ անկողմնակալ ոգիով մը կը դատեմ Նղելութիւնները։

Գերմանական սպառազինութիւնը կես դար տնտեսապես ընչելե ետքը Եվրոպան՝ զայն վերջնապես ընկճելու համար սպարեզ իջավ այսօր, զուր ջանք սակայն, Եվրոպան և ոչ մեկ ազգի տիրապետութիւնը կրնդունի. ազգերը գերի վարելու, աշխարհակալութիւն ընելու դարը իսպառ վերջացած է։ Գերմանիա կը հայտարարե որ զինքը երկաթե շրջանակի մը մեջ բանտարկելու համար թափված ճիգերուն, վաղվան վտանգին դեմ իր սուրը մերկացավ։ Ճշմարտութիւն կա ասոր մեջ, ոչ ամբողջ ճշմարտութիւնը։ Նղելութեան մը պատճառը գտնել, դժվար աշխատութիւն. վերացական միտք մը մեթոդավոր դրդիչը ցույց պիտի տար Սերայովայի ոճիրը. վերլուծիչ միտք մը հնարավոր պատճառը պիտի որոներ, մակերևույթին դեպի խորը պիտի թափանցեր։ Փիլիսոփաները հատորներ գրած են պատճառը և սկզբնապատճառը իրարմե զանազանելու համար։

Պատերազմի հայտարարութենեն շատ առաջ Գերմանիան պայքարի մեջ էր իր հիմակվա հակառակորդներուն հետ։ Ֆրանսայի դեմ՝ ցեղային անհաշտություն և Ալզաս Լոռենի չպիտացած վերքը. Մեծն Բրիտանիո դեմ՝ առևտրական և ճարտարարվեստական կռիվը իր բոլոր սաստկությանը մեջ. այս կռվին մեջ հաղթությունը Գերմանիո կողմն էր։

Պալքանյան պատերազմը, տարիներե ի վեր մղված պայքարը սաստկացուց հոն ստեղծված նոր վիճակը իրերուն, իր անդամատված ձևին մեջ իսկ, դարձյալ թումբ մըն էր գերմանական տարածումին դեմ դեպի հարավ. գերման հեղեղը այս թումբը տապալելուն հետ մեկտեղ մյուս դարավոր վեճերն ալ լուծելու կը ձգտի։ Աննահանջելի հարկ. այսպես նկատեցին գերմանները։

— Ուշադրություն, կը գոչե տասնապետս, թշնամին դեմերնիս է։ Գնդակներուն սուլումը ընդհատեց խորհրդածություններս։

Է. ՆԱՄԱԿ

Հեղեղը արձակվեցավ խուժեց, իր ամեհի թափին տակ լիեժը և Նամյուրը, Մանոնվիլիեն և Մոպեոժը իննկան. մեր բանակները նահանջեցին առանց խուճապի սակայն, Շարլռուային մինչև Լաֆեռ. թշնամին Փարիզի դուռները հասավ. ամեն բան կորսված... կը թվի, թերևս է։

Գնշ լուրերը կայծակի արագությամբ կուգան. բայց, տարօրինակ երևույթ, փոխանակ զմեզ վհատեցնելու, ընդհակառակը, բոլորովին անդառնալի կը դարձնեն որոշումնիս՝ բնաջինջ ըլլալու իսպառ քան թե թշնամիին առջև խոնարհելու։ Վերջին օրն է Ֆրանսայի, թող այնպես ըլլա, մենք վճռած ենք ժեռնելու։

Մեր կողմը ճակատամարտը սովորական կռիվը չէ, այլ վայրագորեն և գազանային գիշատումը զենքով, եղունգներով, ակռաներով։ Գերման հառաչխաղացությունը ոչ միայն չի թուլցուց մեր դիմադրությունը, այլ ավելի զայրացուց զայն, ուժգնությունն տվավ անոր։

Սովորական պատերազմը՝ ըստ միջազգային իրավագիտության՝ վախճան մը չէ, այլ միջոց՝ հակառակորդ կողմին ընդունել տալու որոշ պահանջներ, այս անգամ բուն իսկ վախճանը ըլլալ կը թվի, դիմացինը փճացնելու վախճանը։

Այս խորունկ համոզումով է որ գուցե ֆրանսական նկատագրին այս ճակատագրային ժամուն արմատական փոփոխություն մը կը կրե, իր շատզրուց ու քիչ մը անհարիր հանգամանքը կը մերկանա, բանե մը միայն չէ հրաժարեր՝ զվարթութենեն։ Զվարթությո՞ւն մահվան դեմը. հարկավ, կինը միշտ վայելչությամբ, այրը՝ միշտ ժպտելով մնալու են մինչև վերին վայրկյանը։

Ը. ՆԱՄԱԿ

Թումբ մը կանգնեցինք մեր կուրծքերեն, ավելի տոկուն քան թե բոլոր զրահապատ ամրոցները աշխարհիս. ֆրանսական բանակը իր լայն և խրոխտ ճակատը հանեց հեղեղին դեմ։

Մեր թշնամիին հաչողությունը տեսնելով, տեսնելով անոր նորահնար զենքերը, պատրաստվեր էի ըսելու՝ ամենեն ուժով ազգը ան է որ մեծ թիվով ճարտարագետներ ingénieurներ ունի, չարավերջիկ սահման զորության, և հիմա կըսեմ ամենեն ուժով ազգը այն է որ մահվընե չի վախնար։

Ճակատամարտը հոս կամ հոն չէ, ամեն տեղ է. երկու բանակները, մարդկային կրկին շղթաներ, դեմ առ դեմ, գրեթե զուգահեռական գիծով կը գալարին վերեն վար հաշված շարժումներով, համենալով, նահանջելով, կասելով երբեմն և երբեմն նոր թափով մը նետվելով հառաջ։

Գիրկ գիրկի կուվ, կուրծք կուրծքի, թև թևի, ոտք ոտքի անցած, հողին վրա գետինը տապլտկվող երկու ըմբիշներ, պահ մը մին՝ ընկճվելու մոտ... երբ հանկարծ անակնկալ շարժումով մը ոչ միայն ինքզինքը կը փրկե, այլ հակառակորդը նեղը կը գնե։ Հանդիսատեսները այս տիտանյան պայքարին կը հետեվին ավելի սրտատրոփ քան թե բուն ինքն պատերազմիկները։ Հև ի հև պայքար որ հազիվ պիտի կրնար քանի մը ժամ տևե,

և որ գերմարդկային, անհունապես գերմարդկային ճիգով մը չաբաթե մը ի վեր կը շարունակվի։

Հեղեղը ետ դարձավ, եկած ճամփեն դարձավ ոչ բոլորովին մինչև իր եկած տեղը։ Մառնի ճակատամարտը պիտի կոչվի այս թումբը՝ պատմության մեջ։ Իմ գումարտակս նվազեցավ. որչափ պարապ տեղեր մեր շարքերուն մեջ։ Երեկ ինկած ճիշտ քովիկս, Ժոռժ Լրպռեռն, երիտասարդ օրագրող մը որ հոս ճանչցա, շուտով բարեկամացեր էինք, աշխույժ, խոսուն, զվարթ. զվա՜րթ մեռելները խնդացնելու չափ։ Անգլիական գաստիարակության չերմ սիրահար մը, Տեմոլենի գիրքե՝ Անգլո-Սաքսոններու գերազանցության պատճառները՝ խորունկ ներգործություն ըրած էր իր վրան. իր տպանը մեջ՝ ամեն բան անգլիական էր, իր զավակը, յոթը տարեկան մանչ մը Ֆրանսերենի չափ կը խոսեր անգլիերենը։ Զորակոչին՝ երբոր բաժնը. վելու վայրկյանը եկավ, իր ճիտը պլլվեցավ ան, երեսները համբուրեց և պզտիկ խեղճուկ ձայնով մը ըսավ.

— Good by!

Ջարնվելեն ժամ մը առաջ գուցե տասներորդ անգամը լալով պատմեց ինծի այս բաժանման պատմությունը։

Տեսարանը գծագրված է աչքիս առջև և անդին չերթար։ Եվ հիմա բարեկամիս անշունչ մարմնին վրա անոր ճիտը պլլված, երկու պզտիկ բազուկները կը նշմարեմ և մանկական ձայն մը որ անոր ականջեն կը փսփսա.

— Good by!

Թ. ՆԱՄԱԿ

Դիտված է թե պատերազմը, որ մարդկությունը բնաջինջ ընելու կաշխատի, գրականությունը կը ծաղկեցնե, հաստատելով անգամ մը ևս այն օրենքը որուն համեմատ ամեն վնաս իր օգուտը ունի։

«Հաղթություն» բառը ամենուս գիտցած մեկ բառն էր, անոր նշանակությունը պայծառ էր՝ մանավանդ զայն ձեռք բերող կողմին համար։ Անոր վրա վերջերս ավելցավ «բարոյական հաղթությունը» Moralischer Sieg զոր ավստրիացիները հնա-

ցեցին՝ բնորոշելու համար իրենց պարտությունը Կալիցիո մնչ. Լեմպերկի կորուստովը արձանագրված։ Ավստրիացիները այս Հակատամարտներուն մեջ իրենց ցույց տված քաջությունը և գիմադրությունը՝ ռուսական առավելակշիռ ուժերու դեմ՝ այս նոր բացատրությունով հավերժացուցին. իրապես պարտված բարոյապես հաղթող հռչակեցին ինքզինքնին. նոր վիճակ մը ստեղծվեցավ, մինչև ցարդ մեկ կողմը կը հաղթեր և մյուս կողմը կը պարտվեր. նոր բաշատրությամբ երկու կողմն ալ հաղթող կրնար հանդիսանալ։ Ոչ ոք ընդդիմություն ցուցուց այս նորության դեմ։ Անոր վրա Մեծն Բրիտանիան ավելցուց «վերջնակակ հաղթությունը», Final Victory, որուն կը հավատան ամեն անոնք որոնք բիրտ ուժին վերևը քաղաքակրթական ուժ մը գոյությանը համոզված են։ Նափոլեոն, որ հաղթություններու ամենեն առատ հունձքը քաղած ըլլալուն կրնար պարծենալ, «վերջնական հաղթություն»ը չունեցավ։ Պատերազմի բախտը երբեմն կը նմանի այն պչրասեր կանանց, որոնք շատ մը վաղանցուկ հպումները, նույնիսկ մերկացումները կը թույլատրեն՝ բայց տևական կենակցության չեն հոժարիր։

Կան նաև՝ կատարյալ հաղթությունը, այն՝ ուր պարտվողը բոլորովին անձնատուր կըլլա, և Անկատարը՝ ուր պարտվողը զենքը ձեռքը կը կենա, հաղթողին հոգնութենեն օգտվելով՝ հաշտության ամեն մեկ պայմանին վրա կը վիճի, կարևոր զիջումներ ձեռք կը բերե և իսկույն երկրորդ պատերազմի մը կր պատրաստվի լռելյայն։

Ո՞րն է վերապահված մեզի։

Ժ. ՆԱՄԱԿ

Գերմանիան կը զարթնու հոյակապ ու շքեղ երազեն որ քաւասունըչորս տարի տևեց անընդհատ, կը զարթնու միահեծան տիրապետութենեն որով ճնշեց բովանդակ Եվրոպան... ինքզինքը գտնելու համար այս պահուս պատերազմի դաշտին վրա միս մինակը։ Վալքիւրիներե առաջնորդված մարտիկներու եռաթռ՝ Հազար-և մեկ Գիշերներու պատմությանց վերջավորությունովը պսակված։ Ինծի համար պատերազմը վերջացած է,

լմնցած է այն վայրկյանեն ուր աշխարհք հասու եղավ վեճին իսկութեան։ Կռիվ չունինք ազգի մը դեմ որուն անժխտելի մեծութեանն ու զորութեանը վրա կը հիանանք. մենք կը մարտընչինք լոկ մտայնութեան մը դեմ որ կըսե՝ Իրավունքը հզորագունին։ Տարվին կենդանաբանական աշխարհին համար սահմանած էր այն օրենքը որով ապրելու իրավունքը ամենեն ընդունակին, le plus apte à vivre միայն կը շնորհվեր։ Սփենսըր կը ջանար մարդկային ընկերութեան պատշաճեցնել զայն։ Ո՞վ է մարդոց և ազգերուն մեջ ամենեն ընդունակն ապրելու. այս հարցը գործնականապես ճշտելու համար հռչակվեցավ պատերազմը, ճշտելու համար թե ո՞վ է հզորագույնը։ Մենք կը պատասխաննենք՝ Իրավունքը տկարագունին։ Ահա երկու անհաշտ, մշտնջենապես, խորապես անհաշտ գաղափարները որոնք ասպարեզ իջած են այսօր. դավանանքի կռիվ, անողոք՝ նույնատեսակ բոլոր կռիվներուն պես։

Մարդ մը՝ ձեռքը իր սուրի երախակալին՝ հրավեր կը կարդա, իր իրավունքին, անվիճելի իրավունքին վրա կը ճառե. ո՛վ չունի միթե անվիճելի իրավունք մը. ան միայն իրենին խոսքը կընե. այդ իրավունքը մեծ է, խիստ մեծ. վա՛յ անխոհեմին որ պզտիկ դիմադրություն մը պիտի փորձեր։ Այդ սարսափը այսօր գոյություն չունի. խպլիկին վախը փարատած է այլևս, և չունչ մը, երկա՛ր, աղվո՛ր, ազա՛տ, բոլոր աշխարհքի կուրծքեն դուրս կը թռչի միահաղույն։

ԺԱ. ՆԱՄԱԿ

Գյուղը մոտիկնիս է, հերկված, հարդարված հողերով. անդին թարմ կանաչություն մը որու վրա ակնարկը կը հանգչի. այստեղ ոչխարներու երամակ մը ցնծության մեջ, հանկարծ գերմանական հրետանին կը գոռա, մահ կը սփռե ամեն կողմ, մերինը կը պատասխանե, լեռնե լեռ կերկարի արձագանքը որոտումներուն. նախաբանն է աս. հետո գնդակներու տուլումը, օդին մեջ թռչող անհամար օձերու վազքը. կրակե անձրև որուն շռափնելներու կարկուտը կը խառնվի. նորօրինակ հրախաղություն է այս. հետո գրոհը՝ աչեն ձախեն, դեմեն, քովեն,

մեր վրա խոյացող թշնամվույն. սվիններու կռիվը արյունաթրթու. հետզհետե կիյնան մերիններըը, գետինը կը ծածկվի և սակայն ոչ իսկ փոքրիկ տրտունջ մը կը խառնվի մոլեգին երաժշտության պատերազմին. ոչ ոք պիտի թուլլ տար ինքզինքին այս տկարության նշանը թշնամվույն առջև. մեր վաշտը նահանջեց թողլով պզտիկ բլուրը ուր կեցեր էինք. հրաման մեզի երթալու կրակին դեմ. առաջ կը նետվինք առանց վարանելու. արբած խելակորույս մարդու արշավն է մերինը. վերագրավեցինք մեր բլուրը. նորեն ձեռքե հանեցինք, վերստացանք. վեց ժամե ի վեր կը կռվինք շարունակ։

Մեր շուրջը ոչ տուն, ոչ տնակ այլևս, ոչ ցանք, ոչ մշակություն, ոչ ծառ, ոչ բույս, համատարած լռություն մը. ամեն բան քար ու քանդ, տակնուվրա, դիակնե՜ր, դիակնե՜ր, դիակնե՜ր մարդոց, կենդանիներու՝ խառնիխուռն, հողը պատառ պատառ հոշոտված և այս անէացումին վրա՝ ծուխեր մուխեր, որ ծուլորեն կը բարձրանան տեղ տեղ պզտիկ ամպերու պես հոսայրող ջաղացքի մը վրայեն, հոն՝ գյուղին կիսակործան տանիքներեն։

ԾԲ. ՆԱՄԱԿ

Իրավունք ունի՞մ իմ անձիս վրա խոսելու. կերևի թե դյուցազնություն մը ըրած եմ անցյալ օրվան պատերազմին մեջ, այսպես կըսեն մեծերս որոնք անունս կը հիշատակեն բանակին օրակարգին ordre de jourի մեջ. միտքս է, այո՛, որ մեր նահանջի ժամուն ետ դարձա մինակս, թշնամիին կրակին տակ պառկող վիրավոր ընկերներեն մին շալկեցի ու մեր կողմէ թերի, հետո երկրորդ մը, երրորդ մըն ալ, անփույթ վրաս տեղացող գնդակներուն. ա՞յս է դյուցազնական արարքը, մահը՝ երբոր մարդուս շուրջը կը հածի կը բազմապատկվի կը բյուրապատկվի՝ կը դադրի սարսափ ազդելե, անվնաս կը դառնա, կատակի կը վերածվի, այսպես հաջողեցա ես կտրիճի համբավ շահելու։

Մի մոռնար, սիրելի՛ս, այսուհետև ինծի գրելիք թուղթերուդ մեջ դյուցազնի մը մատուցվելիք հարգանքը։

<1914>

ՀԱՏՎԱԾՆԵՐ

Ջամմաճիեանու կողմը, ճիմա գրեթե լքված խանի մը մեկ սենյակը. կաճ կարասի չի կա. գետինը մերկ ու ողորկ քարե. ցուրտ կրնե այս սենյակիճ մեջ. պատուճաճ չունի, բացի բակին վրա նայող պզտիկ լուսամուտե մը զոր երկաթե ճաստ ձողեր կը խաչածևեն. գողերու այցելության չենթարկվելու համար պատրաստ ապահովագույն քարայրը:

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ ԱՋՐՔԿՅՈՋՅԱՆ, անվանի սեղանավոր մը. իր սև ֆասոնե փալթոյին օձիքը ու քևերը կը փայլին ոչ թե յուղե, այլ չափազանց գործածումով բոլոր խավը թափած ըլլալուն. հաստ, տոկուն մարդ մը, գրեթե պրզոտիկ եղբայրը սա երկաթե անդղրդվելի ճացային որ այս սենյակին խորը սե տիտանի մը պես կը կենա. աչքը ակնոց դրած նամակ մը կը կարդա բարձր ձայնով:

• ՊԱՐՈՆ ԹՈՎՄԱՍ, իր գրագիրը. նիհար, ոսկրուտ մարդ մը. կես դարե ի վեր աշխատավոր մը այս ապերախտ վաստակին մեջ փճացած, ապուշ դարձած էակ մը. իր ամսականը երեսուն տարի առաջ 300 դրուշ էր, հիմա 400 կստանա. փոհ է. իր տիրոջը վրա կը զմայլի, կը հիանա, ինչպես որ մեկը կը հիանա միակտուր ապառաժե զանգվածի մը վրա: Գևորգ աղան խորհրդանկան նախանձելի պաշտոնը տված է անոր. բարոյական փոհացում՝ որու մասին սեղանավորը միշտ առատաձեռն եղած է:

Գևորգ աղան կարդալով. «Ես Կարրերդի Բեքմեզյան Մանուկ աղային՝ ձեր վաղեմի բարեկամին որդին եմ. վերջին տարիներու պատահած առևտրական ձախորդություններեն փճացանք. հայրս իր մեռած վայրկյանին ձեր անունը կուտար, իբրև իր միակ բարեները հավատարիմ բարեկամին, մեր ազգին

Ի պատվավոր հարուստներին։ Անոք, անօգնական, երկիրես ուզակի ձեռ տոքը եկա ապաշտանելու. պզտիկ նախնական կրթարան մը առած եմ, ու ամեն ծառայության պատրաստ կը գտնվիմ։

Գևորգ աղան գիության ու կարեկցության անկեղծ շարժումով մը երկու ձեռքերը կը բռնա ու նամակը գետին կիյնա։

— Ի՛նչ խեղճություն, տեր աստված. այս մա՛րդն ալ կործանեցավ. մտածե՛ հեղ մը, պ. Թովմաս, Բեքմեզ օղլու Մանուկ աղան, 40 տարվան բարեկամ մը. հարուստ, ճարպիկ, խնայող մարդ մը. այնչափ մեծ գործեր ըրած ենք հետը։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Ի՞նչպես չեմ գիտեր, վերջին անգամ աֆիոնի գործ ըրինք, միտքս է. աղեկ շահ եղավ։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ո՞ւր են ան գործերը հիմա. ան ատենի մարդիկը խոսքերնուն տերը և պարտքերնուն գերին էին. հիմա առավ փախավ ամենքը. գործ ընելու հնար չի կա։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Ա՛լ ծերացաք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ (բարկանալով).—Դուն ալ այդ ապուշ խոսքին վարժվեր ես. մարդ մինչև իր մահը աշխատելու է. այս է իմ համոզումս. մինչև մահը, հասկցա՞ր. հանգիստը մեռելներուն համար է ու, քե որ կարելի ըլլա, քալելով, իր ոտքովը մինչև գերեզման երթալու է։

Պ. ԹՈՎՄԱՍ (շողոքորթությամբ պզտիկ մը դիմադրելով).—Բայց մեղք եք...

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ (կտրուկ).—Ծուլությունն է մեղքը։ Սա տղուն խորհինք քիչ մը, նայինք ի՛նչ կը մտածես կոր դուն. ես այս տղուն օգնեմ պիտի, տեսնենք ինչ կրնանք ընել. հորը խաթրը կա. իր երեսեն վաստկած ստակնիս կա. երեսի վրա չենք կրնար ձգել այս տղան։ Խոսի՛ տեսնեմ։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Քիչ մը ստակ տալու է. քանի մը ոսկի ասանք, վրան գլուխը մաքրենք, հագվեցնենք, հետո, դպրոց դնենք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ստակը ի՞նչ է ատ հասակի տղուն։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Մենք մեր ձեռքովը հոգանք ծախքերը։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Մարդը գործ կուզե, դուն ստակ տալու կելլես։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Դպրոց չի դնե՞նք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Գործ ըսինք քեզի. էշու չափ մարդ է եղեր, դպրոցը ի՞նչ պիտի ընե։

Պ. ԹՈՎՄԱՍ (համոզված).—Ճշմարիտ է, պէխերը բուսնելու վրա են, գործի դնենք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Հայրը ճանչնայիր քե որ մոտեն, ի՛նչ մարդ էր, իր քաղքին է՛ն առաջին վաճառականներեն մեկն էր, է՛ն հյուրընկալ մարդը։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Ադեկ գործի մը դնենք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Հայրը գերեզմանեն ելլա նե մեզի աֆերիմ ըսելու է։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Գրագրության տանք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Որպեսզի ան ալ քեզի պես ապուշնա, երիտասարդ տղա է, աշխույժի, կորովի գործ մը մտածե։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Դուրսը եղած առնելիքներնիս գանձելու խրկենք։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Հիմա՞ր ես ինչ ես, դեռ չճանչցած մեկու մը ինչպես կրնանք դրամ վստահիլ. հայրն ալ ողջ չէ որ... ո՛չ, ատ ալ չըլլար. սկսելու համար, սանկ առժամանակյա բան մը, նայինք ինչ կը գտնես։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Ձեր կալվածներուն շինությանը վերակացուն ըլլա։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Իմ գործս ի՞նչ է։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Քիչ մը ատեն սենյակնիս քողէրթա գա, առևտուրի վարժվի։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ինե գատ մարդու պետք չի կա հոս։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Տանը համար մանր մունր պետքերը քոդ հոգա։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ես նեեի՞ եմ։

Պ. ԹՈՎՄԱՍ (շփոթած).—Իրավի չեմ կրնար կոր հարմար բան մը խորհիլ, խելացի տղա մը կերևա կոր։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Էֆենտիմ, ասոնք վերջապես դրսեցի են, բան գիտեմ ման գիտեմ ըսելնին փուճ խոսքեր են. անցյալները մեր խոհարարին քով մանուկ մը եկավ, Սղերդի Միաց-

յալ Ընկերութենեն շրջանավարտ է եղեր, փորը կշտացնելու փոխարեն խոհարարը իր քով վար դնել ուզեց, ամսական չի կա ըսավ, բայց ես չուզեցի տանս մեջ ավելորդ տղա մը, բոլորովին ավելորդ. մնալը՝ ինծի ալ գեշ, ատ տղուն ալ գեշ. անանկ չէ՞, պ. Թովմաս. ես ուրիշին, գեշությունը չեմ ուզեր նախ ուրիշին աղեկությունը։

Պ. ԹՈՎՄԱՍ.—(գլխու հաստատական շարժում մը կընե)։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ճամփա դնելովս, իրավ է սկիզբը պիտի նեղվի, բայց գլուխը քարին զարնելով, փայտին զարնելով, գործ մը պիտի ճարե, և առաջ պիտի երթա. ես իր աղեկությունը մտածեցի նախ։

Պ. ԹՈՎՄԱՍ.—(որ հանկարծ լուսավոր գաղափար մը հղացած է և որ վարժարանին մեջ մյուսյու գործ ունիմ, կամ մյուսյու ես ըսե՞մի անհամբերության շարժումները կընե վայրկյանե մը ի վեր)։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ի՞նչ, աղեկ բա՞ն մը գտար։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Աս տղան առնենք ձեր խոհարարին քով դնենք. հիմակուհիմա սկսելու համար ջուր կը քաշե, միս կը կտրե։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Չէ՛, ատ բանը չըլլար, իմ մեռած սիրելի բարեկամիս տղան խոհանոցի՛ն մեջ. և հոն գործ մըն ալ չպիտի տեսնե, մարդ ալ չպիտի ըլլա. դուն իմին սկզբունքս գիտես, պ. Թովմաս. նախ դիմացինիս աղեկությունը։

Պ. ԹՈՎՄԱՍ.—(հաստատական շարժում մը կընե գլխու)։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ատ չըլլար. ես ուրիշ բան մը կը կարծեմ կոր, սա մեր Փերայի նոր ափարթըմանին յաբուշն դնենք։

Պ. ԹՈՎՄԱՍ.—Ավուրչքնե՞րը գրելու համար։

ԳԵՎՈՐԳ ԱՂԱ.—Ո՛չ, իբրև բենչպեր։

Պ. Թովմաս ակներև հիացումի մը երևույթը կառնե։ Դուրսը, դրան սեմեն քայլ մը հեռուն, ողորմելի գրգլյակի մը մեջ դողահար պատանի մը պատասխանի կսպասե։

Պ. Թովմաս Գևորգ աղային որոշումը կը բերե անոր. տղուն նիհար, ոսկրուտ ու սևցած այտերը կը կարմրին. քեթև սարսուռ մը իր արհամարհոտ ճակտին վրա կը վազե, ձայնը կո-

կորդին մեջ կը բռնվի ու չի կրնար խոսիլ։ Լուեց, ուրեմն ընդունվեցավ, կըսե պ. Թովմաս։

Փերայի ցեխոտ փողոցներեն մեկուն մեջ ամուր պարիսպի մը պես հսկա քարուկիր կիսավարտ շենքի մը վրա ձգված փայտե երերուն սանդուխներուն վրա անվարժ գործավոր տղա մը քար ու կիր կը կրե. կելլե կիջնե շարունակ, շինութեամբ դիսելով կեանքի պայքարը որ փլցնելով կրնա վերջանալ։

<1898>

ՀԱՏՎԱԾՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ԷՖԵՆՏԻ. դիվանադպիր. դիվանադպիրի տիպար. ակնոցը աչքը ու ականջները ծայրը գետինը. Պատրիարքարանի ամենեն հին ու անխախտ սյուներեն մեկը. լուսահոգի Հակոբոս պատրիարքեն մինչև հիմա եկած ըլլացած բոլոր եկեղեցականներուն բոլորանվեր հոգի մը։

Տ. ԿՈՒՆԱԿ Ե. Վ. Արմաշի շրջանավարտ մը. տքնումե ու հսկումե ազատ դեմք մը, շրջապատված սև, գոռոզ մորուքով մը որ կը չանա այս վտիտ պատանյակի դեմքը պատկառելի ընծայել։

ՀԵՔՈՒՄ ԷՖԵՆՏԻ. լրագիր. արտահայտություն չունեցող դեմք մը. ո՛չ հոգեբու պատում ունի, ո՛չ ժպիտ. չոր, միօրինակ նայվածք մը որ զինքը հաժակրելի չի կրնար հանդիսացնել, մանավանդ Պատրիարքարանի մթնոլորտին մեջ։

ՀԵՔՈՒՄ ԷՖ. (աղերսարկու ձայնով մը).—Կը փափագեի որքանոցներու վրա ճշգրիտ տեղեկություններ առնել...։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Որպեսզի ուզածնուդ պես խեղաթյուրեք, այնպես չէ՞։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Կը խոստանամ բառ մը անգամ չփոխել ձեր տված բանաձևեն. արդեն այնպես պայմանված ենք, սուտը մը չպիտի փոխվի։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Մենք պիտի խմբագրենք և դուք պիտի հրատարակեք։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Կընդունիմ։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (Կոռնակ վարդապետի հետ խորհրդակցելով մեղմիվ).—Քանի՞ որբանոց ունինք, կրնա՞ք ըսել։

ԿՈՌՆԱԿ ՎՐԴ. (որ բարձրագույն մաթեմաթիքի մեջ շատ հաչող է).—Հիսունըվեց։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (զարմանալով).—Իրա՞վ կըսես, ես միայն չորս հատ կը կարծեի։

ԿՈՌՆԱԿ ՎՐԴ.—Մինչև իսկ կրնաք յոթանասունըութը ելլել։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (ապշած բայց համոզվելու պատրաստ).—Ի՞նչ կերպով։

ԿՈՌՆԱԿ ՎՐԴ.—Հաշիվը պարզ է։ Ս. պատրիարքը որոշած է արդեն որ կարելի եղածին չափ շատ որբանոցներ հաստատվին. այս մտքով ամեն գավառական առաջնորդներու ամենախիստ հրահանգներ տված է և ես խմբագրեցի այս շրջաբերականը. հավակնոտ չեմ կարծեր ըլլալ հավտալով որ ամենեն ազդու գրվածն է և Պատրիարքարանի ժամանակակից արձակին գլուխ գործոցը. գրվածքին ոճին վրա հիմնվելով, կը հավտամ որ այդ շրջաբերականին հասած ամեն կենտրոնի մեջ արդեն այս ժամուս մեյ մեկ որբանոց հաստատված պիտի ըլլա... (տեսնելով որ Ստեփան էֆ. շարժում մը կընե) ներեցեք, ասիկա իմ հաշվիս խարիսխն է. ձեզի հաճելի ըլլալու համար կուզեմ 50% զեղչ մը ընել ասկե. և ընդունիլ որ շրջաբերականը հասած վայրերեն միայն կեսը Պատրիարքարանին հրահանգը ի գործ դրած է. գո՞հ եք, Ստեփան էֆ.։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (բոլորովին համոզված).—Հիմա կը հասկընամ։

ԿՈՌՆԱԿ ՎՐԴ. (շարունակելով).—Բայց ասով ալ չեմ բավականանար. ավելի համեստ, եկեղեցականի մը պես համեստ ըլլալ կուզեմ. գիտե՞ք ինչ է եկեղեցական համեստությունը, Ստեփան էֆենտի։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (հետաքրքիր).—Սովորական համեստությունը չէ՞ միթե։

ԿՈՌՆԱԿ ՎՐԴ.—Բնավ. Արմաշի մեջ, ուր այս մասին հատուկ դասավանդություն կըլլար, երկարորեն ճշտված է թե ի՛նչ են աշխարհական և եկեղեցական համեստության զանազա-

նութիւնները։ Սեղբեստրոս պապը որուն աստվածաբանական հեղինակութիւնը ամեն ոք կընդունի...։

ՀԵՔՈՒՄ ԷՖ. (սպասելէ ձանձրացած).—Լմնցա՞վ խմբագրութիւնը։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Ի՞նչ անհամբերութիւն է ասիկա. ճեմ լուր ուզելու կուգաք, ճեմ ամբարտավան ձևեր կառնեք։ (Կոռնակ վ.ին դառնալով) Հայր սո՛ւրբ, սրվոր բերանը գոցենք. բան մը քսենք՝ թող գրե։— Նախ արձանագրութեանց դիմենք. կարծեմ թե ճիշտ ու ճիշտ 3 կամ 4 որբանոց կա Պատրիարքարանին միջոցով հաստատված. լավ, 4. 4 հատ ալ կա որոնց բացումը որոշված է, կրնե 8. հոս հոն անկախաբար հաստատված որբանոցներ կան, որոնց Պատրիարքարանը տարին 3են մինչև 10 ոսկի ստակ կուտա, երբեմն ոչ մեկին ալ բնավ փարա մը չի տար. բայց ասոնք ալ կրնանք Պատրիարքարանինը սեպել. և ասոնց թիվը տասնի մոտ է, կրնե ընդամենը 18. հինգ որբանոց ալ կար, բայց նյութական միջոցներու պակասությամբ ասոնք վերջերս փակվեցան. բայց այս փակումը վարչությունը չի ճանչնար. պաշտոնապես խոսելով ասոնք բաց են. ուստի կրնանք ապահովապես ըսել որ 23 որբանոց հաստատված են։

ԿՈՌՆԱԿ Վ.ՐԴ.—Ձեր հաշիվը՝ իմս կը հաստատե։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (Հեթում էֆ.ի դառնալով).—Դրե. Պատրիարքարանը՝ որուն հիշատակելի գործերը բազմաթիվ են և որ ժամանակին Արմաշի դպրեվանքը հաստատելու բախտը ունեցավ, այս անգամ հաջողած է 23 որբանոց հաստատել, անկախաբար անոնցմե՝ որոնք ինքնիրենին հաստատված են։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Ո՞րքան որբ այս հաստատութեանց մեջ։

ՍՏԵՓԱՆ ԷՖ. (շփոթած).—Որքա՞ն... ի՛նչ մարդ ես դուք. հիմա ալ որբերուն թի՞վը գտնելու է։ Դրե՛, միջին հաշվով 2000 տղա։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Վերջին հարցում մը թույլ կուտա՞ք։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Ո՛չ։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Բաո մը։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Չէ՛, ըսի։

ՀԵՔՈՒՄ ԷՖ.—Ի՞նչ կրնեն այս որբերը որբանոցներուն մեջ։

ՍՏԵՓԱՆ ԷՖ.—Ի՞նչ կրնեն. այս ալ հարցո՞ւմ է. ասանկ

հարցո՞ւմ կուղղվի. ի՞նչ անիմաստ հարցում. լրաբերի խելապատակի հատուկ հարցում մը. (խնդալով) հա հա. ի՞նչ կընեն որբանոցներու մեջ. ի՞նչ պիտի ընեն, էֆենտիմ, իբրև որբ կը պահվին։

(Ստեփան էֆ. կռնակը կը դարձնե լրաբերին ու կը մեկնի վարդապետին դառնալով կը շարունակե ունկնդրել անոր սերհուն և իմաստալից խոսքերուն)։

ԲՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1887

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իզմիր, 24 Հունվար

Ի՞նչ կուզեք որ գրեմ ձեզ Զմյուռնիո վրա. ընդարձակ ծովածոցի մը եզերքը տարածյալ, նորաշեն բայց վատառողջ, երկրաշափական ճշտությամբ ու օրինոք հաստատված բայց բնական գեղեցկութենե զուրկ, հպարտ, վայրահաս, հարուստ, գործունյա ու ազմկալից քաղաք մը՝ ահավասիկ Փոքր Ասիո մեծանուն ու փարթամ նավահանգիստը։

Տարբեր ցեղերով, ազգերով, կրոնքով ու համոզումներով, գաղափարներով ու կրթությամբ բաժանյալ այս քաղքի բնակիչները կը միանան միայն իրենց անվանի քարափին տրված գովեստից մեջ։

Այդ քարափն՝ այս նավահանգստին գեղեցկագույն շինությունը՝ նվիրական է հոս. վաճառականն՝ հարաբերությունը կը կարե քեզմե, դատավորը՝ քու դատդ չի քններ, բժիշկը կը մերժե զքեզ դարմանել... կը վախնամ որ մինչև անգամ պզտիկ դաշույնի հարված մը չստանաս՝ թե որ համարձակիս ձեշ խոսելու անոր վրա. ի փոխարեն ամեն ինչ ներյալ է ադկից ի զատ. քննադատե՝ որչափ որ կուզես, աղաղակե՝ որչափ որ կրնաս, երգե՝ թե որ սիրտ ունիս կամ արտասվե եթե պետք կզգաս, ոչ ոք գլուխը պիտի դարձնե քեզ նայելու համար, քնչպես կըսեն իզմիրցիք։

Հասարակաց կյանքը կանցնի ու կանցնի հուսահատական միօրինակությամբ այս քազինոներու քաղքին մեջ. գիշեր ու ցորեկ, առտու կամ իրիկուն, ամեն մարդ կը ժողվվի սրճարաններու մեջ, դրամի տերն ու մտքի տերը, սրտի տերն ու գրչի տերը, լեզվի տերն ու դաշույնի տերը զարմանալի մտերմությամբ կը հավաքվին հոս։

Ջմյուռնիա հակապատկերներու քաղաքն է. ուղևորությանց ամենեն նոր և ամենեն հին միջոցները քովէ քով կը տեսնես. հանգարտաքայլ ու ծանրաբարո ուղտին մոտեն կը սրանա շոգեկառքն շնչահատ արծվի մը պես. հոդ լերան կողին վրա լռակյաց ավերակներ ու հոս նորաշեն քաղաքը զվարթ ու ոգեվոր. այս կողմն օսմանցին լուրջ ու խոժոռ, այդ կողմն օտարականն անհանդարտ ու տենդավար. միևնույն շրջանակի մեջ ազգասերն ու օտարամոլն, հայ լեզուն սիրողն ու (ափսո՜ս) հայ լեզուն խոսելե ամչցողն. առաջնորդ մը որո համբավը զաշխարհ կը թնդացնե ու անդին հալածական գրագետ ու լրագրապետ մը ցավոց ու տառապանաց մահճին վրա մոռցված. վերջապես մեկ կողմն Աբեղյան Մամուլն հզոր պաշտպաններու կոթնած ու անոր մոտ խորտակված գրիչ մը ու խեղդված ձայն մը... Աբշալույսը։

Իզմիրի ազգային վարժարանները փառահեղ շենքեր են ու նոր է ամեն բան ադոնց մեջ. սրահներն ու սենյակները, տախտակներն ու սեղանները, գավիթն ու սանդուխը. նոր են նաև անշուշտ աշակերտներն ու վարժապետները, վասնզի այս մեծապանծ շենքերու մեջ համեստ ու խոնարհ նախակրթարան մը միայն գտա։ Իրենց կրթական վիճակեն ավելի դրսի տեսքովնին կը փայլին այս վարժարանք. ապաքեն արտաքին տեսքի հոգածությունն իզմիրցվոց հիմնական հանդամանքն է։

Այս տեղ ազգային ոգին ամեն ոգիներու պես անտեսանելի ու աներևույթ է։ Կա՞ սերունդ մը, ազգ մը, որո զավակներն են այստեղի հայերը, կա՞ աշխարհիս վրա հողի մեկ անկյուն մը, ուր իրենց եղբայրները կապրին և ուր իրենց նախահարք ապրած են ատենով. ասոնք այն տեսակ հարցումներ են որ իզմիրցի հայոց մտքեն անգամ թերևս չանցնին։

Ապահով՝ իրենց հարուստ կացության մեջ, անդորր՝ իրենց

ներկային ու ապագային վրա, իզմիրցի հայոց բոլոր ջանքն ու խնամքն իրենց քաղքին, իրենց եկեղեցվույն, իրենց դպրոցին, իրենց քազինոյին հատկացած է։

Հայոց Միացյալ Ընկերության մատուցված դույզն օգնությունն իզմիրցվոց դաստիարակության հատկացյալ գումարեն գողցված ստակ մ'է միայն այս տեղի մարդոց աչքին։

Եվ ինչե՞ր չեն կրնար ընել այս տեղի հայերը լուսավորության գործին մեջ։

Ա՜հ, թե որ ազդու ձայն մը բարձրանար, ոչ թե անեծք կամ նախատինք տեղալու այս կամ այն լրագրին, այլ կոչում մ'ընելու այս ազգայնոց սրտին, թե որ չանադիր ըլլար ոք հիշեցնելու այս հայերուն այն նվիրական կապերն որ հեռավոր հայրենյաց մը հետ ըլլալուն համար առավել ևս զորավոր ըլլալ պետք են, քանի՜ քանի՜ վարժարաններ մեկեն պիտի կանգնվեին մեր բազմակարոտ երկրին մեջ. վասնզի իզմիրցի հայերը բարի անձինք են, և եթե ազգասիրության կրակը չի վառիր բայց բոլորովին ալ մարած չէ ու միայն բարեպաշտ ձեռք մը պետք է մեկդի ընելու զայն ծածկող մոխիրը և ո՞ւր է այդ օրհնյալ ձեռքը։

Մասիս, 1—2—1887

1892

ՄԵՐ ՄԱՍԻՍԸ

Այն ժամանակներեն ի վեր ուր լեզվի պես բան մը միայն ունեինք, ինչպես կըսեր Օտյան, մեր լրագրության հարատև չանքն եղած է այդ բանը՝ կատարյալ լեզվի մը վերածել։ Հա՞րկ է ըսել թե լեզու ըսելով Օտյան աշխարհաբարը միայն կըմբռներ։

Վերչի տասը տարիներու միջոցին, ուր հասկցվեցավ վերջապես թե գրականությունը՝ հայկաբանության ուսուցիչներուն և Մխիթարյան Հարց չի պատկանիր միայն, զորավոր շարժման մը լեզվական արդյունավոր այլափոխման մը հանդիսատեսները եղանք։

Հնավանդ կաշկանդումները և կապանքները խզելով, հայերեն լեզուն կարող եղավ արտահայտել զգալու և խորհելու ամեն եղանակները։

Ամենեն հետադեմներն անգամ ներգործվեցան կյանքի ու գոյության նշան տվող գրականության մը ազդեցութենեն. խըրթին, անհասկնալի ըլլալու չանքը, որ դեռ մոտ ժամանակներս մեր գրողներուն պարծանքն էր, ծաղրելի ըլլալով վերցավ։

Երիտասարդները տիրեցին մեր գրականության, ինչ որ իրենց իրավունքն է, և իրենց սրտին ու մտքին ազնվագույն

մասը հատկացուցին անոր, ինչ որ իրենց պարտականութիյունն է։

Մասիսն հրատարակելով՝ այդ պարտականութիյունն է ահա որ ի գործ կը դնենք մենք ալ։

Մեր ուղղութիյունը գլխավորապես գրական զարգացման պիտի նայի միշտ և ժողովրդային բարքերու և զգացմանց մէջ պիտի փնտրենք ամեն ատեն մեր ուսումնասիրութիյանց սիրելագույն առարկաները։

Մասիսի գրականութիյունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար։

Մասիս, 4—1—1892

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակ մը ի վեր մեր լրագրության էջերը կը լեցվին ֆրանսական արդի մատենագրության դեմ մղված ծիծաղելի պայքարի մը փորձերով։

Օր չանցնիր որ քաղաքական հոդվածի մը, առևտրական ուսուցչան մը, կամ տնտեսական կացութեան մը նկարագրին մեջեն հանկարծ հարձակում մը, ակնարկութեան մը, զարտուղութեան մը չըլլվի այդ մատենագրության դեմ։

Ժեռոտելի բաստիյներուն ծանուցումները անակնկալներու այսքան գեղեցիկ շարք մը ձևացուցած չէին։

Ռասփայլ կը պնդեր թե կարող է նույնիսկ դատավորաց աթոռներուն մեջեն զառիկի թույնը գտնել, և այսօր այն վիճակին եկած հասած ենք որ օրվան լրագրական մրնյուին մեջ,— ստամոքսային բացատրություն մը գործածելով որ հիմա շատ հարգի է—կրնանք անպատճառ պզտիկ հատված մը գտնել Անբարոյական գրականություն վերնագրով։

Որո՞ւ կուղղվին այս ճառերը։

Մեր գրականությունը՝ անշուշտ այն միայն որ քանի մը տարիե ի վեր լրագրական հրատարակությամբ լույս կը տեսնե, պետք ունի՞ արդյոք այդ փրկավետ ազդարարության. կամ

մեր ընտանեկան բարքերը ա՛յն աստիճան մատնված են ապականության որ ամենօրյա բարոյականի քարոզները ներքին լուրեր հաղորդելու չափ կարևորություն ստացած ըլլան։

❁❁❁

Միանգամ ընդմիշտ ըսենք ամեն անոնց որ տարրական ճշմարտությունները ըմբռնելու ընդունակ են, թե անբարոյականությունը մարմնական զեղծմանց մեջ չի կայանար միայն։

Այդ ստորին կայանը հատկացնելով շարունակ բարոյականին, զայն կարի գռնհիկ ու աննշան բան մը դարձուցած կըլլանք։

Սիրո վաճառականությունը մեղադրելի է անո՛ր համար անշուշտ որ կեղծիքի առուտուր մըն է. և սակայն որքա՜ն մարդիկ ապրուստնին կը ճարեն օրնիբուն իրենց սիրտն ու հոգին կեզծելով։

Փաստաբան մը՝ որ անիրավ դատի մը պաշտպան կանգնելով իր հմտությունը կը ծախե քանի մը ոսկիի փոխարեն, հրապարակագիր մը՝ որ իր խիղճն ու գրիչը միանգամայն կը վաճառե որոշյալ շաբաթականի մը համար, բժիշկ մը՝ որ հիվանդ մը խաբելով, խաբխբելով, իր այցելագիրներու արդյունավոր շարունակությունը կը պահպանե, երիտասարդ մը՝ որ աղջկան մը դրամօժիտին համար կը կարգվի միայն, ինքնամատույց կնոջմեն կը տարբերի՞ն միթե և իրենց ստացած դրամը ճշմարիտ կապենք մը չէ՞ արդյոք։

❁❁❁

Հեռո՜ւ մեզմե այն բարոյախոսները՝ որ ընկերական կարգերու ամեն կեղծիքներուն դեմ անտարբեր՝ միայն կնոջ մը մերկ ուսեն կամ հոլանի պարանոցեն կը շառագունին։

Մտքերնիդ չի՞ գար Թառիյուֆը։

Խոսքդ ուղղեւ առաջ ինձի՝ խնդրեմ ա՛ռ
Թաշկինակս ու ծածկե այդ լանչն անպատկառ

Մարդիկ՝ որոնց բարոյականի ամուր ու հաստատ շենքը, նեվայի ափանց վրա կառուցված ձյունե դղյակի մը պես,

մարմնական աննշան մեկ հրապույրին առջև կը կակուղնա, կը հալի, կանհետանա իսպառ և որ ավելին է՝ չեն կրնար գրքի մը մեջ, իրենց դյուրաբորբոք զգացմանց համար անպատուհաս կերպով ընթեռնուլ սիրո մը նկարագրությունը, կնոջ մը պատկերը, դիմագիծը, առանց խռովելու տեսնել Ռյուպենսի մեկ նկարը կամ դիցուհիի մը արձանը։

Եվ այս դառնությամբ կը դառնան մեր գրականության դեմ ալ—այնքան հեռու արդեն եվրոպական գրականություններեն—հոն ալ որոնելու, գտնելու ցանկության միջոցը, որուն համար կը վախնան քե իրենց դյուրագրգիռ հոգին՝ բերրի ու արգավանդ հող մ'ըլլա։

***

Գրականությունը իր նպատակովը միայն կրնա բարոյական կամ անբարոյական հռչակվիլ. նկարագրությունները՝ արվեստական խնդիրներ են, որոնք չեն կրնար երբեք անբարոյականության համար իբրև փաստ հառաջ բերվիլ։

Եթե երբեք ախտաբույր կամ ցանկացուցիչ տեսարանի մը նկարագիրը բավեր հեղինակը անպարկեշտ ու անբարոյական համարելու համար, գիտե՞ք որ նախնի ու արդի, աշխարհական կամ սրբազան մատենագիրներեն գրեթե ոչ ոք դուրսը պիտի մնար։

Հելլենական գրականությունը նախ պետք էր կրակը նետել իր դիցաբանության հետ մեկտեղ։

Կուզե՞ք որ Արիստոփանեն հատվածներ գրեմ հոս։

Հռովմայեցվոց մատենագրությունը տարփանքի նկարագրության մեջ հելլենականեն վար չի մնար. Լյուքրես, Քաթյուլ Փեթրոնե դասական հեղինակներ են։

Բայց ի՞նչ պիտի ըսեք Հոռասի համար, կարդացա՞ծ եք բարեկամի մը ուղղյալ, առ Պառին, առ Մեսսեն վերնագրով տաղերը։

Ժյուվենալ կանանց վրա գրած երգիծանքին մեջ անտարակույս գերազանցած է արդի գրողներուն բոլոր ազատությունները։

❋❋❋

Ֆրանսական մատենագրությունն ալ իր նշանավոր ու դասական հեղինակներովը նպաստավոր չէ բոպիկ ոտքե մը կամ անծածկույթ ստինքե մը կարմրող հրապարակագիրներուն։

Ռապրլե իր զվարթախոհ հեշտասիրությամբը երբեք անբարոյական հեղինակ մը համարված չէ։

Բայց անշուշտ պիտի զարմանաք, եթե ըսեմ ձեզ թե տիկին սր Սեվինիե ոչ նվազ համարձակ գրագետ մըն է. տիկին սր Պռենվիլիե անուն կնոջ մը անձնասպանության փորձին առթիվ, իր աղջկան գրած նամակները կրնաք աչքե անցընել։

Ֆելշիե պերճախոս եկեղեցականը ինքն ալ անբարոյականության ամբաստանությենեն ազատ պիտի չի մնար ձեր աչքին, եթե իր հիշատակարանները կարդացած ըլլայիք. և նույնիսկ Ֆենըլոն իր Տելեմաքովը, իր դիցուհիներու, հավերժահարսերու նկարագրությամբ հեշտություն չի՞ բուրեր քիչ մը։

Լաֆոնթենին խոսքը չեմ ըներ. բայց Մոնթեսքիյո անվանի օրենսգետն ու փիլիսոփան, իր Պարսկական նամականիովը անտարակույս անբարոյական գրագետի մը վճիռը պիտի ստանար ձեզմե։

❋❋❋

Կուզե՞ք որ քիչ մըն ալ վերջին դարու հեղինակներուն վրա խոսինք. կրնդունի՞ք Վոլթեռը, ո՛չ. Տիտո՞ն ալ չեք ուզեր. Ժան Ժաք Ռուսոյեն պզտիկ ընթերցո՞ւմ մը, Նուվել Էլոյիզեն, Խոստովանություններեն։ Կը փափագի՞ք ակնարկ մը նետել գոնե Թեոֆիլ Կոթիեի՝ Օրիորդ սր Մոփենին, Միշլեի Վհուկին, Տյումայի Քամելիազարդ Տիկնոջ վրա։ Ասոնք բոլորն ալ անբարոյական են. ֆրանսական բոլոր գլուխգործոցները մեր մաքուր բարքերուն համար չեն։

Արձակագիրներն են ասոնք. բանաստեղծները տեսնենք շնորհ պիտի գտնե՞ն ձեր աչքին առջև. Ռոնսար, Տոպինյե հիներեն են։

Անմաքուր գրիչներ անշուշտ բոլորն ալ, որոնց արտադրած

խենեշանքը ֆրանսական ստամոքսները կը մարսեն և դպրոցներուն մեջ կը կարդացվին, կուսուցվին։

Բայց քերթողի մը անունը պիտի տամ, զոր պիտի չի կարենաք մերժել, Ալֆռետ տը Մյուսեն։

Ալֆռետ տը Մյուսեն ինքն ալ կապշեր—եթե ողջ ըլլար—Նամունայեն առնված հատվածի մը՝ անբարոյական հորջորջված գրականության դեմ, իր գրականությանը դեմ իբրև փաստ մեջտեղ բերվելուն։

Հա՛րկ է թարգմանել հոս թե ինչպես կսկսի Նամունան։

***

Մեր հին մատենագրությունը՝ սրբազան ու պատմական մատենագրություն մըն է միայն. այսուհանդերձ կրնամ գրականության թատրյուֆները ահաբեկելու համար ցույց տալ Սողոմոնի երգ երգոցը, որոնք, հուսամ թե, խստապահանջ պարկեշտության ու բարոյականի դեմ չեն մեղանչեր,—մասնավորապես Գլուխ է.ն իրենց խորհրդածությանցը կը հանձնեմ։

Եվ մեր վերջին գրականության գալով, Ուիյուճյան։ Գաղտնիք Հավատամքնությանը թարգմանելով չենք կարծեր որ լսիրշ գրականության ծառայած ըլլա. և սակայն հոն՝ նկարագրություններ, տեսարաններ չեն պակսիր կիրքերու սաստկությունն ու զայրույթքը պատմող։

Իսկ Դուրյան, այն պարկեշտ ու մաքուր հոգին, այդ անբասիր ու շուշանաթույր կյանքը, ա՛յն ալ խենեշանք մը նետած է մեզի իր վերջին թատերգությամբը, Թատրոնը, որուն նյութին հանդգնությունը՝ խավարամիտ աչքերու կամավոր միամտությունը կրնա շլացնել։

***

Թողունք ուրեմն այդ անբարոյական գրականության հորջորջումին տակ հարվածված մատենագրությունը, որուն գլխավոր պակասությունը այն է թերևս որ ստամոքսի, ուտելիքի, պարենավորման պայմաններուն, գիներուն վրա չի ճառեր և կը հակառակի ասով գուցե մեր դրական գաղափարներուն

Գրականությունը այն ատեն միայն անբարոյական է, երբ իր առաջադրած նպատակն ըլլա ընթերցողները ցանկությամբ ու տարփանքով վարակել։

Կը լսենք որ Եվրոպայի մեջ կան գրավաճառներ, առևտրական ձեռներեց ոգիեն մղյալ, որ հատուկ գիրքեր գրել կուտան, կը տպեն ու կը ցրվեն գաղտագողի, անասնական նկարագրություններով և միայն նկարագրություններով լեցուն, որոնք անուն չունին, հեղինակ չունին, հրապարակային գոյություն չունեին, այլ կը սողոսկին ձեռքե ձեռք, և կանգ կառնեն սովորաբար հանուն բարոյականի պոռացող մարդոց դարակներուն մեջ. ատոնք են ահա լպիրշ գրություններըւ

Իսկ ֆրանսական արդի մատենագրությունը հոյակապ և աննման արվեստի մը մարմնացումն է։

Պալզաք, Ֆլոպեռ, Կոնքուռ, Պոտլեռ, Տոտե, Պուռժե անբարոյական գրագետներ չեն, այլ մեծանուն մատենագիրներ, որոնցմով Ֆրանսա հավետ կը պարծի։

Ջուգահեռական ուսումնասիրություն մը պիտի չընեմ նկարչության և արձանագործության համար, որոնք մարդկային մարմինը այնքան հոլանի ցույց կուտան։

Գիտեմ որ բարոյականի հավատաքննիչները չեն հանդուրժեր ատոր և անշուշտ կը փափագին փակված տեսնել Լուվրի Մյուզեն և նեչընըլ Կալլորին։

***

Ո՛չ. մեր ընտանեկան բարքերը, մեր գրականությունը հեռու են ապականությամբ վարակվելե։ Այդ ձրի զրպարտությունը բանով մը չարդարանար. և եթե հարկ անհրաժեշտ է հանուն բարոյականի պայքար մը մղել մեր մեջ, նյութեր չեն պակսիր, ափսո՜ս, որ իրոք արդարացնեն անբարոյականության ամբաստանությունը։

Պարոնյան՝ միակ բարոյագետը, որով պռլսահայերը կրնան պարծիլ, երբեք մեր հեք գրականության դեմ ըսելիք մը չի գտավ, բացի անոր շողոքորթ ու շատ անգամ կեղծավոր ձրգտումեն։

Մասիս, 14—2—1893

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Եւ ահա նաւու միայ
բեկելոյ ճչխարհ...

Քայքայված կողերու, լուծքի, ողնափայտի բեկորներ. փտուկ, տամկահար պարաններու մնացորդներ. տախտակամածի մը կոտրտուքները զոր ալիքները հոս հոն կը տանին դեռ իրեն կամակ տարուբերումին հետ. և սյուները անվթար անկորուստ, գետնաքարշ սողալով սակայն, փոխանակ ուղղաձիգ կենալու նավուն վրա որ գոյություն չունի հիմակ։

Ողորմելի տեսարան մըն է, այնպես չէ՞, Հայ թատրոնին պարզած այս տեսիլը։

Հանկարծուստ ելլող փոթորիկ մը պատասխանատու չէ այս նավաբեկության, և սանձակոծ կոհակներու հարձակումին տակ չախչախված չէ այս շենքը. այլ հանդարտիկ ալիքներու ամենօրյա լիզումովը, խարտոցի համառ ու հարատև աշխատությամբը մաշած, փճացած ու ցրված է ամեն կողմ։

Այդ փայփայող ալիքը, այդ կորստաբեր՝ բայց անխուսափելի խարտոցը, մեր հասարակության մտավոր անկումը, ճաշակի ազնվացման և զարգացման հետզհետե նվազումը եղած է։

❁❁❁

Ջենք կրնար առանց սարսափի քսան տարի առաջվանն նայելէ վերջը ներկային վերադառնալ. հասարակութեան մը բարոյական անէացման այսքան հազվագյուտ կերպով տպավորիչ տեսարանի մը երբեք չենք կրնար պատահիլ։

Քսան տարիէ հետե իշղուլեան շրջան մը սկսած ենք շարունակ, ջուրերը քաշվող գետի մը հարթ երեսին ցածնալուն պես, ամեն կողմե միանգամայն, դանդաղ բայց աներկբայելի խոնարհում մը որ քանի մը տասնյակ տարիներու մեջ գահավեժ անկումի մը տպավորութիւնը կը թողու։

Տոքթոր մը որ ելլե հիմա Ռյու Պլաս մը թարգմանելու[1], գրական նոր սեռի մը ճաշակը տալու մեզի, գիտեք որ խնդուք ու ծիծաղ պիտի չարժե, ու մեր այժմու գրական մարդոց գլխու ծանր ծանր երերումին պիտի ենթարկվի։

Պետական մարդ մը ինքզինք պզտիկցած պիտի սեպե մեր մեջ, Օտյանի գրական անհավասարելի փառքին թեկնածու ըլլալով։

Մեծահարուստ մարդ մը այժմ պիտի չկրնա միտքեն անցնել թե ի՞նչպես Հակոբ պեյ[2] Պեշիկթաշլյանի, Թերզյանի, Աճեմյանի, Ադամյանի պես մարդոց ընկերութիւնը կը նախընտրեր ամենեն ավելի։

Ով հիմա մեր երիտասարդները, պատանիները, որոնք քաջ գիտեն երեկույթներու մեջ անմիտ ու տափակ խոսակցութիւններով, խաղով և ծեքծեքումով սպառել իրենց ծանրաբեռնյալ միտքը, Եվրոպայի մեջ ուսած մեր տղաքը որ մինչև իրենց մայրենի գրականութեան ու արվեստներուն չեն զիջանիր խոնարհելու,— անոր համար գուցե որ տգետ գացած են ապուշ վերադառնալու համար,— ասոնց և ոչ մին հանրային կյանքի, մտքի ու սրտի հաճույքներու ոգին կը կրե իր մեջ։

❁❁❁

Ով ի՞նչ կուզեք որ ըլլար թատրոնի ճակատագիրը. ա՞յն միայն կանգուն ու բարձր մնար, երբ ամեն բան մեր մեջ կիչ-

նար, կը ցածնար իր շուրջը։ Թատրոնը գրականությամբ կըլլա, և հայ դերասանությունը միշտ զրկված անոր ձեռնտվողեներեն, թարգմանություններով ապրող, հագված, շքված մուրացիկ մը եղած է ի մեզ, տեսակ մը Տոն Սեզար տը Պազան որ սրվոր լոդիկը կը հագնի ու նրվոր կոշիկը։

Գրողներ պակսած են միշտ հայ թատերաբեմին համար, ինչպես հանդիսատեսները պակսած էին արդեն անոր սրահեն և օթյակներեն։

Եվ վերջ ի վերջո այս թատրոնին ձևն ու տարազը, ֆրանսական բարբառը, «Այո, պարոն կոմս», «Ոչ, տիկին մարքիզուհի» խոսակցությունը հիմարական, խոլ, ցնցուն քրքիչ մը արձակել տված էր հազվագյուտ հանդիսականներուն, որոնք՝ թատրոնեն մեկնելով՝ մեկ մըն ալ հոն չէին վերադարձած։

Դերասանները իրենք վերը մնացած չեն, երբ իրենց շուրջը ամեն բան վայրէջ շարժումի մը մեջ հետզհետե կը խոնարհեր։ Ո՛չ արվեստի սեր, ո՛չ գրականության գաղափար մնացած է այս մարդերուն մեջ։

Իզուր հիմա նոր սերունդ մը կելլե կը բուսնի իրենց քովիկը, գրականություն մը կը կազմվի իրենց քթին տակ, ամեն ոք ձայն կը բարձրացնե այս քնացող մարդերուն ականջին մեջ. այնքան թմրած են որ չեն արթննար, այնքան հուսահատ են որ չեն հավատար. այնքան խոնջած, անճրկած են որ նոր ոգևորություն մը, նոր ճիգ մը պիտի սպաննե զիրենք։

Եթե իրենց ձեռքեն առնեք Երկու Հիսնապետը կամ Փարիզի Աղջատները [3], պիտի շփոթին։ Եթե ըսեք իրենց թե սովորական ձայնով թող խոսին թատերաբեմին վրա փոխանակ խռոչային կամ կոկորդալիր ձայներ հանելու, պիտի չընդունեին. եթե ըսեք որ հակառակորդի դերին համար երեսնին սևցընելու, ահարկու երևույթ մը առնելու հարկ չկա և կարելի է ամենեն պարկեշտ դեմքն ունենալ և ամենեն վատ չարագործն

ըլլալ,— ինչ որ ամենեն հաճախադեպն է—պիտի մերժեն իրենց բոլոր ավանդությունները վեր ի վայր շրջող այս պատվերները։

❋❋❋

Դերասանները պարտին սորվիլ նախ իրենց լեզուն, այն աշխարհիկ բարբառը որ ևս քան զևս աշխույժ և երիտասարդ է, և թողուլ այն հինցած թարգմանությունները, զորս դպրոցական մը այսօր արտագրելե պիտի ամչնա։

Եվ երբ գովելի նորություն մը ցույց տալով կուգան գրված և ոչ թարգմանված կատակերգություն մը ներկայացնելու թատերաբեմին վրա, պետք է ընտրությունը թողուլ գոնե անոնց որ գրական հեղինակություն մը ունին, և ոչ թե առաջնորդվին իրենց գրական ճաշակեն ու հանդիսատեսներուն ծիծաղը հրավիրեն ոչ թե խաղին, այլ իրենց անձին վրա։

Մեր դերասանները պետք է պարզությամբ և համեստությամբ ճանչնան թե ոամիկ տարր մըն են այսօր, զոր ոևէ կապ հարաբերության մեջ չի դներ մեր գրական և իմացական աշխարհին հետ։

Կերևակայեմ որ հանդես մը, լրագիր մը գոնե չեն կարդար այս մարդիկը, բացի իրենց ծանուցմանց և նկարագրությանց հատվածներեն ուր շռայլված գովեստը կը փայփայե իրենց միամտությունը և քննադատությունը դառնությամբ կը լեցնե սիրտն այս նավաբեկյալներուն, որ ալիքներու վրա տախտակներու պլլված կը ծփան տակավին։

❋❋❋

Իրենց փրկությունը պիտի ըլլա նոր եռանդով մը ընդգրկել իրենց արվեստը, որ գիտություն մը դարձած [է] ալ և այսուհետև գոնե մեր երիտասարդ գրականության հետ հաստատել խնամությունը զոր երբեք խզելու չէին։

Եվ մեր օրվան գրողներուն կիյնա ոչ թե արհամարհել այս աշխատավորները,—ինչ որ ձրի և անիրավ նախատինք մը պի-

տի ըլլար այս մարդոց ուղղյալ,— ոչ թե ծիծաղիլ անոնց վրա, ծաղրի նյութ ընել իրենց դժբախտությանց և տառապանքի անցյալը, այլ բերելու չանալ զանոնք նոր մտքերու հավասարության։

Մեր գրողներուն կիյնա առաջին անգամ իրենք մոտենալ թատերական ասպարեզին, նույնիսկ թատերարեմին, որ նշավակ մը չէ անշուշտ։

Թատերագրական սեռը պետք չէ լքենք. ներկայացում մը շատ ավելի աղմուկ կը հարուցանե քան թե պարզ հրապարակագրություն մը և լիուլի գոհացում կուտա մեր ցուցամոլ փառասիրությանը, որով կանուխեն վարակված ենք ամենքս ալ դժբախտաբար, անապարծիկ մանկուհիներու պես, որ իրենց չողիքոտ կրծկալին ժանյակներուն դրացի տղուն վրա ընելիք ազդեցությանը կը խորհին ամեն բանե առաջ, երեխայության տարիքեն երևան հանելով կանացի պչրանքը։

Երիտասարդությունը պարտավոր է ժողվել, ամբողջացնել, վերաշինել այս քայքայված նավուն կազմվածքը և ինքը վարել գայն ասկե ետքը։

Հայրենիք, 1—3—1892

ԱՋ ԵՎ ՁԱԽ

(Քրոնիկ)

Օրերը կուգան կանցնին ամեն մեկը բերելով մեզի իր բաժինը ոամիկ ու հասարակ դեպքերու, որոնցմով կյանքը կը ձեվանա. կաթիլ մը արցունքով և քիչ մը ծիծաղով մարդկությունը՝ ամեն շաբթու գլուխ իր հաշվեհարդարությունը կը կատարե, զոր քրոնիկագիրը սնանկացած խաղամոլի հետաքրքրությամբ կարձանագրե աշխարհիս չորս կողմը։

Եվ երբեմն կը պատահի որ ոչ կաթիլ մը արցունք, ոչ իսկ պզտիկ ժպիտ մը կը գտնեք հրապարակին վրա. ոչի՛նչ, տափակութենեն զատ, ուր իզուր աջ և ձախ կը պտտցնես հարթաչափ գործիքը, որուն չուրե խողովակին մեջ՝ օդին պուտիկը տեղեն չերերար. աննշանությունը նշանակելու փորձ մը ըրա՞ծ եք երբեք, և այս է հաճախ մեր մեջ քրոնիկագրին տաժանելի ճակատագիրը։

Հին ատենի հելլեն փիլիսոփա մը, զվարճախոս մարդ, կը պնդեր թե փողոց ելած ատեն ո՛ր կողմ երթալը կանգիտանար, ուրկե բանասերներեն ոմանք հետևցուցին թե Դիոգինես իր ժամանակի քրոնիկը գրողն ըլլալու էր. և ուրկե ես կը հետևցնեմ թե խեղճ մարդը իր ատենին կաթողիկոսական պատվիրակն էր՝ էջմիածին երթալու պատրաստված։

Մեր պատգամավորները հետզհետե կը մեկնին, շալկած իրենց քվեները, խաչի պես սուրբ ու ծանր միանգամայն, եթե խղճահար և պարտաճանաչ են։ Պոլիսեն՝ ուսյալ եկեղեցական մը՝ Օրմանյան սրբազանը [1] և համակրելի ու հարգելի վաճառական մը՝ Տիգրան էֆ. Կյումյուշկերտան, մայրաքաղաքիս հայոց կարծիքը կը տանին ի Վաղարշապատ։

❋❋❋

Գյուխնիս դարձնենք Վաղարշապատեն. նայինք... ո՞ւր, գրականությյա՞ն, ամուլ ու աղքատ, երկու աստիճանով շինված սանդուխ, որուն լրագրական չորս հոդվածով բարձունքը հասած կըլլաս՝ շուրջդ արհամարհանքով դիտելու համար, ուրկե անցյալի մարդիկ սև բիծերու պես միայն աչքիդ կերևան, քեզ՝ որ ներկայի գրագետն ես, այնպես չէ՞։ Եվ հանկարծ այդ սև բիծերեն մին կը շարժի, կը խոսի։ Արդյոք իր երիտասարդության, իր դպրոցական կյանքի հիշատակնե՞րը պիտի բերե մեզի շահեկան անեկտոդներով լեցուն. ո՛չ. այլ հեգնող սրամտություն մը, բառ մը կը նետե որ, հստակ և որոշ, անհուն անջրպետեն կը հասնի քեզի, վաղյա՜կ, քրքիջի մատնելով անհամեստներուն պարծուկ հնդկահավի ձևերը։

❋❋❋

Համեստներեն մին ալ թողուց գնաց, ո՛չ հոն ուր նարնջենին կը ծաղկի, այլ հոն ուր դալարն անգամ չի ծաղկիր դեռ, վասնզի թարմ է հողը որ Սրապիոն Հեքիմյանը [2] կը ծածկե։

Վենետիկցի մըն էր այս ալ, Պեշիկթաշլյանի, Թերզյանի, Աճեմյանի պես բանաստեղծ և միանգամայն թատերագիր. իր «Տաղք և բանաստեղծություններ» [3] ատվար գործը չեն գիտեր շատերը. ինքն ալ կարելի եղածին չափ քիչ շշուկ և աղմուկ ընել ուզած էր, ճիշտ հակառակը անոնց՝ որոնց ցուցամոլությունը հիմա կատարյալ ծանուցումի մը ձևերը կառնե։

Հետո մոռցված էր բոլորովին իր կենդանության մեջ. այս դրաբարագետը սրբապղծումի պես բան մը կը նկատեր իր

շուրջը եռացող պղպջացող նոր լեզուն, անկանոն, երբեմն տգեղ, շատ անգամ շնորհալի ու գեհհիկ, ու քաշված էր աստպարեզեն իր տոհմիկ գրագետի մեկուսացման մեջ պահվրտած, շուկատ գրականության մը չի քալելու երկյուղով։

***

Քանի որ համեստներու վրա է խոսքս, չեմ կրնար չհիշել հոյակապ անուն մը, զոր լսած ենք ամենքս ալ։

Տ. Հովհաննես Հյունքյարպեյենտյան[4] դրացիս էր և փափագեր էր մեծ մարդոց հատուկ խոնարհամտությամբ մը տեսնել զիս անգամ մը. իր ալեհեր ու լայնարձակ ճակատը, որ մեծ իմացականության մը կենտրոնն է, կուրծքը ծածկող սպիտակ մորուքը, այն անունը, որուն տերն է ինք, զիս պատկառանքով կը լեցնեն և սիրահոժար կը համբուրեմ ձեռքը այս պատվական ծերունիին, որ պատիվն է իր կարգին, իր ազգին և անոր գրականության։

Համուտ հելլեն գրականության, որուն դասական հեղինակները ծանոթ են իրեն մերիններուն չափ, պարսկագետ ու լատինագետ, Հայր Հյունքյարպեյենտյան լեզվաբանական հսկա և ապերախտ աշխատության մը հեղինակն է հայ բառերու ծագման վրա։

Մեկ երկու հատվածներ, զորս կը համի ընթեռնուլ, հիացմամբ կը լեցնեն զիս իր ապշեցուցիչ համառության, հիշողության վրա։ Այս մեծ բանասերին հետազոտությունները կուտան մեզի շատ մը հայ բառերու ստուգաբանությունը, շատ մը պատմական ու շահեկան ծանոթություններ, որոնք մեր հին գրականության վրա նոր լույս մը կը սփռեն։

Եվ ակամա այս աննման համառության, այս խորին համեստության քով միտքս կուգա երեկի տղաքը, թոթովախոս դեռ և հավակնոտ այնքան, և չեմ կրնար արգիլել Ություճյանի բառը որ ահա նորեն գրչիս ծայրը կուգա.

— Վառյակնե՛ր։

Մասիս, 25—4—1892

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՄԵՋ

Ա.

Սկիզբ առաջ գանգատներ հայտնեցին ամանք մեր դպրոցներուն մեջ ավանդված ուսման չափազանցութեան դեմ. ըսվեցաւ որ մեծ ախորժակի տեր ստամոքսներ կը պատրաստեինք առանց հարկ եղած սնունդը մատակարարելու միջոցներն ալ ցույց տալու, ու գիտնական անոթիներու շատութեունը սպառնալիք մը համարեցին մեզի. ուրիշներ՝ կարեկցութեան ձայն մը, ողբագին հառաչանք մը հանեցին նույնիսկ այդ տղոց ի նպաստ ու պոռացին որ անգործ ու անզբաղ թափառող տղոց զրկումներուն պատասխանատվութեունը մեր դրպրոցներուն վրա կը ծանրանար, անոնց կրթական ծրագրին չափազանցութեունն էր այս ամեն չարյաց պատճառը.

Le galeux d'où venait tout le mal.

Գիտեք արդեն որ ծրագիրներն են ամեն բանի պատասխանատու, եթե ձմեռը սաստիկ ըլլա, կամ ամառը անձրևի պակասութենեն հունձքերը տառապին, եթե սով ըլլա կամ մահվան կոտորած, ծրագիրներն են որ կը դատապարտվին աշխարհիս ամեն կողմը, ու խնդիրը կը վերջանա։

Եվ որովհետև գտնվեր են մեր մեջ թաղային վարժարաններեն ելլող քանի մը ապիկար պատանիներ որ կամքե, ձեռնե-

րեցութեան ոգիէ զուրկ՝ թափառեր են հոս ու հոն, որ կանոնավոր կրթութիւն մը չունենալուն համար չեն կրցած օգտակար դառնալ ու գործ մը գտնել իրենց, անմիջապես այս ողորմելիներուն դժբախտութեան համարը մեր դպրոցական ծրագիրներեն կը պահանջվի։

Ինչո՞ւ Հոմերոս ու Միլտոն կարդացուցիք այս տղոց, ինչո՞ւ Արուսյակն ու Լուսնթագը ճանչցուցիք իրենց, ի՞նչ հարկ Պատմութիւնը սորվեցնել, մեծ մարդոց օրինակներով զբաղեցնելով՝ զիրենք համեստ քաղաքացիներ ըլլալու կարելիութենեն զրկեցիք։

Բ.

Եթե այս շրջանավարտ տղաք իրոք օգտված ըլլային դրպրոցական դասերեն, երբեք պիտի չպտտցնեին փողոցներուն մեջ իրենց երիտասարդի անգործութեան ցավալի պատկերը. գիտութիւնն եթե հաց չի տար, գոնե պիտի զբաղեցներ զիրենք, ավելի ևս հառաջ մղեր ուսման շավիղին մեջ, և սակայն չենք ճանչնար մեկը որ առանց արհեստ մը ունենալու գիտութեանց կամ դպրութեանց մեջ անուն մը ստացած ըլլա։

Ո՞վ են ուրեմն անոնք որոնց վրա արգահատելով մեր դրպրոցներու արդեն կարի խոնարհագույն վիճակը ավելի ևս ստորնացնելու գաղափարը կը ջատագովենք։

Եթե նույնիսկ անհատական դժբախտութիւններու, ասպարեզի պակասութենե հառաջ եկած գործադուլներու պատմութիւնը ստույգ ըլլար, ի՞նչ պիտի հետևեր ատկից։ Քաղաքակրթութեան գերագույն շահը հառաջադիմութեան մեջն է միայն. միտքերը պետք է ձգտին, այո՛, փրթելու չափ. այս է կյանքի պայքարը զոր մեր ձեռքը չէ ընդունիլ կամ չընդունիլ. անհատի մը թշվառութիւնը, աղքատութիւնը ի հաշիվ չառնվիր հանրութեան շահերուն մեծ տումարին մեջ։ Եվ արդեն մարդս երջանիկ կամ դժբախտ, անոթի կամ կուշտ ըլլալու համար չէ որ կո՛ւգա աշխարհ. ապրիլը վախճան մը չէ ինքնին, ինչպես շատ լավ կըսե Ռեթեոս Պերպերյան, այլ միջոց մը մարդուս համար իր կոչման ծառայելու։

Անոնք որ անասունի կյանք մը կը սահմանեն մեր պատանիներուն, փոր կշտացնելով շինված կյանք մը, Մոլիեռի հրաշակավոր խոսքը միտքերնիս կը բերեն հեղաշրջված իրենց վարդապետությանց համաձայն,

Il tout vivre pour manger
Et non pas manger pour vivre.

Գ.

Մենք ընդհակառակը կը կարծենք որ մեր դպրոցներուն մեջ ավանդված կրթությունը շատ ռամիկ, շատ տարրական է։

Եվրոպական ազգերու ամենօրյա հառաջադիմությանց արձագանքն անգամ չի հասնիր մեզի. ուսման և ոչ մեկ ճյուղի համար մասնագետ ուսուցիչներ ունինք. մաթեմաթիքի վարպետ մը ի վաղուց անտի պակսած է մեզի, նույնպես չենք ունեցած ուսուցիչ մը բնական գիտությանց համար. բայց ի՞նչ հարկ թվումն մասանց մը ընել հոս մի առ մի ըսելու համար թե՝ ոչ պատմության, ոչ աշխարհագրության, ոչ լեզուներու, ոչ իմաստասիրության համար կարող դասախոսներ ունեցած չենք երբեք։

Եվ ի՞նչպես կուզեք որ ունենանք. ո՞վ բարձրագույն ուսուցառած է մեր մեջ արհեստի տեղ գործածելե տարբեր նպատակով։ Անոնք իսկ որ գիտության մեկ ճյուղը սորվելու համար գացած են Եվրոպա, միշտ արհեստական անձուկ սահմանին մեջ ամփոփված են։

Տաճկահայ եկեղեցականներուն մեջ, բացի մեկեն կարծենք, չենք ճանչնար Եվրոպայի համալսարաններու մեջ ուսում առածներ. և սակայն տեսեք հույները, օրինակ առնելու համար գոնե, որոնց մեջ տասնյակներով կը համրվին Գերմանիո համալսարաններեն վկայալ եկեղեցականներ։

Դլխավոր բանը որ կը պակսի մեզի, մեր հետամնացության աստիճանին վրա ճշմարիտ գիտակցությունն է։

Գիտությունը իր անվերջ ճյուղավորումներուն մեջ հետզհետե այն վիճակին հասնելու վրա է որ քիչ ատենեն նոր անուններն իսկ հասկնալու կարող պիտի չըլլանք։

Մեր մեջն է միայն որ երիտասարդ մը իհարկե ստիպյալ կերթա Եվրոպա ոչ թե համալսարանական ուսման մը հետեւելու, այլ արհեստ-գիտութիւն մը սորվելու։

Եվրոպայի մեջ բնական կարգն է հետամտիլ, շարունակ հետամտիլ գիտութիւնն, միշտ ավելի հեռուն, միշտ ավելի բարձր։

Դպրոցական շրջանավարտներուն ջանքը պետք է ըլլա իրենց կոչումներուն և հարմարութիւնց համեմատ հառաջ տանիլ իրենց ուսումը բարձրագույն վարժարաններու մեջ, ապահով ըլլալով որ ապրուստի ասպարեզ պիտի չպակսի իրենց, և չարագուշակ մարգարեութիւնները, սխալ ու ծուռ խորհուրդները թող չկասեցնեն, չխերացնեն երբեք զիրենք իրենց ճամփուն մեջ։

Մասիս, 28—6—1892

<ԼԵԶՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ>

ՄԵՆՔ կը կարծենք որ այսուհետև գրաբարի և աշխարհաբարի խնդիր չկա. կամ ավելի ճիշտ խոսելով՝ գրաբարի խընդիր չկայ։

Աշխարհաբարը գրաբարով կոկելու ջանքը լեզվագիտական սխալ մրն էր՝ ամուլ մնալու դատապարտված։

Աշխարհաբարը ուրույն և անջատ լեզու մրն է, զոր և ոչ մեկ կապ կը միացնե գրաբարին. բաղդատությունն անգամ ավելորդ երկուքին մեջ. իր բնական ուժերը զորս ժողովրդական բարբառեն կը քաղե, պետք չեն թողուր անիմաստ փոխառություններ ընելու մեռյալ լեզվե մը որ պատմական ըլլայե ուրիշ նշանակություն չունի այսօր։

Մեր ժողովրդական լեզուն պիտի զարգանա ուրեմն ինչպես կը զարգանան ուրիշ ամեն լեզուներ՝ ոչ թե հինին դառնալով՝ այլ այդ լեզուն խոսող հասարակության իմացական կարողության համեմատությամբ։ Կ. Ս. Ություճյանի բաղձանքը որ Օտյանի բաղձանքն էր արդեն, որ ապաքեն շատ մր միամիտ դրաբարադետներու բաղձանքն է ուղղելու՝ կարգի բերելու մեր աշխարհիկ լեզուն, հարգելի հնություն մրն է։ Լեզուները մարդոց պես են, իրենց հատուկ ճակատագիրը ունին և պետք

է ունենան. հառաջադիմությունն ատով կը ձևանա. աշխարհաբարը գրագետներու ջանքով չհինվեցավ. իմաստասիրական անհուն խուզարկություններ պիտի չընենք բացատրելու համար թե ինչպես կը կազմվին լեզուները, այլ կը բավականանք հայտարարելով միանգամ ընդմիշտ որ գրական մարդիկ կը հպատակին և ոչ թե կը տիրեն անոր, թերևս իրենք իսկ չզգալով, և ժողովուրդն է միայն որ կը դարբնե լեզուն կյանքի ամենօրյա սալին վրա, իր կամքին, պետքին, զգացումներուն ու հաճույքին համեմատ։

Մասիս, 18—6—1892

ՆՈՐ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ դիպվածով կը կարդամ հին օրերէ մնացած տգետ խմբագրապետի մը բարբանջանքը ի գիր առնված, արգահատանքով կը լեցվի սիրտս. ո՛չ, հեք մարդը դինքը շրջապատող նոր միջավայրին գիտակցութիւնը չունի. գիտութեան բոցովը այրած մոխիր դարձած նախապաշարումներու, անհեթեթ կարծիքներու ավերակին մեջ՝ վտիտ ու սևցած ծխնելուզի մը պես կանգուն է. շատ բան կը փոխվի, կը քանդվի, կը վերաշինվի իր շուրջը, ինքը մինակ կը մնա պինդ ու ամուր կապված վաղեմի գաղափարներուն, որոց տեղ նորեր, օգտակարագույններ դնելէ իսպառ հուսահատ է։

Ներացած դերասանն է որ՝ երեսին խորշոմներուն չնայելով՝ իր սիրահարի առջի դերը շարունակել կը փորձէ թատերաբեմին վրա, ծռմռկելով ճմրթկած դեմքը ու դողդոջուն բազուկները երերցնելով օդին մեջ, չըմբռնելով այս այլանդակ ձևերուն առջև անտարբեր մնացող հանդիսատեսներուն լայնաբաց բերնի հորանջումները։

Հին գուսանն է, որուն երբեք չես կրնար հասկընել որ իր խժալուր խռպոտ ձայնը, արվեստե ու ներդաշնակութենե զուրկ եղանակները մտիկ ընող չէ մնացեր, և իզուր նրբանցքին մեջ կեցած կը քաշես փեշեն՝ բարեկամի պարտքդ կատարելով։

❋❋❋

Պոլսո նոր լրագրությունը Արևելքով կսկսի. ավելի շատ իմաստասիրություն հանրային խնդիրներու, ավելի մոտ տեղեկություն եվրոպական ազգերուն վրա, անհատական գծուծ խնդիրներն ու վիճքը՝ տեղի տալով ընդհանուր տեսություններու: Հայ լեզուն, այս կամ այն խմբագրապետի գծած անձուկ սահմանները կոխոտելով, վերստացած իր ժողովրդյան բարբառի անկախությունը. խմբագրությունը՝ դադրելով արհեստ մը լինելե, արվեստ դառնալու համար. գրական նոր սեռեր՝ գրական նոր մարդերու ձեռքով, ամենքը միևնույն անփոփոխ նպատակին կապված, հասարակության պետքերուն ըմբռնումը: Ահավասիկ նոր լրագրությունը:

Արևելքը կաղմող ուժերը մասամբ այսօր անջատված են առանց շեղելու իրենց նպատակեն, Հայրենիքի, Մասիսի մեջ շարունակելու միասին սկսված վաստակը, և իրարու մոտ բայց ոչ իրարու դեմ հանելով իրենց պեսպիսությունը, զատ թերթի մեջ ու ինքնագլուխ մնալնուն համար լավ ևս ճանչնալով հանրային խնդիրներու հոգածության պետքը, և օր օրի այլափոխվող գիտության ու գրականության հետամտելու, ճշմարտությունը ամենուրեք փնտրելու հարկը:

❋❋❋

Երիտասարդությունը իր հմտությունը, իր ոգևորությունը բերավ մեր լրագրության. իր գաղափարները վաղուց ի վեր ընդունված, հռչակված ճշմարտություններ էին Եվրոպայի մեջ. հոս՝ գայթակղություն կը բերեին մեր հասարակության, հին թերթերը, հազիվ մեկ երկու բացառություններով, ա՛յնքան քիչ հետամուտ եղած էին իրենց ժամանակին հետ քալելու, այնքան տգետ ու անտարբեր գտնված էին քթերնուն տակ եղող ընկերական խնդիրներուն, ամեն բարվոքումներու, ամեն հառաջդիմությանց: Նորերով՝ լրագրական արժանապատվության զգացումը խստությամբ հայտնված ու պահված է միշտ. մուրացկանությունը դադրած է չչեր գրավելե թերթերու մեջ. Նո-

բերեն ոչ ոք շնորհակալություն պիտի հայտնե եթե իր թերթեն հատ մը, տասը հատ, հազար հատ գնեն կամ նվիրեն ասոր կամ անոր. դրամական աջակցության՝ քաջալերության՝ պատվակալ բառերու տակ նոր թերթերը ընթերցողներեն ողորմություն չեն ուզած բնավ և պիտի չուզեն երբեք։

Ամուսնության հանդես մը նկարագրելուն հաջորդ օրը, ամուսնացողին տարեկան բաժանորդության ընկալագիր պիտի չղրկեն՝ գնում ու ստորին գովասանքի մը վարձքը պահանջելով բարձրաձայն, գրեթե իրավունքի մը պես։

Անձնական խնդիրները պիտի չշահագործեն, ասոր ու անոր գրասենյակները դեգերելով գայթակղական պատմություններ հրատարակելու սպառնալիքին տակ ստակ պիտի չշորթեն բնավ։

***

Այլ առանց աղմուկի, համեստորեն պիտի կատարեն իրենց պարտքը, շարունակելով ճանչցնել ժողովուրդին՝ այն ամեն ճշմարտությունները որոնց իրենք կը հավատան. պարկեշտորեն, լրջորեն հառաջ տանելով օգտակար գործ մը իրենց համոզումին համեմատ, երբեք ցույցի, անակնկալի տղայական գաղափարով։ Գլուխ պիտի չդարձնեն երբեք անոնց որ առանց տարրական կրթության մը ստացած ըլլալու գոնե, անպատկառ կը նետվին հրապարակ կոշիկներ վեր ելլելու անընդհատ ճիգով,— պարզ ջղային հիվանդության մը թերևս,— խելքերնուն չհասած խնդիրներու համար գործածելու զրիչ մը զոր իրենց հարկավոր եղած դպրոցական դասերը գրելու ծառայեցնելով՝ ավելի օգտակար կերպով գործածած պիտի ըլլային. ո՛չ ալ անոնց, որոնք տեղ տեղ պտտելով գաղափարներ կորսան կը հավաքեն, բառ մը հոսկե, պարբերություն մը հոնկե, որոնք խողովակի պես կընդունին ինչ որ լեցնես վերեն, բայց ինչ որ լեցնես, և հաջորդ օրը իրենց լրագրին մեջ ի հայտ կուգան, ածականի և գոյականի կռիվ կը հարուցանեն, ոչ իրենց գիտությամբ զինված, ո՛չ գոնե բառարան մը նայելու հոգնությունը հանձն առնելով, որով պիտի կրնային հրապա-

րակային խայտառակութենե մը ղերծ մնալ, այլ անոր համար միայն որ տգետ մը, իրենց պես, փողոցեն անցած ատեն այսպես փսփսացեր է իրենց ականջն ի վար։

***

Ու գրականության մեջ մանավանդ նոր լրագրությունը իր մեծ բաժինը բերավ, հեղաշրջելով առջի կարգն ու կանոնը, ընկալյալ ձևերը, հին քերականներու հաստատատիպ ոճն ու ոտարաղը, որդնակեր արմատներն այդ խարխուլ ծառին որ իր հյութը չէր առներ ժողովուրդին սրտեն, այն միայն որ կուտա առողջ հյութն ու անթառամ բողբոջումը։

Գրականությունը, նոր լրագրության համար, պարտի ըլլալ այն անխարդախ հայելին, որուն մեջ հասարակության բարքը կը ցոլանա, մութ սենեկի մը մեջ պահված ապակին, որուն վրա անոր կյանքին հարազատ լուսանկարը կը գծագրվի հետզհետե վայրկենական պատկերներու անհատնում շարք մը ձեացնելով, ուր անոր հարափոփոխ դեմքին ամեն կծկումները մատնանիշ կըլլան, կը վերլուծվին։ Հետաքրքիրներու համար շահեկան է այդ Albumը թղթատել, քովե քով տեսնել տարիներու շրջանի մեջ միևնույն հասարակության փոփոխվող դիմագծերը. սաղմ, երեխա, մանուկ, տղա, պատանի, երիտասարդ, չափահաս կամ ծերունի մարդու դեմքեր, միևնույն անձին անընդհատ կերպարանափոխությունը նյութի ու բարոյականի զուգահեռական աշխարհներուն մեջ, Սկիզբը ու Վերջը մոտեցած իրարու, երկու հավիտենական անհաշտելիները բարեկամացած, ընտանեցած, ձեռք ձեռքի։

***

Անոնք որ խորհրդածել կը սիրեն, հոժարակամ կը պտտցընեն իրենց ակնարկը մեկ ծայրեն մինչև մյուս ծայրը, ամբողջությունը անխտիր ընդունելով, բան մը չձգելով իրենց լայն ներողամիտ տեսության շրջանակեն դուրս. չեն մերժեր տգեղը ու չարը իբրև իրենց հատուկ գոյության պատճառ ունեցող

երևույթներ ընդհանուր ներդաշնակության մեջ. կը կարծեն թե գեղեցկությունը գոյություն պիտի չունենար եթե տգեղը չըլլար. առաքինությունը պիտի չտեսնվեր եթե մոլություն չգտնըվեր. բարձրացումն անկարելի պիտի ըլլար եթե անկումը չպատահեր,— ո՛չ այն անկումը սանդուխեն որ ոտքերը կը կոտրըտե, այլ բարոյական գահավեժ անկումները,—և հարթ հավասար աշխարհ մը պիտի մնար, տափակ մակարդակ՝ որուն հետ արդարև զբաղիլը պիտի չարժեր։

Մասիս, 1—8—1892

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ուսուցչական ժողովի նիստերը վերջացան. իր որոշումները՝ համեստ ու պարկեշտ իղձերու ձևով արտահայտված՝ նորություններ չեն անշուշտ, բայց մեծ մասամբ այն ճշմարտություններեն են, որոնց հեղհեղվիլը անօգուտ չէ երբեք։

Մեր դպրոցներուն մեջ գիտության մեծագույն բաժին մը տրվելուն և ուսուցչական մարմնի բարձրացումին վերաբերյալ կարծիքները այս կարգեն են։

Իսկ ամենուրեք ընդհանուր ու միօրինակ նախակրթության պետքը չատագովող գաղափարը ու այս նախակրթությունը կազմելու համար ցույց տրված ուսման ծրագիրը, սխալ ըմբռնումներու վրա հիմնված, անհեթեթ եզրակացության կարգին կը պատկանին։

Դասագրքերու ամենաէական խնդիրին անտես առնվիլն ալ ժողովին աշխատության մեջ թերի մնացող կարևոր մասը կը կազմե մեր աչքին։

***

Ջորս նիստերն ալ Ռեթեոս Պերպերյանն[1] ինքը մինակ գրավեց. հնչուն ձայնովը, հմտալից խոսքովը, դասական վկա-

յուրյուններովը լեցուց սրահը տախտակամածեն մինչև ձեղունը, դուռեն մինչև պատուհանները։

Անդրիագործին պես որ կավի զանգված մը կառնե ու կսկսի անոր վրա աշխատիլ, նախ գիծերը, չափերը, հետո մանրամասնությունները ճշտելով կարգավ, Ռեթեոս Պերպերյան միևնույն բանը կրնե օրակարգի մեն մի խնդիրներուն համար. իր պաշտոնակիցներեն շատ շատ կը պահանջե որ մին կավը բերե իրեն և մյուսը ջուրը։

Ով սակայն ինքն է որ Ուսուցչական Ժողովը գումարած է այստեղ և ինքն է ոո պետք չի թողուր ոևէ համախումբ գործակցության. և ասով կը նմանի այն պատկերազարդ հանդեսներու հրատարակիչներուն, որոնք իրենք կառաջարկեն հանելուկը, մեծ պարգև մը խոստանալով, և իրենք կը լուծեն զայն վերջ ի վերջո։

***

Ուսուցչական Ժողովին, կամ ավելի ճիշտ բացատրություն մը գործածելով, Ռեթեոս Պերպերյանի առաջարկած նախակրթությունը հայ տղոց համար, եվրոպական նախակրթության հար և նմանն ըլլալուն, այս պարզ ու դյուրին եզրակացության գալու համար ամբողջ ուսուցչական մարմինը հավաքելու պետքը չեմ ըմբռներ։

Նույնպես չեմ հասկնար, ընդհանուր տեսակետով, դաստիարակության սահմանը գծելու համար եղած ջանքերը. արդյոք Ուսուցչական Ժողովը հա՞յ տղոց թե տիեզերական տղուն կրթության վրա խորհրդակցելու համար գումարված էր։

Կենթադրվեր սակայն թե խնդիրը մեր հասարակության կրոնական, ցեղային ու աշխարհագրական դիրքին, տնտեսական ու իմացական վիճակին պատշաճեցնելու վրա էր ընդհանուր դաստիարակության մը արդեն ծանոթ պայմանները։ Հո՛ս է որ մեր ուսուցիչները իրենց բաժինը պիտի բերեին և հոս էր որ Ռեթեոս Պերպերյանը ունկնդրելու պատրաստված էինք։

❋❋❋

Տարակուսս չկա որ Զենտ Ավեստայեն սկսելով մինչև Սփենսըր, դաստիարակության նպատակին ու սահմանին վրա ըսված ու չըսված խոսքերն իրենց օգուտը ունին. բայց Ուսուցչական Ժողովեն սպասվածը բոլորովին տարբեր բան մըն էր։

Առաջին խնդիրը, որ ամեն ժողովականի մտքին ըստ բավականի որոշ նշանակություն մը չուներ, նույն իսկ նախակրթությունն բառն էր։ Ամենքը տարբեր առումներով գործածեցին զայն և կապշիմ իրենց վերչնակուն համաձայնությանը վրա. համոզմա՞ն արդյունք թե Ուսուցչական Ժողովին նիստերեն մեկն ալ փակելու փափագ։

Եվ իրոք, նախակրթությունը պոլսեցի տղուն միևնույն բանը չէ վանցի տղուն կամ մայրենի լեզուն խոսելու անկարող սղերդցի տղուն համար։

Չեմ հասկնար միօրինակ հագուստ մը որ ամենուն պատշաճեցնել ուզվի, մուճակ մը որուն մեջ ամենուն ոտքը սղմելու դատապարտված ըլլաս։

❋❋❋

Իմ առաջարկությունս, եթե երբեք առաջարկություն մը ունենայի Ուսուցչական Ժողովին, նախակրթություն մը պիտի ըլլար որ տեղական պետքերը ի նկատի առներ միշտ և հետևվարար տարբերներ ամենուրեք։

Մեր հասարակությունը պիտի բաժնեի նախ իրենց բնակած վիլայեթներու համեմատ. իրենց անհրաժեշտ պակասը լեցնելու և բնական ընդունակությունները զարգացնելու ձևով և տեղական ուսումնասիրութենե մը վերջը, ասոնց ամեն մեկուն նախակրթությունը պիտի սահմանեի։

Բարոյական կրթության համար պիտի փնտրեի մտքովս թե որո՞նք են այն հատկությունները որ կը պակսին մեզի և այն պակասությունները որոնցմով վարակված ենք. և ասոնք դարմանելու հատուկ պիտի ըլլար իմ տալիք բարոյական մարդու դասերս, ո՛ր ձևով որ ավանդվեին։

Հոս՝ հաստատամտություն կը պակսի, հոն՝ արժանապատ-

վության զգացում, այստեղ համեստությունը բացակա է, այդ տեղ պարկեշտությունը. ահա ասոնց դեմ պիտի ուղղվեր բարոյական կրթությունն ամեն բանե առաջ։

✿✿✿

Միևնույն բանը պիտի ընենի կրթության մյուս մասերուն համար։

Սովեզերյա ու վաճառական քաղաքի մը մեջ ֆրանսերենը պարտավորիչ պիտի ընենի առանց վարանելու, բայց լեռներու մեջ թաղված գյուղին պիտի խնայեի զայն։

Գիտությունները միևնույն նպատակով պիտի սահմանեի, և զանոնք պիտի ավանդեի աչքի առջև ունենալով սա էական գաղափարը որ այդ դասերը, ըստ կարելվույն մոտիկ ժամանակի մը մեջ, դպրոցական շրջանը ավարտելուն պես, գործնական օգուտ մը ընծայեն աշակերտին։

Ուստի այն ամեն քաղաքներու մեջ, ուր տեղական արհեստներ կան, իմ գիտական ծրագիրս պիտի ձգտի դեպի այդ արհեստներուն կիրառումներուն, անմիջապես օգտակար ըլլալու ձևին։

Ով այն տեղերը ուր երկրագործությունը կիշխե, իմ գիտական ծրագիրս բոլորովին տարբեր բաներ պիտի ավանդե աշակերտին, գլխավորապես սորվեցնելով անոր՝ իր հողեն օգտվելու միջոցները։

Գյուղերու մեջ իմ ավանդելիք քվաբանությունս ամբողջ քիվերու ու տասնորդական կոտորակի չորս գործողությունները պիտի պարունակեր միայն. և երկրաչափական գիտելիքները անդաչափական ու տեղագրական գործնական սկզբունքներեն ու կանոններեն անդին պիտի չերթային։

Քաղաքներուն մեջ երկու դասարաններ պիտի ավելցնեի դպրոցական շրջանին վրա, տեղական արհեստները ավանդելու համար գիտական սկզբունքներու համեմատ։

Մայրենի լեզուն, միշտ առաջին տեղը գրավելով հանդերձ, ավելի երկար ժամանակ և ավելի հոգածությամբ պիտի դասախոսեի հոն՝ ուր հայերենը մոռցված էր։

***

Այն ատեն, ապահով եմ, որ ծնողք իրենց զավակը պիտի չառնեին ետ դպրոցին կես ճամփեն, տհաս, խակակուի պտուղներու պես. այլ գործնական օգուտը վայելելով դպրոցական դասերուն, հայրենի արտին և այգիին մեջ գործածությունը տեսնելով անոնց, իրենք առաջիններըը պիտի ըլլային պարտավորելու իրենց զավակը որ դպրոցական շրջանը ամբողջացնեն։

Կրթությունը այն անօգուտ ու վերացական բանը պիտի չմնար այլևս, զոր հայրերն ու մայրերը գլխի օրորումներով, ուսերու շարժումներով կը սահմանեն, այլ անոր դրական ու չոշափելի օգուտներեն երախտավորյալ, իրենք երկու ձեռքով պիտի գրկեն դպրոցական հարկը զոր հիմա լքած են ամենուրեք։

Մասիս, 19—9—1892

ԵՐԳԸ

Մարդիկ կան որ կը կարծեն թե՝ խոսելուն քով՝ երգելը ավելորդ բան մըն է։

Երբ քաղաքակրթությունը կը տանի զմեզ դեպի ամեն բան շուտափույթ ու համառոտ տնօրինելու, երբ ճամփաները կը կարճեցնենք և հեռավորությունները կը բառնանք, երբ երիտասարդությունը՝ իր կանխահաս զարգացումովը ու ճերմկած մազերովը՝ ծերության հետ կը շփոթվի, և գլուխը ետին դարձնելու ատեն չունեցողի պես կը վազե մարդկությունը, այս ընդհանուր արշավին մեջ ո՞վ կրնա երգի մտածել։

Եվ սակայն ճիշտ այս ճեպընթաց սուրացումին, այս վաղվաղակի հասունցող ու մաշվող հոգիներուն համար ավելի եւ անհրաժեշտ չի՞ դառնար կազդուրվելու պետքը։

Այս գաղափարը ունեցած է այն մարդը որ վերջերս տասը հազար ֆրանք կտակեց Ֆրանսական Ակադեմիային, երկու տարին հեղ մը մրցանակ տալու համար լավագույն երգի հեղինակին։

***

Վասնզի երգը այն հանգրվաններեն է ուր ամեն ոք կանգ կառնե, իր հոգնությունը կը մոռնա, կը կազդուրվի ու հաչորդ

օրվան կը պատրաստվի, ուրախ դեմքով դիմագրավելով բախտին ձախորդությանց։

Հետո, երգը այն միակ բանն է որ մարդերը կը մոտեցնէ ու կը միացնէ իրարու, աղոթքին պես ու արցունքին պես, որոնք երգեր են անշուշտ, երգերուն գերագույններըն։

Ու անկից վերսկսելով, շարունակելով ճամփան որ վերջ չունի, որ ծայր չունի, այս անդուլ ուղևորությունը կյանքին՝ նվազ դժնդակ ու ավելի տանելի բան մը կըլլա ա՛լ։

***

Ծոժոռ ճակատներու, մռայլամած դեմքերու, հաստ ու թավ ձայներու լրջությունը՝ ճշմարիտ լրջությունը չէ։

Պարզ ու վճիտ ձայն մը, խնդուն երես մը միշտ ավելի հասկնալի, հետևապես ավելի օգտակար է. իր զվարթ երևույթն իսկ օգուտ մըն է ինքնին։

Ուրախությունը հիմա այն կաթն է ուսկից շատ կանուխ կը կտրվի մարդկությունը՝ իր առօրյա հոգերովն ու մտմտուքներովը, և երգն է միայն որ մանկության, անմեղության պատրանքը կուտա մեզի, որքան ալ վաղանցուկ ըլլա այդ պատրանքը։

Եվ ո՜րքան պետք ունինք վերադառնալու հոն ուսկից ուղի ինկած ենք. ի՜նչ խրատներով ու խորհուրդներով լեցուն պետք է ըլլա մեզի համար այն ճամփան որուն շուրջը նայելու ատեն ունեցած չենք մեր արշավաուլր ընթացքին մեջ, և ամեն բանի վրա սխալ գաղափարով ու սխալ համոզումով եկած հասած ենք հոս, այն կառախումբի մեծ վագոնվը ճամփորդող ուղևորներուն պես որոնց վրա հեռագրի ցիցերը՝ շարունակվող պատի տպավորությունը կը թողուն։

***

Երգը անհրաժեշտ ավելորդն է. ո՛չ այն ավելորդներեն մին զոր հափրացած քաղաքակրթությունը նորեն նոր կստեղծե, այլ այն զոր բնությունը տված է մեզի իր անհեղլի օրենքներով։

երկու նվագի մէջ ամփոփելով մեր կեանքին երկու ծայրերը,— նորածինի մը լացը ու հոգեվարին հոնդյունը։

***

Մեր ժողովուրդը արևելքցի բանաստեղծ ժողովուրդներուն պես սիրած է երգը միշտ. գավառները, գյուղերը ամեն տեղ, երգը ամենուն բերանն է. մշակը անով կը հերկե իր արտը, հովիվը անով կարածե իր ոչխարները. անով կը տոնեն նորածինին գալուստը և հարսին նարոտը անով կը կապեն։

Հոս, այս մեծ ոստանին մեջ է որ, սխալ ըմբռնված ծանրութեյան մը հետամտելով, երգելու սովորութեյունը ծիծաղելի կամ ամոթալի բանի մը պես վերնալու վրա է հայոց մեջ քիչ քիչ։ Մեր տղաքը, պատանիները, կորաքամակ ծերուկներու պես ծալապատիկ նստած, խոսելով կանցընեն ատեններին։ Ծպիտ չկա երեսնին, տղա երևնալու վախով։

Այս պատանութեյունը, որ թվականի սխալ մը ըլլալու կը միտի, թող վերադառնա ուրախութեյան, զվարթութեյան կանոներուն որոնք իր տարիքին կանոններն են, գրեթե պարտականութեյունները։

Հայրենիք, 22—10—1892

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՅՇ

Ա՛ն հաղթանակներեն վերջը որով պսակված է իր վերջին ուղևորությունը ի Կովկաս, Տիկին Սիրանույշ առաջին անգամն է որ, մեր մեջ, պիտի երևնա նորեն հայ թատերաբեմին վրա։

Մեծ է հետաքրքրությունը. Մարկրիթ Կոթիեի դերը՝ այն չինված պատրաստ շրջազգեստներուն չնմանիր զոր ամեն ոք կրնա հագնիլ, այլ շղարշի կտոր մըն է նուրբ, հոդմածուփ բան մը, որուն մեջ փաթթվողին կիյնա իր ճաշակը, իր շնորհը ցույց տալ և այդ անհարդար թյուլի պատառով արդուզարդ մը շինել, որուն բարեձևությունը՝ թափանցկությանը մտածելն ատեն չձգե։

Երբ Տիկին Սիրանույշ այսքան դժվարին ու այսքան հրապուրիչ դերով մը ի հանդես կուգա, արդեն ապացույցը տված կըլլա թե, ամեն մեծ դերասանուհիներու պես, կըմբռնե թե թատրոնին կոչումը կյանքի ու սրտի զարտուղություններ բացատրելո՛ւ մեջ է և ոչ թե անբրինակ, անլուր, անհավատալի ոճիրներով, արկածներով, հանդիպումներով՝ հասարակությունը զբոսցնելու մեջ։

***

Աշխարհագիրներ կան որոնք ցամաքով կզբաղին միշտ և ուրիշներ՝ որոնք ծովերը կը չափեն միայն, խորութիւնները կը պրպտեն, անդունդներու մէջ կը սուզին և հոն՝ նոր մակերեվոյթներ կը գտնեն։ Տյումա՝ այդ ծովաչափներուն պետն է, եթե իրավ է որ ամենեն խոր ծովը աշխարհիս մէջ՝ կանացի սիրտն է ամեն ատեն։

Ռամիկը անհատակ կը կարծե զայն, անվերջ անդադար վայրէջք՝ որ ծայր ու հանգ չունի, և կը զարմանա որ ուրիշներ ահա անոր հատակը կ՚ճշտեն, թուղթի վրա կը գծեն գրեթե, ճիշտ աշխարհացույց քարտեսի պես, ու ցույց կուտան հոն անակնկալ վերելքներ ալ որք մեզի անտես ու անծանոթ սարեր կը կազմեն մութին մէջ։

– Քամելիազարդ տիկինը այդ անակնկալ բարձրացումներուն մեկն է։

Մարկրիթ Կոթիե այն կիներեն է որոնք կյանքեն՝ հաճույքը կը ճանչնան միայն ու անով կավանդեն հոգիին, Օֆելիային պես որ ծաղիկներ քաղելով մեռնելու գաղտնիքը գտած էր։ Մարկրիթ՝ այն շատ երջանիկ կամ շատ դժբախտ արարածներեն է որոնց համար կյանքը՝ միակտուր ու միակողմանի է, բովանդակ զվարճություն՝ առանց զուգակշիռ մը ունենալու ոևէ պարտականության գաղափարի մէջ։

Եվ օրին մեկը իր սիրած մեկ երիտասարդին հայրը կու գա աղերսել իրեն, ալևոր ու պարկեշտ մարդ մը՝ անձնամատույց կնոջ մը ոտքը, իր զավակը վերստանալու համար աղաչելով։

— Զգե՛ իմ տղաս։

Այդ երիտասարդը իր մեկ հատիկ սիրածն է հազարներու մէջ որոց վրա կը ծիծաղեր. և հիմա անուշ խոսք մը, հոր մը աղերսը կը բավե համոզելու համար զինքը,— ախտավարակ ու զվարճասեր ցոփուհին,— հրաժարելու իր սերեն, հեծկըլտալով սրտին խորեն, բայց առանց տկարանալու իր զոհողության մէջ։

Երբ ամեն ոք իր շահը ու օգուտը կը պահպանե ի հարկին ուրիշները տանակոխ ընելով, ո՜րքան անակնկալ անձնազոհու-

թյուն մըն է Մարկրիթ Կոթիեի հրաժարումը երջանկութեան թռչուններեն և ո՜րքան անկեղծ կըլլա կարեկցութիւննիս իր կսկծալի վախճանին վրա։

***

Տիկին Սիրանույշ ամեն հատկութիւն ունի արժանավոր թարգմանը ըլլալու Տյումայի այս գեղեցիկ գործին։

Իր արվեստին չափ զգացում ունի, ինչ որ անհրաժեշտ է Մարկրիթի դերին համար։ Քաջ կը խոսի հայերենը, բան մը որ քիչ քիչ պակսելու վրա է մեր դերասաններեն շատերուն. իսկ ինչ որ ավելին է, խոսիլ գիտե Տիկին Սիրանույշ սիրո լեզուն։

Խոսինք, բայվ. ո՜հ, խոսիլ
Հատնիլ է լոկ ինձ համարձակ։

Ինչպես կրսե բանաստեղծը։

Հետո ավանդական ուղևորութիւնը ըրած է ի Կովկաս ուր մեր դերասաններն իրենց նվիրագործումը կստանան, կը քաջալերվին, բայց կը վարժվին խստապահանջ հասարակութեան մը դատաստանին։

Հայրենիք, 19—12—1893

ՔԱՏԸ ԳՅՈՒՂԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Երեկայական Հիվանդր, ՄՈԼԻԵՌ.—Քամելիազարդ Տիկին, Երրորդ արարված, ԱԼԵՔՍԱՆՏՐ ՏՅՈՒՄԱ։

Շարաթ գիշեր Քատը գյուղի թատրոնին մէջ Ֆասուլյաճյանի խումբը հաջողութեամբ տվավ խոստացած առաջին հայերեն ներկայացումը՝ լեցուն սրահի մը ու լեցուն օթյակներու առջև։

Պետք է ըսել որ բացի վաղեմի դերասանապետեն ու հռչակավոր դերասանուհիեն և, որչափ կը հիշեմ, պ. Շահինյանե զատ որ Ֆռոմոն Ռիսլերի մէջ անգամ մը ներկայացած էր, մեր հասարակութիւնը ոչ ոք կը ճանչնար նորակազմ խումբեն, մեծ մասամբ սկսնակներով ձևացած, և անշուշտ ներկայացման հայերեն ըլլալուն հրապուրն էր որ հասարակութիւնը այսքան հոծ թիվով թատրոն բերած էր։

Ֆասուլյաճյանի առաջին գովելի հանգամանքը այն եղավ որ որոշյալ ժամուն սկսավ ներկայացումը. բան մը զոր շատոնց մոռցած էինք հորմեհետե Մնակյան վարժեցուցած էր մեզի, ներկայացումը սկսելու համար, բազմության մը հավաքվելուն սպասել, այն նավավարներուն պես որոնք պետք եղած թիվով ուղևոր չառած ճամփա չեն ելլեր։

Օթյակներուն մէջ Քատը գյուղի բոլոր ծանոթ ընտանիքները կը տեսնեմ. ո՞վ ըսավ որ չեն սիրեր Թատրոնը եթե սիրվելու արժանիքով ներկայանա, ամենքը գոհ են այս ներկայացումը

տրվելուն համար ու տրամադիր Ֆաուլյանճյանի խումբը քաջալերելու, մանավանդ երբ հարկ եղած նոր տարրերը ավելցնի վրան։

Մամուլը իր ներկայացուցիչները ունի հոն, ուշադիր, խրատապահանջ, ինչ որ իրենց իրավունքեն ավելի պարտականություններին է։

Ջանգակը կը հնչե ներսեն. երաժշտությունը կը դադրի, ահա առաջին արարվածը։

Ամբողջ հայտնություն մըն է մեզի համար Երևակայական Հիվանդին ներկայացումը։ Ջսպասածնիս կը գտնենք հոն. միգուցե սպասածնիս ալ չգտնենք։ Ֆաուլյանճյան՝ կատարյալ Առկան մըն է, երբեմն չափազանցության տարված ձևերով. այս չափազանցությունը պիտի գտնենք իր խմբին բոլոր մյուս ընկերներուն վրա ալ. բայց Մոլիեռի այս գործը կատակերգություենե (բոմետի) մը ավելի զավեշտ (ֆառս) մըն է։ Հեղինակին նպատակը՝ ծաղրելին մատնանիշ ընել է և ասոր համար ինքն իսկ ծայրահեղության տարած է իր ի տես հանած անձերուն նկարագիրները։ Դերասանները գիտակցաբար կամ անգիտակցաբար անոր գաղափարին ճշմարիտ թարգմանը կը ներկայանան մեր աչքին։

Ֆաուլյանճյանի արտասանությունը մաքուր է միշտ և այն պզտիկ վարանումը՝ խոսած պահուն՝ որ հիշողության պակասութենե մը հառաջ գալ կը թվի, դերասանին ճարտարությամբը անզգալի կը դառնա։ Շեշտը՝ բնական է և դեմքին արտահայտությամբը անհավասարելի է այս դերասանապետը։

Առաջին տեսարանի դիմառնությունը, երկրորդ արարվածին երկու Տիաֆուսներուն մեջ իր կեցվածքը, տոքթոր Բյուրկոնի առջև շանթահարումը, հետո մեռելի ձևացումը, ամեն կերպով կատարյալ էին։

Իսկ պարտավոր ենք ճանչնալ թե Տյուվալի հոր դերին մեջ պ. Ֆաուլյանճյան տկարացավ. առաջին ու գլխավոր պակասությունը իր դերը լավ չգիտնալն էր. հուշարարի օգնության ապավինողները երբեք հաջողություն ակնկալելու չեն բեմի վրա. վարանում մը, թոթովում մը, սխալ արտասանություն մը,

մեկ բառով խոսվածքի ամենեն փոքրիկ թերացումը դերասանին բոլոր արվեստը կը ջնջե ու կսպանե։

Տյուվալի հոր արտասանած բառերը դանդաղ, մին մյուսին սպասելով շարունակ, հուշարարին հատուկտոր փոխանցումին պես, այս բոլորը իրեն պես մեծ դերասանի մը սպասվածը չէր, և դերասանը վայրկյանը վայրկենին քաղելով իր բառերը, անկարող եղավ կյանք կամ ոգևորություն դնելու անոնց մեջ։

Երևակայական Հիվանդին մեջ ամենամեծ հաջողությունը ունեցավ օրիորդ Քնար Թուանեթի դերով. այս էր հայտնությունը որ զմեզ գրավեց ու հիացուց գրեթե։

Երբեք երես առած աղախինի դերը այսքան բնական, այսքան անքննադատելի ճարտարությամբ երևան հանված չէր. իր ձևերը, իր տերը չսեպող սպասավորի մը հանգամանքը, ասկե ավելի առաջ չէին կրնար տարվիլ։

Մոլիեռի կատակերգության մեջ առաջին մրցանակը իրեն տվավ հասարակությունը և չսխալեցավ։ Օրիորդ Քնարի արվեստը գոված ատեններս կը հիշեցնենք որ իր հաղթանակին մեկ մեծ մասը՝ պարտավոր է իր դերը լավ սորված ըլլալուն Թուանեթ՝ երեք արարվածներուն մեջ երբեք կարոտ չեղավ հուշարարին։

Օրիորդ Քնար իր այս դերին մեջ ճշմարիտ դերասանուհիի մը արժանիքին ապացույցը տվավ. իր գործը զգացման գործ չէր, այլ մտքի նրբության, և նույնիսկ եվրոպական թատերաբեմի մը պատիվ կրնար բերել իր շարաթ գիշերի դերին մեջ։

Անկե վերջը երկու Տիաֆորյուսները պ. պ. Ջոպանյան և Արշակ նույնպես արժանի կը գտնենք ամեն գովեստի. դիմաշարժության մեջ ամեն կերպով հաջողություն ցույց տվին. հայրը գլխի շարժումներով ընկերանալով տղուն ճառերուն, օգնության հասնելով անոր, իր հոգածությունը ճշմարիտ կերպով պատկերացուց. իսկ որդին իր ծաղրելի ու ապուշ գիտնականի ձևերուն, հետո բռնկած բայց վեհերոտ սիրահարի շփոթությունը մեջ կատարյալ եղավ ու հասարակությունը երկուքին ալ հայտնեց իր գոհունակությունը բուռն ծափահարություններով։

Հաջող էր նաև պ. Վ. Քյուրեճյան իր սպառնալից գուշակութիւններուն մեջ, թեև իր քալվածքը ու շարժումը ավելի հին ատենի վրեժխնդիր արարածի մը վայելուչ են։

Քլեանդի դերին մեջ պ. Գալֆայան անուշ ձայնե մը զատ բան մը չհասկցուց. բեմի համար պետք եղած քաջութիւնը չուներ. իր սիրահարի ձևերը ավելի զարմացած մարդու մը կերպարանքին կը նմանեին քան թե ձեռներեց ու սատանորդի երիտասարդի մը որպես պետք է ըլլա Քլեանդ։ Իսկ օրիորդ Քլեր (Անժելիք),—չենք գիտեր թե հայ անուններու պակասութենե՞ն արդյոք այս օտար անունին դիմած է դերասանուհին,— իր գեղեցիկ երևութեն զատ ոչինչ ունի հիշատակության արժանի. բեմին վրա միշտ շփոթած աղջիկ մըն է որ մինչև երրորդ արարվածին վերջը ինքզինքը չկրնար գտնել։

Պ. Վարդազարյան պարզապես քնացուցիչ դեղի մը ազդեցությունը ըրավ իր կցկտուր երկարաբանութիւններովը։ Այն ալ իր դերը չգիտցողներեն մեկն էր։

Տիկին Պերճուհի (Պելին) գոհացուցիչ է և ավելի գոհացուցիչ պիտի ըլլար. եթե այս ալ իր դերը լավ չգիտնալու ախտեն չտառապեր, վասնզի իր շարժումները պատշաճ են ու բավական իր երկրորդական դերին։

Իսկ նոտարը պ. Շալճյան լավ կրնե եթե ուրիշ անգամ ավելի պատրաստությամբ երևան գա, վասնզի պարզապես ողորմելի էր իր անհատնում կմկմանքին մեջ։

Ու այս ամենը գոհության նոթով մը փակելու համար հիշենք փոքրիկ Ազնիվը Լուիի դերին մեջ որ առանց կեղծիքի փոքրիկ տղու ճշմարիտ տպավորությունը հառաջ բերավ։

Մեկ բառով պ. Ֆասուլյաճյանի խումբը հաջողեցավ Մոլիեռի զավեշտին մեջ. այս նոր պատրաստված դերասանուհիներն ու դերասանները ցույց տվին որ լավ մարզիչի քով աշխատած են ու բնական պետք եղած տրամադրությունը ունին. իրենց կը մնա աշխատիլ ու հառաջանալ. հիներեն շատեր կը ճանչնանք որ իրենց չափ արժեք չունին. բայց պետք չէ մոռնալ, խղճի մտոք աշխատության գործ է դերասանությունն, եթե կուզեն փայլիլ հոն և ձեռք բերել նախանձելի անուն մը։

***

Քամելիազարդ Տիկնոջ երրորդ արարվածով հանդիսականներուն թուլացած ուշադրությունը վերստին կամփոփվի կը հոծանա. ամեն ոք գիտե որ այս երեկույթին մեծագույն ձգողությունը Տիկին Սիրանույշի վերերևումն է ու անոր կսպասեն անհամբեր. տասնհինգ երկար տարիներե ի վեր առաջին անգամն է որ հայերեն լեզվով թատերգության մեջ կերևա ահա։

Տիկին Սիրանույշի մուտքը ահագին ծափահարությամբ մը կողջունվի. իր քալվածքն իսկ տարբերություն մը ունի ուրիշ քալվածքներեն, թույլ ու շնորհալի բան մը զոր չեմ կրնար ճըշտել. իր շարժումները չեն շոայլվիր ու հատուկ շնորհ մը ունին միշտ. իր ձայնը արծաթի հնչյունը ունի, բրթռալով սրտերուն մեջ։ Ամենքը լուռ իրեն կունկնդրեն ահա. ահա մեծ դերասանուհին ինքը, այնպես ինչպես ըսած էին մեզի թիֆլիսցիք. իր արվեստը օրինակած բան մը չունի, ամեն բան իրեն հատուկ է։ Եթե սկիզբները այնքան մեծ չէ իր ազդեցությունը, պատճառը քիչ մը այն է որ իր մարմնոյն մեծակառույց շենքը կը հերքե քիչ մը հյուծախտավոր հիվանդի դերը. ու երբ դերասանուհին կըսե թե հազիվ քիչ մը ատեն ունի ապրելու աշխարհիս վրա, ոչ ոք կը հավատա իրեն, այնքան առողջ կը գըտնե զինքը։

Բայց հետո արվեստը իր ներգործությունը կընե, ամենքն անձնատուր կըլլան։ «Թե որ բաժնվիմ անկե, ես իսկապես կը մեռնիմ»։ Այս կտորին մեջ այնքան սիրտ ու արդյունք կը դնե դերասանուհին որ ամենքը միևնույն դողով կը համակվին. ո՛չ, ալ ուշադրություն չենք դարձներ ռուսահայ աստցվածքներուն որ կր սպրդին հոս ու հոն, «կր յինինա», «ասում ենն», և այլն։ Նամակը գրելու տեսարանին մեջ իր սրտի դժկամակությունը, ներքին պայքարը լավ բացատրեց անշուշտ, բայց կը կարծենք որ այս կտորը պետք է ավելի համր ու ծանր ըլլար. նամակագրությունը ավելի վարանում, ամեն մեկ բառը ավելի շատ խորհրդածություն կը պահանջեր. այդ պահուն իր ձեռքի հուսահատ գալարումները իսկապես ծովասույզ անձի մը ջանքին կը նմանեին։ Ու հասարակությունը շունչը զսպած, չընդմիջե-

լոե, չխոովելու համար պատկերը, կը դիտեր. և այս ամենաուշց ու անձկալից սպասումը՝ իրոք, ավելի էր իրրև գովեստի արտահայտություն, քան այն ծափահարությունները որով անընդհատ ողողունեցինք գինքը վերջեն։

Արմանի դերը առաջին տեսարանին մեջ պ. Շահինյան լավ տպավորությամբ չկատարվ, բայց վերջեն հաջողություն գտավ Մարկրիթի հետ վերջին տեսակցության մեջ և հորը գիրկը նետվելու ձևը բոլորովին գրավիչ ու ճշմարիտ եղավ։

Պ. Շահինյան պետք է նվազ աճապարող ըլլա իր դերերուն մեջ. երբ սենեկին մեջ Մարկրիթը կը կանչե հետո սպասուհին, իր «ոչ ոք, ոչ ոքՙները շատ շուտ կը հասնին. պետք է սպասել։ հույսը կտրել և հետո ըսել «ոչ ոք»։

Գեղեցիկ փունջ մը ընծայվեցավ Տիկին Սիրանույշի հայ համլո ներկայացուցիչներու կողմե, ուրիշ գեղեցիկ փունջ մը Քատը գյուղի երիտասարդներեն առ օր. Քնար և դափնյա պսակ մը առ պ. Ֆասուլյաճյան։ Լավ երեկույթ մը, եթե խումբը գիտնա օգտվելու եղանակը՝ գործը շարունակելով։

Լայրեքիֆ, 21—12—1892

ԹԱՏՐՈՆ

Ո՞վ ըսավ որ զրոսատեղի մըն է Թատրոնը։ Ո՞վ ըսավ որ պարի կամ թղթախաղի տեղը բռնելու պետք է ծառայե ատեն ատեն, պարզապես զանազանություն մը հառաջ բերելու համար։

Այնքան հաճախ գրված է թե դպրոց մըն է Թատրոնը որ այս քանաձևը պիտի չկրկնեմ. իմ աչքիս, տպագրության նշաններու մեջ տեսնված մատնացույց ձեռքի այն նշանն է որ ընթերցողին մասնավոր ուշադրությունը կը հրավիրե հաջորդ հատվածին վրա։

Կյանքի անկայուն ու հեղհեղուկ երևույթները՝ աչքի առջև իրենց հարատև ներկայությամբը՝ հասարակ ու անկարևոր կը դառնան գրքի մը շարունակվող ու լեցուն էջերուն պես, և թատրոնն է որ կենալու նշանը կու տա, հատուկ ուշադրությամբ դիտելու հարկը կզգացնե աս կամ ան տիպարը որուն փողոցը հանդիպած ենք շատ հեղ առանց գլուխնիս դարձնելու։

Եվ այդ պատկերին առջև խորհրդածելու պարտավորած՝ հարկ չի՞ ըլլար դառնալ մեր անձին վրա, մեր սրտին վրա իբրև թե անոնք ալ Մատնանիշ եղած ըլլային, և թատերաբեմին վրա ի տես բերված անձին մոտեն կամ հեռուեն ունեցած մեր առըն-

• չությունը որոշել, երբեմն կատարյալ մեր նմանությունը խոստովանիլ։

***

Այս ըմբռնումով, թատրոնի բարոյացուցիչ հանգամանքին քարձրությանը ոչ մեկ արվեստ կրնա հավասարիլ։ Բուն իսկ կյանքն է ան. ապրվածը, իրականը և ոչ թե գրված, երգված կամ նկարված կյանքը։ Հոգեբանական կրկներևույթն է. հազատ երկվորյակներուն վրա իմաստասերը կամ բարոյախոսը իր ամեն փորձերը կրնա կատարել, ամեն միքրոպները ծնուցանել, հետևությունները երևան հանել. տեսակ մը Փաթյորյան աշխատանոց որուն մեջ ռասումնասիրություններն ու զննությունները կըլլան ոչ թե բնախոսական տեսակետով նմանօրինակ արարածի մը, այլ նույնիսկ մարդ էակին վրա։ Եվ հոն, հասարակությունը, փոխանակ դրան ծակեն նայելու ներս, ներկա է անձամբ, իր աչքով կը հետևի տեսարանին հառաջ բերած ախտաբանական երևույթներուն, վախճանին ու դարմանի միջոցներուն։

***

Իսկ այն հասարակություններուն համար ուր որ ընթերցանությունը տարածված չէ կամ գրեթե կը պակսի, թատրոնը անհրաժեշտ պետք մըն է հոն։ Հիմա, մարդկությունը՝ ամենեն չատ, տաղտուկե կը տառապի. հազիվ աչք մը նետած գրքի մը առաջին էջին վրա և ահա վերջաբանը հասկնալ կուզե. իր աճապարող հոգիին ծանր կուգա էջերը դարձնել մի առ մի։ Այսպիսիներուն համար թատրոնն է որ պիտի գա իր կյանքի համառոտ կրճատումովը ամենեն նեղսիրտները գոհացնել, մեկ երկու ժամվան մեջ ամբողջ տարիներու հոլովումը, անցքերը, պատահածները խիտ ու հոծ ձևով մը ներկայացնել, և էապես չահեկան մասերը երևան հանել։

Եվ զարմանք որ մեր մեջ՝ ուր ընթերցանության սերը չկայ պես է, ուր գիրք չի հրատարակվիր գրեթե, ուր լրագիրներն

անգամ հազիվ ուշացրիվ ակնարկի մը կարժանանան, զարմանք որ թատերգություններ չեն գրվիր մեր մեջ, չեն խաղցվիր։

***

Բայց թատրոնի բարձրութենեն իսկ կը հետևի թե կատարյալ բան մը ըլլալու է ան կամ բնավ ըլլալու չէ, Թիեռին մեկ խոսքը փոխ առնելով հոս ըստ պատշաճի։

Դերասանական արվեստը միջակություն չընդունիր. ասոր համար է որ այդ պայմանով ձևացած տեսարանը պետք է ուրիշ, բոլորովին ուրիշ անուն մը ստանա, բայց թատրոն չհորջորջվի երբեք։

Մեր մեջ արվեստագետներ չեն պակսիր ու անկարելի չէ, բնավ անկարելի չէ խումբ մը կազմակերպել որ Թատրոնը վերականգնացնե։ Պետք է ի բաց թողուլ արվեստագետի պզտիկ նախանձները, չքաշելու, իրարմե նսեմանալու զգացումները։

Ու գործնական վերջաբան մը տալու համար այս ամեն խորհրդածությանց, կը հավատանք որ պզտիկ չանք մը կը բավե վերականգնելու թատրոնը մեր մեջ։

Մեր հասարակության գործերուն գլուխը գտնվողներուն կոչում կրնենք հայ թատրոնը կազմակերպելու համար բաժին մը հանել իրենց աշխատութենեն։

Դպրո՞ցը,—այո՛. բայց Թատրոնն ալ։

Մասիս, 31—12—1892

1893

ՏԱՐԻ ՄԸ

Դեկտեմբեր 31ի հավելվածական թիվով Մասիսի 1892ի տարեշրջանը բոլորեցավ։

Տարեգլուխ մը, անշուշտ, տարբերություն չունի ուրիշ ոևէ օրե, բայց հանգրվան մըն է ուր անօգուտ չէ կանգ առնել, կտրված ճամփան չափելու համար ճամփուն մնացածին հետ. և, առանց սրտաթափ ըլլալու պարտականության մեծութենեն, աշխատելու ջանք ընել հետևելիք շավղին համար՝ ուղիղ գծին, երևակայական գծին մոտենալու շարունակ։

Մասիսը հրատարակողները կը կարծեն որ այդ ջանքը ըրած են միշտ խղճմտորեն ու համեստորեն. բոլորվող տարեշրջանը այս մխիթարությունը ու այս վարձատրությունը միայն կը թողու իրենց։

***

Քանի որ տարեկան հաշվեհարդարություն մըն է որ կրնենք ահա, Մասիսի գրական արժանիքը կը կարծենք որ հայողեցանք միշտ բարձր պահելու. դժվարահաճ ու խստապահանջ եղանք ամենուն և մեր իսկ անձին դեմ։ Ջանացինք, ու կը կարծենք թե հայողեցանք, որ գրական ամեն սեռերու մեջ զորա Մասիս շոշափեց, լավագույնները տանք մեր ընթերցողներուն։

Նույնպես, գեղեցկի գաղափարին զուգընթաց պահպանե-

ինք օգտակարի, պիտանիի գաղափարը՝ միշտ գրական տեսակետով, որ ապաքեն Մասիսին միակ տեսակետն էր։

Քաջալերությունները չպակսեցան ամեն անոնց կողմե որոնց կարծիքը ու վճիռը կարևոր էր մեզի, ու այսպես սրտապընդած, ի գլուխ հանեցինք փոքրիկ գործ մը, որ սակայն կարգ մը պզտիկ գործերու պես, մեծ աշխատություն կը պահանջեր։

***

Հանրային խնդիրներուն մեջ երբեք անոտի վեճերով չզբաղեցանք. սկիզբեն մինչև վերջը մեր մատնանիշ ըրած նյութերը միշտ ուշի ուշով քննելե վերջը կարծիք հայտնեցինք, երբեմն խստությամբ, երբեք կիրքի տպավորության տակ, ամեն առթիվ պնդելով զարգանալու պետքին վրա, կրթական ու գրական հնոտի համոզումները, եղանակները մեկդի ընելու հարկը չատագովելով։

Մասիս օրաթերթ մը չէր, ու ըլլար իսկ, իր սկզբունքները և նույն իսկ արժանապատվության զգացումը թույլ չէին կրնար տալ իրեն վեճի ու պայքարի բռնվելու աջին ու ձախին հետ։

Մեր համոզումն այն է որ ամեն գաղափար պետք է արտահայտվի ու մտիկ ըլլվի իր ապացույցներուն ու բացատրություններուն հետ, առանց քենի, առանց նախապաշարումի։

Այս ըսել չէ թե համամիտ ըլլանք անոնց հետ որոնք՝ ներելի կը համարին առտուն կանուխ ելլողին՝ առանց ոևէ հեղինակության, առանց անհրաժեշտ հմտության մը գոնե նվազագույն քանակին, ազգային կամ գրական ամեն նյութի վրա վճիռ տալ։

Բայց ընդհանրանալու վրա եղող այս ախտին դարմանը ինքնաճանաչության ու համեստության գաղափարին տարածումովը միայն կըլլա։

***

Այսուհետև, Մասիս շաբաթաթերթի վերածվելով, ավելի ընդարձակ սահման մը ունի աշխատելու համար. այն բոլոր ուժերը որոնցմով Մասիսը ձևացավ անցյալ տարի, պիտի

մնան ասպարեզին վրա, շարունակելով Մասիսը հրատարակել և հատուցանել հանրության այն պարտքի բաժինը, որ հրատարակության կիյնա։

Անոնք որ հանրության դեմ ոևէ պարտավորություն չունենալու գաղափարը ունին, անոնք ողորմելի եսամոլներ են, աննշան ու անօգուտ մարդիկ ով որ ըլլան, ուր որ ալ գտնվին. անհատական հաշիվներեն դուրս աշխարհի մը գոյությունը չճանչողներուն բաժինը այդ աշխարհին առջև անծանոթ մնալն է։

Հոս, հոն, պիտի պատահիք մարդոց, ծանո՞շներու որ քևերնուդ քաշեն, կամաց մը ականչնուդ ի վար փսփսան, իրենց փորձառու մարդու խորհուրդները տալով.

— Անձնական գործերուդ հատկացո՛ւր եթե ժամանակ ունիս ավելորդ. ի՞նչ հարկ գրական գործի մը կապվիլ, որ փոր չկշտացներ։

Կը մաղթենք որ այս հավիտենական անկուշտները չհանդուրժեն, չապականեն մեր տղոց հոգիները։

***

Այլ ամեն ոք գա՛ թող իր աշխատության բաժինը բերելով իր տարիքին, իր կարողության համեմատ ծառայելով երկրին և հասարակության. անհատները կանցնին և կանցնի իրենց հետ կյանքերնուն հիշատակը. բայց ինչ որ ապահովապես կը մնա անկորուստ, հանրության վաստակավորի մը անունն է, միակ ինչը՝ որ արժեք ունի, միակ հարստություն՝ որ չփճանար և զոր հանրային երախտագիտությունը կը պահպանե հավիտյան։

Այս պարզ դիտողությունները ըրինք պատասխանելու համար անոնց, որոնք կը կարծեն թե անխելքի գործ մը կրնենք մենք, փաստաբան, վաճառական կամ արհեստավոր, մաս մը հատկացնելով մեր ժամանակեն գրական գործի մը, երբ այդ մասն ալ մեր արհեստին մեջ կարելի էր դրամով փոխարինել։

Շահադիտությունը պետք է վերջապես կանգ առնե տեղ մը։

ՃԱՄՓԵՆ ՇԵՂԱԾ

Մարդկային առաջադրութիւններուն հեղհեղուկ հանգամանքը նոր չափի սորվինք։

Պզտիկ զարտուղութիւններու, թեթեւ խոտորումներուն, որոնցմե՝ ոչ ոք զերծ մնալու հավաստիքը ունի, չափի ուշադրութիւն դարձնենինք, եթե խոտորողը ինքը՝ իր խստապահանջ բարոյախոսի դերը ծայրահեղութեան տարած չըլլար, իր անմոլոր առաքյալի կոչումին վրա չբարբառեր շարունակ։

Մանավանդ խորհեցանք որ չէինք կրնար լռել անոր համար՝ որ պզտիկ շեղումը կը մեծնար հետզհետե, միակերպ աճումով մը ու, պարզապես, առջի ուղղության ու հին քարոզներուն, որոնց պարզմտութեամբ ունկնդրեցինք ատենով, գլխովին ներհակին կը հանգեր։

Այս պարագային մեջ մտածեցինք որ ժամանակ էր, քիթերնուս խնդացած ըլլալու առավելութիւնը մեծխոսիկ քարոզիչին չձգելու համար, հին օրերուն խոստումները իր միտքը ձգել, հին բարի ժամանակներուն հիշատակը և ուխտը պահիկ մը վերակոչել։

***

Քարոզիչը Հայրենիքն է. ամենքը հասկցան արգենն։

Իր երևումը արդարացնելու համար մեջ բերված պատճառը այն էր, կամ գեթ այնպես կը պատմվեր ամենուն, որ պետք մը կար վերցնելու այն խտրության ձևը, այն դասակարգերու անհատնում բաժանումը որ մեր հասարակության մեջ մուտ կը գտնար։

Ամեն ինչ հարուստներուն տալու ու ամեն ինչ անոնցմե ակնկալելու անհիմն գաղափարին դեմ ոգորելու համար երևցավ այս թերթը։

Ի սկզբանե, հրապարակին վրա ամեն բան կը վիրավորեր իր աղանդավորի պարկեշտությունը. իրեն նայելով՝ լրագրությունը ու մասնավորապես Արևելք հարուստ դասակարգին հետ շատ կզբաղեր, շատ տեղ կուտար անոնց իր սյունակներուն մեջ. անոնք միայն գոյություն ունեին իր աչքին. անոնց ծնունդը, ամուսնությունը կամ մահը հանրային դեպքեր էին զոր կը փութար արձանագրել։

Հայրենիք ինք ուրիշ սկզբունքներ մեջտեղ դրավ. իր լուրչ խմբագրականներեն սկսած մինչև ամեն զվարթամիտ կատակաբանությունները որոնք Ջուանաճյան էֆենտիի հարսնիքին ծանուցումովը խնդալե մարեցուցին զմեզ, միևնույն անխախտ կամքը կը հայտնեին։

***

Ո՞ւր են հիմա այն հին բարի ժամանակները։ Հարուստներուն ամուսնության կամ մահվան նկարագրությանց ջրհեղեղային ողողումին տակ Հայրենիք անտես եղավ մեր աչքեն, իր խմբագրականները երբեմն ոչ այնքան հոգածու գրչե կարտադրվին, անոնց մեջ ոչ այնքան համառությամբ փնտրված է բուն բառը կամ պարբերության գեղեցիկ դարձվածքը որքան այդ ողորմելի նկարագրությանց մեջ։

Բարեշրջության օրենքն է արդյոք այս անակնկալ ու հնոտադարձ ձևը լրագրության, զոր ցավով պետք է խոստովանիլ։

Հայրենիք կատարելագործյալ վիճակի մը բերելուն կրնա պարծենալ։

Այս ճամփուն մեջ անգամ մը մտնելէ վերջը, անակնկալներու շարքը գուշակելու հավակնությունը չունինք, բայց կըսպասենք որ այս օրերս կարդանք Հայրենիքի մեջ Ջուռնաճյան էֆենտիի անդրանիկ զավկին ծննդյան լուրը որուն համար հատուկ խորագիր մը ստեղծված է ԲԵՐԿՐՈՒՆԻՆ, այս անգամ առանց կատակի։

***

Տեղն է որ հիշեցնենք մեր Հայրենիքի բարեկամներուն որ լրագրությունը քահանայություն մը դավանելէ հետո պարտավոր են անոր մաքուր ու խիստ պարտավորություններեն ա՛լ չխուսափիլ։ Ավետարանիչին պես չպիտի ըսենք իրենց որ ի՞նչ պետք է ընել ուրիշին աչքին մեջ շյուղը փնտրելու իրավունք ստանալու համար, բայց ըսենք պիտի միայն որ կարգավոր համարվելու համար քիչ մը կարգ պահել անհրաժեշտ է։

Փարիզ, 23—2—1893

ՊԱՐՊՎԱԾ ՕԴԱՊԱՐԻԿ

«Հայրենիք»ի արձակած սուր ճիչը չի զարմացներ պիս-
հարվածին ցավը սրտին զարկած ըլլալուն նշանն է։

Իր ցասմնակոծ թոթովումին մէջ սպրդող կոպտութիւնը՝ ապրանքը չհավնվելուն համար բերանը ավրող խանութպանի լեզվին չի՞ նմանիր քիչ մը։

«Հայրենիք» այն ատեն միայն նշանակութիւն մը ստացած էր, երբ մեր երիտասարդության մտավոր ձգտումը ներկայացնելու հանգամանքը ուներ. այս եղանակութիւնը չկրցավ պահել երկար ատեն. իր աշխատակիցները՝ որոնք իր մնայուն խմբագրութենեն շատ ավելի մեծ նոինակութիւն մը կը կազմեին իր անունին շուրջը, գաղափարի մը ծառայելու տենչանքը ունեին ու չէին կոնար մնալ այն տեղ, ուրկե կեղակարծ փերեզակի մը հոտեր կակսեր գալ։

Նախատինքները՝ մարմիններուն անկումին կը նմանին. այնքան ավելի ծանր կը կշռեն, որքան բարձրեն կուգան. բնագիտական պարզ օրենք մը՝ որ բարոյական աշխարհին մէջ նույնքան ստույգ է և կը խորհիմ որ այս հաշիվով նեղանալու իրավունք չունիմ «Հայրենիք»ի պատասխանին անշնորհ ձևին վրա։ Չեմ գիտեր թե «Հայրենիք»ի մեջ կը հասկնա՞ն խոսելու

այս եղանակը. ամեն պարագայի մեջ իմ միտքս չէի կրնար յավագույն կերպով բացատրել։

Հետո, այս վեճը չշարունակելու համար եղած կանխահաս ազդարարությունը բոլորովին ավելորդ էր, ըստ որում գիտցողները գիտեն ու չգիտցողները կրնան գիտնալ, թե սկզբունքի, ուղղության, գաղափարի վերաբերյալ խնդիրներու վրա համոզության ու պատշաճության սահմանի մեջ բանակռիվ մը չարունակելու կարող շատ մարդ չկա «Հայրենիք»ին մեջ։

***

«Հայրենիք»ի առաջ բերած արդարացումը՝ իր դատապարտությունն իսկ է։ Տարակույս չկա որ բանավոր չէ հիրավի ու հանիրավի հարվածել պերճ դասը որ մեր հասարակության մեկ մասը կը ձևացնեն ճիշտ ինչպես աղքատներն ալ՝ ուրիշ մեկ մասը անոր։ Ասոնք շատ աղվոր, շատ սիրուն խոսքեր են. եթե մեկ պակասություն մը ունին, այն է թե այս խոսքերը «Արևելք»ինն են և ոչ ձերը, կամ թե, այնքան ձերն են որքան Հովվական Աստվածաբանությունը՝ իր Սրբազան հեղինակին։ Այս խոսքերը հեղհեղված են ձեզի դեմ ու ձեզի դեմ միայն։

Հիմա, ինծի դեմ հառաջ բերելով այս բացատրությունները, պաշտպանության գործիք մը ընելով ձեռքերնիդ, գրեթե համբուրելով այն խարազանը որով զձեզ մտրակած էին ատենով, հեղհեղո՞ւկ թե հաստատամիտ լրագիր մը ըլլալնիդ ցուցուցիք։

Դուք որ հրատարակած եք Մեծերը ու պզտիկները ։ վերնագրով հոդված, գիտեք թե ի՛նչ էր իմ ուզածս. ես համերաշխ գործակցություն ու արդար բաժին կուզեմ երկուքին համար ալ։

Ես չըսի ձեզի, որ ազգին օգտակար անձի մը մահը պետք չէ որ գրեք. չըսի մինչև իսկ որ անօգուտ անհատի մը մահը չի գրեք երբոր կը վճարեն ձեզի. գիտեմ որ Կատոնին բերանը ունիք միայն և ոչ սիրտը. գիտեմ որ չեք կարող ձեր անձին համար ըլլալ այնքան խստապահանջ որքան դուք հանիրավի աններող եք ուրիշներուն դեմ։

Այլ ըսի միայն և հասարակությունը ինծի հետ պիտի ըսե ձեզի որ ձեր թերթը այն չէ որուն աշխատակցեցանք ատենով։

Կրսեք որ ձեր «Աշխարհիկ Կյանք»երը ու «Տխրունի»ները վճարված ծանուցումներ են. որո՞ւ մտքեն պիտի անցներ. շատ հնարագյուտ նրբություններ ունիք։

Ով միթե շահադիտությունը կը դադրի՞ շահադիտություն ըլլալե, անոր համար որ ճարտար ձևերու տակ կը ներկայանա. էական բանը հոս, այդ հոդվածներուն դրամի փոխարեն գրված ըլլալու խոստովանությունն իդ է. և ուրիշ մը իմ տեղս պիտի գոհանար ադով. բայց ես կուզեմ նաև տրամաբանելու կարողություններիդ ալ երևան հանել, տեսե՛ք ինչ կերպով։

Կրսեք որ այդ ծանուցումներուն տակ «պատմական ստուգությունները» կը զետեղեք։ Պատմական անցքերը՝ վճարված ծանուցումներե անջատ դնելու տեղ չի գտա՞ք։

Մտածեցե՛ք որ հակասությունն իդ անհեթեթ սեպվելու չափ մեծ է. կա՛մ պատմական ստուգություններ, կարևոր անցքեր կը հրատարակեք այդ խորագիրներուն տակ, այն աղքատասեր վաճառականին մահվան պես որուն կակնարկեք, և այն ատեն պետք չէր որ այդ հանրային կորուստը՝ վարձված ազդարարության մը մեջ անհոգ կերպով քաղեիք, առանց ոևէ խորհրդածության ձեր կողմե, երբ այնքան շռայլ եք ձեր բոլոր մտածածները պարզելու ամեն առիթով և կամ հարսի մը շրջազգեստին ձևը և ժանյակներուն ալանսոնեն գալը՝ պատմական ստուգություններ կը նկատեք։

Այս երկսայրաբանության առջև, կզգաք, այնպես չէ՞, որ փախուստ չունիք ու պատին փակած եք բոլորովին։

***

Դժբախտություն մըն է անշուշտ որ այն երիտասարդները՝ որոց բարոյական երաշխավորության տակ այս թերթը հասարակության ներկայացավ, որոց գրական փառքովը պարծենցավ ամեն օր, շատ ուշ տեսան մանվածապատ շավիղը որուն այս թերթը կը հետևեր։

Ի՞նչ էր առանց մեզի, առանց իր շուրջը բոլորվողներուն, այս թերթին իրեն հատուկ ուժը. ու հիմա այս թե՞րթն է նորեն,

որ կը համարձակի «Մասիս»ի խմբագրապետին ըսել որ պատիվ մը կրնա վիճաբանելով իրեն հետ։

Կուզե՞ք որ փունջ կապեմ այն գովասանքներեն զորս ձեր թերթին մեջ ըրիք իմ համեստ անձիս համար. աշխարհի առջև չպարծեցա՞ք միթե էն չնչին գրութիւնս ալ իբրև խմբագրական հրատարակելով։

Ես հիմա որ հեռացանք «Հայրենիքեն», հիմա որ բազեի թևերով զարդարված այս ռամիկ սագը ձգեցինք իր ճահիճի կյանքին, հիմա՞ ուշաբերեցաք ըսելու համար որ պզտիկ ու թևթև մարդու հետ գործ ունեցած էիք։ Ա՛յս կերպով կը պաշտպանեք ինքզինքնիդ՝ հեղհեղուկ, առանց սկզբունքի լրագրի ամբաստանութեան դեմ. հաստատա՞ծ թե հերքած եղաք իմ ամբաստանութիւնս։ Ես որ ցույց կուտաք ահա թե որքա՜ն ապիկար եք նույնիսկ ձեր անձը պաշտպանելու գործին մեջ, ձեզի՞ մնացեր է հանրային շահերը պաշտպանել։

Ես այն պահուն որ կը վերջացնեմ այս տողերը, ի՜նչպես կրնամ արգիլել ինքզինքս մտածելե այն առջի օրերուն։ Ո՞ր է այն լեցուն, ուժով ու բարձր թռիչքով օդապարիկը, որուն ճախրանքը պիտի դիտեինք. պարպված, կծկված բան մըն է հիմա. օդաչուս հսկայեն՝ գետնաքարշ թզուկ մը մնացած։

Մասիս, 30—1—1893

ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌՅԱԼՆԵՐ

Սրբազան Հա՛յր,

Այսօր մեռավ հոս տոքթոր Պեհրան որ շատոնց արդեն մեռած էր մեր ազգին համար։

Այսպես կը գրեր քսան տարի առաջ Հյունքյարպեյենտյան Տ. Հայրը Փարիզեն, վերադառնալով համբավավոր բժշկին հոգեարկավորութենեն։

Վերչերս, ֆրանսական ոստանին մեջ մեռնող ու իր բոլոր հարստությունը Ֆրանսայի կտակող հայ միլիոնատերին մահը այս խոսքը միտքս կը ձգե։

Այս մարդն ալ շատոնչ արդեն մեռած էր իր ազգին համար, մեր հասարակության աչքին իր գոյությունը կը նմաներ գոց և պարապ խանութի մը ճակատը դրված այն ոսկետառ անունին որուն տերը շատոնց թողած գացած է իր վաճառատունը, մինչդեռ միամիտ անցորդը կը շարունակե դեռ հեգել այդ ոսկեքանդակ տառերը։

Ձեյ Կուլտի մահվան առթիվ ըսվեցավ որ Միացյալ Նահանգաց ժողովուրդը չէր ուզած ընդունիլ այս խաղամոլին թողած կտակը։

Փարիզի մեջ մեռնող այս կենցաղասեր ու օտարամոլ հայ

հարուստն ալ մին էր այն էապես ողորմելի արարածներեն՝ որոնք հարստության երեսը տեսած օրերնուն՝ իրենց անցյալը ուրանալով կը պարծին. ճեյ Կուլտե մը հազար անգամ ավելի արհամարհելի է այս մարդուն աղտոտ կտակը և գոհ ենք որ մեր ազգին չի գար իր լուման։

❁❁❁

Եվ այս մարդը Պոլսո մեջ, անոր լավագույն վարժարանին մեջ, ճեմարանին մեջ կրթված մեկն էր. հետո կարծեմ քիչ մըն ալ ուսուցչություն ըրած էր. անկե վերջը մտած առևտուրի մեջ ուր 4—5 տարվան մեջ մեծ հարստություն մը ձեռք բերելե վերջը. Փարիզ քաշված էր, իր եկամուտովը ապրելու համար։

Այդ վայրկյանեն արդեն այս մարդը իր բարոյական չափը տվեր էր. ի՛նչ է, քաղաքակրթության համար, առանց աշխատության, միայն եկամուտով ապրող մարդ մը. ո՞չ ապաքեն ամեն ոք, ո՛ր դասին ալ վերաբերի, նորեն բաժին մը, պարտք մը ունի կատարելու աշխարհիս մեջ։

Այս մարդը կարծեր էր որ չորս տարի աշխատելե հետո միայն իրավունքներ ուներ ալ. կյանքի հաճույքները վայելելու իրավունքները զորս չարաչար կերպով ի գործ կը դներ։

Իր ազգը, իր երկիրը մասնավորապես չսիրելուն կը պարծենար և այս է այն մարդը որուն առթիվ ըսվեցավ թե մեր ազգը պետք էր ստանձնել անոր մոտ՝ մուրացիկ ազգականի մը դերը, որ հոգեվարին օնարին քով, վերջին վայրկյանին կուգա անոր հիշեցնել զիրենք միացնող մերձավորությունը։

Ո՛չ. հասարակության մը վայելուչ դեր մը չէ այս ճիտը ծուռ մուրացկանի դերը. ո՛չ, պետք չէ որ զիջանի ան ողորմություն խնդրելու երբեք. ազգ մը իր անհատներուն պահանջումներ կրնա ներկայացնել և ոչ խնդիրքներ։

❁❁❁

Մենք մեր արտաքին լուրերուն մեջ թաղեցինք այս օտարացած հայուն մահվան լուրը, ճիշտ ինչպես մեր եկեղեցա-

կանութիւնն ալ անոր դիակը պիտի թաղեր մեր գերեզմանատունն դուրս։

Ու քանի՞ հատ պիտի թվեինք այս կենդանի մեռյալներեն, եթե թվահամար մը շինելու փորձութիւն ունենայինք։

Նույնիսկ Պոլսո մեջ չպիտի՞ գտնեինք տուներ՝ ուր ֆրանսերեն կը խոսին ու ֆրանսերեն կզգան. ո՛չ իրենց լեզուն գիտեն շնորհքով և ո՛չ մեր երկրին լեզուն։

Ի՞նչ կըլլան ասոնք վերջ ի վերջո. կը հաջողի՞ն գեթ ֆրանսացի դառնալու։

Զմյուռնիո մեջ ամբողջ սերունդ մը կա օտարացած հայերու. տեսած եմ զանոնք. հայեր չեն ուզած մնալ ու ֆրանսացի չեն կրցած ըլլալ։ Ասոնց համար էր անշուշտ որ քերթողն ըսավ.

Օտարացե՛ք, հեռացեք, որչափ կամիք,
Միշտ եք գուք մեր դասալիք։

Մասիս, 6—2—1893

ԷՄԻԼ ԶՈԼԱ

(Մեր պատկերը)

Մշտնջենական պարտյալ մը ֆրանսական Ակադեմիայեն ու մշտնջենական հաղթող մը ֆրանսական գրականութեան մեջ։

Իր անունին ճակատագիրն է, գրական մեծ անուններու պես, տարուբերիլ ամենաջերմ դրվատիքե մինչև ամենախիստ դատափետութիւն. ալեկոծիկ լաստի մը պես բարձրագույն գագաթները ելլել ու ամենախոր վիհեր իջնալ։

Իր բարեկամները ու հակառակորդները հավասար կատաղութիւմբ կը պաշտպանեն ու կը դատապարտեն իր գործը, բայց ոչ ոք, ոչ ոք կը ժխտե իր գրական մեծ տաղանդը։

Տիտոյեն, Սթանտալեն, Պալզաքեն, Ֆլոպեռեն ետքը Զոլան այսօր անվիճելի գլուխն է այն դպրոցին որ գրականութեան մեջ կեղծիքը, ստութիւնը, խաբեութիւնը վերցնելու հարկը կը դավանի։

Գրականութիւնն՝ որ Գիտութեան մասն է՝ չի կրնար անոր հակառակորդը ըլլալ. այս է իր համոզումը. հիմա միևնույն գաղափար չէ՞ որ Գեղարվեստին համար ալ կը հայտնվի ամենուրեք. վակների հաջողութեան գաղտնիքն ալ Զայնարանութեան մեջ մեծ վարպետ մը ըլլալուն մեջը չէ՞ միթե։

Ճշմարտությունը՝ ուրեմն ամեն բանե առաջ, մանավանդ թե ամեն բանե վեր. ահա գրականության արդի բանաձևը որ Զոլային էր։

❁❁❁

Ըսին որ կյանքի այն հոյակապ ուսումնասիրությունը որ «Ռուկոն-Մագառներու» շարքովը կը մարմնանա, իր նկարագրոլ ճշտապահությամբը վնասակար ու վտանգավոր բան մը ուներ հանրային բարոյականության համար։

Ամեն անոնք որ մոլության դեմ մաքառած են, վար առնելով անոր կեղծիքի դիմակը, ամենքն ալ այս ամբաստանության ենթարկված են։ Հա՞րկ էր ուրեմն մոռնալ որ մոլությունը գոյություն ունի կամ ցույց տալ զայն Ֆյոյյեին պես այն նուրբ շպարներով գեղեցկացած որ հրապուրիչ ընծայեն զինքը անփորձ աչքերու։

Այսպես չէ խորհած Ֆրանսացի մեծ վիպագիրը և պարկեշտասուն Անգլիան վերջերս իր մեկ մեծ գրագետին բերնով, որ Վերնոն Լի կստորագրե, ճանչցած է որ Զոլայի ձեռնարկած գրական վաստակը էապես բարոյացուցիչ հանգամանք մը ունի։

Իր վեպերուն մեջ Դժբախտությունը ու Անկումը ուսումնասիրած է այս մեծ գրագետը ուրիշներու թողլով Բախտը ու Հաջողությունը պանծացնելու դյուրին գործը։

Խավարին ու տիղմին մեջ ոսկվիրա մը եղած է իր ներողամիտ իմաստասիրության լույսը ցրվելով հոն ալ։ Զզվանքի ու սոսկումի աշխարհին այս մեծ խուզարկուն՝ շահեկան, ապշեցուցիչ ու զմայլելի բաներ գտած է այնտեղ. ու տիրող ընդհանուր փտտումին վրա առանց հուսահատելու, նոր հավատք մը, նոր ուժ մը քաղած է անկից վերակենդանության, մաքուր ու անբիծ կյանքի մը ծագումը այդ աղջամուղջեն։

Այս է ահա իր եզրակացությունը որ արտապնդություն կուտա ընթերցողին, իր վիրաբույժի գործողությունը որ շարավի ու թարախի գարշանքը ունի, կենդանության, գրեթե վերակենդանության գործ մըն է։

❋❋❋

Ռուկոն-Մագառներու շարքին մէջ ամենքը համաձայն են «Ժերմինալ»ը իր գլուխ գործոցը համարելու մասին։ Կարո՞ղ եմ արդյոք ես, հայ հրապարակագիր մը, իր նվազ համբավավոր մեկ հատորը նախադասելու։ Եվ սակայն առանց քաշվելու պիտի ըսեմ որ ամենեն գերազանցը կը համարիմ իր Գործը «L'oeuvre», որ կարծես իր անձին վրա գրված, իր ճակատագրին վրա մտածված երկ մըն է։

Քլոտի ու Ֆաժրոլի անունները ընկերական պայմանագրությանց հետևանոք ստեղծված երկու ոսոխ գլուխներու անունները պիտի մնան։

❋❋❋

Իր հռչակավոր վեպերու շարքին մէջ «Ժերմինալ»են հետո, որ հանքերու մէջ աշխատողներու զոհողության ու տանջանքի կյանքը կը ներկայացնե, կուգա «Աստմուառ»ը, որ գործավորաց կենցաղը կը նկարագրե. արբեցությամբ շաղախված, փճացած գոյություն. «Երկիրը»՝ որ հողագործներու նյութապաշտ ու անասնացած ոգին կը մերկացնե, «Բո Պուլը»՝ որուն մէջ քաղքենիներու արտաքին շենքին ու շնորհքին տակ պահվրտող՝ բարոյական նեխումը մատնանիշ կըլլա, «Դրամը»՝ որ շահադետներու բարքը կը պատկերացնե իր խարդախութենե ձևացած ճարպիկության ու ձեռներեցության մէջ. «Նանա»ն՝ որ անձնամատույց կնոջ մը՝ ամեն դասակարգի անհատներու վրա ի գործ դրած տարփական նախճիրներու պատմությունն է և որ մածնող շաղախին պես միևնույն շենքին բոլոր քարերը ու մասունքը իրարու կը միացնե միևնույն ապականության խմորովը. և ամենեն ետքը «Քայքայումը»՝ Ֆրանսայի անակնկալ պարտությունը 1872ին։

Այս համառոտ թվումն ընել, մեկիկ մեկիկ ճշտելով իր գործերուն բարձր նշանակությունը ու իմաստասիրական կապը որ բոլորը իրարու կը միացնե, չի՞ բավեր հաստատելու համար թե այս անբաղդատելի վիպագիրը մեծ բարոյագետ մըն է նաև,

Թե որքան քիչ ճանչցած են Զոլան անոնք որ ապականիչ ու վտանգավոր բան մը կը համարին անոր գրական վաստակը։ Ասոնք են ահա իր «Ռուկոն-Մագառներ»ու շարքին ամենեն փայլուն գոհարները։

Այս հսկայի աշխատութենեն զատ Էմիլ Զոլա նշանավոր է իր գրական քրիթիկներովը որոց առաջինը «Իմ Ատելություններս» հորջորջած է։

***

Այս անվանի գրագետին հատկանիշը, որով իր մեծ դեմքը կը ճշտվի ժամանակակից ֆրանսացի այնքան նշանավոր գրողներու մեջ, իր ոճին կորովն է, նկարագրությանց ապշեցուցիչ ճշտությունը, պատկերներու ճոխությունը և ընդարձակությունը։

Էմիլ Զոլա անհատի վիպագիրը չէ այլ մարդկային ահագին կույտերու, ամբողջ դասակարգերու։

Ինքն է միայն որ գտած է անհամար բազմություն մը մեկանոց, մեկ հատորի մը մեջ երևան հանելու, ապրեցնելու ու երկարաձիգ պատմության տևողության միջոցին՝ ամենքն ալ աչքի առջև պահելու դժվարին խնդրույն լուծումը։

Իր ամեն գործերուն մեջ հարյուրավոր արարածներ են որ կը շարժին, կապրին, կը խոսին. ընկերության մեկ կարևոր մասն է որ տեսարանին վրա կուգա և կը կենա հոն մինչև որ վարագույրը իջնա։

Իր իմաստասիրությունը կյանքի պայքարներու գիտակից մարդու ներողամտությամբը տոգորված է. այս գրագետը գիտե թե որքան քիչերու վերապահված է ուրիշի դեմ աններող ու խստապահանջ ըլլալու ահարկու իրավունքը։

***

Էմիլ Զոլա երկրաշափի մը զավակն է. իր հորը վերահաս մահը, ժառանգական դատերու մեջ՝ հայրենի հարստության վճացումը հարկադրած են զինքը կիսկատար թողուլ իր ուսումը։

Իր երիտասարդության տարիները՝ Փարիզի մեջ՝ սև չքավորության, կես-անոթության տարիներ եղած են։

Հետո սկսած է ապրուստը ճարել Հաշեթի հռչակավոր գրավաճառին քով աշխատելով իբրև պաշտոնյա, ուրկե հրապարակագրության մեջ թևակոխած է «Ֆիգառոյի մեջ ընդունվելով իբրև քննադատ և որուն էջերուն մեջ պարզած է իր բնապաշտ գրագետի համոզումները որ այնքան ոխ ու ատելություն հարուցած են իր շուրջը և որ մինչև հիմա վառ կը մնան իրմե հարվածյալներե շատերուն սրտին մեջ։

Անկե վերջը իր գործերը ընդունելություն գտնել սկսած են, հաջողությունը իր ոտքը եկած է վերջապես։

Չոլա մեծ համբավ կը վայելե մասնավորապես Ռուսիո մեջ ուր «Ռուսական Հանդես»ին աշխատակցությամբը հռչակավոր է։ Ապաքեն իր հուզած բոլոր ընկերական մեծ հարցերը՝ օրվան խնդիրներ էին հոն և ընթերցողը չէր կրնար անտարբեր մնալ այս հրապարակագրին որ այնքան կարեկցությամբ կը ճշտեր անտարբեր աշխարհի աչքին՝ անոր անծանոթ պահված կյանքին պայմանները։

Մեծ վիպագիրը առանձնասեր ոգի մըն է։ Ընկերութենե ու բազմութենե կը խորշի՝ գրքերու մեջ ամբոխի սիրահար այս մարդը. իր բոլոր երազը եղած է առանձին ու անշշուկ գոյություն մը։

Մոսկս, 27—2—1893

ԻԶՄԻՐ

Իզմիրի հայերուն վրա շատ աղեկ կամ շատ գեշ խոսած են միշտ. ոմանք՝ անոնց բարեկեցիկ վիճակը տեսած են միայն, այլք հանրային գործունեութենե հեռու կեցող երիտասարդություններին։

Տարբեր տեսակետներով՝ միևնույն հասարակությունը տարբեր, գրեթե հակասական երևույթներով ներկայացած է. շատ մոտեն կամ շատ հեռուեն՝ դիտած են զայն ու ամեններին չի զարմացներ զիս այն հակառակ վճիռները որ մամուլի միջոցով կարձակվին անոր վրա։

Իզմիրի հայերը՝ մենե կանուխ թևակոխած են հրապարակագրության մեջ իրենց Արշալույսովը, որ անայդ վերջալույսի մը փոխված է հիմա։ Լրագրության մեջ մեր անդրանիկներն են ուրեմն։ Արևելյան Մամուլը, իր կրտսերը, ահա մոտիկ քառորդ դարե մը ի վեր կը շարունակվի իր ալևորած հիմնադրին անվթար հավատքովը։ Առաջին Արևելքը, որ երևցավ Ֆրանսայի մեջ, իզմիրցի մը հրատարակեց, Ստեփան Ոսկան[1]. և ինչ որ ալ ըլլա Ռեֆորմի խմբագրապետի վերածված այս հայուն վրա կազմվելիք դատաստանը, որքան ալ մեծ մոլորանք մ'ըլլա իր լեզվեն ու գրականութենեն երես դարձնելու դավանությունը,

նորեն այդ հրապարակագրին անցյալ գրական վաստակը կեցած է ու իր անունը մոռացումն փրկելու պիտի բավե։

***

Անհատական զարգացումով Իզմիրի հայերը մայրաքաղաքի հայերեն ետ չեն մնացած, ու ճիշտ այս անհատական գերազանցությունն է որ վնասած է իրենց։

Հո՛ս Մամուրյան[2] մը կը կենա, հո՛դ Ոսկան մը, Կոստանդյան[3] մը, Նուպար[4] մը, Մսերյան[5] մը—ամենեն ծանոթները հիշելով—և այս ցրված, բաժնված գրական ուժերը Ագամեմնոնի ճամբարը կը հիշեցնեն։

Երևակայեցե՛ք մեծ հավատացյալներ որոնց յուրաքանչյուր իրեն հատուկ մատուռ մը շինել տար ու հո՛ն միայն աղոթել ուզեր, երբ այնքան դյուրին էր իրենց՝ եկեղեցի մը շինել ուր հասարակությունն ալ գար աղոթելու։ Ահա՛ Իզմիրի գրական մարդոց անտեսած ճշմարտությունը. ժողովուրդը՝ որ ամեն հրապարակագրի հոգածության առարկան պետք է ըլլա, իրենց ուշադրության արժանացած ըլլալ չվիժր։ Գրականությամբ զբաղած են իրրև տիլեթանթներ և իրենք զիրենք ոևէ պարտավորության գաղափարով կապված չեն զգացած հասարակության հանդեպ։

Ասոր համար է որ առօրյա օրաթերթ մը չունին, ասոր համար է որ անդրանիկ Արևելքի խմբագրապետը չքաշվիր իր լեզուն մոռցած ըլլալը խոստովանելե՝ հորմե հետե ֆրանսերենը մշակած է միայն ու ասոր համար է դարձյալ որ Մեթոտի հեղինակը[6] իր նոր աշխատությունը ֆրանսերեն կը պատրաստե։

***

Եվ երբ այդ գրական մարդերեն ոմանք այսպես կը թերանան, կը լքին ու իրենց նշանակությունը կը կորսնցնեն, ի՞նչ կրնա հասարակությունը անդին։ Մոտեն ճանչնալուս՝ գիտեմ որ այդ հասարակությունը չի խաբվիր Տելեմաքի նավուղիղը

պատրող դիցուհիեն որ Ոսկանի մը, Կոստանդյանի մը պես մեծ իմացականությունները կրցած է մոլորցնել՝ անոնց աչքին՝ ֆրանսական լեզվին տալով այն տեղը, որ մայրենի լեզվին հատուկ է։

Տոհմային արժանապատվության զգացումը վառ ու կենդանի է հոն և իզմիրցոց Արևելյան Ակումբը, զոր Մուրճի թղթակցին անձուկ միտքը զբոսարան մը կարծած է, այդ զգացման ամենեն ազնիվ արտահայտությունը, ինքնուրույն անհատականության մը գովելի ցույցն է։

Իզմիրի հայերը եվրոպացվոց ֆլյուպները կը հաճախեին ու խել մը լվանթեններ, որոնցմե ձևացած են այդ ֆլյուպները, համարձակեր էին պետք եղած հարգանքը զլանալ մերիններուն։

Արևելյան Ակումբի հաստատությունը՝ ինքզինքը հարգել տալ գիտցող հասարակության մը կողմե տրվելիք վայելուչ պատասխանն էր ադոնց։

Ահա՛ ինչ որ պետք է տեսնել այդ հայ Ակումբի հաստատոմին մեջ։

***

Այսպես ահա պարզ հասարակությունը կը շարունակե պահել իր ավանդությունները, որոնք բոլորն ալ պատվո ավանդություններ են։ Ու այս մրցումի քաղաքին մեջ ուր գործունեության ամեն ճյուղերուն համար սաստկագույն պայքարը կը մղվի անընդհատ, մեր ազգակիցները իրենց թիվեն անհամամատ կերպով բարձր դիրք մը ձեռք բերած են ու միշտ բարձր պահած են մեր անունը։

Փասիս, 20—3—1893

ՄԱՆԱՆԱ

Գավառները գացող ուսուցիչները գիտեն որ հոն՝ չբավեր իրենց միայն ուսուցիչ ըլլալ. պետք է նաև տիրացու ըլլալ եկեղեցվո մեջ. քարտուղար՝ քաղական խորհուրդին. պարտամուրհակ գրող՝ ամեն հեղ որ հարկ տեսնվի. բղթակից՝ պոլսո լրագիրներու. բժիշկ՝ եթե հիվանդ մը պատահի. երկրագործ՝ երբ վարուցանի մասին մշակը իր կարծիքը հարցունե։

Ներելի չէ իրեն ասոնց ամենքը միասին չըլլալ. չըլլալ նախախնամական մարդը որ ամեն բան գիտե ու ամեն բանի կը ծառայե ի հարկին։

Արմատացած նախապաշարում մը կուզե որ լրագիրն ալ այդ գավառական ուսուցիչը ըլլա, ամեն տեղ ու ամենուն համար։ Ծանրաչափ մը որ, միևնույն վայրկյանին, ամենեն տարանջատ վայրերուն մթնոլորտային վիճակը բացատրե։ Անխոս գործիք մը՝ որ ամենուն պետքերը ըմբռնե ու դարմանները ցույց տա։

Հետո, այս ընդհանուր պարտականութենեն վերջը, անհատական պահանջումները, հաճույքները ու քմահաճույքները ի հաշիվ առնե, երբեմն գուշակե և միշտ գոհացում տա անոնց։

Գիտի պատահի հաճախ, որ այս տեղական կամ անհատա-

կան կամքերը հակասեն իրարու. լրագիրը պարտավոր է երկուքին ալ սիրտը ընել, դյուրաթեք ու ճկուն ըլլալ՝ ամենեն ներհակ ձգտումներուն հարմարելու չափ։

Ընթերցողներեն մաս մը՝ գրականության հետամուտ է, ուրիշ մը՝ գիտության փափագող. աս՝ բանասիրութենե կախուրժի ու ադ՝ բանասիրությունը կատե. գավառացին՝ ներքին լուրերու հետամուտ է ու մայրաքաղաքացին՝ եվրոպական տեղեկության. վարդապետը՝ նորավեպ կը սիրե միայն ու աշխարհականը՝ հանկարծ հավատքի տագնապե մը բռնված՝ կրոնային վերացումներու պետքը կզգա։

Լրագիրը, այս խառնակ զանգվածին առջև, հարկադրված է տեղի տալ, հեղուկի մը պես, ուզված ձևը մտնել և ըլլալ մանանա-լրագիրը ուսկից ամեն ոք՝ իր սիրած համը կարող ըլլա առնել։

❁❁❁

Մեր մեջ, լրագիրները այս իտեալին կը ձգտին, ու այս վախճանին կը դիմեն սկեպտիկ փիլիսոփայությամբ մը զինված։ Աչեն ու ձախեն՝ զիրենք քաշող ընդդիմամարտ ճաշակներուն առջև, կը շվարին ու անշարժության մեջ կը մնան։ Իրենց կարծեցյալ հառաջդիմությունը՝ աննպատակ դեգերանք մըն է և իրենք առաջինն են որ կը ծիծաղին իրենց գրածներուն վրա։

Ո՛չ մին՝ հարկ եղած արիությունը ունեցած է ի բաց վանելու հանրության այս կամքերը ու թոթափելու ընթերցողներուն հաճելի ըլլալու տկարությունը որ նյութական տկարությունն է ապաքեն։

Տեսնված է որ է՛ն հոխորտները, հաճախ է՛ն հաճոյական-տարները ըլլալու վիճակվին։ Իրենց բոլոր բարի կամեցողությունը, իրենց ազնիվ առաջադրությունները չեն կրցած տոկալ այն մեղմ ու հարատև հարձակումին՝ որուն ենթակա է ամեն թերթ իր ընթերցողներու կողմեն։

Ամեն ոք՝ իր խրատը կուտա թերթին ուղղության, պարզության ու հաջողության պայմաններուն վրա։

Ով, բարոյական մեծ ու շա՛տ անխախտ նկարագրի տեր

մարդ պետք է ըլլալ, անհողդողդ մնալու համար այն չուկեստին վրա, որ ամեն ազդեցութենե անկախ, որոշված էր և որ ահա՛ անզգալաբար, մեղմիվ կը կորսվի, աչքե անտես կըլլա բոլորովին։

❁❁❁

Ընթերցողն է, հասարակությունն է որ կապականե թերթը, իր ներգործությունը, որ ուրիշ տեղ սովորաբար փրկարար ու օգտավետ բան մըն է, հոս խանգարիչ ու եղծիչ թթու մը կըլլա։

Եվ լրագիրը, նախ՝ առանց զգալու և վերջեն՝ գիտակցությամբ կը դադրի առաջնորդ մը ըլլալե, խոնարհ հետևորդ մը դառնալու համար, ինքը՝ որ ուղին պիտի ցույց տար, հիմա ուրիշներեն կսպասե որ իր հետևելիք ճամփան ցուցնեն։ Իրեն հատուկ կամք ու նպատակ չունի, բացի սկսված գործը աղեկ կամ գեշ շարունակելու ունայն պարծանքեն։ Իր անհատականությունը, իր ես, այն ատելի ես վերցած ու տեղը եկած է բազմագլուխ հրեշ մը՝ որ Շվարում կը կոչվի։

Այդ վայրկյանեն, ալ իր նյութականը քիչ շատ ապահովված է։ Ընթերցողը գոհ չէ բոլորովին—որովհետև ընթերցող մը գոհ չի կրնար ըլլալ—բայց դժգոհ ալ չէ. իր ուզած թերթը չէ այս, բայց չուզածն ալ չէ։ Միջակ։ Այն ատեն, իր սովորաբար խոժոռ դեմքին ծալքերը կը պարզվին, ճակտին փոթերը կը հարթվին, շրթունքին վրա հաշտության ծիածանը կերևա. կը ժպտի. ո՛չ, գեշ տղա չէ այդ լրագիրը. առա՛ջ, եթե իր խելքին, իր ծայրահեղության մեջ մնա՛։

Շենքի շնորհքի եկած թերթ է հիմա. ամեն ոք աչքե կանցընե եթե չի կարդար. գրագետը, ուսուցիչը, բժիշկը, վաճառականը հավասարապես գոհ են անկե. ամեն կարծիքները կը հաշտվին հոն, ամեն խստությունները կը մեղմանան։

Հասարակությունը մանանա մը կուզե ու մանանա մը կը տրվի իրեն։

❁❁❁

Եվ սակայն ճշմարիտ օրագիր մը չի կրնար հաշտ երևալ ամենուն. անձնվեր բարեկամներ ու ոխերիմ թշնամիներ կու-

նենա միշտ։ Իր բարոյական հաջողութիւնը ադով միայն պիտի չափեի։ Պետք էր որ մեկը անարգեր զայն ու մյուսը՝ հարգեր։ Այն ատեն իր գոյութեան պիտի հավտայի։ Կապույտ կամ սև, փույթ չէ, բայց աչքերուն գույնը կուզեի տեսնել։

Քամելեոնի այլակերպութիւններեն կը վախնամ. ամեն ճաշակի պատշաճելու ջանադիր թերթ մը՝ իմ սիրածս չէ։

Ընթերցողները ավելի պիտ շահեին չոր հաց ուտելով ամեն օր, քան թե սպասելով այլափոխվող մանանայի մը բազմակերպիկ համեմներուն։

Մասիս, *27—3—1893*

ՀԱՄԵՍՏ ԳՈՐԾԵՐ

Ադրիանուպոլսո մեջ 1856ին սկիզբը հիմնվեցավ «Ի սէր աղօտատցելոյն Հիսուսի» ընկերութիւնը։

Մայրաքաղաքեն առաջ, այդ տեղի հասարակութիւնը ճանչըցեր էր սա ճշմարտութիւնը թե մեծ գետերը պզտիկ առվակներով կը կազմվին։

Ընկերութեամբ գործելու սկզբունքը սա առավելութիւնն ալ ուներ որ ամեն ոք իր չափով հանրային պետքի մը ծառայելու կը վարժվեր տակավ և անօգուտ ու անպետ կը դառնար այս կամ այն անհատի ապավինելու, և անոր առջև քծնելու սովորութիւնն՝ որով հայ ամիրայութիւնը կազմված էր ատենով և որուն, հետզհետե շարժումով մը, վերադառնալուս մազ մնացած է հիմա։

Եվ մինչդեռ ուրիշ տեղեր ալ ընկերութիւնները կսկսեին բուսնիլ, ծիլ, ճյուղավորիլ հարաճուն թողբողումով և ճիշտ իրենց անհմաստ բազմապատկութեանը համար պետք էին թերահավատութիւն ներշնչել, երբ դպրոցական գրասեղանեն մինչև շուկային էսնաֆները, խոլական ախտե բռնվածի պես, ի պետս և հանպետս ընկերութիւններ կը կազմեին, ժողովքներ կը գումարեին, ատենապետներ, գանձապետներ կանվանեին շարունակ, կը միանային, կը բաժնվեին, նպատակ ու ծրագիր կը թարեփոխեին ու օր մը կանհետանային, անդին՝ Ադրիանուպոլսո մեջ հիմնված անդրանիկ Ընկերութիւնը, գործի մաք-

գոց ձեռքին մեջ, անշշուկ կը շարունակեր, իր պարտքը կը կատարեր անընդհատ և գեթ Ադրիանուպոլսո մեջ մեծ ու պզտիկ աղաներու պակասը չէր զգացներ։

Իր շնորհիվ մեր տնանկները, մեր հիվանդները, մեր պանդուխտները խնամվեցան, հոգացվեցան առանց աղմուկի, առանց ծանուցումի։

Այս անխոսիկ ու համեստ ձևին մեջ՝ ժողովրդին բարերարությունը հոս նորեն դաս մը տվավ անհատին բարերարության, ցուցնելով անոր թե ի՛նչ փափկությամբ ժողովուրդը գիտե ողորմություն տալ։

***

Այն ընդհանուր քայքայումին մեջ որով մեր բարեգործական ընկերությունները իրենց հոգի մատակարարությամբը փճացան, Ի սեր աղբատացելույն Հիսուսի նվիրվածը՝ կանգուն մնաց։

Սին վեճեր, եսի դունի կռիվները չի ջլատեցին անոր հաստատ ուժերը. հանրային պարկեշտությունը ու հոգածությունը հսկեց անոր վրա և բավեց անվթար պահելու զայն։ Իր չուրջ քառասուն տարվան արգասավոր պտղաբերությունը ժողովուրդեն եկավ և ժողովուրդին դարձավ նորեն։

Եվ ինքը՝ որ առաքինության ծնունդ էր, առաքինության ծնունդ տվավ. իր անունը հիշեց ամեն տեղացի հայ ամեն հեղ որ նվիրատվության մը հոժարությունը ունեցավ. իր անունով պզտիկ կամ մեծ կտակ մը ընելը բարի սովորություն մը դարձավ, և Ադրիանուպոլսո մեջ քիչեր են որ իրենց չափով չեն տված լումանին այս առաքինության գանձանակին։

Այսպես, երբ մայրաքաղաքի ազգային ոք կը թերանան, երբ մեր գլխավոր կենտրոնները կը լռեն, մեր հասարակության թիվին տեսակետով երկրորդական քաղաքի մը հայերը մխիթարական տեսարան մը կընծայեն մեզի, պարծանոք ցույց տալով իրենց Ընկերությունը մերիններեն ծեր ու միանգամայն մերիններեն երիտասարդ։

Այս բեղմնավոր գաղափարին ու պարկեշտ գործադրության

ոչ շարունակության բոլոր պատիվը Ադրիանուպոլսո մեր հասարակության է անշուշտ, բայց մասնավոր հիշատակության մը իրավունք ունին անոնք որ այս ընկերության հիմնադիրները ու վարիչները եղած են տարիներու երկար շրջանի մը մեջ։

Եվ ինչ որ արժանի է հատուկ ուշադրության, այն է թե այս Ընկերությունը, երիտասարդության գործը չէ եղած բնավ. ո՛չ անոր աշխույժեն օգտված, ո՛չ անոր հիմար անփորձություններեն վնասված է. տարիքոտ մարդոց գործն է այս ընկերությունը ու անոնց հաստատ ու կանոնավոր ընթացքովը քալած է միշտ։

«Ի սէր աղքատացելոյն Հիսուսի» ընկերությունը, իր անվան հակադրությամբ, բավական հարուստ է այժմ. իր 20 հատ կալվածները տարեկան 150 ոսկվո ապահով հասույթ մը կուտան. քանի մը արժեթուղթ ունի, քիչ մը պահանջ և 400 ոսկի ունի պատրաստ կամ տոկոսի տրված։ Տարեկան նվիրատվություններն ալ ուրիշ 150 ոսկի մը կը բերեն իրեն և ասով կարող կըլլա իր ծախքը գոցելե հետո, որ 200 ոսկիի մոտ է, քիչ մըն ալ ավելցնել իր դրամագլուխը։

❋❋❋

Եթե ներելի ըլլար այս նեսթորներու ընկերության խորհուրդ մը տալ, այն էր որ ալ հիմա որ հիմունքը հաստատ ու անխախտ են, ազգակիցներու ողորմություն տալու գաղափարին վրա պետք է ավելցնել մեր ազգակիցները ողորմություն ուզելու վիճակին մեջ չձգելու գաղափարը։

Եվ այս ալ ի գլուխ կելլե երբ որ ընկերական գործունեությունը նյութական օգնություններու բարի սովորությունները պահելով հանդերձ, տեղացի հայոց մտավոր զարգացմանն ալ գործածվի։

Այն ընդհանուր համակրությունը զոր շահած է ինք դյուրությամբ, պիտի ընե այս գործը՝ որ իր նպատակին ոչ նվազ օգտակար է և որ այնքան սերտիվ կապված է անոր. աղքատին ողորմի՞լ. հարկավ. բայց աշխատիլ որ աղքատ չըլլան. ինչո՞ւ չէ։

Մասիս, 3—4—1893

ՖՐԱՆՍՈՒԱ ՔՈՓՓԵ

(Մեր պատկերը)

Անոնք որ դասավորելու մոլութիւնը ունին, որոնք բաղդատութիւնը կը սիրեն և ամեն բան շարել կուզեն առաջնութեան կարգով, Հյուկոյեն ու Լամարթինեն անմիջապես ետքը Քոփփեին տեղ պիտի տանեն։

Մինչև այն բարձունքը՝ ուր կը կենան Ժերսեյի տարագիրը [1] ու Սեն-Փուանի մենակյացը [2], մինչև այն կատարները՝

Ուր թխսեն դիմ և ուրվիմ

ինչպես կըսե Եղիան, չի խոյանար Հասմեստներու քերթողը. այլ մեր տանը երդիքին վրա թառած թռչունն է. այն՝ որուն դարձդարձիկ ճախրանքին կարելի է աչքով հետևիլ պատուհանեն և որուն երգին ձայնը՝ մանկութենե ի վեր օրորած է զմեզ։

Ասոր համար է որ եթե Հյուկոյին վրա պիտի սքանչանանք միշտ, Լամարթինին վրա պիտի զմայլինք, Քոփփեն ալ պիտի սիրենք։

***

Ֆրանսուա Քոփփե քերթող մըն է ամեն բանե առաջ ու քերթող մնացած է միշտ. ալ թե անոր համար որ գրական ուրիշ

սեռերու մեջ ալ իր եզական կարողությունը ցույց տված չըլլա, այլ անոր համար որ այսպես ուզած է ինքը։

«Գրելու հանապազօրյա ճիգը, որ խմբագրի մը ճակատագիրն է, ատեն չի ձգեր իրեն մտավոր հանգստի ու ամփոփումի որ անհրաժեշտ է բանաստեղծի մը», կը գրեր Քոփփե իր վերջին թերթոնին մեջ որ միանգամայն իր հրաժարականն էր թատերական քրիթիկի պաշտոնեն՝ զոր այնքան փայլով վարեց Փարիզյան օրաթերթի մը մեջ։

Այդ միջոցին Ֆրանսական Ակադեմիո անդամ ընտրված էր, և անկե ի վեր կը շարունակե իր գրական վաստակը, չի նմանելով անոնց որոնց համար այս ընտրությունը ծուլության ու անգործության վկայականի տեղ կը բռնե։

❁❁❁

Իբրև թատերագիր, Քոփփե ավելի վիպական դպրոցին կը մոտենա. այն դպրոցին որ թատերաբեմին վրա մեծագույն ներգործությունը կրնե։ Իր Անցորդը, որ ավելի խոսակցություն մըն է քան թե զատ թատերական կտոր մը, քիչ մը Մաուիոն Տրլոմը կը հիշեցնե Հյուկոյին։ Հո՛ս ալ անձնամատույց կին մը կա, ազնվության քոխշքով մը բարձրացող, որ կը խղճա իրեն համար ցանկութենե տառապող խեղճ տրուպատուրի մը վրա և անոր անմեղության կր խնայե։ Քոեմոնի վին շինողը այլանդակ մարմնի մեջ բանտարկված մեծ հոգիի մը ու մեծ կիրքի մը վերլուծումն է։ Սերվիրո Քոռելլին—գլուխ գործոցը—Պեշիկթաշլյանի Բուտոսը միտք կը ձգե։

Այս ամենուն մեջ ոճի, ձևի, արվեստի կատարելությունը՝ զգացմանց բուռն պայքարով մը մղված՝ վսեմի կը հանգի միշտ։

Թատերգությանցը մեջ՝ միշտ մեծ կիրքերու, սաստիկ վրդովումներու հետ սիրած է զբաղիլ, ինչ որ Հյուկոն ըե՛ իր վեպերուն և ըե իր թատերգությանց մեջ ըրած է։

❁❁❁

Իր քերթվածոցը մեջ՝ բանաստեղծը իրական կյանքը կառնե. պարզ ու գեղչուկ կյանքը, որ իր սովորական ու անմռունչ գոյությանը մեջ՝ այնքան համեստ դյուցազնություններ, անբարբառ ցավեր, անտես արցունքներ կը պարտկե։ Քոփփե այս ամենը կը տեսնե և, ինչ որ ավելին է, կզգա։

Անշուշտ, իր փարիզցի ու միչակ դասի ընտանյաց զավակ մը ըլլալը՝ նպաստած է իրեն, մոտեն դիտելու ինչ որ անտեսանելի է վեր ի վերո դիտողի մը աչքին։ Իր նկարագրությունները, պատկերները մանավանդ՝ լուսանկարի ճշտությունը ու ցոլացումը ունին, պզտիկ տրտմությունով մը խառնված լուսանկար՝ որ ամպամած օդով մը առնված ըլլա։

Այս քերթվածներուն երկար շարքին մեջ առաջին տեղը կը դրավեն իր Մտերմությունները, որոնք սիրված անձի մը հետ խոսակցություն մը կը կազմեն, գլուխ գլխի անցված ժամերու պատմություն, որուն մեջ քերթողը առիթ կը գտնե ամեն առարկաներու վրա իր բառը ըսել, իր գթած ձայնը լսեցնել, իր համեստ իմաստասիրությունը ընել, ամբողջ ներդաշնակություն ու ամբողջ գորով, ճիշտ ինչ որ Բանաստեղծությունը պարտի ըլլալ։

❁❁❁

Հետո, իր պզտիկ ոտանավոր պատմությունները հատուկ սեռ մը կը ձևացնեն գրեթե. սեռ մը՝ որ իրն է և որուն մեջ հավասարող չունի բնավ։ Անցուդարձ, եթե թատերգություն անունը չառներ, առաջինը պիտի ըլլար այս շարքին մեջ որոց մեջ կը փայլին Դարբինները, զոր կարտասաներ ողբացյալ Ադամյան, Բնկորը, Օրհնությունը և ասոնց նման գոհարներ։

Քոփփե իբրև արձակագիր ոչ նվազ հռչակավոր է. իր նորավեպերու հատորները միշտ խանդաղատանքի գանձեր կը պարունակեն, պարզ ու անկեղծության շնորհով և իր վերջին հատորը Սուղ և Ծրկար, նորեն հավաքածո մըն է պզտիկ պատմություններու որոց մեջ երևցող իր բանաստեղծի խառնվածքը՝

Քարմ ու մանկունակ երգի մը ներգործությունը կը թողու։

Նախընթաց թվով մը հրատարակեցինք իրմե երկու քերթվածներ զորս Փանոսյան[3] կրցավ հայերենի վերածել, առանց բնագրին հրապույրը կորսնցնելու։

Թարգմանությունները, մանավանդ ոտանավոր քերթվածոց համար, կլիմա փոխած ծաղիկներու կը նմանին։ Սովորաբար իրենց փոխադրված նոր հողին մեջ՝ ոչ առջի գույնը և ոչ առջի հոտը կրնան պահել։ Փանոսյան այն հաջող պարտիզպանն է որ զգալի ընել չի տար այս տեղափոխումը։

Մասիսի ներկա թիվին մեջ Քոփփեեն հրատարակված քերթվածը՝ դարձյալ անոր կը պարտինք, թեև այս քերթվածին գաղափարը՝ «Միամիտ Պատմություններ» վերնագրին տակ ընդլայնված գտանք քանի մը շաբաթ առաջ. ոամիկ բանագողության մը կասկածը չունեցանք բնավ, այլ ըսինք միայն որ թերևս այդ արձակին տերը ու ֆրանսացի բանաստեղծը զիրար գտած են առանց գիտնալու։ Չէ՞ մի որ,

Les grands esprits se rencontrent.

Մասիս, 17—4—1893

ՎԱՐԺԱՐԱՆԱՑ ՇՈՒՐՋԸ

Մեր վարժարանաց Քննության օրերը կը մոտենան. կարողներու և անկարողներու, ծույլերու և աշխատասերներու, բախտավորներու և դժբախտներու մշտնջենական ընդհարումը՝ դպրոցական գրասեղաններուն վրա պիտի սկսի ու շաբաթ մը պիտի տևե. հետո հանդեսները, ծափերը, ոսկեզօծ գիրքերը, ճառերը ու տեղեկագիրները պիտի գան, ու ամենեն ետքը արձակուրդը՝ արդար վայելքը տարեկան խոնջենքին։

Մեր մեջ Քննությունը՝ տարապարհակ աշխատության մը փափագելի վախճանը կը ներկայացնե. ձանձրացուցիչ թատրերգության մը վերջին արարվածը, որուն աչքդ գոց կը համակերպիս, վայրկյան մը ավելի առաջ դուռնեն դուրս նետվելու աճապարանքով։

***

Այս չէ հարկավ Քննության նպատակը։ Մեր տղաքը, երբոր շրջանավարտի վկայականը ծոցերնին՝ դուրս ելլեն վարժարանեն, այն ատեն միայն պիտի հասկնան անոր ստույգ նշանակությունը. իրենց ընտրած աշխատության ասպարեզը՝ գժնդակ

ոե մշտատև քննութիյուն մը պիտի ըլլա իրենց ուր դասատուին դյուրահաճ աջակցութիյունը, քննիչին կամավոր անհոգութիյունը չպիտի գտնեն մեյ մըն ալ, այլ սուր և անողոք պայքարը Բախտին, Կարողութիյան ու Աշխատութիյան, այն երեք տարերքին որոցմով շինված է այն ավետյաց երկիրը որ Հաջողութիյուն կը կոչվի։

Ու հանկարծակիի եկած կյանքի վաստակներուն մեջ, խրստութիյուններու, պատրանքներու անվարժ այս տղաքը, շուտով պիտի խռովին, սրտաբեկ ու դասալիք պիտի ըլլան շուտով, այն հարուստի շփացած տղաքներուն պես որոնք նեղութիյան դիմադրելու կորովը չունին։ Օգնութիյան ձեռք մը պիտի հուսան որ պիտի պակսի իրենց, քաջալերութիյան ձայն մը որ չպիտի հնչե ականջնուն, ու ապրելու հարկին առջև հարկ պիտի ըլլա խոնարհիլ ու ծռիլ։

***

Մի՛ վարժեցնեք մեր տղաքը ներողամիտ աչառութիյանց ու անիրավ ակնկալութիյուններու. վարդե անկողիններ՝ զորս ապագան ապահով կերպով պիտի զլանա իրենց, ու ի՞նչ պիտի ըլլան այն ատեն այս սիպարիրիները. այլ սորվեցուցեք իրենց խստութիյանց դիմանալու մեծ գիտութիյունը։

Երբոր կարելի է արժանիքով հառաջանալ, ինչո՞ւ անարժանութիյան արվեստը սորվեցնել մեր պատանիներուն. անարժանութիյունը միթե արժանիքեն ավելի՞ դյուրավ կստացվի։

Քննութիյունը հայոց մրն է ուր նետված խառնուրդը պիտի զտվի. պղինձը, արծաթը ու ոսկին պիտի զատվին. հարկ եղած ջերմութիյան աստիճանով տաքցուցեք ուրեմն զայն. ապա թե ոչ առջի անշահ խառնուրդը դուրս պիտի ելլե նորեն, եթե ոչ վատթարագույն մը։

Եվ սակայն տեսեք անգամ մը կարգերնին չի կրցող փոխողներուն թիվը որքա՜ն պզտիկ է մեր դպրոցներուն մեջ. եթե ավելի շատ ըլլար, մեր հոգաբարձութիյունները...—ավագերեցները պիտի ըսեի—պիտի կարծեին որ ետ մնացողներու թիվին ստվարութիյունը իրենց անհոգութիյան պիտի վերագրվեր. և գի-

տե՛ն սակայն անոնք որ թուլլ ու ներողամիտ քննութիւններով՝ ամեն տարի իմաստակներու խումբ մը նետելով մեզի, անոնց ապագային պատասխանատուութիւնը իրենց վիզը կառնեն, գիտե՛ն որ իրենց ստեղծած պատրանքի աշխարհը դժբախտներ պիտի արտադրե միայն։

❋❋❋

Քննութիւնը դադրելու է ուրեմն պարզ ձևակերպութիւն մը ըլլալե, կյանքի ճշմարիտ պայքարը դառնալու համար. պայքարը որ հիմա դպրոցեն կսկսի մինչև գերեզման երկարելու համար և որ կը վախնամ թե օրորոցեն սկսի վաղը։

Տասնի տեղ երկու շրջանավարտ տվեք մեզի, բայց լուրջ ու տոկուն հոգիներ ըլլան երկուքն ալ։

Ամեն տարվան արտադրութիւններով՝ շատ մը ձեռքեր ու ոտքեր տված եք մինչև ցարդ. ի՞նչ ընենք այդ բոլորը. մարդեր կազմելու համար ատոնցմով՝ գլուխներ տվեք մեզի։

Մասիս, 25—5—1893

ՄՈՌՑՎԱԾՆԵՐ

Քանի մը երիտասարդներ Դուրյանի աճյուններուն նոր մեծարանք մը ընել կը խորհին։

Մոռացկոտ ազգի մը մեջ, որպես է մերինը, մխիթարիչ բան մը կա այս ինքնաբուխ ցույցին մեջ։ Ապաքեն Դուրյանի գերեզմանն է միայն որ լքված չէ բոլորովին. կարծես թե ականջնուս մնջն է միշտ իր երդին ձայնը

Գիտցեք որ դեռ կենդանի եմ։

Անդին քանի՞ մոռցվածներ, գերեզմանեն ալ անդին դրժբախտներ զորս հիշելու ատեն չունի ինքնիրմով զբաղող մեր երիտասարդությունը։

Ո՞ւր է Զորայանը [1], Արմենակ Հայկունին [2], Քրիստոստուր Ղազարոսյանը [3], Պարոնյանը, Խաչատուր Միսաքյանը [4], Ստեփան Փափազյանը [5], ո՞ւր են ասոնք. գիտե՞ք գոնե ո՛ւր պետք եք երթալ երբ այցելել ուզեք այս անշուք հողակույտները։

***

Մարդ մը չի՞ պիտի գտնվի որ ազգին վաստակավորներուն գերեզմանը գոնե մեկ մեկ մահարձանով ամենուն ոտքի կոխան

չընելու աշխատութեան գլուխ կանգնի. ո՞ւր են անոնք որ ամեն գործի մէջ գլուխ ըլլալ կուզեն, կը բարբառին շարունակ. ահա պատուավոր գահերեցութիւն մը իրենց համար։

Գիտեմ որ այս անփառունակ աշխատութիւնը իրենց գործը չէ. այնպիսի առաջարկութիւն մը գտնելու է անոնց որ կարող ըլլան իրենց անունը, նախ իրենց անունը, գործին ճակատը փորագրել տալ։ Եկեղեցի մը շինել, դպրոց մը կառուցանել, այո՛, աղմոր ոսկեզօծ տառերով հռխորտալու համար, ինչո՞ւ չէ. բայց երթալ Սրվանձտյանցին[6] գերեզմանին վրա քար մը դնել. ո՜հ, այդչափ միամիտ չեն մերիններըե։

***

Մենք ալ պարզ ժողովուրդին կը դառնանք միայն. այն, պզտիկ թող ըլլա, բայց միշտ անկեղծ համակրութիւններուն որով հանրային երախտագիտութիւնը կը ձևանա։ Ան է միայն որ ճշմարիտ թարգմանն է իր զգացումներուն և ամեն անգամ որ տեսնանք այս երեք երիտասարդներուն պես մարդիկ որոնք առանց աղմուկի այսպիսի ազնվական հոգիով մը հառաջ կը նետվին, կը ծափահարենք իրենց։

Թող ուրիշներ խոչընդոտ դնեն ասոնց ոտքին, առջի քայլեն չանք չի խնայեն ուժաթափ ընելու համար զիրենք։ Դուրյանը՝ պզտիկ թատերգակ գտնեն ու Մնակյանը՝[7] մեծ քննադատ, կը հավտանք որ այս պզտիկ չարութիւնները անզոր պիտի մնան. Դուրյանի Թատրոնը՝ իր արժանավոր ներկայացումը պիտի ունենա, անոր շնորհիվ իր գերեզմանը պիտի զարդարվի և Դուրյան ինքը պիտի ըլլա իր շիրիմը պճնողը ծաղիկներով, առանց ուրիշներուն պես կարոտ ըլլալու մուրացածո դափնիներու։

***

Դժվարահաճ միտքեր Դուրյանի Թատրոնին քննադատները հանդիսացան. առանց վարպետ մը ըլլալու թատերգական աստիարեզին մեջ, կրնանք հայտարարել սակայն որ բանաստեղծին

այս գործը այդ քննադատներուն պզտիկ կշիռեն շատ մեծ է դեռ. այդ խաղին հղացումը միայն գլուխ մըն է որ Դուրյանի անգամ պատիվ կը բերե. ոճը կրնա պակասություններ ունենալ, տեսարաններու բաժանումները կրնան բարեփոխություններու կարոտիլ, բայց շենքը հաստատ ու գեղեցիկ է. ամեն պարագայի մեջ նորելուկ թատերգությանց նման անշահ խոսակցությանց շարք մը չէ Դուրյանի գործը. ադամանդը կրնա հղկվելու պետք ունենալ և ադոր համար ներելի՞ է միթե հողին մեջ ձգել զայն. և եթե ստույգ է որ Պ. Մնակյան «տղայական» գտած է զայն, իրավունք կուտա մեզի ըսելու բոլոր դերասաններուն ինչ որ ատենով ֆրանսացի ազնվականներուն ըսին, երբ իրենց հայրենիքը վերադարձան անոնք.

«Այս մարդիկը ոչ բան մը սորված են, ոչ ալ բան մը մոռցած»:

***

Կզգամ որ այս միջանկյալ խորհրդածությունները նպատակես շեղեցուցին զիս:

Իմ բոլոր փափագս է վարժեցնել մեր ժողովուրդը ճանչնալու ամեն անոնք որոնք իրեն մեկ համակրական ցույցին արժանանալու համար տարիներ տված են իրենց կյանքեն ու իրենց սիրտեն:

Ու վարժեցնել ժողովուրդը մանավանդ փնտրել գտնելու գերեզմանը անոնց որոնք ոչ ևս են և որոնք իրենց վերջին հանգիստի տեղեն ալ թերևս մեզի կը մտածեն:

Մասիս իր ներկա շրջանեն պարտավորություն մը համարեց իրեն համար, հետզհետե ճանչցնել այն դեմքերը որոնք անհետացած են շատոնց և որոց հիշատակն անգամ կորսվելու վրա էր:

Դուրյանի գերեզմանը զարդարելու խորհուրդը թող մեր միտքը ձգե նաև ամեն անոնք որ գերեզման մը չունին. ազգը՝ իր երախտագիտության ժլատությա՞մբը պիտի քաշալերե արդյոք իր զավակները:

Մասիս, 29—5—1893

ՍՈՏԱՆ

Ո՛չ այն Մոտան [1] ուր Եղիան [2] կերթա և ուր Պետոն [3] կրապասե. ո՛չ այն ափափյա ծովեզերքը Քատրքյային՝ որուն ջուրերուն մեջ՝ Նիրվանան, պչրող հուշկապարիկ, կը պահվըտի, կը քծնի, կը կանչե իր տարփավորները։

Ո՛չ այն Մոտան։

Այլ այն որ կիներունն է միայն և որուն նորաձևություն անունը կուտան։

Պզտիկուց ի վեր ամեն ոք իր ձեռքեն եկածը չէ խնայած անոր դեմ, պատվար մը քաշելու համար այս անդուլ մակընթացության առջև, որ մեր հագուստներեն սկսելով մինչև մեր հոգվույն ամենեն թաքուն զգացումները կը կերպարանափոխե։

Նորաձևությունը՝ արդուզարդի անձուկ ըմբռնումով չեմ առներ հոս, այլ կը նայիմ անոր իբրև հարատև այլակերպության մը ջանքը, զոր մարդկությունը կրնե. և այս նկատումով՝ կուսակիցն եմ անոր, վասնզի կուսակիցն եմ հառաջդիմության։

***

Ո՞ւսկից է որ հին ավանդությունները պահելու կոչում կրնենք միշտ և զանոնք պարզապես մեկդի ընելու հրավեր մը՝ սրբապղծություն մը կը թվի մեզի։

Հին պետք է մնան մեր եկեղեցական կանոնները. հին՝ մեր սովորությունները, մեր բարքերը. հին՝ մեր համոզումները. հին պիտի մնա մեր գրականությունը. հնության մեջ լուռ պատկառանք մը կա կարծես որ ամենուն վրա կը ներգործե և ահա գլուխները կերբրան հավանության համաչափ շարժումներով։

Մեր մեջ մանավանդ մոլության հասած է այս դավանանքը. վա՜յ անոր որ վաղնջական կարգի մը անհմաստ ձևին վրա կը խնդա։

Ներունինները կը զայրանան, ու մատնանիշ կընեն նորանշան երևույթը, նորելուկ գաղափար որ հորենական հին համոզումին տեղը կուգա բռնել, մոտան՝ զոր երիտասարդները կը ջատագովեն ամեն բանի մեջ։

***

Ես կը փափագիմ որ նորասիրությունը չար ոգի մը չի համարվի ու չի դատափետվի մեր մեջ. ամբողջ բարքերնիս կրոտ է վերաշինության. մեր մոլությունները նախ՝ ու հետո մեր առաքինությունները. վասնզի պետք է գիտնալ որ առաքինություններն ալ պետք ունին ուղղվելու։

Մեր մեջ բարեգործությունը եկեղեցի և դպրոց շինելու մեջ կայացած է ցարդ. այս ճարտարապետական առատաձեռնությունները՝ ալ ավանդության կարգ անցած են. ով որ բարեգործության մը կը խորհի, մատուռ մը կամ վարժարան կանգնելե դուրս միջոց մը չերևակայեր. կը կարծե որ քառակուսի ու ամուր շենքի մը կպչելով միայն իր անունը մոռացութենե կը փրկվի. այս է հին բարի սովորությունը։

Եվ ահա Իզմիրյանց մը կուգա զարտուղության դուռը բանալու. մոտա բարերարն է այս մարդը որ գրական մրցանակ մը հաստատելու գաղափարը առաջին անգամ ինքը կը բերե մեզի։

Մեծատունները կապշին քիչ մը ու քիչ մըն ալ կը խնդան վրան. հե՞ք անմիտ մարդ որ փոխանակ շքեղ մարմարի մը ճակատը անունը փորագրել տալու, իր ազգին գրականությունը ծաղկեցնելու համար կը շռայլե դրամը։

✻✻✻

Բայց հառաջադիմությունը մարդկության ճակատագիրն է։ Անոնք որ հնությունը կը պանծացնեն, իրավ որ չեն ճանչնար զայն։

Հասարակություն մը որ հնամոլ բարքեր ունի՝ հետադիմելու դատապարտված կը մնա՝ եթե իր խորհելու, զգալու ու աշխատելու եղանակները չի նորոգե։

Տեսե՛ք մեր արհեստները, անոնք՝ որոնցմով այսքան էնաֆություններ հաստատված էին՝ չքավորության, աղքատության մատեցած։

Տեսե՛ք մեր սարաֆները, անոնք՝ որոնցմով այնքան ամիրաններ փայլեցան, հիմա սնանկության դրացի։

Տեսե՛ք մեր վաճառականությունը, ան՝ որով եվրոպական վարկ ու հարգ ստացած էինք ատենով, հիմա անել տագնապի մատնված։

Անոր համար որ այդ արհեստները չի գիտցան ժամանակին հետ նորնալ։

Մուտան ամեն բանի մեջ կար, և փոխանակ օգտվելու անկե՝ մերինները կընդվզեին տնտեսական ու հառաջադիմական այս պայմաններուն դեմ։

Վաճառականը իր պատճան չի թողուց ձեռքե. սարաֆը՝ իր տոկոսը։ Ավանդությունն էր այս որ նորաձևության դեմ կը մաքառեր ու կընկճեր։

Մասիս, 3—7—1893

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԿՌԻՎԸ

Կռիվը կը շարունակե. հայ բարոյախոսները իրենց սրտոդած մարդու երեսին ավելի ևս կը ծոմոկեն. նվիրական սկզբունքներու անուններով կը խոսին միշտ։ Մասիսի մեջ երևցող նորավեպերը կը գայթակղեցնե եղեր զիրենք ու անշուշտ իրենց համոզումի անկեղծությամբը՝ ընտանեկան պատիվը ու սրբությունը վտանգված կը հռչակեն։

Անցյալ տարի Ազբարոյական Դրականություն վերնագրով խմբագրականի մը մեջ պետք եղած պատասխանը տրված էր այսպիսիներուն. տարի մը վերջը դիտավորություն չունինք նորեն հերքելու այդ պարկեշտամոլ հոգիներուն անտեղի վախերը։

Սակայն հարկ է միայն հիշեցնել թե գրականությունը բարոյախոսության հետ շփոթելու համար մինչև Սահակ Մեսրոպ ետ երթալու չափ հետադեմ ըլլալու է մարդ։

Կը կարծենք որ մեր երանելի նախնիքը—ընկալյալ բացատրություն մը գործածելով—միտքերնուն չպիտի անցուներ թե իրենցմե այսքան դարեր ետքը եկող սերունդ մը՝ գրականության սահմանը ըմբռնելու ու հասկնալու համար նորեն իրենց կոչում պիտի ըներ։

Մասիսի մեջ երևցող Ֆանին[1] և այդ կերպ ուրիշ քմածին

գրութիւնները բարոյականի հավատաքննիչներու առյանին առջև միայն եպերելի են. բայց ուրիշ ամենուն համար, որոնք գրական սեռի մը՝ Ս. Գրքին եղանակեն տարբերիլը կրնդունին, անոնց համար Մասիսի պզտիկ պատմութիւնները վտանգավոր բան մը չեն պարունակեր։

Ըսենք նաև որ մենք ո՛չ քարոզիչներ ենք հոս, ո՛չ առաջնորդներ հանրային բարոյականի. այդ հավակնությունը չունինք և ատանկ ծանր պաշտոնի մը համար պետք եղած արժանիքը չենք զգար մեր խոնարհ անձին վրա։

Կը վախնանք մանավանդ այն խմբագիրներեն որոնք բարոյականը բերաննուն վար չեն ձգեր. հարգելի անձինք կան անոնց մեջ. բայց Ռվյու տե տեռ Մոնտի[3] տնօրենին ձախողվածը անգամ մը ևս կը հաստատե թե

l'habit ne fait pas le moins

Ֆրանսայի մեջ Մերակույտի անդամ պ. Պեռանժե բավական խնդուք հրավիրեց իր վրա այս պահուս իր մղած անբարոյականության պայքարովը՝ այնպիսի արարքներու դեմ որոնք անհամեմատ, անբաղդատելի կերպով տարբեր են Ֆանիին պատմութիններեն։

Գիտցե՛ք գոնե որ գրականությունը զվարճություն, կատակի, բարեմտության եղանակ մըն ալ ունի. ամեն ինչ վատ ու լպիրշ տեսնելու ակնոցը վար առեք և այն ատեն գայթակղեցուցիչ բան մը չպիտի գտնեք այլևս. հանցանքը ձեր ակնոցինն է և ոչ թե դիտված առարկայինը։

Ըսինք ձեզի որ Ս. Գիրքն անգամ այդ դիտակով կարդացողներուն համար՝ վրդովիչ մեկե ավելի գլուխներ ունի, պե՞տք է ասոր համար ձեր Սահակ Մեսրոպը դատապարտել։

Երբոր հրապարակագրի մը գրական մշակությունը այնքան է միայն որ հայտնի կերպով ողորմելի ոտանավորներու հեղի-

նակը Մյուսեին հետ շփոթելու կելլէ, անշուշտ Մասիսի նորա-վեպերը այդ դատաստանին առջև արդարացում չեն կրնար հուսալ։

Արդեն երբեք ալ չենք փափագիր ենթարկվիլ ատանկ դատաստանի մը. Մասիս գրական հանդես մըն է և այդ ձևը պիտի պահե. իր ընթերցողները գոհ են իրմե և այս կը բավե իրեն. մենք այն կարծիքեն չենք որ մեր շաբաթաթերթը ամենուն հասկնալի, մատչելի հրատարակություն մըն է. երբ հրապարակագիրներ կան որ չեն հասկնար զայն, անշուշտ հասարակության մեջ ալ այնպիսիները չպիտի պակսին։

Ի՞նչ պետք է ընել ասոր համար. պե՞տք է որ վարպետ տուտուի վերածենք Մասիսը. հավկիթը թարմ պահելու կամ ակռայի ցավը բժշկելու եղանակներ ցույց տանք, ծաղկանց լեզուն թարգմանենք և Մունկո Փարքի Ափրիկեի մեջ ճամփորդութ՞յունը գրելու ելլենք։

Մասիս, *10—7—1893*

ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱԿՔ

Վահան վարդապետ Տ. Մինասյան հայ գրականության մեջ նորեկ մը չէ. կրոնական նյութերու վրա շատոնց կը գրե օրագիրներու մեջ. ընթերցողները, հարկավ, մեծ բան մը հասկցած չեն այդ երբայեցերենով, գրաբարով և սրբազան պատմությունով համեմված գրվածներեն. բայց Վահան վարդապետ մեկե ավելի լար ունի իր աղեղին վրա. ամենքը ախորժանոք կարդացին իր անձնական հիշատակները այնքան մտացի ու զվարթախոհ ոճով մը գրված, նուրբ ու միշտ ճաշակավոր հեգնությամբ մը՝ վայելչապես խառնված։

Վահան վարդապետի կատակասեր եղանակը հաճելի է ինծի և պետք է խոստովանիլ որ այս սեռը ամենեն դժվարինն է գրականության մեջ։

Այս անգամ առակներու շարքով մը այս գրագետը հրապարակ կելլե և բարեբախտ զարտուղություն մը բերելով մեզի՝ իր բարոյախոսությունը անձուկ ու տղայական բան մը չէ։

Այս առակներով տրված խրատները՝ մարդկային կյանքի ամեն կերպ երևույթները կընդգրկեն միշտ, և ամբողջություն մը կը ներկայացնեն որով բարոյականը կը գտնե վերստին իր մեծությունը ու բարձրությունը՝ զորս կորսնցնելու մոտ էր

մեկ երկու հրապարակագիրներու սեղմված հասկացողությանը մեջ։

Այս իսկ պիտի բավեր որ շնորհավորեինք հեղինակը. բայց այս գիրքը աչքե անցունողները անկե զոհ մնալու դեռ ուրիշ շատ պատճառներ պիտի ունենան։

Վարդապետը համբավավոր է արդեն իր սրախոսությունեներովը՝ հատկություն մը զոր մեր գավառացիները ընդհանրապես այնքան ունին և որուն քով պոլսեցվոց խոսակցությունը՝ ճշմարիտ տափակություն մըն է միայն։

Վահան վարդապետ իր համբավին արժանի կերպով գրած է այս գործը, այնքան նրբամտությամբ որ, եթե վարդապետ չըլլար, պիտի ըսեի թե սատանի չափ խելք ունի հեղինակը։

Անոնք որ անհամ դասախոսություններով հանրությունը հրահանգելու հավակնությունը ունին, թող ձեռքերնին չառնեն այս գիրքը որ խնդացնելով, զվարճացնելով խրատելու սահմանված է։

***

Վահան վարդապետի գործը բոլորովին հայկական համ ու հոտ ունի. ֆրանսական գրականութենեն մուրացածո ոճեր՝ մուտք չունին իր գրքին մեջ. ընդհակառակը իր լեզուն՝ շարունակ գեղջուկ ու պարզ խոսվածքն է գյուղացիին։

Տեղ տեղ բարեհիշատակ Սրվանձտյանց եպիսկոպոսը կը հիշեցնե և կզգաս որ նույն սիրտն է գուցե որ կը բարախե հոս ալ, թեև ոչ այնչափ տրոփուն։

Ահա այս ինքնատիպ և իսկապես հայկական գրականությանը համար՝ Վահան վարդապետի գործը հիշատակության արժանի է այնքան ավելի որքան հայերեն գրողներուն ու հայերեն զգացողներուն թիվը երթալով կը նվազի, մեր գյուղացիի անկեղծ խնդուքին ու բարեմիտ կատակին տեղ՝ ֆրանսական անմիտ blague կանցնի։

Այս հանգամանքներով, վարդապետին գիրքը կը հանձնարարենք Իզմիրյանցի մրցանակի հանձնաժողովին, որուն դեմ անճահ կերպով ատեն ատեն հայտնված գանգատներ չեն կըր-

նար սթողել սա ակներև ճշմարտությունը՝ որ մինչև ցարդ եզած բոլոր բաշխումներով արժանիքը վարձատրված է միայն։

Հռովմեական վարդապետներ կրնան պատմական ուսումնասիրություններ ընել առանց վիրավորելու մեր համոզումները՝ որոնք իրենց ենթադրական ստուգություններուն չափ գոնե հարգելի են։

Այսպես, բուն ազգին զգացման թարգման եղած է Հանձնաժողովը չի վարձատրելով այն գիրքերը, որոնք պատմական հետազոտության պատրվակի մը տակ, մեր ամենեն նվիրական համոզումները խախտելու կը միտեին։

Իզմիրյանց մրցանակը [1] համաշխարհային գիտության համար հաստատված մրցանակ մը չէ. էապես ազգային-գրական այս պսակը ճշմարիտ ու անկեղծ ազգային գրվածքի մը ճակատը միայն կրնա դրվիլ. և ահա այս պատճառով Վահան վարգապետին գործը անժխտելի իրավունք ունի զայն ստանալու

Մասիս, 27—7—1893

ՏԵՏՐԱԿԵՍ ԷՋ ՄԸ

Հայոց բարոյականը մաքուր պահելու համար քանի մը ծանոթ խմբագիրներե կազմված Հանձնաժողովը փութո պըն-գությամբ իր աշխատությունը հառաջ տանելու վրա է։

Հանձնաժողովին գրասենյակը՝ քանի մը փայտե աթոռակ-ներով կահավորված է միայն։ Թիկնաթոռները ու վարագույր-ները հատկապես վերցված են. առաջինները մեղկության կո-չում մը ընելնուն և երկրորդները՝ գաղտնապահ հանգամանք մը ունենալնուն համար։

Չորս մերկ պատերուն վրա պատկեր և կամ գծագրություն չկա. ճերմակ ջրաներկի մը միակերպ ցոլացումը՝ բավ սեպված է իբրև անբիծ նշանակ մաքրության։ Պատի օրացույցն անգամ, որ ուրիշ ամեն տեղ՝ գեղեցիկ կնկան մը պատկերին կցված ըլլալուն համար ուշադրություն կը հրավիրե, հոս՝ ալևոր եպիս-կոպոսի մը պատկերին փակած է։

Բարոյականի պաշտպան խմբագիրները սովորական մահ-կանացուներու պես չեն հագվիր. բուրդե ու բամպակե պատ-րաստված զգեստները՝ իբրև մարմնական ջերմություն ու գըր-գըռություն պատճառող տարազ՝ մերժված են. ֆրանչիսկյան կրոնավորներու նման՝ այս մարդիկը ձորձե երկայն վերար-

կուներ ունին իրենց կռնակը, որոնց սուր թելերը իրենց մարմինը կը խածատեն միշտ ու թույլ չեն տար վատ ու շվայտ խորհուրդներու։ Իրենց ձեռքի գրիչը մեր գիտցած նեղ ու երկայն փայտե գլանիկը չէ. այլ արուլբե հատվածակողմ քառակուսի ձող մը՝ որուն սուր անկյունները զայն բռնող ձեռքին փայփայումը կը մերժեն։

Այս խստաբույր մթնոլորտին մեջն է ահա որ մեր բարոյականը՝ նոր գրականության մը հարձակումներուն դեմ պաշտպանելու միջոցներուն վրա կը խորհվի։

Հանձնաժողովը դիտած է նախ որ անբարոյականությունը՝ նույնիսկ Քերականության միջոցով մուտ գտած է մեր մեջ։ Չէ՞ մի որ երկրորդ երեսեն առականի, իգականի բաժանումը նշանակված է և ադիկ սկսելով ամեն մեկ էջին մեջ չեն պակսիր անբարոյականության առաջնորդող բացատրություններ, բառեր ու կանոններ։

Քերականության սրբագրությունը՝ իրեն գլխավոր գործ ընել առաջադրած է Հանձնաժողովը։

Անգաղտնապահ չի կոչվելու համար չենք ուզեր իրենց բոլոր կարգադրությունները ամբողջապես ծանոթացնել հիմակուց. բայց մեր ընթերցողներուն արդար հետաքրքրությունը հագեցնելու համար կրնանք այժմեն գաղափար մը տալ կատարված բարեփոխությանց վրա։

Առական ու իգական չկա այսուհետև. ամեն ինչ համասեռ պիտի ըլլա։ Հանձնաժողովը չկրնար թույլ տալ որ ութը տասը տարու տղաք՝ սեռական տարբերության աղիտաբեր գիտակցությունը Քերականության մեջ սկսին։

Բայերուն մեջ՝ առաջին լծորդության իբրև օրինակ գործածվող սիրեմ բային տեղ այսուհետև ուտեմ բայը պիտի դրվի որ, թեև անկանոն, բայց դարուս դրական պահանջմանց ավելի կը համաձայնի քան թե սիրեմը որ տղայոց միտքը գրգռելե ուրիշ բանի չի կրնար ծառայել։

Մակբայներուն մեջ վնասակար բառ մը գտնված չէ ցարդ, բայց շաղկապը իբրև երկու պարբերություններ, երկու անդամներ իրարու միացնող բառ մը ջնջված է այսուհետև։

Հանձնաժողովը կը մտածե որ այս շաղկապին վրա հայտ-

նի կերպով տեսնված միջնորդի դերը՝ բարոյական Քերականության մը խստապահանջ կանոններուն մեջ տեղ չկրնար ունենալ։

Նույնպես ձայնարկությունները վերցված են այսուհետև, վասնզի ոչ թե գաղափարները այլ զգացումները բացատրելու պաշտոն մը ունին և ասով բոլորովին վերացական ու հետևապես վնասակար հանգամանք մը կը ներկայացնեն։ Արդարև, ձայնարկությունները առօրյա դրական պետքերու մեջ չեն կրնար գործածվիլ. չըսվիր զոր օրինակ «ո՜ճ սա ստակս տուր», բայց շատ վայելուչ կերպով կըսվի «ո՜ճ կը սիրեմ զքեզ»։ Կը տեսնվի ուրեմն թե որքա՜ն բանավոր է Հանձնաժողովին որոշումները։

- Բառագիտության պես՝ Համաձայնության մասն ալ մեծ փոփոխություններ պիտի կրե. նախ անունը, համաձայնություն, մտերմություն չի՝ նշանակեր ու մտերմութենեն մինչև սիրահարություն քայլ մը միայն կա. ուստի համաձայնության տեղ պիտի դրվի Տարաձայնություն։ Հետո այսուհետև ո՛չ սեռի խընդիր պիտի ըլլա, ո՛չ բնության. Քերականությո՛ւն պիտի սորվին տղաքը թե ուրիշ բան։

Ահավասիկ գաղափար մը տվինք Քերականության վրա հորհված բարեփոխումներու մասին. դպրոցական նախակրըթությունը, ձեռացնող մյուս գիտություններն ալ զուրկ չպիտի մնան այս կարդի փրկավետ սրբագրություններե, որով հայոց ավանդական մաքուր բարոյականը՝ դաստիարակության պատրվակավ՝ չպիտի եղծանի դպրոցներուն մեջ։

Նշանափ որ տեղեկացանք, Թվաբանության մեջ չորս գործողության անունը պիտի վերցվի. Հավելումը և Բաժանումը պիտի մնան. բայց Հանումը ու Բազմապատկությունը, իբրև անպատեհ հարաբերության փոխաբերություն, ուրիշ անուններով պիտի ճանչցվին ասկե վերջը։

Նույնպես իսպառ մերժված է Հառաջատվությունը նոր Թվաբանութենեն։

Աշխարհագրութենեն ալ պիտի վերցվին Պարանոցը, Մոցը որոնք հեշտախտիկ բան մը ունին ու մարմնական մերկության հետ ակներև առնչություն։ Հրաբուխը ու Երկրաշարժը, նույն-

պես վնասակար ակնարկութիւններ պարունակող բառեր՝ չպիտի մնան։

Ասոնք և ասոնց նման են նախնական դաստիարակութեան մէջ ներմուծվելիք փոփոխութիւնները որոնց շնորհիվ հայ մանուկներու բարոյականը նոր կրթութեան ավերումներեն զերծ պիտի մնան։

Նույնպես, իբրև նախազգուշական միջոց, պզտիկ շաբաթներէն մը միջին երեսին ու մեծ օրաթերթի մը առաջին երեսին ընթերցումը պարտավորիչ պիտի հռչակվի վարժարաններուն մէջ։

Հանձնաժողովը՝ անկե վերջը պիտի սկսի չափահասներու բարոյականին համար իր արդյունավոր աշխատութեանց շարքը, որոնց մասին մեր ձեռք անցուցած տեղեկութիւնները պիտի տանք հաջորդ թիվերով։

Մասիս, 24—7—1893

ԱՌԱՋ ԹԵ ԵՏ

Առջի ժամանակներուն հետ բաղդատելով՝ ուսուցչական վիճակին բարվոքումը մատնանիշ կընեն ոմանք։

Նորին ընդհանուր համոզումին մեջ զարտուղությո՞ւն մը պիտի ըլլա իմս, երբ ընդհակառակը, ուսուցչական աստիճանը հետզհետե անկյալ գտնեմ։

Չէ որ մեր ուսուցիչները արժանիքով թերացած ըլլան իրենց նախորդներեն, բայց ապահովապես արժանապատվության տեսակետով շատ պակաս են այն պատվելիներեն զորս հիմա, երեսուն քառասուն տարի վերջը, ծիծաղելի կը գտնենք։

Իրենց ատենին, բարոյական մեծ ազդեցություն մը ունեին անոնք ազգին մեջ, իրենց ձայնին պատկառանքով կունկնդրվեր, իրենց կարծիքը միշտ ավելի կը կշռեր քան թե ամիրային կամքը։ Պատվելի՞. այս անունը անգամ մեր նախկին ուսուցիչներուն վայելած ընդհանուր համակրության ու մեծարանքին ապացույցը չէ՞։

Հիմա բառին հետ՝ որ հնություն կը հոտի՝ մեկդի ըրած ենք նաև այն հանգամանքը որ այդ բառը հիշեցնել կուտար մեզի. պատվելի՞. ի՛նչ տխուր հեգնություն մը պիտի ըլլար այժմ այս բառը՝ հատկացվելով անոնց զորս ամենեն քիչ կը պատվենք մեր հասարակության մեջ։

❊❊❊

Պատճառը այն է որ ատենով մեր գործի մարդիկը նյութական ավելի կամ նվազ հաջող դիրք մը ունենալնուն համար ինքզինքին աշխարհի իմաստնագույն անձը ենթադրելու ունայնամտությունը չունեին։ Հիմա տարբեր է կանոնը. ընդունված ճշմարտություն մըն է որ խելքին զորությունը ու քանակությյունը ուղիղ համեմատության մեջ է անտուկի մեջի ոսկինեռուն թիվին հետ. մարդս այնչափ ավելի խելացի է որքան դրամ ունի. կը կարծե՞ք որ անխելքությամբ կամ դիպվածո՞վ կը շահվի դրամը. չտեսա՞ք հրապարակագիրները որ այս վարդապետությունը ջատագովեցին։

Դարավերջիկ ու սկեպտիկ այս գաղափարը կը բացատրե մեր ուսուցիչներուն լքյալ ու անտեսյալ վիճակը։

Դասատու մը միշտ ուսյալ մարդ մը կը համարվեր բաղդատմամբ արհեստավորի մը, սեղանավորի մը, վաճառականի մը. իր խորհուրդներուն պետքը կզգացուներ. իր գիտությունը՝ ոսկիներու փայլին առջև չէր նսեմանար։ Պատվելին՝ պատվի տեղը, իր մասնավոր իրավունքները ուներ ու համառությամբ կը պահպաներ զանոնք։

Ով պետք է ափսոսալով խոստովանիլ որ մենք հրապարակագիրներս չպահեցինք զինքն այն պատվի տեղը որ մեր ավանդության մեջ հատկացված էր իրեն։ Ծաղրելով, պարսավելով ու նախատելով, ստորնացուցինք զինքը ամենուն առջև և բերինք այն նկուն ու ողորմուկ վիճակին՝ որ այնքան կը նմանի ծպտյալ սպասավորի մը զգույշ կեցվածքին։

❊❊❊

Քիչ մըն ալ իրենք զիրենք պզտիկցուցին. քիչեր կան որ իրենց պաշտոնին մեծությունը ու արբությունը դիտնալով՝ առնոր պատշաճ անհատական կյանք մը ունեցան։ Գիտենք որ հրապարակագիրներ կան որ հանրային աշխատավորի մը անհատական կյանքը չեն փնտրեր, չեն պրպտեր. անթափանց քողով կը պահեն ներքին կյանքը ու չեն խառնվիր անոնց. մենք

այդ կարծիքեն չենք ու չպիտի կրնանք ըլլալ. կյանքը բաժանումներ չունի. ներքին կյանք ու արտաքին կյանքը չի տարբերիր պատվավոր մարդուն համար. չենք կրնար ընդունիլ որ ներքին կյանքով անպատիվ մեկը՝ հանրային գործունեության մեջ պատվավոր դառնա. այս երկուերեսությունը չպիտի կրնանք ըմբռնել երբեք։

Ուրեմն մեր ուսուցիչները ստորնացուցին իրենց վիճակը. հետո, իրենց բարոյական նկարագիրը միշտ տեղի տվավ դրժվարությանց առջև։

Հոգաբարձություններուն հնարած ամեն նախատինքներուն առջև իրենց արժանապատվությունը չպահեցին ու իրենց մեջ չունեցան այն արհեստական եղբայրակցության զգացումները որով ինքգինքնին պաշտպաններին թաղականներուն անիրավությանը դեմ։

Վերհակառակը մրցակից եղան իրարու հացը հափշտակելու ու նվաղուրդի դնելու ելան իրենց արդեն կարի չնչին ամսականները։

Նվ եկան հասան այն վիճակին ուր, երեսուն տարի վերջը, իրավամբ պարտավոր եղանք հարցնելու առա՞ջ թե ետ գացինք։

Մասիս, 7—8—1893

1898

ՏԱՐԵԴԱՐՁ ՄԸ

Հաշիվի ու Նյութի դարու մը մեջ կապրինք և Երազի ու Մտքի դարու մը զավակներն ենք։

Ուրիշներ դեպի առաջ կը նային ոգևորվելու նպատակով, մենք դեպի ետ կրթալու պարտավոր ենք շատ հեղ, օրինակելի դաս մը փնտրելու համար։

Մեր մեջ, ինչպես ուրիշ տեղեր, Օրագրությունն ալ զերծ մնացած չէ այն նյութապաշտ վարակումեն որ, պատմության մեջ, այս դարուն վերջին կեսին տխուր հատկանիշը պիտի կազմե։

Ամեն բանի մեջ դրականությունը փնտրելու այս ոգին այնքան ծանր ու ընդհանուր մթնոլորտ մը ձևացուցած է որ երբ, այսօրվան պես դիպվածով, ձեռքես կանցնին հիսուն տարի առաջ գրված առաջնորդողներ, որոնց մեջ հրապարակագիրները ավելի կը քարոզեն քան թե կը խոսին, լեզվիս ծայրը կուգա ըսել իրենց.

— Միամիտնե՛ր...։

✲✲✲

Այս խորհրդածությունները թելադրեց ինձի «Մասիս»ի առաջին թիվին ընթերցումը որ 1850ի հանրային մարդոց դավանանքը կը պարունակե։

Այսօր ահա ճիշտ քառասունըվեց տարի ետքը, երբ նոր սերունդ մը՝ նոր եռանդով մը կը ձեռնարկե այս օրագիրը հրատարակելու, չեմ կրնար դիմանալ անոր ոգին ճշտող հատվածը հոս արտատպելու փափագիս.

«Օրագրին գլխավոր նպատակը ազգը ուղղել, լուսավորել և անոր օգնել պիտի ըլլա։

Այս ճշմարիտ ու սուրբ գաղափարին ծառայությանը սահմանված է այս լրագիրը»։

2 փետրվարի 1852 Ա տարի, 1 թիվ

Մասիս

Խոստովանեցեք որ այս հին մարդոց հրապարակագրությանը մեջ վեհության մը շքեղությունը կա։

Արդարև ճշմարիտ օրագրությունը համոզումի պես անկեղծ, հավատքի պես հաստատ, ու կրոնքի պես սուրբ է, այնքան՝ որ ներելի չէ ամենուն ձեռք երկնցնել անոր։

Պաշտամունք մըն է աս որ իր ծեսերը, արարողություններ ունի։

Հոն՝ ուխտի մը ձգողությունը ու անույշ անուրջի մը անդիմադրելի հրապույրը չզգացողները օտարոտի եկամուտներ են և չպիտի կրնան բնիկ մը դառնալ եթե նույնիսկ բոլոր կյանքերնին մաշեցուցած ըլլան անոր մեջ։

✲✲✲

«Մասիս»ը մեծ օրաթերթի մը վերածելու գործը՝ հանդպցընելով այս օրագրին հիմնարկության տարեդարձին, մեր ժամանակակից պատմության մեկ էջը դարձուցած ըլլալու տպավորությունը, գրեթե համոզումը ունինք։

Ամիրաներու վարչությունը բարձող սերունդին գործը վերջացած է ա՛լ։ Սերվիչեններու[1], Օտյաններու[2], Ռուսինյաննե-

րու[3] պես միտքերուն ներգործումի շրջանը ավարտած ու փակված է։

Մեզի չիյնար անմիջապես դատաստան ընել ու վճիռ արձակել այս մարդոց վրա. դեռ շատ մոտիկն ենք իրենց. տակավին պետք եղած անջրպետը չէ կազմված, արդար ու անաչառ ուսումնասիրություն մը ընելուասոնց վրա։

Բայց մեր իրավունքն է, մեր պարտքը պիտի ըսեի, վերադառնալ անոնց ժամանակին ամեն անգամ երբ օգուտ մը, դաս մը կա քաղելու այդ անցյալեն, ճիշտ ինչպես այսօր ըրինք, «Մասիս»ի հիմնարկության տարեդարձը արձանագրելով այստեղ։

Մասիս, 14—2—1898

ԵՐԳԵՆՔ

Ճապուը բոլոր ամառը երգած ըլլալուն համար...։ Մնացածը գիտեք. վերահաս ձմեռը ուր ուտելու փշրանք մը չի կա. Մրջյունը, բանը գործը գիտցող բանջիխ մը, որ իր ստորերկրյա ապարանքին մեջ փորը կուշտ կռնակը տաք, խրատներ կուտա անոթի Ճպուռին, փոխանակ փշրանք մը հաց նետելու անոր, տեսակ մը Տիկին տը Մենթընոն՝ որ իր հրավիրյալներուն խոստացած ոստրեն՝ ախորժելի պատմությամբ մը մոռցնել տրված էր։

Լաֆոնթենին այս առակեն ի վեր, երգելը՝ քիչ մը ամենուս աչքեն ելած է։ Երգող մեկը տեսնելնուս պես՝ անմիջապես ձմեռը, անոթությունը, անողորմ մրջյունի խրատը քով քովի, կարգով մտքերնուս առչև կուգան, շոգեկառքի մը վակոններուն շարքին պես, որուն «լոքոմոթիվ»ը, ետքը «թենտեր»ը, ետքը «ֆուրկոն»ը անմեկնելի կարգ մը կը ձևացնեն։

Բայց լաֆոնթենի առակները ճշմարտությունը չեն քարոզեր միշտ։ Եվրոպայի մեջ երգիչները՝ սեղանավորներու չափ, թերևս ավելի, սուակ կը շահին, ու դյուրին չէ ամեն ատեն Ճպուռ մը ըլլալ. սակավակյաց Մրջյուններուն համբերատար պարենավորումը ու խնայողությունը կը ներկայացնե, ան ալ

Շահադիտութեան դիմացը իր առջի նշանակութիւնը բոլորովին կորսնցուցած է։

Ամեն բան վեր ի վար է ուրեմն, և շատ կը վախնամ որ եթէ այս դարը առակախոս մը ունենար, Ճպուռեն օրինակ առնելու խրատը պիտի տար Մրջյունին։

Այո՛, երգի դարուն մեջն ենք։

Տկարանալու, սայթաքելու չէ կյանքի պատահարներու առջև, այլ զանոնք դիմավորելու է ինչպես անխուսափելի հյուրի մը ընդունելութիւնը կրլլվի, զվարթ երեսով։

Մեր հասարակութիւնն ալ ուրեմն, պետք ունի երգելու ու խնդալու՝ կազմելու համար այն մտքի ու սրտի առողջութիւնը, առանց. որուն հառաջդիմելու կարող չէ։ Վալագին ազգ մը բանի մը օգտակար չէ կրցած ըլլալ աշխարհիս վրա։

Մասիս, *15—2—1898*

ԱՎԵԼԸ

Տանտիկին հասարակություն մըն ենք, ավելը, լվացքը, տախտակ սրբելը կը սիրենք։

Մաքրության այս սերը, զոր շատ անգամ երեսնուս զարկած են, ընտանեկան հարկեն անդին անցած չէ սակայն. այնպես որ մեր հանրային ասպարեզները փոշիով գեթ, եթե ոչ ուրիշ աղտեղությամբ, լեցուն են միշտ։

Ով տարիներ անցնելով այնքան թանձրացած է խավը որ ամենեն տոկուն մարդն իսկ ավելը ձեռքը առնելե առաջ իրավունք ունի վարանելու։

Տախտակամածեն վեր ելլելիք փոշին այնքան հեղձուցիչ բան մը ըլլալ կը խոստանա որ անոր մեջ կուրնալու կամ շընչասպառ մնալու վախը ինքնին կարդարանա։ Ընդհանուր վարանումին մեջ, Օրագրության կիյնա նորեն օրինակը տալ, և քաջալերվելով այն համակրություններեն որոնք իր անշահախնդիր ջանքերը կողջունեն, ինքը մատնանիշ պիտի ընե հանրային ուշադրության՝ այն մութ անկյունները ուրկե պետք է սկսիլ, առողջապահիկ կանոնները ի գործ դնելու։

***

Մեր առաջին մտածումը չի կրնար հարկավ մեր ողորմելի դպրոցական գործունեութիւնեն զատ բանի մը դառնալ։

Այն կուրացումին մէջ, որ առհասարակ ինքզինքին հավնող ամեն մարդու և հատկապես մերին պատուհասը եղած է, չենք տեսած կամ չենք ուզած տեսնել որ հայրենակից ուրիշ հասարակութիւններ որքա՜ն արագաքայլ կը հառաջդիմեն կրթութեան մեջ։

Մեր թուրք հայրենակիցներուն այս շավղին մեջ կտրած ճամփան այնքան մեծ է որ հիացումով միայն կրնանք զայն գնահատել։

Նախնական, բարձրագույն կրթութեան ու մասնագիտական ուսուցման հաստատութիւնները ամեն տարի շարունակ դուրս կը բերեն կարգ մը զարգացած երիտասարդներ, որոնք ամեն ասպարեզներու մեջ իրենց արժանիքը կը հաստատեն։

Թուրք օրագրութեան վրա պզտիկ ակնարկ մը կը բավե ըմբռնելու համար այն հզոր գործունեութիւնը, որ իրենց գրական աստպարեզին մեջ ամեն առթիվ կը տեսնվի։

Ասոր դեմ, մեր մեջ, կիսկատար սերտողութիւններով, կըցկըտուր բառերով, թութակորեն միտք պահված բացատրութիւններով միայն պարծեցող պատանիներու, երիտասարդներու շարք մը, որոնց տգիտութեան աննկղրութիւնը՝ իրոք ապշեցուցիչ է։

Եվ ասոնք իրո՞ք զավակներն են այն աշխատասեր, ուշիմ ու խելացի տոհմին որ Տաճկաստանի մեջ հառաջադիմութեան տարր մը ըլլալուն այնքան փայլուն ապացույցները տված էր միշտ։

Ապաքեն այս նվաստացումը դժվար չէր գուշակել, ազգին կրթական հաստատութիւնները միատմի չքացած, ուսուցչական մարմինը՝ խոտորած ու պարտականութեանը... ստորոտը ինկած պահուն՝ մեր տղոց կրթութենեն ակնկալելիք բան մը մնացած չէր։

Եվ երբ մեր հասարակութիւնը ժողովներու, խորհուրդներու, կուսակցութիւններու սին վեճերովը կը հետաքրքրվեր, երբ

դպրոցները թաղականի, հոգաբարձուի, տնօրենի նախանձընդդեմ պայքարներովը կը լեցվէին, անդին ուրիշները, առանց աղմուկի, ուսանելու կը պարապէին փոխանակ մեզի պես պարապութեամբ ուսանելու։

***

Հորմե հետե Կենտրոնական վարժարանի ուսումնական վիճակը խանգարվեցավ, կրնանք ըսել որ ոչ իսկ նախակրթարան մը ունինք այսօր. լավ հասկցեք ասիկա, ոչ իսկ ծաղկոց մը։

Ու մի՛ խաբվիք Ուսումնական Խորհրդին երբոր կելլէ վարժապետանոց մը հիմնելու պես խոսքեր կընէ, այս այլանդակ գաղափարին իրավամբ զլացված հանրային հոժարութիւնը չարունակ պահանջելով։

Խորհուրդի մը խորհուրդ մը տալը դժվար է միշտ, բայց չպիտի քաշվիմ՝ թաղական խորհուրդներուն, ասանկ երևակայական վարժապետանոցի մը կամ կրթական տեսուչներու անունով ուղված դրամը մերժելու խորհուրդը տալեւ

Ի՞նչ պիտի ըսեիք այն մարդուն որ կռնակը շապիկ մը չանցուցած Միհեն կամ Պոթեռեն հագուստ ապսպրելու կելլէ։

Ո՛չ, այս հեք հասարակութիւնը շռայլելու դրամ չունի։

Ուսումնական Խորհուրդը արդեն իր խղճին վրա ունի՝ ամեն օր մեկ մեկ ուսուցչի վկայականով փողոցները թափած ողորմելիներու երկար շարքը, զորս անգործ թողուլը պաշտոնի մը դնելե ավելի օգտակար կը համարինք ազգին համար։

***

Եվ եթե կուզե զմեզ երախտապարտ ձգել ու իրական ծառայութիւն մը մատուցանել, թող Ավելը ձեռքը առնե, Ավելը՝ որուն ծայրն ալ, կոթն ալ գործածելու տեղ կա, և մաքրե մեզի չորս գործողութիւն չգիտցող թվաբաններե և ուղղագրութիւն չսորվող հայկաբաններե, որոնց ճակատը փակցուցած ուսուցչի տիտղոսը շատ չանցած ճշմարիտ անարգանքի մը հոմանիշը պիտի դառնա։

Փաստ, *21—2—1898*

ԱՎԵԼԵՆ ԵՏՔԸ

Թե որ մեկը ելլեր մեր մեջ և բժիշկ ու երկրաչափ հասցնելու համար Պոլսո մեջ Բժշկական ու Երկրաչափական ազգային վարժարաններ հաստատելու առաջարկությունը ըներ, հարկավ ամենքս ալ խնդալե պիտի մարեինք։

Գաղափարը այնքան տարօրինակ պիտի երևար որ չպիտի մտածեինք անգամ որ Պոլսո մեջ, եթե ոչ պահանջելի ամեն պայմաններով օժտված, բայց գոնե պետք եղած դասերը ըստ կարի ավանդելու կարող մասնագետներ ունինք. այդ պզտիկ օժանդակությունը, ասանկ մեծ գաղափարի մը իրականացումին քով, շատ չնչին սատար մը պիտի համարվեր։

Ու երբ որ Վարժապետանոց հիմնելու առաջարկությունը կըլլվի, կը տեսնեմ որ շատ մը մարդիկ, զորս մեծապես կհարգեմ, ահա լրջությամբ ասոր իրականացումին ետևեն են և ասով ժամավաճառ կըլլան, նիստ ու ժողով կը գումարեն, կարծիք կը փոխանակեն, խորհրդակցություններ կընեն, ծրագիր պատրաստելու համաճարակ ախտեն կը բռնվին։

Կը տեսնեմ ու հավատալս չի գար։

***

Կը կարծե՞ն արդյոք որ Ուսուցչությունը ավելի՛ պզտիկ մասնագիտություն մըն է քան թե Բժշկություն կամ Երկրաչափություն։

Ավելի՞ քիչ ատենի, նվա՞զ անգտանելի վարպետներու, և պակա՞ս ծախքի կը կարոտի միթե։

Մեր ըմբռնումովը,— որ կրնա Ուսումնական Խորհրդինը չըլլալ, բայց չի դադրիր բոլոր լուսավորյալ աշխարհին ըմբռնումը մնալե,— ուսուցչությունը ոևէ մասնագիտութենե ավելի բան մըն է, ինքնիրմեն դուրս ընդհանուր զարգացումի մը կարոտ ասպարեզ է։

Ոչ միայն սորվելու բան մըն է ան, այլ նաև զարգացումի հատուկ մթնոլորտի մը, բարոյական ու իմացական մասնավոր միջավայրի մը անհրաժեշտ ենթական։

Այնպես որ, եթե նույնիսկ իբրև մասնագիտություն մը զայն դուս ձեռք բերել կարելի իսկ ըլլար,—ինչ որ բացարձակ կերպով անհնար է, քանի որ ամեն բանե առաջ Վարժապետանոցի համար կարող ուսուցիչ չունինք—ես դարձյալ պիտի պահանջեի որ մեկդի ձգենք այդ գաղափարը վասնզի մեր մեջ պետք եղած իմացական մթնոլորտն ալ կը պակսի կարծեմ։

Եվ ուրկե կը հետևի թե ավելի հեշտ ու հնարավոր է մեզի համար այստեղ Բժշկական կամ Երկրաչափական դպրոց մը հիմնել քան թե Վարժապետանոց մը։

***

Տեսնե՛նք. արտորնոք տրված որոշումներու, անհաշիվ առուտուրներու վերջ տանք. ուրիշ տեղ մը ըսի որ նոր շրջանի մը սկիզբն ենք ու չանանք նոր մարդերու պես շարժիլ. մոռնանք, աստուծո՛ սիրուն, առաջուց ի վեր հեղհեղված հանկերգները որոնք այս ժամանակինը չեն. թողունք որ անոնք Պատրիարքարանի արձանագրություններուն մեջ մնան, իբրև իրենց ատենին նշանակները։

Մի՛ ըսեք ինծի որ ձեր ծրագրած Վարժապետանոցը՝ այն չէ ինչ որ ես, և հարկավ դուք ալ, կը փափագինք, այլ նախապատրաստական ուսուցիչներ հասցնելիք համեստուկ դպրոց մը. այս սահմանափակումները չեմ հասկնար. վարժապետությունը՝

այն միակ բանն է որուն էն ստորին, էն նախնական աստիճաններուն վրա պետք է փնտրել բարձրագույն արժանիքը։

Վարժապետանոց կամ Ոչինչ. մեջտեղը չի կա ասոր։

***

Ի՞նչ ընելու է ուրեմն։՝

Պարզապես այն՝ ինչ որ խիստ բնական կը գտնենք երբոր մեկը բժիշկ կամ երկրաչափ ըլլալու կը պատրաստվի։ Ինչ որ պարզ անհատները այնքան դյուրությամբ կընեն ու կը հաջողին, անիկա ընենք մենք ալ՝ երբ ազգին համար ուսուցչի պետք ունինք և ինչ որ մինչև հիմա երբեք փորձած չենք։

Ի՞նչ ավելի դյուրին բան կա, քան ամեն տարի 4 կամ 5 պատանիներ զատելով արժանավորներեն,—ու երբ արժանավոր կրսեմ, կը հասկնաք որ սրվոր նրվոր պաշտպանությանը, հանձնարարությանց կամ եղբորորդությանը վրա չէ խոսքս, այլ մրցումով ապացուցված արժանիքի,—Գերմանիա կամ ուրիշ հարմար տեղ մը խրկել, որպեսզի պետք եղած ուսումը ու զարգացումը առնեն։

Կը կարծեմ որ չորս տարվան շրջան մը կը բավե ասոր, և այստեղ փորձվելիք ամուլ չանքերը այնտեղեն սպասված ապահով ճշմարիտ օգուտներուն հետ բաղդատության անգամ չեն կրնար դրվիլ։

Ծախքի խնդիրը հոս թե հոն միևնույն պիտի ըլլա, վասնզի նախակրթարաններ կան մեր մեջ որ 500են 1000 ոսկիի տարեկան պյուտճե ունին և կենթադրեմ որ Վարժապետանոցը, որքան ալ համեստ ըլլա, միշտ նախակրթարանե մը ավելի ծախքի կը կարոտի, մինչդեռ Եվրոպա խրկվելիք ուսանողի մը տարեկան ծախքը 60 ոսկիեն անդին չանցնիր։

***

Երբ որ ասկե չորս տարի վերջը ճիշտ 16 ուսանող ունենանք հոն, ասոնց ծախքը՝ որ ուսանողներուն թիվին ավելնալուն հա-

Մեմատ կրնա ալ պակսիլ, տարեկան 1000 ոսկիով պիտի գոցվի։

Կրնա՞ք խոսք տալ որ այսչափ դրամով միևնույն արդյունքը կարող եք ձեռք բերել հոս, եթե ասոր տասնապատիկն ալ ծախսեք։

Մանավանդ որ, երբ կանոնավոր կազմակերպություն մը առնե, երբ վստահություն մը ներշնչե այս գործը, չի պիտի պակսին հարուստներ որոնք սիրով մեկ կամ ավելի ուսանողի ծախքը պիտի հոգան, ինչպես որ ցարդ հոգացած են անհատական դիմումներու վրա և որոնք, եթե փափագին իսկ այսօր նպաստ մը տալ բարեգործական նպատակով, չեն գիտեր թե ի՛նչ ընելու են կամ որի՛ն հարցնելու են։

Թաղային վարժարաններեն՝ այցելու կամ տանուտեր տնօրեններու համար ստակ պահանջելե բանավոր է կարծեմ ասանկ առաջարկությյան մը օգտին անոնց պյուտճեներեն մաս մը հատկացնել տալ, օրինակի համար, հարյուրին տասը. և կը հավատամ որ Պատրիարքարանն խրկված տեսուչներու դանկ մը չի տվող թաղականները, սիրով պիտի տան ուզված դրամը երբոր իրենց տղոց ուսուցիչներ պատրաստելու առաջարկությունը՝ լուրջ բանի մը, հավատալի ձեռնարկի մը վերածվի։

Հիմա որ այս կրթական գործին ապրելու պայմանները ճշտեցինք, ուրիշ բան մը չի մնար մեզի բայց միայն արտասվել անոր վրա եթե դարձյալ կյանքը զլացվի իրեն։ Դուրյանին ըսածին պես.

«Եվ մահառներն ալ կը խնդրե երկու բան,
Նախ՝ կյանքը ու հետո լացող մ'իր վրան»։

Մասիս, 22—2—1898

ԽՈՐՀՈՂՆԵՐ, ԳՈՐԾՈՂՆԵՐ

Ուշադրություն ըրած եք հարկավ որ խուլ անհամաձայնություն մը կա այս երկու կարգի մարդոց մեջ, որոնք սակայն իրարու հետ միաբան աշխատելով կրնան օգտակար ու արդյունավոր ըլլալ։

Ընդհանուր կանոն է որ գործող մարդը խորհողը քամահրե և փոխադարձաբար ընդունված է որ խորհողն ալ գործողին չհավնի բնավ։

Այս ընդդիմամարտ ու անհաշտ ոգին՝ հասարակության մը գործունեության մեջ անգամ մը մտնելե վերջը, զարմանք չէ որ ամեն ջանք ամուլ դառնա, ամեն ինչ իր պակասավոր ու անբավական վիճակին մեջ հետզհետե ավելի ևս ուժովնա, վասնզի մեր մեջ, ամեն մարդ անսխալ ըլլալու հավակնությունը ունի և չի կրնար զիջանիլ սա ճշմարտությունը ընդունելու թե ուրիշ մը իրմե ավելի ուղիղ տեսնելու կամ գործելու երբեմն կարող կրնա ըլլալ։

Ժողովական մը դրամատեր է, դրամին տարբերությունները հաշվելու կամ շահագործելու միջոցները ուրիշե մը աղեկ գիտե միշտ. ամենքը կը խոնարհին իր այս ձեռնհասության առջև, բայց ինքը այս համեստ դրվատիքովը չի կրնար գոհանալ.

պետք է նաև որ կրթական հարցերու վրա իր կարծիքը հարցվի, հոն ալ գերակշիռ ձայնը ունենա ինք։

Ուրիշ մը բժիշկ է, հաստատութեան մը ողջապահիկ կանոնները կրնա ճշտել, բայց իր փառասիրութիւնը այս սահմանը չընդունիր. հորմեհետե իր «տոքթոր» տիտղոսը հնչեցուց Փերայի փողոցները, ահա ամենագետ մարդը եղած է մեր հասարակութեան մէջ, և ամեն բանի խելք հասցնելու կը բավե։

***

Մանավանդ թե ճշմարիտ թշնամանք մը կըլլա իրենց երբոր հրապարակագիր մը, պարզ օրագրող մահկանացու մը, իր գաղափարները, իր առաջարկութիւնները ներկայացնե։

Բողոքը կսկսի՝ Ի՞նչ գիտե այն գրողը. ի՞նչ կը հասկնա գործեն. խոսիլը, առաջարկելը դյուրին է. բայց գործադրելն ալ մեկտեղ ցուցնելու է. անոր չափ այդ բաները ո՞վ չի գիտեր և սովորական շարքը այս անմիտ առարկութիւններուն որոնց մեջ Անձնասիրութիւնը և Ունայնամտութիւնը ժամադիր եղածի պես զիրար կը գտնեն։

Ու երբոր դեմը ելլողին այս բացատրութիւնը տալով իր լեցուն սիրտը պարպե—ըստ որում միտքը չի կրնար պարպել—այն ատեն ճակատը բաց կը քալե փողոցն, ֆեսը վեր նետած, թեթև ժպիտ մը իր հեգնոտ այտերուն վրա, ինքզինքին հավնած երջանիկի մը կամ մեծ գործ մը ըրած մարդու մը երանութեանը մեջ։

Պետք չունի բնավ որ պատիվ ընե ուշի ուշով կարդալու ինչ որ օրագրողը, հարկավ իրմե շատ ու շատ ավելի մտածելի ետքը, իբրև լավագույն խորհուրդը՝ համարձակած ջ հանրութեան ներկայացնելու։

Ջրմբռներ թե օրագրի մեկ կամ երկու սյունակը լեցնող խոսքերը խզմտանքի ու պատվո կրկին երաշխավորութեան տակ արտասանված խոսքեր են, որոնց կշիռը իր փոքրիկ դատողութիւններեն շատ վեր է միշտ։

***

Անուշադիր մարդ մը, օրագրի մը համար՝ սա կամ նա առաջարկությունը, այս կամ այն քննադատությունը ընելեն դյուրին եւ զբոսնեցուցիչ բան չերևակայեր։

Ու թե որ գիտնա՜ր որ էն չնչին խորհուրդը, էն անկարևոր խոսքը զոր խղճի տեր օրագրող մը կը նետե հասարակության մեջ, քանի՛, քանի՛ անգամ մտածվելէ, քննվելէ, թեր ու դեմի ամեն առարկությունները կշռվելի վերջը միայն դուրս կելլեր։

Թե որ գիտնար թե օրագրողին համար՝ ճշմարիտ երկունք մըն է իր հեք առաջնորդող հոդվածը, որ ահա այնքան բուռն թշնամությանց նյութ պիտի դառնա կամ այնքան հարևանցի դատաստաններու կամ կանխակալ վճիռներու պիտի հանդիպի։

Թե որ դիտենա՜ր որ օրագրողը ո՛րքան պատրաստ համակրության ցույցեր, իրեն ընդառաջ վազող ողջագուրանքներ մեկդի դնելով է որ իր խորհող մարդու կարծիքը կարտահայտե, երբ սակայն այնքան դյուրին էր—ոչ թե իր համոզումին հակառակը ըսելով, այլ լռությունն պահելով միայն,—պահպանել այն բարեկամությունները որոնք իր կռնակը շոյելով՝ բերանը բռնելու կը նկրտին։

Ո՜հ, ապահով եղեք, եթե խղճմտանքի գոհացումն դուրս ոևէ նկատում ունենա՜ր իր առջևը, երբեք չպիտի մատնանիշ ըներ Հիվանդանոցին օր օրե վատթարացած վիճակը, կրթական ծառայացումը. ո՛չ, ասոնց և ո՛չ մեկը պիտի ըներ. գաղափարներու եռևեն վազելու անխելքությունը չպիտի գործեր։

Տասիս, 1—3—1898

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՏԻԿԻՆ ՄՈՆԿՈՏԵՆ

Որիորդ Մարկըրիթ Տարպելիի առաջնորդութեամբ կազմըված ֆրանսացի թատերախումբը, որ այս ձմեռվան սկիզբը Փերայի Քաղաքական Թատրոնին մեջ կարգ մը ներկայացումներ տալե ետքը մեկնած էր, քանի մը օրե ի վեր մայրաքաղաքս վերադարձած է և իր նոր շրջանը երեկ գիշեր սկսավ, ներկայացնելով Տիկին Մոնկոտենը, զվարճալի վոտրվիլ մը, որուն մեջ բարոյական մըն ալ կա, ինչ որ վոտրվիլե մը միշտ չսպասվիր։

Ահավասիկ այս զավեշտին նյութը համառոտիվ։

Պարոն և տիկին Մոնկոտեն Ալանսոն քաղաքը կը բնակին։ Տիկինը բարոյականի մասին խստապահանջ, բայց չափազանց խստապահանջ մեկն է, հայ մամուլին ծանոթ մեկ քանի ներկայացուցիչներուն չափ. իր այս անմատչելի ու անառիկ կնկան համբավը տարածված է ամեն կողմ. իր խիստ թարմ ու համեղ ատենն ալ—հիմա տիկինը հիսունին մոտիկ է—այսպես է եղեր, ու իր տունը հյուր եկողներուն արդար պարծանքով մը ցույց կուտա պզտիկ դաշույն մը զոր գործածեց օր մը իր պատվին ու հրապույրներուն ետևեն ինկող ձեռներեց մարդու մը դեմ ինքզինքը պաշտպանելով։

Այս դաշույնը հիմա նվիրական բան մըն է և Ալանսոն ամբողջ անոր առջև կը ծնրադրե։

Տիկինը ամեն բարեպաշտական ու բարոյական ընկերութիւններուն անդամակիցն է և բերնեն վար չի ձգեր—միշտ տարօրինակ կերպով նմանելով մեր մամուլին մեկ մասին—բարոյականը ու կանացի պատիվը, և իր հեք էրիկը նվաճելով իր անցյալ քաջասրտութեանը մեծութեան բեռին տակ։ Ողորմելին՝ ամուսին մը չէ այլ ծաղկոցի աշակերտ մը. պզտիկ դիմադարձութեան մը կամ անհաճո բանի մը համար տիկին Մոնկոտեն զինքը կը պատժե, քսան էջ գիր դրել կուտա, կը բանտարկե և որ ավելին է, շաբաթ մը, երկու շաբաթ կը զրկե պտուղե, անկե՝ որուն համար մեր նախահայրը Ադամ, կրսեն թե նվայեն ուզելով խաբվեցավ։

Արդ, տիկինը քեռորդի մը ունի օրիորդ Լյուսիեն, որ Փարիզեն եկած Ֆուժրոլ անունով երիտասարդ նկարիչ մը կը սիրե և անկե կը սիրվի, բայց տիկինը ասոնց ամուսնութեան չի հաճիր բնավ։ Փարիզեն եկող մը, մանավանդ նկարիչ մը իհարկե անբարոյական ու անառակ կըլլա, և պարկեշտասուն տիկին Մոնկոտեն որոշած է Լյուսիենը ամուսնութեան տալ Սավինյաք անունով մեկու մը որուն ինքը կը հավնի և որուն օրիորդը չի հավնիր բնավ։

Իսկ պարոն Մոնկոտեն թեև կը փափագի Լյուսիենը սիրած մարդուն հետ ամուսնացնել բայց կնոջմեն այնքան կը վախնա որ չի համարձակիր բերանը բանալ անոր դեմ։

Այս միջոցին է որ Պեննկալին, փարիզցի երգչուհի մը, իրեն ձգված մեծ ժառանգութեան մը շնորհիվ, կանոնավոր կյանք մը անցընելու համար Փարիզեն Ալանսոն եկած է բնակելու և դրացի է պ. Մոնկոտենին որ իր հրապույրներուն չի կրնար դիմանալ. Պեննկալին ալ Ֆուժրոլը Փարիզեն կը ճանչնա ու կը սիրե և Ալանսոնի մեջ հանդպելով անոր նորեն ձեռք ձգելու կաշխատի. բայց նկարիչին սիրտը միշտ Լյուսիենին հետ է, այնպես որ երբ Պեննկալին անոր տունը հատևեն կերթա, անիկա կը ձգե կը փախչի. բայց իր տեղը կը ձգե հոն պ. Մոնկոտենը, որ վերջ ի վերջո կը բռնվի իր կնոջմեն ճիշտ այն վայրկյանին երբ փարիզցի երգչուհին իր բոլոր կախարդիչ հրապույրներովը զինքը գգլխած էր։

Իր կնոջ առջև դժբախտ Մոնկոտեն ինքզինքը արդարացնելու համար գյուտ մը կընե. քնաշրջիկ կը ձևանա և իբրև թե քունին մեջ և անգիտակցաբար երգչուհիին քովը գտնված ըլլալը կը ցուցնե. իր կինը չի հավատար նախ. հետո երբ կը տեսնե որ քնաշրջիկը, միշտ աչքը գոց, պատուհանեն դուրս իյնալու պես բաներ մը կընե, կը համոզվի։

Մոնկոտեն այս առաջին անգամը կը հաջողի կանացի վրեժխնդրության կայծակներեն պրծելու, բայց եկու տես որ երգչուհին, իբրև ճշմարիտ փարիզցի կին, զվարճանալ կուզե իրեն հետ. և օր մըն ալ կելլե տիկինը բացակա եղած մեկ ժամուն Մոնկոտենին տունը կուգա. իզուր Մոնկոտեն, որուն առջի անգամվան վախը միտքն է դեռ, ճամփու դնել կուզե զինքը. Պենկալին իր ճիտը կը փաթթվի, դիրկը կը նետվի, վերջապես կընե այն ամեն բաները որոնք խնդճ Մոնկոտենին բոլոր խոհեմության դասերը մոռցնել կուտան։

Կերգեն, կը պոռան և... բնականաբար դարձյալ կը բռնվին տիկինեն որ վերջապես վրա կը հասնի անիրավ պատուհասի մը պես։

Այս անգամ ա՛լ քնաշրջիկի հնարքը չի կրնար բանիլ և Մոնկոտենի տրվելիք պատիժը անագորույն և անողոք բան մը պիտի ըլլա. տիկինը կը խորհի, կը մտածե. պահ մը ամուսնաթուրության խոսք մը կը դառնա. ամուսնին համար՝ ասիկա պատիժ չէ այլ փրկություն. բայց այս խորհուրդը կանցնի. ասոր տեղ տիկին Մոնկոտեն կորոշե ամուսինը տարագրել լերան մը մեջ կորսված ագարակ մը, և Մոնկոտեն կը մխիթարվի խորհելով թե գեթ առանձին պիտի մնա հոն։

— Ո՛չ, կըսե տիկինը, ես ալ միասին քովը պիտի ըլլամ։

Հիրավի պատիժը անհանդուրժելի է ա՛լ. Մոնկոտեն կնոջը գթությանը կը դիմե ու հակառաջարկ կը ներկայացնե ինչպես կըսեն դիվանագետները.

— Հինգ տարի, տասը տարի պտուղեն, սա՛ ծանոթ պտուղեն զրկե զիս, ի՞նչ կըլլա։

Ո՛չ. պտուղե զրկելը չնչին ու անբավական պատիժ մըն է և տիկին Մոնկոտեն, այն պարկեշտասուն կինը որ ահա սա պատեն կախված արյունաթաթավ դաշույնով մը իր պատիվը

պահպանած ըլլալու անբասիր անցյալը ունի, պետք է որ օրինակելի դաս մը տա իր անհավատարիմ ամուսնին։

Բայց եկու տես որ, պատեհ զուգադիպության մը բերմունքով, երևան կելլե հանկարծ որ տիկինին այս քաջագործությունը սնոտի և հերյուրածո է բոլորովին. իրավ է որ ատենով հրիտասարդ մը իր ետևեն պտըտեր է, իր սենյակը մտեր է, բայց ձեռքը թափուր դուրս չէ ելեր, այլ ընդհակառակը այնպիսի հիշատակներով բեռնավորված որ ահա տասը տարի ետքը նորեն իր բերնին ջուրերը կը վազեն Տիկին Մոնկոտեն կեղծպարկեշտ մըն է ուրեմն, ինչպես կըլլան անոնք որ պարկեշտություն ու բարոյական բառեր բերաննուն չեն ձգեր և ուրիշներուն դեմ աններող ու խստապահանջ կըլլան։

Ինքն է անհավատարիմ կինը, և իր էրիկը ա՛լ պետք չունի քնաշրջիկի հնարքներու կամ գլխիկոր մարդու աղերսանքներուն ապավինելու այսուհետև։

Մոնկոտեն բարձրավիզ է, կը կանգնի իր խաբեբա կնկանը դեմ ու միանգամ ընդմիշտ կազատի անոր հրամայողի ծանր ու անտանելի լուծեն. ասկե վերջը ազատ համարձակ ուզած տեղը պիտի երթա, ուզածը պիտի խմե և ուտե, և կինը ոևէ կերպով չի պիտի խառնվի իրեն. շունչ կառնե խեղճ մարդը, երկար շունչ մը և, հաստատելու համար այսքան դժվարագնի ձեռք բերած իր նոր իշխանությունը, կորոշե որ լյուսիեն իր սիրած Ֆուժրուոլին հետ ամուսնանա։

Եվ ասով կը վերջանա խաղը։

Օրիորդ Տարպելի Պենկալի դերին մեջ շատ հաջող է. տիկին Մոնկոտենի դերը վարող դերասանուհին ալ իր կեղծավոր ու հանդիսավոր ձևերուն մեջ ճարտարություն ցույց տվավ. նույնպես պ. Մոնկոտենի դերը կատարողը կնկանը լուծին տակ ընկճված ամուսնի վարմունքին մեջ խիստ ծիծաղաշարժ դտնըվեցավ։

Բազմություն չիկար. բայց բարեկենդանի հոգնությունը արգիլած ըլլալու էր շատերը ներկա գտնվելեն։

Այս թատերախմբին ներկայացումները Փերայի լավագույն ժամանցը կը կազմեն։

Մասիս, 9—8—1898

ՍՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երբոր մեր խմբագրատունեն ներս մտավ, սև վերարկուն պատին քսելով, քամակը ծռած, խոնարհ ու արգահատելի երևալու հայտնի ճիգով մը, համակրելի բան մը չի գտանք վրան։

Գիտեինք արդեն որ այս թափթփած զգեստներուն տակ պահվըտող անձը բավական հարստության մը տերն էր և, տոմինո մը վարձելու պես, առժամանակյա կերպով փոխ առած իր ողորմուկ ձևերուն հակառակ՝ այս մարդը ահարկու նշանակություն մը ուներ իր տեղը։

Ճարպիկ ու սպրդող մարդ էր, աչքի քթթումով մը, խոսվածքին մեջ դրած մասնավոր շեշտովը՝ շատ ավելի բաներ կը հասկցներ քան ինչ որ իրոք դուրս կելլեր իր բերնեն։

Սխալ մը միայն, այն ալ մեզի դիմելն էր, ողոքիչ ձայնով մը որ միտքերնիս է դեռ.

— Վայրկյան մը ձեզի հետ մասնավոր տեսնվիլ կը խընդրեմ...։

Կարծեր էր, որ մասնավոր տեսնվիլը մեր փոթփոթած երեսը պիտի ժպտեցներ և մեծ եղավ զարմանքը երբոր ճամփա

գրինք զինքը չոր ու ցամաք կերպով մը որուն նշանակությանը վրա չէր կրնար երկմտիլ։

— Զբաղած ենք, ներեցեք։

Մեյ մըն ալ չերևցավ. մեր խմբագրատունը՝ իր խոստմնավից ձևերուն ծլումին ու փթթումին նպաստավոր մթնոլորտ մը չուներ. այն օրեն զգաց ասիկա ու հեռացավ մենե ավելի պատշաճ միջավայր մը փնտրելով իրեն։

Կրոնական ժողովին առջև՝ միևնույն ես մեղավոռսի ձևերովը, հնդիկ ֆաքիրի մը պես կուրծքը ու կոնակը ծեծելով, իր հավատակորդներուն ոտքին տակ փռված զոհի մը հառաչանքներով, հաջողեցավ գթություն շարժել երբ պատուհասող Արդարության մը՝ համար ու հաշիվ տալու եկեր էր հոս։

Իր անխնամ ու մացառուտ մորուքին, իր կապույտ ու ատեն ատեն արցունքով փալփլոր աչքերուն նայեցան ու խղճացին. այս մարդը պատմվածին չափ չար մեկը չէր երևար. ցցված քիթը պահանջկոտ ու խիստ բնավորություն մը ցույց կուտար. անհանդարտ նայվածքը, որուն մեջ խորամանկությունը կը կարդացվեր, այո՛, քիչ մը շահամոլություն ալ կը մատներ։

Բայց ցարդ այս տեսակ ոամիկ ու հանապազօրյա մեղքերու համար ոչ ոք դատապարտված էր և այս պոնտոսցի քահանային սկսիլն ալ արդար չափի ըլլար։

Այս բոլոր խորհրդածությունները Կրոնական Ժողովը մըտքեն անցուցած ըլլալու է և կենթադրենք որ միջին ու հաշտարար բան մը ընելու դիտավորությամբ, որոշում տրվեցավ որ այս մարդը իր քաղաքը վերադառնա այն պայմանով սակայն որ այսուհետև քեմական գործերու չի միջամտե բնավ։

***

Հաշտարար որոշումներու ճակատագիրն է հակասական ըլլալ, և ոչ մեկ կողմին գոհացում տալ։

Հայտնի է որ արգիլել՝ եկեղեցականի մը ազգային գործերու խառնվելն, դատապարտել է զայն. վասնզի ի՞նչ տեսակ եկեղեցական մըն է այն որուն ազգին գործերը չեն վստահվիր։

Մյուս կողմե արտոնել զինքը որ իր քաղաքը վերադառնա, հոն ուր ամբողջ հասարակութիւն մը իր կեղեքումներեն կը գանգատեր, արդարացնել է զինքը և այդ գանգատները անհիմն հռչակել է։

Եվ բնական է որ մեկնութիւնները չի պակսին այս մարդը չքմեղացնելու աշխատողներուն և ակներև այս գայթակղութիւնը, իբրև չնչին բան մը, պարտկողներուն դեմ։

Հանրային խղճմտանքը, որ ենթադրվածեն շատ ավելի խստապահանջ ու մանրազնին է, ծանրապես վիրավորված պիտի ելլե դուրս, այս անակնկալ բարեսրտութեան տեսարանեն։

Այսքան հռչակված չարաշահութեան մը հանդեպ՝ կրոնական իշխանութիւնը իր խստութիւնը կորսնցնելով՝ տարօրինակ կերպով կարդյունավորե ահա այս մարդուն ողոքիչ ու սպրդուն ձևերը։

Օրտուի քահանային իբր անբիծ տատրակ մը այս դատաստանեն դուրս ելլելովը հոս ոչ ոք կը խաբվի, և այս արծաթափայլ սպիտակութիւնը զմեզ չի զարմացներ։

Բայց կը խորհինք մեր Օրտուի հեք ազգայիններուն վիճակին և առհասարակ՝ բոլոր գավառացի ազգակիցներուս՝ որոնց հրբեմն միևնույն բախտը վիճակած է։

Ահավասիկ եկեղեցական պաշտոնյա մը որուն մասին հայտնված գանգատները այնքան հաճախած էին և ամբաստանութիւնները այնքան միահամուռ և ծանրակշիռ հանգամանք մը առած, որ Տրապիզոնի Առաջն. Փոխանորդը անձամբ Օրտու երթալով, իր կատարած քննութեանց երևան բերած արդյունքին վրա, այս քահանան մայրաքաղաքս կանչել և դատաստանի ենթարկել տալու հարկը կը տեսնե։

Ի՞նչ կը պատահի ասկե վերջը, ոչ ոք գիտե. իրո՞ք կը տեսնըվի կանոնավոր դատաստան մը և ի՞նչ է պատճառը եթե չի տեսնվիր. ինչո՞ւ այս մշուշը որ այս կարգի խնդիրներուն վրա կը տարածվի միշտ։ Կարելի չէ՞ արդյոք որ ս. Պատրիարք Հայրը, որուն բարձր արդարասիրութիւնը ամենուս ծանոթ է, իր ձայնը ուժով մը լսելի ընել տար Կրոնական Ժողովին մեջ։

***

Փարիզի Վերաքննիչ Ատյանը հռչակավոր նշանաբան մը ունի որ հետևյալն է.

«Ատյանը արդարություն կը բաշխե, շնորհ չի բաշխեր»

Կերևա թե Կրոնական ժողովը այս նշանաբանը սրբագրած էր։

Մասիս, *12—3—1898*

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԱԺԱՆՑԱԾ

Բարոյական աշխարհն ալ՝ սեղանավորական աշխարհին պես, իր բաժնեթուղթերը ունի, ասոնք ալ՝ իրենց գիներուն ելևէջները։

Ատեն կըլլա որ մարդ տասը հազար ոսկի տալով բարեբարի բաժնեթուղթ մը չի կրնար գնել. Ամերիկայի և Եվրոպայի մեջ մանավանդ միլիոններ պետք են. կը պատահի երբեմն որ միլիոններն ալ չբավեն. տվողին բարոյական նկարագիրը, տըրված դրամին ուսկից գոյացած ըլլալը հարցնեն, փնտրեն, և նրթե աղբյուրը հստակ ու վճիտ չգտնեն, այդ միլիոններն ալ մերժվին։

Մեր բարեբարութեյան բաժնեթուղթերը այդքան բարձր գին երբած չեն երբեք, բայց չենք հիշեր որ 4—5000 ոսկիեն ալ վար իննած ըլլան։

Այս օրերս տեսնելով անշուշտ որ ատանկ հազարներով ոսկիի փոխարեն այդ բաժնեթուղթերը գնող չի կրնար գտնել, Հիվանդանոցի վարչական Հանձնաժողովը որոշած է զեղչ մը ընել, ազգային վարչութեյան քով դիզված և քիչ քիչ մգլոտիլ սկսած բարեբարութեյան բաժնեթուղթի սթոքը քշելու համար։ Մեր երկուշաբթիի թիվին մեջ կարդացիք հարկավ Հիվանդանոցի մեջ գթութեյան անկողիններ հաստատելու ծրագիրը։

Ա՛լ այսուհետև բարերար չըլլալը չարժեր, քանըզորս ոսկիով, դուք, ես, ամենքս ալ բարերար պիտի ըլլանք. այս գումարը մեկ տարի մը տալը կը բավե որպեսզի մեր պատկերը ունենանք—յուղանե՞րկ թե մատիտով, այս մանրամասնությունը, որ սակայն իր կարևորությունը ունի, դեռ չէ լուծված—Հիվանդանոցին մեջ. ժամանակին Պատրիարքը մեր հոգվոյն պատարագ պիտի մատուցանե և անունները պիտի հիշատակե՝ եթե ամեն տարի տանք 24 ոսկի, պատկերները հիվանդներու անկողիններուն վրա պիտի կախվի, թերևս պահապան հրեշտակի մը փոխարեբական իմաստովը, եթե հաջորդ տարին չվճարենք, պատկերը անկողնին վրայեն պիտի վերցվի հատուկ սրահի մը մեջ դրվելու համար, այս սրահը կերևի թե բարեբարության սնանկացյալներու հատուկ սրահը պիտի ըլլա։

Բայց ավելին կա. սովորական բաժնեթուղթերը չեն կրնար կիսվիլ, օրինակի համար՝ չեք կրնար կես երկաթուղիի բաժնեթուղթ մը գնել, վարչական Հանձնաժողովը, որուն գործնական ոգին չենք կրնար չգնահատել, այս դժվարությունն ալ բարձած է։ Երկու հոգի 12ական ոսկի տալով պիտի կրնան բարերարի ամբողջ մը ձևացնել. և այս ամեն մեկ կես-բարերարը ամբողջ բարերարե մը տարբերություն չպիտի ունենա. կեսը՝ ամբողջին հավասար. ահավասիկ քվաբանության խնդիր մը որ Յուսուֆյան Հովսեփ էֆենտիի[1] մաթեմաթիքական ձեռնհասությանը կը պատկանի և որուն լուծումը գալ շաբաթվան իր գիտական քրոնիկներեն կակնկալենք։

Ու կես-բարերարներեն ետքը, քառորդ բարերարներ կուգան, 12նոցներեն ետքը 6նոցները. ասոնք անկողին չպիտի կրնան հաստատել, բայց լավագույն բան մը պիտի ընեն, սեղան մը պիտի տան տարին անգամ մը իրենց անունովը. իսկ հոգվույն պատարագը ու հիշատակը այս քառորդ բարերարներուն համար ալ պիտի ըլլա։

***

Վարչական Հանձնաժողովին ծրագիրը, ինչպես կերևի, շատ հրապուրիչ է. ասանկ անսովոր աժանություն մը՝ ամենեն մեծ

տնտեսական տագնապներուն մէջ անգամ տեսնված չէր. ատեն կորսնցնելու չի գար ուրեմն, որովհետև վայրկեանե վայրկեան գիները կրնան բարձրանալ։ Վարչութիւնը, որ ստիպողական հարկերու տեղի տված է ընդունելով այս ծրագիրը, կրնա վերադառնալ իր որոշումեն. կրնա ըլլալ որ Հիվանդանոցի մեծ բարերարներուն քով, որպես եղած են Գազազ Ամիրան [2], Տատյանները [3], և ուրիշ սակավաթիվ ազգայիններ, թուլլ չի տա որ 24նոցները գան։

Եվ այն ատեն, երբ գիները մեկեն ի մեկ բարձրանան, հիմակուց քաոորդ, կես կամ ամբողջ բարերարի անուն ձեռք անցընողները կրնան անակնկալ շահերով, մեկին տասը վաստկելով ձեռքե հանել և ուրիշի փոխանցել իրենց իրավունքները։

Երևակայեցեք որ ես վաղը առտու կը փութամ Հիվանդանոցի գրասենյակը երթալ և, տարեկան 12 ոսկիի վճարումով մը, կը տիրանամ—և իբրև փաստաբան՝ վավերական հյոճեք մըն ալ կը պահանջեմ ու կառնեմ—իմ պատկերս անկողնի մը վրա կախել տալու իրավունքին, ինչպես նաև ասոր հարակից մյուս բոլոր իրավունքներուն, և կսպասեմ։

Եթե այս Վարչութիւնը իր որոշումեն չդառնա, տարակուսս չունիմ որ գալիքը գոնե առնվազն պիտի հնգապատկե այս գիները և այն ատեն հաշիվ ըրեք իմ շահս. մեկ տարվան մեջ տվածիս հինգ անգամը պիտի առնեմ, եթե երբեք ուզեմ իմ անմահ բարերարի տիտղոսս, դրամական անձկութեան հաճախադեպ վայրկեանի մը մեջ, ստակի վերածել։

Ասոր համար ուրիշ բանի մը պետք չունիմ, բայց եթե մեկը գտնել, և, այն օրվան գինին վրա պզտիկ տարբերութեամբ, ծախել իմ իրավունքներս նոր կես-բարերարի մը, որ միշտ ամբողջի մը հավասար է։

Կը տեսնե՞ք, որքան շահավետ գործողութեան մը հեռապատկերը կա առջևնիս։

***

Լրջութեամբ խորհինք այս ամենուն վրա. ունայնամտութեյունը էապես ու գերազանցապես մարդկային տկարութեյուն

մըն է որ պզտիկ կամ մեծ չափով միշտ կրնա շահագործվիլ. չեմ մերժեր ասկից օգտվելու սկզբունքը, վասնզի շատ աղքատ հասարակութիւն մըն ենք, և Հիվանդանոցի մը 8—10000 ոսկին վճարել չկրցող ազգ մը խստապահանջ չի կրնար ըլլալ մուրացկանութեան եղանակներուն վրայ։

Բայց... խորհինք նաև թե ի՞նչ կըլլա հետևանքը երբոր վարժեցնենք մեր հասարակութիւնը այսքան դյուրագնի պատիվներու, 12 ոսկիով Հիվանդանոցին մեջ պատկեր ունենալու իրավունք ու անունի հիշատակութիւն տալերնես ետքը, քանի մը հազար ոսկի շնորհողին ի՞նչ պիտի ընենք. բոլորովին հույսներս կտրա՞ծ ենք ասանկ բարերարի մը երևումեն։

Եվ ի՞նչ ծիծաղելի բան է այն կարգ մը պատկերներու շարքը՝ անկողիններու գլուխը. զավեշտային մյուսեոն մը՝ ցավի ու տառապանքի հաստատութեան մը մեջ։

Ի՞նչ պիտի զգան նաև այն մեծ մարդոց ոգիները որոնք Հիվանդանոցին բարերարներն են. իրենց պատկերները, որ կան հոն կախված, չպիտի՞ սարսռան արդար զայրույթով մը, երբոր այս նոր բարերարներու կոտորակները իրենց քովը գան զետեղվիլ ու խրոխտալ։

Կը հասկնամ Հիվանդանոցի խնամակալութեան տառապանքը երբոր հասույթի աղբյուր ճարելու համար գլուխը ամեն քարի կը զարնե. բոլոր սրտովս կը հասկնամ իր դժնդակ կացութիւնը... բայց խնամակալութիւնը վստա՞հ է գոնե որ այս անսովոր աժանութեան գյուտովը՝ իր հեք պատսպարյալներուն փորր պիտի կրնա կուշտ պահել։

Թե որ նորեն անոթութեան, խեղճութեան ձայները պիտի լսվին, չարժեր որ, արդեն տարօրինակ կերպով ստորնացած մեր հանրային բարքերը ալ ավելի ստորնացնենք։

Ատենով իրարու անուշ անմահութիւն կր մաղթեին ուրախութեան վայրկյաններու մեջ գինիի գավաթները իրարու բախելով. այսուհետև աժան անմահութիւն պիտի առաջարկեն։

Մասիս, 16—3—1898

ԼՈՒՐ ՉԻ ԿԱ

Չեմ գիտեր թե ընթերցողներուս մեջ հրապարակագրութեան փափագ ունեցող կա՞. օրագիրներու մեջ երևալու փառասիրութեամբ տագնապող մը կը գտնվի՞։ Պիտի հրավիրեի զինքը որ գար օր մը Մասխի խմբագրատունը և ներկա ըլլար օրագրի մը երկունքին. ապահով եմ որ այդ փափագեն հավիտյան պիտի հրաժարեր։

Մտածեցեք անգամ մը ի՞նչ է դիրքը այն սպասավորին՝ որ տեղ մը ղրկված է կարևոր, ամենակարևոր լուր մը բերելու համար և որ ամեն օր ձեռնունայն կը դառնա միշտ։ Իր տերը ամենեն անհամբեր, ամենեն նեղսիրտ մարդն է զոր կարելի է երևակայել աշխարհիս վրա. հասարակություն է ան. դժգոհ ու լալկան երախան է։

Ամեն օր երբ լրագիր մը կը հրատարակվի, խոստում մը ունի իր մեջ՝ լուր մը, աղեկ կամ գեշ լուր մը բերելու իրեն հետ. և խմբագիրը որ գիտակցությունը ունի ասոր, ի՞նչ տառապանքի մեջ է երբոր գիտե թե այդ օրն ալ բան մը չունի հաղորդելիք իր տիրոջը. պարապ, դարձյալ պարապ կը ներկայանա հանրության։ Ավելի ճարտար ու հնարամիտ խմբագիր մը սյունակներ կը լեցնե լուրերու հավաքածոներով. և ըն-

թերցողը շահեկան լուրեր կարդալու տարտամ տպավորությունը կունենա պահ մը։

Իրոք շահեկան չէ միթե իմանալ, որ ս. պատրիարք Հայրը այդ օրը Պատրիարքարան իջած է. տ. Գնել Վարդապետը—չեմ ճանչնար այս եկեղեցականը, բայց անունը ամեն օր լրագրի մեջ կը կարդամ—ս. Պատրիարքին ներկայացեր է. տ. Սմբատ Վարդապետը—այս ալ չեմ ճանչնար—Արմաշեն հոս է եկեր. հոսկե ելեր Շապին Գարահիսար գացեր է. անկից ալ չեմ գիտեր ուր պիտի երթա։ Անտեսական խորհուրդը[1]—ասիկա կը ճանչնամ և աշխարհ արարատ ալ կը ճանչնա—նիստ գումարեր է, բայց որովհետև իր մեծաշուք պաշտոնակիցներեն մին, որ բոլոր պաշտոնավարության շրջանին մեջ մեկ անգամ միայն ժողովին ներկա գտնվելու բարեհաճեր է, իր մահկանացուն կնքած է այդ օրը, նիստը վերցվեր է ի նշան սուգի, ճիշտ ինչպես Ֆրանսայի Սերակույտին կամ Երեսփ. ժողովին մեջ կըլլա՝ երբոր մեռնողը Փիեռ մըն է, Կամպեթթա մըն է։ Ես մեր բթամտության ստույգ և վավերական ապացույցները կը գտնեմ անոնց մեջ և կը մխիթարվիմ։

***

Այո՛, պարապ են օրագիրները զոր կը կարդանք, և, սևցած ու հոծ սյունակներուն հակառակ, ճեփճերմակ են անոնց էջերը, վասնզի ոչինչ ունին հաղորդած լուրջ կամ օգտակար բանի մը վրա։

Ժողովները Ժողովներու կը հաջորդեն և դժբախտաբար իրարու կը նմանին. թատերաբեմին վրա երբեմն մարդիկ վազելու պես ոտքերնին կը շարժեն և տեղերնուն չեն երթար, վասնզի հոն կենալու են արդեն. մեր Ժողովները անոնց կը նմանին։

Մեր լրաբերը, ամեն օր Պատրիարքարանեն բերելով մեզի կարգ մը անմիտ եղելությանց փունջ մը, կապշի զմեզ չգոհացնելուն. ի՞նչ կուզեք սակայն որ ընեն հեթ մարդը. եղածը, պատահածը գրելու պաշտոն ունի և չի կրնար ուզածը հնարել։ Եվ կուիվը, դժգոհությունը կը շարունակվի լրաբերին դեմ. ա-

մենքս կը պոռանք երեսն ի վեր թե իր ապիկարութենեն է որ այս կարգի անիմաստ հավաքածոներ միայն ձեռք կանցընե, և Պատրիարքարանը, հարկավ, օգտակար բաներ մը կընե իր պատկառելի լռության մեջ։

Կը մտածենք որ միակ կենսական խնդրին վրա, որ է ազգին դաստիարակության և կրթական ապագային խնդիրը, ոչինչ կա մտածված. դպրոցները բարեկարգելու ոևէ ջանք, ուսուցիչներ հասցնելու ոևէ աշխատություն, դասագիրքեր պատրաստելու ոևէ կանխահոգ միջոց, ազգին գրականությունը ծաղկեցնելու ոևէ քաջալերություն, այլ անընդհատ գնաց եկավի, ըսավ չըսավի զրույցներ, և չենք հավատար որ իրոք Պատրիարքարանի բոլոր գործունեությունը այս ըլլա. չենք հավատար և լրաբերները կը քամահրենք։

***

Լավագույն ու ավելի սփոփիչ է ենթադրելը որ լրաբերներն ու օրագիրները անգետ են ազգային վարչության աշխատությանցը. սպասելու անձուկը տառապանք մըն է, հույս մըն է նաև. որքան ալ երկար տևե սպասումը, հոգ չէ. բոլոր կյանքը սպասում մը չէ՞ միթե. պիտի սպասենք ստոյիկ հանդարտությամբ մը որ ազգային կրթության խնդիրը ձեռք առնվի օր մը, պիտի սպասենք որ ազգային իշխանությունը զգա թե ինքը կրթական իշխանությունն է և ասոր մեջ է որ իր ձեռնհասության ապացույցները կը պահանջվին։

Որովհետև Ուսումնական Խորհուրդ մը կավմված է արդեն, Պատրիարքարանը չի կրնար անփույթ և անտարբեր ըլլալ ազգին դաստիարակության հարցնրուն. ընդհակառակը, բուն Ուսումն. Խորհուրդը՝ Վարչությունը ինքն է. բուն Ուսումնապետը՝ Պատրիարքը ինքն ըլլալու է՝ գոնե այսուհետև ազգային խնդիրներու առաջին կարգին վրա դնելու կրթական խնդիրը. վասնզի հոն է միայն ճշմարիտ օգուտը. և ով որ թերանա կամ հապաղի անոր մեջ, իր պատասխանատվության բաժինը պիտի ունենա։

Ըսինք որ Պատրիարքարանը անմիջապես Եվրոպա տղաք

դրկելու է, ուսուցիչներ պատրաստելու համար. առաջին, էական ու ստիպողական բանն է այս. և ասանկ չնչին բանի մը մեջ անկարողության ու անկարելիության խոսք մտիկ չի կըրնար ըլլվիլ. ասանկ խոսք մը չհամենալե զատ բան մը չպիտի նշանակե։

Տեսնենք դեռ որքա՛ն ատեն պիտի սպասենք. որչա՛փ ատեն պիտի կրկնենք թե «լուր չի կա». pas de nouvelles, bonnes nouvelles, կըսե ֆրանսական առածը. անանկ պիտի ըսենք մենք ալ։

Մասիս, *23—3—1898*

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԴԱՐԲՆՈՑԱՊԵՏԸ

Օրիորդ Մարկրիթ Տարպելիի խումբը կիրակի գիշեր ներկայացուց Ժորժ Օնեի թատերախաղը։

Այս ֆրանսացի հեղինակը, իր երկերուն ժողովրդյան մեջ գտած անհավատալի ընդունելության հակառակ, երկրորդական գրող մըն է և լրմեթռ իրավամբ ըսած էր այս հեղինակին համար որ իր հաջողությունը ավելի գրավաճառական քան թե գրականի հաջողություն մըն է։

Դարբնոցապետը իր գործերուն ամենեն համբավավորն է. վեպը հայերենի թարգմանված է և թատերախաղը տաճկերեն ներկայացված հայ դերասանական խումբին միջոցավ։

Նյութը հետևյալն է. Ֆիլիփ Տերպլե կամուսանա օրիորդ Քլեռ տը Պոլիեոյի հետ, որ հաճած էր իր կինը ըլլալ՝ միայն պզտիկ ինկած չըլլալու համար Տրպլինևի դուքսին դեմ, իր առջի նշանածը, որ Քլեռի օժիտին կորսվիլը լսելուն վրա, զինքը կը ձգե և ուրիշ հարուստի աղջկան մը՝ օրիորդ Մուլինեի հետ կը կարգվի։

Տիկին Տերպլե չի սիրեր իր էրիկը և ամուսնությանը առջի դիշերեն անոր երեսին բացե ի բաց կըսե ասիկա։

Գործարանատերը, որ իր կնիկը կը պաշտե, հանկարծա-

կիի կուգա այս հայտնութենեն, բայց իսկույն առնական կորովով իր սերը կը լռեցնէ և կը հայտնէ իր կնկանը որ չպիտի երթա այլևս իրեն քով, և թե ամեն հարաբերություն դադրած է իրենց մեջ. միայն գայթակղության մը տեղի չի տալու համար, միևնույն տանը մեջ պիտի շարունակեն ապրիլ, բայց զատ զատ, օտարականներու պես։

Դարբնոցապետը ազնիվ սիրտ մըն է և իր կինը չուշանար ճանչնալու անոր առավելութիւնները առջի նշանածին վրա որ, փարիզյան շվայտ կենցաղասեր, խոսքը դժուած էր հարուստ աղջկան մը ետևեն վազելու համար։

Քլեռ զղջացած է հիմա իր էրկան դեմ ցուցուցած ատելությանը համար, բայց անոր արհամարհանքին առջև տեղի տալ չուզեր, անոր ոտքը երթալու, աղաչելու չի զիջանիր, ունայն հպարտություն մը զինքը կարգիլե ամեն ատեն։ էրիկը սակայն միշտ քաղաքավար ու կամակատար կը գտնվի իրեն հանդեպ և ահա Քլեռին եղբայրը, որ Դարբնոցապետին քույրը կը սիրե, անոր հետ ամուսնանալու համար Քլեռեն կը խնդրե որ էրկանը հաճությունը ձեռք բերե։

Քլեռ առիթ մը կը համարի ասիկա իր էրկանը սիրտը կակղըցնելու. խոսքը կը բանա. բայց առջի բառեն Դարբնոցապետը կը մերժե. ո՛չ, ինքը դժբախտ եղած է որ Պոլիեռ ընտանիքեն աղջիկ մը առնելով, չուզեր որ քույրն ալ անոնցմե տղու մը հետ ամուսնանա և իր մերժումը ամեն աղաչանքի դեմ հաստատ և ամուր կը պահե։

Այս փորձը չի հաջողիր ուրեմն. բայց Քլեռի սերը իր ամուսնին հանդեպ ավելի ևս կարծարծի այս ընդդիմութենեն։ Միևնույն ատեն կը տեսնե որ Տըպլինեի դուքսին կինը որ իրենց հյուր եկած է, իր էրկանը ետևեն կը պտըտի, անոր գլուխը ելլելու կը նայի. նախանձը իր սիրտը կը կրծե, ինքզինքը չի կրնար զսպել և դքսուհին կը պահանջե որ իր տունեն հեռանա, դքսուհին կը դիմադրե և Քլեռ ամենուն առջև կը վռնտե զինքը։— Ատենով նշանածս առիր ձեռքես, հիմա ալ էրիկս առնելու կը ջանաս. ա՛լ շատ է քու ըրածդ, կորսվե՛ ասկից, կը պոռա անոր երեսն ի վեր։

Բայց դուքսը չի կրնար իր կնոջ եղած այս նախատինքը

ընդունիլ. Դարբնոցապետեն բացատրություն կուզե և կը պահանջե որ Քլեռի վարմունքին համար ցավ հայտնե կամ մենամարտով հատուցում մը տա իրեն. վայրկյանը հանդիսավոր է. Դարբնոցապետը իր կնոջ այս հախուռն վարմունքին համար մինչև մենամարտիլը հանձն պիտի առնե՞. այն կնոջ որ իր թշվառության բոլոր պատճառն է։

Քլեռ իր էրկանը տալիք պատասխանին կսպասե սրտատրոփ, անոր բերնեն կախված կը մնա.

— Տիկին Տերպլեի ձեր կնկան դեմ ըրածը ինչ որ ալ ըլլա, աղեկ ըրած է, կըսե Դարբնոցապետը։

Այս վայրկյանեն որքա՜ն երախտապարտ է, որքա՜ն ամոթահար է իր էրկանը առջև, որքա՜ն պատրաստ է անոր ոտքը նետվելու և ներում խնդրելու անկե. բայց այն հիմար հպարտությունը դեռ սրտին մեջն է և իր զղջման քայլերը կը կապե նորեն։

Հաջորդ օրը պիտի մենամարտին. գիշերը իր խղճին տագնապներովը կը տառապի. չի քնանար մինչև լույս, մինչև էրկանը սենյակին դուռը կերթա, բայց չի համարձակիր դուռը բանալ ու ետ կը դառնա։

Առտուն կը տեսնե որ իր էրիկը մենամարտելու կերթա. ա՛լ չի դիմանար, անոր քովը կը վազե, իր բոլոր ըրածին, դառնացուցած կյանքին համար ներում կը հայցե. այս մենամարտին պատճառ ըլլալուն համար ալ կը զղջա և էրիկը արգիլել կուզե, բայց Դարբնոցապետը տոկուն նկարագրի տեր մարդ է. իր անխելք կինը կը պաշտե միշտ, բայց սիրո բառ մը չըսեր կնոջը ու կը մեկնի. այն ատեն ուրիշ բան չի մնար ասոր բայց եթե վազել ու նետվիլ երկու ոսոխներուն մեջ, թերևս հոն մեռնելու համար։ Եվ այնպես կընե. մենամարտին տեղը կը հասնի և ատրճանակներուն գնդակները իրեն կը հանդիպին. վիրավորված կիյնա իր էրկանը թևերուն մեջ որ կը ներե իրեն ու կը խոստովանի թե միշտ պաշտած է զինքը։

Այս է թատերախաղը։

Օրիորդ Տարպելի Քլեռ Տերպլեի ջախջախիչ դերը կը կատարե. զավեշտի, կատակերգության մեջ հաջող այս դերասանուհին տաղանդը՝ իրոք զմայլելի է տռամին մեջ ալ. իր

անուշ ու տաք ձայնը, աննման ու անքննադատելի արտասանութիւնը, կանացի սիրտը ու հպարտութիւնը արտահայտելու կարողութիւնը առաջին կարգի արվեստագետ մը կը հանդիսացնեն զինքը։

Օրիորդ Տարպելի ինքզինքը գերազանցեց մանավանդ այն տեսարանին մէջ, կարծեմ երրորդ արարվածը, երբ իր եղբորը ամուսնութեան խնդրանքը ներկայացուց Դարբնոցապետին. հետո նախանձի կրծումովը՝ դքսուհիին ուղղած հանդիմանութեանցը և անկե ետքը, մենամարտեն առաջ, էրկանը հետ ունեցած տեսակցութեանը մէջ։

Մենամարտեն վիրավորված՝ էրկանը թևերուն մէջ, հայցելով անկե ներումը և սիրո բառը զոր մինչև այն վայրկեանին իրավամբ Դարբնոցապետը զլացեր էր իրեն, իր հատկտյալ աղերսանքովը՝ օրիորդ Տարպելի ամենքը լացուց։ Ասկե ավելի մեծ գովեստ չի կրնար իրեն ուղղվիլ։

Օրիորդ Տարպելի երիտասարդ ու դեղին կին մըն է. նուրբ գեղեցկութեամբ մը, խած աչքերով. կատարյալ արվեստագետ մը։

Պ. Քրիսթիան մեծ կարողութեամբ կատարեց Դարբնոցապետի դժվարին դերը։ Ամուսնութեան գիշերը իր կնոջ հետ ունեցած բացատրութեան ու կռիվի տեսարանին մէջ իր մեծագույն հաջողութիւնը ունեցավ։

Պ. Ֆելիքս՝ Մուլինեի դերին մէջ—Տըպլինեի դուքսին անեծքը—բոլոր սրահը զվարճացուց իր չտես հարուստի միամիտ պարծենկոտութեամբը։

Տիկ. Մուան, Քլեռի մոր դերին մէջ, պետք եղածեն քիչ մը ավելի հանդիսավոր մայր մըն է։

Պ. Տուլանժ, իբրև Տըպլինեի դուքս, փարիզյան շվայտ կենցաղասերի մը տպավորութիւնը չի ձգեր. իր հագուստը ու ձևերը շատ ավելի պարզ քաղաքացիի մը, վաճառականի մը գրագրի ձևերն են, քան թե վավերական դուքսի մը։

Անըմբռնելի նորութիւն մը՝ Ֆաֆե շանթանի երգչուհվո մը ներկայութիւնն էր այս ներկայացումին մէջ։

Օրիորդ Ժանն Տառաս երրորդ արարվածին մէջ, իբրև միջանկյալ մը, բեմին վրա երևցավ, երեք չորս սիրուն ու քիչ մը

մերկապարանոց երգեր երգելու համար, ապաքեն խիստ հաջողությամբ, այնքան հաջողությամբ ու այնքան զվարճալի ձևերով, դիմադարձությամբ որ բոլոր սրահը պահ մը Դարբնոցապետը բոլորովին մոռցավ։

Չենք գիտեր որի՞ն գլուխն է այս գաղափարը. թատերախաղին մեջ երկինքն ինկածի պես ինկող այս մանուկ ու չարաճճի աղջիկը տոամին լուրջ հանգամանքին հետ պատշաճ չպտանքս

Մոսիս, 29—3—1893

ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԸ

Պատմությունը կավանդե մեզ որ Լուսավորիչ քրիստոնեությունը հայոց մեջ տարածելու համար. ցույց տված եռանդին մեջ, հայ հեթանոսական ամեն հիշատակները բառնալու անձուկն բռնված, մեր մատենադարաններն ալ այրած ու ջընջած էր։

Ասով կը բացատրվեր հայ երկերու բացարձակ պակասը այնպիսի ժամանակ մը ուր սակայն մեր գրականությունը խիստ ծաղկած պետք էր ըլլալ, դատելով մինչև մեզի հասած իր չնչին բեկորներեն։

Այս ավանդությունը սակայն բոլորովին հաստատված չէ նթե հերքված ալ չէ. ի պատիվ այս հայրապետին, որով կը պարծի մեր եկեղեցին, պետք է ընդունիլ թե ասանկ խժդուժ արարք մը ու բարբարոս գործ մը վերագրելի չէ իրեն, վասնզի այս վարմունքը, նթե երբեք ապացուցվեր, այս անունը շրջապատող լույսի ճաճանչները իսպառ պիտի նսեմացներ։

Խավարիչ մը պիտի ըլլար այս հայրապետը պարզապես. ի՞նչ հեգնություն ուրեմն Լուսավորիչ կոչել մեկը որ համարձակեր է չնչել մեր ազգեն այն բանը որ ամենեն նվիրականն է, իր գրականությունը։

Իրավ է որ կրոնամոլությունը աշխարհիս ամեն կողմը շատ անգամ այս տեսակ նախճիրներով ինքզինքը ցույց տված է և բոլորովին նոր բան մը չպիտի ըլլար եթե մեր մեջ ալ քրիստոնեությունը այս տխուր մուտքը ունեցած ըլլար։

Բայց առանց հաստատ ապացույցներու ներելի չէր հայոց առաջին հայրապետին սուրբ հիշատակը ու անունը ասանկ ծանր ամբաստանության մը տակ ընկճել, և մենք բնականաբար վերջինր պիտի ըլլանք ասոր համոզվողներուն։

Միայն թե այն բանը որ անարդարանալի էր հին ատեններր կենսալիր մատենագրություն մը ջնջելուն համար, հիմա կարծեմ թե բոլորովին անտեղի չպիտի ըլլար. մեր գրականության մեջ, քանդելու ու բառնալու համար որքա՜ն գիրքեր կան և մեր լրագրութիւնն որքա՜ն հավաքածոներ. կը վախնամ որ եթե ասանկ փրկարար հրդեհ մը արծարծվի օդին մեջը, ազատարար ձեռք մը, մեր նախնի մատենագրության մնացորդներեն ոչ շատ ավելի քովով բեկորներու պիտի խնայե։

Խարույկին հիմնական կմախքը նախ սա «վավերացեալ յՈւսումնասիրական Խորհրդէ» պիտակը կրող դասագիրքերեն պիտի ձևանար, և ասոնց վրա պիտի տեղավորեինք սա մյուս վիժումներր, զարտուղած խելապատակներու արձակ կամ ոտանավոր ցնորանքներր որոնք փառք աստուծո վերջին մեկ երկու տարիներուն մեջ քիչ մը դադրած են։

Այս խարույկին բոցերովը քիչ մը պիտի մաքրվեր օդն ու ասպարեզը և իրոք լուսավորիչ մը պիտի ըլլար մեզի այն մարդը որ զայն պիտի բռնկցներ։

***

Անդին Կովկասի հայոց գրականությունը միշտ ավելի ևս կր կազդուրի, կը զարգանա, կուռճանա, մատենագրություն մր կա հոն, հաստատ ու տևական գործունեություն մը, երբ մեր մեջ՝ լավագույն գրվածները հաճախ լրագրի մը թռուցիկ էջին վրա հն, հոն՝ մարդերր, կյանքերը ու գործերր կուսումնասիրվին համբերող ու ճշտասեր պրպտումներով և այսպես լույս կր տեսնեն այն հատորները որոնցմով մատենադարան մր կարելի

է կազմել և որոնք դրական ամենեն լուրջ սեռերուն կը վերաբերին և հասարակութեան սերը կը տարածեն ու կը պահպանեն։

Մեր ճակատագիրն է միշտ սին ու փուճ զբաղումներով՝ օգտակարն ու շոշափելին աչքե հեռու պահել. սեթևեթներու և ծեքծեքումներու մեջ համենալ և քայլ մը չառնել դեպի առաջ, և զարմանալի չպիտի ըլլա եթե տարիներե ետքը առջի օրվան երախա ու գեվզեկ հասարակությունը մնանք մենք, մինչդեռ մեր շուրջը ամեն ոք խելահասության կը ձգտի։

Մասիս, 9—4—1898

ՍՈՐՍՈՐՈՒՄԸ

Ազգային կրթության վրա լուրերը տխուր կը հասնին գավառներեն։ Ճիզվիթներու դպրոցները կը ծաղկին և հայ տղաքներով կը զեղուն ամեն տեղ, իսկ մեր վարժարանները կամայանան, կը փակվին հետզհետե։

Վերջինը Սեբաստիայեն կուգա, երկու հազար հայ տղոց ճիզվիթներու դպրոցը հաճախելուն վիպային, առասպելային լուրը, որուն ստուգության վրա ոևէ կասկած չէ մնացած դրժբախտաբար։

Վանա մեջ ֆռեռներն են որ կը շարժին։

Ուրեմն ոչ միայն հեռավոր ու մոռցված անկյուններուն մեջ, այլ Սեբաստիո, Վանա պես կարևոր և հոծ կենտրոններու մեջ կաթոլիկությունը կը զարգանա։ Օտար վարժարանը, որ օտար ակնդեցվո գավիթն է, հայ տղաքներով պարպատուն է, Սեբաստիո մեջ՝ հալելվածական շինության կը ձևնարկե, հայ վարժարաններու մեջ մոլորած վերջին մնկ երկու հարյուր տղոց մնացորդն ալ հյուրընկալելու համար։

Այս դժբախտ վիճակը ճշմարիտ աղետքի մը համեմատությունը առած է անխոս ու մունջ հառաչխաղացությամբ մը, զոր կարծես մինք ալ, լռության պահելով, քաջալերելու երևույթը ունինք։

Պատճառները միևնույն են. հոս ալ ինչպես ամենուրեք, անարժան ուսուցչություն մը, տգետ, անկարող, օրվան աղային առջև քամակը ծռելու ստորնությամբը իր ոչնչությունը պարտկող, թաղականներ, հոդաբարձուներ, որոնք իրենց անհատական հաշիվներուն, վեճերուն, կիրքերուն կը զոհեն ոչ միայն եկեղեցվույն, դպրոցին նվիրական շահերը, այլ իրենց զավակներուն ապագան. վաղը, մյուս օր, այդ օտարոտի վարժարաններեն դուրս եկող պատանիները հին լաթերու պես պիտի մերկանան իրենց հայու անունեն սկսելով մինչև իրենց լեզուն, և պիտի ուրանան զիրենք սնուցանող երկրեն սկսելով մինչև զիրենք ծնող հայրն ու մայրը։

Այս ողբալի կացությունը, ուրկե դարանակալ օտարություն մը կը քաջալերվի, կը շարունակե և կը տարածվի ամեն կողմ, բորին պես որ իր դանդաղ ու աննահանջելի վարակումով ամբողջ մարմինը կապականե ու կը փճացնե։

Այս օտար կրթության հետևանքը՝ իր երկրին, իր ընտանիքին անօգուտ ու անտարբեր սերունդ մը հասցնել պիտի ըլլա։

Պակասությունը մերն է միայն եթե ազգային դաստիարակության կենսական հարցը միշտ բարձիթողի եղած է և կամ, էրբև թե ամենօրյա հոգածության առարկա ըլլալու եղանակով, ամուլ ջանքերու ու կատարած գործունեության մը մեջ կը բախտառի։

Երբ մայրաքաղաքիս մեջ մեր վարժարանները իրենց ափսոսալի վիճակեն փրկելու ամեն առաջարկություն ուշադրության չարժանանար, երբ Փերայի մեջ այսքան հայ աշակերտներ հռոմեական և ուրիշ օտար վարժարանները կը լեցնեն, երբ արժանավոր ուսուցչություն մը կազմելու միակ բանավոր միջոցը կանտեսվի, զարմանալի չէ, որ օտար վարժարանները իրենց մարդորսության մեջ հաջողին։ Անոր հակառակը միայն զարմանալի պիտի ըլլար։

Մեր նախնական վարժարաններուն անկարգության մեկուրիշ տխուր արդյունքն ալ սա է որ՝ կայսերական բարձրագույն վարժարաններեն օգտվելու ընդունակ պատանիներ հասցընելն ալ կը դժվարանա, և տերության ու ազգին օգտակար

բարձրագույն կրթություն մը ստացող անհատներու թիվն ալ հետզհետե կը նվազի։

Այսպես, անգիտակից աջակիցներն ենք մեր ազգային եկեղեցիեն օտարանալու շարժումին, որ հիմա ամեն կողմ կը ճշտվի անպատկառ գիծերով և ծածկվելու, պատրվակելու նեղությունը հանձն չառներ այսուհետև։ Ճակատաբաց կելլե դեմերնիս ամենուրեք, հրավեր կարդալով մեր ողորմուկ վարժարաններուն, մեր ապիկար ուսուցիչներուն և անհոգ հոգաբարձուներուն։

Վանա մեջ՝ օտարությունը ուրիշ հրապույրներով ու խոստումներով կը գործե ինչպես հրատարակեցինք երեկ մեր ազգային լուրերուն մեջ։

Այն տեղվանեն անգամ, ուրկե ձայն ու ձուն չի գար, պետք չէ կարծել որ իր տխուր գործունեությունը ձեռնթափ է։

Եվ այս ամենը ուրիշ բան չէ բայց եթե անհատական վեճերե և ուրիշ ձեռնտու ճեղքվածքներե կաթիլ կաթիլ թափթփումի, նախ աննշմարելի, անձայն սորսորումը, որ տեղ տեղ, լայն բացվածքներե գիրացած հորդահոս կերթա օտարության ծոցը թափվելու։

Մասիս, *16—4—1898*

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Մեր ընթերցողները չկարծեն թե քերականության վրա է խնդիրը. պարզ խոսակցության մը սովորական կանոններեն անդին քերականություն չունիմ ես։ Բայց քերականության կանոններ կան որոնք հրապարակագրական բարոյականի ալ կանոններ են, և կարժե որ ատոնք մեր ընթերցողներուն ներկայացնենք։ Անոնք որ Մասիսը հրատարակողները կը ճանչնան, գիտեն հարկավ որ ազգին եղած ոչ թե պզտիկ այլ մեծ նվիրատվություններու համար սովորություն չունինք ներբողներ հորինելու ոչ ոքի, և ի մասնավորի անոնց որ այդ ներբողը մտիկ ընելու համար դրամ կուտան։

Գլխավորապես հակառակող ենք ամեն ցույցի որ դրամատերներե քանի մը ոսկի առնելու համար զանոնք անճահ շողոքորթություններով մեծարելու մեջ կը կայանա։

Իզուր պիտի առարկեն որ ազգը և եկեղեցին՝ մարդոց ունայնասիրութենեն պետք է օգտվին, անոնցմե քիչ՝ շատ դրամ կորզելով և շռայլելով անոնց այն գովասանքները որոնցմով պետք է մորակել իրենց կարկամած ողորմասիրությունը։

«Նպատակը միջոցը կարդարացնե»ն մեր սկզբունքը եղած չէ երբեք. անտեղի միջոցով մը ազգին կամ եկեղեցիին շահը փնտրելու ատորնացումը չենք ընդունիր։

Ասոր համար է որ անցյալները կատակի ձևով քննադատեցինք տարօրինակ ծրագիրը Հիվանդանոցի խնամակալության, որուն մեջ գթության մահիճներ հաստատելու գաղափարը կարգ մը ծիծաղելի պայմաններու լծորդված էր։

Ամեն անգամ որ մեր կարծիքները կուտանք հանրության օգտին համար միայն և բարոյականի անվիճելի սկզբունքներու հենած, այն ամեն խնդիրներուն վրա որոնք ուշադրություն կը հրավիրեն, զանոնք ընդունված տեսնելու միամտությունը չունինք. ձայն բարբառո հանապատին ավելի քան երբեք այժմեության մըն է։

Հնարամիտներ կարծեցին հակասություն մը նշմարել, մեր Ծաղկազարդի թիվին առթիվ Հիվանդանոցին եղած նվիրատվությանց ցանկերը հրատարակելնուս և մեր վերը հիշած սկզբունքին մեջ. ըսին մեզի որ հատուկ անուններ կը հրատարակենք ահա մենք ալ։

Հա՞րկ է միթե հրապարակել թե որքան թշնամի ենք մենք հարուստ մեկու մը կողմե ազգին եղած—սովորաբար չընչին—նվիրատվությունները՝ ծանուցումներով, հոդվածներով, ազգային քրոնիկներով, համաքաղաքացիութենեն ուռած պարծանքներով հռչակելու, նույնքան կուսակից ենք մեր գավառացի համեստ ժողովուրդին էն պզտիկ նվերը՝ բարձրաձայն հայտարարելու. և ասիկա սա պարզ ու հասկնալի պատճառին համար որ պոլսեցի դրամատերի մեկ կամ երկու տարի 6 կամ 12 կամ 24 ոսկի տալը նշանակության արժանի չէ պանդուխտ խոհարարի մը քսան ղրշ. տալուն մեծությանը քով, ինչպես մայրաքաղաքիս մեջ հավաքված հինգ հազար ղրուշը աննշան բան է Տետե Աղաճեն ղրկված և հարյուրական փարաներով ձեվացած 75 ղրուշին մոտ։

Այս տեսակ նվիրատվությունները արժանի էին նշանակվելու ճիշտ անոր համար որ մինչև ցարդ այս կարդի համեստությունները՝ հատուկ անուններու խնկարկու հրատարակություններու կողմեն սքողված էին և դեռ սքողված ալ կը մնան։

Նվ եթե անոնց քով հրատարակեցինք անուններ ալ, որոնց համար հարյուր և երկու հարյուր ղրշ. տալը՝ զոհողություն մը չէր ենթադրի բնավ, պատճառը այն է որ խոսք տված ըլլալով

առհասարակ հրատարակել 10 և 20 դրշ. տվող անձերու անունները, ամենքն ալ անխտիր հրատարակելու պարտքը ունենինք։

Մեր Ծաղկազարդի թիվին առթիվ ավելի հասարակ անուններ հրատարակեցինք ուրեմն քան թե հատուկ անուններ, թողլով այս վերջիններուն գովասանք տալը անոնց որոնք այդ ծալքը շատոնց առած են այնքան՝ որ ճիշտ ինքզինքնին հակառակորդ համարած պահերուն սյունակներ կը լեցնեն ատոնցմով։

Նախ, որ իրենց ազգականներուն հիշատակին հավերժացումը Հիվանդանոցին մեջ՝ լիուլի վճարում մըն էր—եթե ոչ ավելի—տրված ողորմուկ ստակին դեմ։

Երկրորդը, 6 կամ 12 կամ 24 ոսկիով՝ մեռած ազգականիր ալ անունը անմահացնելու եղանակը միտքս կը ձգե հին ժամանակի, 20 տարի առաջվան մատենագիրները, որոնք գրքի մը տպագրության ծախքը հոգալու համար այս կամ այն մարդուն կամ անոր մեռած հոր կամ եղբորորդվույն կը ձոնեին իրենց երկը սա տեսակ վերտառությամբ մրոտելով իրենց առաջին էջը.

Ի հիշատակ
Մահտեսի Նիկողոս աղա Լոմակյոզյանի
Թալասցի աւագադպրոց
Հայր Ագն. Հակոբ էֆ. Լոմակյոզյանի
Մեկենաս առատաձեռն
և բարեբար ազգիս.

Խնամակալությունն ալ իր անկողինները կը ձոնե ահա, աժան աժան, գրեթե պետհավա, ուզված ազգականին, որուն պատկերին առջև ապագային գալիք խնամակալություն մըն ալ, հառաջդիմության ոգիեն մղված, հավանական է որ կանթեղ մը վառելու ելլե օր մը։

Մասիս, 21—4—1898

ՈՋ-ԿԱԹՈՒՂԻԿԵ

Ֆրանսացիները Հայր Լորիգոն ունին։

Այս տարօրինակ մարդը, եռանդուն կրոնավոր մը, հեղինակն է հանդուգն կերպով խեղաթյուրված ֆրանսական պատմության դասագրքի մը։ Բավական ատեն այս հերյուրված դասագրքին վրայեն կավանդվեր պատմության դասը կղերական վարժարաններու մեջ։ Մեր մեջ Հայր Լորիգոնները շատվոր են, ամբողջ միաբանություն մը կը ձևացնեն և Ադրիականի մեկ կղզյակին մեջ հաստատված՝ մեր եկեղեցական պատմությունը անդրալեռնական տոգորումներով սրբագրելու կաշխատին։

Առաջուց ի վեր չէի անգիտեր որ Մխիթարյան միաբանությունը իր բանասիրական հետազոտությանց քով կամ անոնցմե առաջ փոփականտայի մունջ դիտումներ ունի և լուռ իղձեր կը տածե։

Միայն գիտության սիրով վառված վանականներ չեն ասոնք, այլ ճարպիկ ոե հաշվագետ մարդիկ որոնք պապականության տարածելու համար ազգային գրականության մեջ իրենց ստացած հեղինակությունը կը շահագործեն, և քիչ շատ հայ եկեղեցականի փակեղին նմանող իրենց գլխու ծածկույթին տակ փաթերայի գլխարկներ կը կրեն։

Գիտեի, բայց մոռցեր էի այս ամենը, երբ որ Բազմավեպի վերջին թիվին մեջ հետաքրքիր նամակագիր մը, որ այդ միաբանության անդամներեն դուրս մեկը ըլլալու չէ, պատարագեն վերջը մեր եկեղեցիներուն մեջ մաս բաժնելու սովորությանը վրա խոսելով, «Մեր եկեղեցին՝ ոչ-կաթուղիկե եկեղեցի, և հայ պապական եկեղեցին ոչ-ազգային եկեղեցի անվանելե չի քաշվիր։

Ուրեմն միևնույն մարդիկն են ասոնք, նույն մարդիկը որոնք ատեն մը հերձվածող ու հերետիկոս կը կոչեին զմեզ և մեր եկեղեցին ոտք կոխելու կը վախնային՝ դժոխք չերթալու համար. մարդիկ՝ որ լուսավորչին պապական հայ մը ըլլալու առասպելին պատմական ճշմարտության գույն մը տալու համար ջանք չէին խնայած, և որոնք բան գործ ըրած են տարածել ամեն տեղ՝ թե հայ Եկեղեցին պապական եկեղեցի մըն էր ատենով և անկե անջատվողները մենք ենք, լուսավորչականներս, զատ ու տարբեր եկեղեցի մը կազմելով, մինչդեռ իրենք ազգային եկեղեցին անեղծ պահած են միշտ, ու Թարթյուֆին պես չեն քաշվիր հրապարակավ մեզի ըսելե.

C'est à vous d'en sortir, vous qui parlez en maître.

Հարկավ ողբալի բան մըն է որ անդրալեռնականությունը մեր ամենեն նվիրական էության վրա ալ հարձակի, մեր եկեղեցվույն տիրանալու ճիգեր ընե, և ամբողջ միաբանություն մը իր դարևոր աշխատությունը այս ամուլ ու ծիծաղելի ճիգերուն հատկացնե։

Հռոմեականությունը մեր մեջ առջի անգամ մուտ գտնելուն պատմությունը ժամանակակից բան մըն է, և շատ ետ դառնալու պետք չունինք այս առթիվ եղած բոլոր շփոթությունները մտքի առջև բերելու համար։ Շատ կանուխ է դեռ այս նորեկներուն համար մեր ազգային Եկեղեցին իրենց սեփականացնելը և Հայր Լորիգյոյի պատմություններով չէ որ մեր եկեղեցիին վաղեմի ինքնագլուխ գոյությունը պիտի ուրացվի։

Բայց որքան ալ անզոր են այս ջանքերը ու արգահատելի նայված մը հրավիրելե ավելի բանի մը անարժան, հարկավ կը մնան մեր սիրտերուն մեջ մեր Եկեղեցվո համար ոչ-կաթուղիկե եկեղեցի ըսելուս պես խոսքերու վիրավորանքը։ Իզուր պի-

տի առարկեն որ կրոնական դավանանքնին կարգելե Վենետիկի վարդապետները կաթուղիկե ճանչնալ մեր եկեղեցին. ուղղափառը՝ իրենք են և իրենք պիտի մնան ու մենք՝ հերձվածող ու հերետիկոս։ Թող այդպես ըլլա. քսաներորդ դարուն լուսավորությունը չենք կրնար անարգել այն աստիճան որ կրոնական վեճի մը բռնվինք ասոր կամ անոր հետ։ Հավատաքննությունը էապես պապական եկեղեցիին հատուկ առաքինություն մըն է և պետք է որ իրը մնա։

Եվ եթե մեր եկեղեցվույն համար Բազմավեպի գործածած լեզուն մատնանիշ ըրինք մեր ընթերցողներուն, միայն հիշեցնելու համար է անոնց թե Վենետիկի միաբանությունը այն հետամնաց ու կաշկանդյալ միտքերու օրրանն է, որոնց նմաններուն համար իրավամբ ըսած են.

Ils n'ont rien appris, rien oublié.

Արեւիլ, *16—8—1898*

ՊԱՐԸ

Տղայութեանս օրերուն էր, կը հիշեմ։ Ինքզինքը երգելուս զվարճանալու տված մեր հասարակութիւնը պարը կը սիրեր. Սամաթիայեն՝ ուր քատրիլը երգելով կը պարեին, մինչև Օրթագիւղ՝ ուր առանց երաժշտութեան չէին ցատկեր, ամենքը ոտքի վրա էին. գիրկընդխառնումի, պարահանդեսի,—«կայսթատրոնի» կըսեր Պեշիկթաշլեան—նորութիւն էր։

Այնքան որ մեր երգահանները—վասնզի միամիտ՝ բայց երբեմն սրտաբուխ երգեր գրող տրուպատուրներ ալ ունեինք այն ատեն—մտածեցին պարը երգին հետ հաշտեցնել։

Եվ այդ միջոցին ծաղկեցավ հռչակավոր պարերգը զոր իմ տարիքս ունեցող պոլսեցիները ամենքն ալ գոց գիտեն.

Դուք մնչեն, ես քովեն,
Անցնինք դիմաց, փոխենք տեղ։

Հանգերը հարուստ չէին, բայց իմաստը պարզ ու հասկնալի էր և Պոլիս գտնվող գավառացիները, որոնք ստակ չվճարելիք նորութիւններու մենե ավելի հետամուտ են, առանց դասատուի պարել սորվելու առավելութիւնը կը գտնեին այս երգին մեջ ուր քատրիլին բոլոր ձևերը ծայրե ծայր բացա-

տրված էին։ Միայն galoph-ին տեղ կերևա որ արշավ բառը դտնված ըլլալու չէր, վասնզի այս վերջին ձևին համար պարերգը կը վերջանար սա բառով.

Կլոր մը ճեմենք։

***

Ուսկե՞ց ուր այս քատրիլլին երգը միտքս ինկավ այս վայրկյանիս և այս տուները վերհիշեցի. մտավորական ի՞նչ անգիտակից աշխատութեամբ է որ այս հեք ոտանավորին տողերը եկան շարվեցան կարգով հիշողութեանս առջև, երբ ցնծութենե, զվարճութենե այնքան հեռու նյութով մը, մեր պարզամիտ հայերուն կաթոլիկութեան գիրկը նետվելուն ամենօրյա լուրերովը կը պարապի ու կը տառապի միտքս։

Բոլոր կամքովս կը ջանամ կապ մը գտնել հավատափոխութեան անդուլ—հիմա գրեթե անվախ ու համարձակ դարձած, սորսորումն հեղհեղի վերածված—այս շարժումին և սա ապուշ տողերուն մեջ.

Դուք մեչեն, ես քովեն,
Անցնինք դիմաց փոխենք տեղ։

Կը ջանամ և կը հաջողիմ գաղտնիքը գտնել, որ սա է կարծեմ։

Այն ատեններն ուր այս երգը կերգեինք, պապական հայերն էին որ մեզի կու գային փոխանակ մենք անոնց երթալու։ Անոնց ջոջերն էին, մտավորական ու եկեղեցական ջոջերը որ մայրենի գիրկը կը վերադառնային—թողութիւն կը խնդրեմ վենետիկցիներեն՝ մեր Եկեղեցին «մայրենի գիրկը» անվանելուս համար—և հոն կը գտնեին այն մեծարանքը զոր մենք, ափսո՜ս, ղլացած չենք նորեկներուն։

Այսպես, երբ հիմա ամեն անկյունեն լուրը կը հասնի, այնքան հաճախած որ անտարբեր կը թողու զմեզ, Գուրտպելենե մինչև Վան, պապական անդուլ մարդորսութեան լուրը, հայերուն ամեն տեղ կաթոլիկությունը գրկելուն լուրը, ակամա բաղդատությունը կու գա աչքիս առջև հին օրերուն և մեր օրերուն,

մեզի դարձողներուն ու մենք հեռացողներուն։ Մեզի եկողներուն դուլզն մնացորդին փոխարեն՝ ժողովուրդին դիմացի կողմը անցնելու շարժումը, քատրիյլին սա տունովը ճշտիվ չի՞ պատկերանար.

Դուք մեջեն, ես քովեն,
Անցնինք դիմաց փոխենք տեղ։

***

Չար գուշակ մը ըլլալ չեմ ուզեր. բայց պարզ թվաբան մը ըլլալը չի՞ բավեր արդյոք հաշվելու համար թե այս կրոնափոխություններով որքա՛ն ատենեն մեր Պատրիարքարանը իր մարդահամարի տումարները պիտի փակե բոլորովին. ասիկա պարզ համեմատության խնդիր մըն է որ երեքի կանոնով կը լուծվի, ինչպես կըսեին իմ դպրոցական եղած ատենս։

Եվ, տարօրինակ բան, եկեղեցական հասցնելու աշխատությունն ալ ոչ երբեք այնքան ամենօրյա աշխատություն մը եղած է, հիվանդություն մը պիտի ըսեի, մեր Պատրիարքարանին մեջ, որքան հիմա։

Օր չանցնիր որ դպիր, քահանա, վարդապետ և եպիսկոպոսի ձեռնադրությունը չլսվի. միշտ գործի վրա ենք. նեբելի՞ է հարցնել ո՞ր հոտին համար են այս հովիվները. ժողովրդին կրոնափոխությամբ պակսելուն դեմ եկեղեցականներու թիվին անընդհատ հավելումը պատրա՞նք մը տալու համար է մեզի և այս խոտոր համեմատությունը իբրև ուղիղ ընդունելու համար ո՞րքան միամտություն կը պահանջվի մենե։

Ձտեսանք դեռ մեր մեծազբաղ ժողովներուն մեջ լուրջ ու բանավոր մտադրություն մը այս հոսանքին առաջքը առնելու համար, պատճառները որոնելու, ստուգելու և անոնց դարման տանելու հոգածությունը. այլ ամեն օր հանդիսատեսներն ենք եկեղեցական և դպրոցական գործերու անկանոն ու ավազելի վիճակի մը որ ստուգիվ կը բացատրե, եթե չարդարացներ, հավատափոխության շարժումը որ մեր չորս դին կը գրավե։

Եթե իրավ է որ դպրոցը եկեղեցվույն գավիթն է, հավաստի

ըլլանք որ մեր եկեղեցին առանց գավիթի եկեղեցի մը ըլլալու ճամփան բռնած է։

Թեև իրավ է որ Պատրիարքարանը՝ իր տնօրինություններուն արդարությամբը, իր որոշումներուն հանրային խղճմտանքի համաձայն ըլլալովն է որ պիտի պահե բարոյական հեղինակությունը իր ժողովուրդին վրա՝ այն ամեն խնդիրներու մեջ որոնցմով մամուլը առիթ ունեցավ զբաղելու, այս հեղինակությունը անվթար մնացած չենք կարծեր։

Ասոնք և առանց նման կարգ մը պատճառներ կը միանան երաժշտությունը կազմելու այն պարին զոր՝ քիչ շատ ամեն կողմ ժողովուրդը կսկսի պարել, երգելով մեր Պատրիարքարանին երեսն ի վեր.

Դուք մնչեն, ես քովեն,
Անցնինք դիմաց փոխենք տեղ։

Արևելք, 1—9—1898

1901

«ՆՈՐԱՎԵՊ»ԻՆ ՇՈՒՐՋԸ

Պիտի ըսեն ինծի որ ամեն բանի կը խառնվիմ։ Ջեմ գիտեր թե փաստաբան ըլլալուս համա՞ր է արդյոք որ ամբաստանյալի մը օգնության կը փութամ. տարտամ բան մը կըսե ինծի որ, ուրիշ ոևէ մեկե ավելի, ինծի կիյնա պաշտպանել «նորավեպ»ը աջեն ու ձախեն արձակված կտրուկ վճիռներու դեմ. կը կարծեմ որ իմ ձայնս եթե ոչ բոլորովին պիտի փրկե, գոնե քիչ մը մտածել պիտի տա անոնց որ հեք սլզտիկ բառի մը ետևեն կը հետապնդեն անսովոր խստությամբ մը։ Կը կարծեմ նաև թե այն աղնիվ օտարուհին որ այս բանակռվին առիթ տվավ, վեհանձնության կանոններուն պատշաճ պիտի նկատե որ մեկ հոգի մըն ալ թե ու թիկունք ըլլա այս բառին, երբոր չատերը երես կը դարձնեն անկե։

Իրավ է որ Տիգրան Արփիարյան ի նպաստ անոր պզտիկ չատագովություն մը փորձեց, նրբամիտ անմեղությամբ մը որ անոր դեմ զինված բանասերներուն լրջությանը ու խրոխտությանը բոլորովին հակառակն էր։ Բայց Մասիսի խմբագրապետը չի կրնալով հորձանքին դեմ ուղղակի ճակատիլ, քովնտի ու վեհերոտ չանքով մը մեղմացուցիչ պարագաներ մեջտեղ դնելու ձևն առավ։

Այս եղանակը որ իմ խառնվածքիս չի պատշաճիր՝ մեկդի կրնեմ հս. և ուղղակի մեր բանասերներուն կամ հայագետներուն քիչ մը իրենց լեզվովը խոսիլ կուզեմ։

Մին կրսե թե «նորավեպ»ը հայ բառակազմության օրենքներուն դեմ ծանր մեղանչում մըն է. մյուսը՝ նոր բառին միայն բայարմատներու հետ զուգավորումը արտոնյալ կը համարի և սակայն ճիշտ այս կանոնը մեջտեղ դրած պահուն է որ անգիտակցաբար կը գործածե նորատի բառը որ ապահովապես իր բածին հակառակը կը հաստատե։

Ամեն բանե առաջ, կը հարցնեմ թե ո՞վ հնարեց այն կանոնը որուն համեմատ ածական մը միայն բայարմատի հետ կրնա միանալ եղեր. հայ լեզվին մեջ կը պակսի՞ ածականի մը գոյականի հետ բառակազմությունը, նույնիսկ նախադրություններու հետ։ Եվ ինչո՞ւ զլանալ նոր բառին՝ ուրիշ իր սեռակից բառերուն ընդհանրապես վայելած մեկ իրավունքը։

Սխալ է նաև կարծելը թե նոր բառը միայն բայարմատներու հետ կը զուգվի. շատ մը գոյականներու հետ միացված կը գըտնենք զայն, բացի նորատիեն ալոր Ուիլյումյան էֆենտին իր ամբաստանագրին մեջ կը գործածե։ Ջիկա՞ն միթե նորագյուղ, նորամարտ, նորածն, նորատեսակ, նորաղանդ բառերը։ Կը հետևի ուրեմն որ նորավեպի կազմությունն ալ ուղղափառ է ու այդ բառը գործածողները գիտակ կամ անգիտակ հերետիկոսներ չեն։

Բայց ընդունելով իսկ թե նոր ածականը միայն բայարմատի մը վրա կրնա բարդվիլ, նորավեպը այս կանոնին դեմ ալ չի մեղանչեր. քանի որ հոն՝ նոր բառը՝ վիպել բային արմատը եղող վեպին հետ միացված է։

Հիմա որ ցույց տվի որ նորավեպը մեղապարտ ծնունդ մը չունի, կավելցնեմ նաև որ nouvelle բառին պատշաճ թարգմանությունն է ան։

Nouvelle՝ ֆրանսերենի մեջ, և այն առումով որով նորավեպ թարգմանված է մեր մեջ, կը նշանակե պզտիկ պատմություն մը որ միանգամայն իր ձևովը նորություն մըն է. ասե է իր բուն իմաստը։

Անոնք որ միաբանած էին «նորավեպ»ը դատապարտելու

համար, միաբանած են նաև վեպիկ կամ վիպակ բառերը առաջարկելու մեզի, և զարմա՜նք որ այս հմուտ անձերը չեն խորհած երկու բանի, նախ՝ որ մեր լեզուն վեպիկ կամ վիպակ բառերը չունի և երկրորդ՝ որ չի կրնար ունենալ այս բառերը. այն գերազանց պատճառով որ մեր բառակազմության օրենքներուն դեմ կելլեն անոնք։

Առանց հեղինակություն մը ըլլալուս հայ լեզվագիտության մեջ և այն իրավունքով միայն որ ուրիշի մը չափ, եթե ոչ ուրիշ մը ավելի, կրնամ իմ լեզուս գրել և խոսիլ, կը հայտնեմ որ գործածական չէ եղած իկ և ակ մասնիկները բարդել ոչ-թանձրացյալ նյութեր բացատրող գոյականներու քով՝ իբրև նվազեցուցիչ. ակ մասնիկը իր գործածությունը ունի բայարմատներու կամ ուրիշ ոչ թանձրացյալ նյութերու իմաստը տվող գոյականներու քով, բայց հոդ՝ նվազեցուցիչ հանգամանք և արդյունք չունի։

Օրինակի համար, նվազումի գաղափարով տունը կրնա ըլլալ տունիկ կամ տնակ, բայց կամմը չըլլար կամմիկ, կամճակ. սեր չըլլար սերիկ, սիրակ. լուր՝ լուրիկ կամ լրակ և վեպը չըլլար վեպիկ կամ վիպակ, գեթ հայ լեզվի կանոններու համեմատ՝ որոնք բանասերներու գրպաններուն մեջ չեն գտնըվիր միշտ։

Ուրեմն նորավեպ բառը, ինչպես բազմավեպը, ինչպես սիրավեպը, ո՛չ անիմաստ և ո՛չ հերձված մը կը ներկայացնե մեր լեզվին մեջ. իսկ վեպիկ կամ վիպակ բառերը՝ դպրոցականի մը միայն ներելի համարվելու չափ միամիտ ու սխալ կազմվածքներ են։

Նորայր,—ներելի՞ է արդյոք ինծի օգուտ քաղել այս բառեն, իբրև փաստ մը վերը ըսածներուս ի նպաստ,—Նորայր[1], որ հեղինակություն մը համարվելու իրավունք ունի կարծեմ մեր մեջ, չէ վտարած նորավեպը իր բառարանեն. և հայ գրականությունը իրավամբ նվիրագործած է զայն ավելի քան քան տարվան միօրինակ ընդունելությամբը։

Մասիս, 5—5—1901

1902

ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ճիշտ այսօրվան պես շաբաթ օր մըն էր, 1852-ի փետրվար ամսուն առաջին շաբաթը, երբոր Մասիսը, Կ. Պոլսո առաջին կանոնավոր հայ լրագիրը, լույս տեսավ. լույս մը՝ որ մութեն շատ տարբեր ըլլալու չէր այն խանի անկյունին մեջ ուր այս օրաթերթը հրատարակվիլ կսկսեր։

Ջեռնարկը նորօրինակ էր։

Ղազեթաճիությունը այն ատեն արհեստ մը չէր և իբրև ապրելու միջոց՝ երկբայելիեն ալ պակաս բան մը կը նշանակեր։

Ի՞նչպես եղավ որ Կարապետ Ություճյան, խոհեմ ու շրջահայաց մեկը այս բախտախնդրության մեջ նետվեցավ։

Հարկավ ազդին ան ատենի երևելիները իր կողմն էին և անոնց դրդմամբ այս ասպարեզը ընդգրկած էր ան. սովորություն էր այն ատեն—և հիմակ ալ ինչո՞ւ չըլլար—որ երիտասարդները՝ իրենց մեծերուն, տարիքոտներուն խոսքովը ասպարեզ մը որոշեին իրենց, և զարմանալի բան, 1852ի աղանեթը փափագեր էին որ Կարապետ Ություճյան ղազեթաճի ըլլար։

Պզտիկ գայթակղություն մըն էր ասիկա ոչ միայն հասարակության համար՝ այլ Ություճյանի ընտանիքի մեջ ու անոր շուրջը։ Այս մարդեն՝ որ ամեն գիտցածը ու լսածը, ամեն ան-

ցածը ու դարձածը կը պատմեր կիմացներ իսկույն ամենուն իր ղազեթայովը, զգուշանալու էր։ Ու իր ոտք կոխած տանը մեջ խոսակցությունները կընդհատվեին վախցվելով որ հոն ըսվածները մյուս օրվան թերթին մեջ չի հրատարակվին, իրենց անունին հիշատակությամբը, ինչ որ լրումը պիտի ըլլար ամոթի. միամիտ ու անմեղ խոհեմություն՝ հիմակվան սովորության քով որ ամեն տեղ խմբագրին ներկայության անձուկը ունի, ամենեն մտերմական բաները հրապարակված տեսնելու համար։

Հետաքրքրությունը և չարության պզտիկ որդը, որ ամեն մարդու հոգվույն մեջն է, այս օրագրին ընթերցումը կապահովեին։

Կարդալ գիտցողները խիստ փոքրիկ թիվ մը կը կազմեին, բայց կարդացողները, ապահովապես, կը հասկնային կարդացածնին, հիմա կարդալ գիտցողներուն թիվը շատցած է անտարակույս, բայց կարդացածնին հասկնալ գիտցողներուն թիվը նույնքան նվազած կրնանք սեպել, խոտորնակ համեմատությո՞ւն, որ խորհրդածության արժանի նյութ մըն է կարծեմ։

Այն ատեն նորությունները կը սիրվեին։

Հասարակություններն ալ անհատներու պես են, տարիքի չրջաններ ունին ուր հասնելուն կանգ կառնեն. տեսակ մը կայքեր, բացավայրեր են ասոնք ուրկե աչին կարելի է երթալ ինչպես ձախին, և ուր քիչ մը կը մտածեն, շուրջերնին կը դիտեն կարծես, դեպի այս կամ այն կողմը շտկվելե առաջ։

Հայ հասարակությունը այդ միջոցին քիչ մը վարանելե եղբը հաստատ մտադրությամբ մը նետվիլ կուզեր Եվրոպայի մտավորական զարգացման ճամփուն մեջ, ասիկա քիչ մը կանխահաս էր մեզի համար, վասնզի հայտնի վտանգ մը կար որ անոր լուրջ աշխատություններուն հետևելե ավելի՝ արտաքին կարգ ու սարքովը ու վայելչությունովը միայն հրապուրվեինք։

Սերվիչեններ, Օտյաններ, Ռուսինյաններ, Չորայաններ, Ություճյաններ Եվրոպայի գրականութենեն շլացած կը դառնային հոս, այն ատենվան մեր գրչի արտադրությանց հան-

դեպ՝ ինքզինքին գտնելով՝ էլեկտրական լույսով լուսավորված քաղքի մը վարժութիւնը ստացող մարդոց դիրքին մեջ որոնք հանկարծ ամիկ փեթռոլին կամ նույնիսկ պատրույգով վառված ճրագի մը լույսովը գոհանալու կը պարտավորվին։

Առաջին ըլլվելիքը Պոլսո հայ հասարակութեան համար լրագրութիւն մը հաստատելն էր։ Հին օրեն մնացած ամիրա կամ Փարիզեն նոր վերադարձող երիտասարդ, ծերունի եկեղեցական կամ նոր դասախոսելու կոչված վարժապետ, ամենքը համաձայն գտնվեցան այս կետին վրա, ու Մասիսը ծնեցավ։

❋❋❋

Ըսի որ Պատրիարքարանի աղաները պաշտպան կեցան իրեն առջի օրեն և Մասիսը անոնց թևրանը մնաց մինչև վերջը. ազնըվականութեան թևին հով մը փչեց միշտ այս թերթին մեջ. անոր գաղափարները, լեզուն ու քալվածքը գոհհիկեն զգուշացան, բան մը զոր նախատինքի մը պես անոր երեսին նետեցին ատեն մը։

Վերջեն երբոր օրագիրները շատցան մեր մեջ, իր ուրույնութիւնը եղավ հանրային խնդիրներու առթիվ կամ գրականութեան մասին ամբոխին մեջ փեշերը վեր ժողված մարդու կեցվածքը առնել։ Նեղացան իրեն դեմ և նախանձեցան իր վրա։ Ամեն համեմատութիւն պահելով կրնանք ըսել որ մեր Journal des Débatsն եղավ Մասիսը շատ մը տարիներ։

Տարիքնին առած, լուրջ ու դիրքի տեր մարդիկ կան որոնք օրին մեկը մետաքսե գուլպայի մեջ պարուրված գեղեցիկ սրունք մը կամ հոլանի լանջք մը դիտելու մարմաջեն կը բռնվին ու, հանրային պարասրահը չի համարձակելով մտնել, բաբենպատակ հաստատութեանց համար տրված պարահանդես մը կերթան կամացուկ մը, պզտիկ դիմակ մը անցուցած երեսնին, համոզված՝ որ հոն երթալնուն լսվիլն ալ չի կրնար իրենց պզտիկութիւն մը սեպվիլ կամ գայթակղութիւն մը դառնալ։

Ասոր պես ալ, պատահեցավ որ պետական պաշտոնյաներ կամ ալևոր սրբազաններ հրապարակագրութեան ախտեն վա-

բակված՝ ատեն ատեն ծածկանունով մը երևային Մասիսին մեջ, հանրային վեճերուն խառնվելու համար։

Ժողովրդական չեղավ այս օրագիրը, անջրպետ մը մնաց ամեն ատեն իր և խուժանին մեջ. իր նրբամիտ հեգնություններեն չէր կրնար համ առնել հասարակություն մը որ մյուս լրագիրներուն լեզվին ու ստորին հայհոյությունները լսելու սովորած էր։ Մասնավոր դասակարգի մը թերթը մնաց անիկա. հատուկ առանձնասենյակ ուր կռիվ ու պռուշտուք չի կա, ուր էն ծանր խոսքերն անգամ մեղմ ձայնով կը զուրցվին։ Շատերը եկան անցան անկե՝ բայց ով որ ալ ըլլար եկողը, քիչ ատենեն տանտիրոջ ձևերուն ծալքը կառներ, իր բառերուն ընտրությունը քննելու, երանգները ճշտելու արվեստին վարժությունը կունենար, այնպես որ տանտիրոջ քաշվելեն ետքն ալ անոր ձգած ավանդությունները անեղծ մնացին հոն մինչև վերջը։

Գրական շաբաթաթերթ ահավասիկ շուրջ տասնըութը տարիներե ի վեր՝ Մասիս նույն ազնվապետական հոլը, նույն խղճամիտ ջանադրությունը խմբագրության մեջ ու նույն բարեկրթության մտադրությունը պահած է ամեն առթիվ ու ամեն տեղ։

***

1878ին ատենները, պատանի մըն էի ու ջերմ հակառակորդ Մասիսին։ Լրագիրին մեջ, Նիկողոս Թյուլպենճյանի[1] թերթը, իմ բոլոր ուժովս կը մաքառեի ամեն անոնց դեմ որոնց հանդիսավոր ու ճանչված ներկայացուցիչն էր Մասիսը։ Հոնկե կը պատասխանեին ինծի, զիս հերքելու հատկացված տողերուն վրա Կարապետ Ություճյանի հեգնող ծիծաղը կը նշմարեի, ծիծաղ որ դիվային բան մը ըլլալու էր։

Ըսի՞ ձեզի որ իմ դրացիս էր անիկա, Պեշիկթաշ, ճիշտ մեր թովի դրացին։

Առջի հեղ որ մեզի այցելության եկավ անիկա, հետաքրքրությամբ դիտեցի այցելուն. ա՛յս էր այն աներևույթ ոգին որ Մասիսը կիրկներ. սովորական մահկանացու մըն էր անիկա և ոչինչ կը զանազաներ զինքը ուրիշներեն. ես իմ երևակայու-

թյանս մեջ բոլորովին տարբեր մեկու մը կերպարանքին տակ պատկերացուցեր էի այս մարդը ուրկե թաղական ու քարոզիչ կը դողայինս

Այս տեսակ սթափումներ շատ հեղ տեսած եմ իմ շուրջս ալ, իմ անձիս համար արտահայտված։ Ձիս՝ պարթև հասակով, գեղեցիկ մորուքով, լուրջ ու խոժոռ մեկը երևակայողներ շատ ունեցեր եմ ու քիչ չեմ զվարճացեր տեսնելով այս մարդիկը ինքզինքս ճանչցնելուս՝ ապշած, գրեթե չի հավտալու պատրաստ։

Իմ առաջին տպավորությունս ակնածանքով խառն գոհունակության զգացում մը եղավ, Ություճյան մեր դրացին՝ Մասիսի չորս մեծագիր էջերը իմ տրամադրությանս տակ զգացի ու իսկույն պզտիկ ու վեհերոտ փորձով մը մոտեցա իրեն։

Ո՞վ բանաստեղծ չէ եղած քիչ մը տասնըհինգեն մինչև իր քսան տարիները, երևակայեցեք թե ինչ էի ես այդ միջոցին, երբոր հիմա քառսունիս մոտ—ինչո՞ւ ճիշտ քառսունիս մեջ ըլլալս խոստովանելու արիությունը չունիմ արդյոք—դեռ քերթվածներ կը հրատարակեմ։

Այն զոր մատուցի իրեն, նոր մեռած աղչկան մը մահվան առթիվ գրված էր. այն ատենվան տիրող միակ բանաստեղծական ձևն էր ասս։

Մխիթարյանները մտցուցեր էին ասիկա մեր մեջ, Պեշիկթաշլյան, Թերղյան, Ահմյան Վենետիկեն հետերնին իրենց ճամփորդության անտուկներուն մեջ բերեր էին զայն։ Ոչ ոք կը մեռներ Պոլսո մեջ առանց կանխապես ապահովելու որ իր ետևեն հասցնեն ոտանավոր մը որ սովորաբար սա վերնագիրը ուներ.

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ՍՐ. ՆԿՏԱՐ ՍՐՄԱՔԵՇՅԱՆԻ

Այս օրվան պես միտքս է չար ու հեգնող ժպիտը զոր իմ քերթվածիս ընթերցումը պատցուց Ություճյանի շրթունքին վրա և այն ձեռքի հուսահատեցնող շարժումը որով իմ գեղեցիկ ոտանավորս ինծի վերադարձվեցավ։ Այդ վայրկյանին, իմ բոլոր ատելությունս որ տեղի տալու վրա էր, արթնցավ նորեն

այս աղնվականներու ջոջերու թերթին դեմ, այնքան որ բոլոր զայրույթս ու մաղձս Ություճյանեն անցնելով անոնց վրա թափեցավ։

Հոդկե՞ արդյոք մնաց անոնց դեմ այն բոլոր արհամարհանքը զոր մինչև հիմա կը պահեմ սրտիս խորք. չեմ գիտեր։

Մասիսին հետ հաշտվելու ի դերև ելած այս փորձեն ետքը ո՞վ պիտի գուշակեր որ օրին մեկը շաբաթաթերթ Մասիսին մեջ պիտի հրատարակվեր իմ առաջին վեպս։ 1886ին մոտերն էր երբոր Արևելքի խմբագրական մարմինը որ Մասիս շաբաթաթերթին ալ խմբագրությունը կը վարեր, կարդաց «Անհետացած սերունդ մը»ին մեկ երկու գլուխները ու հավնեցավ անոր։ հիմա միայն կըմբռնեմ որ զիս քաջալերելու կամքեն զատ ոչինչ կրնար իմ հեք վեպս հյուրընկալել տալ Մասիսին մեջ։

Աղե՜կ եղավ, գե՞շ եղավ ասիկա, լավագույն չէ՞ր ըլլար թե՛ ինծի և թե՛ անոնց համար որոնք իմ գրածներս կը կարդան, որ այդ վայրկյանին նոր մերժումով մը գրական ասպարեզը բոլորովին փակվեր իմ առջևս։

Հիմա, շատ մը տարիներ անցան ատոր վրայեն և սակայն այդ ողորմելի նախափորձին հրատարակվիլը թվական մը կը կազմե ինծի և շաբաթաթերթ Մասիսին համար։ Չեմ կրնար առանց խորապես հուզվելու մտքովս վերադառնալ այդ տարիներուն։ Նորեն երիտասարդանալու պես բաներ մը կզգամ ներսիդիս, նոր կոչում մը, անծանոթ ձայներ կը լսեմ շուրջս։

Ու հետո, իմ խմբագրապետությունս այս շաբաթաթերթին մեջ. տեսնք ուրեմն որ, իմ դիրքս հրապարակագրության մեջ, պարզ զինվորի աստիճանե սկսված բարձրացում մըն էր, եթե նմանությունը ներելի է ինծի։

Ինչ որ կրնամ հավաստել, սա է թե երբեք չի մոռցանք որ այս գրական միակ շաբաթաթերթը վարելու պատիվն անբաժան էր մեծ պատասխանատվություն մը։

Տարիներու ընթացքին մեջ գաղափարները ու մարդերը փոխված էին բոլորովին, ու այս հեղաշրջումին մեջ Մասիս նորեն գլուխը պետք էր մնալ Պոլսո հայ հրապարակագրության մեջ, ճիշտ ինչպես իր հոյակապ հիմնադիրը պահած էր զայն ցորչափ ինքն էր անձամբ զայն հրատարակողը։

Ես ու բարեկամներս թերացանք թե ոչ այս մտադրություններնուս մեջ, ասիկա մեզի չիյնար վճռել։ Այն ամեն հաջողությունները որոնք աշխատությունով, անձնվիրությամբ կրնան միայն ձեռք բերվիլ, այդ բոլորը Մասիսին բերած ըլլալնուս համոզումը ունիմ, իսկ անոնք որոնք բնածին տաղանդով միայն կը բերվին, ատոնք ալ ունեցա՞նք թե ոչ՝ Մասիսին ընթերցողներուն կիյնա ըսել։

***

Կես դարի անջրպետ մը կը լեցվի Մասիսին առաջին թիվեն մինչև այսօր։ Մինչդեռ մարդերը կը ծերանան, իրենց հիմնած գործերը օր օրե ավելի կերիտասարդանան, նոր ուժերով կը շարունակվին։ Տարօրինակ ճակատագիր աշխարհային բանեբու որ օրագիրի մը մեջ ավելի ուժ, հոգի ու կենդանություն կը դնե քան թե զայն հիմնող մարմնին մեջ։

Պատճառը այն է գուցե որ օրագիր մը, իր ճշմարիտ կոչումին պատասխանելուն, կը դադրի ասոր կամ անոր ըլլալե, հանրության կը պատկանի ա՛լ, ամբողջ հասարակության սեփականությունը կըլլա և պատճառ մը չիկա, որ անոր վիճակակից, չի շարունակվի այդ հասարակության կյանքին բոլոր տևողությամբը՝ իր վրա անհղծ պահելով դրոշմը բոլոր պատմական անցքերուն։

Եվ այսպես երբոր կը տրվի իրեն հիսուն տարիներու շրջան մը բոլորել, իր հիմնադիրեն սկսելով բոլոր աշխատակիցները իրավունք կունենան արդար հպարտությամբ մը ողջունելու զայն։

Մասիս, 2—2—1903

ՈՒԹԸ ՏԱՐԻ ԵՏՔԸ

Փերա, 1 հոկտեմբեր

Սիրելի բարեկամ,

Ես ալ կզգամ որ Ջոլային մահվան առթիվ բան մը գրելու համ։ Հայերը չեն ճանչնար զինքը և ինչպե՞ս կուզնք որ ճանչըննան, քանի որ անոր գործերեն ոչ մեկը հայերենի թարգմանված է։ Այդ գործերը իրենց ֆրանսերեն բնագրին վրայեն կարգացող և չկրցող հասկցող մեկ քանի հոգի՝ այս մեծ մատենագրին անբարոյական հեղինակի համբավ շինեցին մեր մեջ և մեր հասարակութիւնը անկե զգուշացնելու ելան։ Տղայութեան ատենեն միտքս մնացած է սոսկումը զոր Վոլթեռի անունը լսելնուս կզգայինք։ 18րդ դարու էն մեծ մատենագիրը պետք էր որ անծանոթ մնար մեր խավարապաշտ ու անմշակ մտքերուն. ահա՛ այս տեսակ բաներով կրնայինք մնալ այն հետամնաց ժողովուրդը զոր ենք։

Այս վերջին մեկ քանի տարիներուն մեջ անաստվածութեան ամբաստանութիւնը իր շահեկանութիւնը կորսնցուցած ըլլալով, անբարոյականութեան դեմ կռվելու պատրվակով զինվեցան անոնք որոնք դատապարտված են կռնակնին դարձուցած մնալու հառաջադիմութեան. անբարոյականութիւն որ, ասոնց խոսքին նայելով, հոլանի ծիծ մը կամ մերկ սրունք մը ցուց-

նելով կը վրդովեր իրենց ի բնե խարխուլ պարկեշտությունը։ Հայերուն մեջ իրրև մերկապարանոց բաներ գրող՝ ինծի կիյնար այս մեղադրանքներուն ենթարկվելու պատիվը. և այսպեսով պզտիկ խնամություն մը ձևացած է միշտ իմ խոնարհ անձիս և մեծ գրագետին մեջ որուն սուգը կը պահե այսօր Ֆրանսան՝ ամբողջ լուսավորյալ Եվրոպային հետ միասին։ Այս ազգականությունը որ չարդարանար՝ եթե ի նկատի առնենք արժանիքի տեսակետով երկուքնուս մեջ եղած մեծ անչրպետը, ստույգ ու վավերական պիտի ըլլար՝ եթե ամեն տեղ ստությունը ու կեղծիքը խորտակելու փափագը ունենալը միայն՝ բավական ըլլար ասոր։

Զոլայի եղերական վախճանը խորհրդավոր բան մը ունի իր մեջը. այս այն մահը չէ որ ճակատաբաց կուգա առչիդ իր գալուստը առաջուց իմացնելով և միջոց տալով քեզի որ պաշտպանես ինքզինքդ իրեն դեմ. ոչ, այլ լոության ու մութին մեջ հասնող մահն է որ իր ներկայությունը զգուշությամբ կը պահե և քնանալուդ կսպասե վրադ խոյանալու ու զքեզ չքացնելու համար. մեկ բառով, նենգությունն է, կեղծիքն է ան, որոնց դեմ Զոլա այնքան սաստկությամբ մաքառեցավ։ Նենգությունը՝ հաղթող վերջ ի վերջո, հարկավ այս վհատեցուցիչ դասը չէ որ կը քաղեմ այս մեծ կորուստեն, բայց այս աղետը խորհրդանշանի մը պես կերևա աչքիս։

Ութը տարի առաջ երբոր պզտիկ հոդվածի մը ակամա ամփոփումին մեջ ստիպվեր էի տարտամ գիծերով միայն այս մեծ դեմքը ներկայացնել Մասիսի ընթերցողներուս, Զոլան իր գլուխգործոցը չէր գրած դեռ, այն հոյակապ արձակը որ «Կամբաստանեմ» կը կոչվի։ Իր բոլոր հատորներուն մեջ մեծ քաղաքացին կը նշմարվեր միայն. ոչ ոք մտքեն կանցներ որ ի հարկին երևան պիտի ելլար ան՝ այսքան ապշեցուցիչ արիությամբ մը և իր գրական «հավատամք»ը—միմիայն ճշմարտության «հավատամք» մը—սոսկ արդարության ու իրավունքի վերաբերող խնդրո մը մեջ ալ միևնույն անվեհերությամբ պիտի պոռար ամենուն երեսին։

Երկու տարագրում աչքի առջև կուգան այս վայրկյանիս անկարելի է մերձեցում մը չընել այս երկուքին մեջ. Հյուկոյի և Զոլային հեռացումը իրենց երկրեն. բայց բարոյական ի՛նչ մեծ հեռավորություն երկուքին մեջ։ Հյուկոն շպարի, ոսկեզօծումի, մեկ բառով ռոմանթիք գրականության անմատչելի կատարը, անոր համար կստիպվեր թողուլ Ֆրանսան որովհետև իրեն խոստացված նախարարական պաշտոնը չէր կրցած իրեն տրվիլ և քինախնդիր բանաստեղծը օտար հողի մը վրա կերթար իր մաղձը, որ նորեն էն մաքուր ու նվիրական անուններով պիտի մկրտեր, թափելու իր Chatimentsներուն մեջ։

Զոլան՝ բնապաշտ դպրոցին գլուխը՝ իր հանգիստը, իր մեծ դիրքը, զինքը շրջապատող բոլոր համակրությունները առանց վարանելու ձգելու կը հոժարի, հանիրավի դատապարտված հրեայի[1] մը անմեղությունը պաշտպանելու համար։ Այս է անբարոյական մարդը։

Ռոմանթիք և բնապաշտ դպրոցներուն բոլոր տարբերությունը այս երկու եզրերուն բաղդատությանը մեջն է։

Սիրտս տրտմությամբ լեցնող բանը սա է որ ճիշտ այն պահուն ուր բոլոր աշխարհ այս մեծ նկարագրին ու այս մեծ գրագետին գերեզմանին առջև կը խոնարհի, մենք կըլլանք միայն բացառությունը կազմողը. ոչ միայն այս մեծ քաղաքացիին գերեզմանին առջև կը ծիծաղինք, այլ ժամանակակից այս անվանի գրողը հասարակ թերթոնագիր մը անվանելու կելլենք։

Իրոք արդահատելի հասարակություն մըն ենք։

Փարիզ, 4—10—1902

1908

ԿՅԱՆՔԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Փարիզ, 13/26 մայիս

Ավելի ուղիղ չէ՞ր ըլլար ըսել «Մահը Փարիզի մեջ», քանի որ Ֆրանսայի մեծագույն քերթողին՝ Ֆրանսուա Քոփփեի մահը ծանուցանելով կսկսիմ այս տողերը։

Առենով իմ «Մասիս»իս մեջ—ի՛նչ հիշատակներ կը քրքրեմ—իր պատկերը զետեղեր էի, չեմ գիտեր ի՛նչ առիթով, և քանի մը տողն բաղկացած հոդվածի մը մեջ՝ փորձ մը ըրեր էի—շատ պզտիկ հարկավ—ծանոթացնելու զինքը մեր ազգակիցներուն որ ժամանակակից Ֆրանսայեն շատ բան չի գիտեր։

Կորուստը մեծ է այդ մեծ ազգին և ընդհանուր Գրականության համար։ «Խոնարհներ»ուն և «Մտերմություններ»ուն քերթողը նոր դարձվածք մը երկնած էր, նոր լեզու մը իր քերթվածներուն հատուկ՝ որուն բարձրությունը, խոնարհությունը, նրբությունը մտերմությանը մեջն է միշտ Շնորհ ու վայելչություն էր համակ՝ ամեն սեթևեթեն հեռու մնալուն։

Դժվարի՛ն արվեստ։

Քոփփե ամենեն դժվարապահանջ արվեստագետներուն և ամենեն անուս բայց ոչ գեհհիկ դասակարգերուն սիրտերը միևնույն ավյունով թրթռացուց միշտ։ Ճշմարիտ գեղեցկությունը

ո՛չ թյուլերու, ո՛չ բեհեզի մեջ փաթթվելու, ո՛չ իսկ ներկի չպարի կը կարոտի, ամեն աչքերը իսկույն գրավելու համա։

Անոր մահովը համայն Ֆրանսան սուգը կը մտնե, Ակադեմիեն սկսելով մինչև համեստ դարբինը, մեծերեն իջնելով մինչև էն պզտիկները, որոնց ամենուն երգիչը եղավ անիկա։

Եվ իմ միտքս կերթա հենք Ադամյանին որ այս Քոփփեին «Դարբիններըը» կարտասաներ այնքան պերճուհյամբ, իր անզուգական բերնեն թռչող ամեն ներդաշնակուհյանց պես։

Ու քիչերը գիտցան որ քերթող մըն էր ան ալ՝ որ ուրիշ քերթողի մը գրածին վրա կը զմայլեր, բերնուց սորվելու և անման արտասանուհյամբը ավելի ևս պանծացնելու համար զայն։

Անոր սուգը չպահեց մեր հասարակուհյունը։ Շատեր չիմացան իսկ անոր մահը, ժողովները ու Թաղականները իրար չանցան և, կուզե՞ք որ իմ բոլոր գաղափարս հայտնեմ, աղեկ ըրին։ Ջահերը, ծածկուհյունները ու փառաբանուհյունները որոնք ունէ խանութպանի մը դագաղին կը շռայլվին, որովհետև անիկա, չի գիտցվիր ինչ կերպով շահված, դրամ կը թողու իր ժառանգորդներուն, անոնք պետք չէ որ շրջապատեն այն մեծ մեռյալները որոնք բոլոր ցեղի մը մտավորական ու քաղաքակրթական հանճարը կը կրեն իրենց անձին վրա ու անոր տևական փառքը կը կազմեն իրենց մահվընեն վերջը։ Այդ փառքը իր մեծավայելչուհյան մեջ պետք է թողուլ և չնսեմացնել սակագնված պատիվներով։

Քոփփեին հիշատակեն չեմ կրնար զատվիլ առանց խորհուրդ մը, չըսելու համար խրատ մը, տալու մեր երիտասարդներուն, խրատ որուն տարիքս՝ իրական և գրական՝ կարծեմ թե կրկնապես կարտոնե զիս։

Ըսեմ ուրեմն մեր երիտասարդներուն, անոնց որ մեր տեղը բռնելու եկած են, թե գրականուհյունը ու հրապարակագրուհյունը մեծ պարտականուհյուններ կը դնեն ինքզինքը անոնց տվողին վրա։ Անիմաստ ու անշնորհ գրվածքներու կուտակումով չէ որ անոնց դերը կը ճանչցվի։

Իրավունք ունինք ըսելու որ պատվո ավանդ մը ձգնցինք իրենց, արևին չափ պայծառ, բյուրեղի պես չինչ ու անոր պես

երփներանգ լեզու մը թողլով իրենց, լեզու որ ասկե քառորդ դար առաջ գոյություն չուներ գոնե գրականության մեջ։

Ստվերամած ու խավարչտին բան մը ըրին զայն հիմա, և, ափսո՞ս, նույնիսկ ուղիղ քերականության մը կանոններուն հարգանքը վտարեցին անկե։ Եվ ոչ թե անոր համար որ այս ստորնացումը գրական դավանություն մըն է, այլ պարզապես՝ որովհետև գաղափարի ու իմաստի չգոյութենեն, մանավանդ պատ ձևերու ու վերջակետներու հետ անհաշտ պարբերություններու ապավինեցան։ Ֆիզիքի մեջ կըսեն թե Բնությունը պարապութենեն կը զարհուրի. գրականության մեջ՝ դատարկությունը շատ ավելի զարհուրելի է ընթերցողներուն համար։

***

Ինծի այնպես կը թվի որ «մեկ երեսը կուլա և մյուս երեսը կը խնդա» զուրցվածքը՝ ամենեն շատ ֆրանսական այս մեծ ոստանին կը պատշաճի։

Երևակայեցեք որ այս պահուս հասարակությունը՝ թատրոններուն չափ ու թատրոններեն ավելի Revueներուն կը վազե, հոն ուր այս ցեղին սրամտությունը ամեն գիշեր իր գանձերը կը շռայլե։

Չկա եղելություն մը, մտավորական, քաղաքական կամ գեղարվեստական, անձնավորություն մը որով Փարիզը զբաղած ըլլա վայրկյան մը, որ անմիջապես օրվան ծիծաղին նյութ չմատակարարե. ոչ այն ծիծաղը սակայն՝ մաղձով ու դառնությամբ լեցված՝ որ դիվային բան մը ունի, այլ այն որ զվարթության վճիտ ակերեն կը բխի, որ զեղուն է ներողամտությամբ և որ իր մեջը միշտ բարի խրատ մը կը ցայտեցնե։

Ծկամուտին վրա տուրքը, նամակատան ու հեռաձայնի մեջ աշխատող աղջիկներու վիճակը, Քասթելանի կոմսեն արձակված ամերիկացի միլիառատիրուհին, երկաթուղիներու անկանոն երթևեկը, Թեաթր-Ֆրանսեի դերասաններուն իրենց դերերը արտասանելու հանդիսավոր ձևերը, ու ասոնց բոլորին վրա ծածանող կնոջական անհավատարմության զվարճալիքը, ամեն կերպ պերճության, շողացումներու, ադամանդներու, ոս-

կեզօծումներու, բեհեզներու, հոլանի լանջերու ու սրունքներ աշխարհի մը կամ կիսաշխարհի մը մեջ, եթերային երաժշտութեան մը նվագներով ընդելուզված։ Ահա՛ Օլիմբիայի, Մառին յի որվյուները, ուր գետինները թափված նրբամտություններեն, կատակներեն, զվարթություններեն կոխելու տեղ չկա։

Եվ ասոնց վրա իշխող տիրող լուրջ երաժշտությունը և Արվեստը, Շալիափին ռուսիացի երգիչը Օփերայի մեջ ուր «Պոռիս Կոտունով» ռուսական օփերան չեմ գիտեր իր կատարելութենե՞ն թե ֆրանքևոուս դաշնակցության բերմունքովը ծափեր կը խլե. հոն՝ դուռներուն ու լայն աստիճաններուն վրա մարած, հատած, սպառած դեմքեր, սլավ ուսանողներու և ուսանողուհիներու երեսներ՝ ելեկտրական լույսի ողողումին տակ հանկարծ կը պայծառանան ու իսկույն կը շիջանին, նորեն պայծառանալու ու նորեն շիջանելու համար։ Անդին՝ Օփերա Քոմիքին մեջ՝ նորեն ռուսական օփերա մը, «Սնեկուրոչքա», միևնույն խանդը եթե ոչ տաղանդը, միևնույն ծափերը, ողջույնները։

Ու քիչ մը հեռուն՝ ծանրախոհ Թեաթր Ֆրանսեն, ալևոր հավը, թռռած երեսներով քիչ մը, ալիքով ու պատիվով ծածկված, քիչ մը տրտմած, և Միրպոյի «Ֆուայյե»ն ներկայացնելու վճիռին տակ ճզմված։ «Ֆուայյե»ն՝ որ կեղծիքին դիմակը մարդուն երեսեն վար քաշող, գետին նետող ու կոխկռտող շարժումն է, որուն՝ ընկերական պայմանադրությանց ժամադրավայրը եղող այս թատրոնին մեջ՝ այսպես բռնի մուտքը՝ այնքան ապշեցուցիչ է որքան պատվաբեր ֆրանսական դատարաններուն համար որ այս վճիռը արձակեցին, ամեն նախապաշարումները մեկդի քնելով։

Լույս, 31—5—1908

«ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ»

Վայելքը իր չափը ունի, որոշ սահմանե մը անդին հեշտութիւնը՝ տվայտանքի, մահացումի մը պես ցավագին բան մը կըլլա, անսովոր ճիչեր, աղաղակներ արձակել կուտա մարդուս։

Արվեստի գերագույն արտահայտութիւնները այս կարգեն են։ Այդ վերնագավառներուն մեջ՝ ուղեղային դրութեան պարտասումի աստիճան գրգռումը, արյան շրջաններու համախուժումը, ջիղերու տարապայման պրկումը կը միանան մղձավանջային, քնաշրջիկի, էսրարի ծուխերով ծանրացած մթնոլորտի մը, իրականեն, ապրվածեն ավելի վեր գոյութիւն մը— եթե ներելի է ինծի ալ նոր բառ մը կերտել—Գերակյանքը ստեղծելու համար։

Այդ գերակյանքը ապրեցանք մենք ուրբաթ դիշեր երիք ժամ շարունակ Վարիեթեի թատրոնին մեջ Պաքուի Աբելյան-Արմենյան տրամաթիք խումբի կողմե տրված ներկայացումին առթիվ։

Երեք չորս օրե ի վեր Թոքաթլյանի սրահին կիսակործան սյուներուն վրա փակցված համեստ ծանուցումներ այս խումբին գալուստը իմացուցեր էին մեզի։ Պզտիկ խմբակ մը որուն

մեջ անսովոր դեմքեր, ձևեր կը նշմարվեին, քանիցս նիստ կազմած էր այս սրահին մեջ։

Ովքե՞ր էին ասոնք, պիտի ըսեր ռուսահայ մը։ Պարզապես Պաքուի տրամաթիք խումբն էր ասիկա որ ուրբաթ գիշեր Շիրվանզատեի ամենեն խորունկ և ամենեն դառն մեկ փիեսի՝ Պատվի համարի ներկայացումով սկսավ։

Ամփոփեմ նյութը։

Պ. Անդրեաս էլիզբարյան ջոջ վաճառական է։

Ջքավորութենեն ճամփա ինկած անձ որ ինքնիրեն դիզած է իր հարստությունը և որ օր մը պիտի պռոա իր զավակներուն երեսին.

— Ես իմ հորից փող ե՞մ ստացել, թուք ու մուքով, զրկանքներով, քաղցած փորով եմ ես մարդ դարձել։

Դրամապաշտ պուրժուազիի թիփն է ան, մարդկության վախճանը միմիայն դրամի մեջ փնտրող։

Իր գործի մարդու տաղանդը առուտուրի կյանքին սովորական խորամանկություններովը ու ննջգություններովը ձևացած է։ Սողոսկող ու ամբարտավան, կտրիճ ու վատասիրտ միանգամայն։

Իր պարտամուրհակները փրոթեսթ եղած չեն. պատվավոր մարդ ուրեմն. իր շահատակությունները հայտնված չեն. ուստի հարգելի և ազնիվ անձնավորություն, այնվաշուք մը, թե որ անպատճառ փափաղիք. ի հարկին կարող իր հափշտակություններեն մաս նվիրել ազգային ուսումնարան մը հիմնելու համար. ազգային բարերար մը, թե որ կուզեք։

Արդյոք Շիրվանզատե Պոլի՞ս ապրած է։ Հարստության հիմնական մասը իր առևտրական ընկերոջը մահվընեն օգտվելով կողոպտած բաժինն է և այս պիտի ըլլա բոլոր փիեսին առանցքը։

Այս ազնվաշուքը իր թալանած ընկերոջը որբերուն ողորմություն տալով մեծցուցած է զանոնք։ Ջըսի՞ ձևի թե բարեբար մըն է։

Այս է մարդը։ Զվճռի հարկավ, բայց ոչ վճռական չարագործը։ Ահավորը՝ անոր կնոջ եղբայրն է. Սաղաթելը՝ իր գործերուն օգնականը ու չար ոգին անոր. այն կը մղե զինքը միշտ

դեպի չարը, դեպի ապիրատութիւնը. Իակոն՝ այս դրամապաշտ Թթելլոյին։

Տեսարանը իսկապես զարհուրելի է երբոր երկու չարագործները իրենց թալանին փայ ու բաժինին մէջ իրարու դեմ կելլեն։

— Խոստումդ կատարէ՛. բաժինս տուր թե ոչ գիտեմ ընեմ, կը գոչէ Սաղաթել։

— Հետո կուտամ։

Այս «հետո կուտամ»ը չեք գիտեր որքան հոգեբանապես ուղիղ է։ «Հետո կուտամ»ը կը նշանակէ որ խոսքեն պրծելու պատրաստվող անձը դեռ չի համարձակիր դիմակը վար առնել, կը նշանակէ ժամանակ վաստկիլ, որպեսզի վարժվի իր դժումին ու անոր քաջութիւնը ունենայ։

Անդրեաս Էլիզբարյան չորս հատուկ զավկի տեր է։ Բայց անոնք որքա՜ն նկարագրով տարբեր են իրարմե։

Բագրատ էնժենիյոր է. դրամական ու նյութական փիլիսոփայությամբ սնած երիտասարդ. մին անոնցմե որոնք սրտի խղճահարութիւնները չեն ճանչնար։

Իր աստվածը բանականութիւնն է, ուրիշ բառով օդուտը միայն։ Այս թիփը պուրժուայի զավակն է, պատրաստ ուրիշի վրա նետվելու, բայց թույլ չի տալով որ ուրիշ մը համարձակի իրմե փող կորզել։ Այսպես, տեսնելով, որ Սաղաթել ծախսի հաշիվներու վրա վերադիրներ, խամիններ կընե, Բագրատ կր գոչե անոր երեսին.

— Իմ գործերու մասին ձեռներդ մաքուր պահե՛։

Իր քույրը Ռոզինա հարուստի շփացած ու փճացած աղջիկն է. արդուզարդի ունայնութիւնց և իր պատկանած դասակարգին իրավունքները խստութիւնամբ պահպանելու հետամուտ։ Չի ներեր որ ծառան Վարդանը՝ ես ու դուն որ խոսի հետը։ Ազգային զգացումն ալ բացակա է իր սրտեն։ Օտարացած աղջիկ։

Մյուս եղբայրը, տանը անառակ որդին, Սուրենն է, մսխող, խաղամոլ ու զվարճասեր տղա, որուն սակայն հոգիին մեջտեղը ազնիվ ու մաքուր է։ Իրենց հարստութիւնը աղտոտ ծագումին վերահաս եղածին պես, իսկույն կը պատրաստվի անկե հրաժարելու, մինչդեռ Բագրատ, հորը արժանի զավակ, ամեն նենգության աչակից ըլլալու պատրաստ է այդ հարստութիւնը

ձեռքե չի հանելու համար։ Ասոնց աչքին պատիվը դրամն է ու ամեն բան ընելու կարող են այս պատվին համար։

Իսկ հերոսուհին կրտսեր քույրերնին է. Մարգարիտը սրտի ու մտքի տեր աղջիկը, մոայլ խորհուրդներով ծանրաբեռնված այս տան մեջ միակ լուսավոր դեմքը։

Հետո՝ մայրերնին երանուհին պարզամիտ ու աստվածավախ կին որ իր աղվորությանը համար, Անդրեասին հետ ամուսնացած էր։

Ահա ընտանիքին բոլոր անդամները. անոնց վրա թե որ ավելցնենք Արտաշես Օթարյանը, Անդրեասին կողոպտած ընկերոջը որդին որ Մարգարիտը կը սիրե, փիեսին անձինքը կամբողջացվին։ Գործողությունը կսկսի անով որ Օթարյանը ձեռք կանցընե կարգ մը Անդրեասին ստորագիրը կրող հին վավերագիրներ որոնք այս վերջինին հարստությանը՝ Օթարյանին պատկանիլը կը հաստատեն։ Օթարյան կուզե որ իր իրավունքը ճանչցվի ոչ այնքան դրամի համար, քան թե վերցնելու համար իր վրայեն Անդրեասի ողորմությամբը ապրած լինելու նախատինքը, որ զինքը Մարգարիտին առջև նվաստացուցիչ դիրքի մը մեջ կպահե։

Կերևակայվի Անդրեասին սարսափը երբ այս վավերագրերուն գոյությունը կիմանա։ Ամեն թուղթ ոչնչացած կը կարծեր։ Հրիտասարդ Օթարյանի քանի մը հազար մանեթ տալով ձեռքեն ստորագրություն մը կորզելու կը ջանա ու չի հաջողիր։ Դատի սպառնալիք կա։ Իր հարստությունը, 700.000 րուպլը, երեվակայեցեք, կորսվելու վրա է։ Այն ատեն երիտասարդին Մարգարիտին համար ունեցած սերեն օգտվելու գարշելի գաղափարը կը հղանա, բայց Մարգարիտ իրեն գործակից չի կրնար ըլլալ. զայն խաբելե ուրիշ հնար չկա։ Ստուտ զայրույթով մը իր աղջկանը դեմ կը բարկանա ըսելով որ Օթարյանը զրպարտիչ մըն է և իր աղջիկը դատավոր կընե այս մասին ըսելով, «դո՛ւն ուզե, առ Օթարյանին փաստերը ու վավերագիրները. պիտի տեսնես որ ոչ իսկ թուղթի կտոր մը ունի»։

Մարգարիտ այս նենգավոր խոսքերեն կը խաբվի։ Օթարյանեն կը պահանջե այդ թուղթերը տեսնել ու այս վերջինը առանց վարանելու, թուղթերը իր սիրուհույն կը հանձնե։

Մարգարիտ զանոնք հորը կը ցուցնե որ անոնց ճշտությունն ճանչնալու կը պարտավորի։

Բայց գիշերը Սաղաթելին հետ համախորհուրդ, իր աղջկան սենյակեն թուղթերը կը գողնա ու կը վառե։ Այսպեսով կը պահե իր հարստությունը ու պատիվը։ Իսկ Մարգարիտ այդ թուղթերու փճացումին մասին իր սիրողին դեմ ինքզինքը արդարացնելու անկարող՝ կյանքին վերջ կուտա։ Անդրնաս երկու ձեռքը գլխուն կը զարնե, որդեսպան մըն է ինքը այսուհետև։

***

Այս է նյութը զոր հարկավ շատ թերի, շատ անզոր կերպով ուրվագրեցի այստեղ։ Հատոր մը պետք է ամբողջ այս հրաշակերտը վերլուծելու համար։ Այս բոլոր դեմքերեն ամեն մին Շիրվանզատե իր սուր ու անողոք գրոցով փորագրած է։ Շոփենհաուեր կըսե որ թատերագիրը՝ ճակատագիր ըսել է, որովհետև ինքն է որ իր ստեղծած անձերուն բախտը կորոշե. ճակատագրին պես ալ անողոք ըլլալու պարտավոր է։ Շիրվանզատե Պատվի համարին մեջ ժամանակակից պուրժուազիեն բոլոր թիփերը լիաբուռն սփռած է։ Փիեսին կազմվածը իր պարզությանը մեջ հոյակապ է և հյուսիսի գրականության հորինվածը կհիշեցնե։ Ռուսահայ թատերագիրը շատ բարձր է Օքթավ Միրպոյեն որ սակայն Ֆրանսայի փառքերեն մեկն է, իր տարազն Հանրի Պեքի դաժան՝ բայց անկեղծ նկարագրությունն է իրական կյանքի դրվագներե վերցված։

Եթե դասական տեսակետե դատվեր, Շիրվանզատեի գործը այն տեսն ալ իր մեծ նշանակությունը պիտի ունենար։

Մարգարիտին շվարումը՝ մեկ կողմե ավանդ դրված այս թուղթերը գողցուցած ըլլալու պատասխանատվությենեն, մյուս կողմե իր հայրը մատնելու պարտավորությանց առջև, զոր իր մահվամբը կը քավե, այնպիսի շքեղ տեսարան մըն է որ հին ողբերգությանց ցնցումը կուտա։

Իր խոսակցությունը dialogue-ը որ ոևէ թատերական փիեսի հաջողության առջի պայմանն է, երբեք այսքան ժողովրդական պարզությամբ և խիզախությամբ չէր փայլած որչափ այս փիես-

սին մեջ։ Մեկ ծայրեն մյուսը սուրերու բախում մըն է կարծես, լույսեր ու բոցեր արձակելով շարունակ։ Ամեն բառ գնդակի հարվածի պես ուժգին ու սաստիկ է։

Պոլսահայ հասարակությունը այս ռուսահայ բարբառը իմանալու համար դժվարություն չունեցավ, նույնիսկ ամեն մեկ բառին բովանդակ ուժը ղգաց ու հասկցավ։

Պաքուի տրամաթիք խումբը որ ներկայացուց Շիրվանզատեի փիեսը, հայտնություն մը եղավ ամենուս համար, ապշեցուցիչ, հիացուցիչ հայտնություն մը։

Այս վերջին մեկ քանի ամիսներու մեջ թե՛ տեղական և թե դուրսեն մեծադղորդ ծանուցումներով զինված խմբակներ, հայերեն լեզվով կարգ մը ներկայացումներ տվին ու պետք է խոստովանիլ որ հայ լեզվով թատերական ներկայացումներ տեսնելու հառնդնիս ցրտացուցին։ Համբակներ ու թերուսներ կամ հինցած ու փճացած ուժեր՝ կյանքի ըմբռնումե ու գրական զարգացումե զուրկ էին։ Եվ ի՞նչ եղավ մեր զարմանքը, երբոր ուրբաթ գիշեր Պաքուի տրամաթիք խումբը Շիրվանզատեի հոյակապ գործը նույնքան հոյակապ արվեստագիտական տաղանդով մը ի հանդես բերավ։

Պ. Աբելյան, Անդրեաս էլիզբարյանի ճնշիչ դերին մեջ, անստգյուտ կատարելությամբ մը ցույց տվավ որ լիովին ըմբռնած է Շիրվանզատեի գծած վաճառականի դեմքին բոլոր գիծերը, ամենեն նուրբերեն սկսելով մինչև ամենեն թանձրերը, այդ նկարագրին հոգեկան ազդակները, ընկերական ըմբռռնումները, առուտուրի մարդու բարոյականը, խորամանկություններն ու ճարտարությունները։ Այս ամենը այնքա՛ն հարազատ կերպով պատկերացած էր իր դեմքին վրա, այնքա՛ն ճշգրիտ կերպով խտացած իր շարժուձևին մեջ, որ մտքովս ըսի թե մի՛ գուցե պ. Աբելյան առևտուրի աշխարհեն վտարյալ մը ըլլա և ո՛չ աննման արվեստագետ մը։ Հիշեմ այստեղ երկրորդ արարվածին մեկ տեսարանը ուր իր ընտանիքի բոլոր անդամ-

ներուն վրա իր ցասումը կը թափե, կը վռնտե զանոնք։ Ականջիս մեջն է իր ձայնը.

— Դե՛հ, կորե՛ք, հայտա՛...

Պարզապես հիանալի է այն դիմափոխությունը որով նույն վայրկյանին Օթարյանի թուղթերը ձեռք անցընելու համար կը հաշտվի իր աղջկան՝ Մարգարիտի հետ, շոյելով անոր գլուխը.

— Ա՛յ օրհնյալ ինիս, աղջի՛կս, դու բարի սիրտ ունիս։

Ու երբ Մարգարիտ Օթարյանեն առած թուղթերը ցույց կուտա իրեն, իր անմեղությանը վստահ արարածի մը ամբարտավանությամբ, ըսելով անոր.

— Քննի՛ր և տես։

Իսկ հոն ուր ինքզինքը գերազանցեց, չորրորդ արարվածին այն տեսարանն է ուր Օթարյանին փաստերը գողությամբ ձեռք անցունելե հետո՝ անոր դեմ լրբությամբ կը կանգնի ու մարդ ճամփա դնելու սովորական բանաձևովը Սաղաթելին դառնալով կըսե.

— Ելիր կլուպ երթանք, փոեֆերանս խաղալու. կլուպ երթանք։

Տիկին Արմենյան Մարգարիտի դերը ուներ։ Միմիայն իր «դուրս գալը» սենյային վրա հաջողություն մը եղավ, անոր համար որ նախ ամեն շնորհալի կնոջ դեմքը ինքնին հաջողություն մըն է արդեն։ Տիկին Արմենյանինը հաղթանակ մը դարձավ, երբ իր խաղը տեսանք, երբե՛ք այսքան շնորհ, այսքան նուրբ ու այսքան արտահայտիչ դեմքի մը վրա միացած չէր։ Իր ձայնին քաղցրությունը ու արտասանության վճիտությունը, ճշմարիտ հրապուրանք մըն էր. ամենեն խորունկ տպավորությունը թողուց, երբ թուղթերու գողության պահուն քունեն սթափելով, ճերմակներու մեջ փաթթված, վրեժխնդիր ոգիի մը պես հորը ետևեն խոյացավ, ու ավելի առաջ երթալու անկարող, գետինը փովեցավ։

Իսկ պարզապես հրաշալի էր չորրորդ արարվածին մեջ, երբ իր հորը աղաչեց որպեսզի ետ տա գողցված թուղթերը։

«Հայրի՛կ, հայրի՛կ» աղաղակը բոլոր սրտերը գղրդեց։ Ու, թուղթերուն կրակի մեջ նետվելով փճանալու պահուն իր դեմքին զարհուրած արտահայտությունը, իր քարացումը, ար-

ծանացումը, կապկպված լեզվին տեղ՝ մեծ-մեծ բացված գեղեցիկ աչքերուն նայվածքը, այն mimiqueի գլուխգործոցներեն է որոնց իրականացումը մեծ տաղանդներու վերապահված է։

Մյուս բոլոր դերակատարներուն առթիվ ալ իմ զմայլանքս հայտնելու համար դեռ շատ մը էջեր լեցնելու եմ։ Բավականանամ միայն շնորհավորելով պ. Արմենյանը որ Սուրենի դերով ճշտիվ պատկերացուց «Անառակ Որդվույն», բայց անառակությանը հետ՝ հոգեկան ազնվությունը պահող երիտասարդի նրկարագիրը որ կերպով մը Ռյու Պլասի մեջի Տոն Սեզար որ Պազանը կը հիշեցնե։

Պ. Բիրոյան ոչ նվազ հաջողությամբ երևան բերավ Բագրատի դերին մեջ դրական իմաստասիրությամբ ախտավարակ սերունդի մը չոր ու ցամքած սիրտը. տարիքնուն առաջ ծերացած տղաքներ՝ որոնք բանաստեղծության սփոփանքեն ու վայելքեն իսպառ հրաժարած են. մոայլամած մարդիկ որ շարունակ տրտմության քող մը կը նետեն մարդկության երեսին վրա։

Պ. Ազյան՝ Սաղաթելի տարապայման կերպով դժվարին դերին, Ոսկանյան՝ Օթարյանի, տիկին Պուրժալյան՝ mondaine աղջկան, տիկին Զապել՝ ավազակ էրկան մը ձեռք ինկած նրկուն և ջերմեռանդ կնկան մը դերերնուն մեջ ճշմարիտ արվեստագետներ հանդիսացան։ Փիեսը այնպիսի մաեսթրոյով մը ներկայացավ որ անպատմելի հմայք մը գործեց բոլոր սրահին վրա։ Ադամյանի մահվընեն ի վեր Պոլիս ասանկ արվեստական ներկայացում տեսած չէր. ֆրանսական մեծ tournéeներու ներկայացումներն անգամ այս տպավորությունը չկրցան ձգել, այն պատճառով որ անոնց մեջ մեկ-երկու առաջնակարգ դերասանի շուրջ բոլորված են անհավասար և աննկարդաշնակ կարողություններ, իսկ հոս բոլորը ներդաշնակապես կցված, հավանականաբար, երկար արվեստակցությամբ մը միևնույն զարգացումը ու ըմբռնումը ստացած են։ Այս խումբը, հակառակ պայմանագրական կանոններու, ռեքլամներ չըրավ թերթերուն մեջ, իր ծանուցումը այս ներկայացումը եղավ և ասկե ավելի շքեղ ու հզորը չէր կրնար ըլլալ։ Առանց վերապահության կրնամ հայտարարել որ այս տրամաթիք խումբը հայոց գեղար-

վեստական փառքն է։ Յավեցա միայն որ ռուսահայերը թատերական ասպարեզին վրա ալ գերազանցութիւնը խլեցին մեր ձեռքեն, անիրավնե՛րը։ Այս խումբին հաջողութեան մեկ մեծ բաժինը կը վերաբերի տրված փիեսին ինքնին հոյակապ գրվածք մը ըլլալուն, անոր համար վերջին կնոյներու մեջ Շիրվանզատեի անունը կցեցի իր դերակատարներուն անունին։ Երկուշաբթի գիշեր խումբը Շիլլերի Ավազակները պիտի ներկայացնե, կերևա թե սեռին ավազակներուն հատկացված է. պուրժուաներու ավազակներեն վերջը՝ Շիլլերիններըե։

Ժամաձակ, 14—12—1908

1910

ՀԱԿՈՏՆՅԱՆԵՐ

Աշխարհագրության դասերուս մեջ, աղեկ կը հիշեմ, ամենեն էվել միտքս չարչարողը հակոտնյաներն էին։

Ուսուցիչը որ ներշապուհն էր, աչքիս առջևն է. թխաթույր դեմք մը որուն վրա ճիշտ աչքին ու ընքվիին քովիկը բուսած ուռ մը իր ստվերը կավելցներ, առանց բան մը պակսեցնելու անոր ազդած պատկառանքեն։

Նոր սերունդը չի ճանչցավ այս ուսուցիչը որ հին մաթեմաթիկոս, վերջին պահուն ոտանավոր գրելու ախտեն բռնված մեռավ։

Ականջս է իր թավ ու դաշն ձայնը, երբ որ տասներորդ անգամը ըլլալով գուցե կը ջանար վայելուչ և հասկնալի սահման մը տալու հակոտնյային.

— Մարդ մը որուն կեցվածքը ճիշտ մեր կեցվածքին հակառակը, կրմբռնե՞ք, տղա՛ք...

Ո՛չ, չէինք ըմբռներ. երկրիս կլորությունը պիտի ըսեք. բայց տասը տարեկան տղաք, և պետք է ավելցնեմ, որ շատ մը տարիքնին առած մարդիկ իսկ, դժվարություն կը քաշեն ընդունելու համար այս ենթադրությունը։

Այնպես որ հակոտնյան կերևակայեի գլուխը գետնին վրա

դրած և ոտքերը վեր տնկած մարդ մը, տեսակ մը clown զոր Փերա սիրքին մեջ հաճախ կը տեսնեինք ատեն մը։

***

Անկեց ի վեր տարիներ անցան. բայց դպրոցականի շրջանիս այս տպավորությունը չի կրցա բոլորովին մերկանալ։

Մինչև այսօր գլխու վրա կեցող մարդոց ամեն տեղ կը հանդիպիմ. կը բարևեմ զիրենք, երբեմն կը խոսիմ հետերնին. կան որ ծանոթներս են։

Պետք է խոկալն ավելցնեմ որ ընդհանրապես պատվավոր մարդիկ են ասոնք։ Պատվավոր՝ այն առումով որ եթե անպատճառ անբասիր վարք ու բարք մը չի նշանակեր, գոնե ուղղակի դատարան և բանտ առաջնորդող անպարկեշտություններ զգուշություն կենթադրե։ Միշակ պատվավորություն՝ որ ճոխ սեղանի մը շուրջը, կանոնավոր մարսողության մը պահուն մաքուր խղճմտանքի մը ցոլացումը կուտա մարդուս երեսին. հարաբերական պատվավորություն՝ զոր Շեմելֆինկ առուտուրի մարդոց բարոյականին վրա տեղեկություններ ծախող տունը՝ իր չափված, ձևված, հաշվված ասացվածքներովը խիստ լավ կը բացատրե երբեմն իր նամակներուն մեջ։

Հակոտնյան սովորաբար եկեղեցասեր է, ինչ որ ոչ միայն չի վնասեր, այլ վարկի բարձրացման ալ կը ծառայե որոշ չափով մը. հետո մուտք կուտա ազգային գործերուն որ Պոլսո մեջ դիրք մը կազմե։

Տգետ հակոտնյան կա, բայց ուսած զարգացած հակոտնյան ալ չի պակսիր։ Սովորաբար լավատես ու զվարթախոհ է. չեմ պնդեր թե ամեն նուրբ հեգնություննները կը ճաշակե, բայց կատակը կը սիրե և պզտիկ համեստ խնդուքով մըն ալ կստորագծե երբեմն, զգուշանալով բարձրաձայն քահքահեն որ «բանը գործը գիտցող» դասին մեջ անվայել կը նկատվի։

Մեր հասարակության մեջ հակոտնյան անհրաժեշտ տարր մը կը ներկայացնե, պահպանողական ոգին, որ Հետադիմություն ալ կը նշանակե. նոր ստեղծված թիփ մը չէ, ի վաղուց անտի գոյություն ունի և արկե վերջն ալ պիտի ունենա. բայց

Տարվինի օրենքներուն համաձայն՝ իր ապրած միջավայրի պայմաններուն հարմարած և ըստ այնմ զինված էր։

Կոչումով կղերին պաշտպան, եկեղեցիին ալ անձնվեր զինվորն է ան. քսաներորդ դարու Կոտրֆրուա տը Պույոնը, եթե ոչ Թարթյուֆը, վերջապահի՛կ ասպետ՝ որ ի հարկին կարող է խաչակրութիւն մը կազմակերպել նորօրինակ Արշակավանի մը բոլոր բնակիչներեն, պահպանելու համար իր ժամուն մուտքը։

Իր իսկական ու անսեթևեթ կերպարանքին մեջ «գործի մարդն» է, նեղութիւնամբ, չարչարանքով հասած, դիրք մը շինած մարդը. նկարագրի տեր թե որ կուզեք, անսայթաք քալողը ամեն ծուռ ու մուռ ճամփաներեն, առաքուր կոխող անցնողը ամեն պզտիկ ու մեծ, չնչին ու երբեմն ահավոր արգելքները, փոքրիկ ծաղիկեն սկսելով մինչև իր խղճմտանքը։

Անպատճառ առուտուրի մարդ չէ ան. գրող, օրագրող Հակոտնյան ալ կա, այս վերջերս մանավանդ, շատ տարածված։

Այս նոր սեռը Հեղափոխութիւնը կատե՝ բայց ռամկավարութեան հետ հաշտ է. մտավորական մը ըլլալու չափ պաշար չունի և գաղափարի մարդը ըլլալու պետքը չզգար իր հոգիին մեջ. հավիտենական վարձկան մը ըլլալու պատիվը կը բավե իրեն։

Խնդրանքի և Մատուցումի մեծ օրենքին համաձայն՝ շատ կը փնտրվի ան այս օրերս մանավանդ, իհարկե ոչ շատ մարդուր, ոչ շատ ազնիվ պայքարի մը համար։ Իտալիո մեջ ատեն մը condottieriներ, braviներ կային, ուրիշի հաշվին կին առևանգողներ, մարդ սպաննողներ. գրչի հակոտնյան այսօր միևնույն արհեստը ի գործ կը դնե մեր հրապարակագրութեան մեջ։

***

Հակոտնյան մեր մեջ պատմական մեծ դեր մը կատարելուն համոզված է, եկեղեցասեր պահպանողականի դերը, կրոնվելով ժողովուրդին դեմ, մտավորականներուն դեմ, երիտասարդութեան դեմ, ճիշտ այն երեք լույսերուն դեմ՝ որոնցմով մերինին նման ճակատագրապես դժբախտ ազգերը նեղութեամբ կը հառաչանան իրենց ճանապարհին վրա։

Ֆրանսացի հեղափոխականներուն la patrie en danger փո-
ղածին նման, կրոնքը ու բարոյականը վտանգի մեջ է կաղա-
ղակն ան ամեն տեղ, երկու գաղափար՝ որոնց համար իր բար-
բառովը «կուտ մը» անգամ չի տար, իբրև ճշմարիտ գործի
մարդ։

Ուշադրություն ըրեք երբոր փողոցը մեկու մը կը հանդիպիք
որ ազգին բոլոր հոգերը շալկած մարդու մը գիտակցությամբ
ծանր ծանր կը քալե. ուսերը կը կքին այս բեռին ծանրության
տակ, տեսեք սա մարդը որ կը ծիծաղի հագուստ չունեցող ժո-
ղովուրդին վրա, որ նրբամտություններ կը թափե Ռուսինյանի
պես ըսելով.

Ո՞վ է սա հովկուլ հուղկահարն
Որ աչքն ի դուրան և քիթն ի քամի
Մաքիստրիկ քալլով կուգա ի հանդես

Տեսեք զինքը երբոր մտավորականը՝ անաստված, հեղա-
փոխականը՝ ազգավնաս կը կոչե. տեսեք երբոր մաղձով, թուչ-
նով, ժահրով լեցուն իր լեզվին ծայրովը աղտոտել կուզե ինչ
որ կա մնացած դեռ մեր մեջ բարձր և ազնիվ. տեսեք, ուշա-
դրություն ըրեք իր դեմքին,

— Հակոտնյան է անե

Ազատամարտ, 28—7—1910

<ՋՈՀՐԱՊԻՆ ՃԱՌԸ>

«Հայրենակիցնե՛ր,

«Ամեն ազգ, ամեն ժողովուրդ իր տոները ունի, ո՛րը թագավորության մը ծնունդը, ո՛րը ազատության մը ձեռք բերվիլը, ո՛րը պատերազմի դաշտին վրա շահված հաղթանակ մը կը տոնե։ Ասոնք քաղաքական նշանակություն ունին։ Մենք այստեղ ժողվվեր ենք մեր ազգային լեզուն տոնելու. անիկա քաղաքական չէ, այլ քաղաքակրթական հանգամանք մը ունի։ Քաղաքական տոները հաճախ արյան բիծեր կունենան իրենց վրա, մեր տոնածը զերծ է այդ տեսակ ցավե։ Թագավորությունները կիյնան, ազատությունները կը ջնջվին, հաղթանակները հաճախ պարտություններու կը փոխվին, բայց լեզուն կը մնա, ազգի մը ճակատագրին պես անջնջելի։

«Հայ տառերուն գյուտովը Հայ լեզուն ևս ազատելով իր արկածալից կյանքեն, հաստատուն ձև մը ստացավ. ահա՛ ասոր համար է որ Հայ լեզվի տոնը կը միանա Հայ տառերու տոնին հետ։ Ես պատմականը չպիտի ընեմ Հայ տառերու գյուտին, այլ անոր երկու հանգամանքներուն վրա պիտի ծանրանամ.— Առաջին՝ անոր կատարելություն է։

«1500 տարի ետքը այսօր մեր այբուբենը ոևէ պակասու-

թյուն չկրեր։ Եթե բոլոր օտար լեզուները արտասանելու մեջ հեշտություն ունինք, ատիկա մեր այբուբենին ճոխության կը պարտինք։ Ասոնք չնչին առավելություններ չեն, այո՛, որովհետև չկա մարդկային գյուտ մը՝ որոշ ժամանակ մը վերջ իր այժմեությունն ու գործածականությունը կորսնցուցած չըլլա։ Երկու աստվածներ՝ մեկը ժամանակը, մյուսը պետքը՝ որոնցմով քաղաքակրթությունը շինված է, ձեռք ձեռքի տված շարունակ կաշխատին նորությունները փճացնելու։ Նորություններ նորություններով կը փոխանակվին։

«Ճշմարիտ հանճարը ահա՛ այս հատկություններով է որ կը զանազանվի սովորական հանճարներեն։ Այս պատճառով մեր նախնիքը այդ գյուտին մեջ հրաշք մը տեսած են. ատիկա նկատած են ընծա մը, միակ ընծան այն ազգին, որուն ա՛յնքան աղետներ տված է։

«Երկրորդ հանգամանք.—

«Թե՛ Հայ լեզվի և թե Հայ տառի մասին աշխատողները լայնախոհ ազատականությամբ մը կատարած են իրենց գործը, նեղմիտ չեն եղած և մեր դրացի ազգերեն փոխառություններ րած են։ Ահա՛ այդ փոխառություններուն է որ կը պարտինք մեր գրական ճոխությունը։ Եկեղեցականության համար պատիվ մըն է որ այդ գյուտը ընողները եկեղեցականներ են։ Եկեղեցականին պարտականությունը միայն աղոթել չէ. տեսե՛ք Ղևոնդները։ Նախկին եկեղեցականները խաղաղության ատեն գրականությամբ զբաղեր են և պատերազմի ատեն այ ոազմադաշտ գացած։ Այս մասին շատ անուններ կրնամ հիշել. բայց նախ կողջունեմ այն աճյունները, որոնք Աշտիշատի և Օշականի մեջ կը հանգչին (բուռն ծափեր)։

«Մեր եկեղեցին տառերու գյուտը ընողները սուրբերու կարգը անցուց։ Ի՞նչ է սրբությունը։ Միթե եկեղեցիներու և վանքերու մեջ առանձնանալ, ծոմ պահել, ոչ ոքի չարություն չընել կը բավե՞ն սրբության համար։ Ո՛չ։ Սրբությունը ա՛ն է որ մարդ ուրիշներուն ցավերը կամոքե և իր անձը մոռնալով անոնց համար կաշխատի։ Այսօր 20րդ դարու սուրբեր են Մարքոնի, Էտիսըն, Փասթեռ, Ալև։ Երբ մարդ իր հայրենակիցներուն համար իր կյանքն ու դիրքը վտանգի կը դնե, անիկա ալ ազգին

սուրբն է։ Երբ ուշադրությամբ հետևինք հայ պատմության, կը տեսնենք որ գիրի գյուտը հայուն գոյության ամենամեծ ազգակը եղած է։

«Վերջին 100 տարվան գրեթե ժամանակակից պատմության վրա աչք մը նետենք։ Անցյալ դարուն սկիզբը գրականություն չկար. գրաբարը կորսված էր, իսկ աշխարհաբարը դեռ չէր կազմված։ 1850ին Մամուլը սկսավ հրատարակվիլ, հետո Մխիթարյանները սկսան։ Օտյանի[1] պես հոյակապ անձ մը պզտիկություն չսեպեց իրեն գրականությամբ զբաղելու և անով պատվվելու։ 1870ին թե՛ Թուրքիո և թե Կովկասի մեջ գրականությունը զարթնում մը ունեցավ։ Այնտեղ ծագում առին Աբովյան, Րաֆֆի, Միք. Նալպանտյան ևլն։ 1880ին հայ գրականությունը արդեն բոլոր գրականություններուն մեջեն իր գլուխը վեր բարձրացուցած էր։

«Եվ կը վիճակվի որ 15 դար վերջ Աշխարհաբարի Ոսկեդարը իրմե առաջ պանծացող Գրաբարի Ոսկեդարը ողջունե։ Ազգ. կյանքը ևս վերջին 100 տարվան մեջ մեծ զարթնում մը ունեցավ, մանավանդ 1860ին, երբ Ազգ. Սահմանադրությունը հրատարակվեցավ։ Անկե 20 տարի վերջ կրթական և ազգային ընկերություններ կազմվեցան։

«Եթե քննենք ազգի մը իյնալուն պատճառները, պիտի տեսնենք թե ա՛յն ազգը որ եսականությամբ օժտված է, ո՛րքան հույս և կենսունակություն ալ որ ունենա իր մեջ, նորեն կիյնա այդ ազգը։ Իսկ երբ եսականության տեղ այլասիրություն և ազգասիրություն տիրե, ո՛րքան ալ հուսահատ ըլլա այդ ազգը, նորեն չմեռնիր (ծափեր)։

«Մեր ազգին ճակատագրին մեջ գոյություն ունեցող հակասության պատճառը ա՛յն է որ, Հայը կազմված է երեք գլխավոր ցեղերե. 1. Ասիացի Արարատցիները, որ իրենց խաղաղ հոգին և ժայռի պես տոկուն նկարագիրը ձգած են մեզի։ 2. Խայերը կամ Խաթերը, որ իբր Փյունիկյան ազգ իրենց առևտուրի հնարիմաց միտքը ժառանգ թողուցած են, և 3. Արմենները, որոնք Եվրոպացին գալով իրենց միտքի նրբությունն ու ճաշակը տված են մեզ։ Այս երեք ցեղերու միացումին ատեն հաջող շրջան մը չէ եղած, ա՛յս է պատճառը մեր անմիաբա-

...որը պետք է միշտ գործակցին և ասոր հա-...լոզուն ամենեն մեծ ազդակն է։

«Ո՛վ ենք մենք ազգերու ժողովին մեջ. պապուկ մը, աղքատ մը։ Ֆրանսացի բանաստեղծ մը կըսե. «Պապուկները, հա՛, բայց անոնք ալ իրենց գանձերը, իրենց երազները ունին»։

«Մենք ալ իբր ազգ, մեր հույսերը, մեր հիշատակները և մեր երազները ունինք, և այդ հիշատակը անշեջ պահելու համար է որ մեծ տոնը կը տոնենք։ Եվրոպացի գիտնական մը ըսած է. «Մեծ կայսրություններու անկման պատճառները իրենց մեջն են»։ Ես պիտի ըսեմ.

«Մեզի պես պզտիկ ազգերը իրենց վերականգնումի հույսերը իրենց հոգիին, իրենց սիրտին և այսօրվան պես իրենց հիշատակներուն մեջ կը կրեն» (ծափեր)։

Ժամանակ, 27—10—1913

Պանորամություններ

Այս հատորի մեջ մտած նյութերը առնված են մամուլից և գրքերից։ Հոդվածների մի մասի մեջ, որոնք արտատպվում են՝ Գրիգոր Զոհրապ, Մեր կյանքեն... ժողովածուից (Գահիրե, 1945 թ.), կան լեզվական և կետադրական աննշան փոփոխություններ՝ առավելապես գրաբարյան կամ հնացած ձևերին վերաբերող, որոնք, հավանաբար, կատարել է ժողովածուն կազմողը։ Օրինակ. խնդրոց դարձված է խնդիրներու, չի պիտի ուզեն—պիտի չուզեն («նոր լրագրությունը»), առնչություններիս—մեր առնչությունը, նմանություններիս—մեր նմանությունը, փորձերը կրնա փորձել—փորձերը կրնա կատարել («Թատրոն»)։ Մի շարք հոդվածներում որ դարձված է որոնմ և այլն։ Այդօրինակ ուղղումներ կան վերոհիշյալ ժողովածուից առնված գրեթե բոլոր հոդվածներում, որոնց ցանկը բերում ենք այստեղ՝ Անբարոյական գրականություն, Հայ թատրոնի նավարկությունը, Աչ և ձախ, Համալսարանական կրթություն՞ պակասությունը մեր մեջ, Լեզվական խնդիր, Նոր լրագրություններ, Ուսուցչական ժողով, Երգը, Թատրոն։ Լեզվական ուղղումներ կան նաև նույն ժողովածուից առնված Ջինական նամականիի մեջ։

Օտար բառերի, տեղանունների, օտար անձանց անունների մեջ, ինչպես առաջին, նույնպես և այս հատորում, բ, գ, դ տառերը՝ ընթերցանության դյուրության համար, մեծ մասամբ, դարձրել ենք փ. ք. թ։ Օրինակ. բալթո—փալթո (վերարկու), բառդի—փառթի (խաղաշրջան), բեշ—փեշ (քղանցք), բայ ու բաժին—փայ ու բաժին, բիես—փիես (թատերկ), Շոբենհաուեր—Շոփենհաուեր, բոսթա—փոսթա (փոստ), բոբուրի—փոփուրի (երաժշտական եղանակ), Բերա—Փերա, Գատըգյուղ—Քատըգյուղ, Գոմեոի Ֆրանսեզ—Քոմեոի Ֆրանսեզ և այլն։ Որոշ բառեր և տեղանուններ հեղինակը գրել է երկու կերպ, մանավանդ իր սկզբնական երկերի մեջ։ Օրինակ, քոնսոլիտ և գոնսոլիտ, Փարիզ և Բարիզ, Քամելիաձարդ տիկին և Գամելիաձարդ տիկին.

Թաշ-Վերտիվէն և Դաշ-Վերտիվեն։ Թողել ենք առաջին ձևերը։ Այսօրինակ բուքյունը և վերը նշված փոփոխությունները, ամենևին չխանգարելով բա-ի արևմտահայ արտասանությանը, կդյուրացնեն ընթերցումը մեզ մոտ, առանց որևէ չափով դժվարացնելու ընթերցումը սփյուռքում։

Ավելացնենք նաև, որ հիմա էլ գաղթաշխարհի մամուլում և գրականության մեջ կարելի է հանդիպել օտար բառերի այսպիսի երկկերպ գրությանն։

Ջոհրապի՝ 1892, 1893 և 1898 թթ. հոդվածները մեծ մասամբ տպված են իբրև խմբագրական առաջնորդողներ։

Ծանոթագրությունների մեջ տեղ գտած որոշ անձանց կենսագրական տեղեկությունները կազմելիս օգտվել ենք Գ. Ստեփանյանի Կենսագրական բառարան անտիպ աշխատությունից, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

ԱՆՀԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Այս վեպը սկսել էր հրատարակել հեղինակը 1885ի մայիսից, Երկրագունտի մեջ, սակայն հանդեսի խմբագրությունը չի շարունակում տպագրությունը։ 1886ին ամբողջ վեպը տպում է Մասիսը, իսկ 1887ին լույս է տեսնում առանձին գրքով, որից և արտատպում ենք։ Տարակույս վերցնող մի քանի բառ ստուգել և ուղղել ենք մամուլում լույս տեսածի հիման վրա։ Վեպը երկրորդ անգամ հրատարակվել է Կ. Պոլսում, 1924ին։

ՆԱՐԴԻԿ

Տպված է Հայրենիք օրաթերթում, Կ. Պոլիս, 1891 թ., իբրև թերթոն, թիվ 7ից մինչև 27ը։ Վեպը տպելուց երկու օր առաջ թերթի խմբագրությունը հայտնելով, որ պիտի լույս տեսնի Գ. Զոհրապի վերոհիշյալ վեպը, ասում է. «Հա՞րկ է այս անունը [հեղինակի անունը] տալև հետո ըսել թե ազգային կյանքն այս վեպը որքան հրապուրիչ պիտի ըլլա»։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտատպվում են Գրիգոր Զոհրապ, Մանոք դեմքեր ու պատմվածքներ (Փարիզ, 1932) ժողովածուից։ Առաջին անգամ լույս են տեսել՝

Նախանձ, Երկրագունտ, Կ. Պոլիս, 1883, էջ 26—28

Ի սրտակուռ ման մտերմիս Միսաք Մանուկյանի, նույն տեղ, էջ 85—86

Հրաժեշտ, նույն տեղ, 1884, էջ 187—188

Նարկիլեն, Մասիս, Կ. Պոլիս, 1899, թիվ 12

Լուսնալու դեմ... Մասիս, Կ. Պոլիս, 1899, թիվ 12

Անծանոթը, Մասիս, Կ. Պոլիս, 1900, թիվ 7

Ջյուճը, Մասիս, Կ. Պոլիս, 1900, թիվ 7
Վառարանը, Մասիս, Կ. Պոլիս, 1901, թիվ 8
Հարցում, Մասիս, Կ. Պոլիս, 1901, թիվ 10
Համակերպություն, Մասիս, Կ. Պոլիս, 1901, թիվ 27
Ոչ ոք » » » թիվ 45
Ջատկի առթիվ » » 1902, թիվ 15
Հսկում, Լույս, 1908, թիվ 6
Հպարտություն, Լույս, 1908, թիվ 13
Տարակույս, Լույս, 1908, թիվ 22
Նկար, Լույս, 1908, թիվ 26

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ ԵՎ ՏՐԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտատպվում են՝ Չինական նամականի և Փոխր՝ Գրիգոր Զոհրապ, Մեր կյանքեն... Ժողովածուից։ Ուղևորություն մը հիշատակներուս մէջ ակնարկներից երկուսը, Մարգար ախպոր տեղը, Էվլվայս, Բարեբարբ, Կոտրված խոսքեր, Շիշլիի ազգային գերեզմանատունը մեռելոցի կիրակին, Թիքեոճիկներ՝ Գրիգոր Զոհրապ, Մանոթ դեմքեր ու պատմվածքներ Ժողովածուից, Կոտրվելճ եամբ, Մեղրագետից, Զ. գիրք, Կ. Պոլիս, 1914, մնացածը՝ մամուլից։

Առաջին անգամ տպագրվել են՝

Չինական նամականի, Երկրագունտ, Կ. Պոլիս, 1884, օգոստոս
Ուղևորություն մը հիշատակներուս մեջ, Մասիս, Կ. Պոլիս, 1889, թիվ 3925, 3926 և Մասիս, 1893, թիվ 3978
Քոխինամի, Հայրենիք, Կ. Պոլիս, 1891, թիվ 8
Փոխր, » » 1892, թիվ 202
Մարգար ախպոր տեղը, » » թիվ 327
Էվլվայս, Մասիս, Կ. Պոլիս, 1898, թիվ 3
Բարեբարբ, » » » թիվ 4
Բարեկենդանը » » » թիվ 9
Վերջին արեւագալը, Մասիս, Կ. Պոլիս, 1898, թիվ 47
Թիքեոճիկներ » » » ապրիլի 10
Շիշլիի ազգային գերեզմանատունը... » » » թիվ 55
Բեռին տակ, Արեւելք, Կ. Պոլիս, 1898, թիվ 3777
Կոտրված խոսքեր » » » թիվ 3821
Ապրիմ-մեռնիմ, Մասիս, Կ. Պոլիս, 1900, թիվ 3
Գիրեր պատերազմի դաշտեն, Ազատամարտ, Կ. Պոլիս, 1915, թիվ 1630. 1636, 1643, 1651
Հատվածներ, Արեւելք, Կ. Պոլիս, 1898, թիվ 3794
Հատվածներ » » » թիվ 3796

1. Հայր Արսեն—խոսքը Արսեն Բագրատունու մասին է։

2. Թերզյան—խոսքը Թովմաս Թերզյանի մասին է։ Տես Ա. Հատորի ծանոթագրությունը։

3. Ղոլյան Սրապիոն (1838—1919)—թատերագիր, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլիս։ Երկար տարիներ եղել է ուսուցիչ։ Գրել է մի շարք թատերկեր, որոնք, մեծ մասամբ, մնացել են անտիպ («Էլեոնորա», «Տիգրանուհի», «Գնել և Փառանձեմ», «Կայեն և Աբել», «Կարինե», «Կուրն Տիրան», «Արա Գեղեցիկ», «Մեծն Տրդատ», «Արշակ Բ.», «Գարեգին Ռշտունի» և այլն)։ Թարգմանել է մի շարք թատերկեր («Արյան բիծ», «Արքայն զրոսնու», «Երկու հիսնապետք», «Լիոնի սուրհանդակը» և այլն)։

4. Սեթյան Հովհաննես (1853—1930)—բանաստեղծ։ Հրատարակել է բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ՝ Հուզման ժամեր, Արշալույսեն վերջալույս և այլն։

5. Պերպերյան Ավետիս—հայտնի հայկաբան, ուսուցիչ, երկար տարիներ պաշտոնավարել է Պոլսի հայկական դպրոցներում։ Գրել է Հայոց պատմություն աշխատությունը, որը փաստորեն շարունակությունն է Ջամչյանի Պատմություն հայոց եռահատոր աշխատության։

6. Արփիարյան Տիգրան (1854—1914)—հրապարակագիր։ Արփ. Արփիարյանի եղբայրը։ Աշխատակցել է Մասիս և Արեւելք պարբերականներին, որոնք խմբագրել է հետագայում։

7. Ատրունի Պետրոս (1862—1922)—ուսուցիչ, խմբագիր, թարգմանիչ։

8. Ներշապուհ Գաբրիել—Կ. Պոլսի Օրթագյուղի Թարգմանչաց վարժարանի ուսուցիչ։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են 1893 թ., Գարևան շողեր, աշնան գողեր խորագրով։

9. Միքայելյան Սիմոն (1826—1878)—հայտնի մաթեմատիկոս, ուսուցիչ, կազմել է դասագրքեր։

10. Անդիներուն—խոսքը Մխիթարյանների մասին է։

ԲԱՐԵՐԱՐԸ

Այս ակնարկի հերոսը հավանաբար ունեցել է որոշակի նախատիպ, թեև գրված է որոշակի անձի մասին։ Լույս է տեսել 1898ին, երբ հայ մամուլում Տ. Գարակյոզյանի կտակի հարցը և ժառանգորդների խարդախությունները, կտակի գումարը իջեցնելու փորձերի խնդիրը դարձել էր բանավեճի առարկա։ Ջոհրապը, որ այդ ժամանակ Մասիսի խմբագիրներից մեկն էր, գրում է նա տվեմ օրհնությունները խմբագրականը («Մասիս», թիվ 99), որը, ինչպես ասում է ժամանակակիցներից մեկը, «ռումբի մը տպավորություն կը թողուց։ Մի քանի շաբաթ հետո Ջոհրապը գրում է երկրորդ խմբագրականը՝ Պատասխանատուն վերնագրով (թիվ 122), որի մեջ մեղադրում է Գարակյոզյանների

փեսա ումն փաստաբան Հակոբոֆին։ Սա Տ. Գարակյոզյանի կտակը կազմել էր այնպես, որ խարդախությունների դուռ մնա ժառանգորդների համար։ Հակոբոֆը պատասխանում է մի նամակով։ Մասիսը հրատարակում է այդ նամակը (թիվ 125)։ Հաջորդ օրը Զոհրապը գրում է դրա պատասխանը՝ Համոզումիս պատճառները վերնագրով (թիվ 126), որի մեջ Հակոբոֆի նամակը համարում է «ծփծփուն խոսքեր», «մշուշի մեջ ծալլված պատասխան մը»։ Զոհրապի գրած այդ հոդվածները այնպիսի ուժեղ տպավորություն են թողնում, որ գրաքննությունը հարկադրում է վենը դադարեցնել։ Զոհրապը տարբեր ժամանակներ գրած մի քանի հոդվածներում առհասարակ դատապարտում էր կյանքի վերջին վայրկյանին «բարերարություն» անելու սովորությունը, և այդ միտքը արտահայտված է Բարեարար ակնարկի մեջ։

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1 8 8 7

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զոհրապը լավ գիտեր Իզմիրը (Զմյուռնիա) և մի քանի անգամ, տարբեր առիթներով անդրադարձել է այդ՝ անցյալում հայաշատ ծովեզրյա քաղաքի հայ կյանքին, որը չափից ավելի ենթակա էր ֆրանսական մշակույթի, ինչպես և աշխարհականական շահեր հետապնդող այլ ազդեցությունների և զգալի չափով կանգնած էր խորթացման, ձուլման թեք զարիվայրին (տես՝ «Իզմիր» հոդվածը), և պատահական չէ, որ Ոսկաններիի, Մամուրյաններիի, Կոստանդյաններիի, Չիլինկիրյաններիի, Նուպարյաններիի սերունդից հետո, հայ մշակույթով զբաղվող այդպիսի սերունդ չառաջացավ։ Իզմիրը ուներ բավական զարգացած արդյունաբերություն և, ինչպես գրել է Զոհրապը 1913 թվականին Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ խորագրով ֆրանսերեն աշխատության մեջ, նրա մեծագույն մասը հայերի ձեռքին էր, ուստի իզմիրցի հայերը կարող էին նյութապես օգտակար լինել բնաշխարհի հայության կրթական գործին, որով խիստ շահագրգռված էր Զոհրապը նաև իբրև Միացյալ Ընկերության (որի նպատակն էր գավառում դպրոցներ բանալ) գործուն ղեկավարներից մեկը։

1 8 9 2

ՄԵՐ ՄԱՍԻՍԸ

Մասիս գրական հանդեսի հրատարակման առթիվ խմբագրության ծրագրային հայտարարությունն է, որ գրել է Զոհրապը, թեև ստորագրված է «Խմբագրություն» (տես՝ Հրանտ Ասատուր «Դիմաստվերներ», էջ 217)։

Այս հոդվածով, ինչպես նշում է Հր. Ասատուրը, հեղինակը «ուզղակի Ղևյանին (խոսքը Բյուզանդ Քեշյանի մասին է) կընդդիմախոսեր առանց յանուանէ տալու» («Դիմաստվերներ», էջ 224)։

1. Ուքյուէյան Կարապետ (1823—1904)—հայտնի հրապարակախոս, երեք տարիներ (1852—1884) խմբագրել է Մասիս պարբերականը։ Ավարտել է Փարիզի «ԵՒուտրական բարձրագույն վարժարանը», ապա հետևել է «Գոլեժ տը Ֆրանսի և Սորպոնի դասախոսություններուն» (Հ. Ասատուր, «Դիմաստվերներ», էջ 47)։ Ն. Ռուսինյանի Ուղղախոսության գլխավոր հակառակորդներից մեկը։ Պայքարել է նաև Տերոյենցի «հակաասհմանադրական, ավանդամոլ և կղերամիտ» ուղղության դեմ։ Ուքյուէյանը կատարել է բազմաթիվ թարգմանություններ, շուրջ հիսուն անուն գիրք, որոնց մեջ է Զոհրապի հիշատակած Տյու Փերյալի Գաղտնիք ճավատաճնությանը։

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ութսունական թվականների ռեալիստներից գլխավորապես Զոհրապը լրջորեն զբաղվեց արևմտահայ թատրոնի վերականգնման հարցով, նրա ընկած վիճակով, որ հետևանք էր համիդյան կառավարության ընդհանուր հալածանքների՝ 1878ի Բեռլինի վեհաժողովից հետո։ Արևմտահայ թատրոնը չափազանց տուժեց այդ հալածանքներից։ Թատրոնը տուժում էր նաև այն պատճառով, որ չկային ինքնուրույն բարձրարժեք թատերկեր։ Ռեալիստական գրական շարժման տեսադաշտից գրեթե դուրս էր մնացել թատերագրությունը, իսկ առանց ինքնուրույն թատերագրության ազգային թատրոնի զարգացումը անհնար էր։ Սա թատրոնի մասին Զոհրապի առաջին հոդվածն էր։

1. Վ. Հյուգոյի Ռյու Պլասի թարգմանությունը կատարել է Նահապետ Քուսինյանը, լույս է տեսել 1873ին (Պոլսում)։ Ի պատասխան Ն. Ռուսինյանի ֆիասկոյին, Վ. Հյուգոն մի նամակով արտոնում է երկի հրատարակումը՝ պայմանով, որ իր՝ հեղինակի իրավունքը աղքատներին տրվի։ Թարգմանիչը հեղինակին հայտնում է, որ հրատարակության ամբողջ եկամուտը պիտի հատկացնի նրա մատնանշած նպատակին։

2. Հակոբ Պալյան—հայտնի Պալյան ճարտարապետների ընտանիքից, թատերական գործիչ և մեկենաս։ Իր նյութական միջոցներով կառուցել է Պոլսի Օրթաքյուղի հայկական թատրոնը։ Մեռ. 1875 թ.։

3. Երկու եղեսպետը (Ռոթայի) և Փարիզի ազգատներք (Պրիսպար և Էժեն Սյու) մելոդրամաներ են, թարգմանված ֆրանսերենից, չեն տպագրվել։

ԱՋ ԵՎ ՁԱԽ

(Քրոնիկ)

Այս հոդվածի մեջ Զոհրապը՝ դիմելով եզովպոսյան լեզվին՝ քննադատում է ժամանակի ճահճացած իրականությունը, ուր չկար շարժում, չկար առաջադիմություն։ Կյանքի առօրյան բաղկացած էր «ռամիկ ու հասարակ» դեպքերից։ Հասարակական կյանքի «հարթաչափը» ոչինչ կարող էր արձանագրել «առափակութենե զատ»։

1. Մաղաքիա Օրմանյան, Տիրայր (1841—1918)—ականավոր պատմաբան, եկեղեցական գործիչ, Կ. Պոլսի պատրիարք։ Երեք գիտության (փիլիսոփայության, եկեղեցական օրենսգիտության և աստվածաբանության) դոկտոր։ Գլխավոր երկերն են Ազգապատում, երեք հատոր (հրատ. 1911—1927 թթ.) և Հայոց եկեղեցին, որ թարգմանված է լատիներենի և ֆրանսերենի։

2. Մրապիոն Հեքիմյան (1832—1892)—բանաստեղծ և թատերագիր։ Արևմտահայ թատրոնի հիմնադիրներից մեկը։ Գրել է գրաքննի թատերկերը։ Թատերկերը բեմադրվել են աշխարհաբարի փոխադրված։ Երկերը ամփոփված են Տաղ ևերքվածի և թատերգությունի խորագրով հատորի մեջ, լույս է տեսել 185 թվին։

3. Գրքի ճիշտ խորագիրը այնպես է, ինչպես նշված է վերը (ծանոթագր. 2)։

4. Հովհաննես Հյունքյարպեյենցյան (1818—1894)—լեզվաբան, կազմել է հայերեն ստուգաբանական բառարան, որ լույս է տեսել 1894 թ., Պոլսում։

<ԼԵԶՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ>

Գրված է իբրև խմբագրության կարծիք («Մասիսի նույն համարում տպված) Կ. Ուիյուճյանի Աշխարհաբարյան թե գրաբարյան հոդվածի առթիվ։ Կ. Ուիյուճյանը, որ երեսուներկու տարի խմբագրել էր Մասիսը և դրանով, ինչպես և իր բազմաթիվ թարգմանություններով, մեծ գործ էր տվել աշխարհաբարի զարգացմանը, 1892 թ. հանդես է գալիս գրաբարի պաշտպանությամբ, աշխարհաբարը համարելով սոսկ անցման կամուրջ դեպի գրաբարը և գտնելով, որ գրաբարով կարելի է նպաստել աշխարհաբարի մշակմանը։ Այս տեսակետներն է քննադատում Զոհրապը՝ իբրև «պինդ գլուխ աշխարհաբարյանը», ինչպես ասել է ինքն իր մասին։ Զոհրապը իրավացի էր իր այն կարծիքով, որ չէր կարելի աշխարհաբարի զարգացումը ենթարկել գրաբարին, սակայն նա սխալվում էր աշխարհաբարը համարելով «ուրույն և անջատ լեզու», քանի որ երկուսն էլ նույն ժողովրդի տարբեր ժամանակների լեզուներն են և նրանց հակադրությունը անժխտելի է, բավական է ասել, որ աշխարհաբարի բառապաշարի մեծ մասը գրաբարից է։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԾՈՂՈՎ

Ջոհրապը շատ մեծ նշանակություն է տվել դպրոցին և իր գործունեության առաջին օրերից մինչև մահը մտահոգվել է հայ դպրոցի վիճակով, միշտ նր օգնություն է բերել նրա զարգացման գործին։ Այս քերթոն-հոդվածում ծաղրելով «տիեզերական տղուն» համար ենթադրվող «ընդհանուր և միօրինակ նախակրթության պետքը», Ջոհրապը պահանջում է, որ նախակրթությունը պատշաճի յուրաքանչյուր վայրի «տնտեսական ու իմացական վիճակին», բարոյական պետքերին, օգտակար դառնա տեղական արհեստների և գյուղատնտեսության «կիրառումին», մայրենի լեզու սովորեցնի այն վայրերում, ուր հայախոս չէին։

1. Ռեքեոս Պերպերյան—տես Ա. հատորի ծանոթագրությունը։

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՒՇ

1. Առնված է Պ. Դուրյանի նեբա հետ բանաստեղծությունից։

1 8 9 3

ՏԱՐԻ ՄԸ

1892 թ. Մասիսը հրատարակում էին Գր. Ջոհրապը և Հր. Ասատուրը իրրև երեքշաբաթյա հանդես։ Տարվա վերջին Ջոհրապը առաջարկում է հրատարակել շաբաթը մեկ։ Հր. Ասատուրը չհամաձայնելով հեռանում է խմբագրությունից, և Ջոհրապը մենակ է հրատարակում իրրև տնօրեն և խմբագիր, մինչև 1893 թվի օգոստոսը։ Տարի մը հոդվածով հեղինակը նախորդ տարվա գործունեության հակիրճ հաշվետվություն է կատարում և հրավիրում է աշխատակցել նոր տարեշրջանին։

ՃԱՄՓԵՆ ՇԵՂԱՑ

Մինչև 1893 թ. սկիզբները Մասիսի և Հայրենիքի միջև, իրրև 80ական թվականների ռեալիստական շարժման օրգաններուն, գոյություն ուներ ամենասերտ կապ, երկու թերթերի աշխատակիցները փոխադարձաբար աշխատակցում էին իրար։ Այդ կապը շուտով խզվում է։ Հունվար 23ին Ջոհրապը գրում է ճամփեն շեղած հոդվածը, որով խիստ հարձակվում է Հայրենիքի վրա, մեղադրելով, որ նա շեղվել է իր դավանած և պաշտպանած ուղղությունից և հակառակ իր մի ժամանակ դավանած սկզբունքներին մեծ տեղ է տալիս իր էջերում հարուստների ամուսնության և մահվան նկարագրություններին։

ՊԱՐՊՎԱԾ ՕԴԱՊԱՐԻԿ

Ջոհրապի ճամփեն շեղած հոդվածին Հայրենիքը պատասխանում է Ոտքամտութենեն շեղած հոդվածով (1893, թիվ 369)։ Հոդվածը անստորագիր է, գրել է հավանաբար Հովհ. Շահնազարը։ Հայրենիքի քննադատության կոպիտ ձևը առաջ է բերում այս, ավելի խիստ պատասխանը։

1. Հոդվածի լրիվ խորագիրն է Մեծերը և պզտիկները մեր հասարակության մեջ։ (Հայրենիք, 9—1—1892)։

ԻՋՄԻՐ

1. Ստեփան Ոսկանը իր գիտակցական կյանքի ուղին սկսեց ինչպես վայել է հայրենասեր և առաջադեմ մարդու, մեծ մտածողի և ճշմարիտ հեղափոխականի։ Նրա առաջին շրջանի գործունեությունը միշտ բարձր է գնահատվել մեր գրականության, մեր հասարակական մտքի պատմության մեջ, և Ջոհրապը այդպես էլ ասում է («Այդ հրապարակագրին անցյալ գրական վաստակը կեցած է ու իր անունը մոռացումե փրկելու պիտի բավե»), սակայն հայրենասերի, քաղաքացու, հեղափոխականի ուղին կանգ է առնում այնտեղ, երբ մարդ կտրվում է իր ժողովրդից։ Այդպես եղավ Ստ. Ոսկանի ուղին։ Հանդիպելով հալածանքների, դժվարությունների, ճիշտ է շատ մեծ և հուսահատեցնող դժվարությունների, նա հրաժարվեց իր ժողովրդի մշակույթի զարգացմանը նպաստելուց և երեսունհինգ տարի հրատարակեց Իզմիրում La réforme ֆրանսերեն թերթը։ Ահա սա է, որ դատապարտում է Ջոհրապը, որի համար անհասկանալի է, թե ինչպես լուրջ մարդը կարող է իր «լեզվեն ու դրականութենեն երես դարձնել»։ Ստ. Ոսկանը իր այդ վարքագիծը խոստովանել է, նշելով նաև իր «արդարացումը»։ 1898ին Աբեղյի մեջ հրատարակված է բանաստեղծ Ռուբեն Որբերյանի նամակը Իզմիրից, որի մեջ վերջինս նկարագրում է իր հանդիպումը Ոսկանին և մեջ է բերում նրա հետևյալ խոսքերը. «Երեսունը հինգ տարի է քանի հայերեն բառ մը գրած չեմ, կարգ մը ոտանավոր տապանագիրներե զատ։ Ամենքը ինծի ապերախտ գտնվեցան, ու ես զզված ամեննեն՝ ուխտեցի ատել ինչ որ սիրած էի անցյալին մեջ։ Իմ ցեղակիցներս զիս անոթի թողուցին. ես ալ սկսա միայն ֆրանսերեն գրել, հացս օտարներեն շահիլ»։ «Արդարացումը», ինչպես տեսնում ենք, իսկական ինքնադատապարտում է։

2. Մամուրյան Մատթեոս (1830—1901)—ականավոր հրապարակախոս, գրող, խմբագիր և թարգմանիչ։ Հեղինակ Սև լեռին մարդը և Անգլիական նամականի վեպերի։ 1872 թվին առանձին հատորով հրատարակեց Հայկական նամականի, նամակների շարք, որ տպել էր 1864—1867 թթ. Մեղու, Կիլիկիա և Իզմիրի Ծաղիկ պարբերականներում, Վրույր ծածկանունով։ Հայկական նամականիի մեջ զանազան ծածկանունների տակ Մամուրյանը գեղարվեստական վարպետությամբ ներկայացրել է ժամանակի հայ նշանավոր դեմքերը։

1871ից մինչև մահը խմբագրել է իր հիմնադրած Զմյուռնիայի Արևելյան մամուլ պարբերականը։ Գրել է բղխակցություններ Շահնուր ծածկանունով։ Կատարել է բազմաթիվ թարգմանություններ, «մեծ մասը բազմահատորյ, Վոլթերից, Գյոթեից, Էոժեն Սյուից, Ալեքսանդր Դյումայից, Ժյուլ Վեռնից և շատ այլ հեղինակներից։ Մեծապես նպաստել է աշխարհաբարի մշակմանն ու տարածմանը։ Մամուրյանը եղել է նաև հարգված ուսուցիչ և դպրոցի տնօրեն, մեծ դեր կատարելով Զմյուռնիայում։ Կազմել է մի շարք դասագրքեր, որոնք, ինչպես Հր. Ասատուրն է ասում, «լավ աշխատված են»։ 1899 թվին տոնվել է Մամուրյանի հիսնամյա հոբելյանը։

3. Կոստանդյան Գալուստ (1840—1898)—ականավոր հրապարակախոս. փիլիսոփա։ Գլխավոր գործը Մեթոդին վրա փիլիսոփայական աշխատությունն է (1878)։ Հրատարակել է նաև գիտական զանազան հարցերի նվիրված գրքույկների շար՝ Հասարակաց բանգարան ընդհանուր խորագրով։ Իր բավական հարուստ գրադարանը նվիրեց Զմյուռնիայի հույն հասարակության։

4. Նուպար, Մեսրոպ Նուպարյան (1842—1929)—հայտնի բանասեր և թարգմանիչ։ 1856ին հրատարակել է Զմյուռնիայի Արփի Աբաբատյան հանդեսը։ Գրել է բանասիրական և քննադատական հոդվածներ։ Հզվաբանական մեծ արժեք ունի Նուպարյանի Ֆրանսերենե հայ աշխարհիկ բառարանը։ Կատարել է բազմաթիվ թարգմանություններ. Գյոթեի Ֆաուստը, Հյուգոյի Բարիզի Նօթր տամը, Բուալոյի Գրակալը (չափածո), Ռասինի Եսթերը, Առակ Լաֆոնթենի (չափածո), որ հրատարակվել է Թիֆլիսում 1900 թ., Շեքսպիրի, Ռասինի, Վոլթերի, Ռենեհառի, Մոլիերի թատերկերը, Սենիսպոսի Քալամկրթության պատմությունը, Նանսենի Դեպի բևեռ ուղևորությունը և այլ երկեր։ Մոլիեռի կատակերգությունների թարգմանությունների մի մասը 1905 թվին հրատարակեց երկու հատորով։ Թարգմանած թատերկերի մի մասը մնացել է անտիպ։ Զանազան պարբերականների մեջ հրատարակել է ուսումնասիրություններ, գրել է նաև իր Մանկության հիշատակները։

5. Մսերյան Գրիգոր (1846—1893)—թարգմանիչ, լրագրող, զբաղվել է նաև փիլիսոփայական հարցերով։ Հրատարակել է Զմյուռնիայի Մեսեռոբ հանդեսը (1880—1882)։

6. Մեթոդի հեղինակը—խոսքը Գալուստ Կոստանդյանի մասին է։

ՄԱՆԱՆԱ

Այս խմբագրականով հեղինակը մամուլի և հրապարակախոսության դերի իր ըմբռնումն է պարզում, հավանաբար, մասամբ նաև շարունակելով Հայրենիք քերթի քննադատությունը, որ տեսանք ճամփեն շեղած և Պարպված օդապարիկ հոդվածներում։

ՀԱՄԵՍՏ ԳՈՐԾԵՐ

«Անոնք որ հանրության դեմ ոևէ պարտավորություն չունենալու գաղափարը ունին, անոնք աղորմելի եսամոլներ են, աննշան և անօգուտ մար-

գիկ...»,— ասում է Զոհրապը իր առաջնորդողներից մեկում («Տարի մը»)։ Այս տողերի մեջ արտահայտված է՝ պատանեկան տարիներից մինչև մահ իր ժողովրդին նվիրված հանրային գործչի ազնիվ մտորումը, որ ծրագրային սկզբունք էր նրա համար և որով նա ցանկանում էր դաստիարակել՝ իր հանրային պարտականությունը գիտակցող, իր սեփական ուժերի վրա հենվող հասարակության անդամներ, որոնք գործեին համահավաք ուժերով ու միջոցներով։ Ահա այս միտքն է զարգացնում Զոհրապը սույն հոդվածի մեջ։

Ադրիանապոլիսի Աղքատախնամ ընկերությունը կազմակերպված էր 1856 թվին։

ՖՐԱՆՍՈՒԱ ՔՈՓՓԷ

1. Ժերսեյի տարագիրը—ակնարկում է Վ. Հյուգոյին, որ մի ժամանակ «քաղաքական ապրեց Լամանշի՝ անգլիական Ժերսեյ կղզում։

2. Սեն-Փուանի մենակյացը—ակնարկում է Լամարթինին, որ ապրել և թաղվել է Սեն-Պուանում։

3. Փանոսյան Աղեքսանդր (1858—1919)—բանաստեղծ, գրել է շատ պերճ հանգերով, հատուկ նշանակություն տալով ձևին, ոչ-միշտ հօգուտ բովանդակության։ Ունի նաև մանկական բանաստեղծություններ։ Բանաստեղծությունների մի մասը ամփոփված է Այգեկութ ժողովածուի մեջ։ Կատարել է շատ թարգմանություններ։ Գրել է նաև Ալիասլան ծածկանունով։

ՄՈՌՅՎԱԾՆԵՐ

1. Զորայան Նիկողոս (1821—1859)—հայտնի տնտեսագետ, հրապարակախոս, մանկավարժ, հեղինակ Նկարագիր ազգային դաստիարակության։ Տեղեկություններ տնտեսագիտության վրա, Վարժություն ընթերցանության և այլ աշխատություններ։

2. Արմենակ Հայկունի, Ճիզմեճյան (1835—1866)—գրող և հրապարակախոս։ 1857 թ. հրատարակում է Մուսայի Մասեաց քաղաքական հանդեսը։ Գրել է երկու երաժշտական ողբերգություն՝ Ակա գեղեցիկ և Վատ սիրտ (օտար կյանքից)։ Սրանք գրված են չափածո, իբրև օպերա ներկայացվելու համար։ Գրել է նաև մի արձակ ողբերգություն Ողիմպիադա խորագրով, որի նյութը առնված է հայոց պատմությունից, ինչպես և մի ռոմանտիկ վեպ՝ Էլիզա (1861), որ արևմտահայ առաջին վեպերից մեկն է։ Զբաղվել է նաև ուսուցչությամբ։

3. Քրիստոսատուր Ղազարոսյան (1816—1891)—հանրային գործիչ, ուսուցիչ, եղել է Ազգային ժողովի անդամ։ Գլխավորապես նրա ջանքերով և հիմնադրվել «Անձնվեր ընկերություն» Պոլսում, որի նպատակն էր կիրակնօրյա դասախոսություններ կազմակերպել պանդուխտների համար։ Հ. Գաբոնյանը գրել է Ղազարոսյանի Երգիծական դիմանկարը Ազգային ջրերում։

4. Խաչատուր Միսաքյան—տես՝ Ա. Հատորի ծանոթագրությունները։

5. Ստեփան Փափազյան, Պերճ (1839—1888)—նշանավոր հրապարակախոս և հանրային գործիչ։ Ազգային ժողովի ազդեցիկ անդամներից։ Խմբագրել է Ժամանակ կիսամսյա հանդեսը 1863—1868 թթ.։ Զբաղվել է նաև ուսուցչությամբ։ Հ. Պարոնյանի ազդային չոչերից։

6. Սրվանձտյանց Գարեգին (1840—1892)—ականավոր գրող, բանահավաք, Սասունցի Դավիթ դյուցազնավեպի հայտնաբերողն ու առաջին գրի առնողը։ Գրել է Գոց բոց (1874), Հնոց նորոց (1874), Մանանա (1876), Քառոս ախպար (Ա. հտ. 1879, Բ. հտ. 1885), Համով նոտով (1889) և այլ երկեր շատ ինքնատիպ և հայադրոշմ ոճով, ճկուն և արտահայտիչ լեզվով։

7. Մնակյան Մարտիրոս (1837, ըստ այլ աղբյուրի՝ 1840—1920)—ականավոր դերասան և ռեժիսյոր։

ՄՈՏԱՆ

1. Մոտան—Պոլսո Քաղքեդոնի (Քատրգյուղ) ծովափի անունը։

2. Խոսքը Նիխա Տեմիրճիպաշյանի մասին է։

3. Պետո (Պետրոս)—պոլսահայ նավավար, որ փրկեց խեղդվելու փորձ անող Նիխա Տեմիրճիպաշյանին։

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԿՌԻՎԸ

Ուղղված է ութսունականների ռեալիստական շարժման, առհասարակ ռեալիզմի հակառակորդների՝ մամուլում արած խծբծանքների դեմ։

1. Ֆանի անուն է, որով խորագրված է երգիծաբան Հ. Ալփիարի սիրային մի նորավեպը («Մասիսս, 1893, թիվ 3995)։

2. Ֆրանսական գրական պարբերաթերթ։

ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱԿՔ

Վերոհիշյալ գիրքը առակների բավական ստվար ժողովածու է (հինր շարք), ընդարձակ առաջաբանով, որի մեջ Վ. Տեր-Մինասյանը խոսում է բանահյուսության և գուսանական ստեղծագործության մասին, ինչպես և առակների մասին։ Գրքի Ա. հատորը լույս է տեսել 1893 թվին Պոլսում, որը և գրախոսել է Զոհրապը, իսկ Բ. հատորը՝ Անգիր դպրություն և հին սովորույթներ խորագրով, լույս է տեսել 1894 թվին։

1. Իզմիրյանց մրցանակ—տես՝ Ա. Հատորի ծանոթագրությունները։

ՏԵՏՐԱԿԵՍ ԷՋ ՄԸ

Այս երգիծական քերթոնը գրված է ութսունականների երկերը «անբարոյական» համարողների դեմ։

1898

ՏԱՐԵԴԱՐՁ ՄԸ

Մասիս օրաթերթի առաջին խմբագրականն է, որ ունի ծրագրային բնույթ։

1. Սերվիչեն, Սերովբե Վիչենյան (1815—1887)—բժիշկ, հանրային ականավոր գործիչ, երկու անգամ ընտրվել է Ազգային ժողովի ատենապետ՝ Սահմանադրության առաջին տարիներին, իսկ դրանից առաջ 1854 թ. Ուսումնական խորհրդի ատենապետ։ Գր. Օտյանը նրան համարել է իր շրջանի ամենից կարող հայ մտավորականը, «փայլուն իմացականություն»։ Մատթեոս Մամուրյանը իր Հայկական նամականիի մեջ Արբուն ծածկանունով է ներկայացնում Սերվիչենին, որակելով նրան իբրև «հայ քաղաքագետ, օրենսդիր, ատենաբան, մեծ մարդ»։

2. Օտյան Գրիգոր (1834—1888)—վաթսունական ԲԲ. ականավոր գործիչներից մեկը, մեծ հռետոր, օսմանյան առաջին սահմանադրության հեղինակներից մեկը, որի պատճառով էլ հալածվեց և ստիպված եղավ ապրել Փարիզում՝ երկարամյա տարագրության մեջ, ուր և մեռավ։ Գ. Օտյանը մեծ դեր է կատարել նաև Ազգային Սահմանադրության մշակման գործում։ Օտյանը սիրելի եղավ հատկապես իբրև մարդ իր վեհաշուք էությամբ, իր մեծ հայրենասիրությամբ, իր քնարական հուզաթաթավ հոգով։ Հր. Ասատուրը, որ լավ գիտեր Գ. Օտյանին անձնական ծանոթությամբ, գրում է, որ «Օտյան այն մարդերեն էր, որոնք անհուն մեծարանքի հետ, կազդեն նաև անհուն համակրանք» («Դիմաստվերներ», էջ 78)։

Գր. Օտյանի մասին հիացմունքով է խոսում նաև Մատթեոս Մամուրյանը իր Հայկական նամականիի մեջ, ներկայացնելով Օտյանին Նուրհան ծածկանունով. «Տես սա քիկնավետ պատանին... քաջ դիտե գլուխն որ Միրապոյի գլխեն վար չմ՚որ. նկատե սև աչերն՝ որ անդադար փայլակներ կարձակեն, որ իր վառ հոգույն ցոլացմունքն են. եթե սուր են ականջներդ, մտիկ ըրե անոր քաջահնչյուն ձայնն՝ որուն մեն մի շեշտը լուսատու նոր գաղափար մը կարտահայտե և ոչ միայն ունկնդիրը կը դյութե ,այլ և կը համոզե, և այն ատեն պիտի խոստովանիս ինծի հետ որ Նուրհան արդարև հասարակ մարդ չէ»։

3. Նահապետ Ռուսինյան (1819—1878)—բժիշկ, հանրային ականավոր գործիչ, Ազգային Սահմանադրության հեղինակներից մեկը։ Պաշտպանել է բժշկությունը հեղաշրջող նոր տեսություններ։ Ցանկանում էր հիմնական փոփոխության ենթարկել հայերենի քերականությունը (տես՝ նրա «Ուղղախոսությունը») և հայ տոմարը (տես՝ 1864ի Տարեցույցը)։ Բարեբախտաբար Ռուսինյանի լեզվի «քմահաճ օրենքները» չընդունվեցին։ Չեն ընդունվել նաև նրա տոմարական նորոգումները։ Մասնակցել է այն մասնաժողովներին, որոնք պատրաստեցին 1857ի Ազգային կանոնադրությունը և հետո Ազգային Սահմանադրությունը։ 1874ին ամբողջովին ինքն է խմբագրել Ազգային ժողովի Ներքին Կանոնագիրը, որը «հարյուրե ավելի հոդվածներե բաղկացած

բարդ հանոնագիր մը ըլլալով չէր համապատասխաներ մեր հորհրդարանին համեստ պետքերուն։ Ռուսինյան մեր Ազգ. Ժողովը շփոթեր էր եվրոպական հորհրդարանի [պառլամենտ] մը հետ» («Դիմաստվերներ», 67—68)։ Տեսականի և գործնականի խզումը նրա որոշ չափերը դարձրել է ապարդյուն։

Ռուսինյանը կերտել է մի շարք բառեր, ինչպես՝ թերթոն (ֆելիետոն, որի հետևողությամբ Կ. Ույումճյանը կերտել է կատոն բառը), ասյակենտրոնացում, կեղծամ, առնմիկ, բազկաթոռ, բամստոց, սպասիկ, զինանիշ, ճուվկուլ, Էմույշ (ֆանտազիա), կողիկ (կոտլետ), ճաշացուցակ, տարփիկ, տիար և այլն, որոնց զգալի մասը մտել է գործածության մեջ («Դիմաստվերներ», 69—70)։

Տիար բառը, որ պետք է փոխարիներ անգլերեն պարոն բառին, ունի իր պատմությունը։ Ռուսինյանի լեզվական հայացքների և նորաբանությունների չեմ համախոհ էր Հակոբ Պալյանը, որը, ինչպես նշել է դերասանուհի Տիկին Հրաչյան իր հիշողությունների մեջ, ներկայացումների ժամանակ պարոն բառի փոխարեն ասված ամեն տիար բառի համար մեկ ոսկի էր վճարում, երբեմն մի ներկայացման մինչև 50 ոսկի տալով իրեն, նույնքան և Պետրոս Ադամյանին։

Ռուսինյանը դասախոսել է Օսմ. բժշկական վարժարանում։ Իր դասախոսությունները ամփոփել է Փիլիսոփայություն խորագրով ֆրանսերեն դասագրքի մեջ, որի հայերեն թարգմանությունը լույս է տեսել 1879ին, Գր. Օտյանի առաջաբանով։

ԵՐԳԵՆՔ

Մասին օրաթերթի երկրորդ խմբագրականն է, որի մեջ մեծ հայրենասերը՝ եզովպոսյան լեզվին դիմելով՝ հորդորում է չընկճվել, չսայթաքել, հուսալքման և հոռետեսության գիրկը չընկնել, իսկ այդպիսի տրամադրությունների համար պարարտ հող կար 1895—96 ԹԹ. կոտորածներից հետո։

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԱԾԱՆՑԱՎ

1. Յուսուֆյան Հովսեփ—տես՝ Ա. Հատորի ծանոթագրությունները («Վանանթ դեմքերից մեկը)։

2. Գազազ ամիրա (Հարություն Պեզճյան—1771—1834)—Հայտնի ամիրա, գործել է Կ. Պոլսում, 19րդ դարի առաջին քառորդում, գործուն մասնակցություն է ունեցել հայ հասարակական-մշակութային կյանքին։ Նրա միջոցներով կառուցվել է Պոլսի Ազգային հիվանդանոցը, որը գոյություն ունի մինչև այսօր։

3. Տատյանները—ամիրայական հայտնի տոհմ, որը շուրջ մի հարյուր-

ամյակ նկատելի մասնակցություն է ունեցել Թուրքիայի տնտեսական կյանքին։ Նրանք են պետական պաշտոնյաներ։ Տատյաններից ոմանք մասնակից են նաև հայ հասարակական կյանքին։

ԼՈՒՐ ՁԻ ԿԱ

1. Իր մի հոդվածում («Տարասխալ մը», «Մասիս», 25—2—1898) Զոհրապը մեղադրելով Ազգային Ժողովի Տնտեսական Խորհուրդը՝ անվանել է Անտեսական Խորհուրդ։

1 9 0 1

«ՆՈՐԱՎԵՊ»-ԻՆ ՇՈՒՐՋԸ

1901 թվին, մի հայագետ ամերիկուհի (օր. Վիվիեն Նորքինս) Բյուրականին ուղղած հարցումով խնդրում է ստուգաբանել «նորավեպ» բառը և ցույց տալ թե որքանո՞վ նա ճիշտ է հայերենի բառակազմության օրենքների տեսակետից։ Բյուրականի հրավերով մի հոդված է գրում Կարապետ Ություճյանը և գտնում (ինչպես և Հովհ. Գազանճյանը), որ այդ բառը հայոց լեզվի բառակազմության սկզբունքներին և կանոններին համաձայն չէ։ Մասիսի խմբագիր Տիգրան Արփիարյանը, ընդունելով Կ. Ություճյանի և Հ. Գազանճյանի հեղինակությունը լեզվի հարցերում, այլևս «ներելի» չի համարում տարակուսել, որ այդ բառը մեղանչում է մեր քերականական կանոնների դեմ, բայց շեշտում է բառի արդեն ընդունված և հանրացված (մասսայականացված) լինելու փաստը և կոչ է անում, որ որևէ մեկը ստանձնի այդ բառի պաշտպանությունը։ Զոհրապի սույն հոդվածը այդ կոչի արձագանքն է։

1. Նորայր—խոսքը ականավոր բանասեր-հայագետ Նորայր Բյուզանդացու (1845—1916) մասին է։

1 9 0 2

ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

1. Նիկողոս Թյուլպենտճյանը (1841—1886) խմբագրել է Լուգիր օրաթերթը 1875—1880 թթ.։ Հակոբ Պարոնյանը ծաղրել է, ինչպես չաուերի, նույնպես և այս թերթի ֆրանսամոլությունը, անտեղի ֆրանսերեն բառեր գործածելու սերը, որ անում էին հաճախ ոտար, ժողովրդին անմատչելի բառերի սիրահարները ավելի խորամիտ երևալու համար։ Հանճարեղ երգիծաքանը իր Թատրոնի մեջ հրատարակել է այդ բառերի ցանկը՝ «Բառարան ի պետս Լուգրի» խորագրով, ընդգծելու համար այդ թերթասությունը։

ՈՒԹԸ ՏԱՐԻ ԾՏՔԸ

Մասխի խմբագրության կողմից սույն հոդվածին իրրև նախաբան ավելած է. «Զոլայի մահվան առթիվ արտատպելե ետքը այն գեղեցիկ հոդվածը զոր Գ. Զոհրապ նվիրած էր բնապաշտ դպրոցի պետին, 1893 տարեշրջանի Մասխին մեջ (տես՝ այս գրքում),—որուն Տնօրեն-Խմբագրապետությունը կը վարեր այդ թվականին,—խնդրեցինք իրմե՝ նոր հոդվածի մը մեջ ամփոփել ինչ որ կը մտածե անկե ի վեր Ասոմուարի հեղինակին վրա։ Գրագետ-փաստաբանը խմբագրության հրավերին կը պատասխանե նամակով մը որ իր հակիրճությանը մեջ այնքան ցայտուն ու կենդանի կերպով կը պատկերացնե Զոլան, իրրև վիպասան և իրրև հանրային մարդ»։

1. Հանիրավի դատապարտված հրեան Դրեյֆուսն է, որի դատը պաշտպանեց Զոհրապը թե խոսքով, թե գործնական միջոցներով, գրելով մի ընդարձակ պաշտպանողական և ուղարկելով Դրեյֆուսի պաշտպանության համար կազմված «Հրեական սենտիքային», որը շնորհակալություն է հայտնում Զոհրապին և ուղարկում մի ոսկեկոճակ Դրեյֆուսի մանրանկարով։ Այդ նամակը և կոճակը Զոհրապին է մատուցում Կ. Պոլսի հրեա գաղութից մի պատվիրակություն։ Այս մասին ավելի մանրամասն տես՝ Գրիգոր Զոհրապ, Նովելներ (Երևան, 1941) գրքի վերջաբանը (էջ 293—294)։

1 9 0 8

ԿՅԱՆՔԸ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Հոգեհարազատության զգացումը թելադրել է Զոհրապին մեկից ավելի անգամ անդրադառնալ Ֆրանսուա Կոպպեին և գնահատել նրա բանաստեղծությունների «ներդաշնակությունն ու գորովը», նրա նորավեպերի հատորների «խանդաղատանքի գանձերը», սովորական կյանքը սիրելու միտումը։ Այս ամենի մասին Զոհրապը գրել էր 1893ին, իսկ 1908ին Փարիզից նա նորից անդրադառնում է իր սիրած հեղինակին, վերջինիս մահվան առթիվ։ Մինչև Փարիզ մեկնելը Զոհրապը աշխատակցում էր Արամ Անտոնյանի Լույս հանդեսին և, ինչպես երևում է նույն հանդեսի թիվ 20ի (1908) հայտարարություններից, «նշանավոր վարպետը» խոստացել էր Փարիզից (ուր նա մեկնել էր՝ արտասահմանում մշտական բնակություն հաստատելու մտադրությամբ, փաստաբանությամբ զբաղվելու արգելքի պատճառով) շարունակել իր աշխատակցությունը։

ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ

Հիրվանզադեի Պատվի ճամար դրամայի Պոլսում՝ Արեւլյան-Արմենյան թատերախմբի կողմից (1908 թ.) ներկայացվելու առթիվ գրված այս քննախոսականը տպված է «Երեսփոխանություն և գրականություն» ընդհանուր խորագրի տակ։ Քննախոսականին իրրև նախաբան կցված է ժամանակ օրաթերթի խմբագրության հետևյալ ծանոթագրությունը, որ մեջ ենք բերում ամբողջովին.

«Ուրբաթ գիշեր, այն ժամուն ուր Օսմ. խորհրդարանին Կ. Պոլսո տես երեսփոխաններուն ընտրության քվեահամարը կը կատարվեր Քաղաքապետական պաշտոնատան մեջ, ամենեն ավելի հետաքրքրության առարկա եղ հայ ընտրելին՝ Գ. Զոհրապ էֆենտի՝ հանդարտիկ կերպով նստած Վառիեթ թատրոնին մեկ օթյակին մեջ, հիացումով կունկնդրեր ու կծափահարել Արեւյան-Արմենյան թատերախումբին ներկայացմանը։ Եվ շաբաթ առտու, արշալույսին, երբ ընտրության արդյունքը իմացված էր արդեն ու շնորհավորական այցելությանց տարափը սկսած էր Զոհրապ էֆենտիի բնակարանը, գրագետ-երեսփոխանը՝ իր սովորական անալլալությամբ՝ ընդունեց ժամանակի խմբագրության հրավերը ու գրասեղանին առջև անցնելով իր գեղեցկագույն հոդվածներեն մեկը արտադրեց՝ Շիրվանզատեի Պատվի ճամար փիեսին վրա, իր խորհրդարանական մարդու անդրանիկ ժամերը նվիրելով գրականության ու գեղարվեստի։

Մասնավոր հաճույքով մըն է որ կը փութանք հրատարակել այդ հոդվածը որուն առթելիք հետաքրքրությունն ու ախորժը սովորականեն տարբեր պիտի ըլլան՝ կյանքի պատմական վայրկյանի մը մեջ գրված ըլլալուն համար»։

Այս քննախոսականի սրտաբուխ և անկեղծ գնահատականները շատ խոր տպավորություն են թողնում Շիրվանզադեի վրա և ժամանակ թերթի խմբագրությանը ղրկած մի նամակի մեջ նա գրում է. «Միանգամայն ոգևորությամբ կարդացի հայտնի վիպասան Գրիգոր Զոհրապի նուրբ, խոր հոգեբանական հոդվածը» (1908, թիվ 54)։ Մի այլ նամակի մեջ, Տիգրան Կամսարականին գրած, Շիրվանզադեն ասում է. «Այն ի՞նչ ոգևորություն էր, որ օտարության մեջ պաշարեց ինձ, երբ բաց արի այդ նվիրական կապոցը (Պոլսի հայերեն թերթերը) և կարդացի Զոհրապի, Պարթևյանի, Թեքեյանի, Հրանդի, Օտյանի, Երուխանի, Ալփիարի, Արամ Անտոնյանի, Չիֆթե-Սարաֆի և այլ թրքահայ խոշոր դեմքերի հուզիչ հոդվածները իմ բնական երկերի մասին»[1]։

ՋՈՀՐԱՊԻՆ ՃԱՌԸ

Տպված է, հավանաբար, իբրև Զոհրապի ճառի համառոտ շարադրանք, օգտագործելով նրա ուղղակի խոսքը։ Ճառը խոսել է Քաղգյուղի մեջ 13/26 հոկտ. 1913 թ.։ Հայ տառերի գյուտի 1500ամյա և տպագրության 400ամյա առնակատարությանը մասնակցել են բազմաթիվ օտարազգիներ, դեսպանատների ներկայացուցիչներ, հյուների, բուլղարների և ասորիների պատրիարքների փոխանորդներ, ինչպես և ներքին գործոց նախարար, հայ ժողովրդի դահիճ Թալեաթը, որը ասել է. «Այսօր հայերեն տառերու 1500ամյակի և հայ տպագրության 400ամյակի հանդեսները կատարելապես տոնելու համար հավաքված եք հոս, հանուն կառավարության կը մասնակցեմ ձեր ուրախության» («Ժամանակ», 1913, թիվ 1603)։ Այդպես էին իթթիհատականները բթացնում հայ ժողովրդի զգաստությունը՝ նրան կոտորելուց առաջ։

1. Օտյան—խոսքը Գրիգոր Օտյանի մասին է։

---

1 Շիրվանզատե և իր գործը, Կ. Պոլիս, 1911։

Ա

Album—ֆ. *ալբոմ*
Ամեն—*ֆրանսական խմիչքի տեսակ*
Անձագան—*ուշ*
Անկապաճ — *անկարգել (պարապշյուռ)*
Անճաճ—*անպատշաճ*
Անցախոս—*կարգախոս (պարոլա)*
Առաքուր—*առանակոթ*
«Առաքելոց...»— *ակնարկություն՝ պատարագի ժամանակ սարկավագի մի աղոթասացության*
Ասկր—*թ. ձգանակ՝ տափատը պահելու համար*
Ավանսեն—ֆ. *նախաբեմ*
Արհազալ—*եկեղեցական արարողության տեսակ*
Արճ—*այրեր*

Բ

Բանկալ—*եկեղեցում մոմ վաճառելու վայր*
Blague—ֆ. *սուտ, անոտիապաշտություն*
Bravi—*ի. վարձկան չարագործներ*
Բուրակ—*լարային գործիքի լարելու ականջը*

Գ

Գամ (քան) զգամ—*ավելի ու պակաս*
Gazometre—ֆ. *գազաչափ*
Good-by—*անգլ. մնաք բարով (ցտեսություն)*
Գրգլյակ—*ցնցուղ*

Դ

Դահճանակ—*քանկապին քարի տեսակ*
Դանկ—*դահճական, մանր դրամ*
Դաչն կոտծ—*դաշինք կնքած*
Dialogue—ֆ. *դիալոգ*
Dicton—ֆ. *ասացվածք, առած*
Դժվարագնի—*գժվարությամբ ձեռք բերված*

Ե.

Եպիսքոպի—*ժպրհելի, պատանելի*

Ջ

Ջարբ—*ա. արգելք*
Ջառիկ—*թուխի տեսակ*

Չեխիճե—ա. դեկտեմբեր
Չևգեկ—բ. շատախոս
Չելմատե—ա. նոյեմբեր

է

Ingénieur—ֆ. ճարտարագետ
Էսար—ա. քմրնցուցիչի մի տեսակ

ը

Ընկերային—սոցիալական
Ընկերվարական—սոցիալիստական

թ

Թամսիմ—արևելյան երաժշտության տեսակ
Թելիյան պատգամ—Հունաստանում Դելփիսի հեթանոսական տաճարի քուրմերի պատգամ-գուշակություն
Թեհլիրե—ա. փորձանք, վտանգ
Թեյզե—բ. մորաքույր
Թերեմե—ա. ժառանգություն

ժ

Journal des Débats—ֆրանսական օրաթերթ
J'y suis, J'y reste—ֆ. ես այնտեղ եմ, այնտեղ էլ կմնամ
Il faut vivre pour manger et non pas manger pour vivre—ֆ. պետի ապրել ուտելու համար և ոչ ուտել՝ ապրելու համար
Ils n'ont rien apris, rien oublié—ֆ. նրանք ոչինչ չեն սովորել և ոչինչ չեն մոռացել
Ի դեպս ու ճանդեպս—տեղի և անտեղի
Ի սլետս և հուճպետս—անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ

լ

Լաբեռնա—նավագարանի տեսակ
Լամբակ—կոճակի օղակ
La patrie en danger—ֆ. հայրենիքը վտանգի մեջ
Le galeux, d'ou venait tout le mal—ֆ. քոսոտը, այլանդակը, որից գալիս էր ամբողջ չարիքը
Le plus apte à vivre—ֆ. կապրի ամենից ընդունակը
Les grands esprits se rencontrent—ֆ. մեծ մտքերը իրար հանդիպում են
L'habit ne fait pas le moins—ֆ. տարազը չէ, որ վանական է դարձնում
Լրվանքեճ—ֆ. արևելքցի
Լնուլ—լեցնել

խ

Խակակութ—խակ քաղված
Խատեմ-լի—ա. բախտ-աբեր
Խովուշ—բ. զորանոց
Խուշս—բ. ծոչնակս
Խպլիկ—բ. ուրվական, քամահրելի կերպար

ծ

Ծայրաճ—շարժում 1
Ծե՛ե՛—ծո

1 Բառի բացատրությունը վերցրել ենք Ղ. Ալպայանի, Հ. Թումանյանի և Վրթ. Փափազյանի կազմած «Հայ գրողներ»-ի Բ. հատորից (Թրքահայ գրողներ)։

Կ

Կազ (Gaze)—ֆ. *քող*

Կազնքաճի—թ. *ժուռնալիստ, թերթի հրատարակիչ, խմբագիր*

Կամակ—*կամավոր, ցանկալի*

Կարի—*հույժ, շատ*

Կյոզինի սևտյիմի—թ. *իմ սիրած աչքդ*

Կերկերանճ—*կերկերացող ձայն*

Clown—անգլ. *ծաղրածու, խեղկատակ*

Condottieri—ի. *վարձկան զինվոր*

Կոընատին—ֆ. *մետաքսյա պատառ*

Կոոն—ֆ. *կերպասի տեսակ*

«Կուտ մր» անգամ չեմ տա—*ոչ մեկ արժեք չեմ տա*

Հ

Հալ և հաճյակ—*աջ ու ձախ*

Հափրացած—*հափացած*

Հեշտախտիկ—*հնշտագրգիռ*

Հերկոտիֆ—*ակոսված, հերկված հող*

Հյոճեթ—ա. *օրինակ, պատճեն*

Հուսկ ուրեմն—*վերջապես*

Հովարտա—թ. *շեն, զվարճասեր, առատաձեռն*

Հովկուլ—*դատարկապորտ*

Հորում—*երբ որ*

Մ

Մազեբբա—ֆ. *փոխաբերաբար՝ համբակ, սկսնակ*

Մանթլե—ֆ. *կանացի թևքև կարճ վերարկու*

Մանտարին—*չին ազնվական, պաշտոնատար*

Մեճիտ (մեճիտիե)—*թրքական արծաթ փող (20 դահեկանոց)*

Մեճեյճր—անգլ. *զննավար, պետ*

Մրնյու—անգլ. *ճաշացուցակ*

Միա—հ. *մեկ, մեկ հատ*

Միանաղույն—*միաժամանակ*

Միզեռ—ֆ. *թշվառություն*

Մյութեմայիզ—թ. *թրքական պաշտոնատարի աստիճան*

Մյուսեռն—հ. *թանգարան*

Մյուսյու—ֆ. ազ. *պարոն, տիար*

Մրափեկ—*կես քուն, կես արթուն*

Մուեզզին—ա. *մահմետական աղոթասաց*

Mondaine—ֆ. *աշխարհիկ կին*

Մոն թու.—ֆ. *իմ ամբողջը*

Modus vivendi—լատ. *համակեցություն, կենցաղի ձև, ապրելակերպ*

Moralischer sieg—գ. *բարոյական հաղթանակ*

Յ

Յափու—թ. *շինարարություն, կառուցում*

Ն

Նամի—պ. *անվանի*

Նե զարիֆ պասմալարմրզ վար—ա. *ինչ նուրբ տպածոներ (չքեր) ունենք*

Նեղ թենե—ր. *տեղ բաց անեն*

Նենի—ա. *ինչացու*

Նվոր—*նրան*

Շ

Շալե—ֆ. *շվեյցարական հյուղակ*

Շաթիման—ֆ. *պատիժ, պատուհաս*

Շեվվալ—ա. *հոկտեմբեր*

Շոափնել—ֆ. *թնդանոթի տեսակ*

Չ

Չախ—թ. *հանդիմանություն*
Չամ—թ. *եղևնի*
Չզչաբեխեմ—*չցավեցնեք*
Չվակ—*կարճ վերնազգեստ*
Չուկեա—*մեկնակետ*
Չմաշել—թ. *նախանձիլ*

Պ

Pas de nouvelles, bonne nouvelles—ֆ. *ոչ մի լուր, ոչ մի լավ լուր*
Պալայոզ—ֆ. *կանացի զգեստները ուռուցիկ դարձնող ձողիկներ*
Պաղտաշ—թ. *ծալապատիկ*
Պապա (ձևերը)—թ. *հայրական (ձևեր)*
Պարմանուհի—*պատանեկուհի*
Պարպատուն—*լիքը, շատ գեր*
Պամարա—*թղթախաղի տեսակ*
Պենճ—անգլ. *դրամատուն*
Պերզուս—ա. *լու*
Պենեուառ—ֆ. *օթյակ թատրոնի առաջին հարկում*
Պետահավա—թ. *ձրի, անվճար*
Պերեմյաք վերսին—թ. և ա. *շահատու և հաչող լինի*
Պիլեզիկ—թ. *ապարանչան*
Պլըֆ—անգլ. *կեղծ ու պատիր խոսք, գործ*
Պլըֆյոռ—ֆ. *խաբեբա, ձևացնող*
Պոշ պողազ—թ. *ճոռոմաբան, շաղակրատ*
Պոլկան—ֆ. *ավազակ, հելուղակ*
Պրոա—անգլ. ազ. *բողոքական (աստվածաբանական)*

Ջ

Ջուրը խնկած—*ձախոզած*

Ռ

Refrain—ֆ. և անգլ. *կրկներգ*
Ռըլանս—ֆ. *խոյանք, թափ*
Ռըմիզ—ֆ. *դրամական փոխանցում, առաքում*
Revue—ֆ. *քնքև որակի թատերական ներկայացում*
Ռուլեթ—ֆ. *բախտախաղի տեսակ*

Ս

Սարաֆություն—թ. ազ. *սեղանավորություն, լումայափոխություն*
C'est à vous d'en sortir vous qui parlez en maître—ֆ. *դուք եր խոսում եք այդպես տիրաբար, պետք է դուրս գաք այդ դրությունից*
Սերթ—թ. *կարծր, կոշտ, խիստ*
Սեռի—ֆ. *խաղաշար, մատենաշար, սերիա*
Սենեթ—ա. *պարտամուրհակ*
Սիսյարիթ—ֆ. *հեշտամոլ, մեղկ*
Սիրտը բնել—*սիրաշահել*
Սթոմ—անգլ. *պահեստ*
Սիրմ—ֆ. *կրկես*
Սպաթի սեֆիզ—թ. *խաղաթղթի չորս տեսակներից մեկի 8 համարը*
Սպանիոլ—ֆ. *իսպանացի*
Սրվոր—*սրան*
Ստոիկ—*Զենոն Հույն փիլիսոփայի հետևորդ*
Ստոր—*գրքույ՝ ստորակետի հապավված ձևը*
Սուզինակ—*արևելատիպ երաժըշտության մի տեսակ*
Սխլած—*կծկված, կուչ եկած*

Վ

Վազվազակի—*իսկույն*

Վարպետ-ատաւտ—հին տիպի մանկապարտեզ
Վարուն—հերկված
Veilleuse—ֆ. գայգականքեզ
Վերեմ—ա. քոքախտ, քոքախտավոր

S

Տարապարճակ—պարտադիր
Տևեճի—թ. ուղտապան
Տերե—պ. ձոր, կիրճ
Տիբլոմաթճա—թ. դիվանագիտորեն
Տիլեքանք—ֆ. սիրող
Տիս—հ. երկու
Տոպիո—ֆ. աղ. կրկնակի
Tournée—ֆ. շրջագայություն
Տռիփ—կիրք

Ր

Ռանքիե—ֆ. ռանտիե, իր հասույթով ապրող կալվածատեր

Ո

Ուղուր—թ. բախտ, հաջողություն
Ուշշամ—արևելյան երաժշտության մի տնաոկ
Ույց—որոնց

Փ

Փաբերա—հ. հայր
Փաթլամիշ—թ. ճաթել, տրաքվել
Փասիիյ—ֆ. դեղահատ
Փասսո—ֆ. աղ. խաղից անմասն մնալու արտահայտություն
Փիֆ սեֆիզ—խաղաթղթի չորս տեսակներից մեկի 8 համաքը
Փռեֆ—թղթախաղի տեսակ
Փոդած—շեփորած
Փրթիլ—պոկվել
Փրոբեսքե—ֆ. բողոքարկված (մուրհակ, պարտավորագիր)
Փութել—ֆ. փայտակոճ երկաթգիծը ամրացնելու համար

Ք

Քափող—կանացի գլխարկի տեսակ
Քալփաճի—թ. խույր, փափախ սարքող
Քամեզոլիե—ֆ. կանացի ներքնազգեստ
Քամելեոն—ֆ. դետնատյուծ (փոխաբերաբար՝ հեղհեղուկ)
Քանափե—ֆ. բազմոց
Քառե—ֆ. փոխ. միատեսակ խաղաթղթերի մեկտեղում
Քելեփիր—թ. ձեռնատու, շատ էժան
Քերց—քույրերի
Քիսիր—ա. հայարա
Քրիքիմ—ֆ. քննադատ,-ություն
Քույումճի—թ. ոսկերիչ, արծաթագործ

O

Օտա-ուշաղի—թ. սպասարկու տղա (փոքրիկ սենեկապան)
Օտապաշի—թ. և ա. սենեկապետ

Տ

Final victory—անգլ. վերջնական հաղթանակ
Տասոճե—ֆ. նորույթի, նորաձեվության համաձայն (մոդելիկ)

Ֆյոյե—ֆ. *եեմասրահ*

Ֆիզիք—ֆ. *բնագիտություն, բնագիտական*

Ֆիլի մու, Պետրասաֆի—հ. *Պետրոսաքի, բարեկամս*

Ֆլոշ—ֆ. *պոքեր թղթախաղում մի տեսակին*

Ֆրանչիսկյան—*կաթոլիկ միաբանությունների մեկի անդամ*

Ֆրեր—ֆ. *կաթոլիկ կղերական*

Ֆուլ ալ'աս—*պոքեր թղթախաղում մի ձև*

ՕՏԱՐ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

(Ա և Բ հատորների)

Ալանսոն—*քաղաք Ֆրանսիայում*

Ալեմտաղի—*բլուր, գրոսավայր Պոլսում*

Ալզաս—*նահանգ Ֆրանսիայում*

Ալիե—*գետ Ֆրանսիայում*

Անամարսիս—*սկյութացի իմաստասեր Աթենքում (մ. թ. ա. 6-րդ դար)*

Անակրեոն — *հույն բանաստեղծ (560—472 մ. թ. ա.)*

Առվեռին երգը—*Առվեռ, Ալեքսիս Ֆելիքս—ֆրանսացի բանաստեղծ (1806—1850)*

Աուստերլից—*քաղաք Չեխոսլովակիայում (Մորավիա), որտեղ տեղի է ունեցել Նապոլեոնի հայտնի ճակատամարտը Պրուսիո դեմ, 1807 թ.*

Արմաշ—*գյուղաքաղաք Թուրքիայում, հայտնի՝ իր երբեմնի հայկական դպրևանքով*

Բաբթի Կաստոն—*ֆրանսացի քեմադրիչ (1885—1952)*

Բիզա—*քաղաք Իտալիայում*

Բոմբինյան ժակ տը Ֆոռնկ—*ֆրանսացի բանաստեղծ (1709—1784)*

Դանիել—*հրեա չորս մեծ մարգարեներից մեկը (մ. թ. ա. 7-րդ դար)*

Դաշտելեն — *տեղանուն Պոլսում, ծանոթ իր չրով*

Դավիթ—*Իսրայելի թագավոր (1010 970 մ. թ. ա.)*

Dinant sur Meuse—*Մյոզ գետի ափին Դինան քաղաքը Ֆրանսիայում*

Դիոգինես—*հելլեն իմաստասեր (413—323 մ. թ. ա.)*

Եզեկիել—*հրեա չորս մարգարեներից մեկը (մ. թ. ա. 6-րդ դար)*

Ենիմահալե—*թաղամաս Պոլսում*

Եսի-Քուլե— » »

Ecole normal, école normal superieur—*բարձրագույն ուսումնական հաստատություններ Փարիզում*

Էլմալը — *Պոլսի մերձակայքում գտնվող վայր*

Էմոնճ Տանքես—*Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնթե Քրիստո» վեպի գլխավոր հերոսը*

Etoile—*հրապարակ Փարիզում*

Թաթավլա—*հունական թաղամաս Պոլսում*

«Թան» (Temps) — *Փարիզյան օրաթերթ*

Թաշ Վերտիվեն — *տեղանուն Պոլսում*

Թարասմոն — *Ալֆոնս Դոդեի վիպակում հիշատակված տեղանուն Ֆրանսիայում*

Թարթարեն — *ակնարկվում է Ալֆոնս Դոդեի «Տարասկոնցի Տարտարենը» վիպակի հերոսը*

Թարապիա — *ամառանոց-զբոսավայր Վոսփորի ափին*

Թարլա-Պաշը — *զբոսայգի Պոլսում*

Théâtre contemporains — *«Ժամանակակից թատրոն», ֆրանսիական թատերական հանդես*

Թիեռ-Ադոլֆ — *ֆրանսացի պատմաբան և պետական գործիչ (1797—1877)*

«Թոիրթոյզ» — *զուրվածքնդենի պիտակ (ֆրանսական)*

Ժեռսեյ (Ջըրսի) — *Անգլո-նորմանդական կղզի Մանշում*

Ժյուլի — *Ռուսսոյի «նոր Էլոիզ» վեպի հերոսուհին*

Ժյուվենալ — *լատին բանաստեղծ (65—128)*

Իզոլը (Իզոլդա) — *գերմանական դիցաբանության հերոսուհիներից*

Իթակե — *կղզի Հունաստանում*

Լամընե Ֆելիսիթե — *ֆրանսացի իմաստասեր (1782—1854)*

Լաֆեռ — *քաղաք Բելգիայում*

Լըմեթռ Ժյուլ — *ֆրանսացի քննադատ (1853—1914)*

Լը Վեռիե Ժան Ժոզեֆ — *ֆրանսացի աստղագետ (1811—1877)*

Լիեժ — *քաղաք Բելգիայում*

Լյուրեսս (Լուկրեցիոս) — *լատին բանաստեղծ (98—55 մ. թ. ա.)*

Լոհենկոհե — *վագոնների օպերաններից*

Լոռնե — *նահանգ Ֆրանսիայում*

Loven Braen — *հանրածանոթ գաղթարարուն Մյունխենում*

Կալաթա-Սերայ — *հայտնի քաղաքամաս Պոլսում*

Կամպեթթա Լեոն — *ֆրանսացի իրավաբան, պետական գործիչ (1838—1882)*

Կատոն «Ճնեիչ» — *հին Հռոմում պետական գործիչ (224—149 մ. թ. ա.)*

Կաստալի — *հունական դիցաբանության հերոսուհի*

Կետիկ Փաշա — *քաղամաս Պոլսում*

Կյուլհանե — *տեղանուն Պոլսում*

Կոթին Թեոֆիլ — *ֆրանսացի բանաստեղծ, քննադատ (1811—1872)*

Կոնֆուա եղբայրներ — *ֆրանսացի գրողներ Էդմոնդ (1822—1896) և Ժյուլ (1830—1870) Կոնքուեններ*

Կոտրֆռուա տը Պույոն — *խաչակիրների առաջին արշավանքի առաջնորդը (1061—1100)*

Հալֆ — *Պոլսո հիշատանց կղզիներից մեկը*

Հեռալ — *առևտրական տան անուն*

Հիպոկրատ — *հույն մեծանուն բժիշկ (460—375 մ. թ. ա.)*

Հիսար — *Վոսփորի ափին արվարձան*

Հռոմս Ֆլաքուս (Հորացիուս) — *լատին բանաստեղծ (65 մ. թ. ա. —8)*

Ղալաթիա — *առևտրական կենտրոն Պոլսում*

Մահոնվիլ — *քաղաք Բելգիայում*

Մարկա-ա-ռո (Մարկառո) — *հունական կանացի անուն*

Մեթըք Ժոզեֆ տը — *ֆրանսացի գրող, իմաստասեր (1753—1821)*

Մեսաժըռի (Մեսաժըռի Մաուիքիմ)

—ֆրանսական շոգենավային ընկերության անուն

Մեսմեր Ֆրանց Անտոն—*գերմանացի բժիշկ (1734—1815)*

Միշլե Ժյուլ—*ֆրանսացի պատմաբան (1798—1874)*

Միռապո Օնորե Գաբրիել—*ֆրանսացի հռետոր, քաղաքական գործիչ (1747—1791)*

Միռեն—*առևտրական հիմնարկի անուն*

Միրպո Օկտավ—*ֆրանսացի գրող (1848—1917)*

Մյուլլեր Մաֆս—*գերմանական ծագումով անգլիացի լեզվաբան (1823—1900)*

Մոնյուֆ—*տեղանուն Բելգիայում, որտեղ կատարվել է Ֆերերի գրնդակահարման առաջին տարելիցը*

Մոպեոժ—*քաղաք Ֆրանսիայում*

Մորմոն—*ամերիկյան կրոնական աղանդի անդամ (հիմնված 1830 թ.)*

Յոնկ-Ֆրոյ—*Ալպյան գագաթնեներից մին*

Նաբուզոդոնոսոր—*Բաբելոնի արքա (6-րդ դար մ. թ. ա.)*

Նամյուռ—*քաղաք Բելգիայում*

Նելսըն Հորեյս—*անգլիացի ծովակալ (1758—1805)*

Նեյ Միշել—*ֆրանսացի մարշալ (1769—1815)*

Նեշրընլ կալրոի—*աղգային պատկերասրահը Լոնդոնում*

Նեստոր—*Տրովադայի ավագներից խորհրդի երիցագույն անդամը*

Նևտոն Իսահակ—*(Նյուտոն) անգլիացի աստղագետ, մաթեմատիկոս, իմաստասեր (1643—1727)*

Նամուռ—*քաղաք Բելգիայում*

Նաոֆռ ծան Պասպտիստ—*ֆրանսացի բժիշկ, երկրաբույս (1867—1936)*

Պարթոլդի Օգյ Ալպեր—*ֆրանսացի քանդակագործ (1848—1928)*

Պարթելեմե արբա ծամ—*ֆրանսացի գիտնական (1716—1795)*

Պատրիզակ—*երբեմնի հայաշատ գյուղաքաղաք Պոլսի մոտ*

Պեյֆոզ—*պոլսական արվարձան, Վոսփորի ափին, հայտնի իր չրով*

Պեֆ Հենրի—*ֆրանսացի քաոերաբան (1837—1899)*

Պիզանս—*ֆրանսերեն՝ Բյուզանդիոն (Պոլիս)*

Pêcheur d'Islande — *ֆրանսացի գրող Պիեռ Լոթիի երկը*

Պյուկյու—*առևտրական տան անուն*

Պոյաճը Քյոյ—*պոլսական արվարձան Վոսփորի ափին*

Պոթեռեն—*առևտրական հիմնարկի անուն*

Պոն մարշե—*առևտրական տան անուն Պոլսում*

Պոտլեռ Շառլ—*ֆրանսացի գրող (1821—1867)*

Պուժե Փոլ—*ֆրանսացի գրող (1852—1935)*

Ռասփայլ Ֆրանսուա—*ֆրանսացի քիմիկոս և քաղաքագետ (1794—1878)*

«Ռևյու տե տյո մոնտ»—**«Revue de deux mondes»**—*ֆրանսիացի հեղինակավոր պարբերաթերթ XIX դարից*

Ռընան Էռնեստ—*ֆրանսացի գրող (1823—1897)*

Ռիկի—*Ալպյան գագաթնեներից մեկը*

Rue de la paix—*փողոց Փարիզում*

Rue de 4 septembre— » »

Ռյու Պլաս—*Հյուգոյի թատերախաղերից մեկը*

Ռյուբենս Փիեռ—*(Ռուբենս)—Ֆլամանդացի նկարիչ, դիվանագետ (1577—1640)*

Ռաճսաո Փիեռ—*Ֆրանսացի բանաստեղծ (1524—1585)*

Ռոսեն Օկյուստ—*Ֆրանսացի քանդակագործ (1840—1917)*

Ռուկոն Մագդա—*Զոլայի երկերից*

Սեն Փոեռ—*Ռուսսոյի «Նոր Էլոիզ» վեպի հերոսներից*

Սեվինի Մարի տը Տեպուբեն Նանթալ—*Ֆրանսացի նամակագրուհի (1626—1696)*

Սեվռ—*արվարձան Փարիզում*

Սեբաստոպոլ—*քաղաք Հարավսլավիայում*

Սիլվեսթր Արման—*Ֆրանսացի գրող (1837—1901)*

Սիկֆրիտ (Զիգֆրիդ)—*գերմանական դիցաբանության հերոսներից*

Սյու Էուժեն—*Ֆրանսացի վիպասան (1804—1857)*

Սյուլլի Բրյուտոմ Արման—*Ֆրանսացի բանաստեղծ (1838—1907)*

Սփենսր Հերպըրթ—*անգլիացի իմաստասեր (1820—1903)*

Վալանսիեն—*նահանգ Ֆրանսիայում*

Վալոն ու Ֆլամանդ—*բելգիական ժողովրդի երկու գլխավոր հատվածների անունները*

Վալֆիյոի—*վագների օպերաներից*

Ville d'Evêque—*փողոց Փարիզում*

Tartouffisme—*Ֆ. Քարքուֆականություն*

Տելեմաք—*Ֆենելոնի համանուն երկի հերոսը*

Տեպա («Debats»)—*փարիզյան օրաթերթ*

Տեմոլեն Էդմոնդ—*Ֆրանսացի պատմաբան, ընկերաբան (սոցիոլոգ)*

Տոն Սեզար տը Պազան—*Հյուգոյի հերոսներից*

Տրեյֆուս Ալֆրեդ—*ծնունդով հրեա, ֆրանսական սպա (1859—1935)*

Ուսկյուտար (Իսկյուտար)—*հայաշատ թաղամաս Վոսփորի ափին*

Փալե Ռոյալ—*Ֆրանսական արքայական պալատը*

Փերոնեն Քաթյուլ—*լատին բանաստեղծ (7—65 մ. թ. ա.)*

Փենտիմ—*Պոլսի մոտակա երկաթուղային հանգույց*

Փեստալոծծի Ժան Հաների—*շվեյցարացի մանկավարժ (1746—1827)*

Փլաս տը լեթուալ—*հրապարակ Փարիզում*

Փրինիփիո—*Պոլսի Իշխանաց կղզիներից մեկը*

Քաթյուլ Մենտես—*Ֆրանսացի գրող (1841—1909)*

Քանլըճա—*արվարձան Վոսփորի ափին*

Քանտիլլի—*արվարձան Վոսփորի ափին*

Քեսթանե-Սույու—*տեղանուն Պոլսում*

Քոռնիե Լաբեն—*թաղամաս Փարիզում*

Քլոտ—*Զոլայի հերոսուհիներից*

Քյոսթենեն—*ռումինական նավահանգիստ*

Քոխ Ռոպերտ—*գերմանացի բժիշկ (1843—1910)*

Քոփիե Ֆրանսուա—*ֆրանսացի գրող (1842—1908)*

Քոնտի լիոնե—*ֆրանսական դրամատան անուն*

Քուգկուենոմ—*պոլսական արվարձան Վոսփորի ափին*

Քում Քափու—*հայաշատ թաղամաս Պոլսում*

Քուչ Տիլի—*պոլսական արվարձան Վոսփորի ափին*

Քում—*ճամփորդական գրասենյակի անուն*

Օխլամուր—*տեղանուն Պոլսում*

Օնե Ժորժ—*ֆրանսացի թատերագիր-վիպասան (1848—1918)*

Ֆաժրոռ'լ—*Զոլայի հերոսներից*

Ֆակե Էմիլ—*ֆրանսացի պրոֆեսոր, քննադատ (1847—1916)*

Ֆարիա աբբա—*Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» վեպի հերոսներից*

Ֆենելոն Ֆրանսուա — *ֆրանսացի գրող, կղերական (1651—1715)*

Ֆերեր Գվարտիա Ֆրանչիսկո—*իսպանացի առաջադիմական գործիչ (1859—1909)*

Ֆլեշիե Էսփրի—*ֆրանսացի կղերական (1632—1710)*

Ֆոլի Պերժեռո—*փարիզյան զբոսավայր*

Ֆոռմոն Ռիսլեր—*Ալֆոնս Դոդեի համանուն երկի հերոսը*

Ֆոպել Ֆրիտերիկ — *գերմանացի մանկավարժ (1782—1852)։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՊԵՐ

Անհետացած սերունդ մը 7
Նարդիկ 113

ՊԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախաբան 181
Ի սրտակոտոր մահ մտերմիս Միսաք Մանուկյանի 183
Հրաժեշտ 185
Նարկիլեն 187
Լուանալու դեմ 188
Ննջանորը 189
Ձյունը 190
Վառարանը 191
Հարցում 192
Համակերպություն 193
Ոչ ոք 194
Ձատկի առթիվ 195
Հսկում 196
Հպարտություն 197
Տարակույս 198
Եկուր 199

Քինական նամականի 203
Ուղևորություն մը հիշատակներուս մէջ 210
Քոքինաքի (Իզմիրի կյանքեն) 227
Փոքեր 233
Մարգար ախպոր տերտը 235
Էտվայս 238
Բարերարը 241
Բարեկենդանը 243
Վերջին արևագալը 245
Թիթեռնիկներ 247
Շիշլիի ազգային գերեզմանատունը մեռելոցի կիրակին . . . 251
Բեռին տակ 255
Կորսված խոսքեր 257
«Ապրիմ-Մեռնիմ» 261
Կոտրելեն եղջը 265
Գիրեր պատերազմի դաշտեն 268
Հատվածներ 279
Հատվածներ 284

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1887

Թղթակցություն 291

1892

Մեր Մասիսը 294
Անբարոյական գրականություն 296
Հայ թատրոնի նավարեկությունը 302
Աչ և ձախ (քրոնիկ) 307
Համալսարանական կրթության պակասությունը մեր մեջ . . . 310
<Հավակական խնդիր> 314
Նոր լրագրությունը 316
Ուսուցչական ժողով 321
Երգը 326
Տիկին Սիրանույշ 329
Քաղքցյուղի քաաեբական ներկայացումը 332
Քաարոն 338

1898

Տաքի մը 341
Ճամփեն չեղած 344
Գարպված օդապարիկ 347
Կենդանի մեոյալներ 351
Էմիլ Զոլա (Մեր պատկերը) 354
Իզմիր 359
Մանանա 362
Համեստ գործեր 366
Ցրանսուա Քոփփե (Մեր պատկերը) 369
Վարժարանաց շուրջը 373
Մոռցվածներ 376
Մոտան 379
Բարոյականի կոիվը 382
Անգիր դպրութիւն և առակք 385
Տեսարանէ էջ մը 389
Առա՞ջ քի եա 392

1898

Տարեգարձ մը 395
Երգենք 398
Ավելը 400
Ավելեն եաքը 403
Խորհուրդներ, գործողներ 407
Թատերական քրոնիկ (Տիկին Մոնկոռեն) 410
Սրբագրութիւն 414
Անմահութիւնը աժանցած 418
Լուր չի կա 422
Թատերական քրոնիկ (Դարբնոցապետը) 426
Լուսավորիչ մը 431
Սորսորումը 434
Հատուկ անուններ 437
Ոչ-կաթուղիկն 440
Պաքը 443

1901

Ընտրավեպին շուրջը 447

1902

Հիսուն տարի առաջ . . 450
Ութը տարի հոգը . . 457

1908

Կյանքը Փարիզի մեջ . . 460
«Պատվի համար» 464

1910

Հակոտնյաններ 173

1913

<Ջոհրապին ճառը> 477
Ստանաքագրություններ 482
Խառաններ (կազմեց՝ Շահնուր Շահրիկյան) 505

ԳՐԻԳՈՐ ՋՈՀՐԱԲ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

Բ. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ Մ. Ս. Թերզյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Օճ. Փանիկյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Դշխոյան

ՎՖ 08030 *Պատվեր 2676* *Տիրաժ 20000*

Հանձնված է արտադրության 10/XI 1961 թ.։
Մատրագրված է տպագրության 15/III 1962 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂։ Տպագր. 32,25 մամ.= 26,44 պայմ. մամ.։
Հրատ. 20,3 մամ. + 1 ներդիր։
Գինը՝ 82 կ.։

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյանի փողոց № 51։